

ՍՈՎՐԱՑ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏՐԻ ԵՐԿԵՐ

VII

ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅ ԴՈՒԶԻԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

բուհերի բանասիրական ֆակուլտետների մագիստրանտների
համար: Դասագրքից կարող են օգտվել նաև ասպիրանտները
և հայցորդները

Տպագրվել է ԼՂՀ կրթության, մշակույթի
և սպորտի նախարարության կոլեգիայի
որոշմամբ (թիվ 01-720)

Ստեփանակերտ
«Դիզակ պլուս» հրատարակչություն
2010

ՀՏԴ 891.981.0 (075,8)

ԳՄԴ 83,3 Յ ց 73

Խ 256

Չեղինակ՝ Սոկրատ Խանյան
Խմբագիր՝ Չովիկ Մուսայեյան

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի կապակցությամբ տասնհատորյակը տպագրվում է ԼՂՀ Գրողների միության վարչության եւ Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

ԽԱՆՅԱՆ Ս.

Խ 256 Ընտիր երկեր: Չատոր VII: Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան: Դասագիրք/ Սոկրատ Խանյան: Խմբ.՝ Չովիկ Մուսայեյան, - Ստեփանակերտ: Դիզակ պլուս, 2010, 480 էջ:

Չատորում տեղ է գտել Սոկրատ Խանյանի «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» դասագիրքը:

ՀՏԴ 891.981.0 (075,8)

ԳՄԴ 83,3 Յ ց 73

ISBN 978-9939-800-96-7


©

Ս. Խանյան, 2010 թ.

ԱՐՑԱԽՅԱՆ ՄԱՐՏԱԶԱՆԳԻ ԴՈՂԱՆՋՆԵՐԸ

Սոկրատ Խանյանի «Արցախյան պատերազմը եւ հայ գրականությունը» ուսումնասիրությունն արժեքավոր եւ ուշագրավ է մի քանի առումներով: Նախ այն հույժ արդիական աշխատություն է: Արդիական ոչ միայն իր թեմատիկայով, առարկայով, այլեւ գրականագետի վերլուծական խոսքի տարերքով, ասելիքի հնչեղությամբ ու հասցեագրմամբ: Ցանկացած ուսումնասիրության մեջ վերոհիշյալ երեք պայմանների զուգադիպությունը միշտ էլ արդյունավետ է լինում:

Գրքի մյուս կարեւոր կողմը, որ նախորդի օրգանական շարունակությունն է անմիջականորեն կապված է նրա հեղինակի բանաստեղծ-գրականագետ Ս. Խանյանի կենսագրության, նրա գիտական ստեղծագործական խառնվածքի հետ: Ուսումնասիրության հեղինակը արցախյան դրամատիկ ու հերոսական իրադարձությունների հետ կապված մարդկային ցավի ու հերոսականության անմիջական կրողներից է, ինչը պայմանավորել է ոչ միայն նրա ուսումնասիրության թեմատիկ ընտրությունը, այլեւ գրականագիտական ասելիքի ոճային առանձնահատկությունը: Բանաստեղծի հախուռն զգացումներն աշխատության մեջ, բարեբախտաբար, վերահսկվում են գրականագետի զուսպ չափումներով: Աշխատանքի ինքնատիպությունը պայմանավորված է նաեւ նրանով, որ վերջինիս մեջ նյութի վերլուծական տարերքն ուղեկցվում է իրադարձությունների փաստա-



կան մեջբերումներով ու մեկնաբանություններով: Ընդ որում՝ գրականագետը, եւ այս դեպքում նաեւ՝ պատմաբան Խանյանը, իրադարձային պատմությանը նայում է ոչ միայն ներսից, այլեւ՝ դրսից: Ուսումնասիրության մեջ հեղինակը չի գնացել բանաստեղծական նյութի ընտրության տեղայնացման ուղիով: Արցախյան շարժումը համազգային է, համազգային է նաեւ նրա գեղարվեստական արձագանքները: Այս գիտակցությունից ելնելով է հեղինակը կողք կողքի ներկայացնում Արցախում, Հայաստանում եւ Սփյուռքում ապրող բանաստեղծների ստեղծագործությունները:

Ներկա ուսումնասիրության հաջողվածությունը պայմանավորված է նաեւ նրա լավ մտածված կառուցվածքով: Գրքի երեք գլուխները «Պայքարի երգը», «Պամության դասը», «Ոչ ոք չի մոռացվի» արցախյան դեպքերի փուլային ընդհանրացումներն են, որոնց գեղարվեստական արձագանքներից յուրաքաչյուրն ունի տրամադրությունների իր խորքային ձայնն ու փիլիսոփայությունը: Ահա ինչու՝ դրանց այսօրինակ տարբերացումը միանգամայն արդարացված է: Ի լրացումն այս ամենի, կուզեի նկատել նաեւ, որ գրականագետ Ս. Խանյանի այս աշխատանքը կարող է լուրջ հայց լինել հետագայում տպագրվելիք իր իսկ հեղինակած «Արցախահայ գրականության պատմություն» ձեռնարկի համար, որը կարելուր ներդրում կլինի նորագույն շրջանի հայ գրականության պատմությունը դպրոցներում ու բուհերում աշակերտությանը եւ ուսանողությանը հաղորդակից դարձնելու առումով:

Ս. Խանյանը մեր մշակույթի մեջ նոր անուն չէ: Նա փորձառու եւ բեղուն բանաստեղծ-գրականագետ է: Այս

գիրքը կրկին գալիս է հաստատելու նրա անմոռանալի տեղը մեր գրականագիտության մտքի պատմության մեջ: Այստեղ հաճելի է ընդգծել, որ Ս. Խանյանն իր «Ցավի եւ սիրո պոեզիա» (Վ. Հակոբյանի մասին), «Բ. Ջանյանի պոեզիան», «Գ. Գաբրիելյանի աշխարհը», «Տաղանդի լույսը» (քննադատ Ժ. Անդրյանի մասին) մենագրությունների եւ «Արցախյան պատերազմի բանաստեղծական տարեգրությունը» հոդվածաշարի համար արժանացել է ԼՂՀ Գրողների միության Մուրացանի անվան ամենամյա մրցանակին (1998 թ.):


Անվանի բանաստեղծ-գրականագետին մաղթում ենք նորանոր հաջողություններ ստեղծագործական բազմազան ծրագրերի իրականացման բնագավառում:

*Ջավեն ԱՎԵՏԻՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, Երեւանի
պետհամալսարանի պրոֆեսոր*

«Ազատ Արցախ», 20 փետրվարի, 1999 թ.

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Արցախի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց անվանի գրականագետ, պրոֆեսոր Ս. Խանյանի «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» ուսումնասիրությունը: Կրկին հայացք ձգելով այն ամենին, ինչ ստեղծել է գրականագետը, կարող ենք ընդգծել, որ տարիների նրա պրպտումները ապայման պետք է հասցնեին նման լուրջ աշխատության:



Հետամուտ լինելով իր նպատակին՝ Ս. Խանյանը ի մի է բերում տարիների իր սկզբունքները՝ այն համոզմունքով, որ հայոց հայրենապատումը ժողովրդի ճակատագրի գեղարվեստական վավերագրությունն է: Գրականագիտական հմտությամբ հեղինակը իր ասելիքի արմատները որոնում է մեր դասական ավանդերի մեջ՝ խարսխվելով բանաստեղծական նոր հունձքի շրջանակներում:

Սա նորօրյա բանասիրական մոտեցում է, որը ժխտում է գեղարեստական երկի մակերեսային վերլուծությունը՝ գնալով դեպի խոսքային-հոգեբանական շերտեր: 20-րդ դարի 50-90-ական թթ. հայոց հայրենապատումի զարգացումն ու հարստացումը պայմանավորող ուղիների ուսումնասիրությունը նախ հետաքրքիր է դարձնում թեման, ապա՝ շեշտում հեղինակի գաղափարական ուղղվածությունը:

Աշխատանքում գրականագիտական վերլուծու-

թյուններն ու ընդհանրացումները տարվում են պատմականության եւ արդիականության առնչությունների, նմանությունների համակարգում, որից շահում է երկը, հետաքրքիր եւ ուսանելի դարձնում այն:

Հարցի պարզաբանումը որոշակի առումով ընթերցողին ծանոթ է Ս. Խանյանի տասնյակ մեծագրություններից եւ բազմաթիվ գիտական հոդվածներից: Սակայն այս աշխատանքը ընդհանրացված գործ է, որտեղ նշված են էտապի խոր եւ արդիական մոտեցումները: Ս. Խանյանը այստեղ ինչ-որ չափով պատմաբան է եւ, սկզբունք ընդունելով գեղարվեստական գրականության աներկբա կապը պատմության հետ, քննում է 50-90-ական թթ. գրական-պատմական պրոցեսները եւ այս համայնապատկերում լուսաբանում հայրենիքի թեմայի արծարծումը հայ պոեզիայում: Դարերի խորքից եկող հայրենապատումի ակորդները խտանում եւ նոր երանգներ են ձեռք բերում նշված փուլում՝ ունենալով իրենց յուրահատկությունները: Հեղինակի կողմից ինքնատիպ բնութագրումները, հարցադրումների հետաքրքիր լուծումները հնարավորություն են տվել բացահայտելու հայոց հայրենապատումը հնչեցնող այնպիսի հեղինակների ստեղծագործական աշխարհի նորությունները, ինչպիսիք են Հ. Շիրազը, Հ. Սահյանը, Պ. Սեւակը, Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը, Հր. Հովհաննիսյանը, Մ. Մարգարյանը, Ռ. Դավոյանը, Վ. Հակոբյանը, Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգլարյանը, Ա. Հովհաննիսյանը, Ն. Ավագյանը, Ա. Թովմասյանը եւ, իհարկե, բանաստեղծական ժամանակակից սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներ:

«Կարոտի եւ հույսի երգը» բաժինը սկսելով

Յ. Շիրազի հայրենասիրական պոեզիայի մեկնաբանությամբ, գրականագետը շեշտը դնում է այն հանգամանքի վրա, որ պատմական անցյալը Յ. Շիրազի երգերում ծածանվում է որպես ոչ սովորական զգացում, այլ մանկության ու պատանեկության հիշողություն, հայրենիքի կարոտի մշտահուլով ցավ, որ սերունդներին է անցնում մոր կաթի հետ եւ վերածվում արյան կանչի:

Յ. Շիրազի հայրենասիրական կերտվածքների մեկնաբանման բանալի է ընտրված Ավ. Իսահակյանի գնահատականը՝ «Շիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է»:

Հաճախակի վիճելով այս կամ այն գրականագիտական տեսակետների հետ՝ Ս. Խանյանը իրավացիորեն չի ընդունում մակերեսային եւ ոչ համոզիչ կարծիքները՝ նպատակ ունենալով ճշմարտացիորեն բացահայտել բանաստեղծության հոգեբանական ու պատմական երակները:

Յ. Սահյանի պոեզիայի վերլուծության մեջ մենք տեսնում ենք բանաստեղծի հայրենապատումի երանգների կոնկրետացումը՝ հայրենիքի անցյալ-ներկա-գալիք ճանապարհներին: Վ. Դավթյանի նաիրյան անխաթար երազանքն է բացահայտված հաջորդ էջերում, որտեղ տեսնում ենք բանաստեղծի կորուստների կնիքը, խոհը, կարոտը, հուշը: Բացահայտելով Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի հայրենապատումի առանձնահատկությունները, գրականագետը ընդգծում է ժողովուրդ-հայրենիք-ժամանակ փոխհարաբերությունը: Ռ. Դավթյանին ներկայացնելով որպես, սարինյանական բնորոշմամբ, ներքին ապրումի բանաստեղծ, Ս. Խանյանը որսում է նրա ապրումի երակը՝ հայրենիք-ժողովուրդ-

բանաստեղծ եռամիասնության զգացունը դիտելով որպես Դավոյանի բանաստեղծական կեցվածքի առանցք, որոնման բանալիներ: Գնահատելով բանաստեղծների խորքային ծփանքները, գրականագետը պեղում է դավոյանական պոեզիայի փիլիսոփայական երակը: Վիճելով Ս. Աղաբաբյանի հետ՝ Ս. Խանյանը գտնում է, որ «Դավոյանի ոճական գծերի մեջ ընդգծված նարեկացիությունն եւ ընդգծված տերյանականությունն չկա»: Դավոյանը նրանց ժառանգորդն է՝ իր ներքին լուսարձակով նրանց շարունակելու իմաստով: Ընդունված սարինյանական ճշմարտությունն է՝ դասականների հավերժական իրողությունից գնալ դեպի գրական նոր սերնդի աշխարհը: Այս ճշմարտությամբ է Ս. Խանյանը վերլուծում Զ. Գրիգորյանի, Էդ. Միլիտոնյանի պոեզիան, գրականագիտական ակնարկ-բնութագրությամբ բացահայտում նաեւ Ա. Հարությունյանի, Զ. Էդոյանի, Դ. Հովհաննեսի բանաստեղծական աշխարհների զարկերակները:

Գրքում բավականին տեղ է տրված սփյուռքահայ արդի հեղինակներին: Անհնար է ուսումնասիրել սփյուռքահայ գրականությունը՝ առանց պատկերացնելու Սփյուռքի հայ գաղափարաբանությունն ու դրանից բխող ծրագրերը: Այս ֆոնի վրա հեղինակը տեսնում է այդ հարուստ գրականության վերելքներն ու վայրէջքները՝ որսալով հայրենիքի ճակատագրի բանաստեղծական նկարագրության բոլոր երանգները: Խոհուն եւ զգույշ հայացքով քննելով արտերկրի քաղաքական կյանքի որոշ ազդեցությունները Սփյուռքի գրականության զարգացման վրա, գրականագետը ժխտում է քաղաքական ուժերի ավելորդ ճնշումները ժողովրդի գեղարվեստական զարգացման ընթացքի վրա:

Աշխատանքում քննության են առնված հայոց հայրենապատումը հարստացրած այնպիսի երախտավորների՝ գործեր, որպիսք են Վահան Թեքեյանը, Ժագ Հակոբյանը, Վահե Վահյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Բյուզանդ Թովալյանը, Կոստան Ջարյանը, Մուշեղ Իշխանը եւ այլոք: Ներգաղթի թեման քննվում է՝ հենվելով Վ. Վահյանի, Ա. Ծառուկյանի, Գ. Աղդարյանի ստեղծագործությունների վրա:

Ուսումնասիրելով «Սփյուռքահայ արդի գրականություն» երկհատորյակը, բարձր գնահատելով բանաստեղծուհի, գրականագետ, հասարակական գործիչ Սեդա Ծաղիկյան-Տեմիրճյանին, գրականագետը վերլուծում է ժամանակակից սփյուռքահայ պոեզիան, հատկապես պոլսահայ արդի պոեզիայի ականավոր ներկայացուցիչ Ջարեհ Խրախունու ստեղծագործությունները՝ առաջնություն տալով նրա ազգային մտածողության պատմական եւ գեղագիտական ակունքների քննությանը:

«Պայքարի երգը» խորագիրն է կրում գրքի 2-րդ գլուխը: Հեղինակը Արցախյան շարժման երեք փուլերի քննության ասպեկտով մտորում է Գոյամարտի ժամանակաշրջանում ստեղծված գրականության շուրջ եւ ընդհանրացնում, որ այն հայ ժողովրդի միասնական պայքարի, նրա հերոսական ոգու գեղարվեստական տարեգրությունն է եւ երբեք չի կտրվել ժամանակի գրական մթնոլորտից, թեպետ շատ անգամ է հայտնվել կյանքի բարդ ու պայթյունավտանգ ոլորտներում:

Քննարկվում է Վ. Հակոբյանի պոեզիան, նրա «Արցախա - ծուխ», «Ամարասի զանգերը» պոեմները, «Սոսե» ժողովածուն՝ որպես ապրելու-հարատեւելու, սիրելու-

սիրվելու, մաքառելու-թեւավորվելու պատգամ: Արցախ աշխարհը Գ. Գաբրիելյանի երակներում է, արյան մեջ, սրտում, հոգու ծալքերում: Հետաքրքիր վերլուծություններ են Գ. Գաբրիելյանի, Յ. Բեգլարյանի, Ն. Ավագյանի, Վ. Դավթյանի, Ս. Կապուտիկյանի, Բ. Ջանյանի, Ա. Հարությունյանի, Գ. Էմինի, Ա. Թովմասյանի, Յու. Սահակյանի, Սետաքսեի ստեղծագործություններին նիրված էջերը:

Արցախի ազգային-ազատագրական պայքարի զինվոր-երգիչներ դարձան բանաստեղծական տարբեր սերունդների տասնյակ ներկայացուցիչներ: Աշխատանքում տեղ է տրված նաեւ նրանց ստեղծագործությունների համառոտ քննությանը: «Պատմությունը հիշողություն է՝ ապրեցնող, հավերժացնող: Այս նկատառումով է գրքի 3-րդ գլուխը վերնագրված «Պատմության դասը»: Գրականագետը նշում է, որ պատմության հերոսական ընթացքը ընկալել են 20-րդ դարի հայ բանաստեղծները՝ ստեղծելով սերունդներին թեւավորող գրական բազմաթիվ արժեքներ: Պատմությունը Հ. Շիրազի համար դարձել է իր սիրտն ու հոգին բացելու ելակետ, Սեւակի համար՝ հայ ժողովրդի ճակատագիր, արդիական հնչեղություն ունեցող պոռթկումներ: Պատահական չէ, որ նա ստեղծեց հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի գեղարվեստական պատկերը, նրա ծանր ճակատագրի եւ ոգորումների արժարժումը: Հասուն գրականագիտական հայացքով են քննվում Սեւակի պոեմները, քննվում են հայոց մեծերի համայնապատկերում, զուգահեռներով՝ օգտակար առնչությունները դիտելով որպես ժամանակի հրամայական, որպես պատմության պահանջ:

ԱՊԱՏԱՔԱՆԻ ՓՊՊԱՊԵՆ

Վերջին բաժնուն՝ Ս. Խանյանը բացահայտում է պատմության գեղարվեստական ընկալման դավթյանական եզրերը՝ օրինակ բերելով նրա «Հայերգություն» ասքը:

Ամփոփելով իր խոսքը՝ գրականագետ Ս. Խանյանը իրավացիորեն 20-րդ դարի 50-90-ական թվականների հայոց հայրենապատումը որակում է որպես կորուսյալ երկրի եւ վերածնված փոքրիկ Հայաստանի հանդեպ չնարող կարոտի, Ազատ-Անկախ-Միացյալ Հայաստանի ճանապարհին միաբանվելու եւ հարատևելու բանաստեղծական խոհ եւ խորհուրդ:

Գիրքը 50-90-ական թվականների հայոց հայրենապատումի գաղափարական ուղղվածության, 20-րդ դարի 2-րդ կեսի գրական շարժման մի շարք առանձնահատկությունների օբյեկտիվ բացահայտման հետաքրքրական օրինակ է, որն արժեքավոր է եւ որպես գրական-պատմական մնայուն արժեք:

Ա. ԱԹԱՅԱՆ


*ԱրՊՀ Հայոց լեզվի եւ գրականության
ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու*

«Ազատ Արցախ», 30 մարտի 2002 թ.

ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

«Բանաստեղծությունը սրտի կանչ է, հոգու ճիչ»

«Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» - այսպես է, կոչվում բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արցախի պետական համալսարանի գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ Սոկրատ Խանյանի նոր գիրքը, որը նախատեսվում է ինչպես բանասիրական ֆակուլտետի ուսանողների, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակների համար:



Մինչեւ գրքի հրապարակ իջնելը, լույս էին տեսել «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան», «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում» ուսումնասիրությունները, որոնցում վերլուծվում եւ գնահատական է տրվում ազգային-ազատագրական պայքարի հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործություններին: Երկար տարիներ բուհում դասավանդելով հայ գրականության պատմություն, Ս. Խանյանը զգացել է նման ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Չեղինակի կարծիքով, հայ ժողովրդի գրականությունն ազգային գոյամարտի գեղարվեստական պատմությունն է ընդդեմ ճակատագրի: «Չետելելով հայ հարուստ գրականությանը, մասնավորապես՝ պոեզիայի դարավոր ընթացքին, վերստին համոզվում ես՝ ինչպիսին ժողովրդի ճակատագիրն է, այնպիսին էլ գրականությունն է,- եզրակացնում է Ս. Խանյանը: Աշխարհում չկա մի ժողովուրդ, որին բաժին հասած լինեն այն կորուստներն ու տառապանքները, որ կրել է հայ ժողո-

վուրդը: Արցախյան պատերազմը մեր ազատագրական պայքարի հերոսական եւ բախտորոշ էջերից մեկն է: Այն, հիրավի, Ավարայրի ու Սարդարապատի շարունակությունն է, որն անառարկելիորեն մտել է հայ ժողովրդի տարեգրության մեջ: Իսկ նման պատմական իրողությունը չի կարող մնալ հայ գրականությունից դուրս եւ բնականաբար, պատշաճ արձագանք պիտի գտնի գրականության մեջ»:

Դասագիրքը, որին արժանի գնահատական է տրվել մի շարք անվանի գիտնականների կողմից, ներառում է հայ գրականության եւ պատմության բոլոր փուլերն ու ժամանակները, ընդհուպ՝ Խորենացու «Ողբը», Եղիշեի «Վարդանի սխրանքը», Շնորհալու «Եղեսիայի ողբը», մինչեւ արցախյան ազատամարտը՝ ընդգրկելով հայրենիքի ճակատագրի վավերագրությունը: Գրքում ներկայացված են հայ գրականության հին, միջին, նոր շրջանների երեւելի դեմքերը, ժամանակակից պոեզիայի ներկայացուցիչները, որոնց ստեղծագործություններում հայրենասիրական (պատերազմի) թեման արժարժվում է նոր շերտերով ու գեղարվեստական նոր հնչեղություն ձեռք բերում:

Աշխատության համար, թերեւս ճիշտ կլիներ նկատել, որ հիմք է հանդիսացել Ս. Խանյանի տարիներ առաջ հրատարակած «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» ուսումնասիրությունը: Արժեքավոր եւ ուշագրավ մի գիրք, որը խիստ արդիական է ոչ միայն իր թեմատիկայով, այլեւ ասելիքի հնչեղությամբ:

Հատկանշական է, որ աշխատության մեջ արցախյան պատերազմը գնահատվում է որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական ու բախտորոշ էջերից մեկը: Հատկապես ընդգծվում է հայ գրականության, պոեզիայի դերը ժողովրդի ֆիզիկա-

կան եւ բարոյական ուժերի համախմբման ուղղութեամբ: Արցախում, Հայաստանում եւ Սփյուռքում ապրող ու ստեղծագործող բանաստեղծների կոնկրետ ստեղծագործությունների վերլուծության հիման վրա հեղինակը ընթերցողներին հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել այն մասին, թե ազատագրական պայքարի տարբեր փուլերում հայ պոեզիան ինչպես է գունարվել փրկարար զենքի ուժին, փաստորեն դարձել մարտնչող ժողովրդի հույսերի ու ցավերի, տվայտանքների եւ ակնկալությունների բացահայտման հայելին:

Բանաստեղծն ու գիտնականը կյանքի ավելի քան 50 տարիները շռայլորեն նվիրաբերել է մանկավարժությանը, ակտիվ ու բեղմնավոր գործունեություն ծավալել բուհում: Նա շուրջ 20 բանաստեղծական ժողովածուների, մեկ տասնյակից ավելի գրականագիտական աշխատությունների, ուսումնական ձեռնակների եւ հարյուրավոր հոդվածների հեղինակ է: Ընթերցողների շրջանում հատկապես լայն արձագանք են գտել Ս. Խանյանի «Սիրտս ձեզ հետ է», «Քո անունից», «Լեռների երգը», «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ» ժողովածուները, ինչպես նաեւ «Արցախի արծիվը» պոեմը, որի համար նա արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակին:

*Դավիթ Միքայելյան
«Հայաստանի հանրապետություն» թերթ,
8 փետրվարի, 2009 թ.*

ԿԱՐԾԻՔ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուկրատ Աղալարի Խանյանի
«Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան»
դասագրքի մասին

Հայաստանի բուհերի բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսումնական պլանում մտցված է «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» առարկան, որն ուսումնասիրվում է պարտադիր: Սակայն պետք է նշել, որ այդ ուղղությամբ չի ստեղծվել ձեռնարկ կամ դասագիրք: Պրոֆեսոր Ս. Խանյանը հենվելով գրականության դասավանդման իր հարուստ փորձին, ձեռնամուխ է եղել այդ շնորհակալ գործի իրականացմանը:

Դասագիրքը ընդգրկում է, այն ներառում է հին շրջանի բանահյուսական երկերից մինչեւ մեր օրերի բանաստեղծական հունձքը, որ առնչվում են քննարկվող թեմային:

Գիրքը բաղկացած է երկու բաժնից եւ առանձին գլուխներից: Առաջին բաժնում հեղինակը քննարկում է հայոց հեթանոսական, ինչպես նաեւ քրիստոնեական միջնադարի բանավոր առասպելները, վիպերգերը, որոնցում ընդգծված երեւում է հայ ժողովրդի եւ նրա բնօրրան-հայրենիքի ճակատագրի գեղարվեստական արտացոլումը: Այնուհետեւ հեղինակը անդրադառնում է հայ միջնադարյան պոեզիայի այն հեղինակներին, որոնց ստեղծագործություններում պատկերված են ժողովրդի անցած հերոսական եւ դժվարին իրադարձությունները: Խոսք է գնում Մ. Խորենացու «Ողբից» մինչեւ Սայաթ-Նովայի փիլիսոփայական տաղերի մասին:

Դասագրքի երկրորդ բաժնի տարբեր գլուխներում Ս. Խանյանը ներկայացնում է 19-րդ դարի քաղաքական իրադարձությունները, բնութագրում Խ. Աբովյանի,

ԱՊԱՏԱՔԱՆԻ ՓՊՊԱՐԵՆ

Ս. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահագիզի, Ս. Պեշիկթաշյանի, Պ. Դուրյանի եւ այլ դասականների հայրենասիրական գործերը, որոնցում արտացոլված է ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի ընդգծումներով:

Գրքում ուշադրության կենտրոնում է գտնվում 20-րդ դարի հայրենապատումի հունձքը,- Մեծ եղեռնի տարիների, Սարդարապատի գոյամարտի, Հայաստանի առաջին հանրապետության, Բոլշեւիկյան երկրորդ հանրապետության ընդհանուր ընթացքը պատկերող երկերի վերլուծությամբ: Պետք է նշել, որ դասագրքի հեղինակը վերլուծել է եւ Հայաստանի, եւ Սփյուռքի, եւ Արցախի գրական օջախներում ստեղծված հայրենապատումը: Հ. Թումանյանից մինչեւ Հ. Շիրազ, Պ. Սեւակից մինչեւ Վ. Հակոբյան՝ իրենց երկերում արտացոլել են հայ ժողովրդի հին ու նոր դարաշրջաններում հայ ժողովրդի պայքարը բոլոր տեսակի թշնամիների դեմ: Այս առումով կարելի էրկում են «Պայքարի երգ», «Պատմության դասը», «Ոչ ոք չի մոռացվի» գլուխները, որոնցում բավականաչափ տեղ է հատկացված արցախյան պատերազմի զեղարվեստական չափածո տարեգրությանը:

Ս. Խանյանի «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» դասագիրքը երկար տարիների փորձի արդյունք է: Այն կարելի է ձեռնարկ կհաղիսանա եւ ուսանողության, եւ մագիստրանտների ու ասպիրանտների, ինչպես նաեւ գրականության ուսուցիչների համար:

Տպագրության են երաշխավորում սույն դասագիրքը:

*Արկադի ԹՈՎՄԱՍՅԱՆ
Բանաստեղծ, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ
ԼՂՀ ԿԳ նախարարության ԿԳ վարչության պետ*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Յուրաքանչյուր ազգային գրականություն սեփական երկրի եւ ժողովրդի դարավոր ճանապարհի գեղարվեստական վավերագրությունն է: Այստեղից էլ ազգային ճակատագրի անդրադարձման կարելիությունը գեղարվեստական թե բանավոր եւ թե գրավոր խոսքի մեջ: Այս առումով առանձնանում է հայ գրականությունը, որ սկիզբ է առել դարերի խորքից եւ հասել 21-րդ դարին ու շարունակում է հարստանալ եւ զարգանալ՝ ազգային գաղափարախոսությամբ ու ազգային առանձնահատկություններով:

Հայ ժողովրդի պոետական պատկերավոր մտածողության ինքնատիպ արտահայտության հրաշալի նմուշ է «Վահագնի ծնունդը» ծագումնաբանական հյուսվածքը: Երգով է ծնվել մեր ժողովուրդը, եւ պատահական չէ, որ աշխարհի արվեստագետների գերակշիռ մասը նրան անվանում է բանաստեղծ: Նրա պոետական խառնվածքի աներկբա վկայություններ են հին դիցաբանական գրույցներն ու առասպելները, վիպերգերն ու ավանդությունները, ժողովրդական եւ գուսանական երգերը:

Հետեւելով հայ հարուստ գրականության, մասնավորապես պոեզիայի դարավոր ընթացքին, կրկին ու կրկին համզվում ենք՝ ինչպիսին ժողովրդի ճակատագիրն է, այնպիսին էլ նրա գրականությունն է: Աշխարհում չկա մի ժողովուրդ, որին բաժին հասած լինի այն արհավիրքները, որ տեսել է մեր ժողովուրդը: Չկա մի ժողովուրդ, որ դարերի ընթացքում իր բնօրրանի հյուսած օջախների, իր կերտած կոթողների կորուստն ունենա այնպես, ինչպես մեր ժողովուրդն է: 1915 թվականի ապրիլյան մեծ եղեռնի արդյունքում մեր ժողովուրդը ոչ միայն ոչնչացվեց կիսով չափ, այլեւ կորցրեց ավանդա-

կան իր հայրենիքը եւ դարձավ «կորուսյալ երկրի» կարոտով ապրող ազգ: Ահա այստեղ է, որ հայ գրականության մեջ հավասարազոր է հայրենիքի եւ ազգի ճակատագիր հասկացությունը: Հայրենի հողի վրա ժողովուրդը կարող է մաքառման եւ հերոսության, կորուստների եւ գտնումների պահեր ունենալ, ապրել, վերընծալու վել եւ շարունակել իր ճանապարհը, իսկ երբ խլում են նրա սրբազան հողը, նա կրկնակի է որբանում: Նախախնամությամբ թե հայոց աշխարհի հարեւան նենգ բռնապետությունների պատճառով, հայ ժողովրդին վերջապես բաժին ընկան սելջուկ-թուրքական այն ցեղախմբերը, որոնք խորշակների պես հեռավոր ավազուտներից ներխուժեցին Հայոց լեռնաշխարհ եւ արյան բաղնիքների վրա հիմնադրեցին օսմանյան կայսրությունը: Այդ կայսրության դաժան սուլթանները իրենց նախնիներն ունեցան պատմության ընթացքում: Հայ գրականության ընդհանուր առանցքում դրանք Բելն ու Նյուքար Մադեսն են, Շամիրամն ու Աժախակը, Շապուհն ու Հազկերտը, Մորիկ կայսրն ու Խոսրով Ապրուեզը, Մսրա Մելիքն ու Սելջուկը: Երիտթուրքերը նրանց ժառանգորդներն են: Նրանց շառավիղներն են այսօրվա ազերի-թուրքերը, որոնց ուղեղի գառանցանքներում խոսում է միայն ավերի ու ավարի, տարածքների եւ նյութական ու հոգեւոր գանձերի սեփականման բարբառանքը: Ահա, հայ ժողովրդի անցած ճանապարհը իր դարավոր թշնամիների դեմ մղված պայքարի առհավատչյան է: Այս պայքարի գոյությունն է թելադրել հռչակավոր հայագետ Մ. Աբեղյանին՝ մեր հին գեղարվեստական խոսքը գնահատելու որպես եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն, իսկ մեծանուն Ավ. Իսահակյանը 1946 թ. Հայաստանի գրողների երկրորդ համագումարի բացման խոսքում ընդգծել է. «Համաշխարհային պատմությունը հայ

Ժողովրդին վիճակել է մի հայրենիք՝ շրջապատված հզոր, աշխարհակալ պետություններով, որոնք ձգտել են հայ ժողովրդին ստրկացնել, կողոպտել եւ ոչնչացնել: Եվ այս դարձել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը:

Այսպիսով հայ ժողովրդի գրականությունն ազգային գոյամարտի գեղարվեստական պատմությունն է ընդդեմ ճակատագրի:

Մեր գրականության իշխող պաֆոսը, նրա միսիան դարերի անհաշտ պայքարն է հանուն հայրենիքի ազատության, ազգային կուլտուրայի եւ անկախ պետության, ընդդեմ բռնության, ստրկության»: ¹

Մեծ բանաստեղծի այս կարծիքը զալիս է հաստատելու «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» առարկայի ձեւավորման անհրաժեշտությունը, որը հայրենիքի եւ ժողովրդի միասնական ճակատագրի արտացոլման ուսումնասիրումն ու դասեր առնելու հրամայականն է: Երկար տարիներ բուհում դասավանդելով հայ գրականության պատմություն, ինչպես նաեւ մագիստրանտներին ուսուցանելով «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» առարկան, իրավունք ենք վերապահել մեզ ստեղծելու այս դասագիրքը: Ձգտել ենք համառոտակի ներկայացնել եւ ընդգծել հայոց հայրենապատումի գաղափարական ուղղվածությունն ու ազգային երանգների բազմազանությունը: Մինչեւ այս դասագիրքը հրատարակելը տպագրվել են մեր «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» (1998), «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» (2002) ուսումնասիրությունները, առանձին բանաստեղծների ստեղծագործություններին նվիրած գրքերում հատուկ բաժիններ ենք հատկացրել նրանց հայրենասիրական գործերին: Արդյունքում կարելու էլ ենք հրատարակել սույն դասագիրքը:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՄԱՔԱՌՄԱՆ ԵՐԳԸ՝ ԴԱՐԵՐԻ ՊԱՅԱՆՁՈՎ

Ամեն մի դարաշրջան մի նոր արհավիրք է բերել մեր ժողովրդին: Հայաստանը մշտապես եղել է հարեւան ռազմատենչ պետությունների՝ Պարսկաստանի, Բյուզանդիայի, Արաբական խալիֆայության, թաթար-մոնղոլների, օսմանյան կայսրության տեւական արյունահեղությունների թատերաբեմը: Բանաստեղծ հայ ժողովրդի ստեղծագործող զավակները որպես ականատեսներն այդ չարիքների, դարերին են հանձնել ցավից ու հույսից ծնված իրենց հայրենապատումները: Բավական է հիշել Մ. Խորենացու սերունդներին հղած «Ողբը», Եղիշեի՝ Վարդանի սխրանքը, Թովմա Արծրունու Եսայի ապու Մուսեի արցախական զարկը, Ն. Շնորհալու՝ Եդեսիայի ողբը, Ֆրիկի դարիպության մրմուռը եւ այդ ամենից բխող բանաստեղծական ընդվզումները: Ժողովուրդը եւս իր հանճարով անմասն չմնաց: Նա գալիքին կտակեց «Սասունցի Դավիթ» հերոսական դյուցազներգությունը, որ համաշխարհային էպոսների պատմության բացառիկ երեւույթներից է: Ազգային ճակատագրի բանաստեղծական արձագանքները գեղարվեստական գրականության մեջ շարունակվեցին անընդմեջ:

Ակադեմիկոս Ս. Արզումանյանը իր «Բանաստեղծության ազգային հողը» աշխատության մեջ հայոց հնագույն առասպելա-պատմական բանահյուսության մեջ բարձր է գնահատում այն երգերը, որոնք իրենց բովանդակությամբ եւ ձեւակառուցվածքային հատկանիշներով

րով արտահայտում են հայ ազգային բնավորության էական գծերը: Իսկ հայտնի են հայ ժողովրդի ազգային բնավորության բարենասնությունները՝ հերոսականություն, ազատասիրություն, աշխատասիրություն, խաղաղասիրություն, դժվարություններին դիմակայելու կամք, ընտանեկան սրբությունների պահպանում, մայրենի լեզվի եւ հայրենի հավատի պաշտպանում եւ այլն: Այդ առիթով իրենց որդիական խոսքն են ասել Բաֆֆին, Յ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Ս. Մեծարենցը, Դ. Վարուժանը, Գ. Ջոհրապը եւ այլոք:

Հայոց բանավոր չափածոյի առյուծի բաժինը ժողովրդի մղած ազատագրական պայքարն արտացոլող անմահ երկերն են: Առանձնահատուկ դեր են խաղացել հեթանոսական շրջանի վիպական երգերը: Դրանցում մի կողմից բացահայտված են հայ ժողովրդի ստեղծագործական կարողությունները, մյուս կողմից՝ բնավորության գծերը: «Հայկ եւ Բել», «Հայկյան Արամ», «Արտաշես եւ Արտավազդ», «Տիգրան եւ Աժդահակ», «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» ստեղծագործություններում գեղարվեստական բարձր մակարդակով ընդգծված է ժողովրդի հայրենասիրական ոգին: Հայոց առասպելական հերոսները ըմբոստանում են ամեն տեսակ բռնությունների դեմ: Դա նրանց արժանի հատկանիշն է: Ժողովուրդը իր ազատության եւ անկախության համար մարտնչող դյուցազուններին վերագրում է հրաշալի արտաքին, ֆիզիկական անսպառ ուժ, բարոյական անբիծ ավիշ, հերոսի ամուր կամք, թշնամու դեմ անզիջում պայքարելու վճռականություն:

Հարուստ է նաեւ Հայոց միջնադարյան պատմական-

Վիպական երգերի փունջը, որի երանգներից են «Արշակ եւ Շապուհ», «Պապ արքայորդի», «Տարոնի պատերազմ», «Սմբատ Բագրատունի», «Գրիգոր Դերեն», «Լեւոն որդի Յեթմոյ» վիպերգերը: Նրանցում կոնկրետ կերպարների միջոցով պատկերված են ժողովրդի մղած հերոսամարտերը: Ժողովրդական բանավոր ստեղծագործության գլուխգործոցներից է «Պարսից պատերազմ» վիպերգը: Հինգ մասից բաղկացած այդ երկի մեջ արտացոլված է հայ-պարսկական պատերազմը 3-րդ դարից սկսած մինչեւ 5-րդ դարի սկիզբը: Այդ վիպերգի տարբեր մասեր տեղ են գտել Ազաթանգեղոսի եւ Փ. Բուզանդի մատենագրություններում: Հայ Արշակունիների՝ Խոսրով Մեծի, Տրդատի, Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակի, Վասակ Մամիկոնյանի, Պապ Թագավորի, Սուշեղ Մամիկոնյանի անձնուրաց պայքարն ուղղված է Սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիրի, Շապուհի եւ այլ բռնապետների դեմ: Վիպերգի վերջին ճյուղը ավարտվում է հայ ժողովրդի հաղթանակով:

Հայոց միջնադարյան վիպերգերում զգալի տեղ են հատկացված եկեղեցական գործիչներին: Գեղարվեստական կերպարի աստիճանի են հասցված Գրիգոր Լուսավորչի եւ Ներսես Մեծի կերպարները:

Հայ ժողովուրդը իր ապագա սերունդներին է հանձնել «Սասունցի Դավիթ» էպոսը, որ ստեղծվել է 8-10-րդ դարերում, Արաբական խալիֆայության բռնությունների դեմ մղած աննահանջ պայքարի շաղախով: Էպոսի «Սանասար եւ Բաղդասար», «Առյուծածեւ Միեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Միեր» չորս ճյուղերում ժողովուրդը իր դյուցազունների կերպարներում խտացրել է

իր իսկ բնավորության գծերը: Ազգային ճակատագրի անմնացորդ կրողներ են եւ տղամարդկանց, եւ կանանց կերպարները, օտար բռնակալների դեմ անզիջուն մարտնչելու մեջ տեսնելով երկրի եւ ժողովրդի փրկությունը: Այս դաս է ոչ միայն անցած դարերի պատմության մեջ, այլեւ գալիք սերունդների համար: Մսրա Մելիքի դեմ մղած պայքարում բանաստեղծ ժողովուրդը ընդգծել է իր խորհուրդը ապագա սերունդներին: Կարելու է պիզոդ է Մսրա Մելիքին ոչնչացնելուց հետո՝ Սասունցի Դավթի պատգամը արաբական զորքին.

*Ելեք գացեք ու ձեր տներ նստեք,
Յանդարտ կացեք՝
Մեկել չելներ ու գաք վեր Սասնա:
Մեկել որ զենք առնեք մեր դեմ.
Թե որ դուք կռվի գաք վեր մեզ՝
Քառասուն գազ խոր հորում լինեք
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տելնի ձեր դեմ Սասնա Դավիթ
Տելնի ձեր դեմ Թուր Կայծակին:*

Միջնադարյան հայոց բանավոր հայրենապատումի հավերժախոս էջերից են «Մոկաց Միրզան», «Կարոս Խաչ», «Ասլան Աղա» պատմական վիպերգերը: Այս երկերում ընդգծված են ժողովրդի ոգին ու տարերքը՝ հայրենիքի պաշտպանությունը ու թշնամու դեմ անողոք պայքար մղելու վճռականությունը: Օտար բռնակալ Միր Մահմուդի դեմ մաքառող ժողովրդի ճակատագրի կրողը Միրզան է: Նա ժողովրդածին կտրիճ է, որը դառնում է դավաճան Կոլոտ-Խոճայի զոհը: Մոկաց Միրզան

Ժողովրդի անկախության համար կյանքը զոհասեղանին դնող հերոս է: Ժողովրդի ուժի եւ անմահության գաղափարն է ընդգծված «Կարոս Խաչ» վիպերգում: Օտար բռնակալներին ծնկի է բերում ժողովուրդն ինքը եւ իր ստեղծած երկի մեջ նշում է հենց իր կամքը.

*Էն խարիր իցցուն տարեկան շուն գգիր
Ելավ խելք գցեց քուրդ պարոնին,
Ասաց. էն բան չի Կարոս Խաչին,
Էն բան ա խայոց ազգին:*

Ազգային ճակատագրի պատկերման մնայուն արժեքներ են ստեղծել միջնադարյան հայ բանաստեղծները: Բազմաբովանդակ իր չափածոյի մեջ հայրենիքի պաշտպանության, ժողովրդի կրած տառապանքների, ապագայի հանդեպ ունեցած հավատի թեմաները յուրատեսակ պատկերներ են դարձել: Անդրադառնալով անցյալի հերոսներին, հայրենիքի ազատության համար նահատակված քաջերին, Ն. Շնորհալին ստեղծեց տարբեր ժանրերի երկեր: Նա փառաբանեց Աբգար թագավորին, Տրդատ Մեծին, Աշխեն թագուհուն, Ավարայրի խիզախներին, Ղեւոնդյան նահատակներին իր շարականներում ու պոեմներում: Հայոց միջնադարյան հայրենապատումի անմահ կոթող է Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմը (1145 թ.): Նկարագրելով թշնամու՝ Ջանգի ամիրայի կողմից Եղեսիայի պաշարումն ու կոտորածը 1144 թ. Շնորհալին քնարական հերոսուհու՝ սզվոր մոր կերպարի միջոցով խարազանում է բռնակալ հրոսակներին, ողբում ժողովրդի վիշտը, միաժամանակ հավատով խոսում երկրի մասին: Բանաստեղծը

հանգել է պայքարի միջոցով ազատություն ձեռք բերելու գաղափարին: Նա միաժամանակ ընդգծել է աշխարհով մեկ ցրված հայերի ներգաղթի ցանկությունը: Հայ ժողովրդի դժվարին ճակատագրի, ազատասիրական ոգու պատկերներով աչքի են ընկնում Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմի», Ֆրիկի «Գանգատ», «Ընդդեմ ֆալաքին», «Վասն Արղուն դանին եւ Բուղային» բանաստեղծությունները: 13-րդ դարում թաթար-մոնղոլական հրոսակների հասցրած դաժանությունների նկարագիրն ենք տեսնում Ֆրիկի պոեզիայում: Բանաստեղծը «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության մեջ իր բողոքի ձայնն է բարձրացրել թաթար-մոնղոլական նվաճողների դեմ:

*Հիմիկ դժարեց բաներս, որ թաթարն եղավ թագավոր,
Զրկեց զամենայն աշխարս ու զգողերն եղիր մեծավոր:*

Ֆրիկի ածնական վիշտը խորհրդանշում է ամբողջ հայ ժողովրդի կրած տառապանքը 13-րդ դարում:

15-րդ դարի բանաստեղծ Հ. Թլկուրանցին թաղծի եւ վշտի զգացումներով պատկերել է Քաջ Լիպարիտի զոհվելը օտար թշնամիների դեմ մղված ճակատամարտում: Լիպարիտը հայրենիքի ազատության համար մարտնչող, անձնուրաց զորավար է:

1453 թ. թուրքերը շրջապատեցին եւ գրավեցին Կոստանդնուպոլիսը: Առաքել Բաղիշեցին թուրքերի հաղթանակը համարեց ժողովուրդների դժբախտության աղբյուր եւ գրեց «Ողբ մայրաքաղաքին Ստամպոլու» պատմական երկը: Նկարագրելով քրիստոնյա քաղաքի անկումը, բանաստեղծը, ասես զգում էր թուրքական

կայսրության ստեղծման աղետալի իրողությունը: Բանաստեղծին հուզում է իր ժողովրդի ճակատագիրը, նա ամեն դեպքում հույսով է խոսում Հայաստանի քաղաքական եւ հոգեւոր զարթոնքի մասին:

Միջնադարյան սիրային եւ բնապաշտական քնարեգությանը զուգահեռ զարգացել է նաեւ կրոնա-հայրենասիրական պոեզիան: Այդ ուղղությամբ աչքի են ընկել Մարտիրոս Ղրիմեցին (17-րդ դար), Ներսես Սոկացին (16-17-րդ դդ.): Դարաշրջանի աղետալի իրադարձությունների արձագանք է Հովհաննես Մակվեցու «Ողբ Հայաստանեաց աշխարհի յերեւանայ եւ Ջուղայու» ստեղծագործությունը: Բանաստեղծը պատկերում է Շահ-Աբասի ավերածությունները, միաժամանակ փայփայելով հայրենիքի փրկության հույսը:

Հայ ժողովրդի ազգային ճակատագրի բանաստեղծական պատկերների ենք հանդիպում նաեւ Ն. Հովնաթանի (17-18-րդ դդ.) եւ Սայաթ-Նովայի ստեղծագործություններում: Երկու մեծ գուսանների երգերում ծանոթանում ենք ժողովրդի լուսավոր ոգուն, իմաստությանն ու կենսասիրությանը, թախծին ու ակնկալիքներին:

Հ. Թումանյանի՝ Սայաթ-Նովային տված գանահատականի մեջ կարելի է տեսնել մեծ գուսանին ծնող ժողովրդի բնավորությունն ու ճակատագիրը: Մեծ Լոռեցին գրել է. «Այդ հոյակապ սիրահարը բռնված ու բռնկված սիրո հրդեհով, սիրո լույսի տակ է տեսնում մարդուն ու աշխարհը... Ջզում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչար, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը... Ջայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց, բայց, երբեք չանիծեց»: Իսկ ռուս ականավոր բանաստեղծ ու

հայագետ Վ. Բրյուսովը գրել է. «Այնպիսի բանաստեղծներով, ինչպես Սայաթ-Նովան է, կարող է եւ պետք է պարծենա բովանդակ ժողովուրդը, դրանք Երկնքի վեհ ընծաներն են, որ ուղարկվում են ոչ ամենքին եւ ոչ հաճախակի, դրանք նախախնամության ընտրյալներն են, որոնք օրհնանք են դրոշմում իրենց դարի եւ իրենց հայրենիքի վրա»:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՎԵՐԻՆ

19-րդ դարի սկզբին՝ 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում Արեւելյան Հայաստանը մտավ ռուսական կայսրության կազմի մեջ: Պատմական այդ երեւոյթը ոգեւորությամբ ընդունեցին հայ մտավորականները: Հեռավոր Կալկաթայում Մ. Թաղիադյանը ցնծությամբ ընդունեց այդ հուսալի լուրը: Նա պարսկական բռնապետությունից ազատագրված Հայաստանը համարեց հայության փրկության կենտրոնը: 1828թ. Մ. Թաղիադյանը երեւանցիներին հղած նամակում հայրենիքի հետագա բարգավաճման մասին խոսում էր հավատով: Հայ ժողովրդի պատմության նորօրյա ընթացքը միաժամանակ նրան ոգեւորեց՝ գրելու «Հայկ ի տեսիլ Հայկազնին» պոեմը, որտեղ Հայկ Նահապետի շրթերին հնչում է հայրենիք վերադառնալու, Մասիսի շուրջը համախմբվելու պատգամը: Եվ ապա ծնվեց բանաստեղծի հայրենակարոտ երգի մի նոր էջ՝ հանձին «Զամբյուղաշեն աղջիկը» գողտրիկ բանաս-

տեղծության: XIX դարի սկզբին Մ.Թաղիադյանի պանդխտության երգը Մ.Նաղաշի դարիպության երգաչարի նորաբնույթ շարունակությունը հանդիսացավ: Հայ ժողովրդի փառավոր անցյալի եւ նորօրյա կյանքի իրողությունների հենքի վրա իր հարուստ հայրենապատումն ստեղծեց Խ. Աբովյանը: Նա ժողովրդի ազատության մարմնավորումը տեսավ նրա ազատագրական պայքարի մեջ, որի համար որպես խորհրդանիշ ընտրեց Վարդան Մամիկոնյանին: Աբովյանը ռուսական տիրապետության տակ անցնելը դիտեց որպես հայ ժողովրդի քաղաքական վերածննդի սկիզբ, որը հնարավորություն կտար հետագայում ձեւավորվելու որպես ազգ եւ ձեռք բերելու պետականություն: Մեծ լուսավորիչը բանաստեղծությունների ամբողջական մի շարք գրեց այդ երեւոյթի առթիվ: Որդիական նրա ազնիվ զգացումներն ու հավատը ռուսական կողմնորոշման հանդեպ առանձնահատուկ ուժով հնչեցին «Խնդամիտ զգացմունք...» բանաստեղծությունում: Իսկ «Մուտ Հայկայ ի Հայաստան» բանաստեղծության մեջ Աբովյանը ոգեկոչեց Հայկ Նահապետին, որը նույնպես Հայոց հողի վրա լսելով իր թոռների բացականչությունը, ողջունում է ռուսներին: Ինչ վերաբերում է Աբովյանի հայրենապատումի երանգներին, ապա բավական է նշել նրա «Վերք Հայաստանի» վեպը, որով կարելի է լրիվ պատկերացում կազմել «Էն ժամանակվա մեր աշխարհի հալ»-ի եւ աբովյանական սերնդի հայրենասիրական մղումների մասին:

«Վերքի» գլխավոր հերոսի՝ Աղասու կերպարի ստեղծումը անմահ գրողին դասեց մեծագույն հայրենասերների շարքը՝ իր ազգային շահերի, երկրի ապագա

ճակատագրի խորին գիտակցմամբ ու գնահատմամբ: Հայրենիքի սիրո զգացումները այնքան ջերմ են եւ առատ, որ Մ.Նալբանդյանն այն գնահատեց որպես ազգային գրականության հարազատ գաղափար:

Խ. Աբովյանից հետո Ղ. Ալիշանի «Նուագք» ժողովածուի «Հայրունի» հատորում հայրենասիրությունը հոլովվեց նոր մղումներով ու նպատակով: Ալիշանը հասկացավ, որ եկել է ժամը դաստիարակելու հայրենամյուկներ նոր քաղաքացիներ: Եվ նա իր պատմա-հայրենասիրական չափածոյում հիմնականում արծարծեց իր այդ գաղափար - «միտումը»: «Ուր չիք հայրենիք՝ չեն անդ եւ քաղաքացիք» իմաստասիրությունը փոխելով «Ուր քաղաքացիք չիք՝ չկան եւ հայրենիք» թեւավոր խոսքով, նա բանաստեղծական տարբեր հնարանքներով ցուցադրեց հայրենիքի հարատեւման իր սկզբունքը: Ալիշանը դիմելով մերթ անցյալի վերհուշին, մերթ ազգային հերոսների սխրանքներին, առաջ քաշեց նոր սերնդի ակտիվ գործունեության գաղափարը: Բանաստեղծը հանգեց զինված ապստամբության անհրաժեշտությանը («Մասիսու սարերն»): Այս միտումով էլ նա ոգեկոչեց Հայկին, Տրդատին, Սուշեղին, Առանձար Ամատունուն, Վահան Մամիկոնյանին, սուրբ Ղեւոնդին, Աշոտ Երկաթին եւ այլ երեվելիների: Իր պոետական վառ երեւակայությամբ Ղ. Ալիշանը ինքն էլ ոգեւորված վերոհիշյալ քաջազույններից, հորինեց իր հայրենասպաստումի նոր, ավելի փայլուն էջերը՝ աշխարհաբար: «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Հրագդան», «Պլպույն Ավարայրի» եւ այլ ստեղծագործություններում Նահապետը պանդխտության հոգեմաշ ապրումը սրտում, ոգեկոչեց Ավարայրի բլբուլ Եղիշեին, որ

Ինտագայում տիրպետող դարձավ հայոց հայերգության մեջ:

19-րդ դարի 50-60-ական թթ. հայոց հայրենապատումը հանձին Մ. Նալբանդյանի, նոր երանգներով դրսևորվեց: Նրան բնորոշ էին քաղաքացիական, ազգային-ազատագրական հայրենասիրական մղումները: Մ. Թաղիադյանի եւ Ղ. Ալիշանի հիմնադրած գրական այդ շարժումը իր նկատելի արդյունքն ունեցավ Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Րաֆֆու, Մ. Պեշիկթաշյանի գրական հունձքում: Այդ ժամանակահատվածի համար առավել բնորոշ են Մ. Նալբանդյանի քաղաքացիական երգերը: «Ապոլոնին» բանաստեղծության մեջ հրաժարվելով Ապոլոնի նվիրած քնքշալար քնարից, Նալբանդյանը «Մանկության օրեր»-ում բախեց ազատության դռները՝ «Խավարի ընդդեմ» պատերազմելու եւ թշնամու դեմ կտրիճի սուրն առնելու պահանջով: Նալբանդյանի հայրենասիրությունը եւ ազատությունը դրսևորվեցին շոշափելի պատկերներով: «Իտալացի աղջկա երգը 1859 թվականից» հյուսվածքը այդ մտորումների հիասքանչ արտահայտությունը դարձավ: Արձագանքելով իտալական ժողովրդի հերոս զավակ Գարիբալդու ազատագրական պայքարին, հայ բանաստեղծը քնարական հերոսուհու՝ եղբորը նվիրված ազատության դրոշին միահյուսում է հայրենիքին հավատարիմ ծառայելու իր երազանքը, մարդու կյանքի իմաստը տեսնելով՝ արյամբ հայրենիքը փրկելու մեջ:

Թշվառ Հայոց աշխարհի ազատաբաղձ որդին մի նոր բարձունքի հասավ «Ազատություն» հանրահայտ երգով, որը սուլթանական թուրքիայի եւ ռուսական

ցարիզմի դեմ ընթուստության եւ ազատագրական պայքարի հոյակապ օրհներգ դարձավ բոլոր սերունդների համար, նրանց հաղորդելով անձնուրաց պայքարի ավիշ:

19-րդ դարում պատմական իրադարձությունները փոփոխվում եւ զարգանում էին գլխապտույտ արագությամբ: Այստեղից էլ հայոց հայրենապատումի զարգացման բնույթը՝ առնչված մեր ազգային կարելուր եւ հրատապ խնդիրներին: Ռ.Պատկանյանի պոեզիան այս առումով նշանակալից երեւույթ է: Առաջին հերթին նրան հուզեց մայր ժողովրդի պատմական ճակատագիրը նորօրյա խառնարաններում: Շուտով հայտնի դարձավ «Գամառ Քաթիպայի» հիմնգերոդ տետրում զետեղված նրա «Արաքսի արտասուքը» քերթվածքը, որը լայն ճանաչում բերեց հեղինակին: Ետաբովյանական շրջանում Պատկանյանը կրկին ընդգծեց հայ ժողովրդի քաղաքական ազատությունը՝ նրանում տեսնելով նրա հարատեւման երաշխիքը:

Սգվոր Արաքսի ջրերը, նրա տխուր աչքերը բանաստեղծին հիշեցնում են մեր կորուսյալ գյուղերի եւ քաղաքների վիշտը: Արաքսի կորստյան ցավի մեջ հեղինակը ներկայացնում է անկախությունն ու ազատությունը կորցրած, օտար նվաճողների կողմից թալանված, հայրենի օջախներից զրկված հայ ժողովրդի հոգեկան տվայտանքները: Արաքսը սգում է նաեւ օտար ավերում հայրենիքի կարոտից տառապող պանդուխտ հայերի վիշտը: Պատահական չէ, որ ժամանակին Րաֆֆին այդ գործը համարեց հայ պոեզիայի թագուհի: Ռ. Պատկանյանը պատմության խորքերում որոնեց ու գտավ ազատագրական պայքարը մարմնավորող իր իդեալա-

կան հերոսներին: Նրա միտքը մերթ հասավ Ջարմայր Նահապետին, մերթ թեւավորվեց Վարդան Մամիկոնյանի սխրանքով, մերթ էլ փարվեց Արաքսին: Պատմական տարբեր ժամանակաշրջանները շաղկապելով միմյանց, Ռ. Պատկանյանը ձգտեց պատասխան տալ ժամանակի այրող խնդիրներին: Նա Վարդան Մամիկոնյանի կերպարը («Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը) ներկայացրեց որպես ժողովրդի արդար, անզիջում պայքարի, բարոյական լավագույն գծերի խտացում: Պոեմի հյուսվածքում «Վարդանի երգը» դարձավ հեղինակի ժամանակակից սերնդի ազատագրական մղումների, մարտական ոգու արտահայտություն: Հեղինակը Վարդանի շրթերով հասկացավ, որ թշնամին հայոց խլած «սուր ու խոփից մեր շղթան կռեց»: Նման ստրկական կյանքից գերադասելի է մահը: Այդ մասին է Վարդանի խորհուրդը, «Մահ կամ ազատություն» նշանաբանով գրված այս պոեմը Պատկանյանի ժամանակաշրջանի պահանջն էր: Հենց այն հրամայականն է թելադրել Ռ. Պատկանյանին 1875 թ. նոյեմբերի 10-ին Քերովբե Պատկանյանին հղած նամակում ընդգծելու, որ արդեն իրենց սպառել են ուսման, դաստիարակության, զոհաբերության, ազգասիրության, հայրենասիրության եւ այլ քարոզներ... «Խրատով մարդ խելոք չի լինիլ,- գրում է նա,- խելքը պարագան պիտի սովորեցնեն: Արի այսուհետ ուրիշ ճամփա բռնենք, իսկական փրկավետ, ժողովրդական ճամփան, արի այն անենք, ինչ որ ժողովուրդը սիրում է... բացարձակ հարցնենք, ի՞նչ է պետք ամենից առաջ ազգին, արի ցույց տանք, որ ազգը մինչեւ ազատություն, ինքնակառավարություն չի ստանա, ոչ դաստիարակություն կստանան նրա որդիք

ոչ ինքյանք կիրթ ու բարոյական կդառնան: Մի՞թե ռուսը նախ կռվեցավ եւ ապա ազատվեցավ, մի՞թե Գարիբալդին նախ կրթեց յուր ավազականման զինվորներին եւ ապա ազատեց ազգը, ո՞ւր ուզես նայե, միայն ազատ, ինքնակառավար ժողովուրդը կարող է բարոյապես լուսավորելու, իսկ կրթությունը եւ ստրկությունը շատ խաղաղ կերպով կկենան...»: ²

Այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչու ականավոր բանաստեղծը մեծ կարեւորություն էր տալիս Վարդանանց թեմային:

Հայտնի է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիայում ազգային-ազատագրական շարժումները նոր թափ ստացան: 1858-62 թթ. բալկանյան մի շարք երկրների, ապա հայկական ազատագրական ընդվզումները ամենուրեք արձագանք գտան: 1862 թ. հայերի եւ թուրքական իշխանությունների միջեւ ընդհարումներ տեղի ունեցան Վանում, այնուհետեւ Ջեթունում սկսվեց պայքարը, որը եւ ալիքվեց Արեւմտահայաստանի այլ շրջաններում: Ռ. Պատկանյանը այդ շարժումների հետ արեւմտահայության ազատագրական նոր հեռանկարներ կապեց: Հենց 1862-ին էլ նա ստեղծում է «Աղասու մոր երգը» բանաստեղծությունը: Վարդանից մինչեւ Աղասի բանաստեղծը ներայացրեց որպես հայրենասիրության դաս:

Աղասու մոր կերպարում մարմնավորվեց մայր Հայաստանը, իսկ որդու կերպարում՝ ժողովուրդը: Սրի եւ ձիու փոխաբերությամբ Պատկանյանը կոչ էր անում երիտասարդներին դառնալ Հայաստանի ազատության նոր զինվորյալները: Հայոց հայրենապատումի մեջ նոր երանգներ երեւան եկան XIX դարի 70-ական թվական-

ների երկրորդ կեսից սկսած մինչև 90-ական թթ. սկիզբը: 1876 թ. սկսվեց ռուս-պարսկական պատերազմը: Հայ ժողովուրդը ազատության նոր հույսեր կապեց այդ պատերազմի հետ: Ազգային ազատագրության պայքարին լծվեցին ժողովրդական լայն զանգվածներ, օսմանյան թուրքիայի լծից ապստամբության միջոցով ազատագրվելու գաղափարը համակեց շատերին: Ռ. Պատկանյանը եւ Րաֆֆին դարձան այդ գաղափարի կրողներն ու ջատագովները: Պատկանյանը գրեց ռազմաշունչ բանաստեղծություններ ու հրապարակեց «Ազատ երգեր» խորագրով, որպես ազատության գաղափարի եւ ոգու կոնկրետ դրսեւորումներ: Բանաստեղծը զինված պայքարը համարեց փրկության միակ ելք: Սակայն այս անգամ էլ Եվրոպան սկսեց իր ավանդական դիվանագիտական խաղերը: Անգլիան Կիպրոս կղզին ձեռք բերելու համար ազատ արձակեց Սուլլթան Համիդի ձեռքերը: Հուսախաբ եղավ նաեւ Պատկանյանը: Նա համոզվեց, որ եւ Գլադստոնները, եւ Բիսմարկները «կույր ու խուլ» են հայ ժողովրդի արդար պահանջի հանդեպ: Եվ ծնվեցին բանաստեղծի «Վեհաժողով», «Բողոք առ Եվրոպա», «Հայ արյուն» եւ այլ ստեղծագործությունները, որոնցում նա դատափետեց եվրոպական դիվանագիտության խարդախությունները, նրանց որակելով որպես «անբարոյական պետություններ»: Սակայն Պատկանյանը չհուսահատվեց: Նա ստեղծեց «Հյուսիս», «Սրտի վկայություն» հուսաբեր բանաստեղծությունները, կյանքի վերջին օրերին անգամ հավատալով ազատագրական շարժման ապագա բռնկումներին:

19-րդ դարի երկրորդ կեսին հայոց ազգային-

ազատագրական պայքարի շեփորահարներից մեկն էր Ս. Շահագիզը: «Ազատության ժամերը» ժողովածուից սկսած նա իր հետագա բանաստեղծություններում եւ պոեմներում զուգահեռների վրա ներկայացրեց պատմական հերոսական անցյալը եւ ներկա ստրկացված վիճակը: Մինչեւ կյանքի վերջը Շահագիզը հայրենիքը անձնագոհությամբ ազատագրելու ջատագովը եղավ: Ծշնարտացի եւ ոգեւորող տողերով իր սերնդակիցների անունից նա՝ «աքսորական... ազատությունը», երգվում էր «Ձոհելու... անձը հավիտյան , որպեսզի «Անվեհեր հոգին մնա միշտ ազատ»: Շահագիզը ներկասովյան տողերի շառաչով հնչեցրեց քաղաքական հավատամքը: «Նախ քաղաքացի եւ ապա պոետ»: Թշնամին կոնկրետ անուն ուներ նրա ստեղծագործության մեջ, նա «բռնավոր սուլթան»-ն էր: Ս. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի պես Շահագիզը եւս ոգեւորվեց Գարիբալդու ազատագրական պայքարով՝ փառաբանելով Ջեյթունի հերոսական ապստամբությունը, որպես ազատության կերոն:

Հայրենասիրական պոեզիայի անմիջական ու թեւավոր դողանջները հանդիսացան Ս. Պեշիկթաշլյանի Ջեյթունյան երգերը: «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվուն», «Թաղումն քաջորդվուն» եւ «Հայ քաջուհին» բանաստեղծությունների ընդհանրացված շարքը որպես դյուցազնապոեմ, դարձավ Ջեյթունյան ազատամարտի պոետական վավերագրության հրաշալի մի էջ հայոց հայրենապատումի մեջ, որի հիմնական երակը ազատագրական պայքարում ժողովրդի հավատն է սեփական ուժերի նկատմամբ:

Արեւմտան Հայաստանում 19-րդ դարի 60-ական

թվականներից սկսած ազգային-ազատագրական գաղափարների ուժեղացումը գրականության մեջ պայմանավորված էր հասարակական կյանքի վերելքով: Մ. Պեշիկթաշյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի ազատասիրական երգերի ֆոնի վրա երեւաց աստվածային Պ. Դուրյանը՝ «Իդժբ առ Հայաստան» բանաստեղծության պատգամ-տողերը շրթերին: Թուրքիայում քաղաքական ռեակցիայի ուժեղացումը եւ դաժան ճնշումները անգամ չկարողացան լռեցնել Դուրյանին: Նրա «Նոր սեւ օրեր» ստեղծագործությունը հանդիսացավ բանաստեղծի ազգային ցավից ծնված բողոք-ճիչը սուլթանական բռնապետության դեմ: Մի դեպքում ավերված երկրի պատկերը ներկայացնելով նոճիների փոխաբերությամբ, թուրքի փոխարեն ընդգծելով քուրդը, Դուրյանը ներկայացրեց հայ ժողովրդի հանդեպ իրագործված օսմանյան բռնությունները եւ ոտնձգությունների սաստկացումը, դրանցից ազատվելու միակ ելքը համարելով ազգային միասնությամբ բարձրացված սուրը: Տաղանդավոր բանաստեղծը թշվառ հայրենիքի ցավը սրտում, կսկիծով շշնջաց, «հեք մարդկության մեկ ոստը» հանդիսացող երկրին օգնելու պատրաստակամությունը:

Հայոց պատմության հորիզոնի վրա 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հույսի նոր ալիք առաջացրեց հայության սրտում: Ռուսական զորքերը գրավեցին Արեւմտյան Հայաստանի գլխավոր քաղաքները: Ճակատամարտերում աչքի են ընկնում նաեւ ռուսական բանակում ծառայող հայ զեներալները եւ հայ կամավորականները: Սակայն շուտով պարզ դարձավ, որ Սան-Ստեֆանոյի նախնական դաշնագրի 16-րդ հոդ-

վածը Բեռլինի վեհաժողովում շրջափոխվել է 61-ի: Անգլիական եւ ֆրանսիական դիվանագետները, ի հակադիր Ռուսաստանի, պաշտպանեցին Թուրքիային: Հետեւանքը եղավ այն, որ ռուսական զորքերը նահանջեցին Արեւմտյան Հայաստանի ազատագրած բնակավայրերից: Արդյունքում Ռուսաստանը տիրացավ միայն փոքրիկ մի երկրամասի՝ Կարս կենտրոնով: Այս իրադարձությունները նոր աղ ցանեցին հայ ժողովրդի դարավոր վերքի վրա, բերելով նոր մորմոքներ ու դառնություններ: Հայ մտավորականությունը ժողովրդի ցավն ու կսկիծը հոգում, մտորեց հարատեւման նոր հեռանկարների մասին, առաջ քաշեց ժողովրդի քաղաքակրթվելու պրոբլեմը՝ խաղաղ առաջընթացի սկզբունքով: Սակայն 1894-1897 թթ. սեւ տարիները կրկին ապացուցեցին, որ եվրոպական պետությունների թողտվությամբ Օսմանյան Թուրքիան իրագործում էր հայությունը բնաջնջելու իր վաղեմի ծրագիրը: Այս դաժան ժամանակահատվածում հայ ժողովրդի մտավորականները կրկին դարձան հարազատ ժողովրդի սեւ բախտի խաչակիրները: Ե՛վ տարագրված, ե՛ւ երկրում մնացած ստեղծագործողները ձգտեցին վառ պահել ժողովրդի կենսասիրական-ազատասիրական ոգին: Այդ տարիներին արյան եւ կոտորածների մթնոլորտում հայրենիքի հանդեպ ունեցած իրենց տազնապի եւ ցավի երգերը հյուսեցին ե՛ւ ավագ, ե՛ւ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները: Ռ. Պատկանյանից, Ղ. Աղայանից, Բաֆֆուց հետո հնչեցին Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Մ. Մեծարեցի, Վ. Տերյանի, Սիւմանթոյի, Դ. Վարուժանի եւ մյուս աստվածատուր բանաստեղծների հյուսվածքները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՑԱԿԻ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ

20-րդ դարի սկզբի հայկական հայրենապատումը հազեցվեց ցավի եւ մաքառման նոր զգացումներով: Ժողովրդի ողբերգության ահագնությունը բանաստեղծներին մղեց դեպի երգերի միանգամայն նոր ծիրեր: Ինչպես Սիամանթոն է բնութագրում, պահանջ զգացվեց «մաքրափայլ թերթերի վրա ցեղին ցավը եւ ցեղին ուժը բանաստեղծել»: Ցավը տիեզերական էր, աղետը սարսափելի, սակայն դեռ կար ժողովրդի դիմադրությունը: Հայոց բանաստեղծությունն էլ համապատասխանեց երեւոյթների այս ընդհանրությանը: Պատմության գնահատման նոր պահանջ զգացվեց,- նրան գումարվեց ժողովրդի ողբերգական ներկայի հառաչանքն ու ցավը: Սիամանթոն 1901 թ. «Դյուցազնորեն»-ում ներկայացրեց մաքառման ոգին, որ հատուկ էր մեր հին գրականությանը, ապա «Հայրորդիներ», «Հոգեվարքի եւ հույսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուներում բերեց իր հոգու ցավը, ազգային բախտի ծանրությունը, մահվան տեսիլները, կոտորածների սարսափները:

«Ես երգելով կուզեմ մեռնիլ» բաղձանքից նա կանգնեց «Հայրենի եզերքների» շոշափելի ափին ու կրկին դաժան աշխարհի հարվածների տակ կսկծաց՝ «Ափ մը մոխիր, հայրենի տուն»:

Սիամանթոյի մեծ ժամանակակիցներից մեկը՝ Դանիել Վարուժանը, իր նախորդների ավանդներով զորացած, սակայն ժողովրդի նոր ողբերգության կսկիծը սրտում, 1909 թ. բացեց «Ցեղին սրտի» դռները: Պատմա-

կան եւ քաղաքական ճշմարտությանը հավատարիմ, նա ցավով գրեց «Ձարդը», հետագա երգերում բողոքեց «Մինչեւ ե՞րբ իր արյամբ հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե», միաժամանակ հաստատեց՝ «Արյունից պիտի ծնվեն կակաչներ», ընդգծելով, որ «կլինի վարդահեղեղ գարուն»: Բանաստեղծը «Ձոն» քերթվածքով ի հայտ բերեց մեր ժողովրդի կորուստները եւ հավատի թրթիռները, կոչ արեց ի մի հավաքել երեք միլիոն հայ ժողովրդի սրտերի նշխարները եւ շարունակել առաջընթացը:

Յ. Թումանյանը դեռեւս իր ստեղծագործական առաջին շջանում ծեւավորված «Ազգային մոտիվներին» գումարում էր ազգային-ազատագրական, պանդխտության, ազգային վշտի հյուսվածքները: Պատահական չէին նաեւ մեր դարի սկզբին հավերժությանը հանձնած Մեծ Լոռեցու «Սասունցի Դավիթը», «Թմկաբերդի առունը» պոեմները, «Հայոց լեռներում» հանրահայտ բանաստեղծությունը, իմաստուն քառյակները: Մեր ազգային պոեզիայի ռահվիրաներից մեկի՝ Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուին հաջորդեցին ֆիդայական ռազմերգերը: Հայ ժողովրդի գոյությունը 20-րդ դարի սկզբին վտանգված էր: 1912 թ. Թումանյանը մորմոքով գրել է. «Ստեղծվել է մի դրություն, որ նշանավոր գիտնական Էլիզե Ռեկյուլին տրամադրում է լուրջ կերպով կարծիք հայտնելու, թե հայ ժողովուրդը ոչնչանալու ճանապարհի վրա է, եւ շատ չի քաշիլ որ, Արեւելքի մի քանի անհետացած կուլտուրական ազգերի նման, նա էլ կիջնի պատմության ասպարեզից»: ³ Իսկ 1913 թ. նա «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում նշեց, որ հայկական հարցը ծագել է այն օրից, երբ վտանգվել է հայ ժողովրդի կյանքը, գույքը, պատիվն ու

կուլտուրական զարգացումը: Այն գոյություն է ունեցել Պարսկաստանում, գոյություն է ունեցել եւ ունի Տաճկաստանում... «Հայկական հարցը,- գրում է Մեծ Լուռեցին,- վայրենի կոտորածների եւ կեղեքումների հարց է, հալածանքների, գաղթականության հարց է, նա զերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է»: ⁴ Այդ նույն թվականին Վ. Տերյանը գրեց.

«Մի՞թե վերջին պոետն են ես...» - արտահայտելով հայ մարդու հոգեկան ծանր ապրումն ու տագնապը վտանգված ժողովրդի ճակատագրի հանդեպ:

Սակայն պետք է նշել, որ անգամ նման ծանր ապրումների մեջ հայոց բանաստեղծները չէին կորցնում հայրենիքի ազատագրման հավատը: Այդ հույսը առանձնահատուկ ուժով փայլեց 1914 թվականից սկսած, երբ բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը:

Յ. Թումանյանը Արեւմտյան Հայաստանի ճակատագիրը կապում էր Ռուսաստանի հետ: Այդ հավատի արդյունքը հանդիսացավ նրա «Հսկան» բանաստեղծությունը: Սակայն այս պատերազմը նոր ցնցումներ եւ աղետներ բերեց մեր ժողովրդին: 1915 թ. ապրիլին մեկուկես միլիոն հայեր ոչնչացվեցին սեփական օջախներում եւ գաղթի ճանապարհներին, ավերվեց եւ ավերակվեց դարավոր մի երկիր ու վերջապես դարձավ կորուսյալ հայրենիք:

Վ. Տերյանը, որ 1913-ին «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ երազում էր հորիզոններ ընդգրկող հայ գրականություն՝ գեղարվեստական բարձր մակարդակով ու բազմազան թեմաներով, հայ մյուս բանաստեղծների հետ միասին կրկին հնչեցրեց հայրենիքի երգը՝ ցնցող ու այրող պատկերների հյուսվածքով:

Նա մայր ժողովրդի ապրած արհավիրքը պատկերեց արնամերկ հայրենիքի ֆոնի վրա, տառապանքի քառուղիներով անցած ժողովրդի անունից նշավակեց բարբարոս ցեղերին:

1915 թ. երիտթուրքական մարդակերները դաժան հաշվեհարդար տեսան նաեւ հայ մտավորականության հետ, որոնք ողջունել էին թուրքական հեղափոխությունը: Գ. Ջոհրապը, Դ. Վարուժանը, Ռ. Սեւակը, Սիամանթոն, Կոմիտասը եւ շատ ուրիշներ հավատ էին ընծայել երիտթուրքական «կոչերին» եւ պատրաստ էին թուրք աշխատավորության հետ միասին մասնակցելու Թուրքիայի եւ սեփական հայրենիքի վերածնության աշխատանքներին: Սակայն թուրքի դարավոր նենգությունը կատարեց իր սեւ գործը: Հայ ժողովրդի հոծ զանգվածների հետ մեկտեղ թուրքի զոհերը դարձան նաեւ նրա հարյուրավոր ազնիվ, տաղանդավոր մտավորականները:

Այդ ամենածանր օրերին Մեծ Լոռեցին խորհրդածեց. «Մենք երեկ մեկել օրվա ժողովուրդը չենք, առաջին անգամը չենք տեսնում էս տեսակ աղետն՝ ինչ որ տեսնում ենք՝ անօրինակ չի մեզ համար: Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով, փախչողն ու զաղթողն էլ չի իմացել թե ո՞ւր ապաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնություն կամ օգնության հույս չենք ունեցել: Բայց այնուամենայնիվ անց ենք կացրել էս ամենը»: ⁵ Այս տարիներին նա գրեց «Հայրենիքիս հետ», «Շուռ է գալիս ծանր քարը», «Հոգեհանգիստ», «Բարձրից», «Դժոխքի հանդեպ» եւ այլ բանաստեղծություններ, որոնցում ընդգծված երեւում են մեր ազգային տառա-

պանքը, ինչպես նաև նրա հարատելելու ավիշն ու վճռականությունը: Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը տեղին ու ճիշտ է նկատել, որ ողբերգությունը այդ շրջանի Թումանյանի հայրենասիրական մտորումների ամենաբնորոշ տրամադրությունն է՝ սերտորեն զուգակցված, հաճախ միահյուսված միեւնույն բանաստեղծության, միեւնույն պատկերի մեջ: «Ոչ ոք,- գրել է անվանի գրականագետը,- հայ գրողներից այնպիսի ցնցող ուժով չզգաց եւ չպատկերեց հայ ժողովրդի ողբերգության իրողությունը, բայց ոչ ոք այնպիսի մեծ հավատով չերգեց նրա մոտալուտ վերածնությունը, թեւ թե մեկ եւ թե մյուս տրամադրությունները հատուկ էին այդ շրջանի մեր լավագույն բանաստեղծներին, բավական է վերհիշել Վահան Տերյանի «Երկիր Նաիրին», Ավ. Իսահակյանի «Մեր նախահայրերը», Եղիշե Չարենցի «Կապուտաչյա հայրենիքը» ու «Դանթեական առասպելը»: ... «Չոգեհանգիստը» կարելի է ասել, մի վսեմ ռեքվիեմ է, տառապալից սրտի խորքից ծնված մի սաղմոսերգ, որը գնալով ահագնանում է, ծավալվում ահեղ եւ ողբալից դողանջները»: ⁶

Արյունաքամ հայ ժողովրդի բազմաթիվ մտավորականներ, այդ թվում է եւ գրողներ, հետեղեռնական տարիներին, կամքի եւ ուժերի լարումով նեցուկ դարձան տեղահանության, սովի ու համաճարակների մատնված ժողովրդին: Պատմության նոր խաչմերուկներում տեղի ունեցավ Չոկտեմբերյան հեղափոխությունը: Բարդ մի իրավիճակ ստեղծվեց հայության համար: Չեղափոխության հետ իրենց հույսերը կապած հայ մտավորականության մի մասը հիասթափություն ապրեց՝ տեսնելով Կովկասում նոր թափ առած ազգամիջյան հակամարտություններն ու կռիվները:

1918 թ. թուրքական զորքերը ավերների եւ մահերի միջով մոտեցան Երեւանին: Սարդարապատն ու Ղարաքիլիսան հերոսական դիմադրությամբ կրակներից փրկեցին փոքրիկ Յայաստանը: Սարդարապատին հաջորդեց Բաքվի կոմունան, որը տապալվեց մի քանի ամսից հետո: Այդ ժամանակաշրջանի ֆոնի վրա ուրվագծվեցին Մայիսյան ապստամբությունը, Սելրի դաշնագիրը, 1920-ի նոյեմբերի 29-ին բոլշեւիկյան կառավարության ստեղծումը: Գլխապտույտ այս իրադարձությունների աղյուսքում, վերջապես սփոփիչն այն էր, որ Յայաստանը հնարավորություն ստացավ խաղաղ պայմաններում վերածնվելու, բուժելու իր վերքերը: Խորհրդային իշխանության հանդեպ իրենց համակրանքն ու կոնկրետ գործունեությունը ցուցաբերեցին թե Յայաստանում եւ թե՛ օտար երկրներում ապրող շատ գրողներ: Նոր կարգերի վերաբերյալ հաստատումի եւ ժխտումի արտահայտությունները հասան մի կետի, որտեղից շատ-շատերը իրենց գոհունակությունն ու հիացմունքն արտահայտեցին Խորհրդային Յայաստանի իրողության վերաբերյալ, հանձին նրան տեսնելով բզկտված հայության հույսը եւ հետագա ազգահավաքման կենտրոնը:

20-ական թվականների սկզբից հայ պոետների շարքի մեջ ամենահզոր ձայնը Ե. Չարենցինն էր: Նա մայր ժողովրդի ճակատագրից իր հույզերն ու բանաստեղծական իրացումներն առնող ռահվիրան էր: Դեռեւս 20-րդ դարի տասական թվականներից սկսած երիտասարդ բանաստեղծին հանգիստ չէր տալիս հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի հարցը: Տվյալ ժամանակաշրջանի հայոց տազնապալից հայրենապատումի հյուսվածքում, Յ. Թումանյանի եւ Վ. Տերյանի դարա-

Կազմիկ պոեզիայի մոտ, Չարենցի հայրենիքի երգը հնչեց նոր երանգներով ու շեշտերով: Պատմական բարդ իրադարձությունների ֆոնի վրա նրա հայերգը իր մեջ ներառեց թախծի եւ վիատության, կորստի եւ ցավի նոտաները: Ազգային հայրենասիրական ռոմանտիկան այրվում էր հրկիզվող Նաիրիի հետ: Ինչպես ակադեմիկոս Ս. Սարինյանն է նկատել. «Երգի մուսաներն այլեւս անկարող էին 19-րդ դարի ռոմանտիկների լեզվով հնչեցնելու ազատությունը, հերոսությունն ու հայրենիքը... 19-րդ դարի Հայաստանը, կանգուն, պատմության դրվագների մեջ վերակերտված, աշխարհագրական սահմանների մեջ որոշ, ուժեղ ու կայուն Հայաստանը, բզկտվեց, եւ այն, ինչ իրական էր... դարձավ միրաժ, փշրված անուն»: ⁷ Հայրենասիրական ողբի եւ ցավատանց հոգու իր թրթիռների փունջը ներկայացրեց Չարենցը՝ հայրենական տան կերպարով, որը եւ գոյության խորհդանիշ էր: Հայրենի տունը՝ մերթ կոնկրետ ու շոշափելի, մերթ տեսիլքային պատկերով, բանաստեղծի այդ շրջանի հայրենապատումի առանցքն է կազմում: Ջանգերի ղողանջ, երագ, իրիկնամուտ, հոգնաբեկ, տագնապ եւ այլ բառային համակարգով Չարենցը մեկ թեւաթափ էր լինում, մեկ էլ կորցրածը վերագտնելու հույսով լիցքավորվում: Բանաստեղծի «Տեսիլաժամեր» շարքը այդ ապրումների գումարն է: Նա շուտով «Կապուտաչյա հայրենիք» գրքով բացեց Տեսիլաժամերի փակագծերը, երագեց Հայրենիքի հեթանոս հարսանիքը, փարվեց հույսի հրաշքին՝ «ավերակ ու արնաքամ» երկրի ցավը սրտում: Օգնության կանչելով Վահագնին («Վահագն»), ժողովրդական հավատին ու հույսին, բանաստեղծը դանթեական առասպելի սարսափներից հետո ականատեսը դարձավ ազգային կրակահան-

դեսին («Ազգային երազ»), վերջապես հայրենիքի ազատության ճշմարիտ ճանապարհը գտնելու երազով զինվորագրվեց հոկտեմբերյան հեղափոխության պաշտպանության գործին՝ հոգու խորքում ունենալով «Արեւ Նաիրին»: Սակայն միանշանակ չի կարելի պատկերացնել այդ նվիրումը:

1918 թ., երբ Թուրքիան կազմակերպել էր նոր արշավանք, Չարենցի մտահոգությունը կրկին դարձավ հայրենիքի գոյության հարցը: Անդրադառնալով Հայաստանի Առաջին հանրապետության իրողությանը, հետագայում խորհրդահայ գրականագետները ամեն կերպ ձգտում էին քննադատության կրակի տակ առնել դաշնակցական ղեկավարներին, նրանց որակելով որպես «անհեռատես գործիչներ», որոնք իբրեւ «երկրի ճակատագիրը դրել էին դիվանագիտական խաղաքարտերի ու պատահականության վրա, ժողովրդին մատակարարում էին սոսկ «ազգային-հայրենասիրական պատրանքներ» - «օդային ամրոցներ»: Այս չափազանցված երանգավորումները օգտագործում էին ընդգծված նպատակով: Նախ համոզելու, որ միայն Հոկտեմբերյան «կարմիր ամպրոպը» փրկեց Հայաստանը, երկրորդ, հաստատելու, որ Չարենցը հայրենիքի փրկության վերջնական հույսը կապել է Հոկտեմբերի հետ, եւ երրորդ՝ պատմական ամեն մի անհաջողությունն եւ ազգային աղետի պատճառները վերագրել դաշնակցությանը: Չափազանց խճճված հարցադրումներ են սրանք: Այսօր՝ տարիների բարձունքից հետադարձ հայացք ձգելով 20-30-ական թվականների իրադարձություններին, սթափ անդրադառնալով Չարենցի ժառանգությանը, համոզվում ես, որ հանճարեղ բանաստեղծի երգաշխարհին միանշանակ չի կարելի

մոտենալ: Չարենցը կոմունիստ էր քաղաքական հանդուժանքներով, հաճախակի բանավեճի մեջ էր մտնում առանձնապես արդեն սփյուռքում գործող դաշակցական գործիչների հետ, սակայն նրա հոգու ներքին այրումը հայրենիքի ճակատագիրն էր: Չարենցի հայրենասիրությունը տառապանք է, որովհետեւ բարի ու տառապալից է եղել նրա Չայրենիքը: Չայաստանի ճակատագիրն է հանդիսացել նրա երգի աղբյուրը: Դրա պերճախոս վկայությունը սարսռեցնող «Մահվան տեսիլ»-ից մինչեւ բազմաշերտ «Ես իմ անուշ Չայաստանի» պաննոն, հոգեծուփ «Խմբապետ Շավարշը» պոեմից մինչեւ հավերժախոս «Դեպի լյառն Մասիս» էպոպեան, ապա խռովահույզ «Պատմության քառուղիներով»-ից մինչեւ մարգարեական «Պատգամը»: Չայրենիքի եւ ժողովրդի ազատության ու գոյատեւման խնդիրը Չարենցի համար վեր է եղել քաղաքական ուժերի ամեն տեսակ նկրտումներից: Ավելորդ չենք համարում այստեղ կրկնել բանաստեղծ Գ. Քալաշյանի մահվան առիթով Գ. Ադամյանին հղած նրա նամակի հետեւյալ խորհուրդը, «...Քաղաքացին այսօր է, պոետը միշտ: Քաղաքացուն կարող եք սպանել, պոետին ոչ երբեք»: Ժողովուրդ, հայրենիք, բանաստեղծ եռամիասնությունը Չարենցի ստեղծագործության մշտաբորբոք երակն է: Եվ ինչքան կնճռոտ է եղել մեր ազգային ճանապարհը վարչական եւ քաղաքական բաժանումների տեսանկյունից, այնքան էլ բարդ է բանաստեղծի հայրենապատումը: Կարմիր բանակի զինվոր Չարենցը մերթ հայացքը հառում է վառվող հեռաստաններին՝ հեղափոխության կրակներից իր ժողովրդի ազատության ջահը վառելու, մերթ էլ բացականչում է. «Կապույտ կրակը սակայն չտվեց ոչինչ» («Ողջակիզվող կրակ»), մերթ

միաձուլվում է խելագարված ամբոխների հնակործան պայքարին («Ամբոխները խելագարված»), մերթ խորհրդային արեւի տակ մորմոքում. «Հագար ու մի վերք ես տեսել, էլի կտեսնես» («Տաղարան»), մերթ իր երկրի ազատության բոլշեւիկյան գաղափարով նետվում է խորհրդային ժողովուրդների Լենինյան Միության գիրկը («Լենինյան բալլադներ» շարքը), մերթ փոքրիկ Հայաստանի երերացող ճակատագրի հրամայականով սեփական ժողովրդի փրկությունը տեսնում միաբանվելու մեջ («Պատգամ»): Ամեն դեպքում քաղաքական ուժերի գաղափարախոսությունները Չարենցի հայրենապատումի համար վճռորոշ դեր չեն խաղացել: Վերջնական հանգույցում Չարենցը մնացել է մենմենակ իր բզկտված հայրենիքի ու տառապած ժողովրդի դեմ հանդիման:

Ինչպես հայոց երկրի արհավիրքված, բայց անթեք ուղին է, այդպիսին էլ նրա ցավերի խաչակիր զավակի ցաված սրտի երգն է՝ հավերժախոս: Երկրի եւ նրա Չարենց զավակի ճակատագրերի նմանությունները պարզ նշմարել է գրականագետ Դ. Գասպարյանը, «Իր ժողովրդից ժառանգաբար ստացած... մաքառման ոգին է, որ բնորոշում է նրա ամբողջ գրական կյանքը, առավել եւս՝ 1930-ական թթ. դրամատիկ ընթացքը: ... Բոլոր ժամանակների մեջ իր օրերի տերը ինքն է, մյուսները չեն եւ նրա մահն էլ մահ չէ, այլ անմահություն, այլ անվախճանական մի երթ՝ իր ժողովրդի հարատեւության երաշխիքով»: ⁸

Հայրենիքի ճակատագրի հանդեպ ունեցած իր անշիջանելի այրումներում Չարենցին կարելի է տեսնել միայն Անդրանիկ Չորավարի եւ Հ. Թումանյանի երթի մեջ:

Չարենցագիտության նոր սերունդը դեռևս ասելիք ունի այս կապակցությամբ:

1930-ական թթ. հայոց հայրենապատումը Խորհրդային Հայաստանում հյուսվում էր երկշերտ զգացումների միաձուլվածքով: Նախ՝ այն համոզմունքը, որ հային ազատ հայրենիք նվիրեց Յոկոտեմբերը, երկրորդ՝ նրա հարատեւման երաշխիքը ԽՍՀՄ-ն է՝ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Սփյուռքահայ գրականության մեջ հայրենապատումը հյուսվեց իրարամերժ կարծիքների առկայությամբ: Առաջին՝ տարբեր գաղթօջախների որոշ հայ բանաստեղծներ անմիջապես կամ քիչ ուշացումով եւս համոզվեցին, որ հայության միակ հույսն ու ապավենը Խորհրդային Հայաստանն է, իսկ մի շարք պոետներ քաղաքական տարբեր ուժերի, առանձնապես դաշնակցության քարոզով Խորհրդային Հայաստան իրողությունը չէին ընդունում, նրանց երգի բորբոքվող կրակը կորուսյալ հայրենիքի կարոտն էր, իսկ հայ ժողովրդի բախտին տնօրինող միակ քաղաքական ուժը՝ դաշնակցական կուսակցությունը: Դեպի Խորհրդային Հայաստան ունեցած իրենց վերաբերմունքի հակադիր բեւեռների վրա մեծապես ազդել են մի կողմից կոմունիստական եւ մյուս՝ դաշնակցական տարբեր ըմբռումները՝ ի վնաս հայրենիքի ընդհանուր ճկատագրի: Ահա, այս հակասական մոտեցումներն էլ հիմք են հանդիսացել հայոց ընդհանուր հայրենապատումի մեջ երեւան եկած իրարամերժ հյուսվածքների համար: Տարիների հետ, վերջապես ձեւավորվել է մի համոզմունք, ըստ որի փոքրիկ Վերածնված Հայաստանը հայոց հալածական բախտի ճանապարհին հայապահպանման, Հայոց դատի վերջնական

լուծման, Ազատ-Անկախ-Միացյալ Հայաստան ունենալու հիմնական ուժն ու ապավենն է:

Հայրենիքում ապրող բանաստեղծներից 30-ական թթ. Խորհրդային Հայաստանի իրական հաջողությունների բանաստեղծական տարեգրություններ են Գ. Մահարու, Ն.Զարյանի, Գ.Սարյանի, Վ.Ալազանի, Վ.Նորենցի, Ս. Տարոնցու եւ այլոց բազմաթիվ ստեղծագործություններ, որոնցում ընդգծված երեւում է Սովետական Հայաստանի կերպարի ստեղծման ձգտումը: Այս առումով խոսում օրինակ է Գ. Սարյանի «Խորհրդային Հայաստան» բանաստեղծությունը:

* * *

Հայոց հայրենապատումը նոր երանգներով դրսեւորվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ մարտնչելու կոչը հնչեց ամենատարբեր ձիրքերի եւ նախասիրությունների տեր բանաստեղծների երգերում: Ձեւավորվեց մարտական պոեզիան: Բանաստեղծական տարբեր ձեւերի միջոցով տարեց թե երիտասարդ պոետները խորհրդային երկրի պաշտպանության մեջ տեսնում էին նաեւ Մեծ եղեռն տեսած հայոց փոքրիկ աշխարհի փրկությունը: Ավ. Իսահակյանի «Ռազմակոչ», Ն. Զարյանի «Ողերձն իմ ժողովրդին», Գ. Սարյանի «Խոսք բարի երթի», Յ. Շիրազի «Բանաստեղծի ծայնը», Ա. Վշտունու «Ես կդառնամ», Ս. Տարոնացու «Ռազմի շեփոր», Թ. Հուրյանի «Սեւաստոպոլյան շարքը» եւ այլ ստեղծագործությունների լեյտմոտիվը սովետական հզոր երկրի, ասել է թե՛ նաեւ Հայաստանի պաշտպանության թեման է:

Երկրորդ աշխարհամարտում ստեղծված հայոց հայրենաստումի մեջ ներառնվեցին ժողովրդի պատմական ճակատագրի փիլիսոփայությունը, արդիական պայքարը, կարմիր բանակի շարքերում մարտնչող հայ հերոս զավակների քաջագործությունները, ազգային արժանապատվության եւ հպարտության զգացումը, հաղթանակի հանդեպ եղած հավատը, ժողովուրդների միասնական ընտանիքի անխախտելիության գաղափարը եւ այլն:

Հայրենական պատերազմի տարիներին հիտլերյան Գերմանիայի դեմ մարտնչելու անհրաժեշտության կոչը հնչեց նաեւ սփյուռքահայ բանաստեղծների ստեղծագործություններում: Վ.Թեքեյանի, Կ.Զարյանի, Կ.Սիտալի, Դեւի, Ն. Սաֆարյանի, Բ. Թոփալյանի, Վ. Վահյանի, Մ. Իշխանի, Ա.Ծառուկյանի, Հ.Գույումճյանի, Գ.Խանենցի, Գ. Աղդարյանի, Մ. Մանուշյանի եւ այլոց հայրենապատումը համահնչուն է Խորհրդային Հայաստանի բանաստեղծների հայրենասիրական երգերին: Երկու դեպքում էլ հայ գրողները համոզված էին, որ հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պատերազմը վրեժի հատուցումն է Վիլհելմ Երկրորդի հայակործան քաղաքականությունը շարունակողների հանդեպ:

Հայրենական պատերազմի տարիներին գրական ասպարեզ իջած երիտասարդ բանաստեղծները հայրենապատումի նոր, թարմ երանգներով հարստացրին մեր պոեզիան: Հ.Շիրազից եւ Թ.Հուրյանից հետո անմիջապես հանդես եկան Պ.Սեւակը, Հ. Սահյանը, Գ.Էմինը, Ս.Կապուտիկյանը, Վ.Դավթանը, Հր.Հովհաննիսյանը, Մ.Մարգարյանը, որոնք էլ ընդհանրության մեջ մի աստղաբույլ են կազմում:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԿԱՐՈՏԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ԵՐԳԸ

Հայ գրականության մեջ դարերի ընթացքում առանձնահատուկ տեղ է գրավել հայրենասիրական պոեզիան: Որպես հայրենիքի ճակատագրի գեղարվեստական վավերագրություն, այն կուտակել է ստեղծագործական հարուստ ավանդույթներ, որ շարունակվել է նաեւ 20-րդ դարի երկրորդ կեսի հայ բանաստեղծության մեջ:

Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո բանաստեղծներն իրենց ստեղծագործությունների պատկերային հյուսվածքների մեջ առան մեր ժողովրդի պատմական անցյալը, նրա հերոսական եւ ողբերգական էջերը, հոլովեցին հայրենի օջախը, մանկության անմոռանալի վայրերը: Գրվեցին բանաստեղծական շարքեր, պոեմներ, բալլադներ՝ նվիրված ժողովրդի անվանի զավակների սխրանքներին ու մեծագործություններին, նրա նորօրյա հույսերին ու զալիքին: Նորագույն շրջանի հայրենասիրական պոեզիայի հարստացմանը իրենց նպաստն են բերել համարյա բոլոր բանաստեղծները: Նրանք փառաբանելով հետպատերազմյան վերականգնման շրջանի պաթոսը, միաժամանակ արծարծեցին ժողովրդի ազգային ճակատագրի խնդիրը՝ կապված 1915-ի եղեռնի, կորուսյալ հայրենիքի անանցանելի ցավի հետ: Սակայն պետք է նշել, որ հետպատերազմյան շրջանում միանգամից չազատվեցին մինչ այդ արմատներ նետած գռեհիկ սոցիոլոգիզմի ըմբռնումներից ու գաղափարախոսությունից: Բայց

սառույցն արդեն փշրվել էր: Գրականության ընդդիմությունը աստիճանաբար տալիս էր իր առողջ պտուղները: Հայրենապատումը ծեռք էր բերում նոր որակ: Այդ տարիների հայրենապատումի մեջ իրենց ինքնատիպ երանգներն են բերում Յ.Շիրազը, Յ.Սահյանը, Պ.Սեւակը, Վ.Դավթյանը, Գ.Էմինը, Ս.Կապուտիկյանը, Հ.Հովհաննիսյանը, Ս.Սարգսյանը, ապա եւ բանաստեղծական նոր սերունդը:

1

Յ. Շիրազի ստեղծագործական մտահղացումների մեջ հայրենիքի մոտիվը միշտ եղել է ուղենիշային: Հայրենասիրությունը նրա հուզաշխարհի եւ ծեռագրի գլխավոր երակն է եւ հենց առաջին քայլերից սկսած տարբերվում էր իր գրչակից ժամանակակիցներից: Վերածնված փոքրիկ Հայաստանի պատկերը մի կողմից, մյուս կողմից կորուսյալ հայրենիքի ցավը շարունակում էին համատեղվել նրա ստեղծագործության մեջ: Եթե իր պոետական քայլերի առաջին շրջանում Շիրազը որոշ դեպքերում դիմում էր վերացական գովքերի, ապա գնալով, ինչքան էլ որ նրան քննադատում էին այսպես կոչված «մասիսերգության» չարաշահման համար, բարձրացնում էր իրական հայրենիքի խնդիրը՝ ստեղծելով նրա բազմաշերտ, բազմապլան պատկեր-կերպարը: Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող վերափոխումների արտացոլման հետ նա անընդմեջ անդրադառնում էր մեծ եղեռնին՝ մեր համազգային անանցանելի ցավին: Շիրազի հոգեբանական երկշերտ ապրումի արդյունքն է ստորեւ բերվող բանաստեղծական պատկերը, որը եւ միաժամանակ խոստովանություն է.

Մի աչքս Սեւան,
Մեկս՝ Վանա ծով,
Ու կյանքս անցավ
Ծիծաղ ու լացով: ⁹

Շիրազի հայրենասիրական երգերը ծնված են չսպիացող վերքերից: Այս առումով ետչարենցյան շրջանի ամենազգայուն բանաստեղծը Շիրազն է: Անգամ այն պահերին, երբ նա ի լուր աշխարհի հայտարարել է, որ «նոր հուն է մտել մեր ճանապարհը», երբ սփյուռքահայերի առաջին վերադարձի առիթով բացականչել է. «ճամփաները բացվեցին, էլի գարուն է բացվում, էլի ծովիս ծիրանի կյանքի դրոշմ է պարզում», միեւնույն է, նա շարունակում է՝ «Հայոց վերքերից ծնված երգերը Այրող են ինչպես հայոց վերքերը»:

Շիրազը չէր ընդունում այն «քննադատներին», ովքեր նրան քարկոծում էին ազգային վշտի հաճախակի ընդգծման մեջ եւ ձգտում էին հանդգել, որ ցավի վերհուշը թեւաթափ է անում նոր սերունդներին: Բանաստեղծը հակառակ կարծիքին է.

Հայոց երգերը՝ ամրոց երգերը՝
Բալասանում են հայոց վերքերը:
Հայոց երգերը, երբ խոլ փոթորկեն
Վազրի ու մահվան երախ կփակվեն:
Կբանան ճամփեն երկրի մասիսված, -
Դեպի ավետյաց աշխարհ իմ կիսված: ¹⁰

Կորուսյալ հայրենիքը գրողի բանաստեղծության մեջ դառնում է անբեկանելի կարոտի զգացում: Բայց դա կարոտի սովորական զգացում չէ, միամիտ կարո-

տախտ չէ եւ ոչ էլ մանկության եւ պատանեկության հուշերի ծփանք, այլ կորստի մշտահուլով ցավ է, որ հայ սերունդներին է անցնում մոր կաթի հետ եւ վերածվում արյան կանչի: Կորուստյան ցավի կրողները Շիրազի գործերում հանդես են բերված որպես աշխարհագրական-պատմական խորհրդանշանների ամբողջական համակարգ: Դրանք հիմնականում շնչավորված, անձնավորված են՝ Մասիսը վշտից քարացել է՝ լսելով «հայոց եղեռնի մասին»: Սակայն վշտի հավերժական այդ գոյությունը հայի երազների մեջ այդպիսին չէ՝ «Կչքվի դարը ամենայն չարից ու մենք կպարենք սուրբ հարսանիքով Մասիսի վրա, հայոց քոչարի...»:

Ուրեմն՝ Յ.Շիրազի հայրենասիրական բոլոր ստեղծագործությունների մեկնակետը Հայաստանի մեծ մասի կորուստն է: Լավ հասկանալով շիրազյան այս միտումը, որոշ «քննադատներ» կամա թե ակամա, խորհուրդ են տվել բանաստեղծին երգել միայն նորը, դրա տակ հասկանալով Երեւանի, Արագածի եւ Սեւանի գովքը: Արարատ երազելը համարվում էր անհասանելի ձգտում եւ խորհուրդ էր տրվում թողնել «մթնավեր Ղարսն ու Անին... վիրավոր Վանը» եւ երգել «Արեւ...Երեւանը», որ իբրեւ «հին ողբը նոր վարդին» չի սազում, որ հեռուն արդեն մեռած է, որ պետք է «նորը երգել»: Շիրազը, սակայն, կրկնում էր իր բաղձանքը: Նա իր հոգու մեջ շարունակում է փայփայել հայրենասիրական իր պատգամը, որ վերածել էր հավատամքի.

*Ի՞նչ են անում պաշտամունքը, երբ չեք հիշում Անին,
երբ կարոտ է յոթն ակունքը իմ մայր Երեւանին:
Ծաղկում է նոր Երեւանը, ձեզնից լավ են տեսնում,
Բայց բանտում է իր քույր Վանը, մրմունջն է ինձ հասնում:*

*Մայրն՝ ազատված որդու համար՝ սրտով է ծափ տալիս,
Բայց բանտվածին հիշում՝ հազար սրտով է միշտ լալիս: ¹¹
(«Բանաստեղծի բողոքը»):*

Բանաստեղծը մոր կարոտով ու ցավով հիշեցնում է, որ իր Վանը, Սիփանը, Անին, Մուշը, Ղարսը, Տարոնը, Մասիսը բանտված են: Նա ընդունում է, որ Երեւանը հույսն է ազգի, սակայն նրա կողքին «գերի է հողն անսահման».

*Ես ուզում եմ ազատ լինեն որդիք իմ հարազատ,
Յոթն էլ՝ մեկին յոթը ծնեն՝ Հայաստանով ազատ:
Մեծ Մասիսը զանգ է վսեմ, ես իր լեզվակն եմ Սիս,
Պիտի ցմահ զանգահարեմ՝ ազատեմ հողն ազգիս: ¹²*

Շիրազի կարոտը նպատակամետ է: Բանաստեղծը հավատացած է, որ Արտավազդ արքան «շղթաները փշրե պիտի», «Որ դառնա ձյունն Արարատի թագն իմ հավերժական»: Բանաստեղծի ցավից, կարոտից ծնվում է հույսը, որից էլ շափաղվում են նրա հավատն ու վճռականությունը.

*Հայաստանս կմեծանա, աստված ինքն է տալիք,
Վանա ծովից մինչ Սեւանս՝ ծովից ծովով գալիք,
Քանզի եսս լոկ եսս չէ, ողջ իմ ազգն է վսեմ,
Այս կողմ կգա Մասիսն էլ վեհ՝ մեռած տեղս էլ կասեմ:
Արարատս ծով էլ սուզեք՝ հայ սրտից չեք հանի,
Չէ, կազատվի Մասիսն էլ սեզ՝ վաղվա Հայաստանի: ¹³
(«Բանաստեղծի բողոքը»):*

Դիպուկ է Ավ.Իսահակյանի գնահատականը. «Յ.Շիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է»:¹⁴ Վարպետի այս դիտարկումը շիրազ-

յան հայրենասիրական քերթվածները մեկնաբանելու բանալի է:

Ասում են ցավ ունեցողը շատախոս է դառնում: Առածն՝ առած, բայց ընդգծենք, որ Շիրազի «շատախոսությունը» կապված համազգային ցավի հետ, չի ձանձրացրել ընթերցողին: Տարբեր առիթներով, տարբեր թեմաներ շոշափելիս մեծ բանաստեղծը չի շրջանցել այդ ցավը: Եղեմված ժողովրդի ցավը նա զգացել է նաև իր անձնական ճակատագրի մեջ: Չմոռանանք, որ Յ.Շիրազի բոստանչի հորը իր դռան մոտ սրախողխող են արել թուրքերը: Չմոռանանք նաև ապագա բանաստեղծի տառապանքը որբանոցներում: Ուրեմն, նույնն են նրա անձնական եւ իր ժողովրդի ճակատագրերը: Եվ աստվածատուր բանաստեղծը երբեք չէր կարող ինքն իրենից հեռանալ, մոռանալ ինքն իրեն եւ կեղծիքի ծխածածկույթով իրեն օրորել «երջանկության» դափնիների վրա: Նա բանաստեղծ էր ի ծնե, նա ազնիվ քարտուղարն էր ոչ թե աստծո, այլ իր ժողովրդի, որի սիրտը կիսել են դարավոր թշնամիները: Իսկ թուրքամետ բոլշեւիկ-ղեկավարները քառատել են փոքրիկ Հայաստանը՝ Մայր Արաքսը դարձնելով ժողովրդական վշտի ոչ թե սահման, այլ սիրտը բզկտող փշալար: Համազգային ցավի շիրազյան տարաբնույթ խոհերին ու ապրումներին համարժեք գործ է նրա «Քնար սիրո» շարքի «Խորագիրը խորքում» սիրային բանաստեղծությունը: Շիրազը պոետական ինքնատիպ ու հախուռն պատկերներով փառաբանում է «Չնաշխարհիկ մի կույս»-ի որ «Ասես Շուշանակուրծք, մաքուր եթեր ու քույր» է, եւ տենչում է, որ իրեն մենակ չթողնի... Բանաստեղծության սկզբնատառերը հուշում է աքրոստիքոս՝ շիրա-

զաբնույթ, շիրազաբույր, շիրազապատում. «Մռնչա Շիրազ ազատություն Մասիսին»: «Էլ ո՞ւմ համար են նռները կրծքիդ» տողով սկսվող բանաստեղծության մեջ սիրո հեթանոսական զգացումին անբռնազբոս ծուլված է կորուսյալ հայրենիքի կարոտը: Բանաստեղծը դիմում է սիրած էակին. «Բաց կուրծքդ կոկոն, որ դեմս բանա ճոխ այգեստաններն իմ հեռու Վանա, գեթ մի զույգ խնձորն իմ Արտամետի...», իսկ «Քեզ՝ քո հայադեղ հոնքերի համար» գողտրիկ երգի մեջ բանաստեղծը սիրո օբյեկտին նվերներ է բերում հայրենի «յոթնականար վանքերը», «Խրոխտ Արարատ լեռները»: «Ես կուզեի...» սիրո երազագույն բանաստեղծության մեջ Շիրազը գեղուհուն համեմատում է Սեւանի հետ եւ տենչում, որ միշտ մնար մոտը՝ իր ցավը կիսելու համար.

*Մոտս մնար՝ սրտիս պես խոր,
Երազում էլ ինձ կանչեր,
Ինքն էլ ինձ պես՝ գիշեր ու զօր
Չայոց ցավով հառաչեր: 15*

(«Ես կուզեի...»):

Չայրենիքի կորստյան անանցանելի ցավը մեկնակետային ընթացք է ստանում նաեւ «Քնար բնության» շարքում: Դիմելով բազմերանգ վարդերին, ընդգծելով բնությունը զարդարող նրանց հատկությունը, Շիրազը կրկին ձեռքը դնում է ցավող սրտին եւ ընդհանրացնում.

*Կարմիր վարդերը դեղին ծնեցին,
Աշխարհը դեղին վարդերով լցվեց.
Դեղին փշերը վեր սվինվեցին,
Եվ... Ամենից խոր՝ իմ ազգը խոցվեց...: 16*

(«Դեղին ծաղիկներ...»):

Խոցված ազգի խոր ցավը ընդգծված է նաև «Քնար համամարդկային» շարքի բանաստեղծություններում: Նշելով հայ ժողովրդի ազնիվ ծառայությունը մարդկութեանը, Շիրազը չի հաշտվում այն անտարբերության հետ, որ ցուցաբերեց հզորների աշխարհը հայ ժողովրդի հանդեպ: Քնարական հերոս-բանաստեղծը իր ժողովրդի անունից թվարկում է այն բարեմասնությունները, որ հատուկ են նրան. «կապեցի վերքն ամենքիդ...», «լքյալին փրկեցի», «ճամփա եղա ամենքին», «անհույսին հույս հերկեցի»:

*Ես հազար լուծ քաշեցի, իմս ոչ որ չքաշեց,
Ես մայր եղա ամենքին, ամենքիդ մեջ որբացա,
Հայոց վիշտն էլ իմ հույսը աշխարհով մեկ մշուշեց՝
Ես դեռ ջահել ծերացա: ¹⁷*

(«Մայրիկ...»):

Զրույց բացելով ազգերի հետ, Շիրազը անմիջական ապրումներով ներկայացնում է բանաստեղծական իր ազնիվ վերաբերմունքը, միաժամանակ արտահայտում իր դժգոհությունը՝ ելնելով հայ ժողովրդի կրած տառապանքից, որ պատճառել են այս կամ այն ազգային պետությունները: Այսպես, «Իմ մատյանները՝ գրքերն իմաստուն» տողով սկսվող բանաստեղծությունը ձոնված է Անմահ Շեքսպիրին: Արտահայտելով իր սերը մեծ գրողի հանդեպ, խոնարհվելով նրա վսեմ հանճարի առջև, Շիրազը միաժամանակ ընդգծում է իր խռովքը՝ նկատի ունենալով անգլիայի կառավարության հակահայկական քաղաքականությունը:

*Ես քեզ եմ խնկում, ոչ ազգիդ գահը,
Երբ մեր դռանը չոքեց սեւ մահը՝*

Գահր քրքջաց թե՛ «Նավերը մեր
Չեն կարող ելնել Արարատն ի վեր...»: 18

Հետեւանքը եղավ այն, որ «մենակ մնաց իմ հայոց ազգը... Եվ մեզ եղեռնեց յաթաղանը սեւ, - Խլեց մեր հողն էլ աստվածապարգեւ», - ավելացնում է բանաստեղծը:

«Ողբ Խայամական» բանաստեղծության հյուսվածքում պարսիկ դասական պոեզիայի հսկաներից մեկի՝ Օմար Խայամի հանդեպ արտահայտած հարգանքի տուրքի հետ մեկտեղ Հ.Շիրազը դարձյալ անդրադառնում է կորուսյալ հայրենիքի պատկերներին՝ Արագին, Մասիսին, ժխտում աշխարհավեր պատերազմները, հաստատում բարության հաղթանակը եւ Խայամի շուրթերով հնչեցնում իր երազը, «Շիրազ, ե՞րբ պիտի Մասիս բարձրանանք»:

Հ.Շիրազը ազգային վշտի զգացողությամբ շարունակել է հարստացնել իր հայրենապատումը: Նրա հոգու մեջ ասես միշտ արձագանքել է Մեծն Չարենցի ընդհանրացումը. «Քանի կա լյառն Արարատ եւ քանի աշխարհում դու կաս, դժվար թե ցամաքեն երբեք ակունքները քո ջինջ երգերի»: Հ.Շիրազի երգերը թեւեւ արվեստի տեսակետից ջինջ են ու խաղաղ,բայց միեւնույն ժամանակ ըմբոստ են, վշտոտ ու հուսավառ: Կորուսյալ հայրենիքի կարոտով հյուսված նրա երգերը հավերժախոս ու հավերժածուփ են: Եվ ստեղծագործական իր առաջին քայլերից սկսած այդ զգացումը կազմել է նրա երգերի հիմնական առանցքը... Դեռեւս երիտասարդ տարիքում գրած նրա խոհափիլիսոփայական մտորումներում՝ բնության հավերժության, մարդու եւ

բնության կապի, տիեզերքի առեղծվածների, մոր, սիրու-
 եւ այլ նախասիրությունների վերաբերյալ, հայրենիքի
 մոտիվը ընդգծված որակ է կազմել: Դրա խոսու՛ն վկա-
 յությունը «Ինչպես երեք աստղեր անշեջ» բանաստեղ-
 ծությունն է.

*Ինչպես երեք աստղեր անշեջ՝
 երեք սեր կա իմ հոգու մեջ,-
 Ասի սիրած իմ աղջկան,
 Եվ նա տխրեց ամպի նման:
 «Մի կասկածիր,- ասի նրան,-
 Դու ես իմ սերն, իմ աննման,-
 Ես սիրում եմ, վկա հոգիս,
 Քեզ, մայրիկիս,
 Հայրենիքիս...»: 19*

Հ.Շիրազը իրեն դրսևորել է որպես հայրենասիրա-
 կան երգերի փայլուն հեղինակ: Երկար տարիներ, այժմ
 էլ, դպրոցական դասագրքերում, քրեստոմատիանե-
 րում զետեղվում են նրա «Ո՞րն է, բաբո...», «Ո՞րն է,
 տղա...», «Արձան Աբովյանին» եւ այլ բանաստեղծու-
 թյուններ: Շիրազի երգերում քնարական հերոսը եւ հայ-
 րենիքը պատկերային համակարգում միաձուլված են:
 Այն հոգու ճիչ, արյան կանչ է: Բոլոր դեպքերում քնա-
 րական հերոսին հատուկ է Մասիսի վեհությունը: Բա-
 նաստեղծի «Դավթի թռռները», «Իմ Հայաստան», «Եր-
 կիր Նաիրի», «Հայ ժողովրդին» եւ այլ երգերում արտա-
 ցոված են հայ ժողովրդի հուսավառ երազներն ու հա-
 վատը: Ճիշտ է, պատերազմական թոհ ու բոհի առար-
 կայական պատկերումն այդ բանաստեղծություններում
 բացակայում է, սակայն բանաստեղծի վերացարկված

խոհերն ու մտորումները՝ առնչված հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրին, երեւում են ենթատեքստում, եւ դա է արվեստի գաղտնիքը: Հազարամյա եւ նորօրյա Արարատի կերպարը դառնում է ոգի եւ կանչ՝ ուղղված ներկա եւ գալիք սերունդներին («Երբ նայում եմ լեռնապարին», «Արարատ»): Շիրազի հայրենասիրական քնարերգությունը ընդգծվում է բանաստեղծական ինքնատիպ երանգով եւ հնչեղությամբ: Ընդհանրության մեջ դրանք ռազմերգության հատկանիշներ ունեն: Դա վերաբերում է նաեւ բանաստեղծի բալլադներին ու լեգենդներին, որոնց շարքում առանձնանում են «Զինգիզ խանը չար եւ փառատոչոր...» լեգենդը, «Աշխարհակալի վերջը» բալլադը: Համաշխարհային գրականության մեջ մեկ անգամ չեն արդրադարձել բարբարոս հոների առաջնորդ Աթիլլային: 1916թ. Չարենցը ավարտեց «Աթիլա» լեգենդը: Չարենցին հայտնի էին Վ. Բրյուսովի, Վ. Իվանովի կողմից այդ լեգենդի մշակումները: Վ. Բրյուսովը Աթիլլային ներկայացնում է որպես բուրժուական աշխարհը կործանող հզոր ուժ, իսկ Վ. Իվանովը ընդունում է որպես «ահեղ դատաստանի» մարգարե՝ նրան հատկացնելով անդրջրհեղեղյան կործանող գործողությունը: Չարենցի մոտեցումն այլ է: Նա Աթիլլայի հեռապատկերով պսակազերծել է պատերազմը հրահրող հասարակական ուժերին:

1932թ. Փարիզում Ավ. Իսահակյանը գրում է «Աթիլլան եւ իր սուրը» երկը: Վարպետը եւս Աթիլլային ներկայացնում է որպես չարության եւ պատերազմի խորհրդանիշ, որպես աշխարհն ավերող բարբարոս ուժ, որը սրի է քաշում «հովիվներին, ռամիկներին, ազատներին ... գեղջուկներին», արյամբ ներկում գետ ու գետին:

Սակայն նրա սուրը հագեցնում է միայն այնժամ, երբ իր իսկ ձեռքով երկինք նետած սուրը թափով իջնում է եւ պատռում նրա կուրծքը եւ խաղաղվում: Ինչպես Չարենցի, այնպես էլ Իսահակյանի մշակումները ուղղված են աշխարհում անընդմեջ ծնվող արյունարբու Աթիլլաների դեմ:

Յ. Շիրազը շարունակելով իր մեծ նախորդներին, ստեղծեց հոների արքա ահեղ Աթիլլայի կերպարը «Աշխարհակալի վերջը» բալլադում: Նա եւս իր գրական ուսուցիչների պես դատափետում է հայ ժողովրդի հին ու նոր թշնամիներին: Աթիլլան խմելով «արյունը հյուսիս, հարավի», սիրտը մարդկային արյունից չհագեցավ: Շամանի խորհրդով վեր նետեց սուրը եւ տեղի ունեցավ արժանին. «Սուրը վեր թռավ Ու վար սլացավ Մխրճվեց գլխի մեջ Աթիլլայի»:

Բանաստեղծը կատարում է ժողովրդի կենսափորձից ծնված ընդհանրացումը.

*Ճակատագիրն է այս թուրն ահալի
Ամեն մի ահեղ աշխարհակալի...²⁰*

Շիրազի հայրենասիրական երգերին հատուկ է լավատեսական ավարտը: Դա բխում է հեղինակի ներքին լավատեսությունից, որ պայմանավորված է սեփական ժողովրդի կենսունակության նկատմամբ ունեցած հավատով: Բանաստեղծի երգերում ինչքան ալիքվում են թախիծը, հառաչանքը, ողբերգական շունչը, միեւնույն է, դրանք ավարտվում են հայրենիքի հավերժության, ժողովրդի անմահության զգացումով.

*Մեզ են գլխից են գարկել, բայց նորեն
Չայերն սպրել են, սպրում են, կասրեն:*

Հազար դարեր են զարկել, բայց նորեն
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:
Եղեռնազարկ էլ եղանք, բայց նորեն
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն: ²¹
(«Հայոց ճակատագիրը»):

Խոսելով հայ պոեզիայի հայրենասիրական երգերի մշտական առկայության մասին, ընդգծելով Շիրազի հայրենապատումի առնչությունները այդ թեմային, գրականագետ Ս.Աթաբեկյանը նկատել է. «Եթե նախահեղափոխական հայ բանաստեղծը տառապում էր մայր հողի, ժողովրդի քաղաքական բախտի համար եւ հիմնականում ստիպված էր հնչեցնել արցունքի եւ արյան երգեր՝ դրամատիկ կամ ողբերգական կացության մեջ գծելով ցանկալի հայրենիքի պատկերը, ապա նորագույն բանաստեղծը, մասնավորապես՝ Շիրազը, իրեն բնորոշ տաղանդով ու նվիրվածությամբ ստեղծում է երկրի ու նրա զավակի կենսագրության նույնությունը: Հոգեբանական առումով շատ հասկանալի է նրա վիճակը, բանաստեղծը հասակ է նետել իր նոր հայրենիքի հետ, նրանք համարյա տարեկիցներ են: Նոր իրականությունը բանաստեղծին բարձրացրել է հատակից, լիցքավորել նրա ուժերը, շտկել նրա ճանապարհը»: ²²

Կարելի է համաձայնվել գրականագետի այս մտքին, սակայն միաժամանակ ավելացնել, որ նորագույն շրջանի պոետի հայրենասիրական երգերի մեջ ցանկալի հայրենիքի պատկերը ամբողջական չէ, որովհետեւ Խորհրդային Հայաստանը հայի ավանդական-պատմական հայրենիքի մեկ-տասներորդ մասն է միայն, մնացյալը թշնամիների կողմից խլված է: Ուստի մագա-

պուրծ փոքրիկ Հայաստանը կորուսյալ հայրենիքի վերագտնման ատաղձն է միայն, ինչպես Շիրազն է ասում.

*Ես Վան կասեմ՝ դու հասկացիր
Հողն ու ծովը մեր Վանա,
Սասնա Դավիթն ու մեր անծիր
Ողջ սարերը Սիփանա...
Ախ, ե՞րբ պիտի վշտից զատվի
Ողջ Հայաստանն հավիտյան...²³*

(«Վանն է դրախտով հայոց հողի»):

Հ.Շիրազի հայրենապատումը մի կողմից փրկված հայրենիքի հուսո ժպիտ է, մյուս կողմից՝ կորուսյալ երկրի կարոտ, որպես որդու երազանք, մոր աղոթք, հոր պատգամ, համազգային ցավ ու հույս... Այս զգացումը անցնում է երգից երգ, պոեմից-պոեմ բանաստեղծական նոր երանգներ ձեռք բերելով: Նրա խոհերն ու մտորումները անդադար պատվել են հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի շուրջը, նրա հարուստ գրական ժառանգության մեջ առաջին հերթին Հայաստանի դիմանկարն է: Այս առումով ճիշտ է նկատել անվանի գրականագետ Հր.Թամրազյանը, «Հ.Շիրազը գրում է բանաստեղծություններ Հայաստանի մասին, գրում է նաեւ սիրո, բնության ու ջահելության պայծառ երգեր: Ինչո՞ւ մեկը հայրենիք է, իսկ մյուսը սոսկ անձնական-սիրային պոեզիա, չէ՞ որ ամբողջի մեջ է ստեղծվում հայրենիքի պատկերը, նրա գեղեցկությունը եւ նրա մարդու հոգեկան հարստությունը»: ²⁴

Իսկապես, Շիրազի տարբեր թեմաներով գրված շարքերում հայրենիքի պատկերի հյուսվածքում հառնում է մոր կերպարը, արելում՝ սերը, ծփում բնության

բազմերանգ խոհրդ: Դրա վառ օրինակ են հանդիսանում «Ծիածանների քարերը վրան», «Երբ իմ սիրո լեզուն բացվի», «Սիրո սոնետը», «Երբ գրկում ես գարնան մի ծիլ իմ որդուն», «Մարված թոնիր տունս անձայն», «Օ՛, իմ ոսկե մանկություն» եւ այլն:

Հ.Շիրազի հայրենապատումի յուրօրինակ երանգները ծիածանվել են դեռեւս Հայրենական պատերազմի տարիներին: Սրտում ու հոգում կրելով իր ժողովրդի անցյալում կրած կորուստներն ու տառապանքները, ոտքերի տակ ունենալով փրկված փոքրիկ Հայաստանը, բանաստեղծը ակնկալել է խորհրդային ժողովուրդների հաղթանակը, դրա մեջ տեսնելով վերածնված երկրի մագնիսական ուժը՝ հետագայում աշխարհասփյուռ հայությունը իր շուրջը համախմբելու ակնկալիքով: Դրանով պետք է բացատրել այդ ժամանակահատվածի երգերում պատկերված մեր լեռների վեհությունը, բնության քնքշությունը, ազգային հպարտությունը, անպարտելիության հավատը: Վկան Շիրազի հայտնի վեցտողյան, որ մեծ բանաստեղծը անվանել է պոեմ.

*Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:²⁵*
(«Էքսպրոմտ»)

Դժվար չէ նկատել, որ խորհրդային բոլոր ժողովուրդների համընդհանուր ուժերով նվաճված հաղթանակը Շիրազը ներկայացնում է հայոց լեռնաշխարհի պատ-

կերի հիման վրա: Այդ երեւոյթը ժամանակին նկատել է Մ.Շահինյանը. «Հայրենական պատերազմը, - գրել է նա, - մղեց նորովի իմաստավորելու հայրենիքի զգացումը, ոչ թե «ընդհանրապես» վերացական հայրենիքը... այլ իր երկրի այն կոնկրետ, իր մանրամասներով թանկ այն անկյունը, որտեղ աշխատել ես, հասակ առել, սովորել, սիրել, թողել մորդ ու սիրելիներիդ»²⁶: Այդ նշանակում է, որ Մեծ հայրենականի տարիներին հայրենի երկրի, նրա պատմության, ներկայի հետ ավելի սերտորեն է կապվել պոեզիան, բանաստեղծները ընդհանուրի մասին, հզոր ուժի առկայության վերաբերյալ խոսել են կոնկրետ պատկերների միջոցով՝ հյուսվածքի մեջ ներառելով հայրենի հարազատ բնութայունը: Այստեղից էլ այդ ժամանակաշրջանի հայրենասիրական պոեզիայի անմիջականությունն ու հոգեհարազատությունը:

Ետպատերազմյան շրջանում Հ.Շիրազի հայրենապատումի մեջ արդեն նկատվում են նոր պրոբլեմներ: Խաղաղության ու աշխատանքի մոտիվը արծարծելուց հետո, առանձնապես 1954 թ. սկսած, Շիրազը նոր եռանդով եւ կարելի է ասել՝ համարձակությամբ արծարծեց ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ սփյուռքի ժողովրդի ճակատագիրը: Ժողովրդի նորօրյա կյանքում տեղի ունեցած կենսական փոփոխությունները պատկերելիս բանաստեղծը հետ է նայում՝ ակնկալելով անցյալի ծանր եւ ամոթալի հետքերի վերացումը: Այս մտահղացման ծնունդ են «Մեր գյուղերի անունները», «Մեր մարդկանց անունները» պոեմները: Այս գործերը հայրենասիրական պոեզիայի հիանալի նմուշներ են՝ իհարկե առնչված սոցիալ-քաղաքական, բարոյական, հոգեբանական խնդիրներին:

Պետք է նշել, որ ետպատերազմյան շրջանում սկիզբ առած ընդունելի եւ անընդունելի սկզբունքների հակասությունների հորձանուտի մեջ Շիրազը եւս տեղի է տվել ընդհանուր թեմաների պատվերին, սակայն չի հրաժարվել իր բարձր արվեստից, բանաստեղծությունը չի դարձրել պլակատային ճառ: Դա իսկապես հնարավորություն է տվել նրան հեռու մնալ հռետորական կոչերից: Չենք կարող չնշել, որ ժամանակի գրականությունը, մասնավորապես՝ պոեզիան տառապում էր այդ մանկական հիվանդությամբ, որ ժամանակի պաշտոնական գաղափարախոսությունից էր գալիս: Հարվածի տակ էին առնվում համարյա բոլոր այն ստեղծագործողները, որոնք ծնվել, ձեւավորվել էին աստվածային շնորհքով եւ իրենց ասելիքն ունեին: Չէին խնայում Պ.Սեւակին, Հ.Սահյանին, Վ.Դավթյանին, Ս.Կապուտիկյանին, Գ.Էմինին, Մ.Մարգարյանին, առավել եւս Հ.Շիրազին: Նրան կպցնում էին «իդեալիստական», «մանրբուրժուական», «ապոլիտիկ», «արխայիկ», նույնիսկ «կրոնամիստիկական» եւ այլ մտացածին պիտակներ: Գրականագետ Ս.Աղաբաբյանը հետագայում այդ կապակցությամբ ափսոսանքով պիտի գրի. «Հետպատերազմյան տասնամյակում տպագրվեցին հայրենասիրական ներշնչանքի ուժեղ բանաստեղծություններ, ինչպես Գ.Էմինի «Երգ երգոցը», Հ.Շիրազի մի շարք գործերը, սակայն աստիճանաբար թուլացավ քնարերգության հայրենասիրական լարը, ասպարեզ մտան ծնծղաները. թմբուկները, չափածո հրավառությունը: Իրապես խցանված էին երգի ակունքները, որ վերաբերում է հատկապես մտերմական ապրումների քնարերգությանը»: ²⁷

Սակայն պետք է նշել, որ իսկական բանաստեղծու-

թյան ընթացքը չխաթարվեց: Ուրախալին այն էր, որ երիտասարդ, տաղանդավոր բանաստեղծների կողքին հանդես եկան նոր քննադատներ՝ պոեզիայի ընկալման եւ գնահատման իրենց բանիմաց, թարմ ու անկողմնակալ չափանիշներով: Այդ էտապում էր, որ իրենց ուղեմիշ հանդիսացող դիտարկումներով ու խորհուրդներով գրականության զարգացմանը նպաստեցին Ս.Սարինյանը, Էդ.Զրբաշյանը, Ս.Աղաբաբյանը, Հր.Թամրազյանը, Լ.Հախվերդյանը եւ ուրիշներ: Պոեզիան զգալի վերելք ապրեց՝ մարդու ներաշխարհը թափանցելու, նրա հարուստ ապրումները պատկերելու առումով: Հ.Շիրազը հրատարակեց բանաստեղծությունների նոր շարքեր, պոեմներ, լեզենդներ, բալլադներ: Նկատվեց ժանրային բազմազանությունը, ստեղծագործությունների մեջ ծողովրդական մտածողության խորքային դրսևորումը, բանահյուսական սյուժեների օգտագործումը: Շիրազը երբեք չդավաճանեց բանաստեղծական իր հավատամքին եւ լեզվաոճական ձեռքբերումներին: Նրա բանաստեղծական երեւակայությունը իրերի էության հենքի վրա ստեղծեց հայրենիքի իր կերպարը՝ անմիջական, շոշափելի, առինքնող:

2

Հ.ՍԱՀՅԱՆԻ հայրենաշունչ երգերի գույները իրենց սկիզբն առան զանգեզուրյան լեռներից եւ ձորերից, աստեղնամերձ լեռնագագաթներից: Բանաստեղծի հայտնությունը նախ եւ առաջ կապված է Հայրենական պատերազմի հետ: Հ.Սահյանը գրականագետ Լ.Մկրտչյանի հետ ունեցած զրույցի ժամանակ («Պոեզիան օգնում է մարդուն») հաստատել է այդ հանգամանքը: ²⁸

Յ.Սահյանի հայրենասիրական առաջին, ջերմ թրթռնե-
րը հանրագումարի բերվեցին նրա երախայրիքում՝
«Որոտանի եզերքին» գրքում: Բանաստեղծը, որ զին-
վորագրվել էր սովետական ժողովրդի կանչով՝ աշխար-
հը փրկելու ֆաշիստական դեղին ժանտախտից, մար-
տադաշտից իր հայացքը հառել էր ծննդավայրի սրբու-
թյուններին, որդիաբար ձեռքը դնելով սրտին, ուր
ծփում էին նրա կարոտները, հավատը, սերը, ակնկա-
լիքները: Բանաստեղծի հուշերը Վոլգայի ափից նրան
տանում-հասցնում էին «զմրուխտե այն հեռուն», ուր
իր «մանկության ոտնահետքերից անձրեւաջուր է
խմում եղջերուն», այն բարձունքները «ուր մարդն ամ-
պերին վերից է նայում, Վերից է նայում արծվի ճախ-
րանքին», այն տնակը, ուր «հանգչում է մի համեստ
անցյալ» ու «մի փառավոր գալիք»: Ժամանակի զգա-
ցումի եւ հավատի թելադրանքով Յ.Սահյանը հաստա-
տում է, որ իր հուշերը

*Այն նվիրական տնակն են տանում,
Որ հետո այսքա՛ն, այսքա՛ն մեծացավ,
Ինձ համար աշխարհ դարձավ աշխարհում
Եվ անեզրական հայրենիք դարձավ: ²⁹
(«Անեն առավոտ...»):*

«Ինձ Գյազբել սարի հովերն են կանչում» տողով
սկսվող (1944) բանաստեղծության մեջ Սահյանը զին-
վորյալ որդու անհուն կարոտով կրկին լսում է հայրենի
Գյազբել սարի, Որոտանի ջրերի, Սալվարի հովիվների,
մանկության խաղընկերների, Սյունաց սարերի կանչե-
րը եւ «դժվար ճամփան» նրան ուր էլ տանում է, «նրանց
ձայնն է... ականջում»: Այնուհետեւ բանաստեղծը

Պիմանության ձեռով մերթ դիմում է Գյազբելի մուգ մանուշակներին, հիշում իր գառնուկին, որ հայրը պահում է, որպեսզի զոհի «կռվում հաղթած» որդու ոտքերի տակ, մերթ մտքով փնտրում է մանկական սրինգը, մերթ հեռվից շոյում է հարազատների պատրաստած նվերները, զրուցում այգեպանի եւ հովվի հետ եւ ապա կարոտի կրակով իրեն նետում նահրյան բարդու կանաչ հրդեհի մեջ, հայրենիքի հանդեպ ծփացող սերը խարույկի բոցով հասցնում աստղերին: Աշխարհասասան պատերազմի արհավիրքների դեմ մարտնչող զինվոր-բանաստեղծը Հայոց երկիրը ներկայացնում է նահրյան բարդու պատկերով, որի շուքը միշտ կա նրա մանկության կանաչ արտի վրա, «կարոտով կրակ սրտի» զգվում է նրան, աղերսում, որ իր արտույտ-մանկան կյանքին զով անի, «հոր նման զգվի անքուն»: Կարոտի եւ սիրո զգացումը վերածվում է անձնագոհության խոստովանության:

*Ես երգիչ հրի, սրի, շահ չունենմ քո սիրուց զատ,
Քեզ նման կանաչ կյանքով քեզ համար ելած մարտի,
Կմեռնենմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Նահրյան դալար բարդի: ³⁰
(«Նահրյան դալար բարդի»)*

«Որոտանի եգերքին» գիրքը ազդարարեց, որ հայկական պոեզիա է մուտք գործել մի ինքնատիպ, աստվածատուր բանաստեղծ:Նա՝ հայոց աշխարհի ապագա պոետ-դեսպաններից մեկը, որ հայկական դարավոր ցավով ու թախիծների հորձանքով պետք է աշխարհին ներկայացնի Հայաստանի մասունքները, փշուր-փշուր երազները, կորուստների ահավորությունը, վերջապես

Եղած-չեղածին տեր կանգնելու վճռականությունը: Եթե «Որոտանի եզերքի» նախշերի համար իրեն շոյված ու երջանկացած համարեց Ս.Զորյանը, ապա մյուս կողմից էլ գտնվեցին «քննադատներ», որոնք խորհրդային տարիների գռեհիկ սոցիոլոգիզմի թելադրանքով տաղանդավոր բանաստեղծին մեղադրեցին ֆոլկլորային պարզունակ մտածողության, բնության առանձին հատվածներով միակողմանիորեն հափշտակվածության մեջ: Այդ անիմաստ եւ վնասաբեր ճամարտականություններին հետագայում պետք է անդրադառնար անվանի գրականագետը՝ ընդգծելով. «Թեեւ Համո Սահյանի պոեզիան հնչում էր «տոպոգրաֆիական» պաթոսով, ծննդավայրի քարտեզի՝ Որոտանի, Գյազբեղի, Սալ-վարդի աշխարհագրական կետերի մեծարանքով, սակայն դրանից նա բնավ չէր դառնում ազգագրագետ-ֆոլկլորիստ, կոլորիտ ոճավորող, ինչպես դրությունը պատկերացնում էին ընդդիմախոսները: Բանն այն է, որ որոտանյան շարքով Սահյանը արտահայտում էր ոչ տեղական տազնապներ ու ոչ միայն անձնական ապրումներ»: ³¹

Արվեստի աշխարհում քիչ չեն այն դեպքերը, երբ վայ քննադատները արջի ծառայություն են մատուցում նույնիսկ մեծ անհատականություններին, եթե ոչ ամբողջությամբ, ապա ստեղծագործական ճանապարհի որոշ հատվածում խաթարելով նրանց վերընթացը, խանգարելով նրանց ինքնաբուխ խոսքի ճշմարիտ դրսևորումներին: Վերհիշենք Չարենցի ծախ մոլորությունները. «Կոմալմանախը», «Պոեզո զուռնան», «Ռոմանս անսերը», «Կապկազ թամաշան» եւ այլն: Կարելի է օրինակները շարունակել նաեւ մեր մյուս մեծություն-

ների գեղարվեստական հունձքի վերաբերյալ: Նման ոչ հաճելի երեւույթ տեղի ունեցավ եւ Հ.Սահյանի հետ: «Որոտանի եզերքին» գրքից հետո բանաստեղծը ընթերցողներին հանձնեց «Առագաստ» (1947), «Սլացքի մեջ» (1950), «Ծիածանը տափաստանում» (1953) գրքերը, որոնցում գերիշխեցին սխեմատիկ, ճառային ոտանավորները: «Սլացքի մեջ» գիրքը բացվեց համանուն ոտանավորով, ուր բանաստեղծը դիմում է ոչ թե Հայաստանին, այլ «Մեծ հայրենիքին».

*Հավաքած ահա ուժերդ բոլոր,
Մի չտեսնված արագությամբ
Սլանում ես դու, Հայրենիք իմ նոր,
Դեպի շողշողուն քո ապագան: ³²
(«Սլացքի մեջ»):*

Եվ ապա սովետական քաղաքացու անունից պետք է քայլի «հոգու մեջ հազար հղացումներ» եւ բացականչի, որ «Մարքսիզմի ոլորաններում... մտքի թելերն է մարզել», «սեփական ձեռքով բռնած լենինյան դրոշմ անգին» առաջինն է մտել «Սոցիալիզմի այգին»: Սահյանի բանաստեղծական քարտեզը այնքան է ընդարձակվում, որ նրանում աննշմարելի են դառնում Որոտանի հայակերտ, հայաշունչ, հայաբնույթ երանգները, եւ կորուսյալ հայրենիք ունեցող բանաստեղծը իրեն ներկայացնում է որպես բախտավորված, ցավ ու հոգս չունեցող մի էակ, որի հայացքի առջեւ «Ստալինն էր անցնում հեզնելով փոթորկի Պտույտները վայրագ», եւ ապա «ընդօրինակելով նրա քայլվածքն ուրույն, Անցնում էր աշխարհի մեծ ապագան»: Ահա այդպես, «Ապագայից քայլեր ու ժպիտներ» առնելով, աշխարհի հետ

խոսում է հայ բանաստեղծը սովետական քաղաքացու անունից, լենինյան դրոշը ձեռքին.

*Ես գալիս եմ դարերի
Անթափանց մշուշների տակից,
Չոգուս մեջ հազար հղացումներ,
Չազար երազ ու տենչ:
Չկա մի ուրիշ էակ
Աշխարհում ինձ մրցակից,
Ես անմահություն եմ անձնավորված
Մարդու պատկերի մեջ...³³*

Եվ ապա բացած իր «Առագաստը», բանաստեղծը Բուզովնայից հասնում է Կրեմլի պարիսպների տակ, երախտագիտության իր խոսքն ասում Մեծ Առաջնորդին, Երդվում քաջաբար կռվել նրա «սրբազան դրոշի տակ», հյուրընկալվում Թախիա-Տաշում, թեյ ճաշակում եղբայրության այգում, փարվում Կարա-Կումի երկնքին, հայ ժողովրդին հուզող բոլոր պրոբլեմները համարում լուծված, ինքն իրեն համոզելով, որ հայոց երկիրը եղբայրության այգու մի մասն է կազմում՝ փորձանքներից փրկված, որովհետեւ Յազմեդ քեռին վստահեցնում է.

*Եվ որպեսզի անակնկալ
Աղետներից փրկեմ,
Շուրջը պիտի ես ռուսական
Սեզ կեչիներ տնկեմ,
Որ սոսափեն չորս կողմերից
Զվարթ ու ցնձագին
Եվ պաշտպանեն չար հողմերից
Եղբայրության այգին: ³⁴*

1955 թ. Հ.Սահյանը լույս ընծայեց «Բարձունքի վրա» ժողովածուն: Նա այստեղ ինչ-որ չափով շարունակեց ի մի բերել «Որոտանի եզերքի» գույները՝ հայաստանյան ինքնատիպ պատկերներ, հայի հոգեբանություն, հայկական երանգներ, զանգեզուրյան բարձունքների սլացք, լեռնային գետերի խստություն, հայկական հոգեկան աշխարհի շոյող շարժումներ, սրտապարար քնքշություն, թախծոտ թրթիռներ: Եվ Գ.Սահարին պիտի ցնծությամբ նկատի, թե ինչպես են Հ.Սահյանի երգերում բնության պատկերները դառնում պատկերակերպարներ, պատկեր բովանդակություններ: Հ.Սահյանը կրկին գնաց դեպի հայրենիքի գիրկը, նրա կերպարի մեջ տեսնելով իրեն, լսելով իր հոգու կանչն ու սրտի արձագանքը: Հայոց լեռնաշխարհի կենդանի բնությունը, նրա բազմերանգությունը ընթերցողին ներկայացվեցին որպես հայկական հոգեբանություն, որպես սահմանական պատկերագրության փիլիսոփայություն:

1958 թ. Հ.Սահյանը ներկայացավ «Նաիրյան դալար բարդի» ժողովածուով: 1930-40-ական թթ. գռեհիկ սոցիոլոգիզմը ճեղքեր էր տվել, բայց գրականության մեջ դեռեւս մտրակում էր լեռնայան կուսակցության ամենահաղթ դրոշով ապագային հասնելու խարանը, դեռեւս հայ բանաստեղծը պետք է Արագածին հասներ Մոսկվայով եւ Արարատին կարոտեր՝ ինչ-որ չափով հենված իր հավատին՝ «Խորհրդային Հայաստան» անունով: Բայց նկատելի էր, որ հայրենիքի պատկերը այս ժողովածուում կրկին Նաիրյան դալար բարդու կերպարն էր: Տարիներ առաջ հոգու շշուկներ հանդիսացող հայրենաշունչ երազը բանաստեղծական մետաֆորի մեջ կրկին գտավ իր տեղը.

Իրար հազիվ ծանաչելով,
Հեռվից հեռու հառաչելով,
Հայոց սարերն իրար ասին.
- Ե՞րբ կժաղկենք մենք միասին:
Իրար ասին
Ու նայեցին աչքերով թաց՝
Վարսը փետտած, արյունոտված
Մայր Արաքսին:
Եվ մայրական խորին գուլթով
Արաքսն ասաց.
- Շուտով, շուտով...
Տարիներ էր գալիս-գնում,
Եվ իր խոսքն է դեռ կրկնում
Մայր Արաքսը խուլ որոտով.
- Շուտով, շուտով...³⁵

Այս զգացումները հորձանք տալով, նոր գույներ առան «Հայաստանը երգերի մեջ» (1962) ժողովածուում: Սահյանը կերտեց հին ու նոր Հայաստանի դիմանկարը: Նա խոստովանում էր, որ ոչ թե Հայաստանն է տեսնում աշխարհի մեջ, այլ աշխարհը՝ Հայաստանի: Դիմելով հայրենի երկրին, բանաստեղծը հասկանում է, որ «մեր ճանապարհը բախտի հեռաստաններն է տանում», եւ երբեք ճանապարհը այսքան ապահով չի եղել.

Հայն այսպիսի հայրենիք
Ե՞րբ է տեսել աշխարհում,
Ե՞րբ է եղել աշխարհում
Մի այսպիսի Հայաստան: ³⁶
(«Հայաստան»):

Հպարտ, բարձրիկ, հզոր, ճոխ, մեծ մակդիրները մի աստղաբույլ են կազմում Հայաստան հասկացության համար: Բանաստեղծը հպարտանում է Արարատի դիմաց հառնող «Նորոգ ոստանի», արբեշում թելերով մեր ինքնությունը խորհրդանշող «մեր դրոշի» համար: Սակայն բանաստեղծի ուշքն ու միտքը ժողովրդի երգերի մեջ խոսող-թելող Հայաստանի անցյալն է՝ «Փոշոտված փշատենու», «հոշոտված խաղողի որթի», «տարագիր հոգու բաղձանքի», «պանդխտության ճամբաներում կռունկված երգի», «որդեկորույս մայրերի ողբի» պատկերներով:

Բանաստեղծը համեմատում է միմյանց երկու Հայաստան՝ հին ու նոր, հնի մեջ նշմարելով միայն թախիծն ու սովերը, իսկ նորի մեջ՝ գետերից լույս քամող, փրկված հայրենիք: Հ.Սահյանը եղածը փրկելու համար աստծուն փառք տվող երգիչ-զավակ է («Հայաստանը երգերի մեջ»), որ եկել է դարերից եւ «փառապանծ եղբայրների հետ արեւ է տանում աշխարհներին» («Երգ Հայաստանի»): Բանաստեղծը իր մեծ ուսուցչի՝ Չարենցի պես փառաբանում է մեծ Հոկտեմբերը, Հայաստանի փրկությունը տեսնելով նրա հաղթարշավում:

*Թե հոկտեմբերյան դրոշի փայլից
Չվառվեր ճակատն Արագածի.
Իր սութ այրերում շունչը կփչեր
Այրերի երկիր Հայաստանս:
Մեր երդիկներից ծխի հետ նորից
Չեր հյուսվի բույրը ցորեն-հացի,*

*Շեկ ժայռերի մեջ անհույս կհանգչեր
Ժայռերի երկիր Հայաստանս: ³⁷*

(«Երգ Հայաստանի»):

Հ.Սահյանի «հավատն ու երախտիքը» անդադար կրկնվում են Հայաստանին նվիրված շարքի բանաստեղծություններում: Նա կրկնում է, որ առանց Հոկտեմբերի «Տառերի երկիր Հայաստանը» իր գերեզմանին գիր չէր ունենա, իր «բարձր սարերից գլխավայր կընկներ վիհերը խոր», «Բոլոր կողմերից սրարշավ եկող Վայրի ցեղերին կուլ կգնար», «Ճամփեքին ընկած քար կմնար... Քարից հաց քամող, քարին թեւ տվող, Քարերի երկիր Հայաստանը»... Վերջապես բանաստեղծը հանգիստ ու ապահով շունչ է քաշում եւ հպարտ հայտարարում, որ ոչ մի թշնամի չի կարող Հայաստանը «վայրի մոլուցքով դարձնել նորից Ավերի երկիր, ցավերի երկիր, խավարի երկիր...»: Չէ՞ որ նա շարունակում է ճանապարհը «փառապանծ եղբայրների հետ»:

Ի՞նչ էր տեղի ունեցել հայ բանաստեղծների հետ: Ինչո՞ւ եւ ինչպե՞ս էին նրանք շրջանցում այն հարվածն ու վիրավորանքը, որ հասցվել էր մեր ժողովրդին 1920 թ. բոլշևիկյան տիրապետության հենց առաջին օրերից: Ասես խոսքերը մեկ արած մոռացության են տվել Նախիջևանն ու Արցախը, չէին հիշում ասես, որ Սյունիքը փրկվել էր միայն ու միայն Նժդեհի եւ Նժդեհականների շնորհիվ: Մենք միտում չունենք մեղադրելու խորհրդային կարգերի հանդեպ երախտագիտության զգացումով շիկացած իրենց սրտերի դռները բացած հայ պոետներին: Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն ուներ իր ՊԱԿ-Գեստապոն, որի ականջները տեսնում էին, աչքերը՝ լսում, միշտ մարդաշատ պահում մահվան ճամբարներն ու աքսորները, ժամանակ էր պետք: Ստալինի մահից հետո քայլ առ քայլ հայ պոետները պետք է գնային դեպի հայոց համազգային ցավը,

որը ոչ մի կերպ հնարավոր չէ մեղմել: Եվ Հ.Սահյանն էլ վերոհիշյալ երախտիքի խոսքի լուսանցքում պետք է 1954 թ. երկմտի.

*Մարմին է տվել իր հին երազին
Իմ հին Հայաստանն փրկված հողով,
Բայց դեռ արցունք է խառնում Արազին
Իմ հին Հայաստանն իր զրկված հողով:
Ա՛խ, ես ինչ ասեմ անսիրտ Արազին,
Որ սիրտս կիսած անցնում է միջով: ³⁸*

(«Մարմին է տվել...»):

Հ.Սահյանի հայրենասիրական պոեզիայում աստիճանաբար հնչեցվում է պահանջատիրոջ ձայնը: Նրա երգերում սկսեցին ծփալ ոչ միայն Որոտանի եզերքի փեշերը, այլև ընդգծվեց եղածի ու կորուսյալի գեղարվեստական կերպարը: Ընդհանրական հոգու քարտեզի վրա երանգավորվեցին Վանա լիճը, Սեւանը, Արարատն ու Արագածը, Գյազբելն ու Քիրսը: Սահյանի հոգու եզերքի քարտեզի վրա երեւան են գալիս հայոց լեռնաշխարհի իրական ու ոգեղեն իրողությունը, նրա ծննդավայրի կապույտ երկնքի ծիրերում թրթռում է հայոց պատմությունը: Ակադեմիկոս Ս. Արզումանյանը այդ կապակցությամբ գրել է. «Համո Սահյանի ինքնատիպությունը միաժամանակ հաստատվում է ազգային բանաստեղծ լինելու նրա յուրահատկությամբ: Իսկ այդ ինքնատիպության գաղտնիքը հենց առաջին հերթին ազգային հողը պահպանելու եւ նորովի արտահայտելու մեջ է»: ³⁹ Հայոց մեծ պոետների հետ միասին Հ.Սահյանը կերտեց իր Հայաստանը: Ռուս բանաստեղծուհի Ալլա Մարչենկոն պիտի ազդարարի. «Սահյանը խորա-

Կես ազգային բանաստեղծ է... Նա իր «հայութունը» չի ցուցաբերում, չի ընդգծում»,⁴⁰ իսկ Լեւ Օզերովը պիտի ընդգծի. «Քարափը ծածկել է երկինքը եւ ինքը դարձել երկինք: Նրա վրա տարածվել են մասրենու արմատները: Մասրենու համար այդ քարափը միաժամանակ եւ հող է, եւ երկինք: Հողմերը ի վիճակի չեն նրան պոկելու այդ քարափից: Մասրենու տեսքը մտածել է տալիս քարափների, բույսերի, մարդկանց, ժողովրդի ճակատագրի մասին»: ⁴¹

Հ.Սահյանի հայրենապատումը Որոտանից սկսում եւ հասնում է այնտեղ, որտեղ ապրում է զոնե մի հայ: Հոգեբանական նախադրյալ ընտրելով Գյազբելն ու Որոտանը, հասնում է աշխարհի չորս ծագերում հայրենական տուն չունեցող մարդկանց: Հ.Սահյանը ընթերցողի հոգում արթնացնում է հայոց մեծած ղարերը, նրանց նվիրում անցագիր՝ ոչ թե հեռանալու, այլ տուն վերադառնալու, այցելելու այն լեռները, որոնց «գագաթին օրն ուշ է մթնում», որտեղ «սարեր կան սարերի վրա», ուր քարեր կան «Մեկը մեկի ուսին թիկնած, Մեկը մեկի շնչից շիկնած» եւ ուր նայում ես «քարե բարձունք է, Քարե արցունք է, քարե ժպիտ», ուր մեր կյանքը «երկարում է քարերն ի վեր» («Ուր որ նայում եմ»): Հ.Սահյանի երգերը այնքան եւ այնպես են վերածվում հոգեբանական նոր վիճակների, որ պարզ տեսնում ես հորիզոնները կորցրած Հայաստանի գոյությունը, «փոշոտված» փշատենին եւ «հոշոտված» խաղողի որթը սկսում են ծաղկավորվել «ճերմակ ծիավոր» դարձած լեռան ստորոտում:

Հ. Սահյանը կորցրածը եղածի մեջ տեսնելու, եղածով կորուսյալ երկիրը գտնելու, թշնամուց վրեժ

լուծելու եւ հարատեւելու կենսափիլիսոփայությունը դարձրել է անզուգական բանաստեղծություններ: Հայրենապատումի նրա էվոյուցիան այս տարիների համար բանաստեղծի հոգեբանության բացահայտման հիանալի օրինակ է: Հայտնի պատճառներով հայկական պոեզիայում 20-ական թթ սկսած հայրենիքի պատկերն ընդդակվեց-դարձավ անծայրածիր Սովետական Միություն, նրանից դուրս Հայաստան տեսնելը վտանգավորության հասնող երեւոյթ էր: Ահա թե ինչու երկար ժամանակ կորուսյալ Հայաստանի պատկերը երգի մեջ էր բերվում վախի թրթիռներով, կարելի է ասել՝ միջնորդված, կողքից: Այդ ընթացքից դուրս չէր նաեւ Հ.Սահյանը: Այսպես, «Սլացքի մեջ» ժողովածուի (1950) 36 բանաստեղծություններից միայն մեկում՝ «Թումանյանի հայրենիքում» է հիշվում հայ ժողովրդի ծանր անցյալը՝ այն էլ կապված Թումանյանի կերտած կերպարների ճակատագրերի հետ: Բերենք ոտանավորի ավարտը.

*Թե Անուշն աչքիս դեմ չբացեր վերքերն իր,
Ինձ ցմահ կթվար, թե երկրիս դուստրերը
Միշտ այսպես սավառնել, ժպտացել, երգել են,
Եղել են իրենց տան ու բախտի տերերը:
Կթվար միշտ կյանքին օտար էր խավարը,
Օտար էր եղեմը, աղետը ու հինը,*

*Միշտ այսպես ծաղկել է մեր անծայր աշխարհը
Եվ անծայր աշխարհում մեր փոքրիկ Լոռին այս: ⁴²*

(«Թումանյանի հայրենիքում»):

«Ծիածանը տափաստանում» (1953) գրքի 55 բանաստեղծություններից «Երգեր Արաքսի մասին» ստեղծագործության մեջ է միայն, որ Հ.Սահյանը հակադրում է մայր Արաքսի այն ափը այս ափին: Արաքսի հանդեպ երգիչը իր սիրտը բացում է ընդգծում է.

*Մերթ կարկաչում ես, մերթ շառաչում ես,
Մերթ մռնչում ես քո ծայնով մեկ,
Դու մերթ մանկան պես ուրախ ծչում ես,
Մերթ հառաչում ես ժայռերի մեջ:
... Մի ափիդ ահա պայծառ մայիս է,
Մեկում ձնհալը կընկնի շուտով,
Մի աչքդ ժպտում, մեկը՝ լալիս է
Ազատ ճախրանքի խոր կարոտով...⁴³*

(«Երգեր Արաքսի մասին»):

1964 թ. Հ.Սահյանը ընթերցողին հանդիպեց «Մայրանուտից առաջ» ժողովածուով: Այստեղ գետեղվել էին նրա անտիպ բանաստեղծությունները, պարբերական մամուլում եւ նախորդ ժողովածուներում տեղ գտած որոշ երգեր: Բոլորել էր Հ.Սահյանի ծննդյան 50-ամյակը: Բանաստեղծը «Որոտանի եզերքից» համարյա անցել էր 20-ամյա մի արգասաբեր ճանապարհ, եւ որ ամենից կարելուրն է, Սահյանը վերադարձել է կրկին հայրենի բնաշխարհ: Այս երեւոյթներն էլ հենց իրավունք տվեց գրականագետին գրքի առաջաբանում ընդգծելու. «Նրա (Հ.Սահյանի) բանաստեղծություններում մենք շատ ենք հանդիպում հայրենի բնության նկարագրությանը: Այդ տեսակետից Հ.Սահյանը թերեւս չունի իր հավասարը սովետահայ պոեզիայում: Նա կատարյալ բնանկարիչ է... Հ.Սահյանի լիրիկական

իերոսը իր հայրենիքի հավատարիմ զավակն է»։⁴⁴

Հորինելով իր երգերը «առանց հարկադրանքի» եւ երբեք «չմեղանչելով իր խղճի դեմ», դեպի իմաստութեան բարձունքները քայլող բանաստեղծն իր երազները ծուլելով հայրենի աղբյուրների կարկաչին, երկու ոտքով կանգնում է մայր հողի վրա, «հարդագողի պուրակներից մոլորակներ քաղում», որ քամի երկրային ուղեւորների բաժակի մեջ: «Քարի պես պինդ... հողի պես փխրուն» բանաստեղծ-քաղաքացին խոստովանում է.

*Մերթ ծաղկեցի այս հողի հետ,
Մերթ այս հողում կորա անհետ...*

Իմաստնացած բանաստեղծի հայրենապատումը գնալով պարուրվում է թախծի եւ ափսոսանքի երանգներով: Հայրենիք հասկացության մեջ ներառվում է ժողովրդի նորօրյա ընթացքը, կենդանի պատկերներով ներկայացվում ժողովրդի ձեռք-բերածն ու կորցրածը: Այս առումով նրա խոսքը սրտեր թափանցելու նոր ուժ է ձեռք բերում, թեւեր է առնում ճշմարտության պահանջի ծփանքով: Արձակագիր Ս.Խանգաղյանին ձոնած «Օրը մթնեց» բանաստեղծությունը սահյանական իմաստութեան եւ արվեստի նոր փայլատակում հանդիսացավ: Պոետական մտահղացման զուգահեռ երանգները՝ հայրենիքի անցածը եւ տխուր ներկան պատկերող սարյանական գեղանկար է: Մեծ հայրենիքի երբեմնի «սլացքի» երկինքներից բանաստեղծը վայրէջք է կատարում զանգեզուրյան պապենական բակում: Ամեն ինչ տեսիլք է դարձել, եւ՝ «ծղնոտաբույր թիկնոցը հագած... ամառային օրը...», եւ՝ «կաթնահունց երկնականարը»,

«Ե՛վ զուսպ, եւ՛ հավաք» կորուստներն ու ավանդները, եւ՛ «Ծաղիկ եզան Զանգի ծլնագոցը», եւ՛ «Պապի շունչը», եւ՛ «տատի շերտիը հին»: Բոլորն անցել են.

*Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա...
Ես եմ մնում լոկ հրբել հուշ
Եվ հրբել վկա:*

*Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի: ⁴⁵*

(«Օրը մթնեց»):

Հ.Սահյանի հայրենասիրությունը այստեղ հրաշքներ է արարում, հրաշքներ բոլոր նրանց հոգիներում, ովքեր գիտակցում են, թե ինչ է նշանակում հայրենիք եւ հայրենի օջախ ունեցող անհատ, ժողովրդի համար, ովքեր մեկընդմիշտ ականջի օղ են դարձրել մի ճշմարտություն, որ առանց այդ օջախների, առանց հայրենական կենսալից գյուղերի չիք է հայրենիք հասկացությունը, ովքեր Հայրենիքի ազատության ծիածանի մի փեշը կամրջում են հայրենական գյուղերին, մյուսը՝ քաղաքների վրայով նետում դեպի գալիքը: Այս եւ նման բանաստեղծություններում, ինչպես «Ախ, երկնքի չվող հավքեր», «Գեթ մի օրով», «Իմ ապրած կյանքը», «Անձրեւ» եւ այլ երգերում, Հ.Սահյանը ոչինչ չի սքողում, նորովի է բացվում նրա աշխարհընկալումը, սիրող զավակի տազնապով է սրբում հայրենի երկրի

ճակատի քրտինքը, ձեռքը դնում լեռնաշխարհի կրծքին
եւ շոշափում նրա զարկերակը.

*Խելագարվել է Լորագետն էլի
Ու ոտից գլուխ փրփուր է դառել:
Այնպես է հարբել, որ մինչեւ անգամ
Երկնքի վրա մատ է թափ տալիս...
Գե՞տն է չգիտես, թե՞ կապը կտրած
Պտուտահողմն է լեռներից պոկվել
Եվ տազնապահար դեղձենիների
Ծաղկաթերթերն է կիրճն ի վար տանում
Այսպես են գետերն իմ Հայաստանում: 46*

Գետերն հենց այնպես չեն խելագարվում, հենց այնպես չեն հարբում, հենց այնպես մատ չեն թափ տալիս երկնքի վրա: Պարզվում է, որ երաշտից «Մուգ մի մորմոք է մաղվում Սրկած անտառին», «Քամին լռել եւ ինչ որ դավ է որոճում», «Մասրենու թուփն իր վերջին ուժը վատնելով» մազարմատներով շոշափում է առվի հունը, եւ ի լուր ամենքի բանաստեղծը հայտարարում է.

*Հեռվում ամպն է որոտում,
Ինչ անձկալի կանչ,
Եվ տերեւները բոլոր
Դառնում են ականջ...*

*Համբերեցեք, ամպերի
Խիղճն է արթնանում,
Եվ ուր որ է կմեռնի
Երաշտն անտառում: 47*

(«Երաշտն անտառում»):

Երկրում հասարակական-քաղաքական իրադարձությունների փոփոխման հետ մեկտեղ փոխվում է նաև բանաստեղծի խոսքը, նրա հոգեբանական նոր վիճակը հիշողության վերականգնումն է: Եվ առաջին անգամ խորհրդային բանաստեղծը բացում է իր ցաված սրտի վարագույրը, հոգու եւ մտքի բարձունքներից նայում հայոց աշխարհի խլած հորիզոններին եւ երկրի անունը տալիս հիշում «Ժայռի մեջ մի տուն», «Ծիծառի մի բույն», «Թեքված մի մամուռ», «Բերդի տեղահան մի դուռ», «Ավերակ տաճարի մի վեմ», «Եվ բեկված մի սյուն»:

*Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խռոված մի ցուպ...
Եվ հեռվում ինչ-որ ուշացած
Ձիերի դոփյուն...⁴⁸*

(«Անունդ տալիս»):

Ահա այստեղ է, որ Հ.Սահյանը հայոց այրուձիու ուշացած դոփյունների համար ափսոսում է, մատնացույց անում «երկինքն ի վեր խոսող քարերին», («Քարեր, քարեր Հայաստանի»), տեսնում, թե ինչպես են «Ժայռերը ժայռերի հետ Աչք-ուներով... խոսում» («Այն աշխարհից»), եւ վերջապես վերոհիշում այն երգը, որի «ամեն բառ ու հնչյունից Մի անդարձ կորած աշխարհ է հառնում» («Երգը»):

Այսպես, Հ.Սահյանը մարդ-արարածից վերածվում է մի օրգանի, որի հյուսվածքները մայր ժողովրդի պատմությունն է, բնաշխարհը, հայոց երկրի համայնապատկերը, աստծուց դժգոհ հոգին:

*Լեռան ոտքի տակ կիրճ է վիրավոր,
Լեռան բարձունքը՝ ճերմակ ձիավոր...⁴⁹
(«Իրիկնահաց»):*

Աստիճանաբար Յ.Սահյանի քնարական հերոսի էության մեջ քարտեզագրվում են Հայոց պատմության էջերը, իսկ ամբողջական հայրենիքը՝ բնաշխարհի համապատկերում: Փոքրիկ-փրկված եւ մեծ-կորուսյալ Հայաստանը Յ.Սահյանի երգերում արդեն ընդգծվում է որպես ժողովրդի ճակատագիր: Ընդհանրապես, հայ պոեզիայում հավասար հնչեղություն ունեն հայրենիք եւ ժողովուրդ հասկացությունները, որովհետեւ դրանք հայոց էությունը խտացնող հավաքական գոյություն են: Դրանով էլ բացատրվում են կռուների եւ արագիլի խորհրդանիշ-պատկերները, լույսի եւ տագնապի համազոր զգացումները մեր պոեզիայում, իհարկե, նաեւ Յ.Սահյանի պոետական հունձքում: Այդ զգացումը փայլուն դրսևորում է տվել Սահյանի «Արագիլները» բանաստեղծության մեջ: Հինգ տնից բաղկացած այս ստեղծագործությունը թունանյանական արվեստին համազոր մի գլուխ-գործոց է, որն իր մեջ ընդգրկում է մեծածավալ մի պոեմի սյուժե՝ աստիճանական իր զարգացման մեջ ընդգրկելով մեր ժողովրդի հազարամյա պատմությունը, նորօրյա տառապանքն ու ակնկալիքները.

*Անքուն եղեգներ անձմեռ հեռվի,
Ի՞նչ էին խոսում արագիլները
Ձեզ «մնաք բարով» ասելուց առաջ:
- Շտապում էին:
Բոց արտաշնչող լեռնագագաթներ,*

Ի՞նչ էին խոսում հոգնած ու մրսած
Արագիլները ետ գալու պահին:
- Հավատում էին: ⁵⁰

(«Արագիլները»):

Այսպես, արագիլների, աստղերի, արեւի, անձնեռ հեռուների, լեռնագագաթների մետաֆորները ամբողջությամբ մեջ խորհրդանշում են հայ ժողովրդի, նրա ավերված ու խլված հայրենիքի, նրա հույսի եւ հավատի զգացումները: Ցավ ունեցողի սիրտն է միշտ ցավում, հայի ամենամեծ ցավը նրա կորուսյալ հայրենիքն է: Հայրենիքի կարոտից են ծնվում բանաստեղծի ապրումները, մտահոգությունները, հավատը.

Եվ դու այնքան ես հայ ու Հայաստան,
Որ մինչեւ անգամ Հայաստանից դուրս
Քո անցած բոլոր ճանապարհները
Հայաստանոտ են: ⁵¹

Տեղին է նկատել գրականագետը. «Պատմության մեջ նա տեսնում է բնաշխարհի, բնաշխարհի մեջ պատմություն, որոնց միջեւ որպես հոգեմիջնորդ կանգնած է մարդը՝ տասնյակ հազարավոր տարիների իր գոյությամբ... Ահա բնաշխարհի անհատականացված կերպավորման այս սկզբունքն է, որ զուգակցելով աշխարհի մանկությունից եկող հազարամյակների կապվածությունն ու սովորությունը, ստեղծում է իր իսկ մանկությամբ չափագրվող այն կերտվածքը, որը տեղանքը, վայրը, ժամանակը դարձնում է հայրենիք, իսկ մարդուն՝ նրա հետ հավերժորեն ապրող մի անվախճան ու նրանից անբաժան գոյություն»: ⁵²

Հ.Սահյանի հայրենասիրական բանաստեղծություն-

Մերի մարդը իսկ եւ իսկ հայն է՝ իր կորուստներով ու տառապանքով, իր հավատով ու հույսով: Չար աշխարհի աչքերի առջեւ դատարկված ու խլված հայրենիք ունեցող հայ բանաստեղծը միայն կարող է եղածի վրա այնպես դողալ, ինչպես, տվյալ դեպքում, Յ.Սահյանը: Նա չի ընդունում ու չի պատկերացնում ուրիշ տեղ գնալու, ուրիշ տեղ մնալու գաղափարը.

*Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա:⁵³*

(«Ախր ես ինչպե՞ս...»):

Բանաստեղծի համար հայրենիքը դարերով սրբացած օջախն է, որի մեջ որպես ծուխ-ծխանի պապերի օրհնությունն է, նրանց «վաստակած հոգնությունը», վերջապես մարդն ինքն է, ինչպես բանաստեղծն է ընդգծում. «Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ»: Հայաստան, հայ անունները Յ.Սահյանի համար հոմանիշներ են: Այդպես է, որովհետեւ նա Արագածի փեշերից նայում է Արարատին՝ ոտքերը դողում են, հայացքը սահեցնում է Հայկական լեռնապարով, սիրտը ճնլվում է, խմում է Սեւանի ջուրը, հոգին վառվում է Վանա լճի կանչերից, այսպես շարունակ: Հենց այդ կարոտի ցավն է, որ ճիչ է դարձել Սահյանի հոգում.

*Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են...⁵⁴*

Հայաստան ասելիս միաժամանակ բանաստեղծի «հասակը ծաղկում է», «թելերը բացվում են», միեւնույն է, նա այն ժողովրդի զավակը չէ, որի հայրենիքը ուրիշից խլված հողն է: Աշխարհի անարդարության դեմ ծառացող բանաստեղծի պատգամը սերունդների մեջ ապրելու է այնքան, մինչեւ որ չվերագտնվի արդարությունը, մինչեւ հայը չտեսնի ազատագրված, անկախ, միացյալ Հայաստանը:

3

Վ.ԴԱՎԹՅԱՆԻ հայրենեղությունը բացելու համար բանալի է Հ.Սահյանի բանաստեղծությունը՝ ձոնված իր գրչընկերոջը: Սահյանը տեսնում է Դավթյանի մի կողմից՝ կարոտանքից ճաքած երգի շուրթը, մյուս կողմից՝ հողոտ ոտքերը, ձեռքերը եւ երկնքոտ ճակատը: Վ.Դավթյանի երգի մեջ, ըստ Սահյանի, «մի ցողոտ ուրախություն կա, մի շողոտ թախիծ»: Դա բխում է նրանից, որ Դավթյանի երգը իսկ եւ իսկ նախրական է՝ երազային եւ իրական: Այդ երազային եւ իրական արձատները շոշափելով, Սահյանը նշում է նաեւ դրանց հասցեները.

*Քո երգի մեջ երազային՝
Մի երկիր կա քարոտ,
Եվ հավատ կա Հրազդանի,
Եվ Եփրատի կարոտ: 55*

(«Վահագն Դավթյանին»):

Հայ նորագույն շրջանի հայրենասիրական պոեզիայի այս զուգընթաց զգացումը հատուկ է բոլոր պոետներին: Ինչ վերաբերում է Դավթյանին, ապա միանգամայն

Իհասկանալի կարող է լինել կորստի այն ցավը, որ կանրա հայրենապատումի մեջ, որովհետեւ այդ կորուսյալ հողը առաջին հերթին բանաստեղծի ծննդավայրն է, այն օրրանը, որտեղ կատարել է իր առաջին քայլերը եւ աչքերի ու հոգու մեջ ամել Եփրատի ալիքներում ծփացող հայրենի երկինքը՝ կապոփյտ-կապոփյտ: Խոսում մի փաստ է նաեւ Վ.Դավթյանի խոստովանությունը. «...Բնականաբար, երկերիս առաջին հատորը բացեցի «Անկեզ մորենի» շարքով, որ իմ ծննդավայրի եւ վաղ մանկության մասին է»: ⁵⁶ Իսկ իր կենսագրականի մեջ Դավթյանը նշել է. «Ծնվել եմ Արեւմտյան Հայաստանի, ավելի ճիշտ՝ Փոքր Հայքի Արաբկիր գյուղաքաղաքում, 1922 թվականի օգոստոսին, եղեռնից փրկված էրզրումցի հոր եւ արաբկիրցի մոր ընտանիքում: Հայրս հողագործ է եղել, մայրս՝ ջուլհակուհի:

Չորս տարեկան եմ եղել, երբ թողել ենք ծննդավայրս: Հետագա ամբողջ գիտակցական կյանքս անցել է Հայաստանում»: ⁵⁷

Վ.Դավթյանի ամբողջ գիտակցական կյանքը եղել է այրումի, մաքուր խղճի, հայրենիքի եւ ժողովրդի հանդեպ ծնկի գալու, աղոթելու, հուսալու ժամանակահատված: Հայաստանի դավթյանական գունագեղ պատկերի հյուսվածքում հայ մարդու տառապանքն ու ցավը այնպես է հյուսված, որ տեսնում ես Եփրատից մինչեւ Հրազդան ձգված հայոց լեռնաշխարհի անկրկնելի խճանկարը: Այդ խճանկարին հոգու աչքերով ուշադիր նայելիս քո դեմ հառնում են մեր վանքերի չորս բոլոր շնչող ու փշրված խաչքարերը, կանգուն ու փլված շենքերի ճակատներին փորագրված նռների մեջ նշմարում ես մեր ժողովրդի կենսունակությունը, հուշակոթողներ:

րին քարե թրթռոցով կնիքված թզենու տերեւները շոշափելիս զգում ես բիբլիական լավատեսության այն ուժը, որ կարծես հատուկ է դարձել հայ մարդու համար: Եվ կարելորն այն է, որ բանաստեղծի հայրենասիրական երգերում ժողովրդի տառապանքն ու հերոսական ոգին միաձուլվ են: Վ.Դավթյանի ցավը հայրենիքի կորստից է քանված, հայրենիքի դարավոր ցավին գումարված է նրա մորմոքը: Եթե ծննդավայրի հուշերը որոշ բանաստեղծների համար մանկության երջանիկ կանչեր են, շոյող ձեռքեր, ապա Դավթյանի համար կորած արահետների, մամռոտած ոտնահետքերի, հեռուներում գերված դուռ ու դարպասի ճիչեր են, որոնք երգչի ցավին նոր ցավ են գումարում. «Եվ կան ժամեր, կան ժամեր, որ երբ կոպերս եմ փակում Այդ աստղային պատրանքից ցավիս մեջ ցավ է կաթում» («Անկեզ մորենինախերգանք»):

Վ.Դավթյանի հայրենասպառումի մեջ քնարական հերոսը հեքիաթային զգացողություն ունի: Նրա մարմինն ու հոգին հայրենի երկրի արյունատար երակների եւ կապույտ երազների համաձուլվածք են: Նա մոր հետեւից լացող մանկան նման դիմում է հեռուներում սարերի ուսերին քայլող առավոտներին եւ բացականչում. «Ես էլ եմ գալիս», ամենուրեք ձայներ են հնչում նրա կրժքի տակ: Դրանք քարի զնգոց են, հողի շշուկ, անտառի սոսափ, անդնդում կորած գետի տվայտանք, հին խաչքարից արձագանքող մամռոտած տող: Ընդհանրության մեջ դա կորած, լացող հեռու աշխարհի դողանջն է.

*Լռությո՞ւնն է դա ճգնակեցությանը
Ապրող անձավի,*

Թե՞ կաթիլ-կաթիլ մորմոքն է քանվում
Հնամյա ցավի: ⁵⁸

(«Կանչ»):

Այսպես հնամյա ցավը աստիճանաբար վերածվում է հոգեւոր ալեկոծման, դառնում անմարում կրակ, արյան կանչ: Բանաստեղծի հուշը փոխվում է կարոտի, կարոտը՝ տեսիլքի, ընդհանրության մեջ ծածանվում որպես անկեզ մորենի, փոխաբերության հիանալի օրինակ: Դժվար է տանել նույնիսկ ցավի այն գիտակցումը, որ կապված է հայրենի օջախի եւ մանկության միատեղ կորստի հետ, այն նույնիսկ ավելի մշուշոտ է դառնում, քան հազարամյակների խորքերից մեզ հասած առասպելական պատումները:

Վ.Դավթյանի ծննդավայրը մեր պատմական հայրենիքի սրբացած մի մասն է կազմում, բայց ավաղ արդեն իբրեւ ոգու տեսիլք: Կորուսյալ օջախի զգացողությունը բանաստեղծի երկերում մորը կորցրած որդու լացի է նման, որի մորմոքը «չի հասկանում անգամ... Աստված ինքը» («Առաջին հուշ»), նման է «թաց քարերն ի վար, մամուռներն ի վար կաթող արցունքի» («Ջրհորը»): Երգիչն իր հայրենապատումի մեջ մակդիրների, համեմատությունների, զուգահեռականության եւ այլ լեզվական միջոցներով ընթերցողի հոգում արթնացնում է մի ամբողջ աշխարհ, որտեղ հանդես են գալիս քնարական հերոսի հայրենիքը խորհրդանշող հարազատները եւ հարազատներին խորհրդանշող հայրենի մասունքները. ջրհորը, գիշերը, վիրավոր կռունկը, Եփրատը, փուշը, ծիծեռնակը, շունը եւ այլն եւ այլն: Դրանք սոսկ թվարկումներ չեն, այլ կորուսյալ մի աշխարհ՝ «Լեռներն

ի վար ծալ-ծալ իջնող անհրական եթերով»: Այնտեղ ակնադբյուրներ են բխում աջ ու ձախից եւ նրանց արծաթե թարթիչներին ցանվում են լույս ու թախիծ: Հիշելով այդ աշխարհը, բանաստեղծը իր մտապատկերներում նկարում է ծյունոտ ու ամպոտ լեռնակատարները, որոնց վրա «բարբարոս մերկությանը Արշալույսն է կանգնում», ուր ծփում են լճակները, քամին թափառական է դառնում, իսկ արահետները՝ շվար, գետը «անզոր փշրվելով, իր որձաքարն է ծամում...» («Եվ մի աշխարհ մնաց այնտեղ»):

Կորուստների կնիքը այնքան խորն է Դավթյանի հուզաշխարհի վրա, որ նրա քնարական հերոսը ասես թախծից է հյուսված, եւ եթե լույս է հավաքում, ապա այդ թախծի շերտերից, որովհետեւ նրա ճակատագիրը ժողովրդի բախտի գիրն է, որ սովոր է նաեւ կարդալ կեցության փիլիսոփայությունը՝ արարելու, գոյատեւելու մղումով:

Բանաստեղծի երազանքը միշտ թելում եւ փարվում է «արեւոտ այն քարափներին» ուր իր «մանկությունը պիտի դողանջեր, թառեր եփրատի փրփրած թելին Եվ ընկուզենու կատարից կանչեր»: Մարդկային երջանկության երազանքով բանաստեղծը ավստոսում է, որ իր ոտքերի տակ չէ իր ծննդավայրի հողը, այլ

*...հուշի փշուր, մոխիր է ու հող,
Հանգած ասուպ է ու շող է տրտում,
Հեռավոր հովտում դանդաղ ավերվող
Քարե մի տնակ, հայրենի մի տուն: 59*

(«Այնտեղ, արեւոտ այն քարափներին»):

Իր հայրենապատումի մեջ Վ.Դավթյանը մանրանկարիչ է: Նրա հայացքից ոչինչ չի վրիպում: Շնչավորված, անձնավորված են հայրենի սարն ու ձորը, ծառն ու ծաղիկը եւ այլն: Այդ ամենը, ավաղ, գերված են հեռուներում, այնտեղ աղբյուրը հեկեկում է, ծիլը դողում է շվար, գարնան պաղ քամին մտնում է ձորը՝ տխուր վայի: Այս հանգամանքն է նկատի ունեցել լիտվացի ակադեմիկոս Բանաստեղծ Է.Միժեւայտիսը. «Եթե մեր եղբայրակիցներից ոմանք ձգտում են ընդգրկել պատկերավոր ամբողջությունը, ամբողջ ծավալը եւ ուշադրություն չեն դարձնում մանրամասների վրա, ապա Վահագն Դավթյանը հակառակն է անում, նա մանրամասներից է սկսում: Երբ բանաստեղծն ասում է, թե «Ես որձաքարի երակներն էի համբուրում խոնարհ, ինչպես մայրական ձեռքի երակն է համբուրում որդին», մենք անմիջապես տեսնում ենք ամբողջը: Եվ քարի երակները, եւ ամբողջ լեռը, եւ հայ մոր հոգնած ձեռքերի ուռած երակները, եւ միաժամանակ ամբողջ Հայաստանը»: ⁶⁰

Ահա, այդ մանրունքների մեջ է հառնում Դավթյանի հոգու հայրենական քարտեզը, որի վրա նկատված է անգամ այն փուշը, որ մանուկն իր ոտքից «մինչեւ օրս չի կարողանում» հանել («Փուշը»), այն ծիծեռնակը, որ իրենից խլված բնի մոտ «կուլա կուց-կուց արում» («Մեր ծիծեռնակը»), այն քարերը, որոնց «հառաչն ու ցավի քրքիջն» է լսվում հեռվից («Համր քարեր»): Այնտեղ լույսն արյունոտ է, մեղեդին՝ արյան հեկեկանք («Մեղեդի»), այնտեղ լուսինը եւս կորուսյալ է ջրհորն ի վար դիտապաստ ընկած («Փշրված լուսին»):

Բանաստեղծի հոգում կորուսյալ հայրենիքի խորհր-

դանիշը միշտ էլ մնացել է մայրենի բարբառը, երգը. մեսրոպյան այբուբենը.

*Այնտեղ՝ Ակնա ձորի վիհերն ի վար հոսում,
Դեռ երեւի եփրատն հայերեն է խոսում:
Սարավանդի վրա՝ հին ակոսներն ի վար
Հորովելն է հողոտ դեռ թփրտում շվար:*

*Եվ քարափի վրա մի կիսավեր կոթող
Շուրթերին պահել է դեռ մեսրոպատառ մի տող: 61*

Ավելին, կորուսյալ երկրի բանաստեղծ որդու համար ամենամեծ ողբերգությունն այն է, որ այնտեղ ոչ մեկը չկա, որ հասկանա եփրատի խոլ գոռոցն ու ճանապարհների կանչը:

Տարիներ առաջ կայացած մի գրույցում Վ.Դավթյանը պատասխանել է. «Երեւի գրել սկսում են եւ առհասարակ գրում են ինչ-որ բանի կարոտից»: Կարելուր ենք համարում ընդգծել, որ Դավթյանի կարոտը ոչ թե մի ինչ-որ բանի հանդեպ է, այլ մի ամբողջական երկրի, որը մարդկային կյանքը իմաստավորող միակ-հզոր աղբյուրն է: Հենց այդ կարոտից են ծնված Հ. Շիրազի հայրենաշունչ երգերն ու պոեմները, Հ. Սահյանի ազգային-ժողովրդական բույրն ու թույրն ունեցող երգերը, Ս. Կապուտիկյանի իմաստուն մենախոսությունները հայրենի օջախի, ընդհանրապես հայրենիքի ճակատագրի մասին, Մ. Մարգարյանի Արարատյան համայնապատկերի ծփանքները, Գ. Էմինի հայոց պատմության եւ ճակատագրի դասերն ու խորհուրդներն ընդգծող պատկերները, Հր. Հովհաննիսյանի կարոտի եւ երազի ռոմանտիկական թրթիռները:

Վ.Դավթյանը մեր պոեզիայում կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ հայի կարոտի զգացումը առաջին հերթին առնչվում է հայրենիք հասկացության հետ: Նա այդ գաղափարը հաստատեց «Ծննդավայր» շարքով, եւ սխալված չէինք լինի, եթե նկատենք, որ այդ շարքը Նարեկացու տաղերի, Վարուժանի հացի երգերի, Սիամանթոյի մորմոքների, Տերյանի նաիրյան ցավերի, Չարենցի մարգարեական կոնահումների ու պատգամների անմիջական եւ արժանի շարունակությունն է, որտեղ հուշը կարոտ է ծնում, կարոտը՝ սեր, սերը՝ տենչանք, տենչանքը՝ տեսիլք, տեսիլքը՝ հայրենի կանչ: Եվ համբերությունը հատնում է այնտեղ ոչ թե թեւաթափելով քնարական հերոսին, այլ կորցրածը գտնելու եւ նրան փարվելու վճռականությամբ: Այդ զգացումի թելադրանքով քնարական հերոսը ճչում է. «Պիտի վեր կենամ ես այս առավոտ ու գնամ այնտեղ ու գնամ մեր տուն»: Թեկուզ նա գիտակցում է, որ այդ երազը տեսիլք է, բայց դարձյալ որոշում է անցնել վիհերով, հասնել նրան, որովհետեւ.

*Այնտեղ արեւ կա ու հոտ կա հարդի,
Այնտեղ գետակ կա, քարեր կան կիզող,
Արեւ է շնչում մի խաղաղ բարդի,
Որ կիսով կանաչ, արծաթ է կիսով:*

*Ու տուն կա այնտեղ, քարե մի տնակ,
Եվ գիտենմ, նրա հին առաստաղից
Մի հին կարոտ է մաղում շարունակ,
Ու կաթկթում է մի մրոտ թախիժ: ⁶²*

(«Էլ բավական է»):

Վ.Դավթյանի բանաստեղծության առիւթնող ուժը նրա ճշմարտացիության մեջ է: Բանաստեղծը երբեք չի շրջանցում ցավը, մորմոքը, եւ երբեք ցավի արմատներից չի հրաժարվում, միշտ ընթանում է դեպի սկիզբը՝ դեպի վայրի ծաղիկները, գեղեցիկ ու մերկ առավոտները, այն սկիզբը, որտեղ «Ոչ մի բան... դեռ չունի անուն եւ «կարոտ» բառը դեռ չի արարված»: Նա որոնում է իր մանկության ծվենները՝ «Մոլորված շողի եւ անմոռուկի, եւ խոտի տեսքով» («Դեպի սկիզբը»): Մանկության կարոտի արմատները եւս շոշափելի են, այնտեղից էլ երգի անմիջականությունը եւ վարակիչ ուժը: Դավթյանի հայրենապատումը նաեւ ճանապարհ է: Այդ ճանապարհով քնարական հերոսն ու երկիրը քայլում են միասին: Նրա հետ գնում են հայրենի ջրերը, բայց ինքը ծարավ՝ «քարափների ու վիհերի շուրթերի պես» պատառոտված, տոչոր... Տառապանքի այդ ճանապարհին ծովանում է թախծի եւ թախծի միջից ճառագում է լույսը.

*Իմ այդ տեսիլք-տենդի միջով
Անվերջ գնում էի, երկիր՝
Եվ քո ջրերն էին ինձ հետ անվերջ գնում՝
Մաքուր,
Կապույտ
Ու սանձակոծ...⁶³*

(«Ճանապարհ»):

Վ.Դավթյանի ճանապարհը անցնում է Մշո լեռներով. («Մշո լեռներում»), հողների միջով հասնում եւ ծունկի է գալիս ծննդավայրի սրբությունների առջեւ («Ծունկի եկ, ծունկի»), տեսիլքային օրորի տակ քնում իրենց

տան «Կավե կտուրին» («Մանկության գիշեր»), արթնանում թռչունների երգից ու «թոնրի բուրմունքից» («Առավոտը»), դիտում ակութներից ելնող ծուխը («Ծուխը»), «ծղրիղների ոսկե սրինգների» սուլոցի ուղեկցությամբ շոյում ամառը («Ամռան օր»), ապա գնում է կալ, որտեղ «Մղեղը դեղին իր ցուլանքն է փռել աջ ու ձախ» («Կալը»), համտես անում վայրի մեղրը («Վայրի մեղր»), Տավրոսի լանջերին դիմավորում ծիրանի շիկնանքը («Իրիկնամուտ»), վերջապես այդ ամենի կորուստների գիտակցումից այրվում որպես անկեղ մորենի.

*Եվ այրվում է նա... Եվ բոցը բոսոր,
Կապույտ է ու հիր,
Այրվում է, այրվում... Եվ բոցը մորմոք,
Կարոտ է ու կանչ,
Անկեղ մորենին այրվում է այրվում
Եվ չկա մոխիր,
Չկա սպասում եւ չկա վախճան...⁶⁴*

(«Անկեղ մորենի»):

4

Դ.Դեմիրճյանը դեռեւս 1951 թ. երիտասարդ *Գ.ԷՄԻՆԻ* մասին գրել է. «Ի՞նչն է Գեւորգ Էմինի, իբրեւ պոետի, գլխավոր հատկանշական գիծը: Դա նրա հակումն է եւ ընդունակությունը մեր արդիական իրականությունն ու բոլոր նրա երեւոյթները տեսնել իրենց ներքին իմաստով՝ իմաստավորել իրականությունը, գտնել նրա առաջընթացի շարժիչ ուժերը, ըմբնել ամեն մի խոշոր կամ «չնչին իրի», անցքի, գործի պատմականորեն պայմանավորվածությունը»: ⁶⁵

«Նախաշավիղ» (1940) խորհրդանշական խորագիրն ունեցող գրքից սկսած Գ.Էմինը իրեն դրսևւորել է որպես անհանգիստ հոգու տեր, որոնող եւ իհարկե գտնող բանաստեղծ: Ինչի մասին գրել է նա, առաջին հերթին երանգավորված է եղել խոհով: Ելնելով երիտասարդ երգչի բանաստեղծական մտածողության թարմությունից, ընթերցողի հետ խոսելու նրա բնատուր շնորհքից, երգերի սեղմ ու հոգեբանական հղացումներից, նրա մուտքը ողջունեց Ստ.Զորյանը: Էմինը ետչարենցյան շրջանի այն պոետներից է, որ նախընտրեց բանավիճելու, տնտղելու, պոետական գյուտերով երգը մարդամեջ հանելու ճանապարհը: Այստեղից քնարերգության հանդեպ նրա համակրանքը՝ անպայմանորեն շաղխված քաղաքացիական պաթոսով: Այդ խառնվածքը շուտով իրեն զգացնել տվեց զինվոր-բանաստեղծ Էմինի «Խաղաղության ծխամորճը» (1943) ժողովածուում:

Գ.Էմինի ստեղծագործության մեջ միշտ նկատվել են հրապարակախոսության երակն ու զննող հայացքը: Տեղն է ասել, որ տարիներ շարունակ որոշ քննադատների կողմից պոետիայում հրապարակախոսության առկայությունը դիտվել է որպես թերություն, որպես ճառային երանգի ավելորդ ծանրաբեռնվածություն: Նման մարդիկ դժվար են նկատել, որ Էմինը բանաստեղծական մտածողության եղանակը փոխող սերնդի ներկայացուցիչներից է, որի կետ-նպատակը հոգեսուզման, ինքնաճանաչման, յուրատեսակ մտածողության դրսևւորումն է, առանց որի անհատականություն չի ձեւավորվում:

Գ.Էմինի հարուստ պոետական ժառանգության մեջ լայնքով ու խորքով դրսևվորված է հայրենիքի թեման,

որի գույները սկսեցին ավելի խտանալ «Նորք» (1946) գրքից: Հեռու մնալով ազգագրության եւ ավրոմային հուզող տողերից, էմինը առավելագույնս իրեն ճանաչել տվեց իրականության եւ արվեստի, ժողովրդի եւ հայրենիքի ճակատագրի փոխհարաբերության պոետական թրթիռներում: Այսպես, էմինի որոնումները նրան տարան եւ հասցրին «Նոր ճանապարհ» (1949), որի համար նա 1951թ. արժանացավ Պետական մրցանակի: Այնուհետեւ էմինը մեր պոեզիան հարստացրեց տասնյակ նոր ժողովածուներով, որոնցից առավել ուշագրավները «Խոսիր, Հայաստան» (1954), «Մինչեւ այսօր» (1954), «Որոնումներ» (1955), «Բալլադներ եւ պոեմներ» (1955), «Երկու ճամփա» (1962), «Այս տարիքում» (1968), «Քսաներորդ դար» (1970), «Ախ, այս Մասիսը» (1989) ժողովածուներն են:

Հասու լինելով պոեզիայի ներքին օրենքներին, էմինը ձգտում էր ցույց տալ «Դարի ժամը»: Դարի ժամը լինելու էմինյան բաղձանքը վերաբերում է նաեւ հայրենապատումին, դա ոչ թե երեվալու, աչքի զառնվելու ցցունություն է, այլ իսկական բանաստեղծական կեցվածք, որի արմատները ամուր խրված են ժողովրդի եւ հայրենիքի նորոյա կյանքի շերտերի մեջ: Գրելով իր հայրենասիրական երգերը, էմինը եւս ձգտել է նորոգել քաղաքացու դեպի երկիրն ունեցած զգացողությունը, դա նրա գեղագիտական իդեալի հնչերանգն է: Բանաստեղծի համար երգը եղել է եւ զրուցընկեր, եւ պատվի խտացում, եւ զինվոր, որի համար «անմահության դռները բանալու», «Փառք ու մեծարում» նվիրելու խոստումներ չի տվել, այլ խրախուսել է «Մղվել սխրանքի, Ձինվորի պես ընկնել գնդակից»: Նրա գեղագի-

տական հավատամքի եւ ստեղծագործությունների քաղաքացիական պաթոսի առնչությունները ընդգծված են ուժեղ եւ միաժամանակ չափի զգացումով:

Գ.Էմինի հայրենապատումը հասկանալու համար բերենք նրա «Յոթ երգ Հայաստանի մասին» հայրենաշունչ գրքի առաջաբանից մի փոքրիկ հատված.

«Ի՞նչ է հայրենիքը.-

Մեր ժողովրդի պատմության հին ու նոր դարն է նա, մեր հողն ու քարը, ջուրն ու հուրը, գիրն ու երգը, որոնք այսօր, վերածնված ու լեզու առած, պատմում են իրենց մասին»: ⁶⁶

Բանաստեղծի ընդգծած հին ու նոր դար... հասկացությունը մեր առջեւ բացում է Էմինյան հայրենապատումի դռները եւ հուշում նրա իսկ խորհուրդը. «Դարեր շարունակ,- Արա Գեղեցիկից մինչեւ Ավարայր ու Սարդարապատ,- Մենք «Մեռնելով ենք Հաղթել» եւ հավատում ենք, որ կարելի է եւ պետք է այսուհետեւ «Հաղթել Ապրելով»: ⁶⁷

Ապրելով հաղթելու պատգամը Էմինի հայրենասիրական երգերի ատաղձն է: Վաղ շրջանի «տիեզերական» մտորումների երկինքներից նա նկատելի արագությամբ իջավ երկիր, երկու ոտքով կանգնեց հայրենի հողին, նայեց հեռուներին, Կարմիր հրապարակից հասավ աշխարհի չորս ծագերը, իմաստնացած եկավ կանգնեց Մասիսի դեմ, արարեց հայրենապատումի իր նոր ծիածանը՝ փիլիսոփայության, խոհի, հույզի հայածին երազանքներից եւ դարձավ բառի բուն իմաստով հայրենապաշտ, ճանաչեց իրեն, վերանայեց «Ձրույց Մասիսի հետ» (1948) բանաստեղծությունը, որտեղ զարմանալի բանավեճ էր բացել նրանց հետ, ովքեր «Լոկ այն են

տեսնում, ինչ դարեր առաջ... նոր ծայնը հնից դեռ չեն տարբերում», անդադար Մասիս են երգում, իսկ ինքը նորն է փառաբանում, «այսօրը սովետական»: Իհարկե, մենք չենք մեղադրում Էմիին, նա էլ բոլոր գրողների պես հավատացած էր, որ կոմունիստական կուսակցության անշեղ ղեկավարությամբ կերտում են ԽՍՀՄ ժողովուրդների (այդ թվում եւ հայ ժողովրդի) «այսօրն ու ապագան».

*Եվ մի բուռ հայ է հասել փրկարար այս կարմիր երթին.
Բայց այդ մի բուռն էլ պատերազմների բոցում կկորչեր,
Թե Հոկտեմբերը պալատների դեմ կռվի չկոչեր
Եվ խրճիթներին չտար խաղաղ կյանք...⁶⁸*

(«Խոսիր Հայաստան»):

Ամեն դեպքում Գ.Էմիին հայրենասիրական երգերում խտացված է երեւում փրկված Հայաստանի պատկերը: Նա դիմելով Երեւանին, որդիաբար բացականչում է. «Ինչ լավ է, որ մենք սիրում ենք իրար, Եվ առանց իրար կյանք չունենք կյանքում»:

Հայաստանի պատկերը Գ.Էմիին ստեղծագործություններում ներկայացվում է որպես հայ ժողովրդի կենսագրության էջ: Երկրի եւ նրա տիրոջ միասնության այս գաղափարն էլ մի նոր առանձնահատկություն է հաղորդում բանաստեղծի հայրենապատումին: Նրա երգերում հառնում են հայոց կոթողները, որոնք ինչ որ տեղ նուրբ չեն, ժայռափոր են («Գեղարդի վանքը»), իրար նման չեն, «Եվ մեկը մեկին չի նմանվում՝ ինչքան հայ՝ այնքան էլ Հայաստան», որոնք «Եղեռնով ցրված են ողջ աշխարհում՝ Հայրենի կարոտով միաբան»: Էմիին հայրենասիրական խոսքը աստիճանաբար

դառնում է երկրի պաշտպան-զինվորի երդում. նա սիրում է «մեր հին արմատն ու պտուղը նոր», բայց պատրաստ է «Մահը սիրել ամենազոր, Եթե փորձեն» իրեն «զրկել.- ունեցածից» («Ես սիրում եմ հայոց հողը»): Էմինի հայրենասիրական երգի քնարական հերոսը ազգային արժանապատվության եւ հպարտության զգացումով է օտար-երկրացուն ներկայացնում իր օջախն ու տունը՝ իր Հայաստանը: Մխիթարանքի, կորստյան ցավի, զինվորյալի սեփական ուժի գիտակցումով խորհուրդ է տալիս օտարերկրացուն զգույշ խոսել Հայաստանում, չար չլինել, հայոց ճամփեքը նեղ են, «երկու հոգու տեղ չեն անում», դավով չպետք է անցնել այդ ճամփեքով: Էմինը մեջ է բերում նաեւ պատմական անցյալը՝ հայրենիքի, ժողովրդի հոգեբանական բացահայտումների միտումով.

*Մենք գահ ու թագ չենք ունեցել
Եվ... արքա՛ է ամեն մի հայ,
Ջորք ու բանակ չենք ունեցել
Եվ... սպա՛ է ամեն մի հայ:*

*Ամեն մի հայ՝ լեռան մի ծերպ,
Ամեն մի հայ՝ ուրոլյն մի կերպ,
Ամեն մի հայ՝ մի Հայաստան,
Բաժան-բաժան, անմիաբան,
Չատվա՛ծ, հատվա՛ծ
Եւ սակայն մի,
Երբ սպառնում է թշնամին,
Մեր դարավոր անմահ երթին
Եվ այս հնոց բարձրիկ բերդին,*

Որ հայրենիք ենք անվանում...

Զգո՛ւյշ գործիր Հայաստանում: 69

(«Օտարերկրացուն»):

Գ.Էմինի բանաստեղծական մտահղացումներում հիշողությունը կարելուր տեղ է գրավում: Այդ հիշողությունը հայ ժողովրդի անցած դարավոր ճանապարհի արձագանքն է: Բանաստեղծը խոհական իր մտապատկերները ներկայացնում է դարերի խորքից, ինչպես խոստովանում է ինքը. «Զարմանալի՛ է, որ ես չեմ եղել, Սակայն հիշում եմ»: Քնարական հերոսը հիշում է Շամիրամի ներխուժումը Հայաստան, Արայի զոհվելը, մեր հաղթանակն ու պարտությունը: Ամենից ծանր պարտությունը բանաստեղծը համարում է հայրենիքի եւ պետության կորուստը: Պատմական մեր ընթացքը էմինը համարում է հակադրամիասնության երթ: Հաղթանակի եւ պարտության զուգահեռները ներկայացվում են նաեւ Ավարայրի օրինակով, բանաստեղծական հյուսվածքի մեջ առնելով արդեն հայրենիքի, պետության, պատմության փնտրումը: Բանաստեղծի հիշողության մեջ տեսիլքային պատկերներով մեկը մյուսին հաջորդում են թաթար-մոնղոլների, սելջուկների, բյուզանդացիների արշավանքներն ու ավերածությունները, որոնց պատճառով արյան մեջ կորավ հայոց պատմությունը եւ աշխարհով մեկ սփռվեց հայությունը: Բանաստեղծության կոմպոզիցիոն շրջանակում կրկին ընդգծվում է հիշողության երանգը՝ քնարական հերոսի լավատեսությամբ.

... Իմ նոր հայրենիք,

Նոր պետություն իմ,

*Ինչ լավ է, որ սա արարն է վերջին
Եվ չի՛ կրկնվի այս պատմությունը՝
Այս դարեր տեսած ողբերգությունը: 70
(«Ինչ լավ է, որ սա հին պատմություն է»):*

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ գնալով Էմի-
նի հայրենապատումի մեջ ավելի հաճախակի է երեւան
բերվում անցյալը, որի շնորհիվ ուղղակի կերպավոր-
վում է պատմությունը,- ներկայացվում են «Ռուսան...
որդի Արգիշտին» («Սեւանա լճի ափին»), Յազեթի,
Սուլթան Յամիդի դաժանությունները («Ա՛խ, մայրերը
մեր միամիտ»), Սասունն ու սասունցիները («Սասուն-
ցիների պարը») եւ այլն:

Գ.Էմինի հայրենապատումի մեջ նկատելի է նկարագ-
րական-բնութագրությունների ձեւը: Ստեղծագործա-
կան խառնվածքի այդ հնչերանգը ավելի ընդգծված է
նրա «Ա՛խ, այս Մասիսը» շարքի մեջ: Շարքի նույն խո-
րագիրն ունեցող բանաստեղծությունը հայ մարդու հո-
գեբանության վառ արտահայտություն է: Մասիսը կա-
րոտի խորհրդանիշ է, աշխարհասփյուռ «բոլոր հայե-
րին այստեղ է բերում, երբ ինքն... այստեղ չէ...», «Միա-
բանության քարոզ է կարդում», բայց ինքը կիսված է:
Այստեղ երեւում է առաջին հերթին քնարական հերոսի
ափսոսանքն ու ցավը գերված Մասիսի, կորուսյալ հայ-
րենիքի հանդեպ: Հայ մարդու ինքնաճանաչման, մտա-
վոր ուժերի, կամքի, վճռականության գիտակցության,
ավանդական մեծ հայրենիքի կորստի, ժողովրդին հա-
սած հարվածների հաջող մի պատկեր է «Սենք» երեք
մասից բաղկացած բանաստեղծությունը: Հյուսվածքի
մեջ քնարական հերոսը ճշմարիտ բնութագրումներով

Իհայոց աշխարհը ներկայացնում է որպես նավ՝ չոր ժայռի վրա, գավ՝ արցունքով լի, հող՝ քարացած ահից, քար՝ ճչացող ցավից, որակ՝ առանց բանակի, «քաջարի սպա՝ առանց բանակի, Պաշտամունք՝ հնի ու ավերակի»: Սա լաց չէ, սա մեր ցավի ընդգծումն է, որ ընթերցողին նպատակամղում է ինքնաճանաչման.

*Եվ ի՞նչ էինք մենք
Ու երկիրը մեր,
Թե շիտակ նստած՝ ծո՛ւռ խոսենք անգամ,-
Ջրոսաշրջի՛կ՝ իր հայրենիքում,
Յյո՛ւր՝ իր սեփական օջախ ու հարկում,
Անժողովուրդ հող,
Անհող ժողովուրդ
Եվ ցրված հուլիւնք, որ չէր ժողովում...⁷¹
(«Եվ ի՞նչ էինք մենք»):*

Բանաստեղծության երկրորդ մասում նոր բնութագրումներով էմինը կրկին մատը դնում է մեր բաց վերքի վրա, ընդգծում մեր կիսով խուլ, կաղ, կույր, համր լինելը, վերջապես «Մեր խորհրդանիշ Մեծ Լեռան նման» երկճեղքված, կիսված, երկգագաթ լինելը: Հոգեբանական այս ապրումի երրորդ մասը շափաղում է չար աշխարհի դեմ որպես հայկական գեների լուսարձակում. «Մենք փո՛քր ենք, այո՛» սարից սուրացող քարի նման, վիթխարի ուժ ունեցող մեր լեռնային գետերի պես, փողի գնդակի պես, համեմունք ենք, աղամանդ, աստղ, անհատնում հրաշք ուրան:

Բանաստեղծի հայրենապատումը ժողովրդի կենցաղի, սովորությունների, ակնկալությունների շաղախով է հյուսված: «Խաղողի որթը» ստեղծագործության մեջ

հայկական բնությունը համեմատվում է հայ ժողովրդի հետ: Ժողովուրդը նմանեցվում է խաղողի որթի, որպես բախտակից ու հասակակից, որպես խորհրդանիշ: Նա բազմիցս տրորվել է բիրտ կրակների տակ, «Քանի տրորվում, Այնքան անո՛ւր է կառչում նա հողին, Եվ քաղցրանո՛ւմ է պտուղը նրա Այդ տառապանքից»: Խաղողի որթի համառությունը, խոր արմատները, հարատեւման ավիշը, արմատները իսկ եւ իսկ մեր ժողովրդի խորհրդանիշն է՝ լավատեսությամբ, հավատով.

Նրա արմատը

Հասել է մինչեւ երկիր Ուրարտու

Եվ Շամիրամի բե՛րդն է սասանում,

Իսկ ողկույզները

Թարմանո՛ւմ են նոր օրերի ցողից,

Վաղվա արեւի շողից՝ քաղցրանո՛ւմ... 72

(«Խաղողի որթը»):

Գ.Էմինի երգերում Մասիսը հայ է, հայը՝ Մասիս: Համեմատության այս կողմերի զուգորդումը հայրենիքի եւ քաղաքացու միասնության գաղափարն է հաղորդում, իսկ այդ միասնության գաղափարը ծիածանվում է որպես անձնուրացության զգացում: Քնարական հերոսը նայելով Մասիսին, հոգու մեջ թրթիռ է դառնում այն հավատը, որ լեռներ է շարժում: Այդ հավատն էլ վերածվում է հայրենիքը փրկելու երազի. «Մի՞թե իմ Լեռն էլ պիտի նո՛ւյն տեղում մնա, ինձ... չմոտենա՞»:

Երգչի հայրենապատումի մեջ ժողովրդի անվանի գործիչները կոչ են անում Հայրենիքի եւ ժողովրդի հանդեպ անտարբեր չլինել, ջերմ պահել ազգային ոգին: Այդ են պահանջում Աբովյանը, Կոմիտասը,

Տերյանը, Չարենցը, Սարյանը եւ ուրիշ մեծություններ: Էմինի հայրենապատումը աչքի է ընկնում նաեւ մի առանձնահատկությամբ, որը դարձյալ բխում է հայոց աշխարհին բաժին ընկած բախտից: Ըստ նրա, մեր պատմության ամեն մի դար իր վերքն է թողել հայրենի հողի վրա, թողել մի կնճիռ ժողովրդի ճակատին եւ սրտում: Այդ դարերը, սակայն անհետ չեն անցել, նրանք դարձել են սեպագիր արձանագրություն, ավերված կոթող, խորտակված բերդ: Դրանցից ելնելով բանաստեղծը կարդում է հայրենի երկրի եւ ժողովրդի ճակատագիրը: Հայաստանը նա համարում է բացօթյա թանգարան, որտեղ առանց դասագրքի կարելի է ուսումնասիրել մեր ժողովրդի դարավոր պատմությունը, սկսած առասպելական Նոյի առեղծվածային տապանից մինչեւ դեռեւս 1920 թվականին թուրք ենիջերիների ձեռքով ավերված քաղաքների ու գյուղերի չափից ավելի իրական մնացորդները: Այդ կորուստների եւ ցավի զգացումից էլ ծնվել են հայրենիքի ծանր ճակատագրից եկող դժգոհության ու բողոքի երգերը: «Սիամանթոյի աղոթքը» դրա խոսուն վկայությունն է: Բանաստեղծի խռովքը այնպիսի ալեկոծումի է հասնում, որ նա որոնում է Հայոց աշխարհը դժբախտությունների մղող ուժերին եւ դատափետում նրանց: Սիամանթոյի անունից պոետը ցավով է խոսում ճակատագրի դեմ, որ «Այս լայն աշխարհում» Մասիսը դրել է այն տեղում, որ դար ու դարեր արնոտել են նրա լանջերը: Բանաստեղծության մեջ մետաֆորներ ընտրելով Մասիսը, դրախտը, մեր պատմությունը, պարսկական, բյուզանդական բռնապետությունները, Մովսես Սարգարեին, քնարական հերոսը՝ Սիամանթոն, ընդվզում է բախտի դեմ եւ դիմում Վերինին:

Տեր, տո՛ւր ինձ Սովսես Մարգարեի պես
Հանել՛ ու տանել՛ ցեղն իմ հալածված
Այս Հայաստանի՛ց.-
Ո՛չ,
Մահաստանի՛ց,
Ո՛չ,
Քարաստանի՛ց,
Դեպի ապահով, ուրի՛շ մի եզերք
(Կա՞ այդպիսի տեղ...)
Ցե՛ղն իմ մշտատեւ...
Նրա սե՛րմը նոր,
Արմատները հին,
Վեպ, կոթող ու երգ...⁷³

Էմինը Սիամանթոյի շրթերով արտահայտել է իր մտորումներն ու խռովքը՝ նորօրյա մեր դժբախտությունների թելադրանքով: Բանաստեղծը դիմում է նաեւ անցյալում մեր ազգային աղետները տեսած մեծերին, համեմատում հին ու նոր ժամանակները եւ հին ցավի նորօրյա մորմոքով դժգոհում իրականության դեմ: Բողոքի երգերում Էմինը մերթ երագում է «Նոր Գանգատ» գրել Ֆրիկի հանգով («Երագում տեսա...»), մերթ ուզում է երգել այնպես, որ աշխարհի չորս ծայրերից «Հայաստան գան իր կանչով» («Դու մի նայիր...»), մերթ դատափետում է քսաներորդ դարը, որի ֆոնի վրա «Միջնադարն ինքն է դալկացել վաղուց» («Քսաներորդ դար»), մերթ հայացքն ուղղելով Մարիամ աստվածածնին, դառնացած բացականչում է. «... Քեզ հասնո՞ւմ են մեր Աղերսանքները, թե՞ հավատքն ինքն էլ դա՛վ է...» («Ավե՛, Մարիա՛»): Հայոց ճակատագրից դժգոհ էմինյան

ընթացությունը հայաստանախուսության չի հասցվում: Էմինը ռեալ հենքերով ներկայացնում է մեր երկրի բախտի եւ՝ դառնությունը, եւ՝ քաղցրությունը: Միխայ Վազիի նմանությամբ բանաստեղծը պատկերում է Հայոց աշխարհի հակադրամիասնությունը՝ «Քաղցր է Խաղողը,- Խաղողը դառն է... Լարը երգում է, - Լալիս է Լարը... Հողն այս մեր կյանքն է, մեր մահն է հողը... Մեզ հավաքողն է ու մեզ ցրողը»: Բանաստեղծության մեջ կարելուրվում է Էմինի դժգոհության վերջնական ճիչը. «Սուրը ժանգոտ է, սակայն փայլում է», որի լինելիությունը «Սիրո եւ ոխի դաշնությամբ» քաղցրանում է «ըղձալի Արդարությունը» («Հայկական երգ»):

Վերջապես Էմինը տառապանքի եւ ցավի միջով քնարական հերոսին տանում է դեպի Սարդարապատ, որտեղ «Հողն ի՛նքը... նետվեց սխրանքի» եւ «դարձավ ի՛նքն իրեն կոթող ու արձան...» («Սարդարապատ»):

5

Ս.ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ գրական ասպարեզ մտավ ժամանակի զարկերակի նուրբ զգացողությամբ: Պատահական չէ նրա պոետական մարաթոնի մեկնարկը՝ «Օրերի հետ» (1945) վերտառությամբ: Նա այն սերնդի ներկայացուցիչն է, որ 30-40-ական թվականների քաղաքական չափաբերությունների ընդհանուր շքերթի հետ ձգտում էր հայրենասիրական զգացումների ծածանումներով արտահայտել քնարական հերոսի անձնական ապրումներն ու հոգեկան ներքին խռովքը:

Երիտասարդ բանաստեղծուհու անցնելիք ճանապարհի, նրա քաղաքացիական պահվածքի եւ դիմագծի ինքնադրսելողումը ընդգծված երեւում է նրա

«Մայրիկիս» բանաստեղծության մեջ: Մոր ծանր ու ողբերգական անցյալի եւ զավականվեր նոր կյանքի պատկերային ջերմ հյուսվածքի մեջ բանաստեղծուհին պարզ ներկայացնում է իր հավատամքը:

*Մայր, ինձ համար փառք չեմ տենչում կյանքի մեջ,
Բայց կուզեի՝ զոհողությանդ անհաս
Լինել արժան, լինել հերոս, լինել մեծ,
Որ քո կյանքըդ, կորած կյանքըդ չափսոսաս...⁷⁴*
(«Մայրիկիս»):

Այստեղ հերոս, մեծ մակդիրները բանաստեղծուհու՝ հայրենիքին եւ ժողովրդին տված ազնիվ երդումի արտահայտությունն է: Ինչպես նրա գրչակից ընկերների, այնպես էլ Ս.Կապուտիկյանի պոետական շքամուտքի ճակատին առաջին հերթին հայրենապատումի խորագրերն են:

Ինչ՞ով բացատրել այդ երեւոյթը: Նախ տվյալ ժամանակաշրջանում «անձնական» քնարերգության որոշակի ժխտումն է, որ նորամուտ բանաստեղծների մղում էր դեպի այսպես կոչված հրատապ մոտիվները, եւ երկրորդ, որ բնական է եւ պետք է ընդգծվի, հայ պոետիկայի մեջ հայրենասիրության թեմայի մշտախոս առկայությունն է՝ ծնված կորուսյալ երկրի ցավից, հայրենական մասունքները գտնելու կարոտից, փրկվածը պաշտպանելու վճռականությունից: Նշենք, որ նույնիսկ մորը, որդուն, սիրեցյալին ձոնված երգերում հաճախակի մարդկային բազմաշերտ այդ ապրումների մեջ ընդգծվում է հայրենի երկրին անձնուրաց նվիրվելու գաղափարը: Ձգտումի հրամայականով մարդկային վարքի եւ բարքի գնահատման ամենաբարձր չափա-

Միշը դեպի հայրենիքն ունեցած սերն է, որ համաշխարհային գրականության մեջ ընդհանրական դրսեւորում է: Չպետք է մոռանանք, որ վտանգի առջեւ կանգնած հատկապես փոքր ժողովուրդների գեղարվեստական խոսքի մեջ հայրենիքի ազատության թեման դարձել է ներքին անհրաժեշտություն:

Այս ամենից անմասն չի մնացել եւ Ս.Կապուտիկյանը, որի հայրենապատումը ունի նաեւ իր առանձնահատկությունները: Նախ նշենք, որ Ս.Կապուտիկյանը աշխարհը, երեւոյթները, կյանքը ընկալում եւ գնահատում է մոր սրտով: Դրանով պետք է բացատրել այդ բանաստեղծությունների խրատական երանգը, որի առկայությունը ստեղծագործական թերություն համարելը համոզիչ չէ: Ակադեմիկոս Ս.Աղաբաբյանը բանաստեղծական արվեստի փիլիսոփայության իր խորհմաստ անդրադարձումների հետ մեկտեղ Ս.Կապուտիկյանի երգերի առանձին շարքերի մասին արել է հետեւյալ դիտողությունը. «Երկրորդ գրքում արծարծված մոտիվներից ամենաքիչը սիրո նվազներն են («Դու վայրի ժայռի ծայրին», «Կարոտի կանչ» եւ այլն): Այդուամենայնիվ, բանաստեղծությունների մեծ մասում Կապուտիկյանը դիմում է խրատին ու ճառին, գնալով դեպի զգացմունքների տրամաբանացում»:⁷⁵ Բազմավաստակ գրականագետը շրջանցել է Կապուտիկյանի ստեղծագործական խառնվածքի այդ երանգը, որ կապված է մայրական անմիջական, բացսիրտ զգացմունքների հետ՝ դրսեւորված թվացյալ խրատի շրջանակներում: Կապուտիկյանի խրատները մայրական մաքրամաքուր զգացմունքների իմաստնացած դասեր են: Կոնկրետանանք բանաստեղծուհու հայրենասիրական երգերի

հոլովումներում: Կապուտիկյանը դեռ նոր ոտք դրած գրական ասպարեզ, սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, որին զինվորագրվեց նաեւ հայ ժողովուրդը՝ գիտակցելով դրա հաղթական ավարտի ճակատագրական նշանակությունը իր գոյատեւման ճանապարհին: Այդ գիտակցումի գեղարվեստական արտացոլմանը լծվեցին հայ գրականության բոլոր ներկայացուցիչները՝ Ավ.Իսահակյանից մինչեւ երիտասարդ Ս.Կապուտիկյան: Հայրենիքի պաշտպանության թեման սկսեց արտացոլվել պատկերման տարբեր երանգներով: Վերհիշենք Վարպետի «Ռազմակոչը», Ն.Ջարյանի «Մարտակոչը», Ս.Կապուտիկյանի «Առաջին երգը՝ տղայիս» եւ այլ բանաստեղծություններ: Պարզ է, որ որդուն դիմող մոր խոսքը պետք է կրի խրատական բնույթ, եւ դա բնական է: Բնական է նաեւ, որ որպես երգի բնաբան, Կապուտիկյանը պետք է բերեր Ռ.Պատկանյանի հայրական խոսքը որդուն. «Բազեն որ եկավ, որդիս լռեցավ, ռազմի երգերի ծայնով քնեցավ»: Պատերազմի հետ է կապվում նաեւ Ս.Կապուտիկյանի մայրական ավստ-սանքը այն առումով, որ խաղաղ ծիածանի փոխարեն «շանթն է ճայթում» մանկան օրոցքի վերեւ եւ վրան «սավառնում է բազեն երկաթի...», թշնամաբար խռովելով մանկան «արդար քունը»: Այստեղ է, որ մոր օրորոցայինը հնչւն է որպես խրատ-պատգամ.

*Թող իմ կաթի հետ հուրն ատելության
Քո հեզ արյան մեջ խառնվի՛, վառվի՛,
Մեծացիր՝ չարին ու բարուն գիտակ,
Մեծացիր որպես կտրի՛ճ անառիկ:*

*Բազեն թող բերի քո աչքերին քուն,
Քնիր շանթերի, որոտների մեջ,
Մանկո՛ւց սովորիր ատել թշնամուն,
Քանզի նա մանկո՛ւց կյանքըդ խռովեց: 76
(«Իմ առաջին երգը՝ տղայիս»):*

Օրորոցի մոտ «լույսերի մեջ քնած» մանկան մոր ակնկալությունները տազնապած թրթիռների են փոխվում, մայրը վախենում է մանկան հանգիստը խռովելուց: Ջգուշանում են նաեւ առուն, ուռին, անգամ թիթեռը: Ու զարմանքի մի շեղբ խոցում է մոր սիրտը. «քեզ զարթնեցնելն անգամ թվում է բիրտ մի ոճիր, ո՛նց են նրանք կարենում սուր բարձրացնել քեզ վրա...» («Պատերազմ»):

Պատերազմական տարիներին գրված հայրենասիրական երգերում Ս.Կապուտիկյանը ստեղծում է մորորդու-երկրի եռահենք իր գորգը: Մայրը մերթ տազնապում է հայրենիքի պաշտպանների ծանր նահանջի պատճառով, մերթ մանկան անմեղ ժպիտների շոյանքի տակ հավատում լուսե բախտին («Նահանջի օրեր»), մերթ երագում է, որ մանկան-օրոցքը «երկնքում լիներ», որ նա մեծանար «Ոչինչ չիմացած Այս աղետավոր օրերի մասին» («Կուզեի հեռու, հեռու երկնքում»), մերթ էլ արցունքը պահած սրտում դիմում է որդեկորույս-սգավոր մայրերին, հայացքն ուղղելով հայրենիքին.

*Երկիր իմ, ամեն շնչիդ ու քարիդ
Վիշտը թող կիսեն, ամենքի հետ լամ,
Որ թեթեւ՝ քայլես փորձության ուղիդ
Դեպի լեռն ի վեր փառքի, հաղթության...77
(«Փորձության օրերին»):*

Բանաստեղծուհին փառաբանում է նաեւ հայրենիքի ազատության համար ռազմի դաշտերում մարտնչող քույրերին: Նրա երգերում բնության գեղեցկությունների հրաշքը համարվում է կինը, որ «հողի պես բեղուն, արեւի պես բարի» է: Մայրական կրօնի տակ «ջերմանում է հունդը կյանքի», նրա երկուները «Մաքառում է մահվան դեմ», նրա «մանուկը նորածին... դրոշ է հաղթության»: Երգչուհու քնարական հերոսը ցասում է ապրում աշխարհում սփռվող դեղին ժանտախտի դեմ եւ կոչ անում կանանց բարձրանալու «Վերստին... զորությամբ կենարար...», փակելու մահվան ճանապարհը՝ հայրենի «արյունոտ դաշտերում» ծնկի բերելու թշնամուն («Կինը եւ մահը»): Ֆաշիզմի դեմ մղվող պայքարն արտացոլելու համար Ս.Կապուտիկյանը դիմում է բանաստեղծական տարբեր ձևերի՝ մայրական հորդոր («Օրորոցի մոտ»), նամականու («Նամակ դեպի ռազմադաշտ»), տաղի («Տաղ վերադարձի») եւ այլն: Այդ բանաստեղծությունների կիզակետում փայլում է հայրենիքի ճակատագրով վառվող մարդու սիրտն ու երազանքը՝ անուր թելերով կապված սրբազան հայրենիքի հետ.

*Լեռները հպարտ վե՛ր են բարձրանում,
Որ փառքդ վերեւ տանեն, հայրենի՛ք,
Արծիվները վես երկինք են հասնում,
Որ փառքդ երկինք տանեն, հայրենի՛ք...
Իսկ զավակներդ, զավակներդ անգին
Իրենց արյո՛ւնն են տալիս սրտագին,
Որ փառքդ անմահ պահե՛ն հայրենիք: 78*

Հայրենիքի մոտիվը Ս.Կապուտիկյանի հայրենապատումի մեջ պատկերվում է ժողովրդի ճակատագրի հետ միասնաբար: Այդ գաղափարը ամեն ինչից վեր է համարվում: Մարդկային բոլոր ապրումների, զգացումների գնահատման չափանիշը համարվում է հայրենիքի հանդեպ դրսևորված սերը: Նրա քնարական հերոսը իր էութունն ու ուժը տեսնում է հայրենիքի մեջ: Այդ ուժը նրան պարզեւում է նաեւ սերը դեպի մայրենի լեզուն, որով պայմանավորված է ժողովրդի հարատեւման ավիշը: Այս առումով ուշագրավ է «Խոսք իմ որդուն» հանրահայտ բանաստեղծությունը: Մանկան բացվող լեզվի հետ ցնծություն է ապրում մայրը: Եվ որպես պատգամ նա որդուն է հանձնում «Հայոց լեզուն հազարագանձ»: Բանաստեղծուհին իր պատգամի արմատները հասցնում է պատմության քառուղիները, որոնցով անցել է մեր լեզուն որպես աստղալույս... «Շառաչել է խռովահույզ Սլացքի հետ հայկյան նետի»: Բանաստեղծության հյուսվածքի մեջ է առնվում Ս.Մաշտոցի անունը, որի սուրբ հանճարով մեր լեզուն «Դարձել է գիր ու մագաղաթ, դարձել է հույս, դարձել դրոշ, Պահել երթը մեր՝ անաղարտ...»: Ընդամենը 44 տողանոց այս բանաստեղծության մեջ պատկերավոր ու հակիրճ ընդգծումներով ներկայացվում է մեր ժողովրդի անցած հազարամյա ճանապարհը: Մայրենի լեզուն ժողովրդի երթը պահել է անաղարտ, պանդուխտը նրանով է մրմնջացել իր սրտի վերքը, նրանով է որոտացել ժողովրդի կռվի երգը... Սերնդե-սերունդ մեր ալեհեր լեզուն անցել է շրթից-շուրթ, հասել մեր օրերին: Քնարական հերոսի հիացմունքի, սիրո, ակնկալությունների զգացումները դառնում են սրբազան պատգամ մայր

Ժողովրդի բոլոր անձնուրաց մայրերի շրթերին:

Ինքնամոռաց մոր թախանձանքն է, որ մայր լեզուն պահի «բարձր ու վճիտ...Արարատի սուրբ ծյունի պես», «սրտին մոտիկ՝ սուրբ պապերի աճյունի պես», թշնամու զարկից պաշտպանի կրծքով, ինչպես կպաշտպանի մորը՝ եթե սուր քաշեն նրա վրա:

Վերջապես ամբողջանում է մոր աստվածային, հայրենանվեր կերպարի ընդհանրացումը.

*Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թե մո՛րդ անգամ մտքից հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանաս: 79*

(«Խոսք իմ որդուն»):

Բանաստեղծուհու հայրենասիրական խոսքը խորաթափանց է, ազնիվ: Նա հայրենի երկրի հանդեպ բացում է որդիական սիրտը, արտահայտում իր հպարտությունը, միաժամանակ դրսևորելով տազնապները՝ զգացմունքի անմիջականության եւ բնականության սահմաններում, հոգեբանական դրսևորումների թրթիռներով: Զրույց բացելով «Հայոց աշխարհի» հետ, քնարական հերոսը երազում է հավերժ ապրել նրա «գրկի մեջ», ապա դիմում է Արարատին՝ որպես «Անհաս տենչի, անհագ սիրո արձանի»: Արարատը ներկայացվում է որպես ամբողջական հայրենիքի, աշխարհով մեկ ցրված հայության հավերժության խորհրդանշան, որը երեւում է «Աշխարհի մեջ ամեն հայի ամեն ծայրից...».

*Աշխարհների անապատում ժողովուրդս՝ մի բեղվին,
Իմ թափառիկ եղբայրների կապույտ միրա՛ժ, Արարատ:*

*Ախ, մեր կարոտն ելե՛լ, դիզվե՛լ, դե՛մ է առել փեշերիդ
Ու խռոված՝ դարձել է գետ, դարձել Արա՛գ, Արարատ:
Աչք ենք բացել քեզնից հեռու, քո կարոտով ծերացել,
Մի՞թե պիտի մեռնենք մի օր քեզնից անմա՛ւ, Արարատ: ⁸⁰
(«Արարատ»):*

Մեծ Հայրենականի տարիներին Ս.Կապուտիկյանի ստեղծած հայրենապատումի վերջին ակորդը կարելի է համարել «Ներքող Հայաստանին» ստեղծագործությունը:

Անթիվ զոհերի գնով հաղթանակը շահած ժողովրդի դուստրը կրկին վերհիշում է մեր աղետավոր դարերը, աստղերի պես աշխարհով մեկ ցրված հայության ցավը, ծեռքը դնում սրտին եւ հանգիստ չունչ քաշում, որ «Արաքսի ափին մնաց փոքրիկ մի հող՝ անառիկ, Արեւ մնաց աստղերի մեջ, մնաց հային հայրենիք»: Կապուտիկյանը կոնկրետ նշում է հայի փրկված հայրենիքի անունն ու հասցեն, դա «Սովետական Հայաստանն» է, որ շարունակում է իր նորոգ ճանապարհը: Սովետական Հայաստանը բանաստեղծուհու համար «միակ շեն օջախի ծուխըն» է «հայոց հնոց աշխարհում... խրճիթի լո՛ւյսն» է «մենավոր՝ գիշերային ճամփորդին», նա «տուն կանչող մայրական ձայն է... հայ թափառիկ պանդուխտին»: Բանաստեղծության ավարտը հնչում է որպես քնարական հերոսի եւ՝ երախտիքի խոսք՝ նահատակների հանդեպ, եւ՝ գոյատևելու երաշխիք.

*Դու թա՛նկ ես մեզ որպես դրոշ՝ ցողված արյամբ զոհերի,
Դու՛ մոր նման նվիրական, դու՛ մանկան պես սիրելի,
Եվ աշխարհում հայի համար դու նո՛ր մի լեռ սրբազան,
Դու կարոտի նո՛ր Արարատ՝ բարձրագնա՛ Հայաստան... ⁸¹
(«Ներքող Հայաստանի»):*

Ս.Կապուտիկյանի հայրենապատունը նոր երանգներ ստացավ 1950-ական թվականներին: Լույս տեսան նրա «Իմ հարազատները» (1951), «Սրտաբաց զրույց» (1955), «Բարի երթ» (1957) ժողովածուները: Այս ընթացքում բանաստեղծուհին Հայաստանի կերպարը ներկայացնում է նախկին ԽՍՀՄ ժողովուրդների համագործակցության ֆոնի վրա՝ տուրք տալով ժամանակաշրջանի գաղափարախոսության պահանջներին: Խորհրդային գաղափարաբանության ելակետը գրականություն է բերում հեռաստանների պատկերը: Ալ.Տվարդովսկու «Հեռաստանից-հեռաստան» պոեմը այդ երեւոյթի գեղարվեստական ընդհանրացումն է: Գաղափար-պահանջի արձագանքները դրսևորվեցին նաեւ հայ բանաստեղծների երգերում: Առաջին հաջող օրինակը հանդիսացավ բանաստեղծուհու «Իմ հարազատները» ժողովածուն, որի համար նա 1952 թ. արժանացավ Պետական մրցանակի: Ժամանակին նշվել է ժողովածուում ընդգրկված բազմազան հետաքրքրությունները, լայն շունչը, զգացմունքների հարստությունը: Հայ բանաստեղծուհին իր ստեղծագործական հուզաշխարհում մտապահելով Մոսկվայի, Կիեւի, Ուրալի, Մերձբալթիկայի, Լենինգրադի, Ղազախստանի համապատկերը, ժողովուրդների ընդհանուր հայրենիքի ֆոնի վրա առանձնահատուկ երանգով ընդգծել է Հայոց աշխարհի դիմագիծը: Հարազատ մոր-Հայաստանի սիրտը ջերմանում ու տրոփում է մոսկովյան հաղթանակներից, լենինգրադյան արեւից, Ռիգայի ծաղկումից, Ալմա-Աթայում հնչող Ջամբուլի երգից, մերձկիեւյան այգիներից, տարբեր ազգերի աշխատավոր մարդկանց ստեղծագործ աշխատանքից եւ բարեկանությունից: Պետք է միշտ հնչի այն ճշմարտությունը, որ

Կապուտիկյանի գեղագիտական այդ իդեալի արմատները հասնում են հայ ժողովրդի պատմության խորքերը, ակունքվում Մուշեղ Մամիկոնյանի վեհանձնությունից, Սասունցի Դավթի աշխարհընկալումից, աշխարհի համար ժողովրդի մեծագույն զավակների գիտական եւ ռազմական սխրանքներից, վերջապես մեր ժողովրդի կենսափորձից: Իր այդ երգաշարում զգուշանալով առօրյա մանրունքների ակնարկային-փաստագրական նկարագրությունից, Կապուտիկյանը ընդգծել է կենդանի զգացմունքները, շիկացրել քնարական տրամադրությունը, ստեղծել ժամանակաշրջանը բնութագրող մետաֆորներ: Այստեղ կարելուր ենք համարում Հայաստանի, հայ ժողովրդի մասնակցության նկարագրությունը ազգերի համընդհանուր ընթացքին: Այս տեսակետից ուշադրության արժանի է «Ռայնիսի շիրմաքարը Ռիգայում» գեղարվեստական պատկեր-ընդհանրացումը: Հայաստան երկրի դուստրը՝ բանաստեղծության քնարական հերոսը, կտրելով հայրենիքի խաչմերուկները, կանգնում է լատվիական ժողովրդի անվանի զավակ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Յան Ռայնիսի շիրմի առաջ: Խոր հուզմունք է ապրում բանաստեղծուհին, Ռայնիսի փառահեղ շիրմաքարի կողքին տեսնելով մի մարմարիոն, վրան փորագրված. «Վլադիմիր Մանուելյան, ծնված քսան թվին, ընկած Ռիգայի մոտ՝ քաջի մահով»: Երեւոյթն ինքնին խոսում է իր մասին:

Նրա հայրենապատումի սահմանները լայն են՝ Հայաստան-Սփյուռք ընդգրկումներով: Տեղին է նկատել անվանի գրականագետը. «Ս.Կապուտիկյանի հայրենասիրական ազգերգությունից շատերը անկեղծ մենախոսություններ են հայրենական տան, հայ մարդու եւ

հայ օջախի, կարոտի ու պանդխտության մասին, ընդհանրապես՝ հայոց ճակատագրի մասին: Իսկ այդ մեմախոսությունները հուզական-ներգործական բռնկումներով ու «պայթյուններով» են բնութագրական»: ⁸²

Ի դեպ, պետք է զարմանքով նշենք, որ ժամանակին գտնվել են մարդիկ, որոնք ելնելով Կապուտիկյանի՝ ճանապարհորդական բանաստեղծություններում Յայաստանի վառ կերպարին անընդմեջ անդրադառնալուց, դեպի մայր հայրենիքը դրսևորված կարոտից, քննադատել են բանաստեղծուհուն, մեղադրելով նրան աշխարհայացքի սահմանափակության եւ տեղայնության մեջ: Եվ առավել զարմանալի է տարիներ առաջ ականավոր բանաստեղծ Գ.Էմինի մեղանշումը այդ կապակցությամբ: Նա գրել է. «Եթե ուշադիր կարդանք Ուրալի, Ուկրաինայի, Ղազախստանի մասին Սիլվա Կապուտիկյանի գրած մի շարք բանաստեղծությունները, ապա դժվար չի լինի համոզվել, որ այդ վայրերը բանաստեղծուհու համար հարազատ են դառնում այն ժամանակ, երբ նրանցում ինչ-որ բան հիշեցնում է Յայաստանը: Չեյաբինսկի գործարանում այդ «ինչ-որ բանը» ռադիոյով լսված հայկական երգն է, սովետական Ուզբեկստանի նվաճումների ցուցահանդեսում՝ հայուհի Շուշանիկի ձեռագործը, Ուկրաինական գյուղում՝ Յայկանուշ Դանիելյանի երգը»: ⁸³

Որպես Գ.Էմինի այդ թյուր կարծիքը ժխտող պատասխան, բերենք Ս.Կապուտիկյանի «Երգը, մեր երգը» գողտրիկ բանաստեղծությունը՝ գրված Պերեդելկինոյում 1959 թվականին: Երգի կառուցվածքի մեջ ներառնելով ուշացած գարունը, հյուսիսի սառույցը, ցուրտը, կարկամ առուն, դրսում հնչող «լեզուն ուրիշ», բանաս-

տեղծուհին տխուր քաշվում է լուռ սենյակը եւ փայփայում դարձի ուղին: Նա սփոփում է իրեն, որ սեղանին «Հայոց գրերն են մանր ու տոկուն», որոնք ասես ծանոթ աչքերով նայում են եւ հիշեցնում «Լեռներում ձգվող մեր հորովելը» եւ կրկին համոզում:

*Ե՛րգը, մեր ե՛րգը... Հայրենի հո՛ղ է,
Տանիք ու լո՛ւյս է նա մեր հոգուն.
Դրա համար էլ նրա չորս տողը
Մեր հայոց լեզվով կոչվում է «տո՛ւն»...⁸⁴*

1961 թ. լույս տեսավ Ս.Կապուտիկյանի «Ստորումներ ճանապարհի կեսին» ժողովածուն: Բանաստեղծական ժողովածուի երակները ինչ որ չափով սնվում են Չարենցի «Էպիկական լուսաբաց» ժողովածուի (1930) ծրագրային բանաստեղծություններից: Արածի գնահատումը, դժգոհությունը, խոստովանությունը, հաստատումը, եւ ամենից կարեւորը՝ անելիքի գիտակցումը «Ստորումների» ատաղձն են կազմում: Տնտղելով 25-ամյա ստեղծագործական ճանապարհին իր արած-չարածը, բանաստեղծուհին զգում է իր պարտքը հայրենիքին եւ ժողովրդին: Նա հայ բանաստեղծի ուղին վերագնահատելով, կրկին հաստատում է արվեստագետի տեղն ու դերը կյանքում, երախտիքով հիշում իր մեծ նախորդներին, որոնք «Այրվել են... հալվել, սպառվել», «խարխուլ հայրենիքին եւ խուլ ժողովրդին» տվել հույս ու լույս: Նրանք տեսել են «բանտ ու աքսոր», գերեզման գտել անապատներում ու երբեք չեն ընկրկել: Բանաստեղծուհին նոր օրերում ոտքերի տակ ունենալով «հողը հայրենյաց», իսկ գլխավերեւ «դրոշի շուքը», գտնում է, որ արածը քիչ է:

*Ես քիչ եմ տվել՝ առածիս դիմաց,
Քեզ, իմ ժողովուրդ, նվիրել եմ քիչ
Քիչ եմ տոկացել քո կյանքի համար,
Ձոհասեղանիդ չեմ բերել ոչինչ...⁸⁵*

Ինչպես տեսնում ենք, Կապուտիկյանի այս ժողովածուի հիմքում ընկած է ժողովուրդ-հայրենիք-ժամանակ խնդիրը: Խոր ու ինքնատիպ պատկերներով նա ներկայացնում է ժողովրդի դարավոր ճանապարհը, գաղթը, եղեռնը, որը մանուկների ողբերգությունը, աշխարհով մեկ սփռվելը, միաժամանակ ներկայացնում կիսակործան ժողովրդի վերածնունդը հայոց փրկված մի բուռ հողի վրա եւ հավատով փարվում ապագային: Դեռեւս մինչեւ «Մտորումները» տպագրվելը 1959 թ. Մոսկվայում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուի առաջաբանում գրել է. «Թող հասկանա ինձ ընթերցողը, երբ նա իմ բանաստեղծություններում այդպես հաճախ կհանդիպի «Հայաստան», «հայկական» բառերին: Թող ըմբռնի այն ցավը, որ կա այդ բանաստեղծություններում: Դա իմ երկրի դարավոր տխուր բախտի ցավն է»: Ինչքան էլ - Կապուտիկյանը պատկերեր փրկված փոքր հայրենիքի վերածնության առաջ բերած մեծագույն հրճվանքը, սեւաչ երեխաների կայտառությունը, վաղեմի ավերակների կողքին բարձրացող շինությունները, միեւնույն է, նա չէր կարող մոռանալ իր երկրի դարավոր բախտի ցավը: Եվ նա այդ ցավի միջից դիմում է Երեւանի ձայնին, որպեսզի հասնի աշխարհասփյուռ հայերին, հիշեցնի Սիփանի սարերի վեհությունը, հայոց գետերի շառաչը, աղբյուրների կարկաչը: Կապուտիկյանի քնարական հերոսը ձգտում

Ե վեր հառնող Երեւանը կամարել աշխարհի չորս ծագե-
րուն ծվարած հայերի միջեւ.

*Արյուն մղիր, դարձիր սիրտ՝ հայի ցամքող երակին,
երկրից երկիր, ծովից ծով կապիր կամար ու կամուրջ,
ժողովրդիս ցանուցիր առ թեւի տա՛կ ալիքիդ,
Երեւանի հզոր ձայն, Երեւանի անմա՛հ շունչ... 86*

Ինչպես տեսնում ենք, Ս.Կապուտիկյանի հայրենա-
պատումի պատկերային հյուսվածքին գումարվում է
նաեւ սփյուռքահայության ճակատագիրը: Նա մեր ժո-
ղովրդի տեսած ողբերգությունը, հեղված արյունը,
ավերված երկիրը ներկայացնում է որպես համազգա-
յին անանցանելի ցավի պատկեր, փրկված-փոքրիկ
Հայաստանի ծաղկունի գուգահեռով: Բանաստեղծու-
թյունները մի տրամաբանական շարք են կազմում «Հող
հայրենի», «Սփյուռքահայ բարեկամներին» (Վահան
Թեքեյանի «Տարբեր ես դուն մեր երազեն, - ավելի լավ»
բնաբանով), «Վիյամ Սարոյանին», «Հայոց ծուխը»,
«Բալլադ երկու ճանապարհի մասին» եւ այլ երգեր,
որոնցում հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի թեման
գրավում է առանցքային տեղ: Հայրենիքի-ժողովրդի
միասնական ճակատագրի գեղարվեստական պատ-
կերման հիանալի դրսեւորում է Կապուտիկյանի «Ստո-
րուններ ճանապարհի կեսին» պոեմը, որի բացահայտ-
ման բանալի եւ բնաբան կարող են հանդիսանալ Սիա-
մանթոյի «Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ
քո ճակատին» եւ Հ.Թումանյանի «Ու պոետներ, որ չեն
պղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր
կյանքը նոր երգերով, նոր խոսքով»տողերը: Քնարա-
կան այս պոեմը կարելի է բաժանել երկու մասի,

որոնցում ընդգրկված են Հայաստանի անցյալը եւ նրա փրկված բեկորի նոր երթը: Դեպքերի, երեւոյթների, իրադարձությունների, ժողովրդի հին ու նոր ճանապարհի մասին պատմողը հեղինակն է: Այս ֆոնի վրա միասնական են հնչում քնարական հերոս եւ հեղինակ հասկացությունները: Մենախոսություն հիշեցնող պոեմի մեջ թանձրացած պատկերվում է Հայաստանի անցյալը, հուրհրատում «մեր անցյալ բախտի դարավոր մորմոքը», իր հայրենիքում օտարական դարձած հայերի անկար խարխափումը, եղեռնված ապրիլը, Եփրատի արյունով ներկվելը: Եվ հայոց նորօրյա բանաստեղծը եւս «Աշխարհին ի տես, աչքի տակ աստօղ», ուզում է թքել արդարության դեմքին: Բայց մի պահ կարկանդակ է քնարական հերոսի լեզուն, ապա հայտարարում, որ ինքը չի «ծնվել անեծքի համար»: Նա կոչ է անում իր ժողովրդին հիշել ցավը՝ ապրելու համար: Այդ ցավից է ժողովուրդը ծնել Չարենցին, Մարտիրոս Սարյանին, Արամ Խաչատրյանին, Միսաք Մանուշյանին, այդ ցավից է ծնվել նաեւ նրա դուստրը-բանաստեղծ, որը երախտիքով խոստովանում է.

*Դու ուրախ ժամիս՝ մորմոք մշտակեզ,
Դու տխուր ժամիս՝ բերկրա՛նք մշտաշող,
Ինձ հարստացնող Եվ ինձ հաստատող դու միա՛կ իմ «ես»,
Եթե լցված եմ՝ լցված եմ քեզնո՛վ: ⁸⁷*

Բանաստեղծուհին իր խոստովանանքի մեջ մի կողմից հիշեցնում է «Հայոց պատմությունը՝ աղետներով լի», մյուս կողմից էլ ընդգծում «վերապրումի բերկրանքն անսպառ» եւ հպարտանում, որ որդին է հայ ժողովրդի: Եվ այդ մտորումները մի նոր վճռականություն

են հաղորդում քնարական հերոսին գրքի «Ասում են լինել» շարքում, որտեղ հոգու ցավի եւ սրտի ջերմացնող բաղձանքի համաձուլվածքով հնչեցվում է գոյատևելու-ապրելու վճռականությունը՝ «լինել»:

«Մտորումներ ճանապարհի կեսին» գիրքը քննարկվել է 1961 թվականին. Հայաստանի գրողների միությունում: Ջեկուցումով հանդես է եկել Պ.Սեւակը, որ կարելի է համարել բանաստեղծական դիմանկարի հաճելի ամբողջացում: Սեւակը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել գրքի հայրենասիրական թրթռներին եւ ընդգծել. «Ս.Կապուտիկյանի այս հերթական գիրքը ավելի ընդգրկում է, քան ես ներկայացրի: Սիրով ու հայրենիքով չի սպառվում նա, եթե սերն ու հայրենիքը առարկայաբար հասկանանք: Բայց այս գրքում ոչ մի տող չկա, որ համակված չլինի սիրով կամ հայրենիքով, հայրենիքով կամ սիրով: Եվ սերն այստեղ լայնանում է մինչեւ հայրենիք, ու հայրենիքը մտերմաբար տեղավորվում է սիրո մեջ»: ⁸⁸

Հետագայում երգչուհու «Դեպի խորքը լեռան» (1972), «Ձմեռ է գալիս» (1983), «Երկխոսություն իմ եւ իմ միջեւ» (1989), «Տագնապ» (1994) գրքերը հաստատեցին Պ.Սեւակի գնահատականը. «Ս.Կապուտիկյանը, ինչպես ամեն մի իսկական բանաստեղծ, առաջին հերթին ազգային բանաստեղծ է, տվյալ դեպքում՝ հայ բանաստեղծ: Հայ-ոչ միայն իր մեսրոպատառ խոսքով, այլեւ իր մտածողության եղանակով: Հայ-ոչ միայն ազգային թեմաներով (ինչը, շտապելով ասեմ՝ դյուրին է չարաշահել), այլեւ իր ներաշխարհի ամբողջ տուրեւառությանը, հայ-ոչ միայն իր անձնագրով, այլեւ իր հոգով, ոչ միայն իր ազգանվամբ, այլեւ իր ոգով - ոչ թե «թե» - ով, այլ «է»-ով»: ⁸⁹

Կապուտիկյանի ստեղծագործական մղումները միշտ տարել են դեպի հայրենիքի թեման, եւ յուրաքանչյուր անգամ նա ստեղծել է հայրենասիրության տարբեր էջեր՝ ժամանակաշրջանի հրատապ պրոբլեմներին առնչված: Ակադեմիկոս Էդ.Ջրբաշյանը բանաստեղծուհու երկերի եռհատորյակի առաջաբանում գրել է «Առանց չափազանցության մեջ ընկնելու մենք կարող ենք ասել, որ հետպատերազմյան շրջանում Սիլվա Կապուտիկյանը եւ Պարույր Սեւակը եղան այն հայ բանաստեղծները, որոնք հիրավի նոր խոսք ասացին հարազատ ժողովրդի պատմական ճակատագրի մասին, տվեցին հայ գրականության այդ ավանդական թեմայի սեփական եւ խոր իմաստավորումը»:⁹⁰

Վերջին տարիներին տպագրված ժողովածուներում եւս բանաստեղծուհու նույն անհանգիստ հոգին է, հայրենիքի սիրով ջերմացող սիրտը, ինքնազննումի անկեղծությունը:

Հայրենիքի անցյալ-ներկա-ապագա կամուրջը բանաստեղծուհու համար վերացական պատկեր չէ: Նա իր իդեալի գույները բխեցնում է երկրի հին ու նոր, կիսավեր ու կանգուն նյութական ու հոգեւոր գանձերի հրաշքներից: Այստեղ եւս նա հեռու է ճշմարտությունը սքողելուց: Նրա երգը այս ուղղությամբ զգացմունքից վերածվում է խորհրդի, որ ինչ որ տեղ կարող է թվալ քարոզ: Բայց՝ ոչ: Այստեղ երգչուհին իր ազնիվ քարոզը հյուսում է այնպես, որ շոյում է ընթերցողի սիրտը, ժողովրդի համար դառնում դաս: «Դեպի խորքը լեռան» գրքի «Մեզ չի միացնում այլեւս ներկան» տողով սկսվող բանաստեղծությունը մեր այս դիտարկումի լավագույն օրինակն է: Քնարական հերոսը համոզված

լինելով, որ ներկան մեզ միաբանելու ուժը չունի, իսկ գալիքն էլ կնետի հեռուն, հաստատում է. «Անցյալն է մերը»: Մատնացույց անելով մեր հոգիների մեջ եղած հիշատակների Ջվարթնոցները եւ ընդգծելով դրանք վերականգնելու անհնարիությունը, եզրակացնում է.

*Միայն կարենանք
Անբույր մի խոսքով,
Մի մութ արարքով
Ջեղծել, չաղարտել սուրբ խոյակները,
Նրանց պահպանել միայն կարենանք,-
Որ եթե այցի գնանք անցյալին՝
Լուռ ծնրադրելու քարեր ունենանք: 91*

Մեզ թվում է, որ այս ընդհանրացումը հայրենիքի հանդեպ եղած սիրո իսկական օրինակ է, որովհետեւ նրանում չկա մեզ հետ մղող թերությունները սքողելու նշույլ անգամ, նրանում կա քնքշասիրտ որդու ցավը, մեր արարող ժողովրդի հոգու գեղեցկությունները պահպանելու եւ նրանցով քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու պատգամ: Հայրենիքը պաշտպանում են ոչ միայն արտաքին թշնամիներից, այլեւ ներսում եղած չարագործներից: Ավելի դժվարը վերջինս է, որ խորապես գիտակցում է բանաստեղծը:

«Դեպի խորքը լեռան» ժողովածուն Ս.Կապուտիկյանի բանաստեղծական-փիլիսոփայական անընդհատ հասունացման վկայությունն է, հայրենիքի հանդեպ նրա ծնրադիր կեցվածքի, որդիական մաքրամաքուր սիրո, ժողովրդի ճակատագրի արնաբորբ զգացումների, դեպի գալիքն ունեցած հայահատուկ հավատի գեղարվեստական վավերագրություն: Ինքնազննման,

խռովքի, դրամատիկ տարերքի, հոգեբանական ցնցումների, խոստովանության, դժգոհության, ակնկալությունների ինքնատիպ մի պատկեր-ապրում է ժողովածուի «խռովք» բանաստեղծությունը: Այն ինքնաբացահայտման կապուտիկյանական կուտակումների նոր պոռթկում է, ժողովրդին եւ հայրենիքին անմնացորդ նվիրված բանաստեղծի հավատո հանգանակ:

Բանաստեղծուհին հայոց դժվարին, կորուստներով լի ճանապարհից դժգոհելով, ընդգծում է այն համազգային ցավը, որ հատնեցնող շաքարախտ է դարձել, եւ նրանից ազատվել չկա, որովհետեւ փոխվել է երակներ սնող արյան: Մետաֆոր ընտրելով «Եսակենտրոն Մասիսը», Ս.Կապուտիկյանը հյուսում է ցավածին այնպիսի տողեր, որ «ջրհորի խոնավ պարանի նման» անվերջ սուզվում է «դարերի խավար հատակը» եւ հայ երգի դույլը «լցնում լաց ու արյունով»: Քնարական հերոսը տենչում է ծիածանի պես ժպտալ, «գրկել տառապած... հողագունդը», երես չթեքել «Մարմարա ծովի շողոմ կապույտից» եւ չկսկծալ, որ Արտամետի չոր խնձորենուն Լաց իսկ ցողելու իրավունք չունի», եւ վերջապես պահանջել «Նյուրնբերգյան դատ» աններելի ներման դեմ: Կապուտիկյանը մեկ առ մեկ թվարկում է արյան փոխված իր ցավի շերտերը հայրենի ազնիվ բարբառի հանդեպ ահագնացող համրությունը, ճշմարտության խեղված դեմքը, Կենդանի մարմնի նյարդն ու երակը կարող հատող քարտեզային սահմանները, աստղերի պես ցանուցիր մեր ժողովրդի թանձրացած, անթարգմանելի կարոտը: Բանաստեղծության մեջ որպես հույսի նեցուկ ներկայացվում է Երեւանը՝ մերված-ծուլված քնարական հերոսի էությանը.

Եվ Երեւանը,
Այս Երեւանը,
Ինձ կյանք պարգեւած,
Իմ կյանքը առած,
Իմ մայրը, որդի՛ն, իմ ապավենը: ⁹²

Թվում է Երեւանի նկարագրով խաղաղվում է քնարական հերոսի հոգին: Բայց Գ.Նարեկացու «Ողբերգության մատյանի» խռովքի հանգույն, կրկին փոթորկվում է այն, որովհետեւ դեմը գերված հսկան է, «Ինքը՝ Մասի՛ւր. թե մեկ՝ բարձրացած, Մի յոթն այդքա՛ն էլ գետնի խորքն իջած, Բազմաշերտ, խրթին մեր էութունը - Հավերժ Մասիսը»: Եվ կրկին Երեւանի դեմ-դիմաց Մասիսն է համարվում հայոց արշալույսը, լույսի ավազանը, հային մկրտողը, մաքրողը, նորոգողը: Մասիսը բանաստեղծուհու եւ՝ սրբազան լեռն է, եւ՝ ծանր արյունը, եւ՝ ճակատագիրը, մեր համազգային ցավի ճիչը.

Այն ո՞վ չգիտե,
Եթե ճշում են՝ ցավից են ճշում,
Աչքը շրջում են՝ լույսի ուժից վեր պայծառությունից,
Վանում են իրար հանդիպման թափի՛ց,
Փախչում են միայն անհուն, անհաշիվ, դժվար սիրելուց,
Եվ ընդվզում են, երբ անհնա՛ր է լինում փախչելը,
Երբ անհնար է լինում միանա՛լ...⁹³

Բանաստեղծության վերջում, ինչպես տեսնում ենք, երգչուհին օրհնում է Հայաստանը՝ իրեն պարգեւած դժվար սիրո, անհանգիստ խռովքների, չսպիացող վերքի, վերացումների, վեհացումների ու փառքի, երգի չցամաքող ակունք դարձած լիքը հոգու համար: Այս ամենի գումարը յուրաքանչյուր հայի ազգային ճակատագրի

հանրագումարն է, որից էլ բխում է աշխարհասփյուռ հայերի անհրաժեշտ ընդվզումն ու միանալու ծարավը: Արարատին նվիրված բանաստեղծությունները կրում են «Արարատյան համանվագ» խորագիրը: Եթե Գ.Նարեկացին «Ողբերգության մատյանում» ի խորոց սրտի զրույց է բացում Աստծո հետ, ապա Ս.Կապուտիկյանը աստվածացնում է Հայաստանի խորհրդանիշ Արարատը: Դիմառնության ձեւը այստեղ լրիվ արդարացնում է իրեն: Քնարական հերոսի եւ հայրենի լեռան միջեւ կայացող զրույցը վերածվում է հայոց հին ու նոր սերունդների սիրո, ցավի, հույսի խոստովանության: Քնարական հերոսը «Աղոթք Արարատին» երգաչարի մեջ աստվածային լույսի փոխարեն ընդունում է Արարատի ճառագայթների փունջը: Սարի եւ քնարական հերոսի մտերմությունը փոխվում է միասնության, դեռ ավելին, մեր քերթությանը չափ ու ոճ է տվել Արարատը՝ «Գողթան երգերից մինչեւ Սասնա վեպ ու Քուչակ», նրա զույգ զանգերի դողանջն է ծայնագրվել եւ դարձել «Սուրբ-սուրբ», դարձել «ծով ի ծով»: Հայոց վանքերի գմբեթները արարատված երեւոյթներ են: Հայ սերունդների հավերժական ընթացքը, նրանց ծնրադիր երկրպագությունը մեծ լեռան հանդեպ երգչուհին բացահայտում է նարեկացիական աղոթքի ջերմությամբ, Արարատ-Աստծո դեմ իրեն մերթ համարելով պտղունց հող կամ փշուր քար, մերթ մի խաչ հնչյուն, կամ հրահոս թուջ, եւ անվերջ պաղատում է, որ սարը կաղապարի իրեն իր շրջանակով եւ օգնի. «Տառապանքի մեջ մնալ վեհապանձ, Եվ գերության մեջ տիրակալ լինել»:

Սակայն պետք է նկատել, որ Կապուտիկյանը Արարատ-Աստծո հանդեպ խեղճ հավատացյալ չէ, նրա

աղոթքը նետարձակման ուժ ստանալու, «Պահը դարերի կշռույթով չափելու» բաղձանք է, հայի ուրքերի տակ հայոց հողը հավերժ պահելու երազ, որովհետև Արարատը «Սուրբ գրքի պես՝ աշխարհապատկան» լինելով հանդերձ «Ամենամերը, ամենահայն» է, եւ հային հարատւելու վճռականութիւն պարգեւող ամենագոր ուժը: Աղոթող քնարական հերոսը Արարատից խնդրում է.

*Ինձ էլ սովորեցրու քեզ մման լինել:
Եվ ինձ էլ օժտիր անտրոհելի քո այդ դաշնությամբ՝
Շունչ դառնալ, ոգի, գոյության խորհուրդ՝ հնամյա ցեղիս,
Գամվել ու մնալ հողին իր դժվար,
Իր դժվար բախտին, -
Բայց եւ լայնանալ ու անեզրանալ...⁹⁴*

Գ.Նարեկացին աղերսում է, որ Աստված օգնի հասնելու, նմանվելու իրեն, իսկ Ս.Կապուտիկյանը աղոթում է. «Օ՛, լյա՛ռն Արարատ, կերպավորի՛ր ինձ ըստ քո պատկերի»: Դժվար չէ նկատել, որ բանաստեղծուհին ուղղակի աստվածացնում է Հայրենիքը: Ժողովուրդը, որ գիտե աստվածացնել իր տունն ու օջախը, նա երբեք չի պարտվի, նրան մահ չկա:

Հայրենիքի եւ քնարական հերոսի միասնությունը ներկայացնում է նաեւ «Ընդդիմախոսություն», «Խոհ Արարատ լեռան առիթով», «Ստորոտներից Արարատն այնպես...» երգերում: Բանաստեղծուհին բանավիճելով Հայոց լեռնապարը գերած թշնամիների հետ, կրկին հաստատում է, որ Արարատը հայ ժողովրդի համար «գործող հրաբուխ է... խառնարան ոգու, որ դար ու դարեր մեր ընդվզումի կրակն է ժայթքում եւ բորբոքում մեր ցասումը կենաց»:

Հայոց ճակատագիրը որպես բանաստեղծական մտորումների եւ ձեռքբերումների կիզակետ, ընդգծվեց նաեւ «Ձմեռ է գալիս» ժողովածուում: Հարազատ մնալով ստեղծագործական իր խառնվածքին, անընդհատ թարմացնելով հոգու գույները, բանաստեղծուհին դարձյալ իր հայրենապատումի մեջ առավ մեր համագային տագնապն ու ակնկալությունները: Մի դեպքում դիմելով հուշապատումի, մի ուրիշ դեպքում՝ հարց ու պատասխանի եւ այլ ձեւերի, նա սրտի դռները բացում է մաքառման երգի առջեւ: Անձնական ապրումների շրջանակներում նա երբեք չի մոռանում հայրենիքը, բյուրեղացած, խտացված ապրումներով ներկայացնում է անձնուրացության իր ընծայականը.

*Եվ ես պիտի մի մատ անգամ
Իջնեմ իմ բերդ- հարությունից,
Թե ես պիտի մի նյարդ անգամ
Ձիջեմ իմ խորք- էությունից,
Թե իմ մասունք գիր ու խոսքից
Մի տա՛ռ անգամ պիտի զոհեմ,
Դրա դիմաց աշխարհն էլ տան՝
Իմ պետքը չէ, ա՛խ, պետք չէ՛ ինձ: ⁹⁵*

«Ձմեռ է գալիս» ժողովածուում զետեղված քառյակներում լինի, թե ութնյակներում, փիլիսոփայական-խոհական ընդհանրացումների մեջ կարելուր տեղ է հատկացվում հայրենիքի հանդեպ մշտաբորբոք, անմիջական եւ անկեղծ սիրուն: Հետաքրքիր է նաեւ այն, որ բանաստեղծուհին իր կյանքի ծյունափառ բարձունքներից կյանքի հանդեպ սիրտը բացում է երիտասարդական ավյունով ու նույն եռանդով եւ անընդմեջ ձեռք մեկնում Հայաստանի թեմային.

Հայաստան իմ, մայրիկ իմ,
Տե՛ս, մանուկդ խռոված
Քեզ է վազում սրտաճաք,
Փեշիդ՝ լալու՛ է գալիս: ⁹⁶

Այս քառյակը բազմաշերտ ապրումների խտացում է: Ամեն բառ այստեղ հիրավի մի աշխարհ է: Խռոված է մանուկը, սրտաճաք է: Ու՞մ բախտից է խռոված՝ երկրի՞ թե՛ իր անձնական բախտից: Նորօրյա ճակատագրի տազնա՞պը չէ, արդյոք, որ մայր-Հայաստանի զավակին՝ մանկանը սրտաճաք է անում: Մոր փեշին լալու պատկերը ինչի՞ արտահայտություն է. ուրախությամբ, թե՛ թախծի: Այսպես. քառյակը կարելի է համարել դրամատիկ ապրումների, շիկացած կրքերի, փոթորկված խռովքների խտացում:

Ս.Կապուտիկյանի հայրենապատումին անդրադառնալիս երկրի եւ ժողովրդի ճակատագրի հանդեպ արվեստագետի ունեցած վերաբերմունքի խնդիրն ու պահանջը մեզ միշտ մղել է դեպի Ե.Չարենցի «Ողջակիզվող կրակ» շարքի «իրիկունը» ենթաշարքի 16-րդ երգը, որն սկսվում է «Ինչպես երկիրս անսփռփ, ինչպես երկիրս բախտազուրկ...» բանաստեղծությունը: Այն գրված է արյամբ, տազնապի շաղախով, երկրի եւ արվեստագետի սերտ կապի իմաստուն զգացողությամբ: Չկա ժողովուրդ՝ առանց բանաստեղծի, չկա բանաստեղծ՝ առանց ժողովրդի.

*Եվ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփռփ սիրտս կրակուն-
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ախ, այս երգերը իմ կարմիր-
Իմ ավերակ, իմ որբ երկրում...⁹⁷*

Պետք է նշել, որ Չարենցի այս երգից հետո էլ խորհրդային փոքրիկ-փրկված հայրենիքը եթե մի կողմից դարձել է հայ բանաստեղծության կարմիր տողը, ապա կորուսյալ հայրենիքը միշտ հանդիսացել է եւ այսօր էլ հանդիսանում է ցավի, թախծի, երազի հենքը հենց այդ նույն հույսի երգերի մեջ:

1989թ. լույս տեսավ Ս.Կապուտիկյանի «Երկխոսություն իմ եւ իմ միջեւ» պոեմը, գրված դարաբաղյան շարժման եւ Մեծ երկրաշարժի ողբերգության առիթով: Պոեմում միաժամանակ հնչում է երկու ձայն. մեկը՝ աղետներ տեսած, բայց իր երթը շարունակող մեր հազարամյա պատմության ձայնն է, մյուսը՝ նորօրյա հայ մարդու ձայնը, որի մեջ դեռ ցավի, վշտի, մխիթարության ճիչ կա: Պատումն սկսելով ջրհեղեղյան ժամանակաշրջանից, բանաստեղծուհին աստծո ահեղ ընտրությանը մեր ժողովրդին հասած աղետների ընթացքը ընդգծում է որպես կանխատեսված ճակատագիր. «Նոր Հիսուս ես դու, թեւ ծնվել ես Հիսուսից առաջ»: Աստծո այս դաժան «նվերը» հայ ժողովուրդը կրեց դարերի ընթացքում: Աստծո աչքերի առջեւ ծվատվեց ժողովուրդը, ավերվեց երկիրը, պղծվեցին տաճարները, այրվեցին մատյանները: Լույսի երկրպագու մի ամբողջ ժողովուրդ քշվեց Գողգոթա, խաչ հանվեց եւ մոռացվեց իջեցնելը: Ժողովուրդն՝ ինքն իջավ խաչից, արձակեց ձեռքերի, ոտքերի գամերը եւ ոտքերի տակ գտավ փոքրիկ մի քարափ եւ մի մեծ երկինք՝ երազները տեղավորելու համար:

Շիկացած ոգու ըմբոստությունը երգչուհու բանաստեղծություններում երբեք այնքան ընդգծված չի եղել, որքան այս երկխոսության մեջ: Պատկերային

հյուսվածքների մեջ նոր թափով ընդգծվեցին բանաստեղծուհու հոգեկան ալեկոծումները, հայաբախտ տվայտանքները, չար աշխարհի բութ խիղճը խարազանող ճշմարտության ուժը, մեր հույսի շողարձակումն ու հավատի ծիածանը:

Պոեմի քնարական հյուսվածքում երկխոսության մեջ են ներգրավվում քնարական հերոսը, մայր Թերեզը, որոնց գրույցն ընթանում է ժողովրդի հին ու նոր տառապանքների, ընդվզումների, վերջապես Արցախում եւ Երեւանում տեղի ունեցած հանրահավաքների շուրջ: Բանաստեղծուհու աչքերի առջեւ տեղի ունեցած անակնկալ իրադարձությունները բացահայտված են ցավով ու զարմանքով: Ցավը` ծնված հայ ժողովրդի հանդեպ կազմակերպված նոր հանցագործությունների շղթայից, զարմանքը` կոմունիստական կուսակցության պարագլուխների նենգամտությունից եւ հակահայկական ոտնձգություններից: Ինչ որ չափով ակնարկային պատումի չափաբերության կարգով Կապուտիկյանը հիշեցնում է 88-ի փետրվարից մինչեւ դեկտեմբերը շարունակվող ելույթները: Բանաստեղծուհին բացում է Կրեմլից հորդացող կեղծիքի եւ ստի վարագույրը, փշրվում է յոթանասունամյա խորհրդային հավատը:

Խորհրդային ճանաչված բանաստեղծի հոգում եւս փշրվում է այն հավատը, որ ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում իր ժողովրդի վերածննդի եւ ի մի հավաքվելու հույսը կապել էր կոմունիստական գաղափարախոսության հետ.

*Ու մենք` բոլորս, ու մենք` բոլորս,
Նույնն ենք համարյա*

Մի մեծ հավատ է հաշնվել մեր մեջ,
Եվ ամեն կողմից՝
Ծաղրելով մանուկ մեր բարությունը,
Գլուխ է հանում չարության ոգին, այդ դեղին դելը
Ու քշում է մեզ որոգայթի մեջ...⁹⁸

Ս.Կապուտիկյանի հոգու դռները նոր իրադարձությունների առջեւ բացվում են այնպես, որ նա ինչքան ձգտում է այնտեղ նշմարել ժողովուրդների լեւինյան բարեկամության կոմունիստական ուժը, չի ստացվում: Բանաստեղծուհին ողջունում է «Ութսունութ թվի Մեծ փետրվարը» եւ այն համարում «Մի հզոր Ավարայր»: Իր մեջ ժողովրդի երազն ու կամքը ամբողջացնող քնարական հերոսը ընդհանրացնում է.

Ու բարձրացա ես միական ու ծույլ
Մայր Հայաստանից մինչեւ հեռուներ
Ու մինչեւ Սփյուռք,
Ու թատերական հրապարակն ասես
Մի նոր աղավնու վանք էր, առասպել,
Որ ներս էր առնում անթիվ, անհամար, անքանակ հայեր
Ու նորից դեպի բացերն էր թողնում՝
Փոխարկած ոգու, դարձրած թեւավոր...⁹⁹

Ժամանակի հետ անդադար նորանալով եւ պոեզիայում զորանալով, բանաստեղծուհին չէր կարող շրջանցել իր ժողովրդի նորօրյա այն ընթոստությունը, որ կոչվում է արցախյան ազատագրական պայքար: Այս պոեմի յուրաքանչյուր էջ, հատված, ընդհանրացում, այդ մասին են խոսում: Բանաստեղծուհին տեսավ, որ այդ շարժումը ժողովրդի նոր ծննդի խորհուրդ է բերում իր

իետ, որին չկասեցրեց անգամ բնության դաժան աղետը՝ երկրաշարժը: Կապուտիկյանի այս պոեմը բյուր գնդաններից վերստին ելած, ժողովրդի կամքի եւ ուժի գեղարվեստական մի նոր վավերագրություն է, նրա ինքնաճանաչման եւ ինքնահաստատման խոստովանություն: «Հագարամյակներ երկնի տակ քայլած ու նորից դեպի հագարամյակներ քայլող» հայ ժողովրդի անվամբ նրա բանաստեղծուհին հնչեցնում է.

*Ինձ ուժ է տալիս՝ նորից բարձրանալ,
 Երկինք բարձրացնել ու տեղափոխել իմ երազները,
 Ինձ ուժ է տալիս
 Ապրել, արարել, հավատալ՝ նորից,
 Չէ՞ որ իմ կենաց խորհրդանիշը
 Եղել է, ու կա, ու հար կլինի
 Լյառն Արարատը,
 Այն Արարատը, որ աշխարհային ջրհեղեղից ետ
 Իր վրա պահեց Նոյան տապանը...¹⁰⁰*

6

Ստեղծագործական իր բեղմնավոր ճամնապարհին ՀՐ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ միշտ էլ հուզել է հայոց պատմությունը՝ իր հերոսական եւ ողբերգական էջերով: Մեր ժողովրդին վիճակված ծանր ճակատագիրը բերելով բանաստեղծություն, նա առանձնահատուկ շեշտվածությամբ ընդգծել է նրա ապրելու, հարատեւելու կամքը: Բանաստեղծի քնարական հերոսը ժողովրդի մաքառումներով ու կսկիծներով լի ճանապարհը ասես տեսնում է իր կրծքի տակ: Նա մերթ ընկել է «պագշոտ Շամիրամի նետից», մերթ ստացել Հռոմի «մահացու խոցը», մերթ Տղմուտի ափին նետվել

Հազկերտի փղերի ոտքերի տակ, նույնիսկ հոգին են «բանտել շղթաներով երկաթ», բայց ծնկի չի իջել, ի հեճուկս ոտխների, գոյատևել է եւ այսօր էլ հպարտությամբ բացականչում է. «...Ես դեռ կամ» («Հայոց պատմություն»):

Հր. Հովհաննիսյանը հայրենիքի էությունը գտնելու եւ բացահայտելու իր սկզբունքն ունի: Նրա հայրենապատունը հյուսված է հայրենիքի հետ անմիջական, որդիական զրույցի ձեւով, որի շնորհիվ էլ իմաստավորված է ժողովրդի հին ու նոր ճանապարհը: Այդ ճանապարհը դժվարին է եղել եւ մնում է այդպիսին: Հենց դրա համար էլ բանաստեղծը մի առեղծվածային սիրով է բացում սիրտը հայրենիքի առջեւ: Քնարական հերոսը ընդունում է , որ իր հայրենիքը սիրուն է, միակ հույսն է ողջ հայության, սակայն իր անհուն սիրո պատճառն ուրիշ է.

*Սիրում են ես քեզ , սիրուն հայրենիք,
Որ որդիդ ծանր է իր հացը դատում,
Քանզի քո սերնը հրե ժայռերի
Ու բիրտ լեռների լանջին է կաթում:*

*Դժվարությամբ է քո լույսը վառվում,
Դժվարությամբ է բացվում քո ճամփան,
Դժվարությամբ է իղծդ կատարվում,
Դրա համար էլ դու քաղցր ես այդքան: ¹⁰¹
(«Հայաստանիս»):*

Ինչպես նկատում ենք, հայրենասիրական այս զգացումը հայեցողական չէ, այլ շոշափելի, սրտացավ ու նվիրական: Անձնավորված, անհատականացված մման

ներշնչանքները իրենց անմիջականությամբ առինքնող են, համակող: Նրա հայրենապատումը հյուսված է առօրեական փաստերի հենքով, սակայն ոգեղենացած: Այդ նախասիրության արդյունք է պատկերային այն հյուսվածքը, որի ֆոնի վրա բանաստեղծը «Յենված... կանա՛չ, կանա՛չ հացենուն», աչքերը «փակած խորհում է դանդաղ » եւ շշնջում. «Սոսափդ իմ մեջ աշխարհ է ծնում, խոսի՛ր, լսում եմ , հայրենի անտառ» («Հայրենի անտառ»):

Առանց հայրենի եզերքի բանաստեղծը չի պատկերացնում իր կյանքը: Միանգամայն ճիշտ է նկատել ականավոր գրականագետը. «Կարելի է անգամ ասել, որ հայրենիքը գլխավոր առանցքն է, Հովհաննիսյանի պոեզիայի գլխավոր սյուժեն»:¹⁰²

Երգիչը կոնկրետ, մանրամասն փաստերից կատարում է խոհական ընդհանրացումներ, գնում դեպի քնարական հերոսի հոգեբանության բացահայտում: Բանաստեղծի հայրենապատումի մեջ կարելի է տեսնել Հայաստանի ամբողջական պատկերը: Անմիջական տպավորությունները ականատեսի վկայությամբ ներկայացնելու միջոցով նա ընթերցողին մտքի թելերով հասցնում է մեր պատմական հայրենիքի բոլոր անկյունները, մատնանշում մասունքները, մի կողմից նշում կորուստների ցավը, մյուս կողմից էլ բորբոքում կարոտի այն կրակը, որ կոչվում է «հայրենիքի սեր»: Ասածի հաստատումն է «Ճանապարհներ» բանաստեղծությունը: Դեպի կորուսյալ հայրենիք տանող ճանապարհը ասես անցնում է Հր.Հովհաննիսյանի սրտի միջով: Այն սկիզբ է առնում «Մայր Արաքսի ափից», հին բերդերի մոտով ձգվում «Դեպի Սասուն, Բիթլիս, դեպի

Վասպուրական»։ Բանաստեղծի մտապատկերներում հառնում են բոլոր ճամփաները։ Մի ուրիշ կածան էլ նրան տանում է «Իդգիր, Ալաշկերտ ու Խնուս»։ Ապա «Ախուրյանից անդին, նրա ժեռոտ ափից Արահետ է պոկվում փոշոտ ու դժվարին», եւ տանում, «Անի, Սարի-ղամիշ, Կարին»։ Բանաստեղծը դեպի նրանց տանող ճամփաներին ալյաբերական իմաստ է տալիս։ Մեկ դեղին է՝ անթառամ ծաղկի հանգույն, մյուս ճամփան ոլորուն է, զրկված հետդարձի կեռմանից, մեկ ուրիշ ճամփի եզրին «վայրի տուղտն է լալիս», նրանից սկիզբ առնող մի արահետ էլ «փոշոտ ու դժվարին» է։ Բանաստեղծը ռեալ իրականության հիման վրա ստեղծում է տեսիլքային մի պատկեր՝ հոգու թափառումներով, որտեղից քնարական հերոսի աչքը «որոնում է օջախների կրակ», ձեռքը «մեկնվում է ծաղիկների քաղիւն»։ Ցաված կարոտն ու կարոտի ցավը հանգիստ չեն տալիս բանաստեղծին։

*Ծանապարհներ ծանոթ, ժպտուն, արեւաբույր,
Անձրեւներով թացված, ծաղիկներով բացված,
Հիմա ամայացած, անհիշատակ թափուր,
Կայծակներից զարկված, կարկուտներից խոցված։*

*Ու՞մ բերեցին նրանք, ե՞րբ բերեցին, որքա՞ն,
Ի՞նչ հուշեր են իրենց փոշիներին խառնել...
Ծանապարհներ լքված, հայի աստանդական
Ու հոգնատանջ ոտքին կարո՞տ ճանապարհներ։¹⁰³
(«Ծանապարհներ»)։*

Հայրենիքի հանդեպ ունեցած սերը Հր.Հովհաննիսյանի երգերում մերթ ժփում է Մեծ Հայրենականի

Վրիժվոր դարձած հայ մարդու սրտում եւ մաքառման մեջ, մերթ հրաշալի այգեպանի մարմին առած երազներում, որի ծփանքներով արբած նա վերհիշում է անցյալ դարձած դառնությունները եւ հպարտանում հայրենիք-այգու նոր սոսափյունով.

*Քո պաղ շունչը անցավ այգուս կածաններով,
Ցրտահարեց մրգեր քաղցրակորիզ,
Բայց տես, կանգնել եմ ես անհիշաչար, ներող,
Բայց տես, սոսափում է այգիս նորից: ¹⁰⁴
(«Դու ցանկացար...»):*

7

Նուրբ քնարերգու Մ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ հայրենապատումը աչքի է ընկնում ընդգծված զգացմունքային շաղախով: «Արարատյան» եւ «Սփյուռքի բարեկամներիս» շարքերից հետո բանաստեղծուհին իր հայրենապատումի լավագույն երգերը դասդասեց «Նորից հայրենիք ու միշտ Հայաստան» խոսուն շարքի տակ: Սոր քնքշանքներով ու անկեղծությամբ նա դիմում է հայրենի երկրին՝ անպաճույճ խոսքի թրթիռներով, նրան համարելով որդի: Այստեղից էլ նրա հայրենապատումի առանձնահատկությունն ու ջերմությունը: Եթե որոշ բանաստեղծների համար հայրենիքը Մայր է, ապա Մ.Մարգարյանի համար որդի է՝ ծնված մրգերից, քարերի եւ խաղողի շաղախից.

*Իմ մրգածինս, իմ մրգաստանս,
Քարեր ու խաղող
Իրարու շաղախ:
Մրգոտ մատները աչքերին տարած,*

Խաժ ողկույզներով
Քարերին փարած
Թուխ թարթիչները ժպտալով թարթող,
Իմ զարթնող որդիս՝
Իմ Հայաստանս: ¹⁰⁵
(«Իմ մրգածինս...»):

Բանաստեղծուհու հայրենապատումի պատկերային հյուսվածքում մոր եւ որդու մետաֆորները հարազատների ամենաազնիվ զգացումների խտացումներ են: Մոր երջանկությունը այստեղ ծովանում է որդու նորօրյա խիզախումներից, իսկ այդ խիզախումները սկիզբ են առնում առասպելական ժամանակներից: Մայրը որդի՝ հայրենիքին ներկայացնում է մի այնպիսի դյուցազնի պատկերով, որ «Կայծակն անհամբեր Ասեղին տալիս Ամպերի մթնած փեշերն է կարում»: Թախծելու եւ լալու ծանրությունը ժխտում է քնարական հերոսուհի մայրը եւ ինքն իրեն խրախուսում. «Աչքերը լցված ճառագայթներով, Տես տղադ նստած լույս է նկարում» («Կայծակն անհամբեր»):

Իր ստեղծագործական ձեռագրին հատուկ հակիրճ հյուսվածքների մեջ թարմ համեմատությունների, զուգորդությունների, դիպուկ մակդիրների միջոցով բանաստեղծուհին ստեղծում է հայաստանյան հարազատ կոլորիտ: Նրա պատկերացմամբ խաղողը «քարերի վրա լապտեր» է, դեղձենին՝ «նարնջե ժպիտ», նուռը՝ «կարմիր ճիչ», հողի սիրտը՝ «քաղցրով լցված»: Քնարական հերոսը պատրաստ է կյանքը ամբողջությամբ նվիրելու երկրի «այրված ճամփաներին».

Ինչ որ ունի այրվող հոգիս՝
Տամ, նվիրեն, բոլորը քեզ,
Հետո անթիվ քո քարերին
Մի քար էլ ես ավելացնեն: ¹⁰⁶

(«Այնքան լեռներ...»):

Մ.Սարգսյանի սերը երկրի հանդեպ կարոտից ծնված խոստովանություն է: Այդ սերը երգ է՝ ձոնված հայրենիքի փառքին, «հորովել սիրող ժողովրդին»: Բանաստեղծ դատեր համար հայրենիքը անմահ է ժողովրդի վաստակով ու նվիրվածությամբ, անկոտրում կամքով եւ արեւային հույսով: Իսկ ժողովուրդը «զավակի խենթ» է, «նոր պաշտամունք», որի հավերժականությունը աներկբայելի է:

8

1959 թ. լույս տեսավ *ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ* «Կարկաչ» խորագրով առաջին գիրքը: Բանաստեղծի մուտքն առանձին գրախոսություններով ողջունեցին Ն. Ջարյանը, Մ.Դավթյանը, Ս.Սողոմոնյանը, Ժ.Անդրյանը եւ ուրիշներ:

Հռչակավոր գրող Ն.Ջարյանը «Բարեխոստում բողբոջներ» ընդհանրացնող հողվածում նշելով երիտասարդ բանաստեղծների հայրենասիրական ազնիվ ու նվիրական զգացումները, ընդգծել է. «Ղարաբաղն իր բարձրաբերձ լեռներով եւ անդնդախոր ձորերով, իր փարթամ անտառներով ու արագավազ գետերով, իր քաջարի, ազատաբաղձ, ազատասեր եւ միաժամանակ ավանդապահ ժողովրդով միշտ էլ եղել է հայ բանաստեղծների ոգեւորության աղբյուր՝ սկսած Լեւոն Աթաբեկյանից մինչեւ Աշոտ Գրաշի, Ղարաբաղն իր

բարձրագագաթ աթոռն ունի նաեւ մեր երիտասարդ բանաստեղծների սրտում...

Ես կուզեի ընթերցողի ուշադրությանը հանձնել Սոկրատ Խանյանի հետեւյալ քառյակը, որ միանգամայն ճշմարտացի է եւ հուզիչ.

*Ղարաբաղ իմ, փոքր ես, սակայն
Մոր փոքրությանն ո՞վ է նայում,
Ո՞ր հերոսներ ծնող մայրն է,
Որ աշխարհին չի հմայում: ¹⁰⁷*

Ս.Խանյանի առաջին ժողովածուում գետեղված բանաստեղծությունների առյուծի բաժինը հայրենասիրական երգերն էին: Այդ մոտիվը գնալով նոր երանգներ ստացավ բանաստեղծի հաջորդ գրքերում: «Բարեկամություն» երկրորդ գրքի առիթով գրախոսությամբ հանդես եկավ հայտնի բանաստեղծ Մ. Կորյունը, որտեղ նշեց. «Ո՞րն է Ս.Խանյանի բանաստեղծությունների դրականը եւ գրավականը: Հեղինակը ցուցաբերել է անսեթեւեթ, պարզ ու անկեղծ գրելու անժխտելի կարողություն: Երբ ասելիք կա, նա կարողանում է գտնել արտահայտչական դիպուկ ձեւեր եւ ցանկացած տրամադրությամբ վարակել ընթերցողին: Հուզող բանաստեղծությունների քանակը քիչ չէ՝ «Սիրտ», «Իմ սերնդի խոսքը», «Մորս տենչը», «Թե հարցնեք», «Այնքան եմ հիմա քեզ սիրում» եւ այլն: Որքա՛ն լավ է բնութագրում ազնիվ, անխարդախ, ստեղծագործող մարդու սիրտը.

*Թե չերագեիր, չխիզախեիր,
Մնայիր քո մեջ անփոփված ու բիրտ,*

Չկանրջեիր երկիրն աստղերին,
Արդյոք այդ ժամ էլ կկոչվեիր սիրտ:

Ս.Խանյանը սյուժետային երկեր ստեղծելու ձիրքով է օժտված եւ այն ժանրի մեջ արտացոլում է իր անժխտելի կարողությունը: ¹⁰⁸

Այնուհետեւ իրար հետեւից լույս տեսան Ս.Խանյանի երրորդ՝ «Սիրտս ձեզ հետ է», ապա չորրորդ՝ «Արեւսար» խորագրերով գրքերը: Այդ ժողովածուների մասին իրենց դրվատանքի խոսքն ասացին հռչակավոր արձակագիր Մ.Արմենը, գրականագետ Յ.Սերոբյանը: Նրանք նկատեցին բանաստեղծի հասունացումն ու ձեռքբերումները: Անդրադառնալով բանաստեղծի հայրենասիրական երգերին, Յ. Սերոբյանը գրեց. «Խանյանը հուզաթաթալ, գունեղ պատկերել է հայրենի բնաշխարհի թովիչ գեղեցկությունները, նրա մարդկանց հերոսական գործերը՝ օտար բռնակալների դեմ մահու եւ կենաց գոտեմարտում օջախի ծուխը, մանկան օրորոցը, գիրն ու պատմությունը պաշտպանելու համար: Այդ ամենի նկատմամբ բանաստեղծի անհուն սերն ու նվիրվածությունն արտահայտվել-պատկերվել է մերթ որպես ժայռից ժայռ գահավիժող փրփրաբաշ գետ, խոսկան առու, մերթ ճամփի եզրին թեքված ուռի, շնկշնկան քանուց օրորվող հազար անուն, հազար բույր ունեցող ծաղիկ, որ Շիրազի վարդաստանում չկա, մերթ գյուղքաղաքով, մարդկանց սրտով ալիք-ալիք բարձրացած, մինչեւ Արեւսար հասած կոմիտասյան երգի դողանջ: Հայրենի տան ու հայրենիքի ընդհանրական պատկերն է գեղարվեստորեն տվել Խանյանը՝ ցանկանալով շեշտել այն խոր միտքը, որ տունն ու օջախն է հայրենիքի

իհնքը, որ առանց հայրենիքի չկա ընտանիք, առանց այդ երկուսի չկա ոչ կյանք, ոչ երջանկություն: ¹⁰⁹

Վերլուծելով Խանյանի բանաստեղծական շարքերը, Զ.Սերոբյանն ավելացրել է. «Իր հայրենի լեռնաշխարհին՝ արծիվների բույն Ղարաբաղին շատ անգամ է անդրադարձել Խանյանը՝ գրախոսվող գրքում զետեղելով բանաստեղծությունների մի ամբողջ փունջ «Իմ հայրենի լեռնաշխարհում» խորագրով: Նա որդիական խորունկ սիրով խոսք է բացել հավերժ դալարուն Ուխտաձորի, զմրուխտ հագած Արեւսարի, «Կռունկ», «Երազ» երգող քաղցրալուր աղբյուրների մասին, լիրիկական շնչով, խորունկ սիրով համոզելով իր ընթերցողին»: ¹¹⁰ Իր այս կարծիքը հաստատելու նպատակով Զ.Սերոբյանը գրախոսության մեջ ամբողջությամբ բերել է Ս.Խանյանի «Երեւի մի օր» բանաստեղծությունը.

*Արեւսար եմ բարձրացել՝ անտառ է շուրջս,
 Աղբյուրները երգում են քաղցրալուր, բարի,
 Որ համերգն այդ լավ լսեմ՝ պահում եմ շունչս
 Ու նստում եմ կածանից կախված մի քարի:
 Աղբյուրներից մեկն ասես, «Երազ» է երգում,
 Մեկը երգում է «Կռունկ», մեկը՝ «Յար արի»,
 Այդ երգերից հմայված իրար են թեքվում
 Ու ծափ զարկում հիացքով ծառերն անտառի:
 Ես քարացած որսում եմ ձայները բոլոր,
 Ասես լինեն կախարդիչ, հեքիաթ աշխարհում,
 Մինչեւ երգեր գրելը, երեւի մի օր
 Կոմիտասը եղել է մեր Արեւսարում: ¹¹¹*

Զ.Սերոբյանը անդրադարձել է նաեւ Ս.Խանյանի «Ուխտաձոր» լեզենդին: Նա նկատել է այս ստեղծա-

գործության թե՛ հայրենասիրական պաթոսը եւ թե՛ գեղարվեստորեն պատկերված այն առողջ գաղափարը, ըստ որի, ժողովուրդն անմահ է, երբ պաշտպանում ու պահպանում է հայրենիքը: «Ուխտաձոր» լեգենդում նկարագրված է մոնղոլական արշավանքների ժամանակ արցախցիների մղած հերոսական պայքարը: Ձուված հայրենասերների պատվին պատմական Դիզակի անտառապատ վայրերից մեկն էլ հենց կոչվել է Ուխտաձոր: Այդ անունն է կրում նաեւ Հադրութի շրջանի գյուղերից մեկը, որ մի ժամանակ կոչվում էր Էդիլու:

Գրականագետ Ա.Աթայանը Ս.Խանյանի պոեզիային նվիրած գրքում նկատել է. ««Արեւսար» գրքում ակնբախ է Ս.Խանյանի կուտակումը կենսափորձի հաստատման իմաստով: Նա օրերի հետ քայլում է համընթաց, նրա ապրումների, խոհերի, ներշնչանքի հիմնական լեյտմոտիվը հայրենասիրությունն է»: ¹¹²

1972 թ. Ս.Խանյանը հրատարակել է հաջորդ՝ «Լեռների երգը» ժողովածուն: Գրախոսելով գիրքը, գրականագետ Դ.Գասպարյանը ընդգծեց. «Ս.Խանյանի պոեզիայում հայրենիքը եւ քնարական հերոսը հանդես են գալիս միաձույլ, ոչ իրարից մեկուսացած: Բանաստեղծի մոտ հայրենիք հասկացությունը հաճախ բացահայտվում է հայրենի եզերքի նկարագրով: Բնանկարն այս դեպքում դառնում է հայրենասիրական մղումների դրսևորման, նրանց պատկերման միջոց»: ¹¹³

Ս. Խանյանը հայրենասիրական երգերն այդ ժողովածուում տեղավորել է «Աշխարհն իմ հոգում» շարքում: Բանաստեղծը «Աստղերին հասած լեռների ծնունդ» տողով սկսվող երգում իրեն համարում է լեռների զավակ, որ սնունդ է առել այդ սարերից եւ դարձել

«առողջ ու բարեբեր մի հունդ»: Դեռ ավելին: Բանաստեղծն իր հայրենի եզերքին է ընծայում երգը եւ նրա անունով խոսում աշխարհի հետ.

*Քեզնով եմ այսօր փարվել աշխարհին,
Նվիրվել լուսե քո ճանապարհին,
Սրտիս պես ծուլված քո մեծ պայքարին,
Երգս քեզ լինի, հայրենի երկիր:*

Ս.Խանյանն իր եւ իր երկրի միջեւ տարբերիչ գիծ չի տեսնում: Երախտագետ որդու համար անչափ թանկ է մոր կյանքը, ինչպես նաեւ հայրենիքի պատիվը: Նրա քնարական հերոսը հայրենիքի ճակատագրի կրողն է, նրա զինվորյալը.

*Ես հունդ եմ՝
Նետված քո հերկերի մեջ:
Թե քո հերկերը թռչեն երաշտից,
Կչորանամ ես,
Ես շող եմ՝
Չուլված արեւածագիդ պայծառ վարսերին,
Թե սեւ ամպերը հայացքդ ծածկեն,
Կմթնեն եւ ես: ¹¹⁴*

Քնարական հերոսի եւ հայրենիքի միասնության պատկերն ենք տեսնում նաեւ բանաստեղծի «Ես դարաբաղյան լեռների որդի», «Լանջերդ կանաչ», «Յայաստան», «Կաղնի» եւ այլ երգերում: Բանաստեղծ Վ.Կարենցն այդ երեւույթի նկատմամբ արտահայտել է իր կարծիքը. «Այն բոլոր բանաստեղծությունների մեջ, ուր Սոկրատ Խանյանը խոսք է ուղղում իր աշխարհին, այդ աշխարհը դառնում է մեր աշխարհը»: ¹¹⁵

Հայրենասիրության մասին խոսքը Ս.Խանյանի մոտ դառնում է երանգների մի աշխարհ: Բանաստեղծը գրքից գիրք դիմել է տարբեր միջոցների, երեւոյթի իմաստավորման նոր հնարանքների: Այս տեսանկյունից հետաքրքիր են նրա «Սպասում ենք դեռ», «Լեռնային դոդանջներ» ժողովածուները: Ս.Խանյանի հայրենասիրական երգերի մեծ մասը կարոտի եւ նվիրումի արտահայտություններ են: Մի դեպքում՝ նա հիշում է Մեծ հայրենականում զոհված ավագ եղբորը՝ բանաստեղծ Սուրեն Խանյանին՝ ընդգծելով հայրենիքի փրկության գործում նրա անձնուրացությունը, մյուս դեպքում խոսքն ուղղում հայրենի եզերքին, հայրական օջախին եւ խոստովանում.

*Ոչ մի անկյուն աշխարհում
Երագիս մեջ, արթմնի,
Այնպես կարոտ չի ծնում,
Ինչպես գյուղն իմ հայրենի: ¹¹⁶*

Ընդհանրապես, Ս. Խանյանի հայրենասիրական երգերը քնարական հերոսի եւ հայրենի հողի անխախտ դաշնության արտահայտություններ են: Նրանցում թրթռում է հայրենասիրական մի զգացում: Այս մաներան նկատելի է «Պատկեր», «Իմ լեռնաշխարհ», «Հայրենի օջախ», «Զրույց», «Հողը» եւ այլ գործերում: Նրանցում, ասես, բացահայտվում է օջախի եւ մարդու միասնության առեղծվածը.

*Վառարանի ծուխը պապենական մեր տան
Գալարվում է դանդաղ, թելում դեպի երկինք,
Այդ ասել է՝ այստեղ առույգ մի գերդաստան*

*Հորինում է ոսկի հեքիաթն իր կյանքի:
Վառարանի ծուխը պապենական մեր տան
Ուլունքներ է դառնում, որ աստղերից կախվի.
Այդ ասել է՝ պապիս երազները պայծառ
Դեռ ապրում են՝ դարձած շունչը մեր օջախի:
Այդ ասել է՝ տատիս բարի խոսքն է ապրում,
Հորս խիղճը մաքուր ու քնքշանքն իմ մոր.
Այդ ասել է, որ մեր կյանքի ծառն է շրշում՝
Արմատներով իր հին ու ճյուղերով իր նոր: ¹¹⁷
(«Վառարանի ծուխը»)*

1980-1981 թթ. լույս տեսան Ս. Խանյանի «Քո անունից», «Կանաչ ծփանք» ժողովածուները, եւ մամուլն ասաց իր դրվատանքի խոսքը:

Ականավոր բանաստեղծ Գ. Գաբրիելյանը տպագրեց գրախոսություն՝ «Երկու նվեր» խորագրով:

Նա գրեց. «Ս. Խանյանի այս երգերը հողաբույր են, քաղաքացիական պաթոսի լիրիկական արտահայտություններ, հայրենասիրության ընդգծված թրթռուներ, բարության ու լույսի քնքշանքներ, անձնուրաց սիրո նվագներ»: ¹¹⁸

Ս. Խանյանը «Քո անունից» գրքի առաջին էջում գետեղել է «Արեւսար» բանաստեղծությունը: Այստեղ քնարական հերոսի հայրենասիրությունը բացահայտվում է բնության իմաստավորմամբ եւ անձնավորմամբ: Սարն այստեղ ծնող է, որ տարիներ առաջ փայլիայել ու սնել է իր զավակին: Երախտագիտության զգացումով բանաստեղծ-որդին դիմում է նրան.

*Բարձունքներս պահած խորքում
Իմ լեզունդ ու կյանք.*

Արցունքներս առած հոգում
Իմ թախծոտ բերկրանք:
Քանի՜ անգամ մեծացար ու
Մանկացար ինձ հետ,
Մոր հրճվանք ու համբերություն,
Արեւսար իմ սեզ: 119

Բանաստեղծական այս զգացումի ու պատկերավորման թարմ հնարանքի միջոցով Ս.Խանյանը «հայրենի եզերքի ճակատագրի հանդեպ ունեցած տազնապն արտահայտում է ինքնախոստովանանքի միջոցով: Հայրենիքի ճակատագրի մեջ կոնկրետ ու առարկայական թափանցման շնորհիվ նա ցավի եւ սիրո խոսք է ասում.

Ամպերը զարնվեցին երկնքում՝
Իմ հոգում կայծակը շողաց,
Շառաչներ հնչեցին ընդերքում,
Երկրի տեղ իմ սիրտը դողաց:
Գետերը դուրս եկան ավերից,
Ջրածածկ հույզերս եղան,
Անտառներ խաբվեցին ծափերից,
Հողածածկ հույսերս եղան:
Աշխարհը կրճքիս տակ առել,
Դարձել եմ եռացող տիեզերք...
Ավյունս կարող է քնել,
Արյունս չի քնում երբեք: 120
(«Կրճքիս տակ»)

Տեղին է նկատել գրականագետը. «Ս. Խանյանը հայրենասիրական իր խոհերն արտահայտելու թարմ ու

Մուրբ երանգներ է գտել, բանաստեղծական պատկերն ու ենթատեքստն ինքնաբուխ են եւ հավատում ես, որ դու ինքդ էլ այլ կերպ չես մտածի ու չես արտահայտվի: Որպես որդի («Որդիական») դիմելով հայրենի երկրին՝ բանաստեղծը համեմատությունների ավանդական ձեւից հեռանում է, հակադրության հետաքրքիր պրիոմով հաստատում որդիական սիրո անսպառ ու անհատում ծփանքը հայրենի հողի՝ մարդուն մարդ պահողի հանդեպ»: ¹²¹

Որպես իր կարծիքի հաստատում, գրականագետը բերում է «Որդիական» բանաստեղծությունից մի հատված.

*Իմ արմատները սրտիդ խորքում են,
Բայց ոչ կաղնու պես, կաղնին ի՞նչ է որ,
Ես ոգին եմ քո:
Իմ թելերը քեզ փայում են, շոյում,
Բայց ոչ ճյուղի պես, ճյուղը ի՞նչ է որ,
Ես որդին եմ քո: ¹²²*

Հայրենիքին նվիրված երգերում Ս.Խանյանի նախընտրած հնարանքներից մեկը երկրի անձնավորումն է: Նա գրուցում է հայրենիքի հետ՝ ինչպես որդին՝ մոր:

Այստեղ կարելի է մարդու եւ հողի, սերնդի եւ բնության, ներկայի եւ ապագայի փոխհարաբերության կռվանները. նման դեպքերում ընդգծվում է նաեւ երգի ենթաբնագրային իմաստը.

*Ժայռը թեքվել առվի վրա
Ու կարկաչն է լսում անվերջ,
Առուն կարծես թռն է նրա,*

Թռվում է օրոցքի մեջ:
Ի՛նչ հրաշք է ծնված այստեղ
Մայր բնության անտես ծեռքով,
Տեսեք ո՛նց են փարվել իրար
Պապն ու թռռը՝ հողի երգով: ¹²³

(«Ժայռը»)

Բանաստեղծը հաստատում է այն միտքը, որ հայրենիքը եւ քաղաքացին պայմանավորված են միմյանցով եւ այդ գաղափարն արտահայտելու համար որոնում ու գտնում է հետաքրքիր պատկերներ: Նման հյուսվածքներից են «Օրորել ես ինձ քո հրով», «Հայրական օջախ», «Քո բորբոքուն արեւի դեմ», «Դու մի անտառ , ես՝ մի ճամփա» եւ այլ բանաստեղծություններ:

Ս.Խանյանի սերը հայրենի Ղարաբաղի հանդեպ ծիածանի երանգներ ունի: Այդ սերը ե՛լ ցավ է, ե՛լ տագնապ, ե՛լ հպարտություն: Ղարաբաղն ամբողջությամբ մի անձեռակերտ բնապատկեր է Խանյանի պոեզիայում:

Նման երգերում ոչ միայն հայրենիքի գեղեցկություններն են ընդգծված, այլեւ ժողովրդի դարավոր ավանդույթները, սովորություններն ու կենցաղը:

«Քո անունից» գրքի «Ղարաբաղյան նվազներ» շարքն արժանացել է ե՛լ ընթերցողների, ե՛լ գրականագետների ուշադրությանը: Քսաներկու երգերից կազմված այդ շարքը քնարական պոեմի արժեք ունի: Թեմայի եւ արտահայտման ոճային ինքնատիպ միջոցներով բանաստեղծը ստեղծում է արցախյան կոլորիտ եւ գրույցի թրթիռներով խոստովանում.

Իմ արյան մեջ ես, ես էլ քո արյան,
Մեր միջեւ չկան փակված դուռ-դարպաս,
Ես իմ անունն ու գույնը կունենամ,
Քանի աշխարհում ծփում ես ու կաս: ¹²⁴

(«Զրույց»)

«Ղարաբաղյան նվազներում» մետաֆորներ են
Թարթառն ու Խաչենը, Մոսկն ու Քիրսը, ինչպես նաև
թթենին, այն ծառը, որ «իր տիրոջը սիրում է ջերմ,
քաղցր պտուղներ բաժանում բոլորին, սակայն`

Չի պահանջում. նվիրում է
Ու գոհ մնում արածով,
Միայն մայրն է ցնծում այդպես
Որդիներին տվածով: ¹²⁵

(«Թթենին»)

«Ղարաբաղյան շարքում» անձնավորված են անպե-
րը, արտերը, ծառերը: Նրանում բնութագրական է
արելը: Արելն այստեղ միայն մետաֆոր չէ, այլև կենսա-
կան լիցք: «Արելը» բանաստեղծության մեջ միեւնույն
զուգահեռականի վրա են դրված ժողովրդի պատմու-
թյունը, ճակատագիրը, բնավորությունը, հպարտությու-
նը: Արցախի ամեն մի սար արելի համար ոսկե գահ է,
այստեղ «Սարերը արելին թե-թիկունք, Արելը` սարե-
րին սիրող մայր է»: Ասելիքն իր կիզակետին է հասնում
բանաստեղծության ընդհանրացման մեջ.

Այդպես են մեզ մոտ սարերը,
Արելի սիրով են ջրդեղված,
Թե պատռեք սարերի սրտերը,
Արելներ կտեսնեք անթեղված: ¹²⁶

(«Արելը»)

«Քո անունից» գրքի մեջ ծավալուն բաժինը Խանյանի խոհափիլիսոփայական քառյակներն են, որտեղ ընդգծված մի համաձուլվածք են կազմում հայրենասիրական երգերը, ուր բանաստեղծը բնութագրում է իր քնարական հերոսին.

*Երգիչ եմ՝ երգին փարված,
Մշակ եմ՝ հերկին փարված,
Երգ ու հող մեկ են իմ մեջ,
Գալիքի հեւքին փարված: 127*

Բանաստեղծի քնարական հերոսը հայրենասիրության իր ընկալումն ունի: Նա ասում է, որ երկրի ու ժողովրդի ճանապարհին միշտ էլ կարելի է հերոսանալ: Դա վերացական հասկացությունն է, այլ՝ աշխարհը եւ մարդուն գեղեցկացնող կոնկրետ արարք.

*Մի ծառ տնկիր, տաշիր մի քար, հերոսությունն այդ է, որ կա,
Եղիր բարձր, եղիր արդար, հերոսությունն այդ է, որ կա:
Ու թե հանկարծ հողմեր շաչեն, երկիրը քեզ մարտի կանչի,
Նրա ցավը քաշիր ու տար, հերոսությունն այդ է, որ կա: 128*

«Կանաչ ծփանք» ժողովածուն աչքի է ընկնում հայրենապատումի նոր թրթիռներով: Այստեղ էլ երկրի եւ բանաստեղծի միասնությունն է ընդգծված: Ինչպես խորհում է քնարական հերոսը, առանց այդ միասնության չի հարատեւի ոչ երկիրը, ոչ քաղաքացին: Դիմելով հայրենի երկրին, նա ընդգծում է.

*Քո անունը իմ անունն է,
Քո պատիվը՝ պատիվս թանկ,
Կյանքը ուր էլ ինձ տանում է,
Ջերմանում եմ քո շնչով տաք:*

*Ես քեզանով կանաչում եմ,
Ինձ քեզանով ճանաչում եմ,
Այնպես ապրեմ, իմ պատճառով
Երբեք չասես՝ ամաչում եմ: ¹²⁹*

(«Քո անունով»)

1990-1991 թթ. լույս տեսան Ս. Խանյանի «Կարոտի կրակներ» եւ «Արցախյան դողանջներ» ընտրանիները: Բանասեր-հրապարակախոս Վ. Աթանեսյանն իր «Աստղալույսի կարոտով» գրախոսականում նշեց. «Ս.Խանյանի «Կարոտի կրակներ» ժողովածուն շատ ներդաշնակ է հայ բանաստեղծության հոլովույթին: Արցախահայ գրականությունը կարողացել է բոլոր փորձություններից անաղարտ պահել ազգային դիմագիծը»: ¹³⁰ Հողվածագիրը որպես հաջող օրինակ բերում է բանաստեղծի հետեւյալ տողերը.

*Արելը ելնում է Արաքսից,
Լվացվում Թարթառի ջրերում,
Մտրակ է հյուսում իր վարսից,
Չափ գցում իր ձին սարերում:
Սարեր են, զիգզագ են ճամփեքը,
Ճամփեքը՝ կախված երկնքից:*

Այս եւ նման բանաստեղծություններում շունչ են առել Ղարաբաղի հեթանոսական ժամանակները եւ ներկան:

Ս.Խանյանի «Արցախյան դողանջներ» գիրքը գնահատվել է անվանի գրականագետ Ա. Դանիելյանի կողմից: Բնութագրելով բանաստեղծի ստեղծագործական խառնվածքը՝ գրականագետը նշել է. «Ս.Խանյանը

Ռոմանտիկ, քնարական բանաստեղծների զարմից է Գ. Սարյանի, Դ. Շիրազի, Դ. Սահյանի, Վ. Դավթյանի հավատավոր գործընկերը: Նույնիսկ թվում է, թե այս հողի վրա քնարական չլինել հնարավոր չէ»: «Գանձ» բանաստեղծության մեջ, մասնավորապես, Ս.Խանյանը մատնանշում է վիպապաշտ գեղարվեստական իր ընկալումները՝ կարոտ, կանաչ-կարմիր առօրյա, երազայնություն, սիրտը շոշափելու սովորություն եւ այսպես շարունակ՝ դեպի բանաստեղծի սիրտը տանող զարկերակը»: ¹³¹

«Արցախյան դողանջներ» գրքում մի ամբողջական շարք է նվիրված մայր Հայաստանին: Դիմելով Հայոց երկրին՝ քնարական հերոսը բացում է իր սիրտը, հաստատում որդիական իր սերը.

*Ջրերիդ նման անվերջ հոսեցի
Քո սրտի միջով,
Երազներիդ հետ մեղմիկ խոսեցի՝
Օձված քո խղճով:
Հասկի փոխվեցի, խոնարհվեցի լուռ,
Թխադեմ հողիդ,
Ասքի փոխվեցի, անցա շրթից շուրթ,
Հոգուս մեջ հոգիդ:
Ես քո երգերի թրթիռը դարձա
Ու բառը քո սուրբ,
Դժվար երթերիդ հրթիռը դարձա
Ու ծաղիկը նուրբ:
Ինքս ինձ հասա քո երակներով,
Իմ մեջ տեսա քեզ,*

*Քո հունդից ծլած, ածած քո սիրով,
Քո պատկերն եմ ես: ¹³²*

(«Ջրերիդ նման»)

Ս.Խանյանի պոեզիայում կարելուր տեղ է գրավում Հայաստանի կերպարը: «Արցախյան դողանջներ» գրքում այն արդեն ընդգծվեց որպես մոտիվ: Անդրադառնալով Հայաստանի պատմական ճակատագրին, բանաստեղծը պատկերում է ներկան, նշելով իր հոգեկան անխախտ կապը մայր ժողովրդի անցյալին, ներկային եւ ապագային.

*Առանց քեզ անջուր մի լանջ կդառնամ,
Կդառնամ լեռան ցամաքած աղբյուր,
Քո թռիչքով եմ այսպես հաղթական,
Իմ հայրական ձեռք, մայրական համբույր: ¹³³*

(«Ես քո լինելով եղա աշխարհում»)

Բանաստեղծն ընդգծում է նաեւ Հայաստան-մոր նվիրումներն իր քնարական հերոսին, որը երախտիքով է հիշում.

*Անցյալդ, ներկադ, գալիքդ լուսե
Առանց երդումի ինձ նվիրեցիր,
Լույսի եմ փոխվում ճանապարհիդ մեծ,
Եվ հպարտ եմ, որ այսպես սիրեցի: ¹³⁴*

(«Քո զարթոնքի հետ...»)

Հայաստանի կերպարը բանաստեղծի երգաշարում ներկայացվում է կոնկրետ առարկայական պատկերներով: Մայր հայրենիքը բանաստեղծի համար հառնում է որպես ազնվության, նվիրվածության, հավատար-

մության առասպելված խորհրդանիշ, որպես հայ ժողովրդի հավիտենական ընթացքն ապահովող միակ օրրան:

9

1974 թ. գրականագետ Ս.Աղաբաբյանը *Ռ.ԴԱՎՈՅԱՆԻ* բանաստեղծությունների նոր ժողովածուի առթիվ գրված «Գետիս ափերին ոսկե իլիկներ» գրախոսականը սկսում է այսպես. «Ռազմիկ Դավոյանը ներքին ապրումի բանաստեղծ է»: Այս բնութագրումը դիպուկ է, այն վերաբերում է բանաստեղծի նաեւ հայրենապատումին: Նրա հայրենասիրական ստեղծագործություններում միշտ նրան հանդիպում ենք մտահոգ-երազող վիճակում, իր դիմագծի շողարձակումների ոլորտում, ստեղծածի մեջ Նարեկացի-Չարենց ավանդների յուրացմամբ (ոչ թե կրկնմամբ), համաշխարհային պոեզիայի նոր երանգների իմացությամբ: Այդ ամենով հանդերձ ինքնատիպ, հեռագնա:

Համաշխարհային պոեզիայում 20-րդ դարի երկրորդ կեսին ստեղծագործական մի շարք ուղղություններ, հոսանքներ խմորվեցին: Ռ.Դավոյանը ծանոթ էր դրանց: Բայց կարող ենք հաստատել, որ նա ի սկզբանե երազների ու տեսիլքների իր աշխարհը հյուսեց, որը եւ՛ հին է, եւ՛ նոր: Հայտնի է, որ հայոց հայրենապատումի մեջ այդ երեւույթը ընդգծված իրեն զգացնել տվեց 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Հայրենիքի տեսիլքային, երազային պատկերը շունչ առավ Հ.Թումանյանի, Ավ.Իսահակյանի, Վ.Տերյանի, Դ.Վարուժանի, Ե.Չարենցի եւ ուրիշ մեծերի ստեղծագործություններում: Դավոյանը շարունակեց այն նոր ընկալմամբ՝

առնչված մեր ժողովրդի ընթացքի, ճակատագրի հրամայականին: Դավոյանի հայրենապատումը այս առումով կարելի է համարել ժողովրդի ճակատագրի եւ բանաստեղծ-գինվորյալի ոգու ներդաշնակություն: Ոգու այդ ներդաշնակությունը «բազմածալ... բազմանիստ» է, այն հայրենիքի բախտից ծնունդ առած հավատ է - հավատարմություն,

*քանի որ, իրոք, քեզ հավատալով,
ինձ եմ հավատում,
քեզ նվիրվելով՝
նվիրվում եմ ինձ,
քո տառապանքը քեզնից զատելով՝
ինձնից եմ զատում,
եւ ժպիտիդ պես
ծաղկում եմ ինքս իմ նվիրումից: ¹³⁵*

(«Ես ամեն անգամ»):

Հայրենիք-ժողովուրդ-բանաստեղծ եռամիասնության զգացումը Ռ.Դավոյանի բանաստեղծական կեցվածքն է՝ նվիրումի-ցավի, տառապանքի-հույսի խտացմամբ: Ցավը՝ կորցնելու, հույսը՝ փայփայելու վճռականությունը: Դավոյանի բանաստեղծական մտապատկերներում հայրենիքը Հայաստանն է, սակայն՝ տեսիլքային-երազային, երեւակայական-հեքիաթային, տառապած-իմաստնացած: Նրա երեւակայությունը հնոցի տպավորություն է թողնում, ուր կրակը բորբոք է, եւ որի մեջ շիկանում են այն ամենը, ինչը զուգորդված է մեր պատմությանը: Նրա երեւակայությունը որոնման իր բանալիներն ունի, որ բացում է խոհի շերտավորված

խորքերը, որ արեւային են, երագող, տաք սալերի մեջ
թրծված, անելիքներ ունեն.

*Ա՛խ, մեջքիս վրա, մարմնիս վրա
Նրանք կույրերի այբուբենով
Այն պատմությունն են շարադրում,
Որ սկսվում է Հայկ ու Բելով: ¹³⁶*

(«Տաք սալեր»):

Այդ պատմությունը երագների միջով գալիս հասնում է քաջ Միերին եւ դառնում վիհերից զգուշանալու խորհուրդ: Նրա երգի մեջ տագնապից ծնվում է տեսիլքը, տեսիլքից՝ ցավ, ցավից՝ մտահոգությունը, իսկ այդպիսի երգը վերքեր բուժելու ընդունակություն ունի: Եթե փորձենք գրաքննադատության աչքով որոնել Դավոյանի ստեղծագործական մեթոդի, ուղղության յուրահատկությունը, ապա կոժվարանանք: Նրա երգերում առկա են ռեալիզմի նախահիմքերը, ռոմանտիզմի երանգները, առարկայական խորհրդապաշտությունը՝ եւ դա հատկապես՝ հայրենապատումներում: Նա մի կողմից հավատարիմ է մեր անցած պատմական ճանապարհին, մեր կրած տառապանքի տերն ու խոստովանողն է, մյուս կողմից՝ թեւածում է իր երագային ակնկալությունների շրջապտույտներում՝ ստեղծելով զգայությունների իր առարկայական աշխարհը, որտեղ հայրենիքը մարմնավորվում է ծառի, ծաղկի, ջրի, սալի, քարի, ժայռի, երկնային մարմինների խորհրդանշական տեսքով: Պատահական չէ Դավոյանի տեսիլքների ծփանքը նրա համարյա բոլոր երգաշարերում: Ժամանակին փորձել են Դավոյանի տեսիլքները կապել միստիկական գուշակությունների եւ հայտնությունների

հետ: Մենք նման մոտեցումը կապում ենք նրա բանաստեղծության խորքային ենթատեքստը չհասկանալու կամ չտեսնելու հետ: Ինչպե՞ս կարելի է միստիկական մշուշներ որոնել մի այսպիսի լավատեսական խոստովանության մեջ.

*Եվ չի հատնում մեղրը բնավ,
Եվ չի իջնում երբեք խավար,*

*Քանի որ քո կրծքի խորքում
Արեգակը բխում է հար: ¹³⁷*

(«Լույս են բխում»):

Որդիական այս խոսքը ուղղված է հայրենիքին, որ կարելի է բնութագրել որպես հեքիաթների մեջ մաքառած բարու հաղթանակ: Ժամանակին նկատել ենք, որ Ռ.Դավոյանի հայրենապատումը հոգեւոր ճանապարհորդություն է դեպի հայոց դարերի խորքը եւ ապա դեպի նրա ապագան: Ինչպիսին ժողովրդի ճակատագիրն է, այդպիսին էլ բանաստեղծինն է՝ հոգեկան ակեբախումների, հուսախաբությունների, մաքառման ու հավատի դրսեւորումներով: Այդ ճանապարհորդությունը բանաստեղծի հոգում ծնունդ է անթիվ խոհերի ճառագումներ: Ինքն էլ որպես միշտ ներկա քնարական հերոս, իր խոհերը ընծայում է հայրենիքին, ժողովրդին: Վերցնենք ծառի առարկայական խորհրդանիշը: Այն ավելի լայն հասկացություն է, քան կարող ենք պատկերացնել: Ծառ-կյանք, ծառ-երազ, ծառ-ժողովուրդ, ծառ-հայրենիք եւ վերջապես՝ ծառ-հավատ: Բանաստեղծության համանվագային, անպարփակ երազների համադրությամբ Ռ.Դավոյանը բացում է արվեստի փիլիսոփա-

յության դռները: Ի՞նչ է, հայրենապատումը փիլիսոփայությունն չէ՞: Փորձենք մոտենալ բանաստեղծի ծառ կերպարին եւ մտքով ու հոգով թափանցենք նրա կեղեւի մեջ: Այդ դեպքում մենք էլ կճաշակենք «եւ՛ սեր, եւ՛ տառապանք, եւ՛ սուգ» ու կծուլվենք ծառին «Որպես փոքրիկ զարուն», եւ «ամեն մի անցողի մեր ծիծաղի մեջ... - հոգնած հոգին» կլվանա: Վերջապես բանաստեղծի ուղեկցությամբ կմտնենք «ծուռ» թվացող նրա երգի աշխարհը եւ կլսենք հաստատող մի ձայն. «Իսկ ես Սասնա ծուռ եմ»: Դավոյանի հայրենական երգը հայոց ազգային երազների մասունք է, իսկական հայկական հեքիաթ՝ համեմված տառապանքով.

*Ինչպես բոլոր լավերն այս աշխարհում,
Մեզ էլ տառապանքով ստեղծեցին,
Հետո լցրին խունկով, բույրով արեւարյուն,
Հետո լցրին լույսով արեզնածին:
Հետո ավերեցին չստեղծողներն օտար,
Միշտ էլ կատակում է փիլիսոփա կյանքը...
Ուրիշների համար՝ դու պատմության վթար,
Իսկ ինձ համար... մնաց միայն տառապանքը: ¹³⁸*

(«Զվարթնոց»):

Հայրենապատումի փիլիսոփայությունը Ռ.Դավոյանի բանաստեղծության մեջ սկիզբ առնելով մեր հեթանոսական անցյալի ակունքներից, հասնում է քրիստոնեական 1700-ամյա համբերության ծովին: Պատերազմի եւ հաղթանակի Վահագն դիցի վճռականությանը կարոտ քնարական հերոսը Զվարթնոցի ավերակների դիմաց շշնջում է. «Օ, կյանք, այս ի՞նչ ես դու... ներում... ներում... ներում...» («Զվարթնոցն է նորից»)

Եւ ապա ինքն իրեն հուսադրում. «Արեւն իջել է եւ կիսակործան խորանի խորքում Այն հին, հեթանոս հուրն է բորբոքում» («Դեղին տերեւները...»):

Բարձր գնահատելով Ռ.Դավոյանի նմանօրինակ խորքեր ունեցող բանաստեղծությունները, բազմապատակ քննադատ Ս.Աղաբաբյանը արել է նաեւ դիտողություններ. «Ռազմիկ Դավոյանի բանաստեղծությունը, ինչպես ասացինք, կապված է որոշակի ավանդույթների հետ: Դա ինքնին դրական երեւույթ է: Բայց երբեմն նա դժվարանում է նախորդներից ժառանգած ոճական գծերը այնպես մերել սեփական ընկալումներին, որ իր խոսքը հեռու վանի այլեւայլ թափանցումներից: Սա վերաբերում է մասնավորապես նարեկացիական «ապաշխարության-մեղավորության» եւ տերյանական ճակատագրի ամենագորության շորշոփներին, որոնք եթե որակ չեն կազմում, այնուամենայնիվ, տեղտեղ թողնում են ճնշող տպավորություն: Լուսավոր, գվարթ թախիժը, որ բնորոշ է Դավոյանի բանաստեղծությանը, չհաղթահարված ոճական բեռան ազդեցությամբ, իր հետ բերում է միապաղաղ, երբեմն պղտոր թախիժ, նույնիսկ նկուն հոգնության ու տրտմության խամրած տրամադրություններ»: ¹³⁹

Ս.Աղաբաբյանի «Գետիս ափերին ոսկե իլիկներ» հոդվածից հետո Ռ.Դավոյանը անցել է 25-ամյա ստեղծագործական ճանապարհի, որին խորապես ծանոթանալուց հետո համոզվում ես, որ մեր մեծ երախտավորի վերոհիշյալ դիտողությունները իր հիանալի գնահատական-խորհուրդների համար պարզապես ավելորդ կցորդ են հանդիսացել: Գտնում ենք, որ դա պարզապես արվել է ժամանակի գաղափարական ենթա-

տեքստից ելնելով կամ էլ ձախ քննադատությանը հատուկ պարտադիր դիտողություններ անելու ակնկալիքով: Մեր միտումը այստեղ ոչ թե Ռ.Դավոյանի երգարվեստը անթերի տեսնելու ցանկությունն է, վերջապես ամեն մի մեծություն բարձունքներին հասնում է թերությունների հաղթահարումով: Մենք այստեղ փորձում ենք չհամաձայնվել մի այնպիսի գրականագետի դիտողությունների հետ, որ ամբողջ գիտակցական կյանքում հանդիսացել է 20-րդ դարի երկրորդ կեսի մեր գրական ընթացքի իմաստուն եւ ազնիվ հովանավորներից ու խորհրդատուներից մեկը: Փորձենք ներկայացնել մեր անհամաձայնության կռվանները: Ռ.Դավոյանի ոճական գծերի մեջ ընդգծված նարեկացիություն եւ ընդգծված տերյանականություն չկա: Ռ.Դավոյանը նրանց ժառանգորդն է իր ներքին մղումներով, նրանց շարունակելու իմաստով: Վերջապես նա Նարեկացու տաղերի եւ «Մատյան ողբերգության» պոեմի երկրպագուն է, դրանց բարձր արվեստի գնահատողը:

*Ծառից տերեւը ներքեւ ծուրուրաց,
ինչպես վրձինից երանգը կաթեր,
Եվ մայթի վրա նկարեց տերեւ:*

*Քամին բիրերիս վրայով սուրաց,
Իսկ արեւն ելավ ու լճի խորքում
Նկարեց սառը աշունքվա արեւ:*

*Ես լճի ափին վանք նկարեցի,
Վանքի մի խցում՝ թափթփված երգեր,
Թելն էլ զանգակի լեզվակը բռնեց,
Որ զանգի. «ծըլը՜նգ», - աշուն է եկել: ¹⁴⁰*

(«Նարեկացուց հետո»):

Դավոյանը չէր կարող չսովորել մեծերից, նաև Վ.Տերյանից: Սակայն Դավոյանի պատկերների զինանոցում Տերյանին հիշեցնող նշանները այնքան քիչ են, որ անզեն աչքով զննելիս չես կարող նկատել: Մեզ մնում է այստեղ հասկանալ Ս.Աղաբաբյանին մի ուրիշ դիտակետից՝ խորհրդային կացութաձեւի պարզեւած այն պարտադիր համոզմունքից, որ իբրեւ երջանկության ավերին հասած հայ ժողովրդի նորօրյա բանաստեղծին «ցանկալի է տեսնել ազատված» «նարեկացիական «ապաշխարության - մեղավորության եւ տերյանական ճակատագրի ամենագորության» շորշփներից: Սա խորհրդային գռեհիկ գաղափարաբանության նշաններից է, եւ ուրիշ ոչինչ: Հայ գրողն իր ժողովրդի ճակատագրի գեղարվեստական վավերագրողն է: Այդպես՝ Խորենացու «Ողբը» շարունակել է Նարեկացին, Նարեկացուն՝ Շնորհալին, Շնորհալուն մեր հետագա երգասանները՝ մինչեւ Պ.Սեւակ եւ Ռ.Դավոյան: Նրանք բոլորն էլ իրենց դարաշրջանների զավակներն են, իսկ ցավոք, մեր բոլոր դարաշրջաններն էլ եղել են Նարեկացու դարի հետեւորդները՝ Սեւակյան հաստատմամբ. ՀԱԿԱՄԻՏՈՒԹՅԱՆՑ դար: Այդպիսին էր եւ Տերյանի դարը: Չարենցը մի ժամանակ ցանկացավ բուլշեւիկյան երանգ տալ դարերի այդ հայկական բախտին, բայց վերջապես համոզվեց, որ մեր ազգային ճակատագրում շատ քիչ բան է փոխվել: Ռ.Դավոյանը Սեւակի պես համոզվել էր, որ Նարեկացու «ՄԵՂԱՅ-ԿՈՐԵԱ-ՈՂՈՐՍԵԱ» աղոթքը դեռեւս ուժի մեջ է, որովհետեւ ինչպես ինքն է հաստատում՝ «Հավիտենության կանչը լսելիս Քանդվում է հոգին, եւ թվում է ինձ, թե մեր մարմինը ոչ թե հողից է, Այլ՝ արցունքներից»: Իսկ մեր մարմինը եւ հոգին,

ըստ բանաստեղծի, երկրին են պատկանում, որից դուրս մարդ գոյություն չունի: Նա հայրենի հողի սրտի զարկերում լսում է մի սուտ, «Բայց հավանական մի սուտ, որի մեջ», ամեն դեպքում իր «սրտի հարվածները կան»: («Երկիր»):

Ռ.Դավոյանի հայրենապատումի առանցքում ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած իր աշխարհայեցողությունն է, եւ լավ է, որ տարիների ընթացքում, առանձին դիտողություններ լսելով հանդերձ, այն չի փոխել, այլապես կկորցներ բանաստեղծական հայրենապատումի գաղափարական-ոճային իր դիմագիծը, որին չդավաճանեց երբեք՝ իրեն համարելով իր ժողովրդի, իր հայրենիքի ծանր բախտի ճշմարիտ արձագանքը: Վիլյամ Սարոյանին նվիրած բանաստեղծության ընդհանրացումը եւս այդ է հաստատում.

*Բարի վերադարձ... Հասկանալի է՝ էլ գնալ չկա,
Քո անցած բոլոր ճամփեքը հիմա խեղճ են ու թափուր,-
Սրտիդ մի կեսը մյուսի համար պիտի հեկեկա
Քո խորքերի մեջ դարերով գտված արցունքով մաքուր:
Եվ դու ասում ես՝
-իրողությունը հենց այս է, որ կա,
Իմ բարեկամներ, իմ մարդասերներ, դուք մի բարկանաք,-
Կիսված է հողս, կիսված է կյանքս, ճակատագիրս,
Ուրեմն՝ ահա, կիսեցեք նաեւ սիրտս, մարմինս,
Կույր եք՝ չտեսնեք, խուլ՝ չհասկանաք...
Քո անունն այսու հավերժությունը միայն պիտի տա,
Եվ հայացքիդ դեմ աշխարհի խիղճը պիտի որ քրտնի,-Քո
թափառական ու կիսված սիրտը պիտի թաքտա
Այնքան ժամանակ, մինչեւ որ մյուս իր կեսը գտնի: 141*

(«Վիլյամ Սարոյանին»):

Այս ամենին ավելացնենք, որ Ռ.Դավոյանի ստեղծագործության մեջ «պղտոր թախիծ... նկուն հոգնության ու տրտմության խամրած տրամադրություններ» չկան, փոխարենը իշխում է լուսավոր, զվարթ թախիծը, որը զալիս է մեր երկար ու ձիգ, դժվար ճանապարհի լավատեսական փիլիսոփայությունից:

Ռ.Դավոյանը են գլխից գիտակցում է երգի գինը, գիտե, որ «ժամանակի մասին հորինում ենք մի երգ՝ Մի տրտմություն, մի ցավ փարատելու համար», սակայն միաժամանակ երգով ցավը փարատելու այդ ուժը նրան միշտ հուշում է. «ՏԵՐԵՐ, ՄԻ ԳՈՂԱՑԵՔ ԲԱԽՏԸ ԺՈՂՈՎՐԴԻ, ՏԵՐԵՐ, ԴՈՒՔ ՉԿՆԻԿԻՆ ՑՈՒՅՑ ՄԻ ՏՎԵՔ ԴԱՆԱԿ», նա համոզված է, որ «Գողացել են Ոսկե բախտը ժողովրդի»: Այստեղից էլ «Յեքիաթի գորգի», «Երազանքի անիվի» նրա տենչանքը, խլված Արարատի կարոտը, դիմաց կանգնած պոետի խոհը. «Ո՞վ իմանա, դարերի ինչ ցավեր եւ ինչ տագնապներ են աճում հոգուդ խորքում» («Անսահման լեռը»): Բանաստեղծի երգերի մեջ Լեռը, քարը դառնում են մետաֆորներ ժողովուրդ եւ հայրենիք հասկացությամբ, որոնց սահմաններում նրան պարուրում են ցավի եւ հույսի խոհերը: «Պղնձե վարդ» շարքի հայրենասիրական երգերը, տեսիլքային-հոգեկան ապրումների խառնվածքով, հնչում են որպես հայոց չխամրող ճակատագրի օրհներգ: Յայաստանը ներկայացվում է որպես լերկ բլուրների, սարերի, ժայռերի, քարերի «հարահոս վազք», որից «կերպար է առել բիբլիական հզոր մի ազգ», եւ ապա.

*Մեկ այդ ազգն է քարի վրա,
Մեկ այդ քարն է ազգի մեջքին,*

*Թավալվում են գիլ ու գլոր՝
Ձեռ առնելով ժամանակին:*

*Քարը ազգին, ազգը քարին,
Իրար խելք են տալիս - առնում,
Եւ նրանց մեջ նույն արեւի
Խարկված ոգին է սավառնում: ¹⁴²*

(«Ազգն ու քարը»):

Խարկված հոգու սավառնող թելերն էլ Դավոյանին միշտ մղել են դեպի այն սպասումը, որ մեկը իր «հոգին կարդար», որ ինքն էլ հավատար կյանքի հեքիաթին: Կյանքի այդ հեքիաթը նրան ներկայանում է «թախիծով լցված Հայոց ձորերից», որտեղ «Հայ աստվածները ելնում են նորից բարձունքներն ի վեր Հայոց լեռների»: Բանաստեղծության երազի թելերով Դավոյանի քնարական հերոսը գնում, ականատեսն է դառնում հեռու լեռներում ծվարած «հանգած օջախների» եւ մղկտում.

*...Կորած Հայրենիք, իմ հանգած օջախ,
Ե՞րբ պիտի քո մեջ կրակ վառեն,
Որ աչքերիս մեջ հովերդ խաղան
Եվ սիրտս այրող կրակը մարեն: ¹⁴³*

(«Հանգած օջախներ»):

Դավոյանի համար վերածնված Հայոց փոկրիկ երկիրը «գեհենից փրկված լույս» է: Այս հասկացության շրջանակները շատ լայն են: Ընդհանրապես Դավոյանի հայրենապատումը միագիծ չէ: Այն ամենը, ինչ որ թեւաբախում է հայոց դարավոր ճանապարհին, բանաստեղծը սերտորեն կապում է ազգի ճակատագրի

Ինտ եւ տալիս իր գնահատականը: Հայոց պատարագը, որ որպես «հայոց մեղեդի, երկինքն ի վեր խոնարհություն ու հույս» է հղում, հովացնում է մեր սրտերը «հնչյուններով... մեկամաղձոտ»: Այն լսում ենք այնքան՝ «մինչեւ քանդվի կարծր շաղախը մեր բողոքի» եւ նրա «հնչյունները չար աշխարհում» մեզ համար դառնան «հույսի օթեւան, հոգու բարիք» («Հայոց պատմություն»): Բայց «հավատի դեմ զենքեր կան արթուն, քնած սիրո դեմ՝ հրթիռներ վայրի»: Բանաստեղծը տեսնում է անափ անարդարություն՝ առաջին հերթին իր երկրի դեմ, այն երկրի, որտեղ ապրում է արարող մարդը: Եվ հնչում է բանաստեղծի խորհուրդը. «Փնտրեցեք այնտեղ, այնտեղ կգտնեք Հայաստան հողը արարող Աստծուն», որտեղ դեռ ապրում են «ազատության ծիլերը» («Երբ ազատության ծիլերը նրբին»): Ապա Դավոյանը անդրադառնում է Հայոց եկեղեցի-մասունքին եւ նկատում, որ Հայոց աշխարհը տիեզերքի մեջ հառնած մի եկեղեցի է, ասել է թե՛ նախնիների «հողմաբեկ ու հողմավար երազների» երկիր, որտեղ «Ամեն լեռան գլխին մի գյուղ կա, իսկ գյուղի գլխին կանթեղ» («Հայոց աշխարհ-եկեղեցի»): Հայրենիքի փրկության, հարատեւման ճանապարհի օժունը կա Դավոյանի հայրենապատումի մեջ: Նա դեմ է երազող,բայց քնած ոգուն: Նմաններին նա անվանում է «խեղված կրքերի ցանկատուն... հիվանդ օրերի տանջարան», որին «չի փրկի» ոչ «Հայկը մշտարթուն» եւ ոչ էլ «քաջ Արան» («Երազողը»): Ահա ինչու Դավոյանը կոչ է անում մեր քաջագուն նախնիներին, որ «զան՝ իրենց քարե հետնորդներին բուժեն, որ արժանի փառքով կանգնեն իրենց կողքին» («Թողեք այսօր...»):

Հայրենատեսության իր սեփական արահետներով Դավոյանը շրջում է Հայոց աշխարհում, մտնում ժողովրդի «երկար ապրելու» առեղծվածների ոլորտը, ապա շրջագայում աշխարհի ծայրերում՝ ճշմարտությունն եւ արդարությունն գտնելու հույսով, բայց կրկին հայցում Հայոց ոգուն, որ իրեն ների: - Մենք ճշմարտությունն որոնեցինք,- գրում է բանաստեղծը,- բայց չգտանք, որովհետեւ « աշխարհը նույնն է լրիվ... երբ զավակը լաց է լինում՝ նույն բալասանն է դնում ցավին» («Ես այս աշխարհից բան չգիտեմ»): «Մանիտոբա-Վիննիպենգ» կատարած ճանապարհորդության ժամանակ գրած վերոհիշյալ բանաստեղծությունը մեր համազգային ցավը չնոռանալու եւ գոյատեւման ճանապարհին սեփական ուժերին ապավինելու կոչ է: Դավոյանը այնուհետեւ լինելով Նյու-Յորքում, ժանոթանալով հայ գաղթօջախներին, հանգում է միաբանվելու, երկիրը փրկելու չարենցյան պատգամին: Բանաստեղծը ցավով է խոսում արտագաղթի մասին, այդ ցավից էլ ծնվում է նրա խորհուրդ - երգը.

*Ուզում եմ ձեզ ասել,
Թե երանի նրանց,
ովքեր ոչ թե պիտի մեր երկիրը լքեն...
...Պիտի մղվեն երկիր,
եվ հիացքով անհուն,
Խոնարհությամբ սրտի,
Մեզնից փոխ առնելով չքնաղագույն բառեր՝
սիրո երջանկության եւ աստղերի մասին,
մեր այս պայծառ երկրի հմայքները երգեն...¹⁴⁴*

(«Երանի...»):

Ակադեմիկոս Ս.Սարինյանը 1982 թվականին դասականների հավերժացած իրողությունից գնաց դեպի գրական նոր սերնդի աշխարհը: Սահմանազլխին նորերը ողջունեցին նրան, եւ նա էլ խրախուսեց նրանց, ասել է թե՛ «Պետք չէ առեղծվածներ վերագրել «գրական սերունդ.» հասկացությանը... Այնպես որ 70-ական թվերի գրական սերունդն իր դիմագիծն ունի եւ անունների իր շարքը, որ միանգամայն տեսանելի է գրական շարժման պատմական անընդհատության մեջ, որպես սկիզբ եւ որպես շարունակություն»: ¹⁴⁵ Ապա անվանի գրականագետը անունների այդ շարքում ընդգծեց Դավիթ Յովհաննեսին, Արտեմ Յարությունյանին, Յենրիկ Էդոյանին, Յովհաննես Գրիգորյանին, Արմեն Սարտիրոսյանին, Էդվարդ Միլիտոնյանին եւ մի շարք շնորհաշատ երիտասարդների: Այդ տարեթվից անցել է ուղիղ 18 տարի: Յետադարձ հայացք ձգելով տարիների ընթացքում վերոհիշյալ պոետների ստեղծածի վրա, ուրախությամբ եւ երախտագիտությամբ հաստատում ես Ս.Սարինյանի անսխալ կռահումները:

Յ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ պոեզիայի համառոտ բնութագրման մեջ Ս.Սարինյանը մի չափազանց կարելոր ընդհանրացում է կատարել. «Բանաստեղծի պոետական դիմանկարը կարելի է ասել, որ սպառել էին դեռեւս ռոմանտիկները, նրա մեջ ընդգրկելով պատգամախոս մարգարեին: Այժմ արդեն պոետական մեկնաբանության օբյեկտն են դարձել բանաստեղծությունը, բառը, պատկերը, եւ բանաստեղծությունը կարծես ստուգում է ինքն իրեն, չափում իր հնարավորությունները, իր ձեւն ու բովանդակությունը, իր բնույթը»: ¹⁴⁶

Հ.Գրիգորյանի քնարերգության մեջ հայրենապատումը եւս բառի, պատկերի, խորքային խտացում է, միտումով մեր դարավոր հայրենասիրության շարունակությունն է՝ հավատարմության եւ տազնապի շառավիղներով, սակայն բանաստեղծության շենքի ճարտարապետական կառույցը, հոգեբանական թրթիռներն իրենն են: Հ.Գրիգորյանի «Հայրենի հող» եւ «Հայաստան» երգերը մի ամբողջական շարքի ընդգրկումներ ունեն: Բանաստեղծի յուրաքանչյուր տող, ենթատեքստային խոսույն շերտեր ունեն: «Հայրենի հող»-ի հենց առաջին տողը նորություն է հայերգության մեջ: «Ես այս երգը երգում եմ կանգնած», - դիմում է բանաստեղծը հայրենի հողին: Իսկ ու՞մ առջեւ են կանգնում-հոր, որդու, զինվորի, երախտագիտության եւ սիրո խտացում դարձած բոլոր սրբությունների: Տվյալ պահին հայրենի հողը գնահատվում է որպես սրբոց սրբություն: Եվ բանաստեղծը մեկ առ մեկ թվարկում է այս զգացումները, որոնք հայրենիքին ուղղված երախտի խոսքեր են: «Դու նա ես, ում՝ խաղաղության համար զոհվում են առանց կասկածելու... ում համար կռվի են ելնում առանց հրամանի... որին ասում են միակ, որին կարոտում են հեռվից, որի համար արտասվում են օտար սրճարաններում եւ նավերի վրա ...»: Հ.Գրիգորյանը այստեղ տողից-տող հոգեբանական նոր հորիզոններ է բացում: Սերը եւ երկրի նկատմամբ ունեցած մտահոգությունը կողք կողքի են.

*Ես այս երգը երգում եմ սկզբից,
Որովհետեւ դու նա ես,*

Որին կորցնելուց հետո

Էլ ոչինչ չենք ունենալու կորցնելու...: 147

(«Չայրենի հող»):

Իսկ կորցնելուց հետո արդեն «անծրելը ջուր է սովորական, լեռները՝ քարերի կուտակում, սերը՝ շքեղությունն ավելորդ, եւ որդի ծնելը՝ հանցագործություն»: Եվ այսպես, Չ.Գրիգորյանի համար հայրենիքը ներկայանում է որպես օրհնանք, անվերջ ճանապարհ, հավերժող նպատակի երգ:

Չայրագության նորոյա օրհներգ է Չ.Գրիգորյանի «Չայաստան» բանաստեղծությունը: Չափազանցությունն չի լինի, եթե ասենք, որ Ե.Չարենցի «Ես իմ անուշ Չայաստանի», Չ.Սահյանի «Նաիրյան դալար բարդի», Չ.Շիրազի «Էքսպրոմտի» կողքին Չ.Գրիգորյանի «Չայաստանը» հայրենասիրության նորովի ըմբռնման արտահայտություն է:

Սա իմ երկիրն է - չափսերով այնպիսին,

Որ կարող եմ վերցնել հետս,

Թե մի հեռու տեղ գնամ:

Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր,

Փոքրիկ՝ ինչպես նորածին զավակ:

Իսկ քարտեզի վրա

Ընդամենը մի արցունքի կաթիլ...

Սա իմ երկիրն է - չափսերով այնպիսին,

Որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ

Որ չկորցնեմ հանկարծ: 148

Բանաստեղծական այս սերնդի գունային պատկերները միապաղաղ չեն, այլ բազմերանգ, գույների

Ինքնատիպ համադրումների արդյունք: Այս տեսակետից օրինակելի են նաեւ Է.Միլիտոնյանի որոնումները: «Հիշատակի զանգեր» գրքում բանաստեղծը հայրենասիրական երգերը խմբել է «Անվերջ քո մասին» շարքում: 20-րդ դարի 70-ական թվականների սերնդի վերաբերմունքը դեպի հայրենիքի ճակատագիրը նոր ծալքերով է ներկայացվում այստեղ: Հայրենիքը հանդես է բերվում կոնկրետ, շոշափելի պատկերներով: Միլիտոնյանը երկրի հանդեպ սրտում նարեկացիական դող ունի: Նա աստվածացնում է երկիրը եւ խոստովանանքի եզրեր բերում մեջտեղ: Գեղեցիկի զգացումի հայկական չափանիշներով եւ անմիջականությամբ համեմատությունների ինքնատիպ կառուցվածքի մեջ զգացվում է բանաստեղծի ներկայությունը՝ մերթ որպես որդի, մերթ էլ՝ ծնող.

*Ինչպե՞ս եմ քեզ սիրում, երկիր,
 Ինչպե՞ս եմ քեզ սիրում,
 Այդպիսի ուժով հնձվորն է սեղմում
 Բռնակը մանգաղի,
 Երեխան է խնձորը կծում...: 149*

Երկիրը նրան ներկայանում է որպես իրեն «հասցեագրված նամակ», որը սակայն չի կարող բացել: Ապրումի պահը հավասարվում է տառապանքի, եւ երկրի էությունը ձուլվում է քնարական հերոսի էությանը: «Պատմության ողնաշար», «անքուն սեզեր», «թռչունի արյուն» մակդիր-պատկերային հենքի մեջ քնարական հերոսը երկրի հանդեպ իր սերը ներկայացնում է «Արցունքով ողողված»: Դրանք հայոց ճակատագրից ժայթքած արցունքներ են: ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ հայրենա-

Կատունը յուրահատուկ գորելեն է, ինքն է գործել իր երազներից, որ եւ ազգային է, եւ անձնական: Բանաստեղծի գորելեն-պատկերների մեջ հայոց գետերը «հոսում էին ծիրանիներ հագած», փանդիռներից զարկող հայի մատները «ծուռ ու իմաստուն» էին, «դավաճանների, թերացողների եւ լքողների շարքերի միջից» ձգվում էր օրերի հույսը: Այդ հույսի ճեղքերից հայոց գիշերները, ծաղկողները, պատմիչները.

*...Ոսկեցոլ ու տառապագին օրերի միջով,
Քայլեցին, որպես մարգարե՝
Պահեցին մեր ոգին ինքնիշխան
Եվ խաչվեցին նրանք եւ խաչեցին: ¹⁵⁰
(«Ճամփորդ»):*

Է.Միլիտոնյանի հայրենապատունի մեջ բանաստեղծն ու հայրենիքը միաձուլվ են: Նրա քնարական հերոսը ինքն է հյուսում հայրենիքի պատկերը: Նա «քարե թերթերի» վրա իջած ցող է, «թիթեղյա տանիքներին» իջնում է «ինքնաթիռի եւ աղավնու պես», եւ որ կարելու է, նա ապրում է երկրի երազանքի երկինքներում «Վահագնի պես ու Լեռան մեջ, Որպես փոքր Մհեր»: Պատմության խորքերից հառնում է երկրի ճակատագիրը խորհրդանշող խճանկարային պատկերը.

*Ամեն կենաց հիշատակ է զոհվածների,
Ամեն մանուկ վերադարձ է կորուսյալի
Եվ արյուն է զորավարի:
Ամեն մի թուփ, ամեն մի ծառ,
Ունի իմաստ հավերժության: ¹⁵¹
(«Հիշատակի քաղաք»):*

Իրերի ու երեւոյթների ընթերցումով Միլիտոնյանը իմաստութեան ծաղկեպսակ է նվիրում գյուղերին, շենքերին, շոյուն Անիի «երկարած ձեռքերը» («Անի»), այցելում դեմքը ծովի մեջ սուզած Վանին («Վան»), ապա հայաշունչ լեռներին հենված բացականչում աշխարհով մեկ. «Իմ հայրենիքը Մանր խաղերի անձրեւ է Հին պատերին»:

Միլիտոնյանի մտածողութիւնը եւս իր սերնդակիցների պէս ազատ է, այստեղից էլ պոետական այն թելաբախումները, որ հատուկ են նրա հայրենապատումին: Նրա երգերում հայրենիքը անցյալի խորքերից գալիս մոտենում է մեր օրերին՝ «Մարգարիտների անձրեւներով, փանդիռով, երգով...», «Եղեգնյա փողով, Եղեգնյա գրչով», իսկ որդին էլ դիմում է ժողովրդին.

*Դեպի քեզ եմ գալիս, իմ ժողովուրդ ,
Երիվարով իմ խենթ,
Աջ ձեռքիս սուրը,
Ծնկելու համար քո դրոշի մոտ
Եվ համբուրելու կապույտը նրա,
Եվ համբուրելու կարմիրը նրա: ¹⁵²*

(«Իմ ժողովրդի դրոշը»):

70-ական թվականների գրական սերնդի ներկայացուցիչներից հայրենապատումի իրենց գույները հյուսեցին ԱՐ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ, Դ.ՀՈՎՀԱՆՆԵՍԸ, ԱՐ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, Հ.ԷՊՈՅԱՆԸ: 1985-ին գրականագետ Ա.Եղիազարյանը անդրադառնալով երիտասարդական պոեզիային, գրել է. «Արտեմ Հարությունյանի եւ Հենրիկ Էդոյանի ստեղծագործությունը նոր սերնդի որոշակի

միտումները հասկանալու համար չափազանց բնորոշ է: Բանասիրական պատրաստվածությունը, եվրոպական գրականությունների իմացությունը, որ հատուկ է Հարությունյանին եւ Էդոյանին, կարելոր է ոչ միայն իբրեւ մասնագետներ գնահատելիս, այլեւ նրանց ստեղծագործությունները քննելիս: Երկուսի մոտ էլ ակնհայտորեն զգացվում է ժամանակակից մտածողությունից ետ չմնալու ձգտումը: Ժամանակի եւ տարածության խնդիրը, որ արդեն 20-րդ դարի սկզբից նվաճեց եվրոպական գրականությունների որոշակի հատվածներ, մեր բանաստեղծներին շատ հուզող խնդիրներից մեկն է»: ¹⁵³

Գրականագետը իր կռահումներում չսխալվեց: Տարիների ընթացքում թե Հարությունյանը, թե Էդոյանը եւ թե նրանց սերնդակիցները իրենց արծարծած բազմազան թեմաների մեջ բերեցին իրենց առանձնահատուկ հայրենապատումը:

Եթե հայրենապատումի մեջ Ար.Մարտիրոսյանը ներկայանում է խոհական-փիլիսոփայական տարերքով, մտածողության մետաֆորային համակարգով («Երկու դեղնած տերեւ»), ապա Դավիթ Հովհաննեսը՝ խոհական-դրամատիկ հյուսվածքի տեսքով: Ար.Հարությունյանը լույսերի եւ ստվերների միջով հասավ «երկրի նշաններին», հայրենիքի խորհրդանշական «անտառ» այլաբանությամբ: Հ.Էդոյանը գեղագիտական-փիլիսոփայական իր ընդհանրացումներով է կերտում հայրենիքի պատկերը, Հ.Հովեյանը թունանյանական նրբասրտությամբ օրհնանք է առնում հայրենիքից եւ սիրտ պարզելում նրան: Վանածորցի Հ.Սարուխանը տազնապում է, որ «ազգամիտ խոսքի տեղակ Հայիո-

յանք է, հոխորտոց»: Նա խարազանում է «Քաղաքական գիշությունը», նրանց, ովքեր «Նահատակաց դափնիներով պչրում» են «ամեն մի վայրկյան» եւ գոչում, որ մասիսները ահազանգեն, որ սասանվի Ագռավաքարը ու Մհերը ելնի դուրս, որպեսզի միաբանի իր ծռերին, քաջալերի նրանց հանուն Հայոց աշխարհի ազատության: Բանաստեղծը երազում եւ հավատում է, որ «Ցորեն կեղնի քանց մասուր մի, Գարին կեղնի քանց ընկույզ, Ու լույս կիջնի մեր էպոսին»:

Բանաստեղծը հարազատ մնալով ժողովրդի դարավոր երազանքին ու հավատին, տենչում է «Աստվածային խաղաղ լույս»:

Այսպես հայոց հայրենապատումի մեջ գալիքի հանդեպ եղած անմարում հույսի, թշնամու դեմ հնչած պայքարի երգերին գունարվեց նաեւ հայոց ծռերին միաբանելու պատգամը, եւ այդ երեքի միասնությամբ էլ բռնկվեց արցախյան ազգային - ազատագրական շարժումը, որ անհրաժեշտություն էր, որը եւ եղավ...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ՊՊԵՋԻՄՆԻ ՑԱՎՆ ՈՒ ՀՈՒՅԱԸ

1

1915 թ. մեծ եղեռնից հետո աշխարհում հայկական հին գաղթօջախներին գունարվեցին նորերը եւ ստացան Սփյուռք անունը: Տարագիր հայությունը օտար ափերում գոյատևեց իր ծանրաբեռ հոգսերով, հին ու նոր ցավերով: Այդ ցավերի մեջ ամենից ծանրն ու սարսափելին հայրենիքի կորուստն էր: Բանաստեղծ հայ

ժողովուրդը, որ անցել էր դարերի դաժանությունների միջով, 20-րդ դարասկզբին կանգնեց նոր խնդիրների առջև: Սփյուռքի բանաստեղծները, որ իրենց հոգիներում ունեին արեւմտահայ գրականության լավագույն ավանդները, պետք է ստեղծեին նաեւ իրենց նոր ճակատագրին համահունչ երգը: Բայց ինչպե՞ս: Հայ գրողը հետ էր նայում՝ հիշողության մեջ կրակներից ճարձատում էին մեր դարավոր քաղաքներն ու շենքերը, կոպերի տակ տեսիլքի փոխված երեւում էին մեկ ու կես միլիոնների արյունոտ, անթաղ դիակները՝ Մասիսի լանջերից մինչեւ Դեր Ջոր: Ահա, այդ համազգային ընդհանուր վշտի մեջ սփյուռքահայությունը ոչ միայն կարողացավ ոտքի կանգնել, շտկել մեջքը, այլեւ ուժ գտավ հնչեցնելու իր քնարը՝ կարոտի բազմաշերտ երանգներով: Հնչեց նրա նորօրյա երգը՝ կորստյան ահավոր դրանջներով: Սփյուռքահայ գրողները, կորուսյալ հայրենիքի կարոտն առնելու համար առաջին հերթին դիմեցին հայրենի բնությանը, նրան ներդաշնակելով իրենց ցաված հոգիները: Այդ մասին դիպուկ է ասել Համաստեղը. «Մենք, ինչքան նման ենք ծովին, որ խաղաղ է մեր հոգիին պես, տխուր՝ մեր հոգիին պես, մտածկոտ՝ իր գեղեցիկ կոպտության մեջ: Ծովը իր մեջ ամբողջ երկինք մը աստղերով ծանրացավ, ճիշտ մեր հոգիին պես»: ¹⁵⁴ Ծովի տխրությունը, խորհելը, հառաչելը, փոթորկվելը, հիրավի, հայոց հոգու բանաստեղծական ածանցումն է: Վերհուշը դարձավ հայրենապատումի հիմնական զարկերակը, որի բաբախումների մեջ այսօր կարելի է լսել *Վահան Թեքեյանի, Ժագ Հակոբյանի, Վահե Վահյանի, Անդրանիկ Ծառուկյանի, Բյուզանդ Թովալյանի, Կոստան Ջարյանի, Գեղամ Աթնաճյանի*

(Ա.Սենա), Մուշեղ Իշխանի, Միսաք Մանուշյանի եւ այլոց սրտերի տրոփյունը: Այդ զարկերից ստացած առաջին զգացումը ցավի եւ վշտի թրթռումներն են: Վ.Թեքեյանը առաջիններից էր, որ բանաստեղծական պատկերի մեջ ներկայացնում էր իր հոգին, որտեղ մարում էին «երկնքի լուսերն ալ մի առ մի»: Հուսահատության այս նոտաները բնական ու հասկանալի են: Անարդար աշխարհի աչքերի առջեւ գլխատվեց մի ողջ ժողովուրդ, որի բեկորները անապատների միջով մազապուրծ հանգրվանեցին աշխարհի տարբեր մասերում: Անցյալով, հավատով, լեզվով, երազներով, մշակույթով միաձույլ մի քաղաքակիրթ ժողովուրդ բաժան-բաժան դարձած սկսեց լսել օտարալեզու խոսքեր, օտար երգեր, հայտնվեց օտար սովորությունների մեջ: Ահա, այս ընդհանուր քաոսի մեջ է, որ հայ բանաստեղծը պետք է ուժ գտներ ապրելու եւ ապրեցնելու իր բզկտված ժողովրդին: Բանաստեղծների մտահոգությունն օտար ափերում ազգային ոգու պահպանումն էր: Դիմելով ընթերցողին, Վ.Թեքեյանը (1878-1945) հնչեցնում էր այն ամուր պահելու կոչը: Բանաստեղծը հայտարարում է հայ ոգու շարունակվող գոյությունը, ի հեճուկս բոլոր դաժանությունների:

Վ.ԹԵՔԵՅԱՆԻ հայրենասիրական մղումների ընթացքը սերտորեն կապված է եղել հայոց ազգային գաղափարախոսության հետ: Սակայն պետք է նշել, որ Վ.Թեքեյանը խորհրդային իշխանության առաջին տարիներին հույսեր չէր կապում բոլշևիկների ղեկավարած Հայաստանի փրկության ու բարգավաճման հետ:

Ինչո՞վ բացատրել ականավոր բանաստեղծի եւ ուրիշ այլ գրողների ժխտողական վերաբերմունքը

Խորհրդային Հայաստանի հանդեպ: Խոսելով սփյուռքահայության ձեւավորման մասին, ակադեմիկոս Ս.Սարինյանը անդրադառնում է նաեւ Սփյուռքում հայ գաղափարաբանության ազգային ծրագրին: Նա ընդգծում է, որ այդ ծրագրի իրականացման երաշխիքը Համագային հաստատության ստեղծումն էր, որ պիտի լիներ հոգեվոր մի կանուրջ հայկական համայնքների միջեւ՝ հայությանը հեռու պահելու այլասերումից ու ապագայնացումից, դաստիարակելու նոր սերունդ, որն ընդունակ լինի շարունակելու անկախության պայքարը՝ Մայիսի 28-ի եւ Հայ Դատի նշանաբանով: «Բայց, - գրում է Սարինյանը, - Սփյուռքը նախապես ժառանգեց ազգային կուսակցությունների ավանդական բանավեճը, կուսակցական պայքարի ուղեգծերի վրա դնելով հայ գաղափարաբանության նոր շրջանը: Ավանդական բանավեճը նորոգվում է ներկա հանգամանքների իրական կացությամբ՝ դիրքորոշումը Հայ դատի նկատմամբ եւ վերաբերմունքը դեպի Խորհրդային Հայաստան: Ռամկավարներն ու հնչակյանները հակված էին ճանաչելու Խորհրդային Հայաստանը որպես Հայրենիքի Խորհրդանիշ եւ տնտեսական ու մշակութային համագործակցությամբ աջակցելու նորաստեղծ հանրապետության կառուցմանը: Իհարկե, չիրաժարվելով Հայ դատի եւ անկախ-ազատ Հայաստանի ուխտին... Նախապես դաշնակցությունը նույնպես հակված էր ընդունելու Խորհրդային Հայաստանի փաստը եւ իր գործունեությունն ուղղելու Հայրենիքի կառուցման գործին, առավել եւս, որ բուլշեւիկյան առաջնորդները խոստացել էին չհետապնդել կուսակցության անդամներին եւ ընդունել

Մրանց մասնակցությունը Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի շինարարությանը: Սակայն բուլշեիկները ոչ միայն դրժեցին համաձայնության խոստումը, այլև գաղափարական իրենց քաղաքականությունն ամբողջապես ուղղեցին Ռաշնակցության դեմ անզիջում պայքարին, բնականաբար առիթ տալով նույնքան անզիջում դիմակայության»: ¹⁵⁵

Պարզ է, որ այդ անզիջում պայքարը պետք է ազդեր նաև սփյուռքահայ գրականության ընթացքի վրա:

1920-1940-ական թթ. սփյուռքահայ իրականության մեջ հայրենիքի ճակատագրի բանաստեղծական նկարագրի բոլոր երանգները կարելի է տեսնել Վ.Թեքեյանի, Կ.Զարյանի, Մ.Իշխանի ստեղծագործություններով: Այդ տարիներին, որպես սփյուռքահայ պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներ, նրանք ճանապարհ են հարթել ստեղծագործող սերունդների համար: Պատմությունը ապացուցում էր, որ կորուսյալ Մեծ Հայքի մի կտոր փրկված հողի վրա, Արագածի շուրջ, գերված Մասիսի դիմաց, մի բուռ դարձած հայ ժողովուրդը ոչ միայն վերընձյուղվում է, այլև մագնիսական ուժով դեպի իրեն է ձգում Սփյուռքի այն մտավորականների ուշադրությունը, ովքեր թերահավատ էին Խորհրդային Հայաստանի հանդեպ: Դրանց թվումն էր նաև Վ.Թեքեյանը: Երեւոյթ հանդիսացավ տաղանդավոր բանաստեղծի 30-ական թթ. գրած «Ներկա Հայաստանին» շարքը՝ բաղկացած երեք սոնետից: Թեքեյանը որդիական երախտագիտությամբ խնդրում է «Ներկա Հայաստանին». «Ներե, որ քեն ըրի քեզի քիչ մը ատեն-Մինչեւ երեկ»: Նա արդեն գրկաբաց ընդունում է կրակների միջից փյունիկի պես ծնված երկիր - իրողությունը:

Վ.Թեքեյանի այս վերաբերմունքն է, որ ուրախացրել է ոգեւորել է նրա երկրպագուներից մեկին՝ Ս.Կապուտիկյանին, 1961թ. Հայաստան - Սփյուռք փոխհարաբերությունների նորօրյա խմորումների հիման վրա գրելու «Սփյուռքահայ բարեկամներին» բանաստեղծությունը: Բնաբան բերելով Վ.Թեքեյանի «Տարբեր ես դուն մեր երագեն, - ավելի՛ լավ...» տողը, Կապուտիկյանը ընդգծում է.

*Դու՛ք, հայրենիքի ծաղկումին ի տես՝
Ուրախությունից մանկացած այրեր,
Որ տարիներով բոբկացած քայլել
Ու մե՛զ եք գալիս ուխտավորի պես,-
Զգաստանում եմ ես ձեր հայացքից,
Երկյուղած, սիրող ու հավատացող,
Որ Հայաստանի ամեն մի ծաղկին
Այնպե՛ս է իջնում, ինչպես լույսի շող...: 156*

* * *

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութային եւ կիսագաղութային երկրներում ուժեղ թափստացավ ազգային ազատագրական պայքարը: Դա չէր կարող իր ազդեցությունը չթողնել նաեւ սփյուռքահայ այն զանգվածների վրա, որոնք ապրում էին օտար ափերում: Սակայն հայ ժողովրդի վիճակը տարբերվում էր մյուսներից նրանով, որ ֆաշիզմի դեմ հաղթանակ տարած խորհրդային Միության մի մասն էր կազմում խորհրդային Հայաստանը, որի հարյուր հազարավոր զավակները սփյուռքահայության քաջարի ներկայացուցիչների հետ մեկտեղ նպաստեցին հիտլերյան

Ֆաշիզմի ոչնչացմանը: Հայ ժողովուրդը ակտիվորեն մասնակցեց երկրորդ համաշխարհայինին, պարզ գիտակցելով, որ այս անգամ վերջնականապես դրված էր իր լինել-չլինելու հարցը: Իր ժողովրդի հարատևման ճանապարհը ապահովելու համար զոհվեց ֆրանսահայ բանաստեղծ Մ.Սանուշյանը (1906-1944), գերմանական ֆաշիստական ճամբարներում գազախեղդ արվեց Լուիզա Ասլանը (Լաս):

Երկրորդ համաշխարհայինից հետո Սփյուռքում արդեն կյանքից հեռացել էին անվանի գրողներ Վազգեն Շուշանյանը, Փայլակ Միքայելյանը, Գեղամ Աթմաճյանը (Ա.Սեմա), Վահան Թեքեյանը, չկային նաև ուրիշ երախտավորներ: Սակայն նորերը շարունակվեցին գրականության լավագույն ավանդույթները, առանձնապես Սիրիայում եւ Լիբանանում: Այս գաղթօջախներում մշակույթի զարգացման ուղղությամբ մեծ դեր խաղացին հրատարակչությունները, դպրոցները: Գաղթօջախներում հասակ առան շնորհալի շատ գրողներ, որոնց մի մասը 1946-ի ներգաղթից հետո լծվեց նորագույն շրջանի հայ գրականության հարստացմանը: Այդ աստղաբույլի ներկայացուցիչներից են Ս.Ալաջաջյանը, Ա.Թերգյանը, Գ.Քեչիշյանը, Ա.Ալեքյանը, այնուհետև Վ.Հաճյանը (ԱՄՆ), Ա.Ավագյանը, Հ.Ղուկասյանը (Պարսկաստան), Վ.Դաքեսյանը (Հունաստան), Գ.Սեւանը (Թուրքիա) եւ ուրիշներ: Սակայն Սփյուռքը մնաց: Շատերը շարունակեցին իրենց նախորդների գործը, նպաստելով գրականության զարգացմանը, ազգային լեզվի պահպանմանը, հայկական ոգու ամրապնդմանը: Այդ գործի խթանման նոր ազդակ հանդիսացավ 1946 թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը

Երեւանում տեղի ունեցած Հայաստանի Խորհրդային գրողների 2-րդ համագումարը, որին մասնակցելու համար հայ գրողներ էին հրավիրվել նաեւ Սփյուռքից:

Համագումարում բացման խոսքով ելույթ ունեցավ Ավ.Իսահակյանը: Վարպետը ողջունելով գաղթօջախներից ժամանած գրողներին, ընդգծեց. «Սա մեր նորագույն պատմության մեջ առաջին դեպքն է՝ ներշնչող եւ ոգեւորող, որ վերածնված Հայաստանի մայրաքաղաքում, ազատ ու անկաշկանդ պիտի խոսենք մեր գրականության մասին, մեզ խանդավառող գաղափարներից եւ մեր հեռանկարներից... Մեր համագումարի ամենաարժեքավոր արդյունքն այն կլինի, որ ավելի սերտանան ու մտերմանան փոխադարձ հարաբերությունները մայր հայրենիքի եւ սփյուռքի գրականությունների միջեւ, ներդաշնակվեն մեր ձգտումները, կառուցենք պայքարի ճակատ ընդդեմ... ռեակցիայի՝ ի շահ հայ ժողովրդի բարգավաճման, միավորման:... Մեր գրչակիցները պիտի երգեն եւ արժարժեն սեր դեպի Սովետական Հայաստանը, բոլոր հայերի հայրենիքը: Պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը եւ ազգային պատկանելիությունը: Բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահել հայությունը այլասերումից: Նրանք պիտի կամուրջ դառնան տարածելու Սովետական Հայաստանի կուլտուրայի, արվեստի եւ գրականության արժեքները եւ ստեղծելու միասնական գրականություն՝ սովետահայ գրականության շուրջ»:¹⁵⁷

Ավ.Իսահակյանը իր ելույթում հայտարարեց «մեկ ժողովուրդ եւ մեկ գրականություն» կարգախոսը:

Հետպատերազմյան շրջանում սփյուռքահայ գրողները հստակ պատկերացնում էին իրենց առջեւ

ծառացած պրոբլեմները: Դրանք Խորհրդային Հայաստանի նկատմամբ եղած սիրո ու հետաքրքրությունների պատկերումն է, կորուսյալ հայրենիքին հասցեագրված կարոտի եւ վերհուշի զգացումները: Գաղթօջախներում տարբեր երկրների քաղաքացիներ դառնալով, նրանք միաժամանակ պետք է վառ պահեին ազգային ինքնազգացողությունը, պայքարեին ուժացման եւ այլասերման դեմ, ամրապնդեին Սփյուռք-Հայրենիք կապը: ՀԳՄ 2-րդ համագումարում որպես հավատամք եւ պատգամ ընդգծվեց, որ հայրենի հողից ու ժողովրդից կտրված գրականությունը զարգացման հեռանկար չունի, որ իսկական արվեստը կարող է զարգանալ միայն սերտորեն ձուլված մայր երկրին ու ժողովրդին:

Հետագա տասնամյակներում սփյուռքահայ գրականությունը իրականացրեց վերոհիշյալ միտումները: 1981 թ. ՀԳՄ 6-րդ համագումարում, որ տեղի ունեցավ մայիսի 6-8-ը, նշվեց, որ սփյուռքահայ արդի գրականության մասին համագումարում առանձին զեկուցում դնելու եւ արտերկրներում ապրող հայ գրողներին համագումար հրավիրելու փաստը խոսում է Հայրենիք - Սփյուռք հարաբերության սերտացման մասին:

Հայրենիքի ճակատագրի թեման 1945 թ. հետո նոր ծիր դուրս բերվեց: Վ.Վահյանը (1907) 1945-ին հրատարակել էր «Ոսկե կամուրջ» ժողովածուն, որի լեյտմոտիվը Սփյուռքի եւ Հայրենիքի միջեւ կամուրջ ստեղծելու գաղափարն է: Այդ կամուրջն ամրապնդելու համար մտահոգվեցին ոչ միայն սփյուռքահայ, այլեւ Խորհրդային Հայաստանի գրողները: Բեյրութում 1968 եւ 1969 թթ. լույս տեսան «Էջեր գրականության եւ արվեստի» պարբերագրքի ապրիլյան համարները: Նրանցում

ներկայացված հարցարանին պատասխանել են Հայաստանում եւ Սփյուռքում ապրող չորս տասնյակ գրողներ եւ գրականագետներ: Բոլորի հիմնական մտահոգությունը եւ հարցի ելքը մեկն է՝ առանց հայրենիքի գոյության, առանց նրա ու հայրենիքի պետականության փաստի՝ ազգապահպանումը սփյուռքում անհնարին է, փխրուն է ու սնամեջ:¹⁵⁸ Ուշագրավ է սփյուռքահայ գրող Յ.Ծ.Սիրունու խոսքը այդ կապակցությամբ. «Սփյուռքի գոյատևումը գոնե որոշ ժամանակի համար կարելի դարձնող հիմնական ու չփոխարինող ազդակը մայր հայրենիքն է ամեն բանե առաջ, վերածնված եւ ուռճացող սքանչելի մեր Հայաստանը, որուն հետ կապերուն ամրապնդումը երկուստեք գլխավոր պարտավորություն է ներկայիս, ըլլալով նախապայմանը՝ ազգապահպանման գծով ի գործ դրվող ամեն ճիգի հաջողությանց»:¹⁵⁹

Նույն կարծիքն են հայտնում նաեւ *Արամ Հայկազր, Կարապետ Սիտալը, Ջարեհ Որբունին, Վահրամ Մավյանը, Հայկ ժամկոչյանը* եւ ուրիշներ:

Դեպի Սովետական Հայաստանը եղած սիրո եւ ուշադրության ազդակներ հանդիսացան նաեւ ՀԳՍ 8-րդ եւ 9-րդ համագումարներին սփյուռքահայ մի շարք գրողների մասնակցությունը, ելույթները եւ ակադեմիկոս Է.Ջրբաշյանի հատուկ զեկուցումը սփյուռքահայ գրականության մասին: Վերջինս իր զեկուցման մեջ ընդգծել է. «Արտասահմանի մեր գրչակից եղբայրներին ներշնչում է այն բարձր գիտակցությունը, որ իրենք ստեղծագործում են ոչ միայն արտասահմանի, այլեւ մայր հայրենիքի բազմահազար ընթերցողների համար»:¹⁶⁰

Երեւանում հրատարակված գրքերի քանակը խոսում է այդ վերաբերմունքի օգտին: Հետպատերազմյան մի քանի տարիների ընթացքում սփյուռքահայ գրողների տպագրված գրքերի թիվը 100-ից ավելի է: Համարյա բոլոր անվանի գրողների ժողովածուները լույս են տեսել մեծ տպաքանակով: «Սփյուռքահայ գրականության պատմություն» առարկան մտցվել է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսումնական պլանների մեջ: Երեւանի պետական համալսարանը հրատարակել է «Սփյուռքահայ բանաստեղծություն» եւ «Սփյուռքահայ պատմվածք» ստվարածավալ ժողովածուները: ՀԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը եւ Երեւանի պետական համալսարանը 1985 թ. փետրվարի 13-14-ը կազմակերպել են սփյուռքահայ գրականության հարցերին նվիրված երկօրյա գիտական նստաշրջան: Այդ եւ հետագա միջոցառումների ժամանակ ընդգծվել է, որ նորագույն շրջանի հայ գրականության պատմությունը հնարավոր չէ ներկայացնել առանց սփյուռքահայ գրականության: Իհարկե, սփյուռքահայ գրողների գրական հունձքի մեջ եղել են նաեւ ցածրորակ երկեր, սակայն պետք է ընդգծել, որ այդ փուլում իրենց լավագույն գործերով ականավոր գրողները հարստացրել են «կարոտի գրականությունը», զարգացրել «Հայրենիք - Սփյուռք» կապերը, հուն բացելով «Նոր կարոտի գրականություն» ստեղծելու համար, պայքարել հանուն հայապահպանման, ձեռնամուխ եղել գրականության մեծ մայրուղի մտնելուն՝ համամարդկային թեմաների մշակմամբ: Սրանք միտումներ են, որ անպայմանորեն առնչվել են հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրին, ընդհանրության մեջ սերունդներին կտակելով տազնապի եւ ցավի, հույսի եւ հավատի պատգամներ:

Հետպատերազմյան շրջանում «կարոտի գրականությունը» սկսեց նվազել, տեղի տալով դեպի Խորհրդային Հայաստանը ուժգնացող «Նոր կարոտի» գեղարվեստական խոսքին: Այդ ուղղությամբ առաջինների շարքում էր Վահրամ Մավյանը (1926): Ճիշտ է, Մավյանը իրեն առավել դրսևորեց արծակի բնագավառում, անմասն չմնաց նաև պոեզիայում, դրա ապացույցը «Համեցող վերադարձից» բանաստեղծությունն է.

*Թող պարզ խրճիթ մը ըլլա, բայց
հողին վրա հայրենի՝
Երագիս տունն ապահով,
Ուրկե ամեն իրիկուն ինչպես
պալատ մ'արքենի,
Ստնեն հպարտ, անվրդով,
Ու տուներեն վերջ որոնք օտար, օտար
ինձ եղան,
Որոնց ես հյուրն եղա լոկ,
Գիտնալ քաղցր է թե ունիմ այլեւս տուն
սեփական,
Նայող գալիք դարերուն: ¹⁶¹*

Հայրենիքի հանդեպ նոր կարոտի պոետական դրսևորումը եղավ Վ.Վահյանի «Հարալեզներու հաշտությունը» գիրքը: Վ.Վահյանը մասնակցել էր ՀԳՄ կարեւոր միջոցառումներին:

*Այստեղից է գալիս նրա ընդհանրացումը .
Հայոց Հայրենիքն է ավազանը հայ հանճարին եւ ուժին.
Եվ անոր ծոցեն միայն կը ցայտեն աղբյուրները ամենագեղ տեսիլքներուն:*

Չայության հույսքն անծեռակերտ կտավը
կը հյուսվի անխափան՝ շողերովը միայն
Արագածի արեւին:

Ապահովության ամրոցին համար Արարատի գավակներուն,
չկա անսասան ուրիշ խարխիւ, բացի կուրծքեն հայ լեռներուն,
Եվ անոնց բարձունքներուն վրա լարված կամքի աղեղն է միայն,
որ կը հասցնէ նպատակին մետը իր լուսեղեն թիրախին: ¹⁶²

Սա մի պատգամ է ուղղված գալիք սերունդներին՝
նորոգ Չայրենիքին անմնացորդ նվիրվելու ընծայա-
կանով:

Չայրենի տան տեսիլքային կարոտը *Մ.Իշխանին*
(1913-1990) բերեց դեպի Վերածնված Չայաստան: Նա
Լիբանանի հեռավոր լեռներից ողջույնի խոսք ուղղեց
Չայաստանի բանվորներին, որոնք դեռ նոր անցած
«արյան ծովերեն նոր ձեւ ու կյանք» էին տալիս «երկ-
րին մեր ավեր»: Երկնտանքի ոչ մի նշույլ այլևս չի
երեւում բանաստեղծի սիրո մեջ: Նա Չայաստանի բան-
վորներին համարում է «Ժառանգորդներն այն ազգին,
որ ստեղծեց հիմքը ոճին գոթական»: Բանաստեղծի
սիրտը ցնծում է հայրենի տան կառուցման համար եւ
երանի է տալիս բանվորներին.

*Երնե՛կ ձեզի, ձեր ոտքերուն տակ գոնե
Ափ մը հող կա դեռ մեր հողեն հնամյա,
Որուն ավիշն արդ ձեր հոգուն կը վառե
Եվ ջուրն հզոր ձեր արյան մեջ կը թնդա: ¹⁶³*

(«Չայաստանի բանվորներին»):

Չայաստանի յուրաքանչյուր մանուկ բանաստեղծը
համարում է «մեյմեկ ահեղ հաղթանակ մետված խղճին
դեմ աշխարհին վայրենի»: Չայաստանը *Մ.Իշխանը*

Մերկայացնում է որպես «Հայուն լուսեղ, մեծ երագին ապագա»:

Հայաստանի սերը բանաստեղծը համարում է հոգու կրակ: Պատահական չէ նրա գրքերից մեկի խորագիրը. «Կրակ»: Կրակը խորհրդանիշն է տան, օջախի, սիրո, կյանքի, այն հավատ է եւ նաքառման ոգի: Ինչքան կյանքն է բազմաշերտ, այդպիսին էլ Մ.Իշխանի հայրենապատումն է: Դրանում եւ՛ կարոտ կա, եւ՛ արցունք, եւ՛ թախիծ, եւ՛ հույս: Իսկ եւ իսկ տարագիր մարդու անմիջական ապրումներ. «Դուք մամիկներ սեւազգեստ», «Կաղանդի գիշեր», «Գարնան անձրեւներ» եւ այլ բանաստեղծությունների հենքը եւս հայրենիքի կարոտն է: Մ.Իշխանի երգերում տուն կարոտին հաջորդում է երագը: Երագի արտահայտություն էր նաեւ «Հայաստան» քնարական պոեմը, որտեղ տարագիր հայի եւ հայոց հողի միջեւ վերանում են սահմանները: Հայաստանը պատկերվում է որպես հաստարմատ ծիրանի ծառ, որ հույս է ներարկում ապագայի հանդեպ.

*Հայաստան,
Սպասման մեջ լեռնացում,
Հեռագնաց մեկնումի գետ ու թավալ,
Նոր դարերու կառուցում
Եվ ավերակ փառքի արձան ու անցյալ...
Ճակատագրի մրրիկներին հողմակոծ
Ծիրանի ծառ հաստարմատ,
Որուն կոտրած ճյուղերուն տեղ վիրախոց
Նոր ընձյուղներ կը բարձրանան անընդհատ...: 164
(«Հայաստան»):*

Տան եւ երազի փիլիսոփայական ապրումը Մ.Իշխանին շարունակ մղել է դեպի հայապահպանման գաղափարը: Այս երեւոյթը միշտ արթուն է պահել բանաստեղծի հայաշունչ ոգին: Հենց այդ սերն է, որով 1957 թվականին թեւեր առավ բանաստեղծական նոր՝ «Ողջույն քեզ, կյանք» գիրքը: Հայաստան-Սփյուռք կապերի նոր արձագանքները թեւավորեցին բանաստեղծին, նա ազգային ցավից քայլ արեց դեպի մարդկային ընդհանուր ցավը: Միայն կորուստնորով հարուստ հայ մարդը կարող է ունենալ այս զգացողությունը.

*Թող զիս կոչեն գեղեցկության սրնգահար,
Կամ առաքյալ գաղափարի լուսանվեր,
Թող զիս կոչեն մերթ սիրահար եւ մերթ զինով,
Միայն թե, կյանք, քեզ միշտ գրկեմ զույգ թեւերով: ¹⁶⁵
(«Առաջին ողջույն»):*

Մ.Իշխանը, իրավամբ տառապում էր աշխարհի ցավով: «Աշխարհի ցավով հիվանդ է հոգիս», - բացականչում է նա: «Տառապանք» ժողովածուն եւ՝ ազգային, եւ՝ համամարդկային ցավի արդյունք է: Հայրենիքի կարոտը այստեղ ընդգծվում է նոր երանգով: Նրան կրկին հուզում է տարագիր հայության ճակատագիրը: Ազգային այդ տառապանքի եւ տագնապի արդյունք է «Օրոր» բանաստեղծությունը, որը պատգամ է ուղղված ոչ միայն իր որդուն, այլ նաեւ հայ նոր սերունդներին.

*Օրոր, տղաս, օրոր ըսեմ՝ շուտ մեծանաս,
Անմահ փառքի դափնիներուն տիրանաս
Օր մը հանկարծ քեզմով իմ տունս շեննա
Եվ հայրենիքն ալ քու անվամբ պարծենա: ¹⁶⁶
(«Օրոր»):*

Մանկան օրորոցի մոտ բանաստեղծը չի մոռանում օտար ափերում հայի դիմագիծը պահպանող հզոր գործոնը՝ մայրենի լեզուն: Նա խորհուրդ է տալիս ամուր պահել «Այսքան քնքույշ՝ մեսրոպահունչ հայ լեզուն», այն «Պապենական մեր մեծասքանչ» բարբառն է, մեր ոգին, մեր ապագան: Այդ բնութագրումների հյուսվածքի մեջ բանաստեղծը խորհուրդ է տալիս որդուն.

*Խոսե՛, տղաս, խոսե՛ անվերջ մեր լեզուն,
Այսպես հպարտ եւ երկյուղով սրբազան,*

*Եթե հանկարծ զիս չգտնես օր մը դուն,
Եվ մինչեւ իսկ շուրջդ ոչ ոք խոսի զայն...: 167*

(«Քու լեզուդ»):

Մ.Իշխանի հայրենապատումի մեջ աստիճանաբար ձեւավորելով է վերածնված երկիրը տեսնելու ձգտումը: Նրա քնարական հերոսը իրեն ճանաչում է որպես «շառավիղ Հայկազյանց, հոգու ժպիտ, հայու լաց», ափսոսում, որ լինելով «Մասսյաց որդի հարազատ», Մասիսը չի տեսել: Նման վիճակում նա ժխտում է մահը. «Ինչպե՞ս աչքերս փակեմ, երբ որ, ով մահ, զիս կանչես, ես Մասիսը չտեսա»: Նման խոհերը առավել ընդգծվեցին բանաստեղծի «Արեւամար» եւ «Իրիկնալույս ռումբերու տակ» ժողովածուներում: Մ.Իշխանը սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ անչափ զգայուն էր: Տազնապների եւ ինչուների տարափն է զգացվում նրա երգերում: Նրա ցավը ավելի է խորանում՝ տեսնելով ցանուցիր եղող «մարմինը», «Կացք ու երդիք» չունեցող հոգին: Բանաստեղծը ամեն դեպքում փրկության միակ ելքը տեսնում է հոգու կայունության մեջ: Հայրենիքի հանդեպ եղած կարոտն ու նրա

վերագտնելու բաղձանքը պետք է միշտ բորբոք պահել, նման դեպքում միայն «Երթը դարձի հրաշալիք կը դառնա Եվ կը ծաղկի հին այգին» եւ մոտոյ կլինեն «Արաքսն ու Մասիսը»: Ուտքերի տակ հայրենի հողը կորցրած, երազային պատրանքներով ապրող սփյուռքահայի համար հայրենիքի ամբողջական պատկերը Մ.Իշխանը ներկայացնում է մայրենի լեզվի պահպանման պահանջով: Աշխարհի չորս ծագերում հայի լեզուն դառնում է «տունը հայուն», «ուր կը մտնե ամեն հայ իբրեւ տանտեր հարազատ»: Նա միաժամանակ ներկայացնում է եւ՝ հայոց լեզվի գեղեցկությունը, եւ՝ նրան հակադրում «մոռացության մութին տակ» թաղվելու վտանգը: Հայ մարդու հոգում դրամատիզմի մի նոր երեւոյթ է Երեւան գալիս եւ դարձյալ լուծվում բանաստեղծի լավատեսությամբ. «Հոն է միայն, որ կրնա գտնել ամեն հայ կրկին խաժամուժին մեջ օտար կորսնցուցած իր հոգին» («Հայոց լեզուն տունն է հայուն»):

Սփյուռքահայ բանաստեղծների հայրենապատումը տարիների հետ ավելի կոնկրետացավ ի դեմս Վերածնված Հայաստանի: Ինչքան էլ գտնվեցին քաղաքական ուժեր եւ առանձին մտավորականներ, որոնք չէին հրաժարվում Խորհրդային Հայաստանը ժխտելու իրենց քարոզից, միեւնույն է, պատմության ընթացքը արդարացրեց Ե.Չարենցի հայրենասիրության նոր սկզբունքը, հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի միասնության նոր ընկալումը, ժողովրդի փրկության հույսը հավաքական ուժի մեջ տեսնելու նրա մարգարեական պատգամը: Քայլ առ քայլ հայրենասիրության սահմանները ավելի ընդարձակվեցին, կորուսյալ հայրենիքի ցավին գունարվեց վերածնված երկրի հույսը եւ

Երկուսը միասին հուլովեցին որպես ազգային ոգի: Բանաստեղծները ավելի պարզ ընդգծեցին ժողովրդի պատմական ճակատագրի բեկունը հայկական նոր իրականության ֆոնի վրա: Այդ նոր խմորման առաջին արձագանքը եղավ *Կարապետ Սիտալի* (1891-1972) բանաստեղծությունը: Հրապարակախոսական ոճային երանգներով Սիտալը մերթ ողջունում է Սովետական Միության կազմի մեջ Հայաստանի նոր կյանքը. «Արիավիրքի գիշերից վերջ՝ ժողովրդի արյունով թաց՝ դու ծագում ես ահա շքեղ, հաղթանակի վառ լուսաբաց» («Երգ լուսաբացի»), մերթ իր երազանքի իրականացումը համարում մայիսմեկյան ցույցերը («Մայիսի մեկ»), մերթ փառաբանում հաղթանակի շքերթն ու վիշապաքաղ կարմիր բանակին, ապա հնչեցնում նոր հորովելը, միշտ մնալով հայրենի փրկված երկրի կարոտի հետ՝ մտովի գնալով նրա մայրական գորովագույթ գիրկը.

*Երբ իմ հոգին ընկճած է ու տրտում
Այս ափերին սառն ու հեռու հեռավոր,*

*Լսում եմ իմ հայրենիքն ինձ է կանչում
Մթուն փայլող մի լույսի պես փառավոր:*

*Եվ ճամփորդի նման խոնջած ու մոլոր
Ես իմ քայլերն դեպի այդ լույսն եմ ուղղում,
Մինչ գնալով մեծանում է լույսն այդ վառ.-
Արեւն ինչպես միջօրեի երկնքում:*

*Եվ իմ հոգին փթթում է զառ զարման պես,
Ծաղկոցն ինչպես արեւի ջերմ զգվանքում*

*Եվ զնգում է քարավանն իմ լուսատես
Ինձ տուն տանող հայրենիքիս ճամփեքում: 168
(«Հայրենիքի հրավեր»):*

Բանաստեղծ **Դելը** (Սարգար Ղարաբեկյան) (1901-1976) Խորհրդային Հայաստանի մեջ տեսնում է հայ ժողովրդի ստեղծարար հանճարի խտացումը, այն համարում հրաշքների երկիր, որի քաղաքամայր Երեւանը միշտ կանչում է իրեն մայրական գորովանքով, եւ նա դարերի կարոտով գալիս է իր սիրտը ընծայելու նրա ծաղկումին: Դելի երազը կոնկրետ ու շոշափելի է: Նա հրաշքների երկիրը տեսնում է Սեւանի ջրերի ծփանքներում, քաղաքների հառնումի մեջ: Նրա քնարական հերոսը առանց հայրենի երկրի չի պատկերացնում կյանքը.

*Պիտի ծախրենմ անեզր երկինքներով քո ջինջ,
Պիտի ծուլվենմ քեզ հետ ամբողջական հոգով,
Պիտի փարվենմ հզոր Արարատիդ լանջին,
Պիտի պաշտենմ, պաշտենմ վառ արշալույսը քո: 169*

Վերածնված հայրենիքը Դելի համար հայ ոգու անկասելի հանգրվանն է, նրա լեզուն, երգը, պատմությունը, բյուրանուն կոթողները, արվեստը, որին միայն սիրել է պետք («Հոգեհատոր հայրենիքը մեր»), նրա հայացքի դեմ հայրենի երկրի աշունը ոսկի է մաղում, ամպերը ադամանդներ են, «էլ չկա նախկին թախիծը», «Աշունն էլ տխուր չի բերում» («Հայրենի աշուն»): Հայրենիքը սիրել ու փայփայել է պետք, որովհետեւ նա է մեր «երկնահաս սերը», մեր «վերջին կայանը» («Իմ երկրի գովքը»):

Սփյուռքահայ բանաստեղծների հայրենապատումի ընթացքը, ցավոք, հաճախ, զիգզագվում էր քաղաքական ուժերի միջամտությամբ: Եվ այսօր այդ երեւոյթը պետք է իր գնահատականը ստանա, որովհետեւ հայոց համազգային կյանքը շարունակվում է բաժան-բաժան, հայ ժողովրդի գերակշիռ թիվը բնակվում է արտերկրներում՝ քաղաքական ուժերի ղեկավարությամբ: Սփյուռքը կա եւ երկար կտելի: Բնականոն համարենք, թե ոչ, փոքրաթիվ մեր ժողովուրդը այսօր ականատես է 50-ից ավելի քաղաքական կուսակցությունների գոյությանը:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին, երբ դաշնակցության ղեկավարները իշխանությունը հանձնել էին բոլշեւիկներին, շուտով հուսախաբ եղան: Հակառակ հաշտվելու պայմանավորվածությանը, Երեւանի բանտերը նետվեցին հարյուրավոր մտավորականներ, հայ ազգային-ազատագրական պայքարի ասպետներ: Բանտախցերում առանց դատի դաժանորեն կացնահարվեցին ժողովրդի անմեղ շատ զավակներ: 1921-ի փետրվարյան դեպքերի բերումով բոլշեւիկյան սպանդից փրկվեցին Ավ.Ահարոնյանը, Ն.Աղբալյանը, Լ.Շանթը եւ ականավոր այլ գործիչներ: Հեռանալով հայրենիքից, նրանք չէին կարող մոռանալ այդ արյունոտ դեպքերը: Սեպ խրվեց դաշնակցական եւ կոմունիստական կուսակցությունների միջեւ: Քաղաքական անհանդուրժողականությունը փոխադրվեց նաեւ գրականության ասպարեզ: Եղան դեպքեր, երբ սփյուռքի առանձին բանաստեղծներ, որոնք հանդես էին գալիս Խորհրդային Հայաստանի նոր կյանքի գեղարվեստական պատկերումով, ենթարկվում էին

անցանկալի վերաբերմունքի՝ դաշնակցության կողմից: Ու՞մ մեղադրել: Դաշնակցությա՞նը, թե՞ կոմկուսի՞ն: Ժամանակն է՝ մերժելու ուզածդ քաղաքական ուժի միջամտությունը արվեստի ներկայացուցիչների ստեղծագործական աշխատանքին, որովհետեւ կյանքն ապացուցել է նման միջամտության կործանարար հետեւանքը: Վկան՝ սփյուռքի ստեղծագործող մտավորականության օտարունը Խորհրդային Հայաստանում ապրող մայր ժողովրդի մի մասից, իսկ վերածնված հայրենիքում՝ «դաշնակցական» բառով մարդկանց որակումը որպես «ժողովրդի թշնամի»: Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Եսայանի ողբերգական մահը, Գ.Մահարու, Մ.Արմենի, Վ.Ալազանի, Վ.Նորենցի եւ ուրիշ գրողների արքունիկ կյանքն ու ստեղծագործական խաթարումը անանցանելի ցավ է: Պատմության դասերը չպետք է մոռանալ: Արվեստի ներկայացուցիչների հանդեպ քաղաքական խաղերի բացասման երազանքի մասին է վկայում Ե.Չարենցի նամակներից մեկը. 1922-ի մարտի 20-ին մեծ բանաստեղծը Մոսկվայից նամակ է հղել Գ.Ադամյանին, որտեղ բանաստեղծ Գառնիկ Քալաշյանի մահվան առիթով ընդգծել է. «Գիտես, ինչ-որ եղերական բան կա այն բախտի մեջ, որ վիճակվել է մեր սերնդին, մանավանդ մեր արդի գրական սերնդին: Այնպիսի մեծ գրական մարդը, ինչպիսին էր Տերյանը, որը, այսպես թե այնպես, միակ սյունն էր մեր ետ-թոււմանյան ստեղծագործության - մեռավ, եւ կարծես ոչ-ոք չնկատեց այդ մահը, ոչ-ոք չզգաց նրա եղերականությունը եւ այն բացը, որ մնաց մեր գրականության մեջ Վ.Տերյանից հետո: Այդպես եղավ Վ. Տերյանի մահվան ժամանակ, պարզ է, որ Գ. Քալաշյանի մահը ավելի պիտի

աննկատելի անցներ, քան Տերյանինը: Այնպիսի կորուստներ, ինչպիսիքն են Վ.Տերյանը եւ Գ.Քալաշյանը, կարող են միմիայն անձնական բարեկամներն զգալ եւ մեկ էլ մի երկու ինտելիգենտներ, որոնք հոգեկան նույն խառնվածքն ունեն եւ մարդկային նույն բախտը, ուրիշ ոչինչ: Այնպիսի արհավրալից օրերին, ինչպիսին ապրում ենք մենք հիմա - երկու պոետների մահը ավելի չէր կարող նկատելի լինել, քան այն, ինչ որ եղավ, այսինքն Վ.Տերյանը մեռավ այն ժամանակ, երբ Հայրենիքում դաշնակցականներն էին, որոնք եւ ուշադրություն չառան պոետի մահը, որովետեւ նա բուլշեիկ էր, իսկ Գ.Քալաշյանի ժամանակ Հայրենիքում բուլշեիկներն էին, որոնք նույնպես ավելորդ համարեցին նկատել պոետը՝ որովհետեւ նա դաշնակցական էր: Եթե մենք, պոետներս, մի քիչ նամուս ունենայինք - վաղուց պիտի հրաժարվեինք պոետ լինելուց... Երբ այն, որի համար ամեն ինչ կարող ես զոհել, որը նպատակն է կյանքիդ՝ ամենայն հեշտությամբ ծածկվում ու կորստյան է մատնվում, որովհետեւ դու բարի պոետ լինելուց եղել ես եւ... քաղաքացի: Ռադի բոգա, սպանեք քաղաքացուն, բայց մի մոռանաք պոետը: Քաղաքացին այսօր է, պոետը՝ միշտ: Քաղաքացուն կարող եք սպանել, պոետին - ոչ երբեք: Քաղաքացուն պետք է սպանել, եթե նա վնասակար է օրվա տեսակետից, բայց պոետը, եթե նա իսկական պոետ է եւ ոչ «հանգաշար քաղաքացի», որքան էլ վնասավոր թվա օրվա տեսակետից՝ օգտակար է «պոդ զնակոմ վեչնոստի»:...

...Վ.Տերյան եւ Գ.Քալաշյան: Երկու պոետ: Երկու քաղաքացի: Մեկը դաշնակցական, մյուսը բուլշեիկ: Ֆրոնտում կսպանեին իրար կամ Չեկա կնստեցնեին: Բայց

իրենց սրտում, իրենց էության ամենախնտիմ խորքերում ինչքան են նման իրար: ...Փառք նրանց եւ հավետ օրհնություն նրանց հիշատակին»: ¹⁷⁰

Չարենցի սրտացավ անհանգստությունը եւ մարգարեական խորհուրդը հնչեց որպես ձայն բարբառո անապատի, որովհետեւ հայոց երկու խոշոր քաղաքական կուսակցությունները ժողովրդի ազատությունն ու երջանկությունը շահարկում էին՝ հանուն իրենց քաղաքական ամբիցիաների, ժողովրդի լայն զանգվածներին անջրպետելով միմյանցից, արվեստի ներկայացուցիչներին համարելով սոսկ սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ծրագրերի իրականացմանը ծառայող հլու հպատակներ:

Նրանք բանաստեղծին համարում էին ոչ թե աստծո քարտուղարներ - «խալխի նոքար», այլ իրենց կաղապարների մեջ առնված գաղափարակիցներ: Գրողի կուսակցությունը իր ժողովուրդն է: Նա պետք է ազատ լինի քաղաքական կուսակցությունների պարտադրանքից, Թումանյանի բնորոշմամբ հանդիսանա «ժողովրդի սիրտը»:

Հետպատերազմյան շրջանի սփյուռքահայ պոեզիայում լայն տեղ գրավեց ներգաղթի բանաստեղծական պատկերը: Նոր կարոտի երգը ծածանվեց իրական եւ երազային հյուսվածքներով: Վ.Վահյանն այս անգամ եւս առաջին շարքերում էր: Նրա «Առաջին նավն հայրենադարձ» բանաստեղծությունը դրա արձագանքը հանդիսացավ: Հայրենիքը կորցրած հայ մարդու համար այդ պահը արժանապատվության վերականգնման ժամանակահատված էր: Վ.Վահյանը ոչ միայն բանաստեղծություններով, այլեւ իր խմբագրած «Անի» ամսագրով

հայրենասիրական դաս տվեց նորերին: *Անդրանիկ Թերզյանը* (1927-1952) այն նորերից է, որի «Արեւելք» խորագիր կրող առաջին ժողովածուի միջով կարմիր թելի պես անցնում է խանդավառ հայրենադարձի ապրումը.

*Կայներեն վար կը կախվին կարծես դարերը խավար,
Կարծես սրտերը բոլոր պիտի հավետ ընկղմին,
Երբ կը շարժի նա՛վն ահա ու բազուկներ անհամար
Կըլլան բռունցք ու հարված վաղվան կարմիր պայքարին: 171*

Հետագայում հայրենիքի թեմային անդրադարձավ փորձառու բանաստեղծ *Ջարեհ Մելքոնյանը* (1923): Նա պոեզիա բերեց այն ճշմարտությունը, որ կյանքը չի դոփում մի տեղում, ինչ որ ուժ փոխում է ամեն ինչ, հնին փոխարինում է նորը, մարդը նոր ընկալումներով է գնահատում կյանքը: Երկրորդ համաշխարհայինից հետո ասպարեզ եկան նոր դեմքեր: *Ջ.Մելքոնյանը* հնչեցրեց հայրենասիրական ջերմ խոսքը, նշելով, որ ինքը հայրենիքը սիրեց «սիրտով, միտքով ու ավերով գաղթականի»: Նրա համար երազների մեջ հայրենիքը միշտ իրական է եղել: Բանաստեղծը պատշաճն է մատուցում արաբական աշխարհի ժողովուրդներին, որ դեռեւս գտնվում էին գաղութարարների լծի տակ: Եվ երբ սկսվեց հայկական հայրենադարձությունը, արաբները հասկացան գաղթական հայերին եւ ջերմ վերաբերմունքով ճանապարհ դրին նրանց:

Ջարեհ Մելքոնյանի «Ջրհեղեղեն հետո» գրքում պատկերվեց նաեւ այդ երեւույթը: *Սմբատ Տերունյանը* խորհրդային Հայաստանին երախտիքի իր խոսքն ուղղեց ամբողջ սփյուռքահայության անունից: Սփյուռքի

լինելիությունը եւ հայաշունչ հարատւելը կապվում է հայրենիքի հետ, հայրենի հողի վրա ապրող հայ մարդու հետ: «Մենք ձեզի հետ քալեցինք թեւ վախով ու գաղտնի»-գրեց Ս. Տերունյանը, իսկ *Ահարոն Տատուրյանը* ընդգծեց. «Չունենալ, ոչ մի բան, ընկեր, բայց ունենալ հայրենիք»:

Հայրենադարձության օրերին սփյուռքահայ գրողների մեծ մասը հոգու մեջ առավ հայրենիքի պատկերը՝ նրանում տեսնելով ժողովրդի ապագան: Առաջիններից էր *Անդրանիկ Ծառուկյանը* 1913: Դեռեւս 1945-ին գրած նրա «Թուղթ առ Երեւան» ստեղծագործության մեջ բանաստեղծը հաստատեց, որ ինքը հայրենիքի հետ է, որն աշխարհին հայտնի է դարձել որպես «շինարար, կենսուրախ, լուսավոր ու հաղթական» երկիր: Այսպես, հիսուն-վաթսունական թվականներին սփյուռքահայ հայրենասիրական պոեզիան ապրեց իր ոսկե դարը: Հին կարոտը փոխակերպվեց հայրենիքին ուղղված նոր կարոտով:

Պոետական իր բեղուն գրչով եւ քաղաքացիական պաթոսով հետաքրքիր հայտ ներկայացրեց *Գ. Աղդարյանը* (1925-1986): Բանաստեղծական առաջին քայլերից սկսած մինչեւ իր կյանքի վերջը Աղդարյանը գտնվեց «Պատնեշի վրա», որ նրա անդրանիկ գրքի խորագիրն է: Գառնիկը համայնավար էր: Դրանով պետք է բացատրել գաղափարայնացված հռետորիկայի առկայությունը նրա որոշ երգերում, ինչը չի խանգարել նրան՝ սեփական ժողովրդի ճակատագրով մտահոգված քաղաքացի-բանաստեղծին:

Գառնիկ Աղդարյանը ներկայացավ իբրեւ իր հայրենի «երգի, բերքի ժառանգորդը»- թափանցելով հայ

ժողովրդի պատմության խորքերը, հոգու մեջ կրելով Հայաստան աշխարհը: Աղդարյանը հպարտությամբ էր ընդգծում, որ ինքը «Հեռավոր Հայկի Թոռն է», «Վարդանի կողքին կռվող զինվորն արի»: Բանաստեղծը գիտակցում էր արվեստագետի, առանձնապես հայ բանաստեղծի դերը Սփյուռքում.

*Խորհի՛լ հիմա,
Որ մոլորող տղու մը կու՛յր քայլերուն դեմ,
Գիրքս կրնա դառնալ երկի՛րն հայրենական,
Եվ բաբախող տողերն անոր՝
Երեւանին տանող ծամփա մը լուսահորդ: ¹⁷²
(«Նախերգանք»):*

Գ.Աղդարյանը ընդգծում էր. «Մեռնիլ գիտնալ որպես-
զի ապրիլ սորվիս»: Երեւանը համարելով «Նավ մը...
բաբախուն», բանաստեղծը հաղթական քայլեց դեպի
վերածնված Հայաստան: Ճամփաների երազը եւ Հա-
յաստանի իրական պատկերը նրա հոգում միասնական
էին: Նա հոգու լուսամուտներից միշտ նայում է փրկված
երկրին ու ապրում դրանով: Բանաստեղծության հյուս-
վածքի մեջ շնչավորվում են քնարական հերոսի հույսը՝
երկրի ծառերի, տների, ծաղիկների ծփանքով: Այդ հույ-
սին գունարվում է մարդկային ամենաերջանիկ զգա-
ցումը. «Կապրիմ ամեն մարդու մեջ, ամեն մարդ մեջս
իմ կապրի»: Աշխարհում տուն ունեցող քաղաքացու
հպարտությունը նրան կրկին տանում է դեպի նախնի-
ների հիշատակը պահպանող հայրենի լեռները. դեպի
ապրող, շնչող, թեվաբախող Հայաստան.

*Հայրենի տուն ես դուն լոկ, մինչ հայրենի՛քն է անհուն,
Կաղնի մըն ես դու հսկա՝ անտառին մեջ աշխարհի,*

Գիշերիս մեջ ջափ ես դուն, ու երիվարն օրերուն
Ամեն, ամեն ճամփայե գիս միշտ քեզի կը տանի: ¹⁷³
(«Ես կը քալեմ հաղթական»):

Բանաստեղծը ողջունեց հայրենադարձությունը, որպես տունդարձի շեփորահար: Նա գիշեր ու տիվ, քուն թե արթուն հոգին «Երկնքին դեմ» դրոշ դարձրած, փարվում է հայրենի երկրին: Նա տարագիր հայության փրկությունը տեսնում էր հայրենիքի գրկում («Հայրենադարձ»): Ադրարյանի երգերում վերածնված Հայաստանի գոյությունը սփյուռքում ապրող հայի լինելիության ավիշ է, իր պատմական արձատներին վերադարձնող, դարավոր պայքարին միացնող, երգերին հյուսող զգացում: Մի ժամանակ «Սմբակներու ներքե՛ մեռնող» հայ մանուկը արդեն իրեն ներկայացնում է որպես «ցավին դեմ կանգնող բանվորներու բանակ»-ի մի զինվորը եւ հայտարարում, որ ինքը Հայոց աշխարհին մեջ անեզրական բերք է, բարձունքներու նայող երջանիկ սերունդ, նոր շեշտերով հնչող Կոմիտասի ձայն...

Նա խոսում է մի անբողջ ժողովրդի անունից, իր մեջ փայփայելով ազգային հավաքականության գաղափարը.

Այլ ես՝ դարերուն մեջ կանգնող Նաիրյան լեռ,
Պատմության մեջ անձիր՝ հավերժական ես բոց,
Եվ մարդկության անհուն երկինքին մեջ՝ անմեռ
Աստղի մը պես ժպտող՝ ես ժողովուրդ Հայոց: ¹⁷⁴
(«Ես՝ ժողովուրդ Հայոց»):

Գ.Ադրարյանի «Մատյան ցավի եւ հատուցման» պոեմը՝ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի յուրովի պատասխանն է: Բանաստեղծը չի կորցնում

Իհավատը մայրենիի պահպանման հանդեպ, կոչ է անում նոր սերնդին չլքել դիրքերը, մնալ անդավաճան, «պահել միշտ հույսն իր հաստատ».

*Հերքել նահանջն առանց երգի,
Երգը հեգել դիմադրության,
... Ողբին վերջին վանկերն անգամ՝
Փոխվին երգի եւ օրհնության ...
... Վերջին հայը՝ որ է՝ դեռ հայ,
Դառնա գրկին հայրենական,
... Արարատը գերեվարյալ՝
Քալե հանկարծ դեպի Արաքս,
Քալե դեպի Մայր Հայաստան...: 175*

Բանաստեղծը ինչպիսի ոգեւորությամբ ողջունում է հայրենադարձությունը, նույնպիսի ցավով մերժում է արտագաղթը: «Արտագաղթ» բանաստեղծության համար բնաբան բերելով Ս.Կապուտիկայնի հետեւությունը. «Լքել հիմա Հայաստանը, միեւնույն է, թե անցյալ դարերում լքել Ավարայրի դաշտը եւ մենակ թողնել Վարդանին, միեւնույն է, թե առանց դիմադրելու, հակառակորդին հանձնել Անիի բանալիները»: Գ.Ադարյանը ապրում է մարդկային ամենաժանր կսկիծը, զգում «Ներքին սպառումն արեւատենչ այն ծառին, Որուն ճյուղը նորածիլ կը կոտրատեն բրտորեն»: Հայրենադարձության երջանկաբեր պահն ապրած քնարական հերոսը վիրավոր հոգով տառապում է «Մեկնումներու զառիվար»-ով.

*Կը նայիմ վեր - կռունկը, հուզաթաթավ մրմունջով,
Հարց կուտա-ու՞ր, ու՞ր կերթաս, կրկին դարի՞ք ըլլալու,*

Կրկին ինձնե խնդրելու խապրիկ ու հույս հեռավոր,
 Ու՞ր կերթաս, ու՞ր, լքած բույն, մոռցած մայր եւ ստնտու: 176
 («Արտագաղթ»):

Ծավալուն այս բանաստեղծության մեջ երկու հար-
 ցադրում հակադրված են միմյանց: Առաջինը «Դարձի
 դողանջն է հայոց», երկրորդը՝ նրան հաջորդող «Ինչ-
 պե՞ս հանկարծ կը փախչիս»: Այս տազնապին մասնա-
 կից են արվում տուն ու օջախ, հող ու սար՝ որպես նախ
 «լքումին դեմ բողոք», եւ ապա «պաղատանք», որ
 չլքեն հայրենի երկիրը: Բանաստեղծը հիշեցնում է պա-
 պերի աճյունները, անթաղ հայրերի դիակները, թափած
 արյունը: Արտագաղթը, այսպիսով, որակվում է որպես
 «անյաթաղան անկում»: Հայրենալքման այս ծանր բո-
 թից ցնցվում են Մասիսը, Վանը, Անին: Բանաստեղծու-
 թյան քնարական հերոսը հայրենալքումը համարում է
 մահ եւ միաժամանակ հայացքն ուղղում մորը, ասել է
 մայր երկրին. «Մա՛յր, մի թողուր, որ մեկնիմ՝ քեզի հա-
 մար ու ինձի...»:

Գ.Ադդարյանի հայրենապատումը հայրենի երկրին
 կառչելու, նրա մեջ ինքնության հաստատ ակունքը գտ-
 նելու կոչ է. «Ես պիտի միշտ, դարձյալ, կրկին ու հա-
 վիտյան կառչեմ հողին, հողին կառչեմ իմ պապերուս՝
 իբրեւ միակ փրկության լաստ ու միակ հույս» («Սա կա-
 րոտը» շարքից): Շարքի մեջ բանաստեղծը էջ առ էջ բա-
 ցում է կարոտի ու ցավի, տազնապի եւ հույսի չմարող
 սարսուռները: Քնարական հերոսի հոգու վրա կարոտը
 մերթ մաղվում է անձրեւի պես, մերթ խենթանում, մերթ
 դառնում երջանկության զգացում, երբ Երեւանի մեջ է
 եւ քայլում է Աբովյանով, մերթ էլ Սեւանի ափին բացեի-

բաց հայտարարում, «Չոգիս լվամ այս ջուրերուն մեջ անապակ՝ Օտարության ձեռքերուն պիղծ շփումներէն, Դեմքս լվամ Գաղթականի դառն ու մռայլ կնճիռներին»:

«Սա կարոտը» շարքում Գ.Ադդարյանը սակայն չի սքողում այն խորթությունը, որ ծլարծակել է որոշ հայերի հոգում Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Բանաստեղծը նրանց համարում է կարոտազուրկ խորթ զավակներ («Ուրիշներուն ալ կարոտը»), ապա ուխտադրժության խարանի հետքը տեսնում այն հայերի ճակատներին, որոնք Հայաստան ասելիս հոգիները չեն սարսռում:

*Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, անթիվ վա՛յ ինձ,
Եթե կարդամ Նարեկացին, եւ խոցի տեղ՝
Մտածումիս կողերուն մեջ
Դողը զգամ ես սառնության,
Եթե կանգնիմ Ավարայրի բեմին վրա,
Ու դերին հետ մարմնավորվող
Դերասանին տեղ հանճարեղ՝
Դառնամ դիտող մը անհաղորդ,
Եթե հասնիմ մինչեւ Մաշտոց,
Եվ լեզվիս դեմ՝
Այբբենգիմի աղոթին տեղ աստվածային՝
Հնչեն վանկե՛րն օտարամուտ շվայտության: 177
(«Փսխուն ուխտադրության»):*

Գ.Ադդարյանի հայրենասիրությունը կարոտից վերածվում է հայրենաբաղձության: Սրանք նուրբ հասկացություններ են՝ մեկը մյուսով պայմանավորված, սակայն մեկը մյուսին նոր իմաստ հաղորդող: Հայրենաբաղձությունը ավելի ջերմ, ավելի ընդգծված երազ է,

որի գույները սկիզբ են առնում Հայրենի երկրից, հանգրվանում իր գրկում, բորբոքում հայրենադարձության ծարավը: Ադդարյանի քնարական հերոսի գիշերները որոնումների պահերն են, որոնց արդյունքում նա բացում է սիրտը եւ տեսնում նրա խորքում Հայաստանի «Կուտակված ներկայությունը», իրենց «անխառն միաձուլումը վերջնական» («Գիշեր որոնման»):

Սփյուռքի ճակատագրի հանդեպ նրա տազնապները շարունակ հորձանք են տալիս: Կպահպանվի՞ արդյոք հայախոս, հայադեմ, հայաբնույթ սփյուռքը, թե կանհետանա, ինչպե՞ս փրկել այն, ինչ՞ ուղիներով կապվել վերածնված Հայաստանի հետ: Գ. Ադդարյանը ձգտում է այդ հարցերին պատասխանել «Սփյուռք» պոեմով: «Ո՞վ եմ ես հիմա, ու՞ր եմ, ի՞նչ եմ արդյոք»...Դրանցում զգացվում են եւ բանաստեղծի տազնապները, եւ դեղատոմս հանդիսացող պատասխանները: Եթե տարիներ առաջ Ադդարյանը փորձում էր Շ. Շահնուրի նահանջին դիմադրողական մթնոլորտ ստեղծել, ապա այս անգամ նա հաստատում է ականավոր գրողի ցավը.

*Հայրենական տունիս մեջ անթեղված կրակն
Անթեղեցի կրկին՝ ամեն տան մեջ օտար,
Բայց քամիներն անսանձ տարին մոխիրն անգամ
Ու կրակը հազիվ ապրող կայծ է հիմա: ¹⁷⁸
(«Սփյուռք»):*

Դեռ ավելին: Անվանի բանաստեղծը սփյուռքը ներկայացնում է «հիվանդ, անբուժելի ցավով, Անբուժելի վերքով, զոր կը կոչեն եղեռն»: Սփյուռքի դիմագիծը պահպանող «պարտիզական արդեն զառամած է

կարծես, եվ արելը դեպի իրիկնամուտ կերթա»։ Պոեմի դրամատիզմը ներկայացնում է Սփյուռքի արյամբ գրված առաջաբանի եւ արտասուքով գրվելիք վերջաբանի տեսքով։ Սակայն հայրենասեր բանաստեղծը ջանում է գտնել Սփյուռքի այն վերջին ճամփորդ-բանաստեղծին, որ կկարողանա ստեղծել նոր էջեր, գուցե եւ «հայոց հողին վրա»։ Բանաստեղծը այստեղ երգի մեջ է բերում հայրենական հողի եւ կարոտի միասնությունը, ոգին, սերը, հավատքը.

*Բայց ո՞վ եմ ես հիմա, ո՞վ է մայրս արդյոք...
Ես սփյուռքն եմ հայոց,
Մայրս՝ կտոր մը հող...
... Եվ այդ կտոր հողը
Մեկնակե՛տն է միակ՝ ներկա իմ խոյանքիս
- Գալիք մեր հաղթության: 179*

(«Սփյուռք»):

Սփյուռքահայ բանաստեղծության ընդհանուր ապարեզի վրա հայրենապատումի մեջ ոճական տարբեր երանգներով նույն հարցադրումներն ու պատասխաններն են հոլովվում Վահրամ Մակյանի (1926) «Տուն հայրենի», «Գնա, ընկեր...», «Հայրենական», «Մենք, տղաներն սփյուռքի», Վարուժան Պետիկյանի (1927) «Այս քարը սեւ», «Նավն Սփյուռքին», Պեպո Սիմոնյանի (1937) «Ողջյուն քեզ, Հայաստան», «Մենք, սերունդ տարագիր», Վեհանույշ Թեքյանի (1948) «Քանի որ ես այդտեղ չեմ», Կարիկ Պասմաճյանի (1947) «Հայաստան», «Երկիր» եւ այլոց ստեղծագործություններում:

Ի՞նչ է ժամանակակից սփյուռքը եւ ի՞նչ խմորումներ ունի սփյուռքահայ գրականությունը: Այս հարցին պատասխանելու համար բավական է դիմել 1994 թ. լույս տեսած «Սփյուռքահայ արդի գրականություն» սովորածավալ երկհատորյակին, որի Ա. հատորը բաղկացած է մոտ 500, իսկ Բ. հատորը՝ մոտ 800 էջից, երկուսն էլ շքեղ հրատարակությամբ: Երկու հատորներն էլ խմբագրել եւ համադրել է հայտնի բանաստեղծուհի, գրականագետ - մանկավարժ, լրագրող, հասարակական գործիչ Սեդա Ծաղիկյան Տեմիրճյանը: Սեդան բանաստեղծությունների եւ պատմվածքների այս երկու հատորները նվիրել է իր կյանքի ընկերոջը՝ Սարգիս Տեմիրճյանին, որ ամեն տեսակետով զորավիգ է կանգնել իրեն: Հսկայածավալ այս հատորները հրատարակվել են սփյուռքի թվով 55 գրասեր ազգակիցների նվիրատվությունների շնորհիվ:

Ա. հատորը ամբողջությամբ ընդգրկում է պոլսահայ գրականությունը, Բ. հատորը՝ աշխարհի տարբեր գաղթօջախներում ապրող գրողների ստեղծագործությունները: Այնքանով, որքանով մեզ հետաքրքրող թեման կոնկրետանում է հայրենասիրական մղումների բանաստեղծական շրջանակներում, ուստի կձգտենք լուսաբանել խնդրո առարկա թեմայի երանգավորման նոր աստիճանը, եւ ապա ելնելով սփյուռքահայ գրողների կարծիքներից, որոշ չափով պատասխանել Սփյուռք-Հայաստան այրող հարցերին: Որպես պատասխանի մուտք ավելորդ չենք համարում բերել Դանիել Վարուժանի այն մարգարեական դիտարկումը, որ որպես բնաբան բերել է Սեդա Ծաղիկյան-Տեմիրճյանը. «Ո՛վ

Կիտի կրնայ գրել այդ տառերուն պատմությունը, որոնք հրաշեկ գամերու պես գեղեցիկ գոյությունը հաստատեցին մեր մագաղաթներուն հավերժական հաստատութեանց վրայ: Աստուծային Ա - էն սկսեալ, որ աղօթքի մը նման բազուկները վեր կարկառած, դարերու ընթացքին երկինքն հաստատ բռնեց հայութեան գլխուն վրայ, մինչեւ ինքնամփոփ Ֆ-ն, որ յոյսի քղամիդին փաթաթուած, սիրտը միայն բաց, քալեց, քալեց դեպի արշալոյսները գալիք օրերուն. այդ բոլոր տառերը կարաւան առ կարաւան առաջնորդեցին մեր գոյությունը, մեր հայկականությունը մինչեւ ներկա դարերուն սեմին վրայ»: ¹⁸⁰

Դժվար չէ նկատել, որ Վարուժանը մայրենի մաշտոցագիր լեզվի հետ է կապել մեր ազգային գոյությունը: Պատահական չէ այս հատվածի ընտրությունը: Մենք մինչեւ այստեղ կատարած վերլուծումների մեջ համոզվեցինք, որ Սփյուռքի հայաշունչ գոյությունը եւ հայոց աշխարհի վերածնման գաղտնիքը կապված է Մայրենի լեզվի պահպանման հետ: Եվ այս առումով դժվար է գերազնահատել հայ գրչի մշակների խաղացած դերը, որի կապակցությամբ Սեդա Տեմիրճյանը իր երախտիքի խոսքն է ասում.

*Գրչի մշակներ,
վսեմ հոգիներ...
դուք սրտերու կեանք
ու մտքերու լոյս
տուող անմահներ...
Դուք փարոս անշեջ
ես արեւ անմար...:*

Ձեզնով ենք զարթնում
ձեզնով ենք արթուն:
Հայու վեհ հոգին
ձեզնով՝ սնանած՝
ձեզնով է ապրած:

Դուք ռահվիրաներ
գրչի ասպետներ...
թույլ տուեք որ ձեզ
գրկեն համբուրեն: ¹⁸¹

Հոգու թելերով գրկելով եւ համբուրելով հայ գրչի մշակներին, Սեդա Տեմիրճյանը «Առաջաբանի փոխարեն» խոսքում ընդգծում է. «Սրտապնդիչ է այն իրողությունը, թե 21-րդ դարու նախօրեակին, սփյուռքահայ գրողը կարտադրե տակաւին եւ յամառօրեն կը շարունակէ պայքարել այլասերման ահաւոր վտանգին դեմ՝ գերմարդկային ճիգերով կանգուն պահելու համար մեր գեղեցիկ ու փարթամ լեզուն եւ դարաւոր գրականությունը»: ¹⁸²

Պոլսահայ գրականությունը սկսեց աշխուժություն ապրել հետպատերազմյան շրջանում: Երեւույթը կապվում է Կարպիս ճանճիկյանի (1920-1946), Հայկազուն Գալստյանի (1920-1985) եւ Արամ Շավարշի (1917-1979) մուտքի հետ: Այդ առթիվ Բագրատ Թեվյանը գրել է. «Արդեն իսկ այդ տղաքը մեր ցեղին յատուկ ստեղծագործ ընդունակութեամբ կրցած են ինքնատիպ արուեստի նոր ուղի մը բանալ հայ գրականության մեջ»: ¹⁸³ Իսկ Ջարեհ Խրախունին 1991-ին ընդգծել է. «Որքան ուրախ, որքան հպարտ պետք է ըլլանք մենք ամենքս ալ, որ այսօր հոգ չէ թէ փոքր չափի վրայ, քանակը

կարելոր չէ այնքան - մենք ալ ունինք ինքնուրույն քերթողութիւն մը, որ թերեւս վերջին շրջաններու պատմութեան մեջ առաջին անգամ ըլլալով՝ կէս դար հեռուէն չի հետեւիր եւրոպական գրական դպրոցներու, այլ՝ անոնց հաւասար մակարդակի վրայ, ինքն ալ փոքր առ փոքր կը խմորէ հատ մը՝ նույնքան բարձրորակ, խոստմնալից, կենսունակ»։¹⁸⁴ Իսկ Հակոբ Կարպենցը պիտի հաստատի, «Կարպիս ճանճիկեանը մահացաւ 26 տարեկան հասակում։ Այդուհանդերձ իր երեւումը հայ գրականութեան երկնականարում ասուպային ցոլքից առաւել՝ եղաւ շրջադարձային, յատկապէս իստանպուլահայ բանաստեղծութեան բնագավառում»։¹⁸⁵

Հակոբ Կարպենցին գրավեց ճանճիկյանի պարզ, անմիջական, անպաճույճ ոճը։ Նա գրական հրաշքի համազոր երեւոյթ է համարում համաշխարհային առաջին պատերազմի ու մեծ եղեռնի պատճառած արհավիրքներից հետո Պոլիսը գրական նոր փնտրտուքների կենտրոն դառնալը։ *Հիրավի, Կ.ճանճիկյանը, Յ.Գալստյանը եւ Ա.Շավարշը պոլսահայ գրական նոր շարժման նախակարապետները եղան, որոնցից հետո 50-ական թթ. սկսած հանդես եկան Արմենուհի Թերզյանը, Ատրիսէ Տատրյանը, Վարուժան Աճեմյանը, Ջավեն Պիպեռյանը, Երվանդ Կոպեյանը, Ջահրատը, Ռոպեր Հատտեճյանը, Ջարեհ Խրախունին եւ ուրիշներ։*

Ի՞նչ տեղ է գրավում հայրենապատումը պոլսահայ բանաստեղծների ստեղծագործություններում եւ ի՞նչ երանգներով են նրանք արտահայտում իրենց անմարում կարոտն ու զգացումները մի այնպիսի քաղաքում եւ երկրում, որտեղ յաթաղանի զոհերը դարձան մեկուկես միլիոն հայեր, եւ այսօր էլ Պոլսում ապրող նրանց

Ժառանգները գտնվում են թալեաթածին հայացքների տակ:

Ծանոթանալով պոլսահայ բանաստեղծների ստեղծագործություններին, նկատում ես, որ նրանք երբեք իրենց մտքից ու խոհերից չեն հանում մեր պատմական հայրենիքի պատկերը, չեն դադարում ազատության առինքնող գաղափարից: Նկատելի է, որ նրանց հայրենապատումը ճակատային չէ, ավելի շատ իրենց զգացումներն արտահայտում են ենթաբնագրային արժարժումներով: Մի այնպիսի նուրբ բանաստեղծ, ինչպիսին *Կարպիս ճանճիկյանն* է, իր տարագրությունն իր իսկ տան մեջ արտահայտում է այսպես.

*Փողոցը նոյն տեղը կը մնայ
պանդոկին դուռը նոյն
մեր բզկտած հացին փշրանքները
կը մնան դեռ սեղանին վրայ
եւ փողոցի նայող
պատուհաններուն վարագոյրները
մեր վար քաշած վիճակին մէջ նոյն
մենք ինչու՞
նոյնը չմնացինք սիրելիս
դարձանք իրարու անձանաչելի: ¹⁸⁶*

(«Տարագիր»):

Կ.ճանճիկյանի հայրենասիրությունը իր նրբերանգներով երեւան է գալիս հողասիրության մեջ: Դիմելով հողին, նա հարցնում է. «Ինչպես կապրին մարդիկ երբ դուն չըլլաս»: Բանաստեղծը մեկ առ մեկ թվարկում է հողի բարենասնությունները եւ ապա անանցանելի կարոտով եւ վերադարձի հույսով ընդհանրացնում.

«հաւատա հող քեզի համար տրուած իւրաքանչիւր նահատակ» ապացույցն ես մեր սիրո.

*Թռչունները որ քեզմէ
իրենց ոտքերը կտրեցին
...Օր մը վերջապէս
դարձեալ քեզի պիտի դառնան
ու օր մըն ալ
երբ դուն օթեւան պիտի ըլլաս
մեր մարմինին,
մեծ բանաստեղծներ քեզի համար
քերթուածներ պիտի գրեն
էրնեկ մեզի
քու ծոցիդ մեջ պիտի ըլլանք: 187*

Մինաս Թեւոյլանը (1913) հայրենիքի ազատությունը համարում է անմնացորդ: Բանաստեղծը նրա ծայնը լսում է Մասիսի ծերպերի մեջ, ուր Արտավազդը սերմեր է ցանել, Նոյան Տապանի հաղթերգի ղողոնջներում, Ավարայրի խռովքում.

*Անունդ ի՛նչ փոյթ, - երբ ոտնաձայնդ՝ հիմա,
Հոգիին մէջ մեր տխուր, աղօթական երգի պես,
Վաղուան այցդ կա՛վետէ...
Ցնորք մը չե՛ս դուն, այս փա՛ստն է լուկ
Որ կը՛նէ մեզ երջանիկ,
Եվ տրոփի՛ն՝ որով կա՛պրի մեր սիրտը դեռ
Անբաւ բերկրանք կը բերէ...
Ե՞րբ պիտի գաս...*

(«Ե՞րբ պիտի գաս»): 188

Հայրենասիրական իր երգերում *Ս.Ք. Չանգուն* (1917) կոչ է անում չմոռանալ մեր երգերը, չվախենալ չարից, թշնամու ահից, միշտ հնչեցնել մեր լեզուն, չկորչել օտարության մեջ («ինչու»): Հայրենասիրական նույն զգացումներն են արտահայտված նրա «Դարերն ի վեր», «Սփյուռքյան տվայտանք», «Եթե վիրավոր» բանաստեղծություններում: Իսկ *Ջահրատին* (1924) հուզողը մեսրոպաբույր հայոց լեզվի հավերժացումն է: Այն եւ՛ խունկ է, եւ՛ վանք, եւ՛ ավետարան: Ըստ *Ջահրատի*. Մեր հոգու հետ խոսում են Մեսրոպյան գրերը: Նրանք.

Արեւ ու արտ կը բուրեն

*Վարդ ու սոխակ - Սայաթ - Նովա ու Կոմիտաս կը բուրեն
Կեանք կը բուրեն*

Վերազարթնում ու յաղթանակ կը բուրեն

*Ուր որ ըլլան հողմացրին ուր որ գաղթեն - վարդապետ
Քու տառերդ ազատութիւն կը բուրեն: 189*

(«Մեսրոպաբույր»):

Իգնա Սարրասլանի (1945) բանաստեղծական աշխարհում կորուսյալ Հայրենիքը վերածվել է հոգեւոր մի այնպիսի պատկերի, առանց որի չի պատկերացնում ոչ իր տենչը, ոչ էլ երգը: *Պատմություն, չարչարանք, տառապանք, լույս* մետաֆորները նրա հայրենապատումի երակներն են, իսկ ազգը, ցեղը՝ ամենանվիրական երանգները, որոնք ընդհանրության մեջ հայի երազն են, նրա դարավոր հեքիաթի գորգը: Հայրենիք-ազգ հասկացությունը Իգնայի գործերում միմյանցով պայմանավորված են: Աշխարհասփյուռ հայ ժողովրդի

Երազի իրականացումը բանաստեղծուհին կապում է նրա անքակտելի միության հետ: Հոգ չէ թե ազգի մատներին «Կոչւո՞ւ եմ կապեր... Հերձոտեր ափերը», հոգ չէ թե «ճաթեր են» շրթները... Եւ երգերից «Թախծ կը բուրեն», նրա քնարական հերոսը հավատում է ապագային:

*Մինչ արիւն - քրտինքդ ապագադ պիտի գծէ
Կրանիթեայ կորովդ ազատութիւնդ պիտի հիւսէ
Անքակտելի միությունդ անմահութիւնդ պիտի կերտէ
Օ՛ դուն իմ ազգս տառապած - դուն իմ ցեղս ցիրուցան: 190
(«Գեղոն»):*

Իգնայի «Կապոյտի ծարաւ» բանաստեղծությունը հոգու բազմաշերտ ծալքեր ունի: Կապույտ երկինքների, ծովերի, երազների, ծաղիկների ընդհանուր ծփանքն ու բույրը Իգնայի քնարական հերոսին մղում են «Կապույտ անցեալներ»-ին, որտեղից նա կարող է «Տրցակ-տրցակ հուշեր» մտաբերել, սակայն միշտ «տառապող սրտի մեջ» զգալ անհազ մի ծարավ: Հենց այս հյուսվածքի սահմաններում էլ բանաստեղծուհին ստեղծում է մեր ազգային պատկեր-կերպարը, որպես «հավերժության ծառ»: Իգնան մեր ազգային ոգու ինքնաճանաչման խորհրդանշանները համարում է տառապանքը - հալածանքը, կարոտը, հուսախաբությունը, պատերազմը, նահատակությունը, հույսը, պայքարը: Մեր պատմության ընթացքի տարեգրության մեջ բանաստեղծուհին չի շրջանցում այն ցավալի ճշմարտությունը, որ թելադրված է մեր ազգային ճակատագրով: «Պատերազմներ, նահատակներ, մարտիրոսներ տեսանք, ցուրտ հողը մեր տաք արցունքով թրջեցինք,

կեղեքում, հեծկլտուք-թախիծ տեսանք...», սակայն «փիւնիկ եղանք»: Հավատարիմ իր հայրենասիրական քնարերգության ընդգրկումներին, Իգնան չի կորցնում պատմական հայրենիքի ազատագրման հույսը: Վանքը հային է նման, հայը՝ իր կերտած վանքին: Այստեղ է նրանց միասնության գաղտնիքը.

*Հնամենի վանք մը եղանք
ծիւնին տակ կորսուեցանք
ծիւնահալին դարձեալ ցոլացինք
անմահ երգ մը եղանք
կռունկի նման
ճախրեցինք հորիզոնէ հորիզոն... 191*

Բանաստեղծուհին ընդգծում է, որ իր գոյատեւման դժվարին ճանապարհին ապրեց հայությունը, երակ-երակ ծաղկելով՝ որպէս «հավերժութեան ծառ»:

* * *

Պոլսահայ արդի պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից է *ԶԱՐԵՅ ԽՐԱԽՈՒՆԻՆ* (1926): Խրախունին միշտ բորբոք է պահել ժողովրդի ազատաբաղձ ոգու կրակը: Նրա հայերգության մեջ պարզորոշ երեւում են ազգային մտածողության պատմական եւ գեղագիտական ակունքները: Բանաստեղծի հուզաշխարհը հայ մարդու ապրած տառապանքի եւ երազի հանրագումար է: Նրա ստեղծագործության արմատները մի կողմից գնում են դեպի մեր տոհմիկ պատմության խորքերը, մյուս կողմից սնվում հայ ժողովրդի, առանձնապէս սփյուռքահայության տազնապներից եւ ակնկալություններից: Զ. Խրախունին դավանում է առար-

կայական խորհրդապաշտությունը: Գրականագետ Ս. Դանիելյանը, որ սփյուռքահայ գրականության գիտակներից է, գրել է «Ինչ վերաբերում է Ձ. Խրախունու եւ նրա դավանած առարկայական խորհրդապաշտության խաղացած դերին, արդյունավետությանը, այստեղ արդեն վերաբերմունքը միասնական է... Ձ. Խրախունին բանաստեղծին դիտում է որպես պատգամախոս... Նա բացառիկ դեր է հատկացնում ստեղծագործողի անհատականության հայտանիշին, նրա ներաշխարհի զգայական եւ իմացական ընդջոյա հոսքերին՝ որոնք ճանաչում է նպատակամետ ուղղվածության մեջ»: Նրա հայրենապատումը երեւան է գալիս ազատերգության համաձուլվածքով: Պատճառը պարզ է: Սփյուռքը մեր ավանդական հողերի, օջախների, հեքիաթների կորստից է ծնված, եւ պարզ է, որ հայրենիքի վերադարձը սփյուռքահայ (եւ ոչ միայն) բանաստեղծի համար առաջին հերթին փրկության բաղձանք է, ազատաբաղձ ոգի: Տվյալ դեպքում Խրախունու պոեզիայում հայրենիք, ազատություն, ոգի հասկացությունները կերպավորվում են մեսրոպածին գրերի պատկերներով.

*ԱՅԲ - ը արյունն է թափված
ՋԱ-ն զոհվածներն անանուն
ԱՅԲ-ը անունդ է արփավառ
ՏԻՈՆ-ը տենչանքն է տանջող
Ու-ն ուրացումը ույժին
ԹՈ-ն թվականն է ահեղ
ՅՈՒ-ն յուրացումը ջահիղ
ՆՈՒ-ն նահատակդ վերջին: ¹⁹²
(«Ազատություն»):*

Թեմատիկ բազմազանության մեջ Խրախունու ազատերգությունը ամենավառ երազն է: Առաջին «Հաղթանակ» բանաստեղծությունից (1944) մինչև «Ազատություն» 1993 գիրքը Խրախունու ստեղծագործական հուզաշխարհում հառնում է Լեռ-ը, շրշում ծառ-ը, շիկանում ԱԶԱՏՈՒԹՅԱՆ հուրը, շքերթվում ՀՈՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, դողանջում ՏՈՆԱԶԱՆԳԸ, փողփողում ԴՐՈՇԸ, խոսում ՀԱՅԱՍՏԱՆԸ, շողում ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ խորհուրդը: Խրախունին հասել է մի բարձունքի, որտեղից պարզ տեսնում է հայոց ճակատագիրն իր հեռանկարի մեջ: Նա տարբերվում է այն կարճամիտ մտավորականներից, ովքեր ազգի ճակատագիրը կապում են քաղաքական խաղերի, միջկուսակցական վեճերի հետ: Խրախունին ընդունում է մի ճշմարտություն՝ Վերածնված Հայաստանը Երեւան ուստանով այն միակ խարիսխն է, որին հենվելով միայն աշխարհասփյուռ հայությունը կարող է հասնել իր երազած ավերին: Նման հետեւության բերող լավագույն գործերից մեկը բանաստեղծի «Նամակ եղբորս» բանաստեղծությունն է՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման առթիվ 1992 թ. գրված նրա «Արդյոք կա՞ թաքուն գաղտնիք» շարքից հետո: Բանաստեղծի եւ քաղաքացու քաղաքակիրթ դիրքերից Խրախունին պատասխանել է նրանց, ովքեր փորձել են քննադատել իրեն այդ բանաստեղծության համար: Անվանի բանաստեղծը եղբոր «մեղմ սուլյը» համարում է «անողոր» արարք: Ինչպես նկատում է Խրախունին. «Մազ չմնաց, որ չհանձնենք փչող անհաշտ անհարազատ հովերուն»: Նա հայ մարդու քաղաքացիական պարտքի զգացումով հանձն է առնում, որ «Հովը անվերջ մեր երեսը կապտակե՝ միշտ

շոյելու պատրանքով...»: Մի՞թե դժվար է նկատել, որ մեր «արյունը ներս է դարձել, կը թանձրանա ամեն օր ու կը սպառնա մեզ խեղդել»: Բայց ոչ միայն այդ: Խրախունին իմաստնացած մեր կորուստներից եւ վերագտնունի գաղափարով, խորհրդածուն է.

Եղբայր իմ

Հայրենիքը եթե միայն ծննդավայր չէ ինձի

Հայրենիքը եթե միայն սննդավայր չէ քեզի

Ես մեկ անգամ պանդուխտ եմ

Դուն երկու... : 193

Իմացական-հուզական իր պոետական ծավալումներում բանաստեղծը ձգտում է կենդանի պահել հայոց նվիրական զգացումները: Նա մեր տղաների պարի մեջ տեսնում է «Թեւեր բացած խաչքար... Երկինք հասած կատար... մարտահրավեր» («Պար»), Հայոց Անկախության հռչակագրի տողերում շոշափում վեց դարուց ավելի խորտակված մեր պետականության վերածնունդն ու հաղթական երթը, որի առջեւից ասես «Հայկ Նահապետ վաղընջական իր պրկված աղեղեն կարծակե նետը լուսեղ հավերժության աստղերուն» («Ուրեմն ըսենք պարզորեն - 616»):

Խրախունու հայրենասիրական պոեզիայում կարելի է տեսնել հատկացված պատմությանը: Նրա հիշողության սահմանները սկսվում են հայոց առասպելական շրջանից՝ հասնում մինչեւ մեր իրական ներկան: Այս կապը նա ներկայացնում է որպես դաս: Այդ ինչու՞ «Անոնց դողեմը գայլ էր, իսկ մերը գառնուկ»: Այդ չէ՞ պատճառը, որ գառները «մեծցան մաքրասպիտակ խեղճուկրակ» («Պատմություն»): Խրախունին անդրա-

դառնում է ժողովրդի կորուստներին, դարավոր թշնամու դաժանություններին, մեր ժողովրդի կյանքի ողբերգական էջերին եւ փորձում գտնել ելքը: Ընդգծենք, որ բանաստեղծը Պոլսի պայմաններում մեր անցյալը պետք է ներկայացներ այլաբերության սահմաններում: Այդ է վկայում. «Ամպի պատմություն» ծավալուն բանաստեղծությունը: Ժողովրդական հեքիաթին հատուկ մուտքով բանաստեղծը նկարագրում է ամպը, որ դարերի ընթացքում «Բյուրեղափայլ փրփուր դարձած - եթերային փետրափնջի վերածված կը պսակվեր մայր արեւուն ոսկեկրակ շողերով»: Սակայն ամպը «մոռցեր էր ան իր վերելքովն ինք արբշիռ Ան մոռցեր էր բոլոր հովերն ու շունչն անոնց չարակամ»: Արդյունքում.

*Եվ անխնա հալածեցին ամպը հեք
 Պատռտեցին կտրատեցին պառակտեցին զայն ամբողջ
 Պատռ պատռ ծվեն բզկտեցին միսն անբիծ
 Փեռեկտեցին անոր մարմինն արեւափայլ կաթնաթույր
 Ու ցրվեցին չորս ծագերուն աշխարհի...¹⁹⁴*

(«Ամպի պատմություն»):

Բանաստեղծի հոգու ներքին շարժման մեջ խոսք է գնում գաղթաշխարհի մասին, ուր ամպը «նստավ տանիքներուն եւ փեղկերուն եւ մայթերուն անտարբեր», բայց չանեացան, սպասում են պահին, որ «Վեր ամբառնան, դառնան քուլա մ ըսպիտակ ու միանան փոքր անպին երկնաճեմ»: Դժվար չէ նկատել, որ այս մետաֆոր պատկերների մեջ մեր ժողովրդի կորուստների եւ վերադարձի նշաններն են:

Հայոց մեծ եղեռնի արհավիրքի պատկերն է ներկայացվում Խրախունու «Համակշիռ», «Ոչ այլ», «Լեռն ի

վեր», «Դաշտը անտեր» եւ այլ ստեղծագործություններում: Առարկայական խորհրդանշանների շրջապատուտի մեջ կարելու տեղ է գրավում արծիվը որպես սավառնակի հակապատկեր: Քնարական հերոսը հանդես է բերվում արծվի անունից: Արծիվը սավառնակը ներկայացնում է «հազար սադրանք» խմորող չար ուժ.

*Իսկ մենք արծիվ - կուրծքին կրակ սրտին արյուն
աչքին երազ ու կտուցին կոծ ու կանչ
հավերժության գագաթներեն կը նայինք վար - սավառնակին
...Կը սլանանք ահագնաթափ թեւածումով մանձնուրաց
չար գանգին խոտ կոխելու պես - բռունցք կըլլանք...¹⁹⁵
(«Սավառնակ»):*

Հավատարիմ հայ պոեզիայի ավանդույթներին, Խրախունին Հ. Թումանյանի, Դ. Վարուժանի, Ե. Չարենցի եւ մյուս մեծությունների պես մեր ժողովրդի խաղաղ ու ազատ կյանքը տեսնում է մյուս ժողովուրդների ազատ կյանքի եւ համագործակցության մեջ, միաժամանակ պաշտպանելով փոքր ժողովուրդների իրավունքները: Թուրքիայում Հայոց Պատրիարք Արք. Գալուստյանի սուրբ հիշատակին նվիրված «Երգ երազանքի» բանաստեղծության մեջ Խրախունին «Ազատություն, խաղաղություն, ուրախություն» է ակնկալում աշխարհի բոլոր մարդկանց համար, իսկ «Դրոշ» երգում ժխտում է այն դրոշը, որի խորհրդանիշը կեռ թուրն է եւ մանգաղածեւ մահիկը: Նա երազում է կանաչ-սրճագույն-դեղին (ոսկեգույն) այն դրոշը, որ.

*մազերուն պես ալիք ալիք հողմածածան հերարծակ
Այն աննման աղջկան*

որ կուրծքը բաց
մեկ ձեռքին սուր, մյուսին հաց
Կառաջնորդե ամբոխները սրարբած: 196

(«Դրոշ»):

Ջարեհ Խրախունու հայրենապատումի մեջ Լեռը եւ Լեռան մարդը անկասելի ներդաշնակություն եւ միասնություն են. «Մարդը Լեռան կը նայի, Լեռն ալ իրեն կնայի»: Այդ «Լեռը շենք մ'է...», «Լեռը անկյալ աստված մըն է հնօրյա Ցասկոտ - հզոր - ալեւոր...»: Լեռան անունը չկա, բայց պարզ է, որ Լեռը երկնամերձ Արարատն է, ինչպէս քնարական հերոսն է խոստովանում.

Այն այն Լեռն է
Որ ամենուս բիրին խորն է բեւեռված
Որ ամենուս մորթին տակն է - միս ոսկոր
Որ ապրում է գոյություն է իրական
Ու երազ է առասպել է անսահման: 197

Երազ-առասպելում Լեռը վերածվում է հույսի եւ դէպի իրեն ձգում կարոտող տիրոջը, որն էլ շշմջում է. «Այս Լեռը մեծ Անմահության սանդուխն է Ու ես կամաց - երկյուղած կը բարձրանամ Լեռն ի վեր»:

* * *

Սեդա Տենիրճյանի կազմած «Սփյուռքահայ գրողներ» ժողովածուի Բ հատորում զետեղված են 95 գրողների չափածո եւ արձակ ստեղծագործություններ: Այդ ստեղծագործողները տարբեր սերունդների ներկայացուցիչներ են, որոնցից ոմանք իրենց կարողությունները նվիրաբերել են սփյուռքահայ գրականության

կայացմանն ու հարստացմանը, իսկ մյուսները շարունակում են դալար պահել մայրենի գրականության այսօրվա ծառը: Տարբեր տաղանդի, ստեղծագործական տարբեր խառնվածքի տեր ստեղծագործողներ են դրանք: Այստեղ եւ՛ *Գալուստ Խանենցի* (1910) կարոտի սրտամոտ երգերն են, եւ՛ *Վահրամ Չաճյանի* (1935) թախծալուր մտորումները, եւ՛ *Ալիսա Կիրակոսյանի* իմաստուն զգացմունքները Վահագն Դավթյանի թարգմանությամբ, եւ՛ այլն եւ՛ այլն: Բոլոր գրողների ստեղծագործություններում վերարտադրված են մեր ժողովրդին հուզող բազմաթիվ պրոբլեմներ, մարդկային ամենաջերմ իդեալներ եւ այդ ամենի հետ սփյուռքահայության ճակատագիրը, ինչպես նաեւ Վերածնված Հայաստանի հանդեպ եղած վերաբերմունքը: Ինչպես իրենց նախորդները 20-40-ական թվականներին, այնպես էլ նրանց ժառանգորդները առավել տազնապած ձգտում են բեկանել ուժացումը, սպիտակ ջարդը: Այս ուղղությամբ նրանք մերթ վկայակոչում են հայ ժողովրդի փառապանծ անցյալը, մերթ նախնիների դրախտային երկիրը՝ նահապետ Արարատի գոյությամբ ու կանչով, մերթ հույսի եւ հավատի ակունք համարում վերածնված անկախ Հայաստանը, մերթ էլ փառաբանում մեսրոպատառ մեր սրբասուրբ լեզուն, որպես ազգային ոգին ու դիմագիծը պահպանելու հզոր աղբյուր: Սփյուռքահայ գրողների հայրենապատումի մեջ զգացվում է ազգային զգացմունքները արթուն պահելու, մայրենի լեզվով աշխարհի հետ խոսելու, ազգային ոգին բորբոք պահելու, սփյուռքահայության կյանքի պատկերման, նոր սերնդին հայեցի դաստիարակելու, Հայաստանի Հանրապետության հետ ամենասերտ կապեր

ստեղծելու եւ ամրապնդելու կարեւորությունը: Հայաստանի հանդեպ որդիական իր կարոտն ու երազը բանաստեղծ Գ. Խանենցը այսպես է արտահայտում.

*Ես ծառ եմ հիմա,
Բայց դեռ կանգնած չեմ
Մայր հողիս վրայ...
Ես սարսափում եմ
Փոթորիկներից: ¹⁹⁸
(«Ծառը»):*

Բանաստեղծ *Հովհաննես Պարսկունի* (1923) փառաբանում է այն գոյամարտը, որ շարունակում է հայ ժողովուրդը Հայաստանում եւ Սփյուռքում («Ծառարմատ»), *Տ. Արտակ Ս. Արք. Մանուկյանը* (1931) Նահապետ Արարատին դիմում է ի խորոց սրտի.

*Լեռ սրբազան,
Հպարտութիւնդ տուր մեզ այսօր,
Որ մեր ուժով կարողանանք
Առօրեայի խուճապին դեմ,
Մեր գոյութեան արմատներէն
Ծլարծակող դալար ճիւղին
Մշտանորոգ աւիշ դառնալ
Ու լեռնանալ հողմերու դեմ: ¹⁹⁹
(«Լեռ»):*

Տայանա Տեր Հովհաննիսյանը բացականչում է.

*Կեցցեն բառերը հայկեան, բառեր, բառերը վսեմ
Որ առավել կը զօղեն զմեզ իրար քան շղթան: ²⁰⁰*

Իսկ *Ջուլիետ Գրիգորեանը* (1935) երկրպագելով մայր ժողովրդին, խնդրում է իր երգը ընդունել սրտանց, «Եթե չընդունես Ջոհաբերունը իմ հարստութեան, Ես կաղքատանամ» («Իմ ժողովրդին»):

Վահրամ Հաճյանը (1935) հայտարարում է. «Արմատներս ոչ ոք չի կարող ժայռերից հանել» («Իմ կյանքի ծառից...»), *Կոլիա Տեր Հովհաննիսյանը* ասես շարունակում է Վահրամ Հաճյանին, «Ինքս այստեղ, սիրտս այնտեղ Ասես աչքիս սրտիս միջեւ Անագորոյն սահմանագիծ» («Ցանկություն») եւ ապա հաստատում.

Ես հիմա յաւերժ եմ

Եւ՝ անխոցելի,

Հինաւուրց պատմութիւնը իմ վկայ,

Ողջու՛յն, վերածնուած Երկիր Նաիրի,

Հօր իմ անցեալ եւ... ապագայ: 201

Վարանդի (1954) «Ես այն մեկ հայն եմ» բանաստեղծության մեջ հայրենասիրությունը միանգամայն նոր ելակետից է ներկայացվում: Բանաստեղծը ասես վրեժի հատուցմամբ հիշում է հայ ժողովրդի դեմ 20-րդ դարի սկզբին չար աշխարհի հանցագործությունը խտացնող կոչը. «Աշխարհում թողնել մեկ հայ այն էլ թանգարանի համար»: Պարույր Սեւակից հետո այս դաժանությանը պատասխանում է թեհրանահայ պոետը: Ի լուր աշխարհի, նա իրեն ներկայացնում է որպես այն միակ Պանդուխտ հայը, որի «լռությունը՝ Համակ ոխ ու վեճ, թւում է բոլոր կանչերից հօր»: Քնարական հերոսի գոյությունը աշխարհ-թանգարանում, հիրավի, թանկ է, բայց ոչ խեղճացած, ոչ վախվորած.

Ես այն մեկ ճայն եմ, անունս Արեգ,
Թէ նայես որք եմ, հալածեալ ու հէգ,
Սակայն ճակատիս
խորշումները թեժ
Քեզ կասեն նաեւ կոչում է... Վրեժ: 202

Այսպես, աշխարհասփյուռ հայության սրտի եւ հոգու ձայնը՝ ակունքված կորուսյալ հայրենիքի կարոտից, հույսի թելերով փարված Վերածնված Ճայաստանին, տազնապած աշխարհի խաչներուկներում ուծացման իրողությունից, երգի թելերով հանձնված է սերունդներին: Սփյուռքի գրականությունը դեռեւս շարունակվում է: Նոր սերունդը իր հայրենապատումն է արարում բանաստեղծական նոր ձելերով, ոգու նոր շիկացումներով:

* * *

Ընդհանրության մեջ ի՞նչ աստիճանի վրա է գտնվում եւ ի՞նչ հեռանկարներ ունի սփյուռքահայ գրականությունը, որ մեր ընդհանուր գրականության մասն է կազմում:

Սեդա Տենիրճյանը «Սփյուռքահայ գրողներ» ժողովածուների վերջում գետեղել է իր հարցազրույցը պուլսահայ եւ սփյուռքի մյուս գաղթօջախների գրողների հետ՝ տաս հարց եւ տաս պատասխան սկզբունքով: Մի շարք անվանի գրողներ, այդ թվում Զ.Խրախունին, Ռ.Յատտեճյանը, Յ.Կարպենցը, իրենց վերաբերմունքն են ցուցաբերել խնդրո առարկա հարցերին:

Ընդհանրական պատասխանը հետեւյալն է՝ սփյուռքահայ գրականությունը ունի իր դիմագիծը: Բայց ինչ որ չափով նաեւ բազմադեմ է: Այն առաջին հերթին կարոտի գրականություն է՝ անհետ կորսված հայկա-

կան անցյալի, բնաշխարհի, քաղաքների, գյուղերի, օջախների հանդեպ, ինչպես նաև վերածնված, վերագտնված Հայաստանի մասին: Սփյուռքահայ գրականության մեջ առարկայորեն նկատվում է իրապաշտ գրական ուղղությունը, որը եւ ապահովում է նրա դիմագիծը: Ինչ վերաբերում է պոլսահայ գրականությանը, ապա այն օրինականորեն դատապարտված է գեղարվեստական հաճախ անհասկանալի մետաֆորի մեջ թաքնվելու ճակատագրին:

Սփյուռքահայ գրականությունը արարվում է աշխարհագրական լայն տարածքների վրա, որոնց կապերը միմյանց հետ լավ կամրջված չեն: Գիշտ է, մի քանի գրողների միջեւ կարելի է գտնել որոշակի կապեր եւ ընդհանուր միտումներ, սակայն միջավայրերի փակվածությունը իր դերն է խաղում: Սփյուռքահայ գրողների առնչությունները հենվում են միայն մայրենի լեզվի եւ հայկական ոգու վրա: Սփյուռքահայ գրողների ծառայությունը մայրենի գրականությանը գնահատվում է որպես նվիրածության բարձր աստիճան, որովհետեւ նրանք գրականությունից նյութական ակնկալիքներ չունեն:

Սփյուռքահայ գրականությունը ազգայինի հետ ներառում է նաեւ համամարդկայինը թե բովանդակության եւ թե՛ ձեւի տեսակետից: Այն զարգանում է ավանդականի եւ արդիականի համատեղման ճանապարհով: Առկա են նաեւ տեղային եւ միջազգային ազդեցությունները: Ընդգծվում է, որ սփյուռքահայ գրականության լեզուն պետք է լինի հայերենը: Թեման երկրորդական է: Հայկական գրականության շրջագծի մեջ չեն տեղավորում օտար լեզվով ստեղծված գրական երկերը, որքան էլ նրա թեման հայկական լինի, այնպես, ինչպես

Ֆ.Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Վ.Սարոյանի երկերը: Օտարալեզու հայ գրողները հայ գրականության պատմության օղակ չեն, որքան էլ սրտամոտ ու անկեղծ են:

Ծանոթանալով սփյուռքահայ գրականությանը, համոզվում ես, որ հայաստանյան գրականությունը խորհրդային տարիներին մեծ չափով մեկուսացված վիճակի մեջ է եղել եւ ինքնահատուկ զարգացում է ունեցել: Սակայն վերջին տասնամյակներին ինչ-ինչ ազդեցություններ նշմարվում են: Սփյուռքահայ եւ հայրենի գրականության միջեւ կապերը, փոխազդեցությունները առկա են: Բայց այդ ազդեցությունները ճակատագրական չեն համարվել, որովհետեւ սփյուռքահայ գրականությունը ունեցել է իր սեփական ճամփան, լեզուն, ոճն ու մտահոգությունները: Ընդունվում է այն իրողությունը, որ սփյուռքահայ որոշ գրողներ ազդվել են լայն ժողովրդայնություն ունեցող հայրենի այնպիսի բանաստեղծներից, ինչպիսիք են Պ.Սեւակը, Յ.Շիրազը, Ս.Կապուտիկյանը, Գ. Էմինը: Սակայն, ընդհանուր առմամբ սփյուռքահայ գրականության ծանր հրետանին մնացել է մենակ, անառիկ ու անկախ՝ հետամուտ իր իմացական գոյության կանչին: Նկատվում է, որ 1985 թ. ի վեր Հայաստանը սկսել է հայտնաբերել Սփյուռքի գրականությունը, ստեղծվել են կապեր, սակայն հատ ու կենտ ու պատահականորեն, հաճախ՝ հիացական անդրադարձով: Ցանկություն է հայտնվում՝ քաղաքական պատմեղները քանդվելուց հետո ամրապնդել կապը հայ ժողովրդի երկու հատվածների միջեւ, որ այնքան էլ դյուրին չէ: Հորիզոնի վրա լուսարձակվում է մեր ժողովրդի նվիրական երազանքը. «Մեկ ժողովուրդ, մեկ գրականություն»:

Ե Ր Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Պ Ա Յ Ք Ա Ր Ի Ե Ր Գ Ը

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական եւ բախտորոշ էջերից է: Այն Ավարայրի եւ Սարդարապատի շարունակությունն է, որն արդեն մտել է մեր ժողովրդի հարուստ տարեգրության մեջ: 1988-ի փետրվարից Պատմական Հայաստանի 10-րդ նահանգը՝ Արցախական աշխարհը, ոտքի ելավ պահանջատիրոջ իրավունքով եւ խորհրդային իշխանության բարձրագույն ատյաններին ներկայացրեց Մայր հայրենիքին վերամիավորվելու իր արդարացի վճիռը: Աշխարհասփյուռ հայությունը խորապես գիտակցեց պահի կարեւորությունը եւ սատարեց արցախցիների ազնիվ երագին:

Երկրագնդի չորս ծագերում ամեն մի հայ սպասում էր, որ խորհրդային իշխանությունները կցուցաբերեն ողջախոհություն եւ խաղաղ ճանապարհով կլուծեն հարցը: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: ԽՄԿԿ կենտկոմի վայ առաջնորդների թողտվությամբ, ՊԱԿ-ի անմիջական մասնակցությամբ Ադրբեջանի ղեկավար շրջանները կազմակերպեցին հայ ազգաբնակչության ցեղասպանություն իր իսկ ձեռքերով կառուցված Սոււ-գայիթում, Բաքվում, Գանձակում, Մինգեչաուրում եւ հայաչատ այլ բնակավայրերում: Արցախը շրջափակման մեջ առնվեց: Հայ ժողովուրդը զգաց, որ իրեն պարտադրած պատերազմը իր վերջին կռիվն է, ուստի այդ փրկարար, վճռական պայքարին պետք է իր մասնակ-

ցությունը բերի ֆիզիկական ու բարոյական ուժերի համախմբվածությամբ ու հավատով:

Արցախահայությունը իր թիկունքին զգալով արյունակից եղբայրների եւ քույրերի ուժն ու նվիրվածությունը, պարզեց նորօրյա թուր Կայծակին եւ նետվեց մարտի: Կամքը մեկն էր՝ կռվել, վճիռը մեկ՝ հաղթանակել հանուն իր ավանդական օջախի պահպանման, իր անկախության եւ ազատության նվաճման:

Արցախյան պատերազմին զինվորագրվեց նաեւ հայ գրականությունը:

Այդպես է եղել Բաբելոնի բռնակալ Բելի դեմ Հայկ նահապետի հաղթական ճակատամարտից սկսած մինչեւ Ավարայր եւ Սարդարապատ, մինչեւ Բեռլին եւ Արցախ: Պատահական չէ, որ մեծանուն հայագետ, ակադեմիկոս Մ.Աբեղյանը մեր հին գրականությունը համարել է մաքառման գրականություն: Հետագա շրջանների հայ գեղարվեստական խոսքը եւս շարունակել է մեր հարուստ մշակույթի այդ լավագույն ավանդույթը: Հայ գրողները միշտ էլ հնչեցրել են ժողովրդի մարտական ոգու երգը՝ հանուն ազատության եւ անկախության: Նույնը տեղի ունեցավ նաեւ Արցախի փրկության համար ոտքի ելած հայ ժողովրդի խրոխտ ընդվզումի եւ արդարացի պատերազմի տարիներին: 1988-ից սկսած՝ հայ բանաստեղծները անմիջապես մարտաշունչ խոսքեր փնջեցին, ստեղծեցին բանաստեղծություններ, բալլադներ, լեգենդներ, որոնցում ինքնահաստատման գաղափարն է, խոսքը՝ ուղղված աշխարհին՝ որպես ազատ ու անկախ ապրելու վճռականություն:

Ղարաբաղյան շարժման հենց առաջին օրերից

իրենց կրակոտ խոսքն ասացին Վ.Դավթյանը, Ս.Կապուտիկյանը, Գ.Էմինը, Յ.Սահյանը, Ռ.Դավոյանը, Դ.Յովհաննեսը, Մետաքսեն, Բ.Ջանյանը, Յու.Սահակյանը, Գ.Խաչատուրը եւ շատ ուրիշներ:

Չնայած պատերազմական դժվարին պայմաններին եւ գիրք տպագրելու սուղ հնարավորություններին, Արցախում ապրող եւ ստեղծագործող բանաստեղծները ընթերցողի սեղանին դրեցին ուշադրության արժանի ժողովածուներ: Այդ են վկայում Վ.Յակոբյանի «Արցախա ծուխ», «Ամարասի գանգերը», «Տաճարն Աստծո», «Սոսե», Գ.Գաբրիելյանի մարտական երգերի շարքը, «Մեր Գուգուլյան», «Անդրանիկ», «Մուսա լեռան ... երկու որդին», «Ողջակիզված կյանք» չափածո ակնարկները, Յ.Բեգլարյանի «Յրաշք երկիր իմ Ղարաբաղ», «Արցախն Ավարայր», Ն.Ավագյանի «Հասուն իմ հասկ», Ա.Յովհաննիսյանի «Ավանդատուն», Ս.Խանյանի «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ», «Արցախի արծիվը», Ռ.Եսայանի «Նժար», Ն.Գասպարյանի «Հավատ Արցախի», Յ.Ալեքսանյանի «Կենսադաշտ» եւ այլ ժողովածուներ, ինչպես նաեւ Դ.Միքայելյանի քնարական երգերը՝ նվիրված մեր քաջազուն նահատակների հիշատակին, մեր հերոսների անձնուրաց պայքարին:

Արցախյան շարժման տարիները ըստ էության կարելի է բաժանել երեք փուլի: Առաջինն ընդգրկում է 1988-ի փետրվարից մինչեւ 1991 թվականի նոյեմբերը, երկրորդը՝ 1991-ի նոյեմբերից 1994-ի մայիսը, երրորդն սկսվում է 1994 թ. մայիսից ի վեր, եւ ընդգրկում, այսպես կոչված, «ոչ պատերազմ ոչ խաղաղություն» ժամանակահատվածը: Այդ տարիներին ստեղծված գրականությունը նշված փուլերի իրադարձությունների եւ

ոգու արտահայտությունն է: Իրավացի են գրականագետներ Դ.Գասպարյանն ու Ժ.Քալանթարյանը, որ ավագ դպրոցի «Հայ գրականություն» դասագրքում նորագույն շրջանի հայ գրականության վերջին չորրորդ փուլի սկիզբը կապում են 1988-ի Արցախյան շարժման հետ: Կարդալով Արցախյան գոյամարտի ժամանակաշրջանում ստեղծված գրականությունը, նկատում ես, որ այն միտում ունի դառնալու ոչ միայն Արցախի ազատագրման, այլև այդ ֆոնի վրա հայ ժողովրդի միասնական պայքարի, նրա հերոսական ոգու գեղարվեստական տարեգրություն:

Հայ բանաստեղծները Արցախի գոյամարտի տարիներին գրած երգերում շոշափել են հետեւյալ հիմնական թեմաները. 1. Խորհրդային բռնապետության դեմ արցախցիների ընդվզումը՝ Ադրբեջանի լծից ազատվելու եւ մայր Հայաստանին վերամիավորվելու նպատակով: Ադրբեջանի կառավարող շրջանների կողմից սանձազերծված պատերազմում հայ ժողովրդի միասնական պայքարը: 2. Հայ ժողովրդի պատմական անցյալի եւ առօրյա ընթացքի առնչությունների դասը: 3. Նահատակված քաջերի անմոռաց հիշատակի, հերոս մարտիկների անձնուրացության, սիրո, կարոտի, կորստի, ցավի, հույսի, հավատի ծփանքներն ու ծածանումները:

* * *

Ղարաբաղյան շարժման սկզբից բանաստեղծները հանդես եկան անզիջում պայքարի շեշտերով հագեցված գործերով, որոնք ժողովրդին կոչ էին անում համախմբվել մայր Հայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ:

Արցախում ապրող եւ ստեղծագործող գրողները քայլում էին ոտքի ելած ժողովրդի խրոխտ շարքերի առջեւից: Նրանք իրենց դրսեւորում էին որպէս անձնուրաց հրապարակախոսներ ու քաղաքացի արվեստագետներ: Դեռեւս 1988 թ. հունվարին բանաստեղծներ Վ.Յակոբյանը (գրողների միության նախագահ), Գ.Գաբրիելյանը, Յ.Բեգլարյանը, տողերիս հեղինակը, քանդակագործ Ա.Յակոբյանը եւ ուրիշներ, սկզբունքային ու լուրջ քննարկումից հետո վերջնական տեսքի բերեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովին ուղղված այն նամակը, որով պահանջվում էր Արցախը վերամիավորել Հայաստանին: Մոսկվայում այն հայտնի դարձավ «17-ի նամակ» անունով: Նամակը Մոսկվա է հասցվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դոցենտ Ն.Ավագիմյանի միջոցով:

Իրենց հրապարակային ելույթներում բանաստեղծները կոչ էին անում պայքարը շարունակել մինչեւ վերջ: Արցախից Մոսկվա մեկնած բանագնացները՝ Վ.Յակոբյանը, Գ.Գաբրիելյանը, Յ.Բեգլարյանը, Մոսկվայից վերադառնալուն պէս փետրվարի 18-ին Ստեփանակերտի վերածնության հրապարակում բազմահազարանոց միտինգում հանդես եկան իրենց ելույթներով, որոնք մեծ ոգեւորություն առաջ բերին ազատության ճանապարհը ընտրած ժողովրդին:

Համարյա ամեն օր, արտոնված եւ չարտոնված միտինգներում ելույթներ էին ունենում գրողները, նրանց խոսքի մեջ հնչում էր մեր պատմության ծայնը, առօրյա արդար պահանջը եւ հավատը:

1989 թ. հուլիս-օգոստոս ամիսներին սկսվեց տպագրվել Լեռնային Ղարաբաղի գրողների մարզային կազմակերպության «Արցախ» գրական-գեղարվեստա-

կան երկամսյա հանդեսը (խմբագիր՝ Վ.Հակոբյան): Մինչեւ 1988 թ. փետրվարը ԼՂ գրողների կազմակերպությունը հանդիսանում էր Ադրբեջանի գրողների միության մասնաճյուղը: Սակայն Ղարաբաղյան շարժման հենց առաջին օրերից լեռնաշխարհի գրողները իրենց հայտարարեցին անկախ: Բայց քանի դեռ Խորհրդային Միությունը չէր փլուզվել, Ղարաբաղի գրողների մասնաճյուղը իրեն իրավունք վերապահեց դուրս գալ Ադրբեջանի գրողների միության կազմից եւ դառնալ միութենական առանձին միավոր:

«Արցախ» հանդեսի տպագրության լուրը ուրախության ալիք առաջացրեց հայ գրողների եւ մեր ժողովրդի բարեկամների սրտերում: Առաջին համարը հայրաբար օրհնեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Ս.Ղազարի Մխիթարյան ակադեմիայի նախագահ Յ.Տեր-Ներսիսյանը, գրողներ Ս.Կապուտիկյանը, Վ.Դավթյանը, Հ.Խաչատրյանը, Բ.Ուլուբաբյանը, Զ.Բալայանը, Ռ.Հովսեփյանը, Բ.Ջանյանը, ակադեմիկոսներ Էդ.Ջրբաշյանը, Ս.Աբրահամյանը, ԽՍՀՄ ԳՄ հայ գրականության խորհրդի նախագահ Մ.Դուդինը եւ ուրիշներ: Շնորհավորողների ողջույնի խոսքերում ընդգծված էր պահի լրջությունը, գրողների անելիքների կարելիությունը: Առանձնահատուկ խորհուրդներ է պարունակում Հայաստանի գրողների միության վարչության ուղերձը, որ բերում ենք ամբողջությամբ.

«Թանկագին բարեկամներ, Արցախ աշխարհի մեր գրչակիցներ:

Հայ գրողներին անսահման ուրախություն պատճառեց «Արցախ» գրական գեղարվեստական հանդեսի լույս ընծայման լուրը:

Ծանր ու լարված օրերի շարանի մեջ վերջապես, հազվագյուտ առիթ ծագեց միմյանց շնորհավորելու:

Բազմաթիվ կորուստների մեջ վերջապես եղավ առաջին ծնունդը՝ առաջին սրբատաշ քարը արցախյան հինավուրց հողի վրա հաստատվող մաշտոցյան ոգեղեն անրոցի կառույցին... Ուրեմն, ուրախանանք, ժպտանք ու ծիծաղենք լիաթոք, քանի որ այն ժողովուրդը, որ կարող է արցունքի միջից ծիծաղել՝ անմահ է, ուժ գտնենք հեռու վանելու վշտի դառնությունը եւ նորածին «Արցախի» մատղաշ արմատները թաթախենք ուրախության լուսավոր ավիչի մեջ, որպեսզի նրա բերքը բարձր լինի, որպեսզի նրա ծառը կանգուն մնա երկար ու երկար տարիներ եւ մեր մեծերի օրհնությունը ցողվի նրա ճակատին եւ որպեսզի նա հաղորդվի հույսին, հավատին ու արդարությանը: Թող այս ուրախությունը սկիզբ դառնա նորանոր ուրախությունների, մինչեւ այն մեծ ցնծության օրը, երբ Արցախը կմիանա մայր Հայաստանին»:

«Արցախ» հանդեսի առաջին համարում տպագրվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի ստեղծագործող մտավորականների դիմումը աշխարհի գրողներին: Այդ փաստաթղթում Արցախի գրողները նշեցին այն ողբերգական վիճակը, որ տիրում էր լեռնաշխարհում եւ երկրաշարժ տեսած Հայաստանում: Ղարաբաղի հանդես Ադրբեջանի վարած քաղաքականությունը ներկայացվեց որպես 1915 թ. հայոց ցեղասպանության շարունակություն: Անդրադառնալով Նախիջեւանի եւ Ղարաբաղի ճակատագրերին, Արցախի գրողները դիմումի մեջ ընդգծեցին. «Նախիջեւանում այլեւս հայ չի մնացել: Ադրբեջանի կառավարությունն ուզում է ամեն կերպ

մնան քաղաքականություն կիրառել նաեւ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ: Երկրամասի հնագույն հայկական քաղաք Շուշին ավերվել է 1920 թվականի գարնանը. ցավոք, այնտեղ եւս այսօր հայ չի մնացել: Եվ հայկական այդ հնագույն մշակույթի օջախը, ուր թարգմանվում եւ տպագրվում էին այնպիսի մեծերի գործեր, ինչպիսիք են Բայրոնն ու Գյոթեն, Պուշկինը, Լերմոնտովը, շատ ուրիշներ, վաղուց չի գործում: Ավերվում են բարձրարժեք, եզակի հուշարձանները: Գնալով, ողբերգությունը խորանում է ամբողջ Լեռնային Ղարաբաղում, ահա թե ինչու մենք՝ արցախցիներս, միահամուռ ուժերով ելել ենք պայքարի՝ այդ անարդարությունների ու բռնությունների դեմ...»:

Դիմումի մեջ այնուհետեւ կոչ է արվում հետեւել Անատոլ Ֆրանսի ու Ռոմեն Ռոլանի, Նանսենի ու Սերգեյ Գորոդեցկու, Վալերի Բոյուսովի ու Մաքսիմ Գորկու օրինակին, որոնք պատմության ամենից դժվար պահերին իրենց ձայնն են բարձրացրել հանուն հայ ժողովրդի փրկության եւ ազատության:

«Մենք պահանջում ենք մեր ազգային ինքնորոշման իրավունքը, ասված է դիմումում, ուզում ենք, որ ոչ մի ազգ չբռնանա ուրիշ ազգի վրա, մենք ուզում ենք մայր ժողովրդի գրկում ապրել, ծաղկեցնել մեր մայրենի մշակույթն ու արվեստը: Ինչպե՞ս կարելի է արհեստականորեն մի քանի հատվածների բաժանել նույն լեզուն, նույն արվեստն ու մշակույթն ունեցող ժողովրդին եւ, դրանով իսկ, կասեցնել նրա ազատ աճն ու զարգացումը: Դա անընդունելի է եւ հակամարդկային»:

Դիմումի վերջում ընդգծվում է գրողի դերը իր ժողովրդի ազգային ազատագրության համար մղվող

պայքարում: Եվ ոչ միայն դա: Գրողը պատասխանատու է այն ամենի համար, ինչ կատարվում է մոլորակի վրա:

* * *

Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից, երբ ժողովուրդն ակտիվորեն մասնակցում էր հանրահավաքներին ու շքերթներին, որպես ոգեշնչումի կոչ, հնչում էր *Յ.Շիրվազի* տարիներ առաջ գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: Նրա մեջ մեծ բանաստեղծի մարգարեական նրբանկատությունն ու հեռատեսությունն էր խոսում:

Յ.Շիրազի ողբի տողերը ծածանվում էին պայքարի դրոշի պես: Այն արտասանում էին ասմունքողներն ու բանվորները, ուսանողներն ու աշակերտները.

*Ղարաբաղը մորս կանչն է՝ ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է՝ կարմիր, բայց սեւ ունի սրտում:
...Ա՛խ, ե՞րբ պիտի ելնես բանտից՝ Նախիջեւանի ձեռքից բռնած,
Որ ազգովին Մասիս ելնենք, քարավանի նառից բռնած,
Նորից ազգի ավազանում հայ մկրտվես, հայ Ղարաբաղ:*

Գնալով ծնվեց Ղարաբաղյան շարժման եւ Արցախյան պատերազմի երգը, որ համահունչ էր զենքի շառաչին: Պոեզիան զինվորագրվեց հայ ժողովրդի ազատագրական պայքարին՝ Արցախը համարելով ամբողջ հայության ազատության ու գոյատեւման ջահակիրն ու առաջամարտիկը:

1989 թ. Երեւանում «Լույս» հրատարակչությունը տպագրեց *Վ.ՅԱԿՈԲՅԱՆԻ* «Արցախա ծուխ» ժողովածուն: «Արցախա ծուխը» արարելու-հարատեւելու, սիրելու-սիրվելու, մաքառելու-թեւավորվելու ծուխ է: Այն երեւում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող

Ծուխ չէ դա, այլ մեռոնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի զարնանային ցող, ապագային հառած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: «Արցախա ծուխ» գրքում Հակոբյանի քնարական հերոսը ջերմությամբ, արյան եռքով Արցախի հետ է: Նա իր երակների մեջ զգում է հողի ծլարձակումը, լեռների սանձակոտոր լինելը, ժամանակների ընթացքը.

*Փոխվել է ժամը, դասը չի փոխվել,
զանգում ծուլվել է Սարդարապատը...: 203
(«Որդան կարմիր»):*

Բանաստեղծը եզրակացնում է, որ մղձավանջը պետք է մարի տան լույսից, ամեն մի նահատակ դառնա «զոյության վճիռ», «հավատը՝ սուրբ տուն», առավոտը՝ հառնունի դաս, «եւ դարձն՝ արմատանց, մարտիրոսություն» («Մղձավանջ»): «Ձգված աղեղներ» երգում բանաստեղծը դառն ու հուսադրող զգացումների մի թարմ պատկեր է հյուսում, ուր անտառը խրվում է անպի մեջ, ձորում խրխինջը կորցնում է ձիուն, «օրվա մտքի մեջ խայտում է սուտը»: Քնարական հերոսի աչքին լեռնագագաթները աստղերի զոհասեղան են թվում, «խիղճը փնտրում է ու չի գտնում տեր», այդ պատճառով էլ «օրերն անցնող՝ սլացող նետ են»: Սակայն քնարական հերոսը չի հուսալքվում.

*Ձանգը արթնացավ արյան խորքերում,
զոհերը ելնում, միանում են մեզ,
անթիվ ձեռքերով գրկվել է Քիրսը*

*Եւ լեռան փեշից մեռոն է թափվում,
Ինչ էլ որ լինի՝ մենք լինելու ենք: 204*

Վ. Հակոբյանը որպես կարոտի ու սիրո երգիչ, տեսավ 20-րդ դարի մղձավանջը արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ, դառնությանը ու ցասունով խարազանեց մութ ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակը արելը պատկերում է որպես «պատուհանից դուրս նետված» արյունաքամ մանուկ, իսկ «երկինքը սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի սուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես եւ պարզվում է, որ ընդհանուր բացականչությունների տակ ոչինչ չի փոխվել. «գայլը գայլն է նույն՝ բնույթով պատիր՝ գառան մորթումեջ, թե որջում անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է.

*Ատամը արյան համ առավ կրկին,
Նորից երեւաց մոութը գայլի...: 205*

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատելելու կոչը, ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել, սրբել մամուռը, չմոռանալ, որ

*Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,
Բայց ոչ մի անգամ, աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա...: 206*

1989 թ. Վ.Հակոբյանը ընթերցողի սեղանին դրեց նաեւ «Ամարասի գանգերը» խորագրով գիրքը: Ծանոթանալով գրքի «Այս խաչքարը ես եմ» շարքին, զգում

Ես Արցախի համակող շունչը, լսում արդարության կանչը: Հակոբյանի երգերում գոյատևելու ճշմարտությունը, բանաստեղծական պատկերից ածանցվելով, վերածվում է հույսի եւ հավատի հացի: Այդ հույսն ու հավատը բխում են բանաստեղծի լեռնաշխարհից, ուր «քարերն էլ հասցե են ու գիր», ուր «ճամփաներ են ծորում արյունից եւ քայլը սիրո նշան է հողին»: Ուրքերի տակ ունենալով հողը սրբազան, արցախցին պայքարի եւ հույսի սպասման մեջ տեսնում է, որ «ընծյուղվում է օրը տաք ափից» եւ «խորքերով է արմատը երդվում»:

«Այս խաչքարը ես եմ» ծնված է ցավից: Այդ ցավը բանաստեղծի համոզմամբ «մեր ժողովրդի կրկնվող պատմության դասն է»: Այդ ցավ-դասը, որպես հոգու ճրագ, մերվել է բանաստեղծի երգերին եւ դարձել մաքառման խռովք: Հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման հերոսները հառնեցին Վ.Հակոբյանի նոր երգերում: Նա առաջինը ձեռք մեկնեց Սոսեի կերպարին: Ամեն մի հայի համար թանկ ու հարազատ այդ անունը առաջին հերթին խորհրդանշում է հայ ֆիդայուհուն: Ահա ինչու բանաստեղծը նրան ներկայացրեց որպես սիրո եւ հայրենիքի ամբողջության խորհրդանիշ: Ըստ բանաստեղծի Աղբյուր Սերոբին ժողովրդի հանդեպ եղած նվիրումից բացի ֆիդայական հրաշքների է տարել նաեւ Սոսեի մեծ սերը: Պատահական չէ, որ Սոսեն վերածնվեց հայ ժողովրդի ազգային ազատագրական նորոյա պայքարում: Շարքը ծնվեց ժամանակին: Որոշ ժամանակ անց բանաստեղծը հրատարակեց «Սոսե» խորագրով իր երգերի ժողովածուն, որի միջով անցնում է պայքարի գաղափարը: Գիրքը բացվում է «Բանաստեղծության համար չեն ասում...» տողով

սկսվող երգով: Այն հայրենասիրության եւ ազատասիրության դարավոր զգացումից ծնված խոսք է, ասված արցախյան գոյամարտի ամենաթեժ պահին.

*Մեկ-մեկ թվում է Դավիթն են, վրաս՝
Քառսուն ջաղացքար
Ձենով Օհանի ձենն է ինձ հասնում:
Մեկմեկ թվում է, թե Ավարայրի
Հողն է ոտքիս տակ,
Վարդանանց կովի ձենն է ինձ հասնում:
Մեկմեկ թվում է, թե Ճգնավոր են
Փակված մի վանքում
Խալխի դուրս կանչող ձենն է ինձ հասնում:
Մեկմեկ թվում է՝ Սարդարապատում
Ընկած զինվոր են
Հաղթանակի սուրբ ձենն է ինձ հասնում:
Մեկմեկ թվում է՝ Արցախի սրտից
Կաթած արյուն են
Չմեռնող հույսի ձենն է ինձ հասնում...: 207*

Արցախի սրտից հոսող արյան առաջն առնելու, չմեռնող հույսի ձայնը անկաշկանդ ու հնչեղ դարձնելու միակ ճանապարհը բանաստեղծը համարում է պայքարը եւ իրեն նետում մաքառումների հորձանուտի մեջ.

*Ժամանակը թռչում է հավքի պես,
Երկինքը թեւ է գտնում իր համար,
Թախծը վարդ է գտնում իր համար,
Հողը երազ է գտնում իր համար,
Եվ ես անունն են դառնում մաքառման: 208
(«Մաքառումներ»):*

Բանաստեղծ ու երգահան Գ.ԳԱՐՐԻԵԼՅԱՆԸ անմիջապես արձագանքում էր իրադարձություններին: 1988-ի փետրվարի 20-ի հայտնի նիստի տպավորության տակ գրեց «Անկնիք վճիռ» ստեղծագործությունը: Բանաստեղծը մարզխորհրդի Որոշումը գնահատում է որպես «իմաստուն վճիռ», հաստատում ժողովրդի երազը.

*Թե բավ է՝ ինչքան
Ապրել ենք չոքած,
Մեր սուրբ դրոշից
Մեր գերբը պոկած...*

Ժամանակն է փրկելու «մեր մայր հողն ու հայրենին», բացականչում է բանաստեղծը եւ ընդհանրացման մեջ գնահատում երեւույթը.

*Ու թեեւ չունեն
Վճիռն այդ կնիք,
Ժողովն այդ փրկեց
Մի ողջ հայրենիք:*

Թարթառը, Մռովը, Քիրսը, Կարկառը, Խաչենագետը եւ այլ տեղանուններ դարձան բանաստեղծական մետաֆորներ: Արցախը լեզու առած խոսում էր Գ.Գարրիելյանի գրչի տակ: Նրա երգերում Թարթառը թռռների հետ խոսեց «ճերմականազ պապի» նման («Թարթառ»), Մռովը մռայլվեց, երբ թուրքը գրեց, որ արցախցիները եկվոր են: Հսկա սարը ծառացավ եւ իր որդիներին հորդորեց. «Արցախը քոնն է դարերից հին ու խոր» («Մռով»): Քիրսա սարը աքլորականչին հնչեցրեց շեփորը, որ «Քնով չանցնեն Արծվաճուտ որդիք»

(«Քիրս»), Կարկառը հոլովեց հեռուներում գտնվող զավակների տունդարձի երգը («Կարկառ»):

Գ.Գաբրիելյանի բանաստեղծությունների մեջ հնչում են պատասխաններ ազերի վայ գիտնականներին, որոնք բացել էին կեղծիքի վարագույրը եւ Հայոց Արցախը համարում էին ազերական: Այդ սուտն ու կեղծիքը պետք է մերկացվեր թեկուզ եւ բանաստեղծության ընձեռած սահմաններում, եւ ինչը միանգամայն հաջողվում է Գաբրիելյանին:

Մանկագրությանը հատուկ հարց ու պատասխանի ձեւով Գ.Գաբրիելյանը երեխաների հոգում բորբոքում է պապերից ժառանգած օջախների տերը լինելու զգացումը: «Ու՞մն է» բանաստեղծության ծփանքների շաղախը ավանդական հողի քաղցրության եւ հավերժության գաղափարի լույսն է: Բանաստեղծը թվարկում է չքնաղ ծաղիկների, կածանների, սուրբ տաճարների հայաշունչ գեղեցկությունները եւ պապի իմաստությամբ ու հպարտությամբ կտակում:

Իմ բալիկներ, Արցախն ու՞մն է՝

Ծուռ քաջերով իր խենթ:

Մեր Հայաստան աշխարհինն է,

Հայերինն է հավետ: 209

Ռմբակոծվող ու հրթիռակոծվող Ստեփանակերտի մանուկները աստվածային ուժով դարձել են անվախ, ցատկել մանկության տարիների վրայով եւ երեւոյթները ընդունում էին մեծավարի: Նրանք ասում են թշնամուն, որ անվերջ կրակում է՝ ձգտելով «մեզ մեր հայրենի տնից քշելու», բայց «կրակոցով տան կրակը Հայի տանը չի մարի, չէ» («Կրակում են»), ծոռը տատին

խնդրում է «մեծ պապի գոտին», որ կապի եւ պապի նման կռվելը սովորի («Պապի գոտին»): Դիմելով իր մանուկ ընթերցողներին, Գ.Գաբրիելյանը պապի հույսով ընդգծում է հավատը հայ ժողովրդի վերջնական հաղթանակի նկատմամբ.

*Ես օրհնում եմ ձեր վաղը,
Ձեր զորությանը հիացած,
Դուք կտեսնեք Արցախը
Իր Մեծ Սորը միացած: ²¹⁰*

(«Արցախի մանուկներին»):

Վերոհիշյալ ստեղծագործություններից բացի Գ.Գաբրիելյանը հորինել է տասնյակ մարտական բանաստեղծություններ: Նրա երգը՝ ծնված Արցախի հույսերից ու ցավերից, ակնկալություններից ու տազնապաներից, հնչում է ամեն մի պահի՝ խոսելով ընթերցողի հոգու հետ: Արցախի սուրբ մասունքները ոգեշունչ երգեր դարձան Գաբրիելյանի շրթերին: Ոգեկոչման հնչել ելեւէջներ են Գաբրիելյանի «Ամարաս», «Դադիվանք», «Գանձասար» երգերը, որոնք արդեն մտել են հայկական բոլոր համույթների երգացանկերի մեջ: Արցախյան պատերազմի տարիներին բանաստեղծի գրած մարտական երգերը առաջին հերթին դեպի իր հրաշք լեռնաշխարհն ունեցած տազնապի ու հավատի արտահայտություններ են: Այդ վերաբերմունքի պերճախոս առհավատչյան «Արցախի ֆիդայիներին» քայլերգն է: Նախ փառաբանելով հերոսներ ծնող մայրերին, բանաստեղծը խոսքն ուղղում է ֆիդայիներին. «Ձեր նախնյաց պես չգիտեք քնել, Չգիտեք զիջել ոսոխներին նեռ»: Նոր ֆիդայիների հոգում Անդրանիկի, Գեւորգ

Չաուշի, Աղբյուր Սերոբի սերն է ծփում, նրանց օրինակով պայքարի ելան, «Որ ազատ ապրեն ազգ ու հայրենիք»:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին օրերից սկսած *ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԸ* անմիջապես, իր գրչեղբայրների հետ միասին մասնակցեց հանրահավաքներին՝ հնչեցնելով պայքարի իր երգերը, որոնցում զգացվում էր օրվա պահանջը՝ մարտնչել մինչեւ վերջնական հաղթանակ, մինչեւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վերամիավորումը մայր Հայաստանին: Այդ տարիներին Խանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, լեգենդներ, որ տպագրվել են թերթերի էջերում եւ ամսագրերում, հաղորդվել ռադիոյով եւ հեռուստատեսությամբ:

Ս. Խանյանի բանաստեղծություններում առաջին հերթին ընդգծված են նրա որդիական գրույցները Արցախ-մոր հետ: Այս հնարանքի առավելությունն այն է, որ բանաստեղծն անմիջականորեն արտահայտում է իր ապրումներն ու զգացումները, բացում սիրտը՝ լի ակնկալիքներով, բռնկված պայքարի կրակով: Այս առումով հետաքրքիր են նրա «Արցախցիներ», «Արցախ», «Գանձասար», «Ամարաս», «Հավատ», «Արծվաշեն», «Ազգային հարց», «Արցախի դասը», «Իմ մայր ժողովուրդ» եւ այլ ստեղծագործություններ, որ զետեղվել են 1990-1991 թթ. լույս տեսած «Կարոտի կրակներ», «Արցախյան դողանջներ» եւ ապա «Իմ ծիածանը» գրքերում: Պետք է ընդգծել, որ այդ ժամանակահատվածում գրված յուրաքանչյուր ստեղծագործություն կոնկրետ կապված է այս կամ այն երեւոյթի, իրադարձության, մարդկանց անօրինակ սխրանքի եւ այլ

ժողովրդանվեր արարքի հետ: Այս երեւոյթը նկատվում է ոչ միայն Ս. Խանյանի, այլեւ Գ. Գաբրիելյանի, Վ. Յակոբյանի, Յ. Բեգլարյանի, Ն. Ավագյանի եւ մյուս բանաստեղծների գրական հունձքում:

Ձենքի եւ երգի միասնության գաղափարը միշտ համակել է Ս. Խանյանին: Դա նրա պոետական հավատամքն է, մի սկզբունք, որ ապացուցում է ժողովրդի ճակատագրի հանդեպ գրողի ակտիվ կենսադիրքի պահանջը: Կարդալով Ս. Խանյանի բանաստեղծութունները, կարելի է պարզ պատկերացում կազմել Արցախյան գոյամարտի թե՛ օրերին տեղի ունեցած դեպքերի մասին: Սակայն սխալ կլիներ եզրակացնել, որ դրանք միայն պատմական փաստերի եւ երեւոյթների թվարկումներ են: Ինչպես նշել է անվանի գրականագետ Ս. Դանիելյանը. «Կենսագրական լավագույն էջերը գրվեցին Շարժման տարիներին: Իր խիզախ, արի կեցվածքով Ս. Խանյանը մտավորականների այն փաղանգում էր, որը քաջ գիտեր իր դերը, որը պարզապես նվիրումի մեջ օրինակ էր երիտասարդ սերնդի բանաստեղծների համար: Նա ծառանալ գիտեր ոչ միայն տաք տողերի մեջ, այլեւ՝ կյանքում, իսկ դա քիչ է որակել «ապրած» արատահայտությամբ, կենսական վարքագիծն է դա, բարձր նկարագրի վկայութուն, ուր տողը հատվում է դավանանքի կայունությամբ, կեցության բաց պարզությամբ»: ²¹¹

Նշենք, որ Ս. Խանյանը աշխատելով Արցախի պետական համալսարանում, որ այդ տարիներին դարձել էր քաղաքական պայքարի կենտրոն, միաժամանակ լինելով գրողների միության ակտիվ անդամներից մեկը, գտնվում էր գոյամարտի գաղափարական խնորում-

ների առանցքում: Այստեղից էլ նրա ստեղծագործությունների հագեցվածությունը, շիկացած լիցքը՝ թարմ արտահայտչամիջոցներով: Պատմական սկզբնաղբյուրի եւ պատկերային հուզաթաթավ հյուսվածքի արժեք ունեն նրա պայքարի երգերը: 1988 թ. դեկտեմբերի 7-ին Ս. Խանյանը դասախոս Լ. Գրիգորյանի հետ մեկնում էր Կիրովական, այնտեղ տեղափոխված Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողներին դասավանդելու նպատակով: Երեւանից Կիրովական ավտոբուսով մեկնելիս տեղի է ունենում անսպասելին: Սպիտակի երկրաշարժի պահին բանաստեղծն ու իր գործընկերն ականատես են լինում այդ ծանր արհավիրքին, ապրում փլուզված շենքերի, հողածածկ տների, փլատակների տակ գտնվող անօգնական մարդկանց ահավոր տեսարաններին: Նույն գիշերը վերադառնալով Երեւան, ծնվում է բանաստեղծի «Իմ մայր ժողովուրդ» ստեղծագործությունը, որ տպագրվում է այն ժամանակ հրատարակվող «Սովետական Հայաստան» հանրապետական թերթում: Բանաստեղծությունը լայն արձագանք է գտնում ընթերցողների շրջանում, ասմունքողների կողմից հնչեցվում է եւ Երեւանում, եւ Սփյուռքում: Դերասան Ս. Եվրիյանը Բեյրութում արտասանում է այն եւ արժանանում հատուկ մրցանակի: Դիմելով մայր ժողովրդին, բանաստեղծը նշում է, որ ինքը եկել է «Արցախի ըմբոստ սարերից», որ մայր Հայաստանի «հոգու մեջ ցավերը կարդա», «զգա շոյող ձեռքերի ուժը», «մտնի խորքերը խորհուրդների», որպեսզի իր հույսերի ճամփին ցանի Հայոց աշխարհի լույսը եւ շարունակի պայքարը Արցախի ազատության համար: Սակայն, ավա՜ղ, արցունքի ծովն է խեղդում քնարական

Իերոսի սիրտը, քանի որ բնությունը անարդար իր խաղն է մատուցել, ժողովրդի դարավոր ցավերին ավելացնելով մի նոր աղետալի հարված: Հորս մասից բաղկացած բանաստեղծության յուրաքանչյուրի համար օգտագործելով ժողովրդական «քո ցավը տանեն» արտահայտությունը, բանաստեղծը թվարկում է ժողովրդի անցած ճանապարհի դժվարությունները եւ ասում իր լավատեսական խոսքը.

*Տառապանքներում կոփված քո կամքով,
Արցունքի միջից սգանք զոհերին,
Բայց չմոռանանք,
Որ քո անունը պիտի արելի,
Պիտի արելի
Վշտահար ապրող սրտերի խորքում,
Փլատակներից կենդանի փրկված
Քո զավակների մշուշված հոգում,
Մեր մանուկների անմեղ խաղերում,
Մեր նորից հառնած
Շեն քաղաքների լայն փողոցներում,
Մեր ավաններում,
Գյուղերում մեր բյուր,
Կարոտից ծնված մեր երգերի մեջ,
Մեր ապագայի շրթերի վրա: ²¹²*

Սակայն դրանով չի ավարտվում ստեղծագործությունը: Քնարական հերոսի մտորումների մեջ ըմբոստ Արցախն է: Ժողովրդի նոր վշտի առջեւ ծնկի գալով, նա խորհրդածում է.

*Հին Անարասի եւ Գանձասարի
Աղոթքով հիշենք զոհերին մեր նոր,*

Թարթառի խռով սաղմոսը բերենք
 Նրանց ածյունին,
 Քիրսի, Մռովի ծաղկունքից եփված
 Մեռոնով օծենք շիրիմները սուրբ:
 Մեր արցունքախառն աղոթքի միջից
 Ողբանք մեր վիշտը
 Եվ զոհվածներին ասենք.
 «Կհառնեն քաղաքները մեր»...
 Ասենք. «Ձեր սիրած Արցախը կգա,
 Կգա կարոտով,
 Մեր երազների ճառագած փնջով...:
 Քո կանքի ուժով ապրել ես դարեր,
 Կապրես եւ հիմա:
 Քո թախծոտ սրտի հույսի շողերը
 Նորից փունջ արած Արցախ կտանեն,
 Քո ցավը տանեն: 213

Ազերի բռնակալների դեմ անկախության եւ ազատության համար ոտքի ելած արցախցիների վճռականության, կանքի ուժի, ազատաբաղձ ոգու գեղարվեստական մի պատկեր է «Արցախցիներ» քնարական պոեմը: Չորս գլուխներից բաղկացած ստեղծագործության մեջ ներկայացվում է մեր ժողովրդի հազարամյա պատմությունը: Պոեմի հյուսվածքի մեջ բերելով Գրիգոր Նարեկացու զրույցն Աստծո հետ, բանաստեղծն ընդգծում է հայ մարդու ընդվզումն անարդարության դեմ: Այդ հասկանալով, խելոք մեր պապերը, իրենց «ըմբոստությունը դարձրին դրոշ ու զենք» եւ շշնջացին.

...«Մեր Աստվածը մենք ենք,
 Մենք ենք մեր Աստվածը մեր սարերի վրա,

*Մեր սարերից բարձր մեր հոգու մեջ,
Մեր ձեռքերով պիտի վառենք աստղերը մեր
Եվ հայ պիտի ապրենք դարեր անվերջ»։²¹⁴*

Պոեմում ընդգծվում է հայ ժողովրդի շինարար ձեռքը, ստեղծագործող ոգին, մեսրոպյան գրով արդարության խոսքը հնչեցնելու վճռականությունը, խաչքարերի լեզվով սիրտն ու հոգին բացելու կարողությունը, Ավարայրից մինչեւ Սարդարապատ ձգված հաղթական երթը։ Սակայն պատմության զիգզագներում եղան մաեւ ստալինյան անարդար օրենքներ, հայ ժողովրդի հանդեպ կատարված դաժանություններ, Հայոց Նախիջեւանի եւ Արցախի կորուստները։ Բանաստեղծը հոգեբանական բացահայտումներով նշում է Մեծ Հայքի 10-րդ նահանգը կազմող Արցախի նորօրյա պայքարը եւ հավատով ընդգծում արցախցիների ոգու արիությունը, վտանգի ժամին մեկը մյուսին թեւ-թիկունք դառնալու ավանդական սովորույթը։ Արցախցիների պահանջը ազնիվ ու մարդկային է, ազգային միասնության գաղափարի երազ։ Նրանց կոչն է. «Մեր մո՛րն ենք ուզում, մեր լեզո՛ւն, խո՛սքը, դա մեր երազն է հազարամյա»։ Պոեմի ավարտը ժողովրդի ազատագրական պայքարի հանդեպ եղած հավատն է, որ հնչում է առինքնող ուժով.

*Արցախցիները պողպատից կարծր են,
Վեհ են ու բարձր են եւ անողորք,
Բարեկամների դիմաց միշտ քաղցր են,
Իսկ չարերի դեմ՝ բռունցք, բողոք։
Դարի ոգին են արցախցիները,
Խղճի դրոշմ են ազգերի մեջ,*

*Արցախցիները նոր աստվածներ են,
Կհասնեն իրենց երազին պերճ: 215*

Ս. Խանյանի երգերում որպես ժողովրդի հավերժական գոյության խորհրդանշաններ, ընդգծվում են Արցախի հուշարձանները՝ Գանձասարը («Գանձասար»), Ամարասը («Ամարաս»), Դադիվանքը («Դադիվանք»), Կավաք վանքը եւ այլ սրբավայրեր: Բանաստեղծի համար Արցախը գեղեցկուհի մայր է, որի պատիվը պետք է բարձր պահի զավակը: Բանաստեղծը ցավով նշում է, որ ազերի հարեւանը ձգտում է սեփականել հայ ժողովրդի ստեղծած գանձերն ու հողը.

*Սեփականում են կոթողները քո,
Ժանյակները քո՝ փոխված խաչքարի,
Ում ձեռքը երբեք քարի չի դիպել,
Ուզում է տիրել քո Գանձասարին: 216*

Ընդգծելով հարեւանի թշնամական արարքը եւ Արցախը հայաթափ անելու նրա բարբաջը, բանաստեղծը միաժամանակ նշում է հավատը մեր հաղթանակի հանդեպ եւ դիմում Արցախին, որ աշխարհում «Ով արդար է, մեկ է, քեզ կդառնա սատար»: Քնարական հերոսի համար Արցախի ոգին օժված է «արեւային հնձաններում», ուստի անհրաժեշտ է դառնալ զինվորյալ եւ փրկել օջախ-մորը: Քնարական հերոսը եզրակացնում է.

*Օրհներգելը քիչ է, զինվորյալն են ես քո,
Երազներիս բույլը փունջն է քո տենչանքի,
Աշխարհացունց դար է, արհացիր կամքով,
Արցախ, պիտի հասնես քո երազած ափին: 217*

Ուշադրության արժանի գործ է «Ազգային հարց» քնարական պոեմը: Ելնելով պատմության փորձից, ազգային հարցում եղած խանական դրսեւորումներից, բոլշեւիկյան դարաշրջանում այդ կարեւոր պրոբլեմի աղետաբեր լուծումից, Ս. Խանյանը քննարկում է այդ ամենը եւ բերում պոետական իր խոսքը: Բանաստեղծը գտնում է, որ բեմ է հանվել ազգային հարցը, որի տուտը ուժեղների ձեռքի մեջ է: Պատմական անդրադարձի լույսի տակ պոեմում քննարկվում է ստալինյան էպոխայի վայրիվերումները, Ստալինի դաժանությունը.

*Նրա ամուր կրնկի տակ
Եվ ուղեղի զառանցանքում,
Հարցն ազգային ձեւափոխվեց,
Ինքնորոշման կեղծ լաթ դարձավ,
Գունազրկված թույլ ծածանվեց
Եվ սասանվեց: 218*

«Ազգային հարց» պոեմում բանաստեղծը պրոբլեմի արդար լուծումը բխեցնում է իր Խաչի պապի հայեցակետից, որի արմատները հասնում են մեր ժողովրդի առասպելական ժամանակներին եւ «Սասնա Շռեր» դյուցազներգության պատգամներին: Ժողովրդի կենսափորձից է ծնված պոեմի հերոսներից մեկի՝ Խաչի պապի խորհուրդը.

*- Որդի՛ս, ազգը ազգին պիտի սրտանց հարգի,
Օգնի սրտանց,
Լինի ազնիվ թե՛ հարեւան եւ թե՛ եղբայր,
Որ չհենվի զենքի ուժին,
Որ չխլի նրա հողը,*

Երբեք չասի. «Ես ուժեղ եմ,
Իսկ դու մժեղ»:
Հասի. «Լեզուն իմ հարուստ է,
Քոնը՝ աղքատ,
Ինը երգ է նուրբ սոխակի,
Քոնն ագռավի կռիւնչ է լոկ»:
Հասի. «Խոսիր իմ բարբառով,
Քո դպրոցը հար մոռացիր,
Քո սահմանը նեղ է,- չասի,-
Իմ սահմանը անվերջ, անծիր»:²¹⁹

Այս հատվածին հաջորդում է ազգերի բարեկամության, եղբայրության, հավասարության, պետականության, փոխադարձ սիրո, լեզվի եւ մշակույթի հարստացման, ազգերի իրավունքների վերականգման սկզբունքների բանաստեղծական պատկերը: Բայց, ավա՛ղ, այս երազանքը դեռեւս հնարավոր չէ իրականացնել, քանզի ուժեղները դեռեւս թելադրում են իրենց կամքը: Պոեմը ավարտվում է ազգային հարցի լուծման խաչի պապի երազանքով, որն անցել է պոետ թոռանը.

Ազգային հարց...
Իմ վարդագույն երազներում
Միշտ հնչում է պապիս ծայրը:
Այս լուսավոր աշխարհի մեջ
Մինչեւ ե՞րբ է
Պապիս տենչը մնալու տենչ:²²⁰

1988 թ. հոկտեմբերի սկզբին, ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախի պետհամալսարանում կազմակերպվեց հացադուլ, որին մասնակցեցին դասախոս Յ. Գրիգորյանը եւ մի շարք ուսանողներ: Այդ հացա-

դուլը բողոքի ձեւերից մեկն էր ԽՍՀՄ եւ Ադրբեջանի դեկավարութեան դեմ, որոնք ազգային հարցի, այդ թվում եւ Արցախի պրոբլեմի լուծմանը մոտենում էին բռնատիրական դիրքերից: Ահա այդ օրերի արտահայտութիւնն է Ս. Խանյանի «Արցախի դասը» բանաստեղծութիւնը՝ գրված 1988-ի հոկտեմբերի 19-ին: Բանաստեղծը անդրադառնալով Ամարասուն Ա. Մաշտոցի բացած Արցախի առաջին դպրոցի պատմութեանը, ներկայացնում է մեր դարավոր հերոսական ընթացքը, բնութագրում պարսկական, բյուզանդական, արաբական, մոնղոլական, թուրքական եւ այլ բռնապետութիւնների չարագործութիւնները եւ հպարտութեան զգացումով գնահատում մեր անձնուրաց հերոսների գլխավորութեամբ ժողովրդի մղած անզիջում պայքարը: Բանաստեղծը Արցախի դասը համարում է ինքնութեան եւ ապրելու դաս եւ ընդհանրացնում.

*Մեր դարավոր դասը փարոս է դարձել,
Նա հոր դաս է, նա մոր դաս է ու հողի:
Մեր դասը մեր բախտի դռներն է բացել,
Ստքի՛ դաս է, խղճի դաս է ու շողի՛:
Ո՛վ մայր Արցախ, քո փորձութեան այս ժամին,
Քո զինվորն ենք՝ հավերժ կոփված քո կամքով,
Ամարասուն դու դաս առար Մաշտոցից,
Քո գրկի մեջ պիտի սերտենք դասը քո: ²²¹*

Գրականագետ Ա. Աթայանը Ս. Խանյանի պայքարի երգերը դիտարկել եւ գնահատել է «Խաչի օրինանքն ու թրի շառաչը» վերնագրի տակ: Այս մոտեցումը բխում է ոչ միայն բանաստեղծի երգերից, այլեւ նրա հայեցակետից, որ վերաբերում է ժողովրդի ֆիզիկական եւ բարո-

յական ուժերի համախմբմանը, այդ ուղղությամբ նաեւ հայոց եկեղեցու, ասել է՝ հայրենի հավատի դերին: Խանյանի երգերում հպարտության զգացումն ակունքվում է ժողովրդի հերոսական անցյալից եւ առօրյա արդարացի պայքարից: Նրա քնարական հերոսն անձնավորելով Արցախը՝ նրա անունից հայտարարում է, որ իր «հույսերի կրակին ո՛չ ձյուն կիջնի, ո՛չ անձրեւ», որովհետեւ ինքը հրածին է, հոգին՝ «վառող հրազեն»: Նրա հավատը զենքն է, հողը՝ ամուր պատվանդան: Բանաստեղծն Արցախի ճակատագիրը համարում է հայ ժողովրդի հոգու եւ սրտի թրթիռների մի մասը եւ պայքարի ամենաթեժ պահին՝ 1989 թ., ի հեճուկս թշնամու, հայտարարում է.

*Հայեր են սեզ սարերս,
Խաչքարերս էլ հայեր են,
Իմ հայածին դարերը
Պիտի խոսեն հայերեն: 222*

Սերնդափոխության իմաստը բանաստեղծն առաջին հերթին տեսնում է հայրենի օջախները պաշտպանելու, թշնամուն ծնկի բերելու, ազատության մեջ ապրելու վճռականության մեջ: Այդ մասին է խոսում «Պապիս պատիվը» բանաստեղծությունը: Քնարական հերոսի հոգու աշխարհում Նժդեհի զինակից պապի պատկերն է, հնչում է նրա ձայնը: Տեսիլքն առինքնող է,- պապը սեղմելով Նժդեհի ձեռքը, ասում է.

*«Գլխիս օրհնված ձեռքդ դիր...
Թող ուժդ ինձնով թռռներիս հասնի,
Արյունդ եռա սրտերում անկեղծ,*

*Թող կամքդ նրանց քաջագուն դարձնի,
Որ փրկեն հողն ու պատիվը իրենց»:* 223

Արցախի սրբացած այրերի, անմահ զինվորյալների տեսիլքային պատկերով նոր սերնդին պայքարի կոչելու գաղափարի հաջողված պատկերներ են «Տեսիլք», «Արեւսարի այցը», «Կավագ վանքը», «Ջավակը», «Խաչի պապս» եւ այլ բանաստեղծություններ: Կոմպոզիցիոն մի ընդհանրություն կազմող այդ երգերի բնական շարունակությունը «Ջահելացրեք անտառը» ստեղծագործությունն է: Այլաբերության գտնված օրինակ է այն: Խաչատուր պապի սիրած «ճառը» անտառը ջահելացնելու խորհուրդն էր: Թռռանը՝ քնարական հերոսին, թվում էր, թե հայրը, քեռին, եղբայրը պիտի գնան, կտրտեն անտառի ծերացած ծառերը, որ այն ջահելանա, բայց հետագայում կյանքը թելադրում է պապի խորհուրդը, երբ վտանգվում է հայրենիքի եւ ժողովրդի ազատությունը: Պարզվում է, որ պապի երազանքը շատ մանուկներ ունենալն է, չէ՞ որ ժողովուրդը նման է անտառի, նա չպետք է ծերանա, նրա կյանքը ջահելների շնչով է հավերժվում...

*Կռիվ եղավ, տուն չդարձան
Իմ քեռին ու եղբայրը,
Պապիս խոսքը նոր հասկացա.
- Ջահելացրեք անտառը:* 224

Հայրենի հողի մեջ բանաստեղծը տեսնում է պապերի պատմությունը, նոր սերնդի «Ծլարծակված պատիվն ու հոգին», որի գաղտնիքներն արդեն բացել են նորերը եւ հպարտանում է, որ «Մեր ճամփեքին չենք մուրացել

«հաց ու գինի», եւ ինչ էլ լինի «Մեր օջախը կպաշտպանենք թե՛ արյունով, թե՛ երազով»: «Ծանոթ է նա» բանաստեղծության մեջ ընդգծելով հայ ժողովրդի խաղաղասիրական եւ արարող ոգին, բանաստեղծը վկայակոչում է ավարառու թշնամու նոր ոտնձգություններն Արցախի դեմ: Նա «Սուր է ճոճում՝ հոխորտալով ու երկյուղով»: Բանաստեղծը մեր հերոսական պատմության անունից եզրակացնում է.

*Ծանոթ է նա հրաբուխին մեր կուռ կամքի,
Մեր չհոգնող բազուկներին ծանոթ է նա,
Ահա ինչու կատաղել է նա կրկնակի,
Նրա ոխը անփառունակ կվերջանա: 225*

Բանաստեղծը հավատում է, որ կծմվի նոր պատմագիրը եւ կգրի մատյանը նոր, որտեղ կընդգծվի «Լեզենդ դարձած հաղթանակը մեր փառավոր»: 1990-ական թթ. սկզբին գրված «Դարերդ ի վեր», «Խաչենաձոր», «Տագնապ եւ հավատ», «Զարմանք», «Ինչպե՞ս չգնամ», «Հույսը», «1992-ամանոր», «Անտառի ցավը» եւ այլ բանաստեղծություններում Ս. Խանյանը գտնելով արտահայտվելու նոր հնարանքներ եւ երանգներ, ընդգծում է մեր ժողովրդի ուժն ու կամքը: «1993» երգի մեջ քնարական հերոսը խոսելով Արցախյան պատերազմի դաժան իրադարձությունների մասին, միաժամանակ նշում է երազանքին հասնելու իր վճռականությունը:

Պատերազմի ահեղ օրերին լինելով իր ժողովրդի հետ, կրելով նրա ցավը, բանաստեղծը ստեղծել է պատկերներ, որոնցում կարելի է տեսնել արցախցիների, հայ մարտիկների ամուր կամքն ու հաղթանակի

Իհավատը: Ինչպես նկարագրված է բանաստեղծության մեջ, թշնամու կողմից հրթիռակոծվում է քաղաքը: Ապա կարճ հրադադարի ժամանակ մարդիկ սկսում են նորոգել շենքերը, իսկ երեխաները խաղում են բակերում, որոնց ականատեսն է լինում Աստվածը, որի ձայնը ասես հնչում է ամենուրեք. «Կամքն Արցախա իմ կամքն է, նա մի գանձ է գտածո»: «Աշխարհ, տեսնո՞ւմ ես» երգում բանաստեղծը խարազանում է մարտնչող Արցախի հանդեպ անտարբեր աշխարհին, որը ներում է «սելջուկ թուրքերի չար ժառանգներին»:

Ինչպես իր գրչեղբայրները, Ս. Խանյանը եւս երգեր է ձոնել Շուշիին եւ ցնծացել նրա ազատագրման համար: Շուշին հարազատ է քնարական հերոսին: Քաղաքը նրա արմատներն է, հոգին, երազը, որովհետեւ կառուցվել է հայի ձեռքով.

*Շուշի, պապիս կերտած քաղաք,
Շուշի, հորս երգած քաղաք,
Դու իմ տատի նախշուն պատկեր,
Իմ անուշ մոր հույսի պատեր: 226*

Թուրքը նենգությամբ խլել է Հայոց Շուշին, բայց նրա հին տերը՝ հայը, այն հետ վերադարձնելու հույսը միշտ վառ է պահել, եւ եկել է պահը, հայ ժողովրդի անձնուրաց զավակների գնով «կրկին մերն է դարձել Շուշին»: Հարազատ որդու ցնծությամբ քնարական հերոսը դիմում է փրկված քաղաքին եւ հաստատում.

*Էլ ոչ մի օր, ոչ մի ժամի,
Քեզ չի գերի չար թշնամին,*

Հայի ձեռքով կերտված Շուշի,
Հայի արյամբ փրկված Շուշի: 227

Յ.ԲԵԳԼԱՐՅԱՆԻ պոեզիայում հայրենիքը սկսվում է Արցախից, ավարտվում Արցախով: Բանաստեղծի չհանգստացող ոգին, որոնումների ծարավը թեմայի շրջանակներում հասցրին «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ» ժողովածուին, որ տպագրվեց Երեւանում, 1990 թ.: Լինելով Ղարաբաղյան շարժման ակտիվ ներկայացուցիչներից մեկը, Յ. Բեգլարյանը փառաբանեց արցախցիների արդար պայքարը, ազգային ինքնորոշման նրանց իրավունքը, որ շղթայվել է խորհրդային տարիներին: Բանաստեղծի հայրենասիրական եւ ժողովրդասիրական ջերմ ու ազնիվ զգացումները նոր կողմերով դրսևորվեցին Արցախին, Հայաստանին, ազատամարտիկներին եւ այդ սուրբ ճանապարհի մարտիրոսվածներին նվիրած ստեղծագործություններում: «Հավատ» բանաստեղծությունը հյուսված է 1988-ի ձմռանը ոտքի ելած արցախցիների արդարացի պահանջի շաղախով: Նա պատկերում է Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը, ուր ձմեռվա բքին ու ցրտին մարդիկ հավատով զինված հավաքվել էին իրենց պահանջներով:

Բանաստեղծը «Մենք առանց ձեզ էլ» ոտանավորում ընթրոստանում է այն կեղծ հայտարարությունների դեմ, որ իբր Արցախը առանց հարեւանի հովանու չի կարող ապրել: Նա վկայակոչում է մեր պատմության երկար ու ձիգ երթը, որի ընթացքում առանց ուրիշի ողորմության հերկ ենք հերկել, տուն պահել, կերտել բերդեր, երգեր երգել, մատյաններ ծաղկել, ունեցել մեր կալն ու մարագը:

Բանաստեղծը լուսարձակի տակ է դնում մեր ժողովրդի բնավորության գծերը, ձգտում է բացահայտել այն առեղծվածը, թե ինչպե՞ս նա դիմակայեց պատմության բոլոր արհավիրքներին եւ այսօր էլ շարունակում է ոչ միայն հարատեւել, այլեւ բարձրացնել իր բողոքի ձայնը նորօրյա անարդարությունների դեմ: Պարզվում է, որ համբերությունը մեր պապերին դարձրել է մեր սարերի պես անառիկ ու սեզ, որից սարսափել է թշնամին («Արցախյան համբերություն»):

Բանաստեղծ Վ.ԴԱՎԹՅԱՆԸ, ինչպես միշտ, այս անգամ եւս, առաջին շարքում էր: «Արցախ» հանդեսի առաջին համարում նրա «Հայաստան-88» պոեմից տպագրվեց մի հատված «Արցախ» խորագրով:

Վաստակաշատ բանաստեղծը 1988-ը համարելով «կայծակե տող ու կնճիռ» դարի ճակատին, ասես իր արյան խորքից լսում է Արցախի թախծալի բարբառը, որը եւ՛ հառաչ է, եւ՛ մռունչ: Այդ հառաչն ու մռունչը նա համարում էր խոցոտվելու արդյունք, արդարացի ծառացում ցավի դեմ.

*Դու կապույտի մեջ վառվող պղնձափայլ առասպել,
Արեւազալդ՝ բարին, աղբյուրդ՝ լույս, քարդ՝ քուրմ,
Եվ քո արծիվը, Արցախ, շանթեր հազած մի ասպետ,
Որ Աստղծո բարձունքից իր տերությունն է հսկում: 228*

Ըստ Վ.Դավթյանի, հարյուրամյակների ընթացքում Արցախը ծնվել է տարերթի ահագնությունից եւ Աստծո աչքերի առջեւ, ոչինչ չի կարողացել նրա բնույթը փոխել: Իր երկնամերձ ճակատին մերթ կապույտը եւ մերթ ամպը, Արցախը «Ամպրոպներ է շնչել, արտաշնչել լույս ու գույն», ինչպես բանաստեղծն է մտորում.

... Դրանից է գուցե, որ բարբառի մեջ քո բամբ,
Եվ որոտմունք կա մի խենթ, եւ՝ թախծոտ քնքշություն: 229

Բանաստեղծը շնչավորելով Արցախի բնության գեղեցկություններն ու շռայլ գույները, որդիական սիրով ու հպարտությամբ է ներկայացնում արցախցիների ըմբոստ ոգին.

Չոնդ՝ կրակ, արյան շիթ,
Մորիդ աստղ է ու ասուպ,
Շանթի քողեր կան բաշիդ,
Քարիդ մեջ՝ կայծ ու ցասում,
Կայծակներ կան հուրհրան
Ամեն կաղնուդ փչակում,
Անգուսպ սիրտը քո նռան

Չենց կրակից է ճաքում...: 230

Արցախի կավե կարասների մեջ գինին «կրակ է բանտված», որ խենթանում է արցախցու «բաբախի մեջ երակի»: Անդրադառնալով Արցախի պատմական անցյալին, Վ.Դավթյանը մերթ նկարագրում է հեթանոս Արցախի անցյալ հրաշքը, մերթ Չիսուսի օգնությամբ Ամարաս մտած լույսը, որով բոցկլտում է ինքնության հուրը: Դժվար ճանապարհ անցած Արցախը լեզու առած խոսում է պոետի գրչի տակ.

Մորիկներ են շառաչել,
Որ կոտրեն մեջքը քո սյան,
Բայց կանգնած են քո առջել,
Գանձասար իմ սրբազան...
Գեղեցկություն ու կանթեղ հավերժության դեմ վառված,
Ամեն սյուն ու կամարից լույսն է կաթում հանձարի:

*Եվ անգոր են քո հանդեպ ծեղքերիդ մեջ ծվարած
Տատասկն ու փուշն այս ամուլ եւ մացառներն այս չարի: 231*

Վ.Դավթյանի պոեմում Արցախի վանքերն ու կամարները պատկերված են որպես «սավառնող ներշնչանք» ու «սրբազան խենթություն»: Արցախը զանգերի տագնապը լսելով՝ ոտքի է ելել հայոց ջանքի բերքը կողոպտող Նեռի դեմ: Բանաստեղծը օրհնում է այդ ըմբոստությունն ու պայքարը՝ հանուն այն հայաշունչ երկրի փրկության, ուր ամեն բարձունքի.

*Աստծո տաճար է, խաչքար, մամռած մատուռ է ու վանք,
Եվ դարերից երկարող բույր ու մխանք է խունկի...: 232*

Ստեղծագործական կյանքի երկար ճանապարհին Ս.ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ տարբեր առիթներով անդրադարձել է Արցախի ճակատագրին: Դեռեւս 1958 թվականին, երբ բանաստեղծուհին հյուրընկալվել է Արցախում, մեծ տագնապ է ապրել հարազատ երկրամասի ապագայի համար: Բանաստեղծուհին չի սքողել ճշմարտությունը, տագնապով Արցախը համեմատել է լեռան հետեւ բուսած, ձորում բարձրացող բարդու հետ եւ միաժամանակ հաստատել. «Ինչքան հեռու իր մոր աչքից, այնքան բուռն է ուժը լարում».

*Ինչքան նրա դեմը փակում, խորն է ծածկում լեռը նրան,
Ինչքան կոծում, հողն են ծեծում շանթ ու անձրեւ, ամպ ու մռայլ,
Այնքան շանթին ծակատ տալիս, կանաչում է շատ ու շռայլ,
Այնքան համառ ձգվում է վեր, այնքան բարձր է հայոց բարդին: 233*

Արցախյան շարժման առաջին օրերին Ստեփանակերտում մի հանդիպման ժամանակ Ս.Կապուտիկյանն արտասանելով «Հայոց բարդին» բանաստեղծությունը,

Մնչել է, որ այն ենթաբնագրային արժարժույթներով նվիրված է Լեռնային Ղարաբաղին: Կոմունիստական ինքնակալության օրերին բանաստեղծուհին պարզ պատճառով չէր կարող բացեիբաց իր դժգոհությունն արտահայտել Արցախի տագնապալից ճակատագրի հանդեպ: Նա իր մտքերը արտահայտել է այլաբանորեն՝ հոգու աչքերով տեսնելով Մեծ Հայքի 10-րդ նահանգի չխամրող երազներն ու ոգորումները.

*Չգվում է վեր, որ բարձրանա, որ գլուխը մի կերպ հանի
Քար ու ժայռից ու երեւա՛, ու երեւա՛ երեւանին,
Ասի՛ նայիր, եղե՛լ եմ, կա՛մ, ու կլինե՛մ, ինչ էլ լինի,
Դու հավատա, լեռներից վե՛ր, քարից կարճոր է Հայոց Բարդին...:234*

Հայ ժողովրդի տաղանդավոր դուստրը հայրենասիրական մղումով 1960-ին գրել է «Ղարաբաղի բարբառը» հրաշալի երգը: Այստեղ եւս Արցախի բնավորության եւ դիմացկունության պատկերման հյուսվածքում երգչուհին ընդգծում է այն հարվածները, որ հասցվում էին հայ ժողովրդի այդ հատվածին: Բանաստեղծուհին Արցախի բնաշխարհի, արցախյան բարեմասնությունների զուգահեռներով ասում է իր սրտացավ խոսքը՝ շաղախված հպարտության զգացումով եւ գոյատեւելու խորհուրդով.

*Ժայռի նմա՛ն է այս հին բարբառը,
Ժայռի պե՛ս կոշտ է, չըհրդկվա՛ծ,
Ու ժայռի պես էլ կարճոր է, համառ է,
Չի՛ պոկի նրան ոչ մի հարված.
Շուրթերի վրա այնպե՛ս է բառը,
Ինչպես որ ժայռն է հողում խրված...: 235*

Եվ երբ Արցախը ցնցվել եւ ոտքի է ելել բոլշեւիկյան թուրքամետ քաղաքականության դեմ, պահանջել վերանայելու 20-ական թվականների ազգային հարցի անարդարացի լուծումը: Ս.Կապուտիկյանը դարձել է ազատագրական պայքարի դրոշակակիրներից մեկը ու կանգնել ըմբոստների շարքերում, որպես հրապարակախոս եւ՝ որպես երգիչ: Իր նոր երգերում բանաստեղծուհին ցուցաբերում է քաղաքացիական ակտիվ վերաբերմունք: Պոետական տարբեր հնչեղանգներով նա աշխարհին է ներկայացնում Արցախին հուզող հիմնախնդիրը՝ ամբողջ հայության տազնապը: «Ուկրաինական գործընկերներիս» բանաստեղծության մեջ Ս.Կապուտիկյանը իր ուկրաինացի գրչեղբայրներին կոչ է անում արթնացնել կուրացած դարի խիղճը: Դեռ ավելին, Ս.Կապուտիկյանը կոնկրետացնում է դիմումը հայտնի բանաստեղծ Իվ.Դրաչին ուղղված կոչում:

*Որտե՞ղ ես, Դրաչ, լռում ես,
Դու գիտե՞ս, որ զենքով ձեր ծախու
Ընկերոջդ՝ Սեւակի աճյունը
Ռմբակոծ հողս է ցնդելու:
Որ խեղդվու՛մ, այրվու՛մ է Արցախը,
Մանուկն այդ՝ միամիտ ու ըմբոստ.
Ու՞ր մնաց մեր երգած արդարը,
Ազատի տենչանքը մեր ցասկոտ: ²³⁶*

Ս.Կապուտիկյանը նկատի ուներ այն խայտառակ գործողությունները, որ կատարում էին ուկրաինացի վարձու օդաչուները Արցախի դեմ Ադրբեյջանի կողմից սանձազերծած պատերազմում: Կապուտիկյանը պահանջում է, որ ուկրաինացի բանաստեղծները

իրավունք չունեն լռելու, այլապես գալիք սերունդները չեն ներելու իրենց: Նման դեպքերում, ընդգծում է բանաստեղծուհին. «Այրենք մեր բոլոր երգերը, Ու մեռած՝ գնանք մեռնելու»:

Արցախում մոլեգնում էր պատերազմը: 1991-ի նոյեմբերից ադրբեջանցի հրոսակները լարել էին իրենց ողջ ռազմական ուժը՝ խեղդելու Լեռնային Ղարաբաղը: 1992-ի աշնանը ազերիները դեռևս ավերում էին Մարտակերտի շրջանի գյուղերը: Դեպքերի տագնապալից լուրերի թելադրանքով անվանի բանաստեղծուհին գրում է. «Գանձասարի վանքի մորմոքը» ռեքվիեմը: Մոր հայացքով, մոր սրտով գնահատելով իրադարձությունները, Կապուտիկյանը անձնավորում է Գանձասարը եւ նրա շրթերով հայտարարում.

*Ես յոթ հարյուր տարի չարերի դեմ կանգնել,
Բայց չեմ տեսել այսքան սադրանք ու սուտ.
Առավել է հիմա ոսոխը նենգ ու նեռ,
Առավել է հիմա աշխարհը մութ: ²³⁷*

Բանաստեղծուհին ընդվզում է ցասունալից խոսքով եւ կրակված հոգով դիմում Սողոմոն Իմաստունին: Նա արդար դատաստանի է հրավիրում հին աշխարհի իմաստունին եւ հայտարարում, որ Արցախը «վահագնատիպ մանկան» նման կպել է «մոր կրծքից», բայց նրան «պոկում են ուժով հայրենիքից»: Ժամանակն է ամեն ինչ արդար ու բնական ընթացքի մեջ մղել.

*Մի՞թե դու չես տեսնում, մի՞թե դու չես լսում
Գանձասարի զանգերն ահեղաձայն,*

*Ինչպես ամեն քայլի հայերեն են խոսում
Խաչքար, շեներ, վանքեր կիսակործան: 238
(«Դիմում Սողոմոն իմաստունին»):*

Ղարաբաղյան շարժման առաջին օրերից նշանավոր բանաստեղծ Գ.ԷՄԻՆԸ կրկին սկսեց խորհել հայ ժողովրդի անցած տատասկոտ ճանապարհի, նորօրյա ընթոստության, աշխարհի խղճի մասին: Դառնացած մեր հանազգային անանցանելի ցավից, բանաստեղծը վերհիշեց 1915 թվականի ապրիլը եւ աշխարհի երեսին շարտեց դառն ճշմարտությունը.

*Ինչպե՛ս ապրեց ցե՛ղն իմ ազնիվ
այս...ցեղասպան երկրում.
Ինչպե՛ս ապրեց մարդը ազնիվ
այս...մարդասպա՛ն երկրում,
Ինչպե՛ս պահեց նա իր հոգին,
հույսն ու հավա՛տն ազնիվ
այս...հոգեսպա՛ն, այս...հույսասպա՛ն,
հավատասպա՛ն երկրում...: 239*

Հավատարիմ իր հրապարակախոսական շնչին եւ քնարական ազդու հնչերանգներին, էմինը առանձին պատկերներ ստեղծեց, որոնցում հոգու աչքերով տեսավ արցախցիների սրտերի եռքն ու ցասումի անսահմանությունը: Բանաստեղծը հնչեցրեց պայքարի շեփորը: Եթե ժողովուրդը ուզում է հարատևել, նրան զենք ու ոգի են պետք: Էմինը այդ պայքարող ոգին տեսնում է արցախցիների կրակ կտրած սրտերի մեջ եւ անվանում թռչող նժույգ.

Արցախի ազատատենչ նժույգ,
Ի՛նչ ձեւի սանձ,
լկամ կամ լղիմ էլ որ դնեն
քո բերանին,
եւ, մի ճպռտած աչքերով սելջուկ
Ինչքա՛ն էլ քո ճամփան փակի,
քո կողերն
արյունելու չափ ասպանդակի
կամ քեզ փորձի շղթայել
իր կեղտոտ մտուրթին ու մարագին,
դու կհառնես
քո երագի Լեռանը կապույտ,
կխառնվե՛ս ազնվացեղ քո երամակին: 240

Բանաստեղծ ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆԻ համար Արցախը բացվեց որպես հայ ժողովրդի «աստվածային հույս» եւ 1989 թ. զարմացած հարցրեց. «Մենք ո՞նց թույլ տվինք՝ որ մեր բնածին հիշողությունը մեզ դավաճանի»: Շեկոյանը ավստոսում է ժամանակավոր այն անտարբերության համար, որ դրսեւորվել է հայության կողմից Արցախի հանդեպ խորհրդային տարիներին: Այդ եղելության գիտակցումով բանաստեղծը որդիական սիրով ու կարոտով դիմում է Արցախին.

Մեր մոռացումն ու հուշն ես ցավագին:
Մեր մահն ես ու մեր լույսն ես հարության:
Մեզ ո՞նց թույլ տվինք, ոնց մեր զավակին
Փորձեցինք նենգ ու դաժան փորձությանը:

Մեր անհիշաչար սրտերում քարե
Ո՞նց ամփոփեցինք կարոտ ու տանջանք:

Մենք ո՞նց ապրեցինք, ո՞նց այսքան տարի
Գոյատևեցինք մեզանից անջատ: ²⁴¹
(«Արցախ»):

Շեկոյանը խարազանում է աշխարհի «անմարդկա-
յին-անբարեհույս... օրենքները», որ դեռեւս պաշտպա-
նում են ստրկամետները: Սակայն բանաստեղծը չի
կորցնում հավատը: Նա հույս է հայտնում, որ հայերը
թեւ ու թիկունք կդառնան միմյանց, կիրագործեն իրենց
իղծը արդար եւ «մեր հիմնը զիլ կհնչի»:

Բանաստեղծ Ա.ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ հանդես եկավ
առանձին շարքով, որտեղ իր ծննդավայր Արցախի
հանդես եղած կարոտի եւ թշնամու դեմ ցասումի զգա-
ցունը շաղախված են միաձուլել: Շարքի առաջին՝ «Հա-
սունացում» պատկերի մեջ զգացվում է բանաստեղծի
պապենական տան բույրը, ծածանվում վիթխարի թե-
նու սոսափյունի տակ չորացող լվացքը, որից ըմբոստ
ոգու ավիշն էր կաթում: Ա.Յարությունյանի քնարական
հերոսը հավատում է այն Ծառ-Աստվածությանը, որ ինչ
որ չափով ականատես էր տառապանքի «հրեշավոր
ձեւերի ընթացքին», որը «դեռ անորոշ էր եւ գեղեցիկ»:

*Բայց երբ կարիք եղավ՝
Տեսիլքի պես հայտնվեց
Փշալարապատ տունը
եւ քաղցած երեխաների
անպատմելի հայացքը,
հայտնվեց խաչելության
մաքրամաքուր բացատը՝
անմեղ գիտակցության
կրակներով լեցուն,*

ապրում է դագաղագործի աշակերտը»...

Շարքի «ժամանակը» բանաստեղծությունը ավարտվում է ժողովրդական վրիժառության մի պատկերով, որ ծնված է արցախյան շարժման ցնցումից: Դա ճշմարիտ կանխատեսումի արդյունք է: Բանաստեղծը խորհրդային իրականությունը համարում է «թզուկների աշխարհ»,

*ուր շատ ծյուն կա
եւ սեւ արեւ,
սեւ անտառ կա
եւ սեւ կեռնեխ,
Բայց պատմությունն
ավելի արագ է սլանում,
քան միտքը,
հոգու պետությունը
դառնում է ավերակի*

պետություն: 244

ՅՈՒ.ՍԱՀԱԿՅԱՆԸ, որ պատմական Ջրաբերդի Չայլու գյուղից է, Ղարաբաղյան շարժման սկզբից մի քանի անգամ այցելեց հարազատներին, տեսավ Ստեփանակերտի ըմբոստ շարքերը եւ գրեց «Չքնեք, տղաներ» կրակոտ բանաստեղծությունը, որը երգ դարձրեց մանկագիր, երգահան Գ. Գաբրիելյանը: Դիմելով հայրենակիցներին, Յու. Սահակյանը պայքարի պահը համարում է միշտ արթուն մնալու հրամայական... «Յեքիաթի վերջում հաղթում է բարին, խրախուսում է բանաստեղծը, հեքիաթի բարին... աղ է ցանել իր վերքին, որ ցավը միշտ արթուն պահպանի նրան»: Բանաստեղծության փոխաբերական իմաստը հասկանալի էր եւ հասցեն

Կոնկրետ: Այլևս արցախցիները իրավունք չունենին խաբվելու եւ հավատալու դարավոր թշնամուն.

*Չարը միշտ ունի հազար ձեւ ու զենք,
Գեղեցիկ խոստումներ ու ժպիտներ նենգ,
Հաճախ համոզում ու խաբում է նա,
Չքնեք, տղաներ, չքնեք,
Կյանքը ձեր նոր ընթացք կունենա,
Չքնեք, տղաներ, չքնեք,
Ով քնի, հազիվ թե արթնանա: 245*

Մարտակոչի եւ հավատի բանաստեղծություններով հանդես եկան Ա.Պողոսյանը, Գ.Օհանյանը, Գ.Խաչատուրը, Յա.Արզումանյանը, Գ.Աղաջանյանը եւ ուրիշներ, որոնք տարիների ընթացքում ապրելով Երեւանում, Երբեք չեն մոռացել հայրական օջախն ու օրրանը, երազելով նրա հարատեւման անվտանգ ճանապարհն ու ապահով ընթացքը:

Շարժման առաջին էտապում բանաստեղծները հանդես էին գալիս անզիջում պայքարի շեշտերով հագեցված գործերով, որոնցում ժողովրդին կոչ էին անում համախմբվելու Վերամիավորման գաղափարի շուրջ: Այս փուլում նրանց պոեզիայում տիրապետող դարձան Արցախը չլքելու, նրա մշակն ու զինվորյալը դառնալու մոտիվները: Բանաստեղծուհի *Ն.Ավագյանը* խանդավառաբար ընդգծեց, որ Արցախի «մի մասուրն անգամ ընդունակ է մեզ տող նվիրելու», որ «Արցախի գարնան խոտը մասունք է, կարո՛տ»: Նրա քնարական հերոսը կոչ է անում որդուն (ասել է թե՛ բոլոր երիտասարդներին) մնալ Արցախում.

Եղի՛ր, մանչս, եղի՛ր,
Եղիր հողի՛ որդի,
Լուռ անեծք է խոտը
Օջախ տանող ճամփին,
Աչքդ քաղցր պահիր... մորդ տաշտին,
Մնա, որդիս, մնա՛
Սերմը հողում կաճի,
Ոչ ոք, ախր, քո տեղ...
Քեզ հարկավոր սերմի ակոսը չի քաշի: 246

Սեփական ուժով ազատություն ձեռք բերելու գաղափարը դարձել էր պոետական հյուսվածքների շաղախ: Ն.Ավագյանը գրեց.

Մինչեւ ե՞րբ փորձվի համբերությունս,
Կործանվող վանքի ես խենթ արեղս,
Երբ էլ չի մնա այլ լուծում ու ելք,
Կդառնամ... զնդակ,
Իրեն՝ Աստծուն էլ չեմ ասի «մեղա»: 247

Բանաստեղծուհին «Հարության ոգու» երազով ընդհանրացրեց.

Համբերության երակներում
Էլ չմնաց կաթիլ արյան.
Ցավին ցավո՛վ պատասխանենք,
Մահին մահո՛վ...: 248

Ն.Ավագյանը քնարական զուգահեռումների ձեռով կողք կողքի ներկայացնում է եւ մեզ, եւ մեր թշնամուն.

Նա խորամանկ՝ մտքով ստերջ,
Նա՛ թալեաթ, մենք՝ Կոմիտա՛ս,

Նա՝ «սուևգայիթ», մենք՝ օրենսհարգ...
«Սուևգայիթից» հետո ի՞նչ է մնում անել.
Այս մի եռման ելքը մեկն է՝
Մեր մեռնելը կամ՝ Միացում,
Այս միացման կնքահայրը եռագույնն է՝
Հայոց սրտի տաք կարմիրով,
Հայոց հասկի ծիրանիով
Եվ կապույտով՝ Մասսագ գլխին աղոթք անող: 249

Բանաստեղծուհու երգերում Արցախի պաշտպանության թեման հնչում է որպես պոետական ներքին մղում: Նրա համար հայրենի լեռնաշխարհը անպարտելի ուժ է, արյան կանչ.

Ուրեմն սուտ է, մեր Ոգեղենիկ,
Թե հող ես միայն.
Լեռ, գետ ու հովիտ,
Տեղ կա դու՝ քաղցր հորից ու մորից,
Շարունակվելու մեր բանաձենն ես,
Մեր արյան հասցեն՝
Յուրաքանչյուրիս ծննդյան օրից: 250

Արցախյան շարժման առաջին օրերին ժողովուրդը գիտակցեց, որ Ադրբեջանը անպայման արցախցիներին պարտադրելու է պատերազմ: Ուստի կարճ ժամանակաընթացքում մարդիկ համախմբվեցին: Իսկ ո՞ր ժողովուրդն է, որ առանց միասնության կարող է բարձրացնել փրկության դրոշը: Այդ վճռորոշ ուժի գիտակցումով աստիճանաբար, հատկապես 1991 թ. սեպտեմբերի 2-ից հետո մեր ավանդական լեռնաշխարհում սկսվեց իրականացվել պետականություն ունենալու

խնդիրը: Իսկ ո՞ր պետությունն է, որ կարող է գոյություն ունենալ առանց իր քաղաքացիների վստահության եւ ջանքերի: Այդ մղումով էլ յուրաքանչյուր արցախցի իր ընտրած պետությունը համարեց իր գոյության հիմնական ուժը, իսկ պետությունն էլ իր գոյության հիմքում տեսավ յուրաքանչյուր քաղաքացու նվիրումը: Այդպես, արցախցին ու իր պետությունը դարձան մեր հերոսական անցյալը վերածնող, ներկան գալիքին կամրջող միական ու միավճիռ գործոն: Յուրաքանչյուր արցախցի եւ նրա պետական այրերը գիտակցեցին, որ եթե սկզբնական շրջանում կարելու էր ինքնապաշտպանության ֆիդայական պայքարը, ապա եկել է ժամանակը՝ ունենալու ինքնապաշտպանության կանոնավոր բանակ, որ պետք է գործի միասնական հրամանատարության ղեկավարությամբ:

Եվ եկավ պահը... 1992 թ. հուլիսին ստեղծվեցին պաշտպանական գոտիներ, ըստ որի Արցախում միավորվեցին առանձին, առանձին գործող կամավորական ջոկատները եւ ապա, սեպտեմբերի 1-ից ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակը:

Արցախի ազատագրման վճիռը դարձավ աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի բաղձանքի հուրը, նրա բանաստեղծ զավակների օրհներգը: Երգեր գրվեցին Լիբանանում, Իրանում, Սիրիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում, որոնցով նոր ուժ ներարկվեց Արցախի հայաշունչ ոգու եւ նրա անգիջում մարտիկների սրտերի մեջ: Թեկուզ արցախցիների անկախության որոշումը մերժել էին Ադրբեջանն ու ԽՍՀՄը, հուսալքության ոչ մի ալիք չառաջացավ ոտքի ելած հայ ժողովրդի

հոգում: Ամերիկահայ բանաստեղծ ժազ Զակոբյանը հոգեբանական նուրբ արծարծումով է արտահայտել այդ զգացումը, ինչը հաստատում է 1996-ի մայիսին Արցախի պետհամալսարանի հրավերով Ավստրալիայից ժամանած հայտնի գրող Վահե Օշականը:

Արցախը իր հազարամյակների պատմությամբ, ճարտարապետական բազում կոթողներով հայաշունչ են, մեսրոպագիր, աստղագնա, բայց, ավա՛ղ, գերված: Բանաստեղծ Ա.ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԸ տազնապահար բացականչում է. «Ներխուժում է տունս չարի ոգին անտես...»: Չարի ոգին ճեղք է առաջացնում հարազատ Արցախի օջախներում, սրբատներում: Խոնարհվելով Գանձասարին, բանաստեղծը տազնապի աղոթքն ուղղում է Արարչին.

*Օ՛, երկնային, ասա, ինչպե՞ս վարվել,
Ավաղ, ճեղք է տալիս սրբատունս: 251*

Դիմելով Ամարաս վանքին, որ կերտվել է 4-րդ դարի սկզբին, Գ.Լուսավորչի ցուցումով, Ա.Յովհաննիսյանը երազում է տեսնել նրա աբեղային, սրբազանին ու վեհափառին, խնդրում, որ աստված լսի իր աղոթքը.

*Ու՞ր ես, արարիչ, լսիր իմ մեղան,
Յանուն հոգուս, որ քոնն է լիովին,
Վար իջեցրու զոհասեղանդ,
Գլուխս ընծա բերեմ կամովին: 252*

Բացահայտելով պատմական ժամանակաշրջանի անդրադարձումները, բանաստեղծը վերագտավ արցախցուն, որը հոգու խորքում մաքառելով նետվեց քաղաքացիական ասպարեզ, հաստատելով անկախ եւ

ազատ կյանքի, իր մայրենի լեզվի գոյատևման եւ սերունդների հայեցի դաստիարակման գաղափարը: Եվ այդ հավատով էլ արտացոլեց իր քնարական հերոսի անհատնում սերը հայրենիքի հանդեպ.

*Գիշեր ու զոր չեմ հատնում,
Վառվող մոմ եմ հավատի,
Աստղի ցղանք եմ դառնում
Լուսապսակ ճակատին: 253*

Արցախյան շարժման հենց սկզբից մեր պոեզիայի նահապետներից մեկը՝ Բ.ԶԱՆՅԱՆԸ տազնապի երգեր հնչեցնելով, իր բանաստեղծական նժարներին դրեց Արցախի ուրախությունն ու ցավը, մեր ժողովրդի ճակատագրի երկվությունը: «Տրտու գետը» այդ երկատված խռովքի լավագույն արտահայտություններից է: Բնութագրելով Տրտուն, բանաստեղծը առաջին հերթին ընդգծում է, որ վերջինս իր ճամփան գտնում է «Տազնապախտով ու տազնապաձայն»: Գետի ձայնը «լռության մշտախոս լեզուն» է: Մարդիկ գալիս-գնում են, իսկ Տրտուն մնում է մենակ իր դժվար ճամփի ու խռովքի հետ: Բանաստեղծի քնարական հերոսը խիզախ է, անվախ.

*Ես անվախ եմ մտնում անտառ,
Երբ որ գիտեմ պիտի մտնեմ,
Պիտի գտնեմ անտառի մեջ
Ծաղկաժպիտ լույս բացատներ: 254
(«Ախ, այնպես եմ հրճվում ես»):*

Այդ լույս բացատները գտնելու ուղին բանաստեղծը տեսավ արցախյան շարժման եւ թշնամու դեմ մղվող

արդարացի պատերազմի մեջ: Նա առաջիններից մեկն էր, որ հնչեցրեց Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու շեփորը: Բանաստեղծն իր էությունն ու շունչը համարում է Արցախը եւ զինվորյալի պատրաստակամությանը բացականչում.

*Երբ, Արցախ, արդեն ծայնդ հնչել է,
Քո ծայնի հանդեպ իմ ծայնը խեղճ է,
Քո ծայնը... զորեղ կոչ ու կանչեր են,
Իմ ծայնը հիմա քո ծայնի մեջ է: ²⁵⁵*

(«Երբ դու լուռ էիր»):

Բ. Ջանյանը Արցախը ճանաչում է այնպես, ինչպես որդին՝ մորը: Նա հիշեցնում է, որ Արցախը երբեք չի քնել թշնամու կեղծ օրորի տակ: Ոստիքը երազում էր, որ Արցախը մնա կապանքների մեջ՝ լուռ ու հլու, որովհետեւ գիտեր, որ նրա արթնացումը «մի ահեղ հողմ էր լինելու».

*Եվ դու, վերջապես, արթնացար, Արցախ,
Քո արթնացումը պայթյուն էր մի մեծ,
Կուտակված ցավի պայթյուն մի հուժկու,
Որ քո հողը եւ աշխարհը ցնցեց: ²⁵⁶*

(«Դու քնած չէիր»):

Բանաստեղծը խոստովանում է, որ իր ճանապարհին շատ ձեռքբերումներ է ունեցել, բայց իր ամենամեծ հարստությունը մնացել է Արցախը.

*Իմ ունեցածը դու ես մնացել
Եվ քեզանով էլ հարուստ եմ մնում,*

*Ես անուն ունեմ, ես անանուն չեմ,
Բայց քեզանով է անունս՝ անուն: 257
(«Իմ ունեցածից»):*

Արցախը կորցնելը երգիչը համարում է իր մահը, ուստի մարտի է կոչում զինվորյալ հայրենակիցներին, քանզի Ազատության այլ ճանապարհ չկա: Նա հավատացած է, որ Արցախի հրե հոգին եղել է, կա եւ կլինի: Հենց այդ ոգու եւ հավատի արտահայտություն են այս տողերը.

*Եվ այդ ոգին քո քաջերի երակներում
Արյան հոսք ու եռք է դառնում ահագնացող,
Եվ դառնում է խիզախություն թեժ մարտերում,
Ոտքերի տակ՝ մայրագործով հայրենի հող...: 258
(«Թե քեզ կորցնեն»):*

Անվանի բանաստեղծ Ռ. ԴԱՎՈՅԱՆԸ ստեղծագործական իր բեղմնավոր ճանապարհին մեկ անգամ չի անդրադարձել հայրենիքի թեմային: Եվ ամեն անգամ մարդու հոգին ու երազը սնուցող այդ մոտիվը շախաղել է երկու գույնով՝ հպարտության եւ տառապանքի կամ ընդհակառակը: Երկգույնի այդ զգացումի ակունքը մեր ազգային ճակատագիրն է՝ խաչվող-հառնող, տառապող վերածնվող: Տարիներ առաջ բանաստեղծը հայտարարել է աշխարհով մեկ իր «Բանձրիկ Հայաստան աշխարհի» մասին, այն իր «լաջվարդ, լազուր լեռները» ուսած, «նշխար դաշտերը» հին գրքի պես բացած, առասպելի նման շարունակում է իր ընթացքը «Եվ կլինի հավերժ»: Սա ցավից ծնված հպարտությունն է: Սակայն կա նաեւ տագնապ, որ նոր չէ, հին է, դարավոր, եւ

ցավոք, հավերժող է: Դավոյանը տաղանդի լույսով մատր դրեց հենց այդ ցավածին տազնապի վրա: Դիմելով Ձվարթնոցին, նա ընդհանրացրեց.

*Ինչպես բոլոր լավերն այս աշխարհում,
Քեզ էլ տառապանքով ստեղծեցին,
Յետո լցրին խունկով, բույրով արեւարյուն,
Յետո լցրին լույսով արեզնածին:
Յետո ավերեցին չստեղծողներն օտար:
Միշտ էլ կատակում է փիլիսոփա կյանքը...
Ուրիշների համար՝ դու պատմության վթար,
Իսկ ինձ համար... մնաց միայն տառապանքը: 259*

Հայոց հոգեւոր աշխարհը, որ ծնվեց Տերյանի խոհեւրում, կորուսյալ իր սահմաններով Եփրատից մինչեւ Քուռ, հանգիստ չի տվել իր լեռնաշխարհին կառչած հայ հողվորին, հայ երգչին: Տեղի ունեցածը քիչ էր, Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի կորուստը գումարվեց հայի տառապած տազնապին: Խորհրդային տարիներից Արցախի մասին քիչ չեն գրվել, բայց ցավի մասին բացահայտ արտահայտվելը արգելվում էր: Ուստի հայ բանաստեղծներից շատերը ենթաբնագրային իրենց արժարժումներով ի ցույց են արել թշնամու երախը նետված Արցախի կորստյան տազնապները: Ռ.Դավոյանը այն բանաստեղծներից է, որոնք գիտակցել են ցավի մեծությունը: Լինելով Արցախում, Դավոյանը դեռեւս մինչեւ Ղարաբաղյան շարժումը բանաստեղծական մի տարողունակ պատկեր ստեղծեց, որի մեջ Թարթառ գետի հովտում իջնող ամպերը ներկայացվում են «փափուկ ծիծաղ»ով» եւ «ճերմակ կտուց»ով: Բանաստեղծը որդիական ավստանքով սպասում է, թե

որ որ է, դաշտը իրեն «կգրկի ծածուկ», «կփաթաթի մաքուր մշուշների քողով, Բաց կարծակի բոլոր կարոտները անծուկ»: Թաքուն տազնապների տեր քնարական հերոսը երագուն է ամպե մշուշների տակից տեսնել մեծավոր, գլխատված ծառի ճառագայթող «անկոտրելի ճյուղը»: Սակայն, ավաղ. «խաբկանքը ահա հալիլուն է կամաց, Մշուշն ինքն իրեն դաշտի ծայրն է հրուն» եւ դաշտը մերկ աղջկա նման «շուտ գալարվում է կանաչ սարսուռներում»: Կերպավորված բնության այս պատկերը ոչ մի լավ բան չի հուշում բանաստեղծին: Տազնապը դառնում է ավսոսանք, որ խոցում է քնարական հերոսի սիրտը.

*Եվ թվում է, ահա, արդեն քանի տարի
Դու ընկած ես այդտեղ, հենց այդ դաշտի եզրին
Որպես անպետք արոր կամ որպես հին գութան,
Եվ քո աչքի առջեւ
Արեգակը դանդաղ բացումն է կատարում
Իշխանական դեմքով մեծավոր մերկ ծառի
Եվ նրա մեծ, անհուն, անծայր ողբերգության: 260
(Ամպերն իջել ահա...):*

ՄԵՏԱՔՍԵՆ, որ տարիներ առաջ սրտի դռները բացած շրջել էր Արցախում եւ նրա աստղացուք պատկերն առել հոգու մեջ, 1989 թ. հրատարակած «Արցունքներից չեն ծերանում» գրքի առյուծի բաժինը անվանեց «Իմ հայրենի Ղարաբաղ»: Այդ շարքը ներբողական ոճից բարձրանում եւ դառնում է հարազատ մորը սիրող դստեր տազնապած սրտի թրթիռներ, Արցախի ճակատագրի համար անհանգիստ հոգու ծփանքներ: Այստեղ բանաստեղծուհու հյուսած պատկերները Արցախի

իրաչք բնության, պատմական հուշարձանների, հաղթանակների եւ նահանջների, ակնկալությունների եւ տվյալտանքների ծածանումներն են: Նա սեփական հոգու ցավը այնպես է ձուլում լեռնաշխարհի գեղեցկություններին, որ ընթերցողը զգում ու տեսնում է այդ մխացող տագնապը:

Մետաքսեն Արցախը համարում է «Լեռնապարիսպ հայ աշխարհի», որ թրթռում է յուրաքանչյուր հայի «շնչավոր երազներում» («Ղարաբաղ»): Արցախը հայտն տաճար է, «երեւելի քարեղեն հավատ», որ «Վիրավոր, տառապյալ կանգնել մահին ընդդեմ», «գոյն է պահում խռով»:

Բանաստեղծուհին ճանաչում է Արցախը՝ նրա սարն ու ձորը, դաշտն ու հանդը, գետն ու աղբյուրը: Խորիրդային յոթանասուն տարիների ընթացքում Շուշի քաղաքի փեշերին կարկաչող, վարպետ Իսահակի ձեռքերով կառուցած աղբյուրը ազերիները անվանել էին «Իսաբուլաղ» եւ համարել իրենցը: Սա ծանր ազդեցություն է թողել բանաստեղծուհու վրա: Չհաշտվելով երեւոյթի հետ, նա բանաստեղծության մեջ ցավից զնում է դեպի աղբյուրի կարկաչը, նրա մեջ դրսեւորում իր հառաչն ու կարոտը:

Գոյատեւումի մաքառման արտացոլանքը նա տեսնում է Արցախյան հինհին բերդերի, սարերի մեջ: Մերթ դիմում է Մռովին («Մռով»), մերթ հաց արարող գյուղերին («Մաճկալաշեն», «Ծմակահող», «Մուշկապատ», «Եղծաբերդ»), մերթ սրբանախշ խաչքարերին («Խութավանքի խաչքարերը»), մերթ գրույց է բացում 9-րդ դարում արաբական զավթիչներին ծնկի բերած Արցախա իշխան Եսայի Աբու-Մուսեի հետ՝ դիմակայելու

թշնանու «դավադիր խաղին» եւ «քառուղիներում այս ահեղ դարի» կուրացնելու «չարի աչքերը», որպեսզի մեր լեռներում «Լուսի կապույտ զարթոնքը» երգի:

Մետաքսեի քնարական հերոսին Գանձասարի «արքայավայել կեցվածքը» տանում է դեպի հայոց փառքի հեռավոր անցյալները, երբ զորավոր էր մտքի փայլատակման թափը: Եկել է մաքառման պահը, Գանձասարը լեռան ծերպին հենված «չափում է հոգեւոր տարածքները անհուն ու զայրույթից սեղմում քարե ատամները, եւ դա ավիշ, ուժ ու հույս է ներարկում նրան: Բանաստեղծուհուն հմայում են Արցախի խորախորհուրդ անտառները, որոնք «շեփորներ են աստվածականչ», որոնց անհնար է լռեցնել.

*Ձեզ կտրատել, այրել են միշտ,
Որ աշխարհում դուք չխշշաք հանց գթասիրտ
Վկայութուն,
Չհավերժեք որպես ոգի քաղաքակիրթ,
Ու պահանջեք փոխհատուցում: 261*

Բանաստեղծ Ա.ԹՈՎՄԱՍՅԱՆԸ իր երգերի գիրքը վերնագրել է «Արցախցի են ես»: Դա արժանապատիվ խոստովանություն է: Թովմասյանի համար արցախյան հողը «չբեկվող անկեռ ադամանդ է», «ուրան է՝ աշխարհով լցված», որ ատոմի ուժ ունի.

*Ես լեռներից կախված զանգ եմ,
Թե ձայնեք ինձ՝ կզանգեն,
Ես լեռների քար ու ժայռն եմ՝
Որպես բողոք կկանչեմ,
Վեր կպարզեմ երկինքներս,*

Ես բուսել եմ իմ հողից,
Դուք չեք կարող պոկել քարս,
Պոկել զանգս երկնքից: 262

Ա.Թովմասյանի երգը ակունքով Արցախից է, բայց փարվում է Արարատին. «Ես որպես որդի իր մորից պոկված, գնում եմ դեպի հայրենիքն իմ հար՝ Անուշ Հայաստան»: Բանաստեղծի այս ընդհանրացումը հնչում է որպես հավատ, որպես «լեռներից կախված զանգ», որին ոչ ոք «չի կարող պոկել»: Բանաստեղծն իր ուժն առնում է հայրենի հողից, նրա ոտնահետքերը «Հասնում են մինչեւ Ուրարտու» եւ դարավոր այդ երթի մեջ ազդարարում. «Ես չեմ ապրի երբեք ծնկի իջած»: Այդ գիտակցությամբ է Թովմասյանի քնարական հերոսը բանաստեղծական զգացումների մեջ առնում Գանձասարն ու Ամարասը, Մռովն ու Քիրսը, Շուշին ու Վարարակնը եւ անձնավորում նրանց որպես հավերժության կենդանի ճամփորդներ: Հավերժական այդ ճանապարհը եղել է դժվարին, արհավիրքներով լի, սակայն արցախցին միշտ էլ գիտակցել է, որ իրեն բախտ է վիճակվել արյան գնով պաշտպանելու ոչ միայն իր օջախը, այլեւ դառնալու Հայոց աշխարհի պահապանն ու զինվորյալը: Ահա՛ ինչու Ա.Թովմասյանի երգերում ընդգծված է հայ մարդու բնավորությունը՝ աշխատասեր, ազնիվ, հաճախ այնքան ազնիվ, որ կարող է խաբվել անգամ թշնամուց: Այդ է վկայում նրա «Բարեկամի մասին» բանաստեղծությունը: Հավատացինք հարեւանին, բայց նա «սունգայիթ» կազմակերպեց, բարեկամի մասին լեզենդներ հյուսեցինք, բայց նա արյան գետեր բացեց: Այսուհանդերձ բանաստեղծը հավատում է իր ժողովրդի

հաղթանակին. «Բայց գերության միջից դեռ կարծակ-
վես, Շուշի, դեռ կկանչի զանգո, Ջանգակատուն
Շուշի»: ²⁶³

* * *

Արցախյան շարժումը գնալով ոչ միայն վճռական
թափ ստացավ, այլևս դարձավ աշխարհասփյուռ հայ
ժողովրդին ի մի բերող ուժ: Հայությունը զգաց միա-
բանվելու կարելությունը, բոլորի շրթերին նորից հն-
չեց Մեծն Չարենցի մարգարեական կոչը՝ «Ով հայ ժո-
ղովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի
մեջ է»: Այդ օրերին Արցախյան շարժումը հորձանք
տվեց, հասավ մայր Հայաստան, ուր վերածվեց ըմբոստ
շարքերի հեղեղի, որից լույս ու հույս առաքվեց աշ-
խարհի բոլոր ծագերում եղած հայ գաղթօջախներին:
1990 թ. օգոստոսի 23-ին հայ ժողովրդի եւ անձնուրաց
զավակների պահանջով եւ ճնշմամբ Հայկական ԽՍՀ
Գերագույն խորհուրդը հրապարակեց ժողովրդի միաս-
նական կամքն արտահայտող Հայաստանի անկախու-
թյան մասին հռչակագիրը: Այդ նշանակում է, որ ժամա-
նակի հայ պետական այրերը գիտակցեցին իրենց պա-
տասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի
առջեւ համայն հայության իղծերի իրականացման եւ
պատմական արդարության վերականգման գործում:

Հռչակագրով դրվեց անկախ պետականության հաս-
տատման գործընթացի սկիզբը: Հայկական ԽՍՀ-ն վե-
րանվանվեց Հայաստանի Հանրապետություն՝ իր
դրոշով, զինանշանով, օրհներգով, սահմանադրու-
թյամբ եւ օրենքներով: Հասկանալի է ոգեւորության այն
ալիքը, որ ծփաց հայ ժողովրդի երագող սրտում,

փոթորկված հոգում: Ինչ վերաբերում է Արցախին, ապա Հայոց ավանդական լեռնաշխարհի մեր զինվորյալ ժողովրդի համար հստակ դարձավ միասնական պայքարի անհրաժեշտությունը վերջնական հաղթանակին հասնելու ճանապարհին: Պայքարը շարունակվում էր շիկանալ՝ տեղի տալով նաեւ երգի շիկացմանը: Արցախյան շարժման երգի փեշերը միայն Մռավի ու Քիրսի լանջերին չէին ծփում, այլեւ Արագածի հոգում, Մասիսի կարոտի մեջ եւ Սփյուռքի սրտում: Իսկ ի՞նչ է նշանակում Սփյուռք մեր ազգային ճակատագրի համար:

Մեղանշած չենք լինի, եթե հաստատենք, որ սփյուռքը ամբողջությամբ Արցախի թիկունքին կանգնեց որպես հողեղեն եւ ոգեղեն ուժ, որպես այս ամենով սնուցող աղբյուր: Վկան շարունակվող կենսական օգնությունը, անձնագրի Ավոյի լեզենդը, մեր սրտերը ջերմացնող հարազատ երգը:

1990 թ. բանաստեղծ լրագրող Սարո Գյոդակյանը այցելել է Սիրիա: «Արցախ» հանդեսի հանձնարարությամբ նա Հալեպում հանդիպեց սփյուռքահայ անվանի գրող եւ հասարակական գործիչ **ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆԻՆ** եւ ունեցել է հարցազրույց: «Արցախ»ի թղթակիցը ընդգծելով զրուցակցի ազգանվեր գործունեությունը սփյուռքում, հատկապես Սիրիայում, հարցրել է. «Ձեր գործունեության մեջ իր որոշակի տեղն ունի նաեւ արցախյան շարժումը, նրա արդարացի պահանջատիրությունը: Ի՞նչ կուզենայիք ավելացնել այս առումով»: Անվանի գրողը պատասխանել է. «Արցախյան պահանջատիրության շուրջ ով որ երկրորդ կարծիք մը ունի կամ կոյր է կամ ստախոս: Այդ շարժումը արդար է եւ կասկած

չունիմ, որ պիտի յաղթանակե, որքան ալ սուտի արշավը եւ ոճրագործութիւնը մոլեգնի, ցեղասպանութիւնը շարունակուի կամ մեծապետական շովինիզմը իր տխուր դերը խաղայ»։²⁶⁴

Հարցազրույցի ժամանակ Թ.Թորանյանը իր հիացմունքն է արտահայտել Արցախի երիտասարդության վճռականության վերաբերյալ եւ խորհուրդ տվել այլեւս չխաբվել օտարներից, ճիշտ վերլուծել պատմությունը, հատկապես վերջին հարյուրամյակի պատմությունը եւ ըստ այդմ շարժվել։ Նա ասել է, որ հայ ժողովրդի համար Արեւմուտքը եւ ընդհանրապես որեւէ մեծ պետություն չի ուզի խնամակալի դեր վերցնել, որովհետեւ միշտ կապիտալն է գործողը, սեփական շահն է, որ նկատի կառնի։ Թ.Թորանյանը իրեն համարեց «Արցախի անբաժան մեկ մասը» եւ հպարտությամբ հաստատել. «Մենք կանք եւ կը լինենք... վկա Արցախյան շարժումը»։ Հալեացի հայ բանաստեղծը «Արցախ» ամսագրին է ուղարկել բանաստեղծությունների մի շարք՝ նվիրված Արցախին եւ Հայաստանին։

Ազգային հպարտության եւ արժանապատվության զգացումի շաղախով հյուսված նրա տողերում խոսում է աշխարհի չար ուժերին դատապարտող հայ մարդը, ժառանգորդը մի ժողովրդի, որ տեսել է եղեռն, ցրվել աշխարհով մեկ, վերածնվել եւ այսօր սատար կանգնել ժողովրդի նորօրյա պայքարին՝ Արցախում, Հայաստանում։ Բանաստեղծը փառաբանում է Հայոց աշխարհի դարավոր իղձն ու հմայքը եւ ընդգծում Հայաստանի դերը Արցախի եւ սփյուռքի միաբանման ուղղությամբ («Եկանք, որ լինենք»), հաստատում, որ Արցախյան ընթացությունը եւ ցավը կուտակված է դարերի ընթաց-

քում, ուստի «կը նային մեզի դարերն Արցախեն», «Արցախի հայուն աչքերուն մեջ խոր դարերով դարբնուած վճիռը մը կայ նոր», դա ապրելու եւ հարատելելու խորհուրդն է,

«Ափիւռք, Հայաստան, անկէ կայծ առին»:

Թող միշտ ճառագէ վճիռն այս արդար

Մինչեւ որ վանէ ցավ ու տխրութիւն

Ու հայուն գիշեր աչքէն անդադար

Աստղեր փայլակեն՝ ապրելու համար: 265

(«Աչքերուն մեջ հայերուն»):

Թ.Թորանյանը արցախյան շարժման նշանակութիւնը հայոց ազգային ճակատագրում գնահատում է ելնելով հայի համբերութեան պէկոծման վերջնական սահմանից: Բանաստեղծը դիմում է Աստծուն 13-րդ դարի տաղերգու Ֆրիկի օրինակով, բայց երեւոյթի միանգամայն նոր ընկալմամբ: Նա Աստծուն հանդիմանում է հայ մարդկանց դեմ կազմակերպվող ոճիրների, նախճիրների հանդեպ անտարբեր մնալու համար: Աստված տեսավ նաեւ Սուլճայիթի ջարդը, Բաքվում հայ մանուկների, ծերունիների հրկիզումը, տեսավ եւ դարձյալ մնաց անտարբեր: Գշմարիտ ու ծանր այս ցավի նկարագրութեան մեջ հայ բանաստեղծը Վերինի՝ Տիրոջ հանդիման ծնկի չի գալիս որպէս մեղանչող ու թույլ մի արարած: Նա հենվում է պայքարի ելած արցախցու վճռականութեան վրա եւ ընդհանրացնում.

Մենք որ հոգնինք նախճիրներէ

Կըսենք իրար Տէրն քեզ օգնէ:

Դուն որ հոգնիս Տեր Տիրակալ

Ըստ, Քեզի ո՛վ թող օգնէ:

Ըստ, եթե մինակ ես Տեր,

Արցախն ըլլա Քեզ օգնական: 266

(«Աստուած ու Արցախ»):

Արցախի հանդեպ եղած բանաստեղծական հավատը արեւի ուժ ունի, այդ ուժը՝ արդարության ծովից հառնած հրեղեն ձիու թռիչք ու թափ: Թորանյանը Հայաստանի զավակ Արցախին անվանում է «լեռնապար բազէներու», դեռ ավելին.

Արցախը մեր աստղ չէ երբեք

Այլ երկինք է Հայրենական: 267

(«Հավատացեք»):

Շարքի «Արցախ» բանաստեղծության մեջ մեր լեռնաշխարհը գնահատվում է որպես «Մելիքներու հզոր ալիք, Յահթանակ դարփնող... հողի կրակ» եւ «Բազմապատիկ ծնունդի ակ»: Բանաստեղծը թելեր առած հեռավոր ափերից փարվում է Հայաստանին եւ Արցախին, նրա առջեւ բացելով որդիական սիրտը.

Հայաստան, Արցախ

Մեկը անունս է, միւսը հայրանուն

Անուն հայրանուն ինչպէ՞ս կը բաժնեն:

Ծովն ու ծովափը մայր ու որդի են

Առանց ծովափի ծովն ունի՞ անուն: 268

(«Հայաստան Արցախ»):

Արցախն ու արցախցին մտան հայոց նորոյա երգերի մեջ եւ թեւածեցին աշխարհով: Այդ առունով հատկանշական են Գերմանիայում բնակվող հայ երգահան

Լյուդվիգ Բագիլի եւ պարսկահայ բանաստեղծ Վարանդի համատեղ ուժերով գրված «Ղարաբաղ», ֆրանսահայ բանաստեղծուհի եւ երգահան Ռիտա Հարչիյանի ստեղծագործությունները, որ դարձել էին ամենուրեք երգվող հոգու երազանք եւ մինչեւ հիմա էլ կատարվում են սրտի թրթռումներով:

Արցախյան պատերազմում հաղթանակը շահելու հրամայականը դարձել էր համոզմունք, ոգի եւ փոխվել շիկացած զենքի: Իսկ երբ գաղափարը համոզմունք է դառնում, նշանառուի արձակած գնդակը դառնում է անվրեպ: Այդ կապակցությամբ մամուլի էջերում հաճախակի են հանդես եկել հայ ականավոր գրողները ոչ միայն իրենց ստեղծագործություններով, այլեւ կազմակերպող, ոգեւորող հրապարախոսությամբ: Իբրեւ նման ելույթի դրսեւորման ցայտուն օրինակ, բերենք ճանաչված արձակագիր Հ.Մաթեոսյանի խոսքը:

Հ. Մաթեոսյանը նախ հիշում է այն օրերը, երբ ադրբեջանցի բանաստեղծը երգվում էր կտրել հայի ձեռքը՝ եթե Ղարաբաղին մեկնի: Այս ցեղապետ բանաստեղծը իր «մարդասիրության» համար մեծարվում էր, եւ կառավարությունն էլ նրան զարդարում էր շքանշաններով: Փաստը «սահմուկելի է, գրում է Մաթեոսյանը, որովհետեւ եւ՛ նա, եւ՛ նրանք լավ գիտեն, որ Ղարաբաղն ինքնիշխան ժողովրդի հայրենիք է, այնինչ՝ խոսում են որպես անտեր անլեզու տան մասին»: ²⁶⁹

Ականավոր գրողը անդրադառնում է անմահ թումանյանի վեհանձնությանը, որ դարասկզբին մեծահոգությամբ խոսեց «թուրքի ասպետականության» մասին: Սակայն եւ՛ թումանյանը, եւ՛ նրա ժառանգորդները գիտեին, որ թուրքը միշտ պատրաստ է կտրելու հայի

ձեռքը, ուստի պետք է ապավինել սեփական ուժին եւ չխաբվել երբեք:

Պատմությունն ապացուցեց, որ եւ՛ թուրք ղեկավարը, եւ՛ թուրք բանաստեղծը «բանականության ու բարոյականության օրենքները լեզվի խաղ համարեցին եւ դավանեցին բռնությունն ու զավթումը»: Ուրեմն ունենք մի եզրակացություն, որին հանգում է Յ.Մաթեւոսյանը. «Հաղթանակը, միայն հաղթանակն է ազատելու մեզ թշնամու, կողմնակիների եւ մեր իսկ քամահրանքից: Հաղթանակը մեր անցյալի եւ ապագայի, եւ համայն մարդկության առջեւ մեր առաքելությունն է: Պարտությունը սուտ եւ անգո մի բան է դարձնելու մեր անցյալը՝ բանաստեղծ վարդապետների զառանցանք: Պարտությունը անհայրենիք տնանկներ է դարձնելու մեր երեխաներին, մեզ նրանց սեւ անեծքին է արժանացնելու: Պարտությունը մեզ դարձնելու է արդարության դռներին տաղտկալի քարշ եկողներ, իսկ որոնց երբեմն գուցե եւ կարեկցում են, բայց երբեք՝ հարգում»:

* * *

Արցախը հերոսական կռվի դաշտ դառնալուն պես ազգային-ազատագրական պայքարի զինվորերգիչներ դարձան բանաստեղծական տարբեր սերունդների տասնյակ ներկայացուցիչներ, զենքով ու երգով կռելով ժողովրդի նոր ճակատագիրը: Նրանք նախ մարտնչեցին ֆիդայական ջոկատներում եւ ապա Արցախի կանոնավոր բանակում: Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, բանաստեղծ Վ.ԳԱՐՐԻԵԼՅԱՆԸ ավտոմատն առած թշնամու դեմ ելավ Զլդրան-Կիչան ռազմագծում, ծանր վիրավորվեց,

սակայն զենքը ցած չդրեց, հայրենիքի ու սրտի ցավը հանձնելով իր երգերին: *Ռ.ԵՍԱՅԱՆԸ* մասնակցեց բոլոր ճակատամարտերին՝ Արաքսի ափից մինչև Օմար, *Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԸ*, *Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆԸ*, *Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԸ* իրենց զինակիցների հետ միասին մարտնչեցին վճռական նշանակություն ունեցող բոլոր ճակատամարտերում: *Ս.ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԸ* եւ *Կ.ՀԱԿՈԲՅԱՆԸ* հայրենի օջախի ազատությանն ընծայեցին ամենաթանկը՝ կյանքը... Երիտասարդ պոետներ *Հ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ*, *Ն.ԳԱՍՊԱՐՅԱՆԸ*, *Ս.ՀԱՍՐԱԹՅԱՆԸ* որպես հեռուստալրագրողներ, հաճախ վտանգելով իրենց կյանքը, հավերժությանը հանձնեցին հայ ազատամարտիկների սխրանքները, միաժամանակ գրելով իրենց մարտական բանաստեղծությունները: *Է.ԵՍԱՅԱՆԸ* զենքով ու երգով իր խոսքն ասաց Մարտունու պաշտպանական դիրքերում, ուր հրաշքներ էր գործում Ավոյի զորավարական տաղանդը, որի մասին իր սրտառուչ երգը գրեց բանաստեղծը: *Լ.ՀԱԿՈԲՅԱՆԸ* պոետական իր մկրտությունը ստացավ բանակի շարքերում, եւ էլի տասնյակ պատանի ստեղծագործողներ, որոնք դեռեւս երգի մեջ չձեւավորված, հոգիները ջրդեղեցին պատերազմական հրդեհների մեջ: Արցախի մարտական երգը ծնվեց նաեւ խրամատներում, որ բխում էր մեր ազատաբաղձ ոգուց ու երազող սրտից: Երիտասարդ բանաստեղծների քնարական հերոսին հատուկ է քաղաքացիական վեհությունը, շիտակությունը, վճռականությունը, հավատը հաղթանակի եւ գալիքի հանդեպ: Այդ մղումները առանձնապես առինքնող են այն բանի շնորհիվ, որ բանաստեղծները իրենց ներկայացնում են որպես հայրենի եզերքի զինվորներ, նրա հոգեւոր աշխարհի

դեսպաններ: Դա բացատրվում է պապենական օջախի հանդեպ ունեցած նրանց պատասխանատվությամբ, որից էլ բխում են թե խղճի եւ բարության, եւ թե՛ թշնամիների դեմ մարտնչելու պատրաստակամության ձգտումները: Հյուսվել է արցախյան հերոսական պայքարի նոր երգը, որ խորքով նաեւ անցյալից է գալիս, քանի որ հայ բանաստեղծը միշտ էլ զգացել է քոչվոր ցեղերի սպառնալիքը: Այդ զգացումից են ծնվել *Ա.ՔՈՉԱՐՅԱՆԻ* տողերը.

*Օ՛, հայրենիք, օ՛, ամենասիրտ,
Թե դառն օրերիդ հաշվիչը բերենմ
Ու թվեն հատ հատ,
Թե մոխիր դարձած ավերակներիդ
Փռչին ետ բերենմ,
Թե կույր ոտխիդ հոգին ավերենմ
Ու բազուկներին կապանք խարանենմ,
Աչքերդ կլան հուշ մոխիրներով,
Աչքերդ կերգեն արտասուքաթե...: 270*

Բանաստեղծուհին վերհիշելով հայրենիքի դարավոր պատմությունը, մեր ժողովրդին բաժին հասած ծանր ճակատագիրը, բացասում է հուսալքության մորմոքը: Նա ընդգծում է թշնամու հանդեպ եղած համաժողովրդական ցասումը եւ վրեժը, որոնք սերունդներին մղել եւ մղում են պաշտպանելու հող հայրենին: Ա.Քոչարյանի երգերի ակունքը հայրենիքի բախտն է, որի երկնակամարում միշտ ամպեր են կուտակվել, ծածկել Հայոց դարավոր հույսի աստղաշողերը: Բանաստեղծուհին նկատում է, որ «Բազում հորդամեր կան մեղքի անպատում, որ փորձում են վառվող մեր աչքերը հանել»:

Սակայն թշնամու հանդեպ ժողովրդի մաքառման ոգին հուշում է բանաստեղծուհի-դաստերը, որ ազդարարի.

*Մեր աչքերը՝ վաղուց «խելագարներ» անտուն,
Կթողնե՞ն, որ իրենց պատառպատառ անեն:
Մեր սրտերի վրա
Վշտերն են փորձում լեռնանալ,
Բայց մեր լեզուն՝ հրե կայծակ ու ծիչ,
Կմկրատե նրանց աններ ու աննահանջ: 271
(«Ես իմ բախտը առա...»):*

Բանաստեղծուհին 88-ը համարում է սեւ տարի՝ գրված «սրտի թաց մատյանում» եւ պատրաստ է կրելու այն եւ ընծայվելու հայրենիքին՝ «Քո բախտը իմ բախտն է, հայրենիք»: Սա ոչ թե սոսկ խոստովանանք է, այլ հայրենիքին անմնացորդ նվիրվելու որոշում.

*Ղողանջում են ձայներ՝ կանչեր ծեր վանքերի,
Ես իմ ունեցածը հայրենիքիս կտամ...: 272*

Այսպես, Արցախի երիտասարդ բանաստեղծներին առաջին հերթին հուզեց հայրենի եզերքի ճակատագիրը: Նրանք ցավով խոսեցին լքված գյուղերի, պապենական օջախների մասին: Չէ՞ որ հայրենի տարածքը ժողովրդով է հայրենիք: Երիտասարդական պոեզիայի նույնիսկ թախծոտ պատկերներում իսպառ բացակայում են լացը, թեւաթափությունը՝ անգամ այնպիսի քնարական պատկերում, ինչպիսին բերվում է *Ն.Գասպարյանի* բանաստեղծությունից.

*Գյուղ է լքված ու լուռ է,
Խոտը բուսել է կալում,
Մի հավ թուխս է, տխուր է,*

*Ուր որբուկ ծտեր է պահում:
Տուն է, տանիքը փակ է,
Մկները հատակ են պեղում,
Սարդերի հյուսած ցանցի մեջ
Ծաղիկ է աղերսում մեղուն...: 273*

Երիտասարդ բանաստեղծների հայրենասիրական երգերում կա նաեւ մի ուրիշ տազնապ` կապված «հարեւանի» նենգության հետ: Այս զգացումը միշտ զգոն է պահել արցախցի բանաստեղծին: Ուրեմն տազնապը հնչում է որպէս զգոնության կանչ, որ ղողանջում է դարերի խորքից: Ռ.Եսայանը այդ միտքը արտահայտում է հետեւյալ տողերում.

*Արդ ղողանջում են իմ արմատները,
Խրվում պապերիս երազների մեջ: 274*

Տառապանքից են ծնվում երիտասարդ բանաստեղծների երգերը: Ռ.Եսայանը իր նախորդներից փոխ է առել արյան հյուլեն, որն իր գենի մեջ բազմադարյան հիշողություն ունի.

*Մեկ էլ ե՞րբ են, տեր իմ, կարոտել ինձ այսքան,
Հասունացել այսքան կորուստների ահից: 275*

Գրականագետ Ա.Ափինյանը ճիշտ է նկատել. «Ռոբերտ Եսայանը որոնում է գոյության իր բացատրությունն ու իր առեղծվածը, որոնում է ու չի գտնում, քավում է օտար մեղքեր, հավատում է իր ցեղի արթնացող սաղմին, բայց անդունդ է տեսնում իր իսկ հույսի մեջ, չի համակերպվում գոյության իր ձեւին, բայց առեղծվածը թողնում է առեղծված ու լսելի է դարձնում նրա արձագանքը` գոյության արձագանքը: Որոնումը հուսահա-

տություն չէ, եւ երբ բանաստեղծի հոգին ցավում է ապրածից ու տեսածից, երբ գալիս է ինքնաընթացման դժվար պահը, երբ գիտակցում է, որ կորուստները կործանել չեն կարող, որովհետեւ քո սերունդը կորուստների ահից հասունացել է՝ մնում է միակ ելքը՝ տագնապի հենակետը: Տագնապ, որ խուճապ չի բերում, որ զգաստ է պահելու հոգնած հոգիդ: 276

Ռ.Եսայանի հայրենասիրական երգերը ոգեկոչելու ուժ ունեն, որովհետեւ դրանք հնչում են որպէս գոյություն եւ զինվորագրվելու նոր դասեր.

*Թե ես ապրում եմ - ո՞վ է մեռածը,
Թե սա է կյանքը - դժոխքը ո՞րն է,
Իմ ծայնի մեջ կան խեղդվողի ծիչեր,
Իսկ իմ ծայնից դուրս
Նույն սեւ անդորրն է...: 277*

(«Անդորրի տագնապը»):

Այսպիսով գալիս է ինքնաճանաչման պահը, որից էլ սկիզբ է առնում նոր ճանապարհը: Հայացքն ուղղելով Տիրոջը, Ռ.Եսայանը բացում է մշուշոտ վարագույրը, համարձակ մեջտեղ բերում ընդվզումի գնացող խոսքը.

*...Սա կյանք չէ, տեր իմ,
իմ բնությանը վայել,
անվերջ մաշվում եմ այսպես
քավարանի մեջ տողի
Ո՞վ է բացի քեզանից
իմ դժոխքի մեջ նայել
Ու սրբությունը խեղել
վերերկրային քո դողի...: 278*

1991 թ. «Մաշտոց» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Ծարաված հետքեր» ժողովածուն, 1992 թ. «Արցախը» տպագրեց «Տարածություն եւ հոգի» գիրքը: Այս ժողովածուները մեկը մյուսի շարունակությունն են, բանաստեղծի նույն ոճն է, ապրումի նույն ծփանքն ու նույն երանգը, որ նոր են, ինքնատիպ լուծումներ ունեն: «Ծարաված հետքեր»ում Ռ. Եսայանի խռովքը հայրենիքի եւ մայր ժողովրդի ճակատագիրն է: Դիմելով ըմբոստացած Արցախ մորը, բանաստեղծը զինվորյալ է դառնում եւ կոչում.

*Քո լույսը հող է եւ ունի կշիռ,
Եվ քո անձրեւը աստղատարապ է,
Երկունքիդ լույսից այնպես երակվիր,
Որ քո անցյալն ու գալիքը արբեն: 279*

Ռ.Եսայանի խոսքը իր բոլոր գրքերում ունի նույն արմատը, ակունքվում է հողից, ճակատագրից, ցավից, հավատից: Մի դեպքում նա դիմում է Արցախի առաջին նահատակ արվեստագետ Ա.Ջակոբյանին, մի ուրիշ դեպքում՝ բզկտված հող հայրենիին, ապա հիշում անցյալը, լավ գիտակցելով, որ ով պատմությունը չի հիշում, նա զրկվում է ներկան զնահատելու կարողությունից եւ ապագային հասնելու հույսից: «Ես հիշում եմ...» բանաստեղծությունը դրա հիանալի օրինակն է: Բանաստեղծի համար նախնիների խիզախությունը անպարագիծ է, նրանք տան սյուներ էին, նրանց համբերության երակը միշտ տաք էր, նրանց համար «լույսը հող էր, Ահը՝ հագուստ, Լեզուն՝ դրոշ»։ Սակայն այդ բարեմասնությունները փոշեծածկ հուշեր չեն, այլ «արյան խիզախ շիթեր».

Ես գրում եմ գրչով,
 Օ, ոչ՝ մանկան ծիչով,
 ճիչով կարմիր,
 Որ կարեցավ մեր գոյության
 կիսված օրը լույսով կարել,
 Որ ապրենք ու շարունակենք
 Ամբողջանալ...: 280

Ռ.Եսայանի բանաստեղծական ծայնը երկրի եւ ժողովրդի ճակատագրի արձագանքն է՝ անցած հոգու միջով: Դրա շնորհիվ էլ նրա երգը հնչում է որպես հարատեւման խոստովանություն: Դիմելով Արցախի մայրենի բարբառին, բանաստեղծը նրանում առաջին հերթին լինելիության դասն է կարդում, որովհետեւ «լույսն է թագ ամեն տառի գլխին», նրանով խոսող ամեն մի շուրթ մի ճրագ է, այն պարզապես «Մեր շունչն ու հորովելն է»:

Ռ.Եսայանի «Քառս եւ լույս» գիրքը եկավ կրկին հաստատելու նրա գեղարվեստական ընկալումները հայաստանյան կյանքի եւ արցախյան իրադարձությունների վերաբերյալ եւ այդ ընկալումների ինքնատիպ բանաստեղծական արտացոլումները: Այստեղ նույնպես պոետի ստեղծագործական հիմնական առանցքը հայրենասիրությունն է, գեղեցիկի ըմբռնումը:

Գրքում զետեղված բանաստեղծությունները՝ հորինված 88-ից մինչեւ 97-ը, արցախյան ազատագրական պայքարից ծնված երանգներ են, որոնք ընդհանրության մեջ տառապանքի եւ հույսի, հաղթանակի եւ լույսի մի ամբողջական բույլ են կազմում: Յուրաքանչյուր հաջողված գրքի գրավականն էլ հենց բխում է այս պայմաններից:

Երիտասարդ երգիչը ոչ թե հայրենասիրություն է քարոզում, այլ ասում է հայրենիքի խոսքը՝ օծված հեղինակի սրտի արյամբ եւ ոգու ոսկեփոշով: Այդ խոսքը մի դեպքում քնարական հերոսի «մանկության երազները շոյող» «լեռնագաթների բռնկուն լույսն» է, մյուս դեպքում՝ «Լռության ձայնից անընդհատ տաշվող... ազատության վայրի տողերը...»: Բանաստեղծի հոգում այդ խոսքից «տեսողության բույնը... սլանում է քառսի փրփուրների վրա» եւ դառնում նրա «արձագանքների բեռնակիրը»: Երգի քնարական հերոսի խոստովանությամբ.

*Իմ պապն ու տատը արթնանում են իմ մեջ
Որպես գրույցների եղենային երկիր: ²⁸¹
(«Հատվող գծեր»):*

Ռ.Եսայանի բանաստեղծական շնորհքը ծաղկեց ժամանակին եւ ժամանակի պահանջով. «Ես գրում եմ ոչ թե թղթին, այլ՝ հայացքին ժամանակի», հաստատում է բանաստեղծը: Եվ նա առանց ավելորդ ճիգերի, ընդգծում է ակունքն իր ասելիքի: Այդ ակունքը անհամբեր սպասումն է, որ ակնկալում է «Ոգու լուսայգի ելնելը...», որպեսզի «Անսահմանի օրորոցներում բառերը ընպեն կաթը աստղերի»: Ռ.Եսայանը իր հայրենասիրական երգերով կրկին ու կրկին հաստատում է այն ճշմարտությունը, որ տառապանքից ծնված խոսքը եւ՛ իմաստուն է, եւ՛ թեւավոր:

Հ.Ալեքսանյանի բանաստեղծական հյուսվածքներում խոսեցին Արցախի անցյալը, ներկան, գալիքը: Արցախյան շարժումը բանաստեղծը դիտեց որպես մեր ազատաբաղձ հոգիների զարթոնք եւ զենքով ու գրչով

Վրացի վրացիները վերածնող այդ երթին: «Միջօրե Գանձասարուն» բանաստեղծությունում Գանձասարի լռության մեջ նա տեսնում է ոչ թե օրվա, այլ «պատմության կիսվելը»: Այդ նշանակում է մեր հույսի ակունքը «դիմանում է հարվածներին ժամանակի, ընթանալով հավերժության հետ զուգահեռ»: Ոչ միայն այդ.

*Քարի վրա այս հնաբույր Գիրը կարդա,
որ տառ առ տառ
ճառագայթվել է դեպի երկինք,
հրե գնդի զորությունն է բազմապատկում: 282*

Յ.Ալեքսանյանի քնարական հերոսը իր հոգու ձայնով չափում է պաշտպանում է «երազանքի դարերը պերճ երաշտներից ամեն...»: Գանձասարը որպես հայկական ոգու «քարակերտ գեղեցկություն», «հավատի երգ» է հորինում:

Հարազատ մնալով իր ստեղծագործական խառնվածքին, Յ.Ալեքսանյանը զարգացնում են հայրենասիրության եւ ազատասիրության մասին իր փիլիսոփայությունը, ներկայացնելով այն բանաստեղծական ինքնատիպ հնարանքներով: Նրա զգացումները ծավալվում են ազատ բանաստեղծության սահմաններում՝ դառնում են ստեղծելով ձեւի եւ բովանդակության համահնչունություն.

*Եթե հողի մեջ չես տեսնում
վճիտ արտացոլանքդ, վրան՝
երազիդ հետքերը կապույտ,
ուրեմն՝ սառն են այդ հողի հանդեպ
հոգիդ, մարմինդ, կարոտներիդ չուն,*

Ուրեմն՝ մի օր արհամարհել ես
Քո պարզ ինքնության խոյանքը շիտակ
եւ դարձել պոռնիկ պատրանքին ընկեր:
Հողը՝ հայելի, որ չի փշրվում,
Եթե հարվածես մատնության քարով,
այլ փշրվում ես ինքդ
եւ բեկոր չի մնում քեզնից: 283

(«Եթե հողի մեջ...»):

Անկախության եւ ազատության պայքարի կոչը
Հ.Ալեքսանյանի երգերում հնչում է տարբեր երանգներով:
Նա մերթ դիմում է Անահիտ Դիցուհուն, որպեսզի
ելնի եւ «կապույտ աչքերով» տեսնի, «թե ցավի ինչ նոր
փոթորիկ պայթեց ցեղի հոգնած գլխին», մերթ կոչ
անում «Մոռացության անձավներում» լինել, իմանալ
ժողովրդի ցավը եւ տալ «նրան զորացումի նոր հնար-
ներ»:

Հ.Ալեքսանյանի պոետական շունչը գնալով վերա-
փոխվեց արցախյան ոգու: Ոգու հաղթանակի ընդ-
վզումն էլ հենց ընթերցողի սրտում առաջացնում է
հպարտության այն զգացումը, առանց որի հայրենասի-
րություն չի կարող լինել: Ահա բանաստեղծի բնօրրանի
հողեղեն պատկերը.

Դու երազ թռչունները անհունի,
Եվ վայրէջքներից հավերժ խուսափող,
Քեզ հոգեհմա խոյանքներ են միշտ
սնում գոյության անարատ հյութով:
Աջ թեւդ ինքը՝ Արդարությունն է,
Չախտ՝ բարություն Անվանյալը ջինջ,

Քեզ մի աննշան թեւաբախումն իսկ
Լույս վեհագույնի մոտ է հասցնում: 284

(«Արցախյան ոգի»):

Երիտասարդական պոեզիայի համանվագին իր մասնակցությունն ունեցավ Ն.Գասպարյանը: Նրա «Հավատ Արցախի» ժողովածուն այդ մասին է խոսում: Բանաստեղծի մուտքը համարձակ է, խոսքը՝ վճռական, վճռական այն առումով, որ նա չի հաշտվում իր Արցախ աշխարհի ստրկական վիճակի հետ, գոյամարտի է ելնում եւ՝ զենքով, եւ՝ երգով: Ժողովածուն բացվում է «Կեսօր» շարքով, որ կարելի է համարել նաեւ քնարական պոեմ: Բնաբան բերելով Ե.Չարենցի «Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը» տողը, երիտասարդ բանաստեղծն իր հավատամքն է բերում երգին ու կյանքին: Վերագնահատելով լեռնաշխարհի պատմական անցյալը, նրանում գտնելով ազգային արժանապատվության երանգները, պոետը թվարկում է իր եղյալ եւ չեղյալ մեղքերը, ընդգծում իր ըմբոստացումը աշխարհի դեմ: Նա միաժամանակ ծանրութեթեւ է անում իր արած-դրածը, նշելով.

Ես մինչեւ հիմա ոչինչ չեմ արել.
սպասումս երբեք չի կնքվել ցավով,
շիվը չի ծաղկել իմ կոշտ ափերում,
եւ տառապանքի համ չի ունեցել

իմ ոչ մի բառը...: 285

Ինքնաքննադատության ճանապարհը նրան տանում է ինքնահաստատումի: Բանաստեղծը գիտակցում է իր անելիքը, այլեւս չի կարելի ապրել «ցնծության օրորոց-

ներում»։ չի կարելի խաղալ «անտարբերության ճոճքերում»։ Տեղի է ունենում որոնման ցավը, որ պիտի պտղավորվի, կորցրածը ետ բերվի։ Բանաստեղծը հավատում է իրեն։

*Ես չեմ կասկածում,
որ կըփոփոխվի կյանքում ինչ որ ձեւ,
Մեկ է, կհիշեմ,
որ տանս սյուն է պակասում մի նոր,
որ ժամանակն է հին դուռը փոխել...: 286*

Եվ բանաստեղծը զգում է իր երկրի «արյան ցավը», որ լքելով իրավունք չունի, «ուզում է տեսնել շողմ արեգակի», «շոշափել ուժի ձեռքերը մաքուր եւ լսել մեղքի բողոքն արդար»։

Ն.Գասպարյանի բանաստեղծական ընդհանրացումներում եւս զգում ենք ժամանակի շունչը, նա ընթերցողին է ներկայացնում իր «Ծնունդը ցավի», «Ծնունդն անքնության», «Ծնունդը տագնապի», «Ծնունդն անտարբերության», «Ծնունդը տխրության», վերջապես ասոսանքի, ուժի, հավատի, կարոտի, լույսի, ներշնչանքի ծփանքները։

Նրա անմիջականությունը ծնվում է հողաբույր տողերից, իրեն պատեպատ չի խփում։ Նրան հարազատ են իր հուշերի աշխարհը, որ պապի օջախ է, պապի թաղթ, պապի տրեխներ են ու պապի քուրք, ապա կարասը, սայլը, օրորոցը, գորգը, ժամացույցը։ Այդ ամենը հուշ ու հիշատակ լինելով հանդերձ ապրեցնող կռվաններ են, որոնք մղում են ապրելու, արարելու, հաստատվելու։

Դ.Միքայելյանի երգերում լույսը խորհրդանշվում է որպես պահապան, ասել է թե նրա համար լույսը հավատի ուղեկից է, խոհերի արձագանքը: Նրա երգերում լույսը

*ծառ է ծիրանի,
...կարոտի ծիչ է լույսը կենարար
Ու տաք շշուկն է սեւաչ բալիկիս:
Լույսը՝ պահապան
Օջախիս,
Խղճիս...: 287*

Բազում դարերի տարիք ունեցող հայ երգի ոգին հասել է Դ.Միքայելյանին եւ նա հայրենիքի աչքերում ու հոգում լույսի շողեր է կարդում, լույս, որով գծված է մեր պատմության դժվարին ու փառավոր ճանապարհը: Այդ լույսի շափաղումներով էլ Դ. Միքայելյանը իր խոսքն է ուղղում առ Հայաստան ու Արցախ, առ Վայոց ձոր ու հայրենի գյուղ: Եվ նա իր գրչեղբայրների պես բացում է խոհի ու խորհուրդի շերտերը, որտեղ էլ ծնվում է իսկական բանաստեղծությունը:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ Ա Ն Դ Ա Ս Ը

Պատմությունը ժողովրդի հիշողությունն է, նրա ոգու, արարումի կողմնորոշիչը: Առանց այդ հիշողության կնոլորվի, կանհետանա ժողովուրդը: Մեր պատմությունը Հայկ նահապետի նետի սլացքն է, Արա Գեղեցիկի անձնուրաց սերը, Արտաշես Մեծի իմաստությունը, Տիգրան Երկրորդի վճռականությունը, Տրդատ թագա-

վորի քրիստոսապատկեր կնիքը, Մաշտոցի գիրն ու Վարդանի թուրը, Սասնա ծռերի էպոսային խիզախումները:

Որտեղ եւ ում հետ զրուցելու լինենք, կարող ենք հպարտությամբ ներկայացնել մեր ժողովրդի պատմությունը եւ պայծառ հիշողությունը: Մեր հողեղեն եւ ոգեղեն պատմությունն է թեւավորել Սովսես Խորենացուն՝ հիշեցնելու Սահակ Բագրատունուն. «Թեպետ մենք փոքր ածու ենք եւ թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ ու շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց եւ այնպես մեր երկրումն էլ գրելու եւ հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»: ²⁸⁸

Այսպես, մեր պատմությունը որպես գոյության ընթացք, դարեր շարունակ եղել է մեր ժողովրդի ոգու կանչը, ապրելու ավյունը: Պատմության այս ընթացքը խորապես ընկալել են նաեւ 20-րդ դարի հայ բանաստեղծները՝ ստեղծելով գրական բազմաթիվ արժեքներ:

1

Պատմությունը **Յ.ՇԻՐԱԶԻ** համար դառնում է իր սիրտն ու հոգին բացելու ելակետ, բայց ոչ վերացական: Շիրազը մտովի անցնելով պատմության բավիղներով, թիկունքը հենում է Արագածին եւ կանգնում Մասիսի դեմ, զրուցում նրա հետ՝ «հայրենի հողի ձայնին ունկնդիր»՝ կարոտելով «շղթայված երկիր» Վանա ծովին: «Երգ Հայաստանի» պոեմում մետաֆորներ ընտրելով Արագածը, Մասիսը, Վանա ծովը, Սեւանը, Շիրազը զրույցի մեջ է առնում Հայկի եւ Բելի, Արա Գեղեցիկի

Եւ Շամիրամի կռիվները եւ հաստատում. «Ընկալ Արան, որ Արարատ մնա լեռներն հայրենյաց»: Եվ այդ լեռների վրա՝ «...Ժողովուրդն ընդոստ ոստնեց՝ ձեռքին եւ՛ սուր, եւ՛ գութան. Ելավ ծուխը մեր ծիրանի՝ սիրած դրոշն հայության»:

Շիրազը ներկայացնում է Տիգրան Մեծի օրոք «Արագածից մինչեւ Մասիս» կամարված ծիածանը եւ հաստատում, որ դա կատարվեց Տիգրան Մեծի թրի շնորհիվ, «երբ վահանվեց հայոց զորքը իր հայրենի մայր հողին», եւ դարեր անց էլ ծնվեց Մաշտոցը, արարեց իր գրերը, որոնց օգնությամբ «Բարբառեց հույսերն հայոց, երկրե-երկիր կարկաչեց»:

Դժվար ճանապարհ եւ ճակատագիր էր վիճակվել հայ ժողովրդին: Հայաստան էին ներխուժում մերթ պարսկական, մերթ արաբական ու սելջուկյան զավթիչները: Կենդանի եւ ազդու պատկերներով Շիրազը խոսում է հայրենիքի մասունքների մասին, հիշում մեր «պատմության լացն ու խավարն ակնակիր», դիմում ժողովրդին.

*Անին մնաց քո անցյալի դեռ բաց վերքը հեռավոր,
Տուն կրերի Վանն ու Անին, Երեւանդ կյանքով նոր,
Չես մոռանա Մասիսներդ, տուն կրերես, իմ սուրբ մայր,*

*Թեկուզ աճյունն արեգակի դեպի գիրկդ ընկնի վար...: 289
(«Երգ Հայաստանի»):*

Բանաստեղծը հավատում է ժողովրդի հաղթական գալիքին, Վանա եւ Սեւանա լճերի միատեղ ցնծուն ծփանքներին, նրանց զույգաչյա ժպիտներին, Մասիսի վերադարձին:

Յ. Շիրազը հաճախակի էր անդրադառնում Տիգրան

Մեծի կերպարին: Նրա խիզախության, պատմական դերի ընդգծման տեսակետից ուշագրավ երեւույթ է «Տիգրան Մեծի վիշտը եւ հավերժությունը» պոեմը: Որպես բնաբան Շիրազը բերում է ֆրանսիացի արեւելագետ Ռընե Դրուսեի գնահատականը. «Տիգրան թագավորը՝ այս դեռեւս չճանաչված հզոր տիրակալը, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացած է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությանը», մինչդեռ Տիգրանն իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավերժության համար»: Այս տեսակետից Շիրազը բացահայտում է մեր պատմական անցյալի փիլիսոփայությունը: Անցյալին անդրադառնալով՝ նա գտնում է ժամանակի առաջադրած հարցերի պատասխանը: Այդ երեւույթը լավ էր հասկանում բանաստեղծը եւ հասկացնում արդիականությունից կտրված եւ իրեն կշտամբող գռեհիկ գաղափարախոսներին. «Ինչ գրել եմ՝ պատասխանում է ժամանակի հարցերին: Ինչպե՞ս կարող եմ կտրվել ժամանակից: Ուզեցե՞մ էլ՝ չեմ կարող: Իմ ժամանակը իմ ժողովուրդն է՝ իր բոլոր իղձերով: Եթե դուք... ինձ համարում եք պոետ, ապա ես կասեմ՝ որքան պոետն ավելի է պոետ, այնքան ավելի է կապված իր դարին: Եվ քաղաքացին է իր դարի»: ²⁹⁰

«Իմ ժամանակը իմ ժողովուրդն է» իմաստուն արտահայտությամբ Շիրազը մի կողմից ընդգծում է բարձր արվեստի հավերժական բնույթը, մյուս կողմից ժամանակները կապում է ժողովրդի հավերժության հետ: Իսկ հավերժող ժողովրդին սնուցող աղբյուրն ու ելակետը նրա անցյալն է, նրա հիշողությունը: Այդպես է հարցին

մոտեցել մեծ բանաստեղծը: Արարատի մեջ տեսնելով Տիգրան Մեծին, իսկ Տիգրան Մեծի մեջ՝ Արարատին, Շիրազը այս ֆոնի վրա է ընդգծում մեր ազգային կորստի ցավը: Այս ցավի մեջ տապակվում է հայ Արարատը, Արարատ հայը: «Պատմության մատյանն հավերժ է դառնում, երբ սերունդներն են ավանդում իրար...»: Գինարբուքի նստելով իր իշխանների հետ, Տիգրան Մեծը ցավով խորհում է. «Երեկ ես էի պատանդն Իրանի, Այսօր՝ Մեծագույն մասն Յայաստանի...»: Սակայն Տիգրան Մեծի այս մտորումը կորուստներ ունեցող մոլորված մարդու անհույս վշտի արտահայտություն չէ, նա հայոց հզոր արքայի շուրթերով դեղատոմս է ներկայացնում սերունդներին՝ միաբանվել: Ցավալիկ այն է, որ իր «գահն է տենչում ամեն մի իշխան», նրանց սրտերը չեն դողում հայրենի հողի համար, որ խիստ արդիական է հնչում.

*Բայց մենակ ինչպե՞ս վագրի դեմ գնամ,
Ինչպե՞ս ես խլեմ հող, պատիվ, համբավ...
Ինչպե՞ս, երբ հազած զենքեր ու զրահ՝
Իրար չեն բռնում իշխաններն հայոց,
Իրենք՝ իմ հայոց ձիերի վրա՝
Ձիերն են դառնում հարեւան այլոց...: 291*

Այս ցավը Յայոց պատմության շուրթերով հուշած շիրազյան պատգամ է, որ գնալով պոեմում ընդգծվում է գողթան վարդանոցից հայտնված երեք երգիչների՝ հոր եւ զույգ զավակների խորհուրդներում: Կույր երգիչ հայրը, որպես Յոմերոսի թոռը, «պատանդված Մասիսի վշտով», հույսն էր բուրվառում «Գերի Գողթանի, Կողբի կարոտով... Որ չմոռանան... հողերը հայոց»:

Պոենի սյուժեի զարգացման ընթացքում Շիրազը հեքիաթային-առասպելական հյուսվածքներին հատուկ դրվագներ ստեղծելով, առեղծվածային հարցեր է առաջադրում: Արքան կարգադրում է երգիչներին «երգել առանց բառերի»: Եվ տավիղները հեկեկում են «անբառ մի նվագ»: Նվագից հետո արքան դիմում է իշխաններին. «Ասացեք, քաջեր իմ բաժակակից, թե ո՞ւմ ինչ պատմեց այս նվագն անբառ»: Շիրակի իշխանը այն կապում է իրեն սպասող սիրած աղջկա կարոտի հետ, երկրորդ իշխանը նվագը կապում է իր փսյոյան Փառնակի պարտության հետ, երրորդ իշխանը ներկայացնում է երազը՝ «Մի գիշերվա մեջ դարձա տերն Յարքա՝ ջնջելով տոհմը իշխան Յայկազի», իսկ Սյունյաց իշխանը նվագի մեջ պատկերացնում է իր «գալիք թագը», իր իշխանությունը «Յարքա, Շիրակ ու Տարոց» տերերի վրա: Այսպես հայոց իշխանները մեկ առ մեկ պատասխանների մեջ կրկին արթնացնում են իրենց հայրենադավ անմիաբանությունը: Վերջապես արքան ներկայացնում է անբարբառ երգից արած իր հետեւությունը.

- Մռայլ մեղեդին այս իմաստունի
 ...Մատյանն էր հայոց ճակատագրի
 ...Տեսա երգի մեջ ես հրաշք մի բան՝
 Իբրեւ թե բոլոր իշխաններն հայոց
 Եղբայրացել են, դարձել միաբան,
 Դարձել միասիրտ ու միաամրոց:
 Խելքի են եկել իշխաններն հայոց,
 Յայոց այլեւս չեն դարձնում վայոց,
 Քամուն են տալիս նախանձ, քեն ու ոխ,
 Յայ նախարարներն ամենակարող

Եվ մոռացել են օտարի լեզուն,
հրենց թրերի լեզվով են խոսում...
...Օտարի՝ թագի խոստմամբ չեն խաբվում...
...Տեսա խելքի գալն հայ իշխանների,
Այն իմ գլխագին երկիրն Յայ ասա՝
Այսօր շղթայված՝ վաղն ազատ տեսա: 292

Տիգրան Մեծի քաղաքականության, հերոսության, վճռականության եւ այլ բարեմասնությունների ընդգծումով Հ.Շիրազը նրա անունից խորհուրդ է տալիս եկող սերունդներին՝ բռնացքվել, խմբվել, ստեղծել «միաթագ, միակնիք, հազարաբերդ հայրենիք», ազատել Մասիսը, խոսել հայոց լեզվով, ժամը գալուց թուրը չխնայել, չդավել միմյանց, հյուսել «նոր արեւ հայոց տերության», «ազատել գերված հողերն հնօրյա», հասկանալ, որ «թրով խլածը թրին ետ կտան. Կորցրած հողը թրերի արնող աչքով են գտնում», «Հողը չեն տալիս, առնում են հողը»... Տիգրանի բաղձանքների միջոցով բանաստեղծը ներկայացնում է եւ երազանքը.

- Միաբանվեցեք, որ անկախանանք,
Էլ ոչ մի ազգի ստրուկ չմնանք...
...Օրենքից դուրս են հայ իշխանն անգամ, հայ իշխանուհին՝
Ովքեր չխոսեն հայոց մայր լեզվով,- ժանգ են իմ գահին: 293

Դժվար չէ նկատել Շիրազի արդարացի ընդդիմախոսությունը. «Ինչ գրել եմ՝ պատասխանում է ժամանակի հարցերին»: Ընդհանրապես «Հայոց հրաշքը», «Մամիկոնյան սուրը», «Հրազդան», «Արտավազդի ցասումը», «Անի», «Հայոց Դանթեականը» եւ այլ պատմական ստեղծագործություններում երգիչը իր հզոր տաղանդի ուժով քննարկում է մեր ժողովրդին հուզող արդիական

պրոբլեմները: Բանաստեղծի հոգին առաջին հերթին փոթորկվում է կորուսյալ հողերի ճակատագրի համար: Պատահական չէ, որ նրա երգերի մեջ Արարատի հետ միասին հոլովվում է սարը: Շիրազը գրել է. «Արարատը մեզ համար սոսկ աշխարհագրական հասկացողություն չէ, մեր ազգի խտացված խորհրդանիշն է»: ²⁹⁴ Իսկ ազգը անպաշտպան է, եթե սուրը ձեռքին չէ: Իր տարբեր հայրենապատումներում Շիրազը ազգի խորհրդանիշ Արարատը ազատագրելու, ասել է թե՛ ժողովրդի հարատևումն ապահովելու իղձն ու դեղատոմսն է հրամցնում:

Յ. Շիրազի հայրենապատումի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Հայոց դանթեականը» պոեմը, որտեղ պատկերվում է հայրենիքի եւ ժողովրդի դառն ճակատագիրը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Բանաստեղծը 40 տարուց ավելի աշխատել է այդ երկի վրա: Այն կարելի է համարել տվյալ թեմայով գրված նրա ստեղծագործությունների հանրագումարը: Պոեմի տպագրությունը Հայաստանում իրականացվեց ուշ թեմայի նկատմամբ ժամանակաշրջանի գաղափարախոսության ժխտողական վերաբերմունքի պատճառով: Պոեմը 62 էջ ծավալով առաջինը լույս ընծայվեց Բեյրութում՝ 1965 թ., «Սեւան» հրատարակչության կողմից: Գրքի առաջաբանում նշված է. «Հովհաննես Շիրազի այս քերթվածավեպը նվիրված է ապրիլյան եղեռնին: Այս քերթվածավեպը փոթորիկ մըն է, թե ինչու Հայաստանին մեջ չէ հրատարակված այս գործը եւ անոր ձեռագիրը ընկած է Թեհրան («Ալիք» օրաթերթ), ուրկե կարտատպվի այստեղ: Երեւանի մեջ տպված են այս գործին հատկանիշներով երկեր, որոնց

նր զգալի շեղումը չի սլաքեր այս պոեմը: Համենայն դեպս Հայ ընթերցողներուն համար «Հայոց դանթեականին» ընթերցումը պիտի ըլլա քիչ անգամ պատահող վայելք մը»: ²⁹⁵

«Սեւան» հրատարակչության հետաքրքրությունը եւ դժգոհությունը հասկանալի է: 1965 թ. Երեւանում ուսանողությունը դեռ նոր էր բողոքի ցույց կազմակերպում՝ Խորհրդային իշխանությունների կողմից Հայոց մեծ եղեռնը լռության մատնելու, հայ դատը մոռանալու դեմ:

«Հայոց դանթեականը» պոեմի պատումը ընթանում է երկպալան: Մի կողմից պատկերվում է հայոց անհուն վիշտն ու ցավը, կորուստների ահագնությունը, մյուս կողմից՝ ժողովրդի հպարտության եւ արժանապատվության զգացումը:

Պատկերավորության բազմազան ձեւերով Հ. Շիրազը ներկայացնում է հայ ժողովրդի գոյատեւելու վճռականությունը, բացահայտում նրա արարող ոգին եւ անկոտրում կամքը՝ չար ու դաժան հարեւանների շրջապատում:

Վ. Տերյանի եւ Ե. Չարենցի ավանդույթներով Շիրազը ներկայացնում է Երկիր Նաիրիի համայնապատկերը, անձնավորում հայրենիքը: Բանաստեղծի պատկերացմամբ Հայաստանի ամեն մի լեռ քարացած անմեռ մի հայ է: Նրանցից մեկը ճգնավոր է, մյուսը իշխան կամ թագավոր, Առնոսը քաջ հովիվ է, Անտոկ լեռը՝ մարգարե, Սասնա սարը Նարեկացին է, Վարազա լեռը՝ արծիվ, Արագածը Վիհ-Շարան է, Արարատը՝ Հայկը, որ «Վարկնայե՛ մեկ Երեւան, Հազար ու մեկ՝ դեպ Սուշ ու Վան»: Պոեմի 22 գլուխներում եւ համարյա նույնքան արձակ սկսվածքներում Շիրազը ներկայացնում է իր «փոքրիկ

ազգի մեծ վշտերը», զգուշացնում միջազգային հանրությանը՝ թույլ չտալու ցեղասպանություն, աշխարհի որ մասում էլ լինի:

Պոենում Շիրազը դիմառնության, հրովարտակային, ուղերձային միջոցներով դիմում է Դանթեին, ապա հողագնդի գալիք սերունդներին՝ նզովելու հայոց եղեռնը կազմակերպողներին, արթնացնելու աշխարհի խիղճը: Հեղինակի շուրթերով խոսում է հայ ժողովուրդը: Հիշելով ժողովրդի կրած տառապանքն ու վիշտը, բանաստեղծը միաժամանակ կոչ է անում լինել զգաստ, չմոռանալ հայոց հողերը վերադարձնելու, գերված Մասիսը ազատագրելու վճռականությունն ու իրավունքը:

Պոենում բանաստեղծը Ալիգերի Դանթեին ուղեկցում է Արեւմտյան Հայաստանի բոլոր քաղաքներն ու գյուղերը, հայ սերունդներին առաջադրում հայրենիքի վրեժի հատուցման ուղին՝ վառ պահել զոհերի հիշատակը, թշնամուց ազատել երկիրը:

Ակադեմիկոս Ս. Արզումանյանը հանգամանալից վերլուծելով եւ գնահատելով Հ. Շիրազի «Հայոց դանթեականը», քննել է Դանթեի «Աստվածային կատակերգության» ազդեցության հարցը համաշխարհային, այդ թվում եւ հայ գրականության վրա: Գրականագետը մատնանշում է Սիամանթոյի «Հոգեւարքի եւ հույսի օւտեր», «Կարմիր լուրեր բարեկամես» շարքերը, Վարուժանի «Ձարդը» պոեմը, «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» ժողովածուները, Չարենցի «Դանթեական առասպել», «Մահվան տեսիլ», Պ. Սեւակի «Անլուելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ» եւ այլ գործեր, որոնցում դանթեական թեման գտել է գեղարվեստական յուրատիպ լուծումներ: Գրականագետն ընդհան-

րացնում է. «Բոլորի հիմքում հայոց ճակատագրի անհունորեն բարդ ու դաժան խնդիրն է, որ շաղվում է մարդկության քար անտարբերության, կարծրացած խղճի եւ նենգ հարեւանի արյունարբու էության դատապարտման թեմային:

Շիրազի «Հայոց դանթեականը» այդ լուծումներից առավել մասշտաբայինն է, առավել ծավալունը եւ զարգանում է զուտ դանթեական ոգով՝ առանց շեղումների: Իր ստեղծագործության ժանրային տիպը, չափն ու ձեւը առաջնային չի դիտում բանաստեղծը, դրանք չի դարձնում մտահղացման նպատակն ու գեղարվեստական որոնումների առանցքը... Էականը երկի չափն ու ձեւը չէ... նա բացել է հայ ժողովրդի խոցված ու խաչված սիրտը, հառաչել հառաչանքը նրա, խտացրել եղեռնապուրծ բեկորների անեծքը, բայց եւ ոգու խոյանքն ու պահանջն աննահանջելի»: ²⁹⁶

Պոեմի կենտրոնական հերոսը բանաստեղծն է: Ջրուցելով Խորենացու, Նարեկացու, Կոմիտասի, Սիամանթոյի, Ջոհրապի, Վարուժանի, Ռուբեն Սեւակի հետ, Շիրազը անմիջական շեշտերով պատկերում է եղեռնի սարսափները, խոսում «մայր ծովից հազիվ մի բուռ մնացած... եղեռնապուրծ նոր Հայաստանի» մասին, ընդգծում կորուսյալ երկրի ցավը, երկիր, որից մնացել է «Հայոց դրախտի յոթ գետերից՝ հազիվ մի Ջանգու, Վեր արարատված յոթ լեռնապարից մեն մի Արագած...»:

Յ. Շիրազի հարուստ բառապաշարը, թարմ պատկերներ ստեղծելու անսպառ կարողությունը օգնել են նրան չկրկնելու իր մեծ նախորդին՝ Ե. Չարենցի «Դանթեական առասպել»-ի երանգները, չէ՞ որ երկու դեպքում էլ

Ռեալիստորեն նկարագրվում է պատերազմը եւ այդ արհավիրքի զոհը դարձած ժողովրդի տառապանքը: Երկու դեպքում էլ օգտագործված են հայ դասականների՝ Զ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի ավանդները հայ ժողովրդի դժոխային նահատակության պատկերները ստեղծելիս: Շիրազը քայլ առ քայլ Դանթեին ծանոթացնում է դժոխքված Հայոց երկրի բոլոր մասունքների հետ, ընդգծում, որ մեծ իտալացու նկարագրած դժոխքում մորթված անմեղ ազգ չկա, իսկ, ավա՛ղ, թուրքի կես յաթաղանից չի փրկվել ոչ քաղաք, ոչ՝ գյուղ, ինչպես նաեւ չթողին ոչ մի հայ: Շիրազը ողբում է Հայոց երկրի կորուստը եւ նրա դարավոր տիրոջ՝ հայ ժողովրդի տառապանքը՝ «Մերոնք յոթը սուրբ միլիոն հայ էին՝ էլ չկան մերոնք... էլ հայ չի ծնում ոչ մի հայահող...»: Շիրազն էլ կարող է Խ. Աբովյանի նման իր երկը համարել «ողբ հայրենասերի», գալիքի հանդեպ ընդգծված պայծառ հավատով: «Հայոց դանթեականը» ավարտվում է Հայրենիքը ազատագրելու շիրազյան բաղձանքով ու հավատով.

*...Դուք էլ ինձ վկա հավերժեք, աստղեր,
Մորթված արգանդից մանուկը կելնի՝
Չի թողնի իր հայ Վանա ծովն անտեր,
Իր Մասիս լեռներն անտեր չի թողնի,
Կհասնի հայ ցեղն իր հայր Մասիսին,
Եվ հայ գրերը ոչ թե ավազին,
Այլ Արարատի ճակտի՛ն կգրենք...*

Զ. Շիրազի հայրենեզոխության հետաքրքիր էջերից է նաեւ «Անի» պոեմը: Ինչպես հատուկ է մեծ բանաստեղծին, պատմողական-էպիկական ոճով Անի քաղաքի

արարման, հերոսական պայքարի եւ ապրած ողբերգության ընթացքը տանում է դեպի պատումի խորքը: Բնությունը անձնավորելու միջոցով Շիրազը իր սիրտն ու հոգին ցուցադրում է Հայրենիքի պատկերի մեջ եւ ասես կերպավորում նրա կորստի ցավը: Ընդհանրապես Շիրազի բոլոր ստեղծագործություններում զգացվում է Երկրի կորուստը եւ ժողովրդի տառապանքի կսկիծը: Բանաստեղծը կուտակվող փոխաբերությունների, անձնավորման բազմաթիվ պատկերների միջոցով պոեմին հաղորդել է հուզական լիցք: Նա վառվում է Հայաստանի խորհրդանիշ Անիի կորստի կարոտով: Լացում է - չի թեւաթափվում, խղճում է - զորացումի երազով, ողբում է - կորցրածը գտնելու հույսով.

*Դեռ մի կարոտ ունեն անհազ՝ հասնեն Անի ու նոր մեռնեն,
Բանամ ճամփիս դռները փակ, տեսնեն Անին ու նոր մեռնեն:
...Վանա ծովի ու Վանի հետ ու Ղարսի հետ ու Մասիսի՝
Իմ Սեւանի լույսերի տակ զուգեն Անին՝ օջախ վառեն:
...Բանտից հանեն մեծ Հայաստանն՝ այս ազատված փոքրիս խառնեն,
Գրկելով հողն իմ բովանդակ՝ Հայկեն Անին ու նոր մեռնեն: 297*

«Անի» պոեմի վերջերգանքից բերված այս տողերը բխում են ստեղծագործության սյուժեի ընթացքից եւ ապացուցում հեղինակի մտահղացման նպատակը, գեղագիտական իդեալն ու մեկնակետը:

Հայրենիքի կորստի ցավի եւ նրան վերադարձնելու հույսի շաղախով են հյուսված նաեւ Շիրազի «Հայոց ամենանվիրականը», «Մասիսի մայրամուռնն ալվանդավեպ», «Վանեցու ողբը» եւ այլ փոքր պոեմները:

Հովհաննես Շիրազի հայրենաշունչ քնարը ազգային դիմագիծ պահելու դեղ է՝ ձուլման վտանգին դատապարտված սփյուռքահայի համար, մեր աշխարհացրիվ բեկորներին դեպի մայր հայրենիք կանչող զանգ:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԱՆԼՈՒԼԻ ՉԱՆՈՒՄ», «ԵՎ
այր մի՝ Մաշտոց անուն», «Եռաձայն պատարագ»
պատմական պոեմները մեծ բանաստեղծի հայրենասի-
րական զգացումների վառ արտահայտություններից
են: Նրանցում շոշափված են հայ ժողովրդի, հայոց աշ-
խարհի ճակատագրի հետ կապված՝ արդիական հնչե-
ղություն ունեցող պրոբլեմներ:

«Անլուռի զանգակատուն» պոեմը ծնվեց հայ ժո-
ղովրդի պատմական ծանր ճակատագրի, նրա երկ-
փեղկվածության, կորուսյալ հայրենիքի ցավից:

«Անլուռի զանգակատուն» պոեմի հենքերը մեր
պատմական անցյալից են հյուսված: 1870-ական թվա-
կաններից մինչև 1915 թ. Հայաստանում տեղի ունե-
ցած բոլոր դեպքերի եւ իրադարձությունների խորագ-
նին ուսումնասիրումն ու յուրացումը հնարավորություն
են տվել Պ.Սեւակին՝ իր բանաստեղծական վառ
երեւակայության շնորհիվ ստեղծելու հայ ժողովրդի
վերջին հարյուրամյակի գեղարվեստական պատկերը՝
նրա ծանր ճակատագրի եւ ոգորումների արծարծումը:
Դա կարող էր անել միայն Պ. Սեւակի նման մեծությու-
նը, որի մտապատկերներում եւ հոգսերի շրջապատույթի
մեջ հայրենիքի կորստի ցավն ու տառապանքն է: Այս-
տեղ կարող ենք ընդգծել, որ Պ. Սեւակի հայրենասիրու-
թյունը տառապանքից ծնված զգացում է, իսկ հանրա-
հայտ է, որ իմաստուն խոսքը ակունքվում է ցավից ու
վշտից, հոգսից ու տառապանքից, որոնց կրողներն
առաջին հերթին մեծերն են, որոնք «Ու՛շ-ու՛շ են գալիս,
բայց ո՛չ ուշացած», որոնք՝ «Անտոհմ չեն նրանք կամ
անհայրենիք»: Այս պարագայում եւ ընդհանրապես

Սեւակի պարագայում ստեղծագործական թռիչքների մղող ուժը հայրենիքի ճակատագիրն է, կոնկրետ նաեւ «Անլռելի զանգակատուն» պոեմում, որի գլխավոր հերոսի եւ նրան ծնող ժողովրդի ճակատագրերը նախախնամութեամբ բերումով, թե՛ մի այլ ուժի՝ նույնանում են.

*Իր ժողովրդի զավակն իսկական՝
ժողովրդի պես ինքն էլ որբ մնաց...
...ժողովրդի պես նա որբուկ մնաց:
Նա մնաց անտուն, մնաց բնավեր: 298*

Ամբողջ պոեմում հրաշքներ գործողը որբ ու բնավեր դարձած ժողովրդի ցավն է: Այս «որբ ու բնավեր» բառերի հյուսվածքը անհայրենիք մակդիրի հոմանիշն է, որ հանգիստ չի տվել բանաստեղծին:

Կոմիտասի կենսագրության մեջ անգամ Պ.Սեւակը որոնում է հայրենիքի սահմանները, ավստոսում եւ՝ հայրենյաց կորուստները: Կոմիտասի ծնողները՝ Գեւոն ու Թագուհին, գիտեին «իրենց Կուտինան Անատոլուի խավար խորքերում»: Նրանք գոնե իմանային, «թե իրենց պապի պապին ու քեռուն գաղթի ճամփան է բերել հասցրել ինչ-որ Ցղնայից այս Կուտինային»:

*Ո՞վ պատմեր, սակայն, որ գյուղն այդ Ցղնա
Եվ Սասյաց փեշը Գողթանն է չքնաղ: 299*

Հայոց բախտի չհասկացված քմայքը առեղծված է, այդ բախտի վառվող շերտերի ջերմությունն զգացող բանաստեղծը հույսի, ներման, արթնության դողանքները ի մի է բերում եւ կրկին կիզվում Հայաստան երկրի կորուստների հրդեհի մեջ եւ բարձրաձայն նշում աշխարհի չար ու դաժան ուժերի հասցեատերերին՝

Սուլթան Յամիդին, որ «Հայաստան» բառը «արգելեց
Լեզվից, քարտեզից, գրքերից քերեց», իսկ Ալեքսանդր
ցարն էլ իր հերթին՝ «Հայոց պատմությունն» իբրև
առարկա, Արգելեց բոլոր հայ դպրոցներուն»:

«Անլռելի զանգակատուն» պոեմի հիմքում հայրենա-
սիրական բարձր գաղափարների եւ հարազատ ժո-
ղովրդի ողբերգական վիճակի հակադրությունն է: Մի
կողմում ժողովրդի ճակատագրի եւ կորուսյալ հայրե-
նիքի խորհրդանիշ Կոմիտասն է, մյուսում՝ այդ ցավի եւ
կորստի տառապյալ հեղինակը՝ Պ. Սեւակը: Հոգեբանա-
կան վերապրման ճանապարհով Սեւակը դրսեւորում է
իր հերոսի ապրումները, ընդգծում նրա գործի պատմա-
կան եւ արդիական նշանակությունը, գեղարվեստորեն
իմաստավորում Կոմիտասի ապրած ժամանակաշրջա-
նը, իսկ Կոմիտասը, ինչպես եւ Մեսրոպ Մաշտոցը, սո-
վորական երեւոյթներ չեն, այն անհատականությու-
ներն են, որոնք իրենց մեջ կրում են ժողովրդի հազա-
րամյա հանճարի զորությունը: Լսենք Պ.Սեւակին. «Ժո-
ղովուրդ կոչվածը, ինչ խոսք, կույր չէ, բայց նա ինքնա-
տես չէ ու չի էլ կարող լինել, քանի որ ժողովուրդը մի
անձ չէ, որ կանգնի հայելու առջեւ եւ տեսնի իր կան ու
չկան: Ժողովուրդն ինքն իրեն տեսնում է՝ նայելով իր
այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից,
կաղապարվել ըստ նրա հավաքական կերպարի ու ժա-
ռանգել ամենայն ծնողականը: Ժողովուրդն է ստեղծում
նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցիր բազմա-
նիստությունը, բայց հենց որ ծնեց՝ ինքը ժողովուրդն էլ
լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագու-
մից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց
ծնում, այլեւ նրանք են ժողովուրդ վերածնում:

Այսպիսի ծնունդ էր ամենից առաջ Մեսրոպ Մաշտոցը: Այդպիսի ծնունդ էր նաեւ Կոմիտասը...»: 300

Ուրեմն, Կոմիտասի կենսագրությունը համապատասխանում է դարին ու ժողովրդին: Սեւակն ընդգծում էր, որ Կոմիտասը մայր ժողովրդի դեմքն արտացոլող հայելի է, ժողովուրդը նրա մեջ տեսնում է իրեն: Կոմիտասի ողբերգությունը ժողովրդի ամբողջական ողբերգությունն է: Ահա այստեղ է, որ Պ. Սեւակը կորուսյալ հայրենիքի կերպարի մեջ խտացնում է նրա մեծագույն գավակներից մեկի՝ Կոմիտասի անբուժելի ցավը եւ Կոմիտասի մեջ խտացնում իրեն: Ինչպես Գ.Նարեկացին կասեր՝ «Ես եմ համայնը, եւ ամենքինն է պարփակված իմ մեջ», այդպես էլ կարող էր կրկնել Սեւակը: Այստեղ է, որ Կոմիտասի կերպարը անսահմանորեն ընդլայնվում է, դառնում ոգեղեն խորհրդանիշ: Պ.Սեւակի ստեղծած բանաստեղծական դիմառնություններից մեր հոգու - խորքերում արձագանքում են Կոմիտասի հայրենաբաղձ լուռ մտորումները, ներկայանում որպես հայոց աշխարհի ընդհանրացված կերպար: «Ղողանջ ահագնացող» գլխից սկսած՝ Կոմիտասը համաձուլվում է հայրենական բոլոր բարենասնություններին: Նրա համար.

Ե՛րգը...

*Կարծես տնից ելած մի պանդուխտ էր բազմաթափառ
Եվ ուզում էր կրկին փարվել հայրենիքին:*

Հայրենիքն էր... նրա հոգին: 301

Կոմիտասը տառապում էր, երբ նկատում էր, որ Հայոց աշխարհում գոյություն ունեն «Հազար ու մի խաղիկ-տաղիկ Հայաշխարհիկ, նաեւ օտար»: Կոմիտասի առաջին հոգսը դառնում է ժողովրդին վերադարձնել իր

Երգը եւ հասկացնել, որ աշխարհում հայը իր երգն ունի, եւ նրա դէմ չխլանա: Կոմիտասին ոչ միայն հուզում է հայրենիքի ներկա ծանր վիճակը, այլեւ նրա ապագան, իսկ ապագային հավատալու համար ինքնաճանաչում է պետք: Այստեղ Սեւակը ընդհանրացնում է իր հերոսի ակնկալությունները: Նախ, ժողովրդին վերադարձնել նրա երգն ու պարը, որ «օտարի դռանը տնփեսա» չդառնա, որ ժողովուրդը հասկանա, որ ինքը աշխարհում բանտարկված է, որ Սրերից ու թրերից հետո՝ թշնամին լեզվի թունավոր նետով է զարկում: Չպետք է մնալ խեղճության ճիրաններում, պետք է մեկընդմիջտ հասկանալ:

*Քեզ հարվածողին որպեսզի զարկես
Եվ ունեցվածքդ ու կյանքդ փրկես,
Պիտի զարկողին իր զարկից զրկես: 302*

Պոեմի յուրօրինակ սյուժեի զարգացման ընթացքում Պ.Սեւակը գեղարվեստական «ներփակ» ժամանակի հյուսվածքով ներկայացնում է Կոմիտասի կյանքի եւ գործի բնական ընթացքը, իրար հաջորդող իրողությունների շղթան, որի շնորհիվ էլ ընթերցողը հստակ պատկերացնում է հերոսի կրած տառապանքների պատճառն ու հետեւանքը:

Այսպես, «Ղողանջ պանդխտական» գլխում Կոմիտասին տեսնում ենք Բեռլինում, որտեղ երգի եւ նվագի ղողանջներով ձգտում է հասկացնել աշխարհի տերերին իր տառապած հայրենիքի գոյության փաստը: Եվ ղողանջում է նրա հայրենակարոտ երգը, որի նպատակային երանգները անմիջական ու ջերմ թրթռներով ուղղակի նկատում է Սեւակը:

Կոմիտասը հայրենիքում իր արյան մեջ առած պանդուխտի երգի ալիքները, առաջին անգամ օտար ափերում՝ Բեռլինում ավելի ընդգծված է զգում «Կռունկի՝ կարոտը, երգելու պահին կարոտ կոչվածը խուժում է սիրտը, շուրթերին մեր ցավի խոսքը. «Կռունկ, ... խաբրիկ մը չունի՛ս»:

Կոմիտասի կենսագրական էջերի բանաստեղծական հյուսվածքների մեջ ներկայացվում է հայ ժողովրդի ապրած արհավիրքը՝ Հայոց աշխարհի արյունալի ճանապարհը՝ 19-րդ դարի վերջերից սկսած: «Ղողանջ կոտորածի» գլուխը այդ մեծ սարսափի սկիզբն է ազդարարում: Այստեղ հենց առաջին տողը հիշեցնում է անտեր-անտիրական հայրենիքի ողբերգությունը. «Չէ՛, կռունկ չկա՛ր Բեռլին քաղաքի երկնքում մթար, որ վարագուրված հայոց աշխարհից գեթ խաբրիկ մը տար»: Գուտենբերգին ծնած աշխարհում սեւ կռունկների սեւ երամի պես սեւ տառերը հաղորդում են բոթը կոտորածի.

*Անլուր աշխարհին իմաց տվեցին,
Որ հայոց երկրի ծորերում անտակ,
Կիրճերում խորունկ...
Ա՛խ, էլ ի՛նչ Կռունկ,
Երբ հիմա վառման թոնիր էր դարձել
Թոնիրի երկիր Հայաստանն ինքը,
Ու թոնրին դրված սեւ խուփ էր կարծես
Հայոց երկինքը... : 303*

19-րդ դարավերջի պատմական իրադարձություններից սկսած, ներկայացվում է Հայոց աշխարհի ողբերգությունը, Կոմիտասի տառապանքը, աշխարհի խոշոր

Երկրների չար խաղը հայ ժողովրդի հանդեպ: Անհանգստացած ռուս-տաճկական ճակատամարտում ռուսական զորքերի հաջողություններից, գերմանական, ֆրանսիական, անգլիական տիրակալները գնացին Սան-Ստեֆանո՝ մասնակցելու այնտեղ գումարվող վեհաժողովին, որ պարտադրեն Պետերբուրգին՝ հաղթության դաշտից իր սպասածից քիչ բերք ժողովի: «Երկար նստեցին, ուշ-ուշ վեր կացան... Հայկական հարցը մեջտեղ բերեցին».

Ու մի թիվ մնաց... համեստից համեստ.

Մնաց 16 -

«Հայկական հողված» -

Հայկական հարցի բզկտված մարմնից

Ոչ թե մինչեւ իսկ դաշույնով հատված,

Այլ քաշքշոցով, այլ եղունգներով

Մի կերպ ծվատված: 304

Սեւակը հայոց համազգային վշտի համայնապատկերն սկսում է հենց այս հարցի ներքաշումից: Հայերին վերաբերող 16-րդ հողվածը «աշխարհի ցնփոր տերերին» շատ թվաց. նրանք վերստին եկան Վեհաժողովի, այս անգամ Բեռլինում, հայ պատվիրակին թողնելով փակ դռան ետեւ: «Ամենքը մի-մի պողպատե կռան՝ Ի ջա՛ն մեր սալին - Վա՛յ տամ մեր հալին-»: Եվ 16-րդ հողվածը դարձրին՝ 61:

Ինչպես տեսնում ենք, Պ.Սեւակը կոմիտասյան սխրանքի մեջ ներկայացնում է Հայրենիքի փրկության հույսի մի երազը, իսկ Հայրենիքի նոր փրկության մեջ՝ Կոմիտասի հույսերի փլուզումը՝ առաջին հերթին աշխարհի խոշոր ու չար ուժերի հարվածների տակ:

Պ.Սեւակը նշել է. «Կան մեծություններ, որոնց դիմանկարի կերտումը վեր է ամեն մի՝ թեկուզեւ հանճարեղ նկարչի հնարավորություններից. մի պատկեր կամ քանդակ չի պարփակում նրանց որքանությունը: Դրանց փոքրիշատե լրիվ պատկերելու համար հարկավոր է պատկերների ու քանդակների մի ամբողջ շարք: Մեզ համար այդպիսի մեծություն է Կոմիտասը»: ³⁰⁵

Կոմիտասի հայտնությունը հրթիռված է հայրենիքի ճակատագրից եւ ցավից: Առաջին հերթին նա պատկանում է Հայոց աշխարհի անձնուրաց հայրենասերների շարքին՝ որպես առաջին մեծության աստղ: Եվ Սեւակը Կոմիտասի գործունեության ու նվիրումի բոլոր երանգները փայլեցրել է պոեմի քառասունվեց դողանջներում: Նրանցում տաղանդավոր բանաստեղծը քայլ առ քայլ ներկայացրել է Մեծ տառապյալի ծգտումները, երազանքը, ակնկալությունները, նվաճումները եւ վերջապես՝ ողբերգությունը: Անատոլիայի թուրքական խավարից էջմիածին եկած Սողոմոնը անցնելով Հուսո, Ներման, Արթնության, Հսկման, Մեղսական հոգեվիճակների միջով՝ մտնում է Հայտնության օվկիանոսը, զգում օծման վեհությունը, Ամառնօրյա դողանջները առնում հոգու մեջ, Աշնանաշունչի շողերով զորանում, Ահագնացող ծփանքներով ձեռքը հավաքում երգի փեշերը, բնաշխարհիկ օրհնանքները ձուլում մեղեդիներիին, Ցավի ու Բողոքի հրամայականով ի մի բերում Դավթի ցասումն ու Թուր Կայծակի շառաչը, Պանդխտական մրմունջով հասնում Բեռլին եւ այնտեղ լսում առաջին մեծ Կոտորածի բոթը: Ի՞նչ է սա, մի անծի կենսագրություն, թե՞ մի ամբողջ ժողովրդի ճակատագրի նկարագիր՝ իր պատմության, հայրենի երկրի համաձուլվածքով:

Ինչի՞ց ծնվեց Կոմիտասը: Ահա այս հարցի պատասխանն է, որ պիտի ընդգծվի Սեւակի պոեմը կարողալուց հետո: Բանաստեղծի մրմուռի եւ վշտի, ամսոսանքի եւ ցասունի հայրենաբուխ տողերի միջից հնչում է այդ պատասխանը՝ Կոմիտասը ծնվել է Հայոց աշխարհի ցավից եւ հույսից, ոգորումներից ու կորուստներից: Պ.Սեւակի այս պոեմը, հիրավի, սխրանք էր, իսկ նման սխրանքը միանգամից չի ծնվում, այն արարվում է երկար ժամանակաընթացքում՝ նախ գրողի հոգում ու մտապատկերներում եւ ապա հանձնվում է թղթին: Կրկին դիմենք Սեւակին. «... Իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ «Ձանգակատունը», գրել եմ զանազան ձեւերով՝ իբրեւ վեպ, իբրեւ վիպակ, իբրեւ ուսումնասիրություն, իբրեւ հողվածների շարք, իբրեւ ողբերգություն կամ դրամա, ես գիտեի, որ մի օր դա պիտի գրվի»: ²⁶¹ Հասկանալի է նաեւ այն, որ առանց ժողովրդի քաղաքական եւ մշակութային պատմությունը խորապես յուրացնելու հնարավոր չի լինի իրականացնել նման մտահղացումը: Ինչպես նկատել է ականավոր գրականագետը, «Պոեմի առաջին գլխավոր թեման Կոմիտասի ստեղծագործության պատմական եւ ժամանակակից նշանակության վերհանումն է...

Պոեմի երկրորդ գլխավոր թեման Կոմիտասի ապրած ժամանակաշրջանի՝ 20-րդ դարասկզբի, մասնավորապես 1915-ի հայկական կոտորածների, ասել է թե՛ ժողովրդի ողբերգական ճակատագրի պատումն է»: ³⁰⁶

Պ.Սեւակը ինքն է իր պոեմի մտահղացումը գնահատել որպես «համանվագ՝ սիմֆոնիա»: Այդ համանվագի լեյտմոտիվը հայրենիքի եւ ժողովրդի ճակատագիրն է:

Կոմիտասի ծննդից մինչև ողբերգական վախճանը Սեւակը ձեռքը դնում է հայրենիքի թարտացող սրտին եւ այդ սրտի թրթռոցները ներկայացնում Կոմիտասի միջոցով: Ցայգալույսի, Արեւագալի, Միջօրեի, Ծավալումի, Եղեռնի, Ահագնացումի համազանգերում Հայրենիքի ցավը դողանջում է նրա մեծագույն գավակներից մեկի՝ Կոմիտասի սրտում: Անլռելի զանգակատունը Կոմիտասի ոչ թե երգն է, այլ արյունոտված, բզկտված սիրտը, իսկ դողանջող ձայնը՝ հայրենիքի ճիչն է, որ հանգիստ չի տվել Պ. Սեւակին եւ հանգիստ չի տալու հայ սերունդներին, մինչև չիրականանա նրա երազանքը:

Պ.Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմը չի կարելի դիտել միայն որպես Մեծն Կոմիտասի կերպարի ստեղծման հաջող փորձ: Բանաստեղծի ենթաբնագրային արժարժումներն ավելի խորքային եւ լայնածավալ են, քան արտաքինից թվում է:

Պոեմի «Ղողանջ զարթոնքի եւ կենսատման» գլխից սկսվում է Կոմիտասի գործունեության մի նոր էտապը: Այդ ժամանակաշրջանը հարաբերական խաղաղության շրջանն է, երբ 1895-97 թթ. արհավիրքից հետո «Արագիլն էլի ծեր խնձորենու ծաղկի բոցի մեջ իր ոտն է վառում՝ Վերցնում ու դնում միեւնույն ճյուղին, երբ «Սամին ուզում էր անկրակ այրվել՝ Եզան մկանուտ վզի շփումից», երբ.

*Մի տարի առաջ թուրք թնդանոթի երկաթե ճանկից
Վիրավոր վանքին
Սրբատաշ քարի պաղ վիրակապ է վերստին ճարում
Ձեռքը ճարտարի...
Նորից հաճարին*

Սեփական խեժով

Թուրքի գնդակից տեղ-տեղ պատռված կեղեւն է կարում... 307

Անգամ, եթե քարե սիրտ ճարվեր, միեւնույն է, մարդկային սրտում կրակ հնարավոր չէր վառել, վերջապես «Որտե՞ղ եք տեսել, որ թելասեղով Կտըրված երակ վերստին կարվի...»: Եվ լավ է, որ «Այս արհավիրքից, զուլումից այս չար» Կոմիտասն «այս անգամ չխելագարվեց»: Բեռլինից հայրենիք վերադառնալով՝ նա տեսավ «Եթե ոչ արնոտ նույն ահն ու մահը, Ապա երկվորյակ ահն ու վախը նույն»։ Արեւելյան Հայաստանում Նիկոլայ թագավորի «աչքը ռխակալ Ամենուր ու միշտ Եվ ամենքի մեջ, Անգամ երագում» տեսնում էր «տեռորիստի», «հեղափոխականի»։ Այստեղ էլ բյուրավոր հայերի լցրին բանտերն ու բերդերը, տարան՝ զոհվելու։ Փակվեցին հայոց դպրոցները, ուսումնարանները, ձգտեցին փակել «ժողովրդի խոսուն բերանը»։ Համբերությունն իր սահմանն ունի։ Հաղթողի սահմանը սուրն է։ Սեւակը լավ էր հասկանում ժողովրդական իմաստուն խոսքի հրամայականը։ Եվ նա իր հոգու դավթարից գրի է առնում պոեմի «Ղողանջ հերոսականը»։ Ասված է, որ եթե ժողովրդի նկատմամբ արդարության վերահաստատումը հնարավոր չի լինում իրականացնել խաղաղ միջոցներով, ապա նրա չափն ու իրավունքը պետք է ձեռք բերել զենքի ուժով.

Սասունը...

Արդեն ո՞րերորդ անգամ

Նորից տեր դարձավ նոր Դավիթ մանկան,

Որ - ինչո՞ւ սակայն -

Կոչվեց... Անդրանիկ:

Ահեղ ջարդերի ճարակող բոցում
Ամեն սասունցի դարձավ Սասնա ծուռ,
Սասնա տուն դարձավ ամեն ընտանիք,
Սասնա դյուցազուն՝ թե՛ մեծ, թե պուճուր,
Որ - բավական է -
Քառսուն ծամ կույսեր, հարսներ արմաղան
Օսմանցու համար էլ երկանք չաղա՛ն,
Որ - բավական է... 308

Եվ Սասնա սարերում «Վայ - զուլում - վայ»-ը խեղդ-վեց հայ ֆիդայիների զենքի շառաչից, Անառ Ձեյթունը քառասունմեկերորդ անգամ «Շեկ բուրվառի հետ Սեւ վառող խնկեց», ինչ ցիրուցան էր, դարձավ միակուռ, մեր դարավոր թշնամու սրտում «Յուղոտ գնդակներ ճենճահոտվեցին».

Նրանց էր լսում մի ողջ Հայրենիք,
«Պատերազմիկ ենք,
Ոչ թե վայրենիք»:
... Նրանց ծայնի մեջ լսեցինք մենք մեզ.
«Մարդ կոտորելը
Սովրեցանք ձեզմե»... 309

Սեւակը բառ-պատկերների յոթներանգ ծփանքներով ներկայացնում է մաքառող Հայաստանի ոգին, ինչպես ինքն է նշում. «Քայլում էր Մաքառումն ինքը իբրեւ գինովցած մի բարեկենդան», «բացվել էր Հերոսությունը, որպեսզի իր տաք Կրունկների տակ Ազատությունը ահարկու թնդա»:

Սեւակը Կոմիտաս վարդապետին համեմատում է Ղեւոնդ երեցի հետ, որը, սակայն, պայքարի զոհասե-

ղանին բոլորովին ուրիշ զենք դրեց («Պանդուխտ Ln-Ln»-ն):

«Ղողանջ հերոսական» գլխում Պ. Սեւակն ստեղծել է մարտնչող Հայաստանի գեղարվեստական կերպարը: Նա, կարելի է ասել, իրականացրեց պատանության տարիների իր երազանքը՝ ներկայացնել ազգային «սխրագործությունը»: Ժողովրդական այդ սխրագործությունը պոեմում արտացոլվում է Հայոց աշխարհի ավանդական տեղանունների հոլովումներով: Հայրենիքի ազատության եւ ժողովրդի ազատաբաղձ ոգու միաձուլումը զգացմունքային մի նոր երանգ է հաղորդում պոեմին: «Ղողանջ հերոսական»-ում Անդրանիկի եւ անդրանիկված սասունցիների ոտքերի տակ եռում ու թինդ են առնում Ձեյթունը. «Սուրբ Կարապետ»-ը, Եփրատը, Վանա ծովակը, Սիփանը, Վարագը, ուր «Ազատության ոգին էր պարում որպես վրնջող մի խենթ հովատակ»: Հաղթանակի հրաշքը ծնվում է այնտեղ, որտեղ արթնանում է ոգին:

Սեւակը հասկացնում է, որ սուրը մանուկների օրոցքի համար սնար դարձնելը դեռեւս քիչ է, պայքարելու ոգին չպետք է մեռնի, սերունդները պետք է զինված լինեն գոտեպնդումի խոսքերով, ազատությունը ապահովելուց հետո միայն սուրը պետք է դնել պատյան:

Այս խորհուրդը անցած պատմության էջերն ընդգծելու համար չէ լոկ, այլ բոլոր ժամանակների՝ այսօրվա եւ գալիքի: «Անլռելի զանգակատուն» պոեմում հայրենիքի ազատության գաղափարի գիծը ձգված է ոչ միայն դեպի ետ, այլեւ՝ դեպի գալիք: Ով բզկտված հայրենիք ունի, նա իրավունք չունի սնվել միայն անցյալով, նրա երազների ավիշը մեկ արմատով էլ պետք է սնվի

ապագայից: Պոենուն Կոմիտասի ստեղծագործական ամբողջ կենսագրությունը այս խորհրդի առիավատչյան է:

Գրականագետ Լ. Արզումանյանը անդրադառնալով պատմական թեմայի սեւակյան մշակումներին, ընդգծել է. «Պատմական թեմատիկայի իր մշակումներում Սեւակը երեւում է հայրենասերի կեցվածքով, հախումն խառնվածքով ու ներքին անմարելի կրակով... «Անլռելի զանգակատուն» պոեմը Սեւակի հայրենասիրության ամենախոր եւ ամենահզոր պոռթկումն է»: ³¹⁰ Այդ մղումով էլ հենց բանաստեղծը ներկայացրել է Կոմիտասի բնավորությունն ու գործը:

Կոմիտասը հայրենի օջախներում հնչող երգը տանում է դաշտ, դաշտի երգը՝ բերում դահլիճ: Նա վիթխարի հասակով ներկայացնում է «Հայոց աշխարհի Անտերացած հայելուց բիծ ու փոշին» սրբելու պահանջը: Եվ ձուլվում են Կոմիտասն ու ժողովուրդը.

*Եվ այն, ինչ հայ գյուղացին ձիգ էր տվել դարերով
Ապարանի կամ Լոռվա հերկում, կալում, խոզանում,
Հիմա արդեն, Վարդապետ,
Ծավալվում էր քո՛ շրթից...: ³¹¹*

Կոմիտասը իր ժողովրդի ծայնը երգի թելերով հասցնում է Լոզան, Ժնեւ, Բեռն, Վիեննա: «Անլռելի զանգակատուն» պոեմը իր նախորդներն ունի: Հայ պոեզիան անցյալի իր խաչներուկներում փնջել է Դավթակ Քերթողի «Ողբ Ջեւանշիր մեծ իշխանի մահվան մասին», Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության», Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիո», Ղ.Ալիշանի «Պլպուլն Ավարայրի», Ե. Չարենցի «Կոմիտասի հիշատակին», «Մահվան

տեսիլ» մոնումենտալ ստեղծագործությունները: Այդ հարուստ, բազմերանգ ծիածանին Պ.Սեւակը գումարել է իր երանգը, իր սեփական հոգու շողերի հանրագումարը: Կոմիտասը - Պ.Սեւակն է: Նա պետք է ասեր իր խոսքը՝ բխած ժողովրդի եւ հայրենիքի ճակատագրից: Եվ ասաց: Պետք է ընդգծել, որ պոեմի միակ գլխավոր կերպարը սյուժեի զարգացման ընթացքում լուռ է: Նրա փոխարեն արտահայտվում է Սեւակը, նրա անունից՝ երկրի, ժողովրդի, նրա նպատակների, նվաճումների, հիասթափությունների մասին ընդհանրացումներ է կատարում հեղինակը, թշնամուն, չարին բնութագրում է ինքը: Դրանով հանդերձ երբեք հեղինակի եսը չի ընդգծվում, ընդհակառակը, նրա եսը դառնում է Կոմիտաս - սրբությանը երկրպագողի աղոթք: Այնպես, ինչպես արեւապաշտը կարող է դիմել Արեւին, հավատացյալը՝ Աստծուն, բնապաշտը՝ բնությանը, այդպես էլ Սեւակը՝ Կոմիտասին...

Պ. Սեւակը Կոմիտասի անհանգիստ ոգու մեջ հրաբուխներ է տեսնում՝ անընդմեջ, անմարում: Կես Եվրոպական հաղթարշավում Կոմիտասը այնուհետեւ պետք է նվաճի Ասիան եւ կրկին Հրավիրվի Եվրոպա՝ Բեռլին, Փարիզ: «Չմահավան, բարձրաճաշակ, անմիաբան» ականավոր երաժիշտների Միջազգային ընկերության Համաժողովում Նա, որպես Մեկը «բովանդակ ու բազմապիսի Արեւելքից», ինքը մեկնաբանում է, ինքն էլ ծիրանի փողով ներկայացնում հայ դարավոր երաժշտությունը: Այս հրաշքի մեջ էլ Սեւակը ընդգծում է Կոմիտասի ժողովրդանվեր - հայրենանվեր գործը. «Աշխարհում մեզ դու պարզերես դարձրեցիր»: Բանաստեղծը տարբեր առիթներով անդրադարձել է Կոմիտասին ու

Մաշտոցին: Նա գրել է. «Կոմիտասն էր, որ հայերին հայոց երգ ու նվագ տվեց...

Նայելով ահա այս բարձունքից՝ Կոմիտասին չի կարելի համեմատել իր մեծ ժամանակակիցներից ու նախորդներից եւ ոչ մեկի հետ: Ըստ իր գործի եւ դրա հետեւանքների՝ նրան հայր կարող էր դառնալ միմիայն Մաշտոցը»: ³¹² Այս նկատառումով էլ Սեւակը աշխատել է Կոմիտասի դիմաքանդակի վրա՝ ձգտելով այն դարձնել ամբողջական, այնպես, որ ժողովուրդը նրա օգնությամբ ետ ստանա իր պարզեւած լույսը:

«Անլռելի զանգակատուն» պոեմի էությունը լրիվ բացահայտելու համար մի կարելուր բանալի է հենց Սեւակի «Դիմանկարի ամբողջացման համար» հոդվածը՝ գրված 1961-ին, պոեմի լույս ընծայումից հետո: Պատահական չէ Մաշտոց-Կոմիտաս հոգեւոր կամրջի ընդգծումը մեծ բանաստեղծի կողմից: «Պատմական իրադարձությունները չեն կրկնվում,- գրել է նա,- բայց իրադարձությունները կրկնվում են հաճախ: Հայ ժողովրդի բախտը 19-րդ դարում շատ բանով էր հիշեցնում 4-րդ դարը...»: ³¹³

Իսկ 19-րդ դարը շարունակվում էր եւ՝ 20-րդ դարի սկզբին, եւ՝ Սեւակի ապրած ժամանակաշրջանում: Ազգի երկփեղկվածությունը եւ բնաջնջվելու վտանգի ահագնությունը չէր վերացել: Եվ Սեւակը տեսնում է, որ Կոմիտասը «ճամփորդ է, մի ճամփորդ մշտնջենական, որ եկել է դարերից ու դեպի դարեր է գնում»: ³¹⁴

Սեւակի ընտրած պատմակենսագրական սկզբունքը արդարացրել է իրեն: Կոմիտասի գործի յուրաքանչյուր էջ՝ պայմանավորված երկրի ճակատագրով, ղողանջից

Ղողանջ բացահայտված է գեղարվեստական չկրկնվող հնարանքներով եւ ջերմությամբ: «Ղողանջ ընդհատված» գլխում կրկին իր Գուսանին եւ խաղերին վերադարձած Կոմիտասն է, որ այս անգամ էլ երագում է շունչ տալ «Անուշ»-ի նոր մասերին, Իր Վարդանի գոռ բասերին», որոնց հիմքն ու հենքը դարձյալ հայրենիքի հանդեպ սերն է, նրա ազատության աննինջ երազը.

*Չնչուններից պիտի կերտեր մի հուշարձան,
Որ հավասար պիտի լիներ
Իր վեհությամբ Սասնա սարին.
Պիտի երգով ողորմի տար
Բաղդասարին, Սանասարին
Ու նզովեր Մսրա չարին,
Չորովելով Դավիթ տղան
Պիտի մենակ՝
Անեզ - անլուծ՝
Գեղջուկի տեղ գութան քաշեր,
Չետո՝ զորքին հանգիստ թողած,
Մսրա տիրոջ սիրտը խաշեր: ³¹⁵*

Այս առումով էլ Կոմիտասը դառնում է հայոց ոգու թրթիռն ու ղողանջը: Ժողովրդի մաքառումների եւ կրած տառապանքի ֆոնի վրա նա ներկայացվում է որպես հայոց ծանր բախտի խորհրդանշան, բնավորության իր ամենամարդկային գծերով մնալով միշտ ինքը: Տագնապի, Նախճիրի, Աքսորի եւ դրանց հաջորդող ղողանջներում Կոմիտասի վիշտը ահագնանում է այնքան, որ նա ավերվող Չայրենիքի հանդեպ դառնում է տառապող ծնող եւ ողբում նրա ցավը, որ ծնունդն է Օսմանյան Թուրքիայում կատարված նախճիրի. «Չայկա-

կան հարցից թուրքիան ազատվեց», «Մի ողջ ժողովուրդ մեկ-մեկ» թրատվեց, «Մի ամբողջ անտառ արմատից» հատվեց: Սեւակը ցատունով նկարագրում է թուրք ջարդարարների նախադեպը չունեցող բարբարոսությունը: Ինչո՞վ է մեղավոր հայը: Նրա համա՞ր, որ

*Չէր գնում ապրի շեկ անապատում,
Չէր լքում բնիկ հայրական տունը,
Իր բազմադարյան շենն ու ավանը՝
Ամուր Կարինը, անառ Սասունը,
Իր ծոցվոր Սուշը, պտղած իր Վանը...: 316*

Հայը գուցե մեղավոր է նրա համար, որ ժայռից վանք է կերտում, քարից տաշում նուռ, «դարպասի աչքին հոնք-կամար քաշում... շինում ապարանք»: Այսպես բանաստեղծը թվարկելով հայ ժողովրդի բարեմասնությունները, Սիամանթոյի պես նզովում է աշխարհի «արդարությունը»: Աշխարհի աչքերի առջեւ, քարացած սրտերի դեմ «Մեր հողը, մեր հայրենին, մեր երկիրն ամայացավ», «Հինավուրց տոհմիկ մի ազգ Չմեռավ, այլ... մահացավ»:

Պոեմի հաջորդ մասերում Սեւակի հեղինակային խոսքը՝ ծուլված ժողովրդական երգերի հայրենապատկեր եւ ժողովրդախոս դիպուկ իմաստություններին, միահյուսվում է Կոմիտասի վշտին, դառնում անմոռանալի աղոթք. «Աշխարհում ով մոռանա՝ Ջուխտ աչքով թող քոռանա»:

Պ.Սեւակը հայկական ժողովրդական երգերը հավաքում է ի մի, հասցնում պապեճական կալ, իրիկնամուտի իմաստությամբ մաղում, ընտրում հայրենիքի ու ժողովրդի պատմական ճակատագիրը, ոգորումները,

հոգեկան մղումներն ու ակնկալությունները բացահայտող ոսկեղենիկ տողերը, ձուլում իր խոսքի հզոր շառաչին եւ այդ ամենով օժում Կոմիտասի կատարած գործի վեհությունը եւ կրկին ընդգծում նրա կորստի ահավորությունը: «Ղողանջ աքսորի» գլխում եւ հետագա բաժիններում հնչում են հայկական ժողովրդական երգերից ընտրած «Էս ինչ քյաֆուր դարի հասանք», «Չինար ես կռանալ մի», «Մեր դռներն հեռանալ մի» եւ այլ բնութագրական տողեր, այնուհետեւ մատնանշվում են «Ծիրանի ծառ», «Մուկաց Սիրգա», «Հորովել», «Լուսնակն անուշ», «Կալի երգ» եւ հայոց կյանքը բնորոշող այլ երգահոլուներ: Սեւակը ինչի մասին խորհում է, խոսքի ճամփան որտեղ էլ որոնում է, զալիս է հանգրվանում հայրենի լեռնալանջերին, նրանց ծերպերին, Հայոց դաշտերում, ձորերում, այն վայրերում, որտեղ ծիրկաթինվել են մեր նախնիների ոտնահետքերն ու երազները: Այդ ամենի կորստի ահից է, որ խելագարվում է պոեմի հերոսը, խենթանում նրա հեղինակը, ցնցվում ընթերցողը, որովհետեւ բոլոր կորուստներն ունեն իրենց անուններն ու հասցեները, որոնք ընդհանրության մեջ դառնում են հոգու խճանկարից հյուսված կորուսյալ հայրենիք: «Ղողանջ Սթագնումի» գլուխը սկզբից մինչեւ վերջ մեր ազգային ողբերգության պատճառների թվարկումից բարձրանում-դառնում է հավերժախոս ցավ-երգ: Կոմիտասի ականջներում անվերջ հնչում է Սիամանթոյի ձայնը, Վարուժանի կանչը, նրա սարսռացող մտապատկերներում հրեշտակի քնքշությամբ թեւաբախում են Կարինը, Մուշը, Վանը, ամբողջ «Հայաստան կոչված անհայ» աշխարհը, որտեղից դեպի երկինք են առաքվում «Այս ի՞նչ պատահեց» հարցը:

Հայոց լեռնաշխարհում «երկնային մանանան փոխվեց
Երկրային ահեղ մի պատուհասով...»:

*Հին Ծովասարի քարերի վրա
Գառնարած Դավթի երկաթ տրեխի թողած հետքերում,
Ինչպես խաղալիք - փոքրիկ գուբի մեջ,
Անձրեւաջուրն է քմծիծաղ տալիս,
Պաղ կիսալուսնի ներում ակնարկող բառերի վրա...
Սասնա վիպական Մարութա վանքում
Ուխտավորի տեղ բուեր են տնքում՝
Այս փուլչ աշխարհի բանը խորհելով...: 317*

Ըստ Սեւակի, այս ողբերգությունն սկսվել է այն պահից, երբ օսմանցին եկավ եւ Բյուրակն անունը կոչեց Բինգյոլ, Եփրատը՝ Մուրադ... Այս ամենից հետո էլ պիտի գերեն Արարատը եւ դնեն Երեւանի դեմ: Սեւակը այս ամենով հաստատում է ժողովրդական այն իմաստությունը, որ մոր կորստից որբանում է զավակը, իսկ հայրենիքի կորստից՝ մայրը, մի ամբողջ ժողովուրդ: Դա է Կոմիտաս-Սեւակի վիշտը, Կոմիտաս-հայության ողբերգությունը: Հայոց կորստի ցավն այնքան մեծ է, որ Սեւակը մերթ Ֆրիկի ու մերթ էլ Դուրյանի պես կասկածում է Աստծո արդարության վրա: Դիմելով իր հերոսին, բանաստեղծը մատնացույց է անում աստվածաշնչով հաստատված հայոց Արարատը, որ պատանդվեց Մեծ եղեռնից հետո: Կորստին կորուստ գումարվեց, ցավին՝ ցավ, կարոտին՝ կարոտ: Ազգային հոգեբանության խոր զգացողությամբ Սեւակը ողբում է համահայկական այդ վիշտը: Եվ խեղճ Վարդապետը այս դեպքում բախտավոր է, քանզի ականատեսը չդարձավ այն երեւույթի, երբ բարձունքներ սիրող կորովի հայ երիտասարդները

ստիպված Մասիսի դիմաց գնացք են նստում, որպեսզի նվաճեն Կազբեկի կամ Էլբրուսի բարձունքները.

*Մինչդեռ Մասիսի լանջը կուսական
Մատներ է տենչում՝
Հայի տա՛ք մատներ,
Որ հավեն իրեն,
Իրեն գուրգուրեն,
Իրեն ունենա՛ն... : 318*

Ցավը եռապատկվում է, որ աշխարհում դեռ կան հայեր, «Որ հավատում են գոյության աստծո» այն դեպքում, երբ «Աստծուն ժխտում է Արարատն անգամ՝ Աստվածաշնչի սրբազան լեռը՝ Բախտով իր դժխեն...»: Սա միայն ցավի ընդգծում չէ, այլ հայրենիքը վերամիավորելու, հայոց լեռնաշխարհը գերությունից ազատելու, պատվով ապրելու բաղձանք: Սեւակի մոտ կորուստների ընդգծումը ոգեկոչումի արտահայտությունն է: Գերյալ Արարատի դեմդիմաց մեր աչքերը դարձել են հայրենաքաղց, մեր վերքերը չեն փակվում.

*Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի,
Քան թե կսկիծը որդեկորույս մոր:
Իսկ եթե դա էլ քիչ են համարո՞ւմ
Եվ սպանվածի դիակը դիտմամբ
Տնկում են թշվառ մոր աչքի առջել՝
- Ո՛չ թե մի շաբաթ,
Այլ ձի՛զ տարիներ... : 319*

Այս հոգեխարտիչ ծաղրուծանակը հայ ժողովրդին ծանոթ է դարերից: Պարսկական բռնապետ-դահիճները

այդպես են մորթագերծ արել մեր հայրենասեր թագավորներին ու հերոսներին, խրտվիլակ շինել ու բռնի դրել «Մորթագերծվածին պաշտողի առաջ»: «Արարատն այդպես - դրել են ահա Երեւանի դեմ...»:

Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիո» պոեմում անձնավորվում է Եդեսիան եւ որդեկորույս սգվոր մոր նման նստում ավերակների վրա եւ փետտում վարսերը, մոխիր ցանում գլխին, ողբում աղետը: Եդեսիան ներկայանում է որպես եղերամայր: «Անլռելի զանգակատուն» պոեմում սկզբից մինչեւ վերջ եղերահայր է Սեւակը, նա Կոմիտասի անունից ողբում է կորուսյալ հայրենիքի, կործանված ժողովրդի համար: Իմաստալից է Սեւակի ողբը: Այն Հայոց շերտավորված կենսափիլիսոփայության, ծիածանված հոգեաշխարհի, ապրեցնող խոհերի ու երազների արտահայտություն է: «Ղողանջ ցնորման» գլխում բանաստեղծը պատկերում է Կոմիտասի ցնորվելու պահը: Կոմիտասները հայրենիքի հանդեպ մեծ պարտքի զգացում ունեն, որ հաճախ մնում է անկատար: Թունանյանը կասեր.

*Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի,
Խափան, խոպան ու անպրտող, անցավ առանց արդյունքի,
Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ այս հողին...
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին...³²⁰*

Հավանաբար նույն զգացումն է ունեցել Սեւակը:

Հայոց բազմադարյան երգաշարերի, բանաստեղծական կուտակումների մեջ չկա ազգային կորուստներից ծնված մի այնպիսի եղերերգություն, ինչպիսին «Անլռելի զանգակատուն» պոեմն է: Այս երեւույթը Սեւակի կողմից հայոց եղերերգության ամբողջական յուրա-

ցունների հետ կապե՞լ, թե՞ ունկնդրելու բացառիկ շնորհքի, աստվածատուր շռայլ հոգո՞ւ, թե՞ ցավի ընդունարան սրտի հետ: Դժվար է ասել: Բայց որ Կոմիտասի կորստյան սուգը պոեմում վերածվում է երկնային հաջողությամբ մազապուրծ հայության ցաված սիրո արտահայտության՝ իր մեծ գավակի հանդեպ, դա ամեն ինչից վեր է: Կոմիտասի ողբերգությունը սգացին «Ով մազապուրծ էր մահից», «Ով առուփախով, գաղթով էր փրկվել», «Ինչ եկեղեցի, որ չէր ավերվել», «Եվ ամեն տաճար, որ ժամերգվում էր դեռ հայ աշխարհում»: Այսպես, ամանց սուգը ծավալվում է մինչեւ այն ժամը, երբ հնչում է Վերածննդի ղողանջը, երբ Կոմիտասի ազգը «հանկարծ - մեկեն Վերստացավ նոր մի հավատ... Մի նոր կյանքի հույսով զինվեց»: Եվ հայն ապրեց: Պոեմի «Ահագնացող արծազանք» մասում Սեւակը քայլ առ քայլ ներկայացնում է «Պատմության մութ առեղծված» հանդիսացող հայ ժողովրդի վերածնունդը իր փոքրիկ հողակտորի վրա, «Աշխարհասփյուռ մազապուրծ հայերի» կարոտը հայրենիքի հանդեպ, Կոմիտասի աճյունի վերադարձը, մեր ամենամեծ այդ գոհի հուղարկավորությունը: Հուղարկավորները լուկ մարդիկ չէին. «Հայաստան լեռներն էին հուղարկավոր եւ գերեվար լեռները մեր՝ Կարսից-Չեյթուն...»:

Պ.Սեւակը չէր կարող չընդունել Խորհրդային Հայաստանի իրողությունը: Կոմիտասի վերադարձած աճյունի վրա քարացել էին «Հայ պետական դրոշները», սգում էր «մի ամբողջ մայրաքաղաք, մայրաքաղաք, ո՛չ գաղութ», պատվո պահակ են կանգնում «Հայոց պետեր, Վարպետներ, Հայ աշխարհի մեծերն ամեն», Կոմիտաս ծնած եւ հիմա նրա գավակը դարձած ժողովուրդը:

Պ.Սեւակը չէր կարող երախտագիտության զգացումով չտեսնել Խորհրդային Հայաստանի նշանակությունը հայ ժողովրդի հետագա պահանջատիրական զգացումների գումարման եւ կորուսյալ հայերնիքի ազատագրման ճանապարհին: Սեւակը այդ միտումով էլ Կոմիտասի աճյունի մոտ պատվո պահակ է կանգնեցնում Մասիսը, Սիփանը, Արագածը...

Այդ միտումով էլ Սեւակը Կոմիտասին անվանում է «Ամենայն Հայոց երգի վեհափառ», «Երգի Մեսրոպ Մաշտոց»:

1969 թ. հայ ժողովուրդը նշեց Մեծն Կոմիտասի ծննդյան 100-ամյակը: Մինչեւ այդ լույս էր տեսել «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» գիրքը: Այդ առիթով Պ.Սեւակը գրել է «Դիմանկարի ամբողջացման համար» հոդվածը, որը տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրի 1961 թ. թիվ 12-ում: Կոմիտասի 100-ամյա հոբելյանի տոնակատարության օրերին հոդվածի առանձին մասերը, որոշ ավելացումներով ու փոփոխություններով, «Կոմիտասն այսօր», «Դիմանկարի փոխարեն» վերնագրերով տպագրվել են «Հայրենիքի ձայն»-ում (1969 թ. նոյեմբերի 21) եւ «Գրական թերթ»-ում (1969, 11 նոյեմբերի): Ինչպես տեսնում ենք, Պ. Սեւակը միշտ զրուցել է Կոմիտասի հետ, ուղեկցել նրան: Եվ Կոմիտասի նշանակությունը Հայաստան աշխարհի ներկայի եւ գալիքի համար Սեւակը իր ընդհանրացնող հոդվածում մեջբերել է Տիգրան Կամսարականի խոսքը՝ ուղղված Կոմիտասին, 1911 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում տված մի համերգի առիթով. «Անցյալ գիշեր... երգելով ու բարբառելով, զվարճանալով, երբեմն ալ միշտ հանկուցանելով՝ Հայաստան ուխտագնացության

տարաք զմեզ, կամ՝ լավ եւս է ըսել՝ քիչ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերուս. մենք կկարծեինք, թե հայ կրոնավորը, որ էջմիածնեն կուգա, մյուռոն միայն կբերե, դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը, ո՞վ ըսավ, թե լեռները չեն քալեր... »: ³²¹

Պ.Սեւակը Կոմիտասի կերպարի մեջ խտացրել է առաջին հերթին Հայաստանը հային վերադարձնելու իր որդիական երազանքը, որը իրական Կոմիտասի արյան կանչն էր, երգի ուժը, հավերժանալու գաղտնիքը, հայոց փորձության եւ ակնկալվող փրկության առաւելատչյան: Հայրենիքի ազատության թեման լայնորեն արժարժված է նաեւ «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմում:

Հայտնի է, որ խորհրդային հենց առաջին տարիներից սկսած արգելվում էր հիշել Հայոց մեծ եղեռնը: Խորհրդային պետության վերին ատյանները պատրաստ էին նույնիսկ մեղադրելու հայ ժողովրդին՝ քավության նոխազ ընտրելով Հայ հեղափոխական դաշնակցությունը: Հայ ժողովուրդը զրկված էր իր ցավի ու կորստի մասին խոսելու իրավունքից:

Պ. Սեւակը խորապես հասկանում էր, որ ժողովրդի հարատեւումը անխզելիորեն կապված է հայրենիքի ազատության եւ անկախության, դարավոր ավանդույթների պահպանման հետ: Բայց ի՞նչ էր կատարվում: «Լենինյան եղբայրության եւ հավասարության» քարոզի պատրվակով վերանում էր ազգի դիմագիծն ապահովող ամեն մի ծես ու տոն, հավատ եւ անգամ լեզու: Փոխարենը առաջ էր քաշվում պրոլետարական ինտերնացիոնալիզմի եւ սոցիալիստական հայրենասիրության մի այնպիսի գաղափարախոսություն, որի պատ-

ճառով դիմագրկվում էր ժողովուրդը, երկիրը վերածվում գաղութի:

387 թ. կիսվել էր Հայոց սրբազան երկիրը պարսկական եւ բյուզանդական բռնապետությունների միջև: Իսկ 1920 թվականին նոյեմբերի 29-ից հետո քառավեց Հայաստանը: Ազգային խորհրդանիշ հանդիսացող Արարատի հետ Արեւմտյան Հայաստանը գերվեց օսմանյան թուրքերի կողմից, բուլշեւիկների աչքերի առջև ու ծրագրված թուլյտվությամբ Արցախն ու Նախիջեւանն էլ նետվեցին նորաթուխ Ադրբեջանի երախը: Հայ արվեստագետը, գիտնականը, մտավորականը երեւանից միայն Մոսկվայի եւ Բաքվի թուլյտվությամբ կարող էին այցելել Նախիջեւան կամ Արցախ, իրենց ժողովրդի հետ կիսվելու, հաղորդակցվելու.

Մեր հողի վրա,

Մեր երկնքի տակ

Մենք դարձել էինք օտարի գաղութ,

Նույնիսկ մեր հորը երկրպագելու

Եվ կամ թե որդուն պագելու համար

Այլ արքունիքից պիտի խնդրեինք մի թուլյտվություն

Որ եթե հասներ`

Պարտավոր էինք համարել շնորհ

Եվ շնորհակալ մնալ հավիտյան: ³²²

«Եվ այր մի` Մաշտոց անուն» պոեմը միագիծ ու միապլան երկ չէ: Ճիշտ է, այն նվիրված է մեր առաջին ուսուցչին, ուր ընդգծված է նրա հանդեպ եղած հայմարդու երախտիքը, սակայն ընդհանրության մեջ պոեմը առաջին հերթին հայրենիքի ճակատագրի հանդեպ եղած մտորումների եւ տագնապների բանաստեղծա-

կան կտակ է՝ ուղղված ներկա եւ գալիք սերունդներին: Սեւակ-բանաստեղծի խիղճը հազար թելերով կապված է Հայոց աշխարհի հետ: Պոեմում Սաշտոց-ժողովուրդ-հայրենիք հասկացությունները միաձույլ են: Սաշտոցը ծնվեց իր ժողովրդի կորստյան ցավից, հայրենիքը կորցնելու վտանգից, գործեց մի այնպիսի ժամանակահատվածում, երբ.

*Ձոռված արջառի տաքուկ սրտի պես
Մեր հողն էր կիսված
Ու բռնի քաշված
Երկու շիկացած ու սուրբ շամփուրի,
Որոնցից մեկը պարսիկն էր բռնել կրակի վրա,
Մյուսը բռնել էր մոմերի վրա նենգ բյուզանդացին: 323*

Պ.Սեւակի մտահոգության առարկան հայոց ավերված երկիրն է, եւ երազում է, որ հայրենի երկրի անվանիները Արտավազդի պես «մռռային նորեն». «Ավերակացըս ո՞ւմ թագավորեն»: Բանաստեղծը դարերի փորձից ծնված փիլիսոփայությունը հնչեցնում է որպես խորհուրդ. «Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց: Բայց... երբ քաջերը լինում էին՝ զենքը չէր լինում, չէր լինում եւ ասպարեզը».

*Կար միայն պարհիսպ,
Որ տարածվում էր աշխարհից-աշխարհ,
Եվ կային նաեւ ազնիվ ճակատներ,
Որոնցով երբեք պարհիսպ չես քանդի: 324*

Պ.Սեւակը հաստատում է, որ զորությամբ ու բազկով Հայաստանը չէր կարող վերականգնել իր միասնու-

թյունը, օտար լեզուների դեմ անդադար, ճիգ ու ջանքով անհնար է մաքառել, երբ այդ օտարախոս լեզուները պարտադրվում են պաշտոնական վերելներից: Այս հարցին եւս պիտի պատասխան տրվեր: Սեւակը Մաշտոցի գյուտը համարում է հայոց լեզվի պահպանման միակ բանալին, իսկ լեզուն բզկտված ժողովրդի հարատւման ամենահզոր գործոնն է...

Մ.Մաշտոցը հայ լեզուն մարտադաշտ հանեց եւ 1600 տարի շարունակ ցավերի, տառապանքների, կորուստների միջով ապրեցրեց սերունդներին, ապահովեց նրանց օջախների հարատւումը:

Պ.Սեւակի տաղանդը հրաշքներ է գործում հայ ժողովրդի ետմեսրոպյան դարաշրջանների արհավիրքներն ու ակնկալութիւնները ցույց տալու համար: Սակայն Սեւակի նպատակը միայն այդ չէր: Հանճարեղ բանաստեղծը Մաշտոցի կերպարի միջոցով արտահայտեց իր հոգեկան երկպառակութիւնը: Նա այստեղ իսկ եւ իսկ Չարենցի ժառանգորդն է, որը Հայաստանի խորհրդայնացումից հետո երկվութիւն ապրելով՝ մերթ ժշում էր, դիմում էր Հայաստանին եւ իր սրտի արյամբ գրում. «Հազար ու մի վերք ես տեսել՝ էլի կտեսնես» կամ «էլի՛ ես որք ու արնավառ՝ իմ Հայաստան յա՛րն եմ սիրում», մերթ որպէս չարիքների փոքրագույնը, որպէս պատասխան՝ հայտարարում.

*Ինչպէս աշխարհի ծորտերին բոլոր
Այնպէս էլ գերի աշխարհին իմ հին -*

*Երկինք մի մաքուր- արեւ մի բոսոր
Լոկ հոկտեմբերյան հողմերը տվին: 325*

Այդ «մաքուր երկնքի» եւ «բոսոր արեւի տակ տեսնելով բուշեւիկյան կամայականությունների հետեւանքով ցաք ու ցրիվ եղող ժողովրդի անելանելի վիճակն ու երկրից ժողովրդի հեռանալը: Նա 1933-ին կյանքը վտանգելով պատգամեց. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

«Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմի գաղափարը բազմաշերտ է... Բայց հիմնական նպատակաուղղվածությունը երկու պլանով է զարգանում՝ մեկ բանաստեղծական հյուսվածքով Մ. Մաշտոցի մեծության, նրա տեղի ու դերի բացահայտման ճանապարհով, մեկ էլ նորօրյա վտանգների ահագնացումն ընդգծելու ուղիով: Առաջին պլանում Մաշտոցի գեղարվեստական կերպարի ստեղծումն է, երկրորդ պլանում՝ այն որպես միջոց օգտագործելը, որովհետեւ հայրենասեր բանաստեղծը աչքերը չէր կարող փակել քառատված երկրի ճակատագրի եւ հարյուր-հազարավոր հայ երեխաների ուժացման սարսափելի երեւույթի հանդեպ: Միայն երեւանում հայ երեխաների կեսից ավելին արդեն հաճախում էր օտարալեզու դպրոց: Պոեմի արդիական հնչեղությունը ճիշտ է նկատել գրականագետը. «Մաշտոցի գյուտը դիտելով 4-րդ դարի քաղաքական ու գաղափարական բախումների, քրիստոնեության ու հեթանոսության ընդհարման, ազգային ինքնության ու անկախության գոյամարտի եւ այլ բարդ առնչակցությունների մեջ, Պ. Սեւակը դրան տվել է ինքնատիպ մեկնաբանություն: Անկարելին կարելի դարձնելու մաշտոցյան սխրագործության գնահատությունն ու ինքնատիպ մեկնաբանությունը բանաստեղծը սակայն, ինքնանպատակ չի արել, այլ... որոշակի նպատակամիտումով:

Սա ներկայի մեջ որոնել է ոչ միայն անցյալի բացատրություն... այլև անցյալի մեջ որոնել է պատասխաններ ժողովրդին հուզող կենսական հարցերի»: ³²⁶ Իսկ այդ հարցերը բազմաթիվ էին եւ բազմապիսի: Ահա դրանք. «Չունեինք արդեն պետ ու պետություն...», «Հետո մենք պիտի գաղութ դառնայինք՝ գաղութի մարզպան-կառավարիչով».

*Հետո մենք պիտի մեր շենից զրկված՝
Քաղաք շինեինք ավերն ուրիշի:
Հետո մենք պիտի մեր հերկից զրկված՝
Հերկեինք օտար կորդ ու առապար:
Հետո մենք պիտի մեր ոտնահետքի
Դրոշմը դարձած յուրովի դրոշ՝
Մխեինք բոլոր լայնքերի վրա
Երկիր կոչեցյալ այն կլոր գնդի,
Որտեղ պիտի որ ամեն ճանապարհ
Վերստին բերի իր տեղը նախկին,
Բայց մեզ... հայրենիք չբերեց երբեք... : 327*

«Հայրենիք» հասկացությունը սեւակյան մտասելեռումներում ժողովրդին հուզող ու ապրեցնող խնդիրների եւ պահանջների հանրագումար է, ժողովրդի դիմագիծը պահպանող մի համայնապատկեր: Սեւակը անցյալի կորուստների մեջ լսում է ոչ միայն մեր պապերի ցավի ճիչը, այլև բերում է իր տազնապի սարսուռը, ինչպես Մեծն Խորենացին էր ահազանգել. «Ողբամ զքեզ, հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հուսիսականաց վեհագոյն. զի բարձավ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղա-

փառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն: ³³⁰

Հայրենյաց գահի փլվածքից բուսած Մաշտոցը սխրագործեց, «Որ այդ փլվածքը ողջանա նորից»: Եվ «Այն, ինչ որ անել չկարողացան» Արշակը, Վաղարշակը, Մուշեղը, Մուշեն, արեց Մաշտոցը՝ «անգեն ու անգորք».

*Մեզանից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղյալ պետություն,
Թագավորություն մի հզորագոր՝
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժան,
Մեր անկիսելի՛.
Երբե՛ք չխլվող հոգիների մեջ: ³³¹*

Դժվար չէ նկատել, որ բանաստեղծը առանձնահատուկ կսկիծով է հիշեցնում «Մեզանից խլված հողերի... բաժան-բաժան հայրենու» կարտուն ու նրմուռը: Ի՞նչ է տալիս սրտին հովություն բերող հոգեւոր Հայաստանի պատկերը: Ազգային հպարտության զգացո՞ւմ: Ո՛չ: Աշխարհով մեկ սփռված հայերի բնակեցո՞ւմ կորուսյալ հողերի վրա: Ո՛չ: Բայց մի՞թե այս ցավի գիտակցումը չէ, որ դարեր շարունակ մխացել է հայ բանաստեղծի սրտում, մի՞թե այս ցավից չծնվեց Վ.Տերյանի «Հոգեւոր Հայաստան» գաղափարը: Հայաստանի պատկերի փայփայումը հոգու աշխարհում ապրելու ծարավը կբորբոքի, կորցրածը վերագտնելու երազանք կծնի, բայց շոշափելի հող հայրենին չի վերադարձնի երբեք:

Հարցերի այս բարդույթի զգացումը հայ բանաստեղծը ենթաբնագրային արծարծումներով միայն կարող էր ի ցույց դնել աշխարհին: Բացառություն չէր Պ.Սեւակը: Հենց դրանով պետք է բացատրել նրա պատմական պոեմների երեւան գալը. այդ շարքի մեջ նաեւ «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»-ը:

Հպարտանալ կարելի է Սեւակի ընդգծած մեր հոգեւոր թագավորության գահին բարձրացող թագավորների շարքի համար, «մեր կործանված հին հավատի տեղ նոր հավատով զինելու համար, ամենից կարելորդ՝ օտար հրի ճարակի դիմաց մեր ինքնությունը կոփելու եւ կռելու համար»: Այն բանի համար, որ Մաշտոցը

Դրեց խարդախված կաթի դեմ՝ մերան

Բանակի դեմ՝ թեւ,

Թվի դեմ՝ թռիչք,

Արյան դեմ՝ թանաք,

Սրի դեմ՝ գրիչ,

Եվ դարանի դեմ՝ մատենադարան... : 332

Սեւակը Նարեկացու ստեղծագործական խառնվածքին հատուկ բորբոքումով շիկացնում է հոգու եւ բաղձանքի կրակը, թվում է, թե խոսքն ասել-պոծել է, բայց գնալով այդ կրակը ավելի է շիկանում: Նա կրկին հիշեցնում է, որ Մաշտոցի անվամբ մնացինք «միշտ զինավառված», թեկուզ «ցիրուցան արված»: Սեւակը նշում է դաժան ժամանակներին հաղթելու, հառնելու, կանգուն մնալու, վերաթեւելու անհրաժեշտությունը: Դեռ ավելին՝ բանաստեղծը հրապարակախոսական շեշտերով հպարտանում է, «որ հիմա արդեն մեզ չեն պեղում,

այլ Մենք ենք պեղում, մենք ենք հիշում, մենք ենք վկայում»... Եւ ... Հպարտ ենք այն արբանյակով, որի ծիրի մեջ կա եւ մեր վազքը հպարտ՝ նաեւ այն նոր հրթիռով, որի թռի մեջ կա նաեւ մեր հրաշքը:

Բայց բավարարվածության զգացում չկա պոեմի ավարտի մեջ, չկա, քանզի հայրենիքի ճակատագիրը սպասում է իր արդարացի լուծմանը, մաշտոցյան գործի լիարժեք գիտակցմանը, որ սեւակյան դասերի դասն է.

Մաշտոց...

Այսինքն՝ այր մի, որ

եկավ ապացուցելու,

Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,

Թե հրաշք չկա՛,

Այլ կա լոկ կա-րի՛ք:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց

Եվ կոչ է անում ապացուցելու՛,

Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,

Ուր վերջանում է ամե՛ն մի հնար... : 333

1966 թ. Հայաստանի գրողների 5-րդ համագումարում ունեցած իր ելույթը Պ.Սեւակը կոչել է «Ազգային սնապարծություն եւ ազգային արժանապատվություն»: Այն տպագրեց «Գրական թերթ»-ը նույն թվականի դեկտեմբերի 16-ի համարում եւ ապա այդտեղից արտատպվեցին սփյուռքահայ մի շարք թերթերում: Իր ելույթում Սեւակն ընդգծել է. «Մենք պարտավոր ենք շահել շախմատային այն խաղը, որ սկսել ենք ոչ թե մենք, այլ Մեսրոպ Մաշտոցը...»: ³³⁴ Սա հիշեցումն է

Մաշտոցի կատարած գործի՝ հայրենիքին, ժողովրդին, մշակույթին ծառայելու նշանաբանով:

Հայ ժողովրդի մեծագույն ողբերգության՝ 1915 թ. եղեռնի 50-ամյակը նոր էր լրացել, երբ Պ.Սեւակը դարերին հանձնեց «Եռաձայն պատարագ» պոեմը: Դա բանաստեղծի ցաված սրտի պահանջն էր, հայ ժողովրդի չմոռացվող ողբերգության հրամայականը, կորուսյալ հայրենիքի կանչը: Ինչպես հատուկ էր Սեւակին, նա այս անգամ եւս ուսումնասիրել էր եղեռնի վերաբերյալ եղած համարյա ամբողջ գրականությունը՝ լինեն վկայություններ թե մեկնություններ, հուշեր թե գեղարվեստական երկեր: Ա.Արիստակեսյանի վկայությամբ Սեւակի պոեմի ազդակը կապված է Շաֆիաուզեմի (Շվեյցարիա) տաճարի փոկրիկ զանգի պատմության եւ նրա վրա փորագրված՝ անհայտ հեղինակի լատինական ասույթի (Կոչեմ ասրողաց, ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր) հետ: ³³⁵ Հայտնի է նաեւ, որ Պ.Սեւակից առաջ զանգի պատկերը որպես ժողովրդի եւ անհատի տագնապը, ընդվզումն ու հույսը ազդարարող խորհրդանիշ արծարծվել են առանձին գրողների կողմից: Մեր գրականության մեջ հայտնի են նաեւ ազգային խորհրդանիշների դիմառնումը: Եվ քանի որ «Եռաձայն պատարագի» թեմատիկ-գաղափարական հիմքը հայրենիքի կորստի եւ նրա գտնումի պրոբլեմն է, ուստի դիմառնության ոլորտի մեջ են առնվում «Երկնքից առկախ մի լեռնակղզի՝ Հայաստան աշխարհ»-ը եւ «Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ կենտրոնում» հողին կործված Սիսն ու Մասիսը՝ անունն Արարատ: Եվ ամբողջ պոեմում բանաստեղծի փոխարեն, նրա անունից խոսում են

սարերը հայոց. «Եվ ես չեմ, ոչ էլ դուք եք դողանջում. Սիսն ու Մասիսն են դողանջում անվերջ-անդադար-անդուլ»:

Այդ նրանց ձայնն է, որ հնչում է լուկ երկու բառով՝ «Ողբամ մեռելոց»: Պոեմի սկզբից Սեւակը մասիսների լեզվով ներկայացնում է հայ ժողովրդի անցած հազարամյա ճանապարհը՝ վկայակոչելով «սուրբ խաչքարերը», թեկուզեւ թշնամիների «անսուրբ ձեռքով» ջարդոտված: Անձնավորված- Արարատի սուզը հետմահու խաչքարեր դարձած նախնիների համար չէ, այլ նրանց համար.

*Ուլքեր չունեցան շիրմաքար-շիրիմ,
Ինչպես չունեցան պատանք-պատարագ,
...Սեկ չեին նրանք
Եւ ոչ էլ երկու:
Նրանք՝ բյուր-բյուրոց,
Նրանք՝ ազգ-ազինք...
...Չմեռան նրանք, այլ սպանվեցին՝
Լեզեոն առ լեզեոն,
Փաղանգ առ փաղանգ: 336*

Արարատը՝ ասել է թե հայրենիքը որդեկորույս մոր
Գնան հիշում է բուրբ անմեղ զոհերին եւ եղերամոր կս-
կիծով հիշում նրանց, ուլքեր «անթաղ են... միլիոն են...
կապտած, անհող, խեղդված», որոնց շուրջ.

*Ժուխն էր համբարձվում՝ Հիսուսի նման,
Կրակն էր մնում՝ Մուհամմեդի պես...: 337*

Այսպես, հիշվում է «անիրակված-տարաբախտ երկ-
րի» ամենամեծ ողբերգությունը եւ հնչեցվում «բեկա-

«Մեն շանթեր» խոստովանությունը: Սեւակը մասիսների շրթերով հնչեցնում է իր ցասումն ու բողոքը աշխարհի դեմ, որի աչքերի առջև եւ իր իսկ թողտվությամբ գորշ գայլերը խժռեցին մի ողջ ժողովուրդ, հրդեհեցին մի հին ավանդական երկիր, ուր.

*...մահը՝ մեծըն մաթեմատիկոս,
Գորշ գայլի արնոտ ժանիք-գրիչով
գրանցման մատյան-թահրիկ դեֆտերում
համարակալեց մի ամբողջ երկիր՝
իր քաղաքներով, շեներով ամեն
եւ մինչեւ անգամ վերջի՛ն քողտիկով:
Չամարակալեց բովանդակ մի ազգ՝
ծեր ու մանուկով,
կին ու երիկով*

եւ մինչեւ անգամ խելառո՛վ վերջին: 338

Աստվածաշնչյան Արարատի շուրջ «եղավ...կյանքի ճոխ տոնավաճառ», կազմակերպվեց բարբարոսության մեծագին աճուրդը, եւ եղավ... մի նոր «երկրորդ ջրհեղեղ»: Այս երկրորդ ջրհեղեղը առաջին հերթին իր տակ առավ այն երկիրը, որ փրկել էր Նոյին, իր տակ առավ այն ժողովրդին, որ 15 դար աստծուն հայցում էր ազատել իրեն, բայց Տերը ազատ է արձակում ոսխիսն, որը եւ կազմակերպում է առաջին ազգասպանությունը մարդկության պատմության ընթացքում: Սեւակը խնդիրներ է քննում՝ կապված երկրի եւ ժողովրդի ճակատագրի հետ: Ինչու՞ տեղի ունեցավ այդ նախճիրը, որովհետեւ երկրում կային «շնից շատ իշխան, բայց իշխանություն չի եղել երբեք», երկիրը դարեր շարունակ տրվել էր ալան-թալանի, որովհետեւ գահին բազմել էր

թուրք-սելջուկը, որի «գայիսոնն ու մականը միշտ ոսկորն է միայն՝ մարդու ող կամ կող, ազդրը կամ սրունք»։ Ահա, այդ անհրավժած երկրում հայը դարձել էր խեղճ ուղտ, որ

*Իր կուզ-սապատով դիզում էր նա գանձ,
կերակրում էր մի ողջ պետություն,
իսկ ինքը սնվում միայն տատասկով,
բայց եւ որոճում... միրաժներ լուսե,
ոսկեղեն տեսիլք։³³⁹*

Պ.Սեւակը Արարատի շրթերով միայն ողբ չի հնչեցնում, այլ պատմության ընթացքում մեր իսկ բացթողումներն է ընդգծում. «Երբ ուղտն, ասում են, կտոռչ է ուզում, նա կորցնում է ականջները»։ Խեղճությունը երկիր չի փրկում, ազգ չի պահում։ Խեղճությունը կորցնում է ամեն ինչ.

*Եվ գոց աչքերով ես ասում եմ ձեզ.
-Եթե Փոքր ու Մեծ Մասիսները դուք գանգ չեք համարում,
գեթ համարեցեք բրածոյացած վիթխարի սապատ՝
այն, ինչ որ մնաց Ուխտավոր Ուղտից...³⁴⁰*

Արարատի վիշտն ու զարմանքը մեծ է։ Այս ի՞նչ տոհմածառ է, «որ ցցվեց իբրեւ կանաչ-կենդանի մի ուղեփակոց, չորս չար խորշակի քառուղում բանուկ»։ Սակայն հարցումն ու զարմանքը Արարատին չեն բավարարում։ Նա այս անգամ դիմում է աշխարհին՝ պնդելով. «Այս ազգը որի՞ց եւ ինչո՞վ է վատ, որ դատապարտվեց այսչափ վատության», «Եվ ո՞վ, եւ ինչու՞ սրանց «հայ» կոչեց, որ հանգավորի միմիայն «վայ»-ով»։ Այդ ինչպե՞ս եւ ի՞նչ օրենքով անօրեն խլվեցին հայի զենքերն

ու ձեռքերը: Եվ լեռնակղզին «թատրոնից բացի» դարձավ մի կրկես, ուր կրակի հետ բազմաթիվ դերեր խաղաց եւ ջուրը, այն էլ Եփրատի, Տիգրիսի ջուրը:

Սրտաճնլիկ պատկերների միջոցով Սեւակը Հայաստան աշխարհի դժոխքը ավելի դաժան է համարում, քան աստվածաշնչյան դժոխքը: Սանձարձակ թշնամին վարվում է անգթորեն, որովհետեւ աշխարհում պակասում էին գուրք եւ սերը: Մի ժողովուրդ, որ նշխարքի տեսքով պաշտում էր հացը, այժմ մեռնում էր առանց նշխարի: Մի ժողովուրդ, որ իր գոյությամբ միշտ հանապազօրյա հաց էր եղել մի հսկայական կայսրության համար, հիմա մնում էր հանապազօրյա հացի կարոտով... Մի ժամանակ, որ Մարդն էր հաց ուտում, հիմա արդեն... հացն էր մարդ ուտում:

Աշխարհում շարունակվող չարության եւ չարի պատճառը Սեւակը համարում է Մարդու բացակայությունը, մարդ չկար, մարդը կորել է... Եվ նա կորել էր ոչ միայն Գորշ գայլ պաշտող միլիոնների մեջ, այլեւ ամենուր.

*աշխարհում ամբողջ
Մարդն զբաղված էր մարդասպանությամբ,
իսկ սրանք՝ նաեւ... ազգասպանությամբ՝
աչքերի առջեւ բոլոր ազգերի...³⁴¹*

Սեւակը ազգի գոյատեւման, հայրենիքի պաշտպանության հույսը համարում է սեփական ուժերին ապավինելը: Աշխարհի ջոջերին հավատ ընծայողը միամիտ դոնկիխոտություն է, նա չի կարող խլացնել այն ձայնը, որ ազդարարում է. «Հայոց հարց չկա, քանզի հայ չկա»... Պայքարն է փրկության ելքը: Եվ հայության բեկորները ամեն դեպքում երեւում էին Արարատին:

Նրանք մարտնչում էին «Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա, Գարահիսարի կիսավեր բերդում...»: Միաժամանակ Արարատի ցասմամբ Սեւակը խարազանում է նրանց, «ովքեր լաչակ կապեցին իրենց գլխներին եւ խառնվեցին թափորին կանանց, որպեսզի գուցե հաջողեն փրկվել»: Դա անպատվություն է: Ջենքով պատիվն ու հայրենին փրկելու երազով էլ Արարատը հնչեցնում է «կոչեմ ապրողաց» պատգամը:

Վերաքննելով աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների շարանը, պոեմում մերժվում է անտարբերությունը ժողովուրդների հանդեպ կատարված ոճրագործությունների հանդեպ՝ որտեղ էլ այն տեղի ունենա: Հայ ժողովրդի ապրածը աշխարհը վերապրեց, որովհետեւ անտարբերության թույլտվությամբ Հիտլերը ծնվեց Վիլհելմից, Հեբբելսը՝ Թալեաթից, չեթեմ իրեն անվանեց էսէս, էնիչերին՝ գեստապո, հազգ դին ասվածը՝ նորակոչ նացիզմ, ցեղը՝ ռասսա, թուրքը՝ ֆաշիստ: Եվ.

*-Հին Չանգըրբից իր սկիզբն առավ Բուխենվալդը նոր,
Օսվենցիմների սկիզբը դրվեց Դեր-Չորում միայն,
Մայդանեկները Ջիարեթներում հիմնադրվեցին,
Դախաուները՝ էնկյուրիներում, Ռաքքաում, Բաբում... 342*

Արարատը կոչ է անում սեղմելուց առաջ ստուգել նրանց ձեռքերը, որոնց խնամված եղունգների տակ տասնամյակներ էլ հետո պահպանվել է «լերդացած արյուն»: Մասիսները հուշում են հայ սերունդներին չնոռանալ պատմությունը, որովհետք մենք մեր ցավերի ծանրությունն ունենք, հատուցման արդար պահանջը, եւ հանգիստ չենք առնի, մինչեւ որ հասցե ունեցող թշնամին չկրի իր պատիժը «առավել արդար եւ

ծանր ավելի, քան Նյուրենբերգի ահեղ ատյանում...»:

Մասիսները կոչում են ապրողաց եւ միաժամանակ երագում, որ աշխարհում հսկա կայսրությունները լինեն եւ՛ հզոր, ճարպիկ, եւ՛ ճարտար, նաեւ արդար.

*Ժխտեցե՛ք, խնդրեմ, ի սե՛ր աստրծու...
Ժխտու՛մ է մեզ պետք, ո՛չ արդարացում,
Եթե դրանից դյուրին բան չկա
Եւ արդարանալ կարող է նույնիսկ Գորշ Գայլը պաշտողը,
որ դար ու դարեր ուսուցանում է գայլաձագերին.
-«Արդարանալու մի ճար ճարեք
եւ... գորգ գողացեք մեջեթից թեկուզ...»:* 343

Սեւակյան իմաստությունը ոչ թե «մեր մեջ», այլ «մեր շուրջ» նայելու խորհուրդ է, այսուհետեւ պետք է բղավել «մեր շուրջ», որպեսզի հիշենք, թե ինչպես մեր երազանքը դարեր շարունակ լցրինք լեցունի մեջ, բայց չլցվեց, մեր լեցունը մեզնից դատարկվեց, եւ մեզնով օտարի դատարկը լցվեց.

*Մեր... հայրենի՛քը մեզնից դատարկվեց:
Բայց... ո՛չ մի վայրկյան, ո՛չ մի ակնթարթ
Մենք չենք դատարկվել մեր հայրենիքից:
Մե՛նք սպանվեցինք մեր հայրենիքում,
Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց,
Ո՛չ, ապրում է նա կրկնակի՛ կյանքով,
Իսկ ով չսպանվեց, փրկվեց պատահմամբ,
Նա աքսորված է իր հայրենիքից... 344*

«Եռաձայն պատարագ» պոեմի վերջին մասերում ամեն մի տող հնչում է որպես ժողովրդի կենսափորձից

Թճված խորհուրդ, որպես հայրենիքը վերագտնելու, վերածնելու դեղատոմս: Ամենազորեղ բանը աշխարհում համարվում է հիշողությունը, մենք կորած-կորցրած գավառներ, շենքեր ու քաղաքներ ունենք, չպետք է մոռանալ: Գերված ու գրաված հայրենիքը խնդրելով չեն վերադարձնում:

*...Տասնհինգ դար է, ինչ լսում ենք այն,
որ անգիր գիտի նաեւ աշխարհը.*

«Խնդրեցեք՝ տացի՛»:

Ո՛չ, սուտ է, Յիսու՛ս,

ո՛չ, կարելի է շարունակ փնտրել,

փնտրել մեզ նման,

բայց եւ չգտնել,

եվ կարելի է չգտնել ոչինչ,

նաեւ ամե՛ն ինչ չգտնել կյանքում,

նաեւ ամե՛ն ինչ, բայց ոչ... հայրենիք: 345

Բայց կատարվել է ծանր հանցագործությունը: Պապենական այն տունը, ուր մենք չենք ապրում, լցվել է «չարիք ու շեյթանով», եւ այն տունը, ուր ապրում ենք մենք, «Դարձել է արդեն սրբության խորան, մասունքի ծաղկոց, տապկոց նշխարի»: Վերածննդի եւ վերապրումի դասերը անհրաժեշտ են հային միշտ եւ ամենուրեք, որովհետեւ, ինչպես Արարատն է դիմում իր գավակներին. «Ձեր արյան ծովը ավելի է մեծ Մեծ կամ Խաղաղից... Վրեժի ծովը՝ ավելի ահեղ, քան Սառուցյալը»: Ինչ վերաբերում է ծովին Արցունքի, ապա Նահապետ Մասիսը խորհուրդ է տալիս՝ արցունքի փոխարեն անհրաժեշտ են ավյուն, քրտինք, նույնիսկ բնության վրիպակների սրբագրում, առապարները հացի ու մրգի

շտեմարանի վերածում: Լացի ու կոծի տարաբախտ վկա Արարատը իրեն համարում է ժողովրդի տառապանքի կործված անոթ, զարհուրանքի անտակ պահեստ, միաժամանակ ցասումի, ծառացումի, ընդվզումի խորհրդանիշ վկան: Բայց, ավաղ, Արարատը իրեն համարում է նաեւ իր ժողովրդի անկատար երազանքը, իդձը՝ երկկատար: Եվ նա դիմելով ժողովրդին հնչեցնում է իր նոր պատվիրանը՝ ժողովվելու, հիշելով, որ այս կոտորածը, նախճիր-եղեռնը երեկ չի սկսվել, այն 5000 տարվա, 500 տարվա եւ 50 տարվա պատմություն ունի: Եվ ահավորն այն է, որ չի ավարտվում.

*Կարմիր էր, հիմա ճերմակ է դարձել,
եւ հիմա արդեն նա գանգ չի հատում,
այլ գրավում է,
չի կտրում ձեռքեր, այլ վարձում ընդմիշտ,
չի առեւանգում, այլ հնայում է,
չի հեղում արյուն, այլ ծախ է առնում
եւ, միացնելով երակ-երակի,
իր ամենակուլ արյանն է խառնում... 346*

Ճերմակ սպանդից վախենալ է պետք, ավելի, քան կարմիր եղեռնից, ուստի պետք է կրկնել ինչպես երդումի խոսքեր. «Բռնի ձուլվելիս թունավորում են ձուլողին՝ արյամբ, ինքնին ձուլվելիս թունավորվում են իրենք՝ արյունով»:

«Եռաձայն պատարագ» պոեմի սեւակյան պատգամները հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, հարատեւելու, հայրենիքը պաշտպանելու իմաստուն խորհուրդներ են:

Վ.ԴԱՎԹՅԱՆԻ ստեղծագործության զգալի մասը կազմում են նրա պոեմներն ու ասքերը: Այս առումով ետչարենցյան շրջանի էպիկական շունչ ունեցող պոետների շարքում նա առաջիններից մեկն է: Հայ ժողովրդի պատմության հնօրյա ե՛լ հերոսական, ե՛լ ողբերգական դրվագները միշտ եղել են Դավթյանի տեսադաշտում: Ժամանակին գրականագետ Ս.Սողոմոնյանը նկատել է. «Հայ ժողովրդի պատմությանը դիմելով, Վ.Դավթյանը երգում է հատկապես նրա հերոսական կողմը, նրա պայքարը օտար զավթիչների դեմ, նրա ազատասիրությունն ու անկախության ձգտումը, որը համարում է նրա կենսունակության հիմնական աղբյուրներից մեկը»: ³⁰¹ Պատմության գեղարվեստական ընկալման եւ դավթյանական եզրերը գնահատելու համար հետաքրքիր է նրա «Հայերգություն» ասքը: Բանաստեղծը դեպի վեր տանող իր ճանապարհին հանդիպում է շեկ քարափների, պղնձե վիհերի, նրա տապը, տոթը, համը, հոտը ըմբռնելուն որպես «դեղին մորմոք... ու ցավ դեղին»: Եվ մտատանջող մի հարց փոթորկում է երգչի անհանգիստ խոհերը.

*Հայաստան աշխարհ,
Ինչպե՞ս ապրեցիր
Այդ մի բուռ ջրով ու մի լուրթ ծաղկով:
Եվ ինչպե՞ս եղավ,
Որ գլխիդ վրա խշխշում է դեռ
Կանաչից, աստղից ու քամուց հյուսված
Մենավոր բարդին... : ³⁴⁷*

(«Հայերգություն»):

Բանաստեղծը մենավոր բարդու շուքի տակ, փրկված Հայոց հողակտորին հենվելով՝ հոգու լուսարձակով զննում է հնամյա մեր ժողովրդի անցյալը, ձգտում գտնել մեր դժվար երթի գաղտնիքներն ու գույները, բացահայտել հոգեբանական այն առանձնահատկությունները, որ բնութագրական են մեր ազգին երեկ եւ այսօր: Ժողովրդի գոյատեւման խորին խորհրդի եւ ճակատագրի արժարժումներով Դավթյանը բերում է իր խոսքը՝ ասքային հնչերանգներով:

Պատմական եղելությունների, դեպքերի եւ դեմքերի նկարագրությունը բանաստեղծի երկերում ծփանք է տալիս առասպելական-հեքիաթային-ասքային պատումների շրջանակներում: Իսկ դա բխում է մեր ժողովրդի դժվարին ճանապարհի, նրա կրած տառապանքների եւ դրանց հաղթահարման գիտակցումից: Բանաստեղծն ինքն է բնութագրում երկիրը Հայոց. «Ճակատագիր ես, Որ մրուրի մեջ թաթախված շանթն է շառաչով գրել եվ սրբագրել տառապանքն ինքը...»:

Վ.Դավթյանը բացում է Հայաստանի մագաղաթյա մատյանը, այնտեղ տեսնում «Բիրտ խռովքների ու քնքշանքների Անվերջանալի ալեբախություն», «Բարբարոս բարբառով ու զտված հնչյուն»-ով կարդում աստղալույսերի եւ արշալույսների ներշնչումները: Նա գալիս է այն եզրակացության, որ մայր երկիրը իր կարծրությունը դրել է հայոց ցեղի երազներում եւ արարել աղբյուրների լույսը: Ահա այդ մաքառման եւ գոյատեւման ավիշն էլ հենց թելադրում է բանաստեղծին նարեկացիական հակադիր բնութագրումներով ստեղծել ժողովրդի անցած ճանապարհի պատկերը.

Դու՝ խոնարհ աղոթք,
Բայց նաեւ՝ արծվի ահեղ կռնչում,
Դու՝ վանքի զանգակ ու ռազմի դու փող,
Դու՝ վիհի անկում, գազաթի ներքող,
Դու՝ ներման թավիշ, վրեժի եղջուր,
Դու՝ խաղաղ կրակ, մոլեգնած դու ջուր,
Դու՝ սիրո ծաղիկ ու վայրի տատասկ,
Դու՝ լեղի որոմ, կաթնահամ դու հասկ,
Նարեկա վանքի քարե հրթիռով
Առ Աստված մի տող դու Նարեկացի
Եվ աստծո կոչը զանգատով խրվող
Ահեղ ցասունը ֆրիկյան կայծի...
Եվ դու տառապանք,
Որ ծանր է որպես կռանը՝ սալին... : 348

(«Հայերգություն»):

Երկիրը բանաստեղծին կտակել է «ցավը պարտության»: Բայց դարերի բարձունքից քնարական հերոսը դարձյալ «Թաքուն զանգատով ու... զոհությամբ» հայրենիքը համարում է իր բախտը, հավատը, գոյությունը:

Հայաստան աշխարհը Վ.Դավթյանի երգերում Արա Գեղեցիկ է եւ հրեղեն սյուն: Հրեղեն ու ոգեղեն պատկերներում բանաստեղծը ներկայացնում է հայրենիքի եւ ժողովրդի կենսագրությունը՝ ժամանակակից երեւույթների հոլովումով ու լուծումով: Դավթյանը իր ասքերի հենքերը գտնում է մեր պատմիչների երկերում եւ ժողովրդական ավանդություններում: Արա Գեղեցիկը, Արտավազը, Մ.Մաշտոցը, Վարդան Ջորավարը, Գրիգոր Նարեկացին եւ այլ հսկաներ բանաստեղծի ստեղծած պատկերասրահում լեզու առած խոսում եւ

խորհուրդներ են տալիս նոր սերունդներին: Դավթյանի պատումներում անմիջականությունն ու ոգեղեն շունչը ուղղակի տաք արյուն են հաղորդում Հայրենիք-պատկերին: Հայաստանը անձնավորվում է անցյալի եւ ներկայի զգացողությամբ: Շրջանցելով պատմության փաստագրական սահմանների գայթակղությունը՝ բանաստեղծը ավելի շատ բացահայտում է մեր ժողովրդի ազգային հոգեբանությունը, բնավորության գծերը: Հայրենասիրության զգացումը նա միազիժ չի ներկայացնում, ստեղծում է հերոսի ամբողջական կերպարը: Նրա հերոսները ազատասեր են, անզիջում, վեհանձն, պատվասեր, հայրենիքի եւ ժողովրդի սիրո եւ ընտանիքի անձնուրաց պաշտպաններ: Ձեռք մեկնելով մեր առասպելներին, Վ.Դավթյանը դարերի խորքից փնջում է ժողովրդի հայրենասիրական զգացումները՝ պատմական անձնավորությունների միջոցով: Այդ առումով հատկանշական է «Ո՛ր, տայր ինձ գծուխ ծխանի» ասքը: Օգտվելով էպոսային պատումների ժանրային եւ լեզվական միջոցներից, Դավթյանը Արտավազդի կերպարին մի կողմից հաղորդել է հողեղեն գեղեցկություն, մյուս կողմից՝ ոգեղենի աստվածային երանգներ: Պատմությունից առնելով Արտավազդ Երկրորդի գործունեության, հռոմեական զավթիչների դեմ մղած նրա պայքարի, նենգ Անտոնիոսի կողմից գերեվարվելու փաստերը, երգիչն ընդգծել է հայրենական ծխանի արարչական ուժը՝ որպես հարատեւման աղբյուր: Գերված Արտավազդ թագավորի անկոտրում կամքը, Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի առջեւ չխոնարհվելու նրա վճռականությունը, ազգային հպարտության զգացումը բանաստեղծը արժարծել է կոլորիտային եւ պատկե-

րային թարմ հնարանքներով: Ասքի մեջ Արտավազըն ինքը՝ Անտոնիոսին որակում է որպես գող, չար, շողոքորթ, քծնող ավազակ: Արտավազը վերհիշում է, թե ինչպես Անտոնիոսը Հայաստան եկավ «եղբայրության երդմամբ, ընծաներով...», եւ ինքը որպես զինվոր ու մարդ՝ հավատաց նրան ու գնաց վրանը եւ առեւանգվեց: Արտավազը չի հաշտվում այն մտքի հետ, որ «նվաճված է... Հայաստանը»: Գերված Արտավազը թագավորը Նեղոսի ափին հիշում է ժողովրդական տոնախմբությունները, մտքի թելերով փարվում է Արարատին: Արտավազի արտաքին եւ ներքին հոգեկան գեղեցկությունների մեջ բանաստեղծը խտացրել է հայկական առասպելական դյուցազուններին: Նա չի խոնարհվում Կլեոպատրային, ինչպես Արան՝ Շամիրամին: Եվ յուրաքանչյուր անգամ Եգիպտոսի թագուհու՝ «Հռոմների ծախու հոմանուհու» կեղծ հորդորներին. «Կլեոպատրա, գեղեցկությունդ մարմնավոր Բազմապատկիր քո հոգեւոր գեղեցկությամբ Եվ տուր ինձ ծուխն իմ ծխանի...»:

Արտավազը պատրաստ է քայլել դեպի կառափնարան, բայց չխոնարհվել թշնամու առջեւ: Նրա հպարտության եւ վճռականության ավիշը հայրենի ոգուց է ակունքվում: Նրա կարոտի ծփանքներում նույն երազն է.

*Ո՛ տայր, ո՛ տայր ինձ ծխանիս ծուխը սուրբ
Ո՛ տայր առավոտը նավասարդյան,
Եղնիկների վարզը հայոց լեռներն ի վեր,
Ու եղջերվաց վարզը ձորերն ի վար
Ո՛ տայր, ո՛ տայր ինձ,*

Ո՛ տայր Արտաշատի ոսկեփոշի ծամփան,
Հնձանների բուրմունքն ու փշատի փոշին,
Ո՛ տայր թոնիրների բուրմունքը սուրբ,
Ո՛ տայր, ո՛ տայր... : 349

(«Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի»):

Տեղին է բերել գրականագետի կարծիքը այդ առիթով. «Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի...», - սա հայրենիքի կարոտի առաջին կանչն է, որ հետո դարեդար պիտի հնչեր մեր պատմության վրա» : 350

Չորրորդ դարի պատմական իրադարձությունների դավթյանական ընկալումները նոր, ավելի լայն ընդգրկումներով բացահայտվեցին «Ճերմակ ծիավորը» ասքում: Թեման առնելով Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից», Վ. Դավթյանը պատումային ինքնատիպ լուծումներով թարմացրեց վիպական դեպքերի զարգացումը՝ հաղորդելով դրանց արդիական հնչեղություն: Այս ասքը նույնպես մեր անցյալի հերոսական ավանդների հանդեպ բանաստեղծի ունեցած լայնախոհ հայացքի արդյունքն է: Խորապես հասկանալով չորրորդ դարի քաղաքական եւ բարոյական խնդիրները, չափածո խոսքի հնարավորությունների սահմաններում եւ՝ հենվելով Փ. Բուզանդի մեկնաբանության ընձեռած հնարավորության վրա, հեղինակը ներխուժում է Արշակ Երկրորդի, Շապուհ Արքայի, Վասակ Մամիկոնյանի եւ նրա որդու՝ Մուշեղի շուրջ ստեղծված ավանդապատումի մեջ, բացում պատմական ճշմարտությունը: Դավթյանը այդ հիմքից ելնելով ստեղծել է գեղարվեստական մի նոր իրականություն, մի նոր պատում՝ խորհրդավոր լուսաբանումներով: Բանաստեղծն

առաջին հերթին ընդգծում է հայ ժողովրդին հատուկ անձնուրաց հայրենասիրության եւ վեհանձնության գաղափարը: Ասքի սյուժետային հիմնական գիծը նա իր երկում զարգացնում է կերպարների հերոսական ճակատագրերի միջոցով: Ասքը սկսվում է գույժով. «Շապուհն է նորից Յայաստան սողում իբրեւ վիշապ օձ...»: Արեւելյան-պատկերային հյուսվածքի մեջ երեւում է Շապուհ արքայի «նժույզը բոց», «չէկ առյուծը... բոցին դրոշի», որ գալիս է ժանիքները մխրճելու Յայոց աշխարհի ողին ու կողին: Գոռոզ Շապուհի հուշխոհերում ներկայացվում են նրա գործած դաժանությունները Արշակ թագավորի, Վասակ Մամիկոնյանի, Փառանձենի, ամբողջությամբ Յայաստանի հանդեպ:

Պարսիկ բռնապետին հակադրվում է հայ ժողովրդի խղճի, ազնվության, վեհանձնության խտացում հանդիսացող Մուշեղ Մամիկոնյանը: Մուշեղի բնավորության այդ առիւթնող գծերը մեծապես առնչվում են հայրենիքի փրկության գաղափարին: Ասքի առաջին մասում հանդես եկող գոռոզ ու չար Շապուհին երկրորդ մասում հակադրվում է Մուշեղը: Շապուհի նժույզը՝ բոց, Մուշեղի նժույզը՝ կապույտի մեջ ցուլացող «սպիտակ կրակ» է: Կարմիրի եւ Սպիտակի այլաբերությամբ ընդգծվում են Մուշեղի վրիժառոթյունն ու վեհանձնությունը: Դավթյանը այդ զգացումները ազուցում է հայրենի երկրին, որը իր սուրբ հողի միասնության խորհրդանիշ է.

*Յայոց աշխարհի ձորերը բիրտ են ու վայրիվերո,
(Արարման պահին գլխապտույտ է ունեցել աստված),
Յայոց աշխարհի ձորերը սողում, դառնում են վիհեր,
Եվ վիհերն՝ անդունդ:*

Անդունդների մեջ
 Թնդյուն կա ու մութ,
 Անդունդների մեջ
 Հովազների պես որսին հետամուտ
 Գետեր կան ահեղ՝
 Փրփուրը կախված երախներն ի վար:
 Գետերն այդ ոխով թռչուն քարեքար
 Վեն են տապալում,
 Որձաքար հալում,
 Ծունկերն են ծալում
 Այրուծիերի... : 351

(«Ճերմակ ձիավորը»):

Եվ այն պահին, երբ «Շապուհի գործը Հայոց ձորերում ձգվել ընդերկար ու գալար-գալար առաջ» էր սողում, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի «մերկ սուրն է շողում, օծված աստղերի շողակաթ լույսով» եւ հնչում է փրկարար կոչը. «-Ի զե՛ն, հայորդիք, հանուն Վասակա, Ջարդենք այս անգամ մեջքը վիշապի»: Մուշեղ Մամիկոնյանին հուզում է Հայոց թագավորի եւ սպարապետի մահվան վրեժի հատուցումը, հայրենիքի պատվի փրկությունը: Դավթյանը իր այս կերպարին հաղորդում է մարդկային ամենավեհ ապրումները՝ երկու սուրբ զգացումների՝ հայրենասիրության եւ վեհանձնության համաձուլվածքով: Ջարդելով պարսկական հրոսակներից եւ փախուստի մատնելով Շապուհին, Մուշեղը ազատ է արձակում նրա սկյութուհի, ասորուհի, եթովպուհի, վրացուհի, հելլենուհի եւ այլ ազգի կանանց:

Մուշեղ Մամիկոնյանի այս արարքը տարեգրվում է հայոց մատյաններում, իսկ Շապուհ արքան հրաման է արձակում, «Որ իր ոսկեծույլ գինու գավաթին նկարեն

պատկերն սպարապետի, նկարեն ճերմակ նժույզի վրա...»: Սակայն պատումի այս ավարտով չի լուծվում Դավթյանի ասքի գաղափարը: Նա խորապես հասկացել է, որ Հայոց քաջն սպարապետի վեհանձն արարքը նպատակամղված է եղել մարդկային բնավորության մեղմացմանը, ժողովուրդների մտերմության հաստատմանը:

*Եվ խոսք են խոսում, թե ետ այնորիկ
Մեղմացավ բարքը գազան Շապուհի,
Ու մի սակավիկ
Շատացավ բարին աշխարհի վրա: 352*

Վ. Դավթյանի հայրենապատումի մեջ մի ամբողջական շարք են կազմում «Զվարթնոց», «Ասք Մաշտոցի մասին», «Կոնիտաս» պատմական պոեմ՝ ասքերը, «Ծիրանի ծառ» դրաման, Հայոց մեծ եղեռնի ողբերգությունը պատկերող «Ռեքվիեմը»: Բանաստեղծը նրանցում ստեղծել է հայրենասերների մնայուն կերպարներ, որոնք իրենց ժամանակաշրջանի խիղճն ու ձայնը լինելով, հանդես են գալիս որպես եկող սերունդների դաս ու օրինակ: Հայրենիքի, նրա ուժի եւ պատվի խորհրդանիշ Արարատը բոլոր դեպքերում պատկերվում է ոչ միայն որպես հայ ժողովրդի պատմական ընթացքը հիշապահող խորհրդանիշ, այլեւ սերունդների հոգեկան գեղեցկությունը սատարող նահապետ: Բանաստեղծն այդ մղումով արեգակի առաջին շողի ջերմությունը նվիրում է Ազատն Մասսի ծյունին եւ ապա՝ Արծվի թեւերին ու կոպին, որից հետո արծիվը պոկվում է տեղից ու սուրում Ազատ Մասիսն ի վեր: Արծվի թռիչքին հետեւում է

ճարտարապետ Հովնանը եւ գտնում Մասսի ու արծվի դաշնութիւնը.

*Եվ Հովնանի հանդէպ որո՞ւ է ելնում կարծես,
Քար է դրվում քարի,
Քար է դրվում քարի,*

*Եվ խարսխի վրա սյուն է դրվում միատող,
Եվ սյուների վրա արծիվները միտող
Վսեն զմբեթներն իրենց բաց թելերին առնում,
Սավառնում են,
Ելնում*

*Ու տանում են դեպի արեւածագ
Ու տանում են դեպի ոլորտն Աստծո
Ընթոստացումն հայոց
Ու համբարձումն հայոց... : 353*

(«Զվարթնոց»):

Զվարթնոցի ամեն մի քար բանաստեղծը բնութագրում է որպէս անանց հավատ, իսկ Զվարթնոցը՝ «Իբրեւ մի սրբատաշ, բյուրեղ Մասիս»։ Դավթյանի խոհերում ու մտապատկերներում Հայոց աշխարհի կոթողները ներկայանում են որպէս աստեղնամերձ լեռների շարունակություն, դառնում նահրյան խճանկարի անբաժանելի գույներ, ինչպէս բանաստեղծն է հաստատում. «Զվարթնոցն է կանգնել Մասսի դիմաց իբրեւ մի սրբատաշ, բյուրեղ Մասիս...»:

«Զվարթնոց» ասքում Դավթյանը հայրենասիրության գաղափարը առաջին հերթին մարմնավորում է հայ մարդու արարման խոնջանքի մեջ՝ որպէս վայելք, որպէս վսեն պարգեւ։ Հայ մարդու արարող մտքի թափը նախանձ է առաջացնում անգամ Հռոմի կայսեր սրտում:

Ասքի սյուժետային գլխավոր գիծը դրամատիկական լիցքեր է ձեռք բերում: Մի կողմից հայրենասեր Յովնանն է, մյուս կողմում՝ բյուզանդական Կոստանդինոս կայսրը՝ նենգությամբ ու չար նախանձով բռնկված: Յովնանը փայփայում է ազգային արժանապատվության զգացումը, որի կարծիքով Ջվարթնոցը ավելի շքեղ է, քան Սոֆիայի տաճարը: Դրամատիզմը նոր ընթացք է ստանում կայսեր խարդախության պատճառով: Նա որոճում է Յովնանին Կ.Պոլիս տեղափոխելու միտքը, որպեսզի նրա «Հանճարը Բյուզանդիոնում... առավել լս շողա»: Յովնանին ստիպում են գնալ Բյուզանդիա: Վ.Դավթյանը հայրենի երկրի հանդեպ եղած մարդկային կարոտի այրող կրակն է պատկերում հայ ճարտարապետի հոգում: Այդ կարոտը իմաստնացած խոհ է, գոյատեւման պատգամ:

*Յո՛ղը... Հայոց հողը... Ամբողջովին
Ոգի է նա, լույսով շաղված ածյուն,
Նա մայրական բուրմունք
Ու մանկության բուրմունք
Ու բուրմունք է հացի...
Նա տուն է ու կրակ,
Աղոթք է ու գինի,
Նա ծխանի ծուխ է բարձրագնա...
Յողը, Հայոց հողը, հայոց ոգին է նա: ³⁵⁴
 («Ջվարթնոց»):*

Վ.Դավթյանը այս ընդհանրացված իմաստությունը կրկին ու կրկին կապում է հայրենի խորհրդանիշ հանդիսացող լեռների, գետերի, աղբյուրների հետ: Յովնանի հոգու հետ խոսող հողը իր արտահայտությունն է

գտնում Արագածի, Կապույտ աղբյուրի, Մասիսի փոխաբերական իմաստավորումներով: Հովնանի վեհությունը երկնային պարզել է, այլ հայրենի լեռներից ժառանգած հոգեւոր սնունդ: Դավթյանի հերոսը ինքն է խոստովանում. «Եվ դու տվիր, Մասիս, ինձ վեհությունդ պարզ... Հայոց ոգու խորհուրդն անմեկնելի, Հայոց արնաքամվող, խաչվող, քամվող, գամվող, Հայոց մեռնող Սակայն հրաշքի պես հառնող Ոգու խորհուրդը պարզ»:

Դավթյանի բանաստեղծական ընդհանրացումների մեջ ժողովրդի կենսափիլիսոփայությունն է, հայոց ոգու անմահությունը: Հովնանը որպես հայ ժողովրդի արարող հանճարի մարմնացում, կրկնակի է գեղեցկանում հայրենիքի հանդեպ ունեցած կարոտի կանթեղով: Հենց այդ սերն է, որ նրան հեռու է պահում օտարին ծառայելու մտքից: Հովնանը այդ մասին չի խոսում: Ասքի վերջին պատկերներն են ընթերցողին հուշում եւ՝ Հովնանի ցավը, եւ՝ Հայոց աշխարհի դեմ շարունակվող ասպատակությունների գոյությունը.

*Շուրջը օտար դաշտեր, հողմ է ու ձյուն,
Օտար հողմը նրան բերանն առած,
Տանում է աշխարհով, ո՞ւր է տանում...
...Հողմի ոռնոցներում շունչն է մահի,
Իսկ ճանապարհն անվերջ ձգվում է դեռ
Ու գալարվում այրող ձյունափոշով:
Հետո հողմի ալիքն իբրեւ պատանք
Պարուրում է նրան ու հետքերը ջնջում:
Իսկ սանձակոծ հողմը դեռ վրնջում,
Ասպատակում է դեռ... : 355*

(«Զվարթնոց»):

Վ.Դավթյանի հայրենասիրական երկերի մեջ առանձնակի տեղ է գրավում «Ծիրանի ծառ» չափածո դրաման: Ծիրանի ճյուղակոտոր ծառը Հայոց աշխարհի, հայ ժողովրդի խորհրդանիշն է, որով ներկայացնում է միջնադարում տեղի ունեցած պատմական իրադարձությունները՝ կապված հատկապես Անիի ճակատագրի հետ: Քերովբեի, Խուշուշի, Արամանյակի, Աղամոսի, Սինավոնի, Վանահոր, Թուխժամի, հույն Սպայի կերպարների միջոցով Վ.Դավթյանը առաջ է քաշում հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի խնդիրը՝ ուշադրություն դարձնելով անցյալի պատմության հերոսական եւ ողբերգական էջերին: Պատմությունից հայտնի է, որ Անիի թագավոր Գագիկ 1-ինի մահից հետո գահակալական կռիվներ են ծագում նրա երկու որդիների միջեւ: Թագավորի ավագ որդին՝ Յովհաննես Սմբատը, ժառանգում է հոր գահը՝ երկրի մի մասը տրամադրելով կրտսեր եղբորը՝ Աշոտին: Երկիրը թուլանում է: Բյուզանդական կայսրությունը օգտվելով դրանից, թուլական Յովհաննես Սմբատի հետ կնքում է պայմանագիր, ըստ որի Սմբատի մահից հետո Անիի թագավորությունը պիտի անցնի բյուզանդական կայսրությանը: Այդ խայտառակ համաձայնագրին նպաստում են հայոց Պետրոս կաթողիկոսը եւ Վեստ Սարգիսը:

1930-ական թվականներին պատմական այս ցավալի փաստի հիման վրա Դ.Դեմիրճյանը գրեց «Երկիր հայրենի» պիեսը: Վ.Դավթյանի չափածո դրաման եւս վերաբերում է մեր պատմության այդ ողբերգական ժամանակաշրջանին: Յովհաննես Սմբատի մահից (1041 թ.) հետո, կյանքից հեռանում է նաեւ Աշոտը: Թագավորության դավաճան ուժերը՝ կաթողիկոս Պետրոսը

Եւ Վեստ Սարգիսը, աշխուժանում են: Ժողովուրդը չի հաշտվում երեւոյթի հետ: Սպարապետ Վահրամ Պահլավունին ղեկավարում է ժողովրդական ընթոստութիւնը: 16-ամյա թագավոր Գագիկ Երկրորդը՝ Աշոտի որդին, կազմակերպում է աննահանջ պայքարը եւ բյուզանդական, եւ սելջուկյան հրոսակների դեմ՝ միաժամանակ մարտնչելով կենտրոնախույս ուժերի դեմ: Դեմիրճյանը, ահա, շեշտը դրել է Գագիկ Երկրորդի իշխանութեան գլուխ անցնելու եւ նրա կազմակերպած պայքարի վրա: Ուրեմն՝ Դեմիրճյանին շարունակել է Վ.Դավթյանը: Եհշտ է, «Ծիրանի ծառ» դրամայում ուժեղ եւ սրընթաց բախումներ չկան, սակայն բանաստեղծին հաջողվել է պատկերել ժամանակաշրջանի մարդկանց հոգու խռովքն ու տագնապը: Հայրենիքի եւ ժողովրդի միասնութեան ուժի ընդգծմամբ բանաստեղծը արարում է գուսանի կերպարը, որ շարունակ մտորում է.

*Սուրբ արեւագալ, օգնական ինձ լեր,
Որ ես կարենամ ճշմարիտ խոսքով
Սեւ ողբը հյուսել Անի քաղաքի
Եվ գովքը հյուսել քաջ Պահլավունու... : 356
(«Ծիրանի ծառ»):*

Նկատելի է Վ.Դավթյանի մտահղացման երկպլան ընթացքը՝ պատկերել եւ Անի քաղաքի ողբերգական վիճակը, եւ միաժամանակ ներկայացնել ժողովրդի հերոսական պայքարը:

Դավթյանը չի սքողում Հայաստանի անմխիթար վիճակը՝ կապված Անին արժաթով ծախսելու հետ: Նա Անիի եւ Հիսուսի ճակատագիրը համարժեքում է: Ենթասյուժեի ձեւով բանաստեղծը գինետան աշխատակցուհի

Խուշուշի, առեւտրական Սիմավոնի, ալքիմիկ Աղամոսի, ինչպես նաեւ Թուխժամի փոխհարաբերությունների ֆոնի վրա բարձրացնում է Անիի թագավորության ճակատագրի առեղծվածային խնդիրը: Սյուժեի ծանրությունը կարգալուծված Աղամոսի ուսերին է: Նա տիրապետում է ժամանակի գիտության գաղտնիքներին, կարողանում է քիմիական ռեակցիաների օգնությամբ պղնձից ստանալ ոսկի, երագում է իր ստացած ոսկու միջոցով գումարել հայոց ցրիվ զորքը, զինել լեռնականների գնդերը եւ այդ հեղեղը բաց թողնել «Հռոմաց վրա»:

Ոսկով կխցկեն

Ես հռոմների կոկորդը ազահ

Եվ ոսկե շղթա կդնեն նրանց

Ջորավարների ազահ ձեռքերին,

Ետ կառնեն Անին, ետ կառնեն հողը... : 357

Վ. Դավթյանը դրամայում քայլ առ քայլ բացում է իր հերոսների հոգու դռները, բնութագրում նրանց՝ կոնկրետ արարքների միջոցով՝ ստեղծելով հայրենասիրական մի հիանալի պատում: Երկի վերջին մասերում բացում է Սիմավոնի դավաճանությունը: Նա Աղամոսի ոսկի ստանալու գաղտնիքը հայտնում է հռոմներին, Մոնմախոս կայսրը հրոսակների գունդ գումարելով՝ Իսիտաս զորավարի գլխավորությամբ ուղարկում է Հայաստան: Բոլոր փորձերը՝ Աղամոսին գերելու եւ Բյուզանդիա տանելու ուղղությամբ անցնում են ապարդյուն: Դրամայի վերջին գործողության մեջ հեղինակը անդրադառնում է Գագիկ արքայի Բյուզանդիոն գնալուն ու պատանդվելուն, ապա Պահլավունու գլխավո-

րությանը տեղի ունեցած հերոսական կռիվներին: Բյուզանդական սպան վերջին ճիգերն է գործադրում՝ Աղամոսին առեւանգելու: Աղամոսը իր գյուտը թշնամուն չհանձնելու նպատակով ժայռից իրեն նետում է անդունդը: Դրամայի ավարտի մեջ Դավթյանը ընդգծում է հայրենիքի ճակատագրի հանդեպ իր իդեալը: Պատանի Արամանյակի շուրթերով խարազանող խոսք է հնչեցվում դավաճանների դեմ.

*Չորեղբայր գուսան, ասա, վերջապես
Մեր հայոց ազգից դավաճանները
Ե՞րբ կվերանան: 358*

(«Ծիրանի ծառ»):

Ապա ներկայացվում է ծիրանի ծառը, որին փարվելով՝ Խուշուշը շշնջում է.

*Ծիրանի իմ ծառ,
Իմ Աղամոսս, ծարավ ես, ծարավ...
Ու ես սափորով միշտ ջուր կկրեմ
Մեր պաղ զետակից, որ զովություն տամ
Քարի մեջ խրված քո արմատներին...
Ծիրանի իմ ծառ, ծիրանի իմ ծառ,
Իմ Աղամոսս... : 359*

(«Ծիրանի ծառ»):

Վ. Դավթյանը Չայրենիքի պատվի, հարատեւման ընթացքը կապում է անձնուրաց հայրենասերների սխրանքների հետ: Ինչպես տեսնում ենք, այստեղ եւս խորհրդանիշ Ծիրանի ծառը եւ հերոս Աղամոսի պատկեր-գաղափարները միաձուլված են:

«Այս խաչքարը ես եմ» բանաստեղծության մեջ Վ. ԶԱԿՈՐՅԱՆՆ ունի այսպիսի տողեր.

*Մի փունջ խոտ պոկիր եւ վերցրու փոշին
ճաքած խաչքարից...
... եվ կտեսնես, որ բացվող գրերը
ճանապարհներ են,
հավերժ ուղեւոր՝
Մաշտոց ու Վարդան: 360*

Բանաստեղծական այս խորհուրդը ուղեկցել է նաեւ Վ. Զակոբյանին: Իր հողին ու ժողովրդին նվիրված բանաստեղծին չէին կարող չհուզել մեր պատմության դրամատիզմը, այդ պատմությունը կերտող մեծությունների ողբերգական ճակատագիրը: Այդ խորհուրդը բանաստեղծի բազմաթիվ երգերի մեջ է մտել որպես ուղեցի: Հայկական գույներով, բաբախումներով, հայկական ցավի ու հույսի շափաղումներով հագեցված նրա պատկերները վերջապես պետք է խմորվեին մեկ ընդհանրացնող հյուսվածքի մեջ: Այդպես էլ եղավ: «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» գործը ծնվեց ուղիղ ժամանակին: Այդ է վկայում նաեւ ինքը՝ բանաստեղծը: «Գրքերի աշխարհ» թերթի թղթակցին տված պատասխանում նա ընդգծել է. «Երկար տարիների լռությունից հետո Արցախ աշխարհում հնչեցին մեր արդեն գործող վանքերի ոգեկոչող զանգերը... Մեսրոպ Մաշտոցին ու Վարդան Մամիկոնյանին, իմ պոեմում, միասին եմ բերել Արցախ: Նրանք պետք է միշտ միասին լինեն: Դա է մեր ուժը...»:

Այդպիսին էր ժամանակի պահանջը, Մեսրոպն ու Վարդանը, դարձած ազատության կորով, իրենց ձայնը հնչեցրին նաեւ մեր նորօրյա պայքարում: Հայտնի է, որ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը լայնորեն նշվեց 1960-ական թթ. սկզբին: Գրվեցին բազմաթիվ գեղարվեստական երկեր, ուր Մաշտոցը փառաբանվում է որպես հայ գրերի ստեղծող, հայ դպրության հիմնադիր, առաջին ուսուցիչ, թարգմանիչ:

Պ.Սեւակը եւս իր մասնակցությունը բերեց այդ հայրենանվեր գործին: Նրա համար Մաշտոցը միաժամանակ վիթխարի քաղաքագետ է, «որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից եւ ոչ մեկը: ³⁶¹

Պ.Սեւակը, 60-ական թվականների պահանջներից ելնելով, իմաստավորեց Մաշտոցի կատարածը եւ դարերին հանձնեց իր անմահ «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը: Բանաստեղծական անզուգական տաղանդով Պ.Սեւակը մեր ժողովրդի դժվարին ու բարդ ճակատագրի հետ կապված շատ փակագծեր բացեց: Նա նաեւ իր ելույթում նշում է, որ «Զորությամբ ու բազկով Հայաստանը չէր կարող վերականգնել իր միասնությունը, ինչպես նաեւ պետական անկախությունը... Ծիգով ու ջանքով անկարելի է մաքառել օտար լեզուների դեմ, եթե դրանք կրում են պաշտոնական բնույթ» (Նույն տեղը): Հրաշք էր պետք, որ կործանումից փրկվեր հայ ժողովուրդը: Եվ ծնվեց հրաշքը՝ Մաշտոց անունով: Նա իր գրերի գյուտով հաստատեց ժողովրդի լինելու առեղծվածը, տվեց մի զենք, որի դեմ անգոր էին

ամենագոր զենքերը: Ապրեց ժողովուրդը եւ ամեն անգամ անցյալին անդրադառնալիս, Մաշտոցի գործի մեջ որոնեց ու գտավ իրեն հուզող կենսական հարցերի պատասխանները:

Այդպես եղավ եւ արցախյան շարժման հենց սկզբին: Վ.Հակոբյանը Պ.Սեւակի օրինակով դիմեց մեր ժողովրդի կյանքում ճակատագրական դեր խաղացած 5-րդ դարին: Վ.Հակոբյանը Պ.Սեւակից սովորելով հանդերձ, ստեղծել է մի ինքնատիպ պոեմ, որը յուրահատուկ է թե՛ թեմատիկ եւ թե՛ գեղարվեստական առանձնահատկությունների առումով:

Եթե Մ.Մաշտոցը մեր ընդհանուր ազգային ինքնության պահպանման եւ հարատեւման մարմնավորումն է, ապա նրա գործի նշանակությունը առավել է ընդգծվում Արցախ աշխարհի համար: Այդ փաստի գիտակցումով էլ Վ.Հակոբյանը հերոսներ է ընտրել Մաշտոցին ու Վարդանին: Բանաստեղծը նրանց կերպարները ներկայացրել է ժողովրդի ճակատագրին առնչված: Մաշտոցի եւ Վարդանի բնավորությունները բացահայտվել են պատմական դեպքերի եւ իրադարձությունների շղթայում:

Արցախում Մ.Մաշտոցի գործը իմաստավորելու համար Վ.Հակոբյանը հիմք է ընդունել պատմական այն ճշմարիտ փաստը, որ նա գրերի գյուտից հետո դպրոց է բացել նաեւ Արցախի Ամարաս վանքում: Բանաստեղծական սրտառուչ ու գունեղ հյուսվածքով Վ.Հակոբյանը պոեմի մուտքում ստեղծել է մի պատկեր, որտեղ ցույց է տրվում Արցախ աշխարհի հոգեպարար ցնծությունը Մեսրոպ մարգարեի գալուստի առթիվ:

Ու ճամփան դարձավ կենաց մայրուղի,
ու ճամփան դարձավ փանդիռ յոթնաղի,
եւ հոգերնձա
խոսքեր հնչեցին,
եւ ախորժալուր
մայրուղին իջավ
որպես թե Սինա լեռան փեշերից: 362

Բանաստեղծը պատկերում է Հայոց Արեւելից կողմանց աչքալուսանքի անկեղծ ու գիտակցված ծիածանունը: Մաշտոցի հետ «ասես երկնային օրհնաբանությամբ, լույսը ոստոստում է Սխտորաշենի դարավոր սուտու ճյուղերի վրա, եւ գարնան ավետիս է լսում Արցախ աշխարհը, որ Հայոց պատմության կնիքն ունի իր թեւերին: Իսկ սուսին այն ծառն է,

որ Տիգրան Մեծի զինվորաց ձեռքով
տնկվել է մի օր Վարանդա հովտում,
Մավաս մատուռի հայացքի ներքո՝
Ի սեր եւ նշան
հայոց արքայի
հաղթահանդեսի՝
հազարմեկերորդ...: 363

Դարեր են անցել: Սխտորաշենի սուսենին դարձել է հայոց պատմության զորավոր իրադարձությունների եւ սրբացած մեծությունների գործունեության ականատեսը: Արցախ աշխարհի խորհրդանիշ Սուսին պատկերվում է որպես թանկ ու հարազատ հուշերի կենդանի վկայություն: Այդ ծառի զորեղ փչակում անձրեւից ապաստանել են Մաշտոցն ու Վարդանը, նրա պարզ

շուք ու շվաքում Գրիգորիսն է իր սիրտը բացել Մաշտոցից առաջ: Մեսրոպից հետո արցախաբույր այդ ծառի շվաքում հանգրվանել են Խորենացին եւ Կաղանկատվացին, Գանձակեցին եւ Գոշը, Րաֆֆին ու Լեոն, ապա իմաստուն Իսահակյանը... բանաստեղծը հաստատում է, որ Արցախը հայոց շունչ ու սիրտ ունեցող սրբավայր է:

Հակոբյանը Մաշտոցին գնահատում է իբրեւ համաժողովրդական սիրո եւ ակնկալությունների մարմնացում: Շինականի ողջույնը, որ հնչում է «փրկեա մերոց» աղոթքով, ժողովրդի հավատի արտահայտությունն է: Շինականի ձայնից խայտում է հողը, սուրբ երանելու ոտքերի տակ որպես տեսիլք աղբյուր է բխում.

*Մարգարեն մի բուռ ջուր վերցրեց ակից,
պարզեց արեւին.*

*եւ ափի միջից արեգակն ելավ
եւ նախշուն ասքեր շաղեց դաշտերին,
եւ ափի միջից արեգակն ելավ
եւ նախշուն ոսկի շաղեց դաշտերին,
եւ ապա ձեռքը ճակատից տարավ,
ճակատի գիրը օծեց արեւով,
ու դա պատգամն էր «վերին» աստծո,*

Ու պատգամ էր դա՝ հղված արցախցուն: 364

«Փրկեա մերոց» աղոթքը, ուղղված Մաշտոցին, պոեմում ներկայացվում է որպես անցած ու գալիք արհավիրքներին դիմակայելու հավատ: Ժողովուրդը պետք է փրկվի «գորշ հորդանների անզուսպ հեղեղից», որ ոտնատակ է տալիս ոչ միայն ծլած արտը, հանգցնում վառած թոնիրը.

այլեւ ակունքն է քանդում քո լեզվի,
մայրենի խոսքիդ կրակը մարում,
մանկանց բերանից կես պատառի հետ
հայկյան՝ հոգու նշխարը խլում,
տաճարներիդ հետ՝
հոգուդ սրբազան աշխարհը փլում: 365

Ժողովուրդը հասկանում է, որ դրա «ելքը միայն գիրն է սրբազան»: Ահա ինչու Ամարասը ականջալուր սպասում է Մեսրոպի գալուն, հավատալով, որ հանձին մեծ ուսուցչի, փրկարար գրերը երկնքից իջնելու են որպես լույս:

Երկիրը կիսվել, հայտնվել էր երկու հզոր բռնապետությունների լծի տակ: Ցավը տանելի կլիներ, եթե ուժացման վտանգը չկախվեր ազգի գլխին: Ահա թե ինչու, գրերի գյուտից հետո, մեր առաջին ուսուցիչը ջանք ու եռանդ չի խնայում դպրոցներ բացելու ուղղությամբ, լավ հասկանալով, որ մայրենի լեզվի պահպանման եւ հայեցի դաստիարակության միակ միջոցը կրթօջախն է:

Ինչպես ամբողջ Հայաստանը, այնպես էլ նրա մի մասը կազմող Արցախի մարմնավոր եւ հոգեւոր տերերը հասկացել էին, որ օտարի լծի տակ, օտարալեզու դպրոցում կկորչեն ոչ միայն իրենք, այլեւ եկող սերունդները: Դրանով է պայմանավորված այն համաժողովրդական ուրախությունը, որ կապված է Արցախում Մաշտոցի ազգափրկիչ գործունեության հետ: Դա է խորհրդանշուն այն ռոմանտիկ պատկերը, ուր արտացոլվում է Ամարասի համապատկերը: Վանք մտնելուն պես Մաշտոցը գմբեթին նկատում է մի արծիվ, որ համարում է

«Արցախա սուրբ տան ոգին՝ հավքի կերպարանք առած» արծիվն էլ ասես Արցախա երկնքում ծաղկում էր փրկարար գրերը սուրբ: Այդ գրերը միաժամանակ մասնատված հայերին ի մի բերելու, նրանց միասնությունը ապահովելու ամենահզոր ուժն է: Այս գաղափարի պոետական մարմնավորում է այն հատվածը, որ վերաբերում է հայկական զինանշանի վրա պատկերված երկգլխանի արծվին: Մաշտոցը այդ պատկերի մեջ տեսնում էր երկրի երկատվածության խորհուրդը. արծվի մի գլուխը ընդդիմադիր հայացքով նայում է պարսկական կողմը, որտեղ քրմերի վառած ատրուշաններին հայ սրտի լեզվակն է այրվում, մյուսը՝ Բյուզանդիային, որտեղ «մեր հին ու անմաշ սրբությունների մոխիրն է միայն մատուցանվում մեզ»:

*Շատ էր անհրաժեշտ
անգամ եւ հաց ու ջրից առավել,
մեզ հայացքների միաբանություն...
...Այսինքն՝ պիտի մենք միաբանվենք
ժողովրդովի
մի բռունցք դառնանք մեր լերանց նման,
կանգնենք կորովի,
անպարտ, անսասան՝
հանդիման ամեն ուժացնողի
ու բռնակալի,
ու սատար լինենք աստծո բարուն: ³⁶⁶*

Մերոպ Մաշտոցը համոզված է, որ իր ստեղծած գրերը «Արցախա քարին արմատ կբերեն»:

որ հայից սերված ամեն մի ժառանգ
հայերեն սերտի
դասը՝ հայրենյաց համար մեռնելու...
...լինի վանական,
իշխան թե դպիր,
իր սերն ու սիրտը բացի հայերեն...
...ու հայ աստծուն աղոթք հղելիս,
հայը հայերեն իր ցավը պատմի...: 367

Ըստ Վ.Հակոբյանի Մաշտոցի գործը անկարելին կարելի դարձրեց: Բանաստեղծը Մաշտոցի գյուտի մեջ որոնել ու գտել է նաև մեր օրերին հուզող հիմնահարցը: Առաջին, որ «մայրենի գիրն է ու լեզուն, ուր հայրենիքը կանգուն է հավերժ ու մեր հոգու պես վեհ ու աննվաճ»: Երկրորդ, մեսրոպատառով գրված մատյանները արցախյան հողի հայաշունչ ոգին են, վկայությունները՝ ուղղված գալիքին... Ուստի «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» պոեմում բանաստեղծը մեր առաջին մեծ ուսուցչին ներկայացնում է գործունեության լայն կողմերով:

Սովորական վանքը դարձնելով դպրատուն, Մաշտոցը շրջում է Ամարասուն, մտնում է աղքատիկ հյուղակները: Այս անսպասելի այցից առաջին հերթին իր հոգու խանդաղատանքն է զգում ռամիկ Մանասը: Նա ուրախությամբ իր մանչուկին՝ Նարեկին տալիս է կրթարան: Մանասի եւ նրա որդու՝ Նարեկի կերպարներով բանաստեղծը ընդգծում է այն գաղափարը, որ հողի հետ կապված հայ մարդը իր մեջ կրում է ժողովրդի հոգու ամբողջական գեղեցկությունն ու բարոյական վեհությունը.

-Մի կենսահաստատ, օրհնած ոգի կա
այս մանչի ներսում,
ազգօգուտ մի հուր,
որ հետո պիտի մեծանա-ծավալվի,
գրեք անունը
սովորող մանկանց առաջին կարգում: 368

Ու մանչի շրթերին ծիածանվում են հայոց գրերը, որոնց «ծայնակցում է աշխարհն Արցախա»։ Մաշտոցի ժողովրդասիրությունը բացահայտված է նաեւ դարբին Առաքելի հետ հանդիպման տեսարանում։ Դարբինը կենսափորձի իմաստությամբ խոսք է բացում հայ ժողովրդի ծանր ճակատագրի մասին, հնարավոր չէ, արդյոք, որ մեծ ուսուցիչը կանխի անարդարությունը.

Չի՞ լինի, արդյոք,
ի սեր հավատի,
քիչ փառավորես ու կարգավորես
այս գիրը՝ գրված հայոց ճակատին...
...Մինչեւ ե՞րբ պիտի հոժարվենք պարսկին՝
մտքով չքոտի,
ու նա ճուղուպուր կոտրի մեր գլխին...: 369

Զրույցին մասնակցում է նաեւ Վարդան Մամիկոնյանը։ Նա եղել է շեներում, տեսել է առյուծակորով ուստրերի, պերճ ու նազանի դուստրերի։ Նա Արցախա ճակատագիրն ու ապագան կապում է նրանց հետ։ Վարդան գորավարի խորհուրդ-խոսքի մեջ հնչում է գրի ու սրի միասնության կոչը.

Մեր սուրբ դպրահոր արարած գրով,
մեր դարբինների կռած սրերով

*պիտի նորոգենք
ու նորագրենք,
արդարագրենք
գիրը մեր ազնիվ ճակատին դաջված...: 370*

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» պոեմի գլխավոր գիծը զենքով եւ գրով ժողովրդի անմահության ու կենսունակության գաղափարի ընդգծումն է: Այդ միտումով է նա ստեղծել պոեմի «Այբուբենը՝ սրի վրա» ծավալուն մասը: Համոզիչ են Մաշտոցի եւ Վարդանի միասնական գործունեության պատկերները: Վարդան Մամիկոնյանը եղե՞լ է, արդյոք, Արցախում: Դա կարելու չէ: Կարելուն այն է, որ Մաշտոցն ու Վարդանը ապրել են միեւնոյն դարաշրջանում եւ նրանց անձնուրաց կյանքն ու փառավոր գործը ուղղված է եղել ժողովրդի հավերժության ապահովմանը: Պոեմում բանաստեղծը հավատարիմ է մնացել հինգերորդ դարի ոգուն՝ գրի եւ թրի համագործակցության ոգուն: Վկան՝ 405 թ. գրերի գյուտը Մաշտոցի կողմից եւ Վարդան զորավարի զոհաբերությունը 451-ին: Պատմական այս կարեւորագույն փաստերի համադրության միջոցով Վ.Հակոբյանը պատասխանում է ժողովրդի հարատեւման հարցին.

*ոչ միայն սուրը, այլ նաեւ գիրը
պետք է վահանով մտնի ասպարեզ,
եւ պիտի պահել զուգակշռություն: 371*

Պոեմում էպոսային տարրերի հյուսվածքով ցույց է տրված Վարդան զորավարի զինավարժությունը: Սուր ու վահանի շառաչների մեջ Սաթենիկի գործած՝ այբուբենի պատկերն ունեցող գորգը արցախահայության

զինվորական կամքի եւ ստեղծարար ոգու խորհրդանիշն է: Ջինավարժ ու ասպապը կապած Սաթենիկը բացում է գորգը եւ կարդում.

Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ...

... հնչում է երգը ամենահզոր,

ամենագորեղ երգն է հնչում...

*... Երգն այդ երգ չէ, ո՛չ, այլ գրի վրա
երդում է սրի...*

հավատարմության...: 372

Վ.Հակոբյանը ուշադրություն է դարձնում նաեւ օտար բռնակալների կողմից մարդկային իրավունքների ոտնահարման խնդրին: Ջրվոր Հաբեթի որդու՝ Տիգրանի եւ Սաթենիկի դժվարին եւ լուսավոր սիրո էպիզոդը պոեմի կարեւոր եւ հաջողված հյուսվածքներից է, որին հաջորդում է սրտառուչ մի պատկեր: Մեսրոպյան գրերը հոգու երգ դարձրած արցախցիները խմբվում են Վարդան զորավարի շուրջ որպես զինվորյալներ,

որ իրենց ՀԱՅԻ պատիվն ամենուր

բարձր են պահում՝

արեւամոտիկ,

այրեր՝ պնդաքերժ...

Արցախ-տուն սրբոց,

բայց՝

ոչ առուծախ...

Արցախ-

այսինքն սար ու մարդ անթեք,

Արցախ-

այսինքն՝

առյուծն առյուծ է՝ թե արու, թե էգ... : 373

Պոենի վերջին մասը կոչվում է «Մաշտոցի ոգին Ամարաս վանքում, վանքի գրերում, քար ու վեմի մեջ»: Տեսիլքային գրականության ավանդույթներին հավատարիմ, Վ.Յակոբյանը ստեղծել է մի պատկեր, որի միջոցով իմաստավորվում է հետմաշտոցյան շրջանի արցախական կյանքը՝ լեցուն արհավիրքներով, արարումներով, ապրելու վճռականությամբ: Ավանդությունը պատմում է Ամարասում Լենկ-Թեմուրի կատարած ջարդերի մասին: Նա վաղուց լուր ուներ վանքի մասին: Եվ երբ խուժում է վանք, տեսնում է, որ սուրբ մկրտության ավագանի մոտ տերտերը կնքում էր նոր աշխարհ եկած մի ամարասցու, իսկ կողքին նրա խոնարի մայրը: Լենկ-Թեմուրը թրի մի հարվածով գլխատում է երեքին, ավերում եւ ավարում վանքը: Սակայն յոթ օր ու գիշեր չանցած, մոլուցքը Լենկ-Թեմուրին նորից այստեղ է բերում: Նա տեսնում է, որ կամարների տակ այդ նույն վանքի տերտերը կնքում էր նոր աշխարհ եկած մի ամարասցու, կողքին նրա խոնարի մայրը: Լենկ-Թեմուրը թրի մի հարվածով մեկտեղ թրատում է այդ երեքին: Եվ որպեսզի Ամարաս վանքի վերակերտումը չկրկնվի, իր զինվորներին շարք է կանգնեցնում մինչեւ Արաքս, որ հայոց վանքի բոլոր քարերը թափեն գետի մեջ:

*-Չայոց գետի մեջ շատ ենք հայ նետել,
թող այս հայագիր քարերն էլ հիմա
ջրի մեջ նրանց հուշաքար լինեն...: 374*

Յոթ օր հետո Լենկ-Թեմուրը նորից է գալիս այստեղ եւ նորից տեսնում նույն պատկերը: Ջարմացած Լենկ-Թեմուրը գլուխը առնում ու չքվում է այդտեղից: Մարդակեր բռնակալը, այնուամենայնիվ մի գիտունի

միջոցով ցանկանում է իմանալ խորհրդավոր գաղտնիքի մասին: Արցախի շինականը գիտունին բացում է գաղտնիքը. «Մաշտոցի գիրն է ամեն մի քարի... ամեն մի խաչի... ամեն արմատի»:

-Եվ այս ամենը, շինականն ասաց,

Մեր հոգու մեջ են,

ոգին են հայի...

Ժողովուրդը, որ տառեր է գրում

անգամ իր թրին,

Աշխարհում նրան հաղթող չի լինի,

Առավել եւս՝

Ժողովուրդն այդ չի մնա գերի...: 375

Պոեմի վերջին ակորդում Վ.Յակոբյանը ընդգծում է, որ արցախցիները իրենց վերածնունդի ուժը առել են մայր հողից, որ հողն Արցախա սոսկ էլ հող չէ, այլ իմաստություն է, հավատ, սրտի կրակ է, կարմիր որդան, Մաշտոցի եւ Վարդանի ոգին է, որին պարտություն չկա:

* * *

Արցախի գրական կյանքը վերելք ապրեց: Ժողովրդի մաքառման ոգին մտավ երգի մեջ՝ փիլիսոփայական խորքով: Երգը ոչ միայն դարձավ օրերի թեժ արձագանք, այլեւ ժողովրդի ներկա եւ անցած ճանապարհների իմաստավորում, նրա կենսափորձից ծնված խոհու խորհուրդ:

Վ.Յակոբյանի «Համանվագ», «Ես հողի մարդ եմ», «Շանթահար կաղնին», «Երամականչ» («Արցախա ծուխ») եւ «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» («Ամարասի զանգեր») պոեմները խոսում են այդ մասին, եւ

Ինդիանակը այդ ամենը ներկայացնում է նոր խոսքով, գեղարվեստական նոր հնարանքներով: Եվ ի ուրախությամբ ընթերցողի, Վ.Յակոբյանը հյուսել է մի այնպիսի երկ, որ պայմանավորել է ժամանակը, որի երեւան գալը ի ցույց է անում գեղարվեստական խոսքի նոր նվաճումը գրական ընթացքի մեջ: Դրա արտահայտությունը նաեւ «Տաճարն աստծո» պոեմն է, որ նախ հրատարակվել է «Արցախ» հանդեսի հավելվածի ծելով:

Արցախը ներսից բացահայտելու նոր, հաջող փորձ է այս պոեմը՝ ծնված մերօրյա ցավից, հյուսված մեր դարավոր պայքարի ու երազանքի ոգեղեն գույներից: Մոտ երեք հազար տողից բաղկացած պոեմը բաժանված է չորս մասի: Չնայած մեծ ծավալին, պոեմը ընթերցվում է մեկ շնչով: Այն լուսեղեն նստվածք է առաջացնում ընթերցողի հոգում, հարստացնում նրա հուզաշխարհը, բորբոքում երեւակայությունը, խորհելու առիթ տալիս:

Տեղին է բերել Պ.Սեւակի ուղեցույց խոսքը. «Դարեր շարունակ բանաստեղծությունը կապել են *ՍՐՏԻՆ*, համեմատել ԵՐԳԻ հետ ու երգ էլ կոչել: Եվ ճիշտ են արել: Բայց *ՍՐՏԻՑ* ու *ԳԼԽԻՑ* բացի մենք ունենք եւս մի բան, որ ժամադրավայրն է այդ երկուսի եւ կոչվում է *ՅՈԳԻ* կամ *ՈԳԻ*: Արդի բանաստեղծությունը ընդհանուր ուրվագծումով (եւ ճշմարիտ բանաստեղծությունն առհասարակ եւ միշտ) *ՎԵՐ* է սիրտ կոչվածից եւ *ԱՎԵԼԻՆ* է երգ կոչվածից: *ՍԻՐՏ* ունենալիքը քիչ է... հարկավոր է նաեւ *ՅՈԳԻ* ունենալ... Այս «նոր»-ությունը շատ ավելի լավ հասկացել են տակավին *ՅԻՆ* հնդիկներն ու քրիստոնյաները՝ մարդկային անմահությունը հեղույսելով ոչ թե *ՍՐՏԻ* տեղափոխության, այլ *ՅՈԳՈՒ* այլակերպության վրա: Մենք (բազմադարյան մարդկությունը) լի եւ

առատ ենք ՍՐՏԱՌՈՒՉ խոսքերով, ուրեմն եւ՝ մի քիչ էլ կուշտ ենք: Այժմ արդեն մենք առավել կարիք ունենք *ՀՈԳԵՎՈՐ* ասմունքի, ոգեղինացած ասքի: Մենք հիմա կարիք ունենք... այդ *ՀՈԳՈՒ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻՆ* ավելի, քան սրտալի զեղմանը, որը (այդ սրտալի զեղումը) հիմքն է *ՆԱԽՆԱԿԱՆ* արվեստի, բայց ոչ երբեք զարգացած արվեստի...

Այս պատճառով էլ արդի բանաստեղծության *ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԱՐԸ*, երաժշտական տերմինով ասած, ես համարում եմ ոչ թե *ԵՐԳԱՅԻՆ* մտածողությունը, այլ համանվագային (սիմֆոնիզմը), ոչ թե *ՄԵՆԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ*, այլ բազմաձայնությունը...» : ³⁷⁶

«Տաճարն աստծո»-ն հոգու շարժման, նրա դիալեկտիկայի բացահայտում է՝ համանվագային հնչեղությանը ու խորքով, զգացմունքային թրթիռներով: Վ.Հակոբյանը ստեղծել է Արցախի հերոսական անցյալի եւ դրամատիկ ներկայի Ասք, որ շաղախված է կորուստների ողբերգական զգացմունքներով եւ ժառանգածի պահպանման անխառը մտորումներով: Ուղենիշ ընտրելով զգացմունքն ու հերոսությունը, փակուղին ու ելքը, Վ.Հակոբյանը դրանով իսկ ընդգծում է մեր ոգու անմահությունն ու ընթացքի հավերժությունը: Համաժողովրդական ցավի ու երազի փիլիսոփայությամբ Հակոբյանը իմաստավորում է պատմական մեր ճանապարհը, նրա ներկան ու անցյալը ներհյուսված միմյանց՝ ընդհանրացնելով մաքառման եւ ելքի խորհուրդները: Բանաստեղծական սուր զգացողությամբ, պատմական երեւոյթները համադրելու եւ վերլուծելու կարողությամբ Վ.Հակոբյանը անցյալը կամրջում է ներկային, խտացնում մեր ժողովրդի կենսափորձի,

աշխարհընկալումների եւ աշխարհայեցողության գույնները: Պատմության խորքերից առած իր հոգեւոր գանձերը, ոտքերի տակ հողը հայրենի, սրտում պատկերը նրա, արցախահայությունն այսօր ձգտում է պահպանել իր ինքնությունն ու լեզուն, վերաիմաստավորում իր վերաբերմունքը աշխարհի եւ մարդկանց հանդեպ.

Եթե

արցախի մանուկը

ծաղիկ չի նվիրում մորը,

ուրեմն՝

աշխարհում ոչ մի մայր

իր որդուց ծաղիկ չի

ուրեմն՝

աշխարհում ոչ մի ծաղիկ ծաղիկ չի: 377

Բանաստեղծն աշխարհի խիղճը տեսնում է մարդկանց եւ ժողովուրդների ազատության գաղափարի մեջ:

Քնարա-էպիկական պոեմի ժանրի ընձեռած հնարավորությունների սահմաններում բանաստեղծը մերթքնարական խոհերով, մերթ՝ էպիկական պատկերներով խտացնում է ժողովրդի բնավորության գծերը: Արցախցին, իրավամբ, իրավունք ունի հպարտանալու.

Ճանապարհը տաշել են ոտքերով

քարքարոտ

ու դրել իմ երազների մեջտեղում: 378

Քնարական հերոսը «իմաստնացած սուտ է» համարում բոլոր այն ձայները, որ լսվում են նյույորքներից, փարիզներից, «որ գալիս են դրսից, ոչ ներսից»:

«Մեր ցավը շրջիկ, հաստատում է բանաստեղծը, մարմին մտած ասեղ է, որ երկրի բոլոր երակներով անցնում է ու վերջում մեր սիրտը պիտի խրվի»:

Դարերի փորձը ըստ Հակոբյանի հիշեցնում է՝ չհավատալ նրան, անգամ երբ ասում են, թե «ծեզ համար են քայլում»: Ուրեմն՝

Թե ապրել է՝ մեր ցավերում ապրենք,

Թե թռչել է՝ մեր երկնքով թռչենք,

Թե թրջվել է՝ մեր ջրերում թրջվենք... 379

Պոետական ընդհանրացումների միջանկյալ արձակ բանաստեղծությունների մեջ Հակոբյանը լրացնում է ժողովրդի ինքնահաստատման իր խորհուրդը. «Հերոսը պիտի աճի հողից»: Վ.Հակոբյանը մեկնաբանում է մեր ժողովրդի անցած ճանապարհը: Գոյատեւման նրա փիլիսոփայությունը մերժում է լացը, հաստատում սեփական ուժերին ապավինելը: Այդ իմաստն ունեն պոետի հարցադրումները: Ասենք՝ Ամերիկայի ծայրը հաղորդեց, որ կոնգրեսմենները խիստ անհանգստացած են Արցախի հարցի առթիվ, իսկ ֆրանսիական թերթերը գրեցին. «թե ինչ իրավունքով է սպանվում սպանվողը»: Դրանից ի՞նչ օգուտ: Չպետք է մոռանալ, որ

Չարի անունը կորցրել են,

չարը անուն չունի,

որ դիմեն,

բարու անունն է սառել վրան: 380

Բանաստեղծը պոետում ենթաբնագրային բացահայտումները հասցեագրում է մեր սիրտն ու հոգին կրծող ցավին: Այդ ցավի պատկերման միջոցով պոետը

ընդգծում է աշխարհի անտարբերությունը եւ մեր անելիքները: Պոեմում խոր ընդհանրացում ունեցող ուշագրավ պատկեր է համաժողովրդական ցավից մեծացած երեխայի դրվագը, այն երեխայի, որ կարողանում է իր վրայից նետել որբության խարանը: Ժողովրդի եւ երեխայի ճակատագրերի նույնությունը նոր սերնդի քաղաքական հասունացման պատկերն է:

Վ.Յակոբյանի պոեմի սյուժետային գլխավոր գիծը հաճախ է ընդհատվում կոնկրետ դեմքերի ու դեպքերի ներմուծումներով, սակայն դրանք չեն տրոհում պատումի զարգացումը, այլ նպաստում են երկի գաղափարական բովանդակության խորացմանը: Ստեղծվում է այն հոգեւոր կապը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել պատմական առաջընթացն ապահովող գոյատեւման գաղտնիքը:

Բանաստեղծը դառնում է ջատագովն ու երգիչը իմաստուն ու գիտակցված սերնդափոխության.

*Մեծ երեխայի անունը դրինք
Առան,
եւ պարետային ժամը նահանջեց,
եւ երկրի ընդերքից դուրս եկան ջրեր,
որ երգեն ցավը ծարավ երկնքի...: 381*

Աղվանքի նահապետ Առանի եւ այսօրվա արցախածին քաջազունների արյան միասնական եռքն ենք զգում պոեմի շատ պատկերներում: Ըստ բանաստեղծի, արցախյան հողը իր շերտերում պահում է եւ՝ փտող հատիկներ, եւ՝ ծլարձակող սաղմեր, որոնց հաստատումն է սրտաբուխ այս ճիչը. «Բա ի՞նչ են դառել Արմեն Յակոբյանի ժպիտները, երբ զինվոր «եղբոր» գնդացիրը

պարզվել է նրա գոտու լայնությամբ ու երկարությամբ»։ Պոեմի պատումի մեջ Առանի տոհմից Արմեն Հակոբյանն է հառնում, Արմենի գիտակցված մահից՝ մի նոր Առան, որ որպես Սոսե, ընտրում է Սաթենիկին եւ խորհրդանշում մեր ժողովրդի հավերժությունը իր աստեղնամերձ սարերում։

Աշխատասիրության, հայրենասիրության, արարչագործության գաղափարներն են ընդգրկված աղքատ գյուղացու, նրա քաղաքաբնակ տղայի վերադարձի եւ սիրած աղջկա իմաստության մասին պատմող ժողովրդական զրույցում։ Դրանով բանաստեղծը պատասխանում է Արցախը շեն պահելու կարելու հարցին։ Արցախը հավերժորեն կծփա, եթե ապրենք նրա գրկում եւ մեր սրտի հրով վառ պահենք օջախները պապենական։

Վ.Հակոբյանի «Տաճարն աստծո» պոեմի երկրորդ՝ «Ամենատաք կետում» գլուխը քնարական մենախոսության հիանալի օրինակ է։ Նրանում բանաստեղծը կոնկրետացնում է այսօրվա իրադարձությունները, բացահայտում մեր հոգեկան ալեկոծումները։ Վ.Հակոբյանը պատռում է կեղծիքի քողը։ Չարիքի կրող են դառնում անզամ այն տանկերը, «որոնք մերն էին» նույնիսկ կինոնկարներում.

*Պապս տանկերի հետքերով գնում էր,
Թեկուզ գնալը դժվար էր ու ճամփա չկար,
Իսկ հիմա
չի կարող, տանկը գնում է հողի վրայով,
Ուր ոսկորներն են՝ պապիս ու նրա
Նախնիների...
... եւ տատս չանչ անելով դեպի, չգիտեմ ուր,*

գնում գտնում է ռազմական գոսկն իր
հայի,
պոկում է վրայից տանկի վրա տեսած
հնգաթել կարմիրը
եւ նետում է տանկերի ոտքերի տակ: ³⁸²

Բանաստեղծը չի կարող չհիասթափվել այս ամենից, կեղծել ինքն իրեն. նրա պատմական հայեցողությունը դառնում է խարազանող, սիրտը ճչում է ավստսանքի սեղմումից:

Չարն այնքան է դարձել սանձարձակ, այնպես է օգտվում նոր «աստվածների» թույլտվությունից, որ անգամ պղծում-փշրում է անվանի մարդկանց արձանները, մասունքված վանքերը:

Մեկը մյուսին լրացնող խոսուն դրվագներ կան պոեմում, որոնք լավատեսական են: Բանաստեղծը շարունակ դիմում է պատմության դարավոր փորձից սերված նոր սերնդին՝ հանձին Արցախի զավակ Առանի, որ չի ընկրկում, շարունակում է իր հաղթական ճանապարհը:

Բանաստեղծը, ինչպես տեսանք, առաջին մասում պատմական անցյալի հերոսական դրվագներից փնջում է մեր նախնիների հոգեբանականփիլիսոփայական ծփանքները, իսկ երկրորդում՝ չարի անարդար վերաբերմունքից եկող բարոյական ճնշումները: Պոեմի երրորդ մասի պատումը միանգամայն այլ երանգներ է ներառում, էպոսային տարրը ավելի է զգացնել տալիս իրեն, բանաստեղծի խոսքը, կերպարների գործողություններն ու երկխոսությունները մի նոր խորքով են բացահայտում արցախահայության ֆիզիկական ու բարոյական կոփվածքն ու ինքնատիպությունը:

Բանաստեղծը պոեմի երրորդ մասը վերնագրել է «Հուլունքը Շամիրամա»: Պատմողական էպիկական շնչով, քնարական ապրումների շաղախով բանաստեղծը կերտել է բնավորություններ, որոնք պատմաառասպելական լինելով հանդերձ, մեր օրերի միջով քայլում են դեպի գալիք: Հայ ժողովրդի դարավոր, դժվարին, բայց հերոսական երթը գնահատվում է որպես նրա հարատեւման կարելորակունքներից մեկը: Այդ երթը մեր հավերժական ճանապարհն է, որ այսօր էլ փռված է մեր ոտքերի տակ՝ մաքառելու եւ ապրելու ճանապարհը: Հակոբյանը հպարտության զգացումով է բնութագրում մեր նախնիներին: Նրանց քաջության շնորհիվ է, որ սարերը մեզ են հասել հայաշունչ, որ գետերը երգում են հայերեն, որ աստղերը փայլում են հայաժպիտ: Դրանք միասին կոչվում են Արցախ: Ինչպե՞ս պահպանել այն եւ ո՞նց պաշտպանել: Այսօր այդ հարցերն են վառում մեր հոգին: Այդ հարցերին համոզիչ պատասխան է տալիս բանաստեղծը: Սաթենիկի եւ Առանի կերպարները ստեղծված են ինքնատիպ հնարանքներով: Սաթենիկը դեպի հայրենիքն ու իր Սերն ունեցած վերաբերմունքով լրացնում եւ իմաստավորում է Ծովինար-Արմաղան-Խանդութ-Գոհար գիծը: Նա «առավել աստվածուհի է... քան աստվածուհին»: Նա գեղեցիկ է, իր հմայքներով «մարմնամարմանդ, մարմնամոմիկ, մարմնածոմիկ, մարմնադողիկ, մարմնաշողիկ, մարմնապողիկ, մարմնածավիկ, մարմնածաղիկ, մարմնահողմիկ, մարմնամեղմիկ, մարմնածեղիկ, մարմնագեղիկ, մարմնամեղիկ, մարմնամեղվիկ, մարմնամեղրիկ»: Բանաստեղծը նրան համարում է ոգեղեն, «երկնքի համ կա թելերի վրա»: Թարմ ու գտնված պատկերային միջոցներով

Սաթենիկը բնութագրվում է ոչ միայն արտաքին բարեմասնություններով, այլև հոգու գեղեցկությամբ: Նա հայ կնոջ հաջողված մարմնավորում է: Օգտվելով պատմագրական ազգագրական աղբյուրներից, Վ.Հակոբյանը բանաստեղծական նախանձելի իմաստավորման է տանում մեր ժողովրդական հնագույն սովորությունները, նոր շունչ է հաղորդել թոնրակրակի շուրջ սիրող զույգերի երեք պտույտ գործելու հեթանոսական սովորությանը: Այդ պատկերը գեղագիտական առավել խորք է ստանում, երբ կույսն Սաթենիկ Առանին պատվիրում է պսակից առաջ գնալ եւ մարտնչել գոռոզ Ասորեստանի դեմ, նվաճել «պատիվը հայոց բարձրիկ աշխարհի»: Առանը ընդունում է Սաթենիկի պատգամը եւ վերադառնում է հաղթանակներով, իր հետ բերելով Շամիրամի գեղեցկությունը խորհրդանշող ուլունքը... Սաթենիկի եւ Առանի հանդիպման տեսարանը լեզենդային մի պատկեր է, որ խորհրդանշում է հայրենիքի ճակատագրին միահյուսված սիրո անպարտելի ուժն ու անմարում հմայքը:

Պոեմի վերջին մասի համար որպես բնաբան բանաստեղծը Մ.Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն»-ից բերել է հետեւյալ հատվածը. «Վաչագան արքայի ժամանակ կատարվում է տիրոջ ասված խոսքը, թե՛ «նա, որ գործում է եւ ուսուցում, աստժու արքայության մեջ մեծ է կոչվում»: Հենց այս արեց աստվածասեր Վաչագան թագավորը»:

Պոեմի վերջին չորրորդ մասը ոգեշունչ խոսք է Հայոց Արեւելից կողմանց արքա Վաչագանի մասին: Այստեղ պատմական անցյալը տեսիլքային պատկերների միջոցով շունչ առած նոր իմաստ է հաղորդում ներկա

ընթացքին: Վաչագան արքայի հանդեպ քնարական հերոսի երախտագիտության զգացումը ակունքվում է պատմական այն դերից, որ խաղացել է արքան: Պոեմի վերջին մասի հենց սկզբում «մաքուր եւ անլաց ծաղկի» պատկերը խորհրդանշում է ժողովրդի անթառամ հիշողությունը, որ պատմության շարժիչ ուժն է, ապրելու տենչը:

Այդ ծաղիկը միաժամանակ դաս է, որի միջով դարերը կարող են «ճամփա ընկնել», «գալ ու գտնել մեզ», բացել մեր պապերի հերոսական էջերը Մարութա սարերի լանջերին, «Արցախա սուրբ աշխարհի ճամփաներին»: Ծաղկի քնարական հայացքը վերաիմաստավորվում է պոեմում, դառնում կեցության խորհուրդ.

*ու ծաղիկը վառվող ջահ է,
ու ծաղիկը սուր է ձեռքիս
թրատում եմ խավարը ես,
ու ծաղիկը ջուր է ձեռքիս
հողն ինձնով գարունվում է,
եւ ես ծաղկի ձեռքին հող եմ
կոկոնվում է հույսն ինձ վրա...: 383*

Պոեմում ծաղիկ-ձեռք-ճանապարհ եռանկյունին համանվագային հնչեղություն է ձեռք բերում: Հայրենի օջախի բանաստեղծական պատկերը ամբողջանում է Տաճարի տեսքով.

*Եվ ճանապարհը ինձ տանում է Տաճար:
Տաճարը ձեռք է՝ բարձրացող հավատ:
Տաճարը աչք է՝ լույսի պատուհան:
Տաճարը սիրտ է՝ սիրո վեհարան: 384*

Բանաստեղծական մետաֆորի մեջ տաճարի եւ քնարական հերոսի փոխադարձ կապը ներկայացվում է վիճակների ինքնատիպ հյուսվածքով, ու այնքան անմիջական է, որ ընթերցողը հավատում է միանում է բանաստեղծին, նրա հետ կրկնում. «Ես եմ Տաճարը»: Այդ Տաճարի գույները պոեմում խտացված են որպես «Վաչագանի ափից ելած» Հակոբավանք ու Ջրվշտիք, Հռեկավանք ու Վարարակն...: Դեպի դրանց տանող ճանապարհին դրոշմված են քնարական հերոս-բանաստեղծի հետքերը, որոնցով հպարտանում է նա.

*Անցյալն, այո, պիտի ապրել
ու վերապրել,
բայց ներկայի հաշվին՝ երբեք,
այլապես մենք
կկորցնենք*

ձեռքից կտանք եւ... ապագան: 385

Պոեմն ինչքան մոտենում է ավարտին, այնքան պատմականն ու առասպելականը միաձուլվում են: Արքա Վաչագանի եւ դիցուհի Անահիտի կերպարները, արարչական Կանոնագրքի եւ նահատակ Գրիգորիսի մասունքների նկարագրությունը պոեմը դարձնում են անցյալի եւ ներկայի, երազանքի ու սխրանքի կտակարան:

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ գրական հունձքում պատմական թեմատիկան հնչեցվեց՝ կապված արդիական խնդիրների հետ,- գրում է գրականագետ Անահիտ Աթայանը: Հայտնի է, որ Արցախը հայկական պատմական հուշարձանների բաց թանգարան է: 160-ից ավելի ճարտարա-

Կետական կոթողներ, առանձնապես եկեղեցիներն ու վանքերը արցախահայության հերոսական ոգու, մտքի թռիչքի, ապագայի հանդեպ ունեցած հավատի առհավատչյալներ են: Խանյանը պատմական թեմային անդրադառնալով, առաջին հերթին հայացքն ուղղեց պատմա-ճարտարապետական այդ հուշարձաններին, ներկայացնելով դրանք որպես արցախահայության գեղեցիկ ու մարտնչող ոգու արտահայտություն: Այդ առումով «Արցախ» ամսագրի 1990 թ. 5-6 համարներում տպագրվեցին «Կավագ վանքը», «Տեսիլք», «Պապիս պատիվը», «Ես Արցախն եմ» բանաստեղծությունները: Կավագը պատմական Դիզակի վանքային համալիրներից է՝ կառուցված 12-13-րդ դարերում: Այն գտնվում է բանաստեղծի ծննդավայրի դեմ-դիմաց, բարձունքի վրա: Խանյանը նկարագրելով կիսավեր վանքը, հաստատում է, որ մինչև հիմա էլ այն հայոց «դարերի կնիքը վրա» է եւ վշտոտ, եւ նուրբ: Դեռ ավելին.

*Աշխարհի վրա մատ է թափ տալիս,
Մատից աստղերի շողեր են ցայտում,
Քիրսը՝ դեպ իրեն, ինքը՝ դեպի Քիրս,
Քայլում են անվերջ, բայց չեն հանդիպում: 386*

Վանքը այսօր ազերի-թուրքերին կանչում է դատի այն բանի համար, որ նրանք կեղծում են պատմությունը, որ իբրեւ իրենք են կառուցել: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ հենց իրենք ավարեցին վանքի դուռը, ջարդեցին խաչը: Վանքը լեզու առած հայտարարում է.

*Ջինվորյալներ են ուխտավորներս,
Փրկության ժամիս շեփորն է հնչում,*

Ծլարձակում են թաղված հույսերս,
Հիմքերս կյանքի ավիշ են շնչում:
Մրսած բառերս կարթնանան նորից,
Կշարականվեմ հոգեւոր մարտում,
Կհառնեմ մի օր մթամած ծորից,
Կրկին կդառնամ խղճի դպրատուն: 387

Բանաստեղծության մեջ հնչում է պայքարի կոչը: Հետաքրքիրն այն է, որ այս շարքը ստեղծվել է այն օրերին, երբ դեռեւս Արցախում մոլեգնած էր խորհրդային իշխանության երկաթե օրենքը՝ հովանի դարձած Պոլյանիչկո-Սաֆոնովյան ոհմակին, երբ յուրաքանչյուր արդար խոսքի համար հայ մտավորականին հալածում էին, նետում Շուշվա բանտը, մեղադրում ազգայնամոլության, սեպարատիզմի, ազգային թշնամանք սերմանելու մեջ: Սակայն ի հեճուկս հայ ժողովրդի հանդեպ այդ բացահայտ թշնամանքի, հնչում է ազատության եւ անկախության կոչող երգը: «Կավագ վանքը» բանաստեղծության անմիջական շարունակություն կարելի է համարել Խանյանի «Տեսիլք» հյուսվածքը: Այստեղ նկարագրության օբյեկտը Ամարասն է: Բանաստեղծը գրում է, որ արցախցիներին «գատել են իր անցյալից, քանդել մեր սուրբ տունը»՝ խաբված բոլշեւիկյան ղեկավարների սուտ խոստումներից: Այդպես տառապել ենք տարիներ շարունակ եւ այսօր. «Հողն է տնքում մեր ցավից»: Դառը խոհերի մեջ բանաստեղծը փարվում է Ամարասին, ուր լսվում է «Մեծ Մաշտոցի ձայնը», խոսում է Գրիգորիսի հետ.

Ապավինած խաչ ու գրին,
Շարք են կանգնում սրբերը բյուր՝

Իսկ դեմ-դիմաց, հենված թրին,
Ժպտում է մի Արցախա ծուռ:
Իսկ նրա շուրջ զորքն Արցախի,
Խաչ ու թրի հովանու տակ,
Հիմնն է երգում առանց վախի,
Գովում կռիվ ու հաղթանակ:
Եվ օրհնելով պայքար ու հող,
Թուրն են տալիս ինձ պողպատե,
Որ Արցախի բախտով վառվող
Սերունդներին ես կտակեմ: ³⁸⁸

Պատմական անցյալի սրբազան քաջերը, անմարում հիշատակ դարձած պապերը, Արցախ աշխարհը դարավոր ոսոխների հարձակումներից պաշտպանած այրերը Խանյանի հայրենասիրական եւ պայքարի երգերում դարձել են խորհրդանիշեր, նոր սերունդներին գոյամարտի կոչող դաս ու ազդակներ: Բանաստեղծական թարմ պատկերներով, հոգեբանական համոզիչ բացահայտումներով շարքի մեջ ընդգծվում է «Պապիս պատիվը» ստեղծագործությունը: Պատիվը՝ կապված արցախցու քաջության, հայրենասիրության, վճռականության հետ, շնչավորված է այստեղ: Պապի պատիվը քնարական հերոսի ուսերին թառել է ինչպես առասպելական թռչուն, նրա ձայնը զնգում է քնարական հերոսի ականջներում, հույսերին ժպտում Քիրսա սարը, ծփում՝ Արեւսարը: Բանաստեղծը մեջբերում է հայոց սրբացած քաջերի անունները, վերհիշում Դիզակա հերոսներին՝ տումեցի Թեւանին, ակնաղբյուրցի Արգարին:

Նժդեհի ձին է խրխնջում Տողում,
Արձագանքում է նրան անտառը,

Թշնամիների հենց պարտված տեղում
Դրոշ է դառնում նրա հանճարը: 389

Պատմական անցյալի հերոսներն ու հերոսամարտերը տեսիլքի փոխված գոյամարտի են կոչում նոր զինվորյալներին, որ զորախմբվում են Քիրսի լանջերին եւ ծածանում պայքարի դրոշը: «Ես Արցախն եմ» բանաստեղծության մեջ բանաստեղծի հավատը հայրենի օջախի հավերժության հանդեպ վառ է եւ շողշողուն: Առհավատչյան մեր հին կոթողներն ու երգերն են, որոնք խոսում են հայերեն: Ոգելորված բանաստեղծը բացականչում է.

Հայեր են սեզ սարերս,
Խաչքարերս էլ հայեր են,
Իմ հայածին դարերը
Կպայքարեն հայերեն: 390

Պատահական չէ պատմական թեմայի աշխուժացումը հայ պոեզիայի արցախյան հատվածում:

Խնդիրը կայանում է նրանում, որ ադրբեջանական զեղծարար գիտնականները Արցախ աշխարհը համարում են ալբանական-ադրբեջանական-թուրքական, դրանով իսկ ժխտում հայության պատմական արմատները Մեծ Հայքի տասներորդ այդ լայնարձակ նահանգում: Շրջանցում են այն հուշարձանները, որոնք հառնել են հայի ձեռքերով եւ կրում են մեր ժողովրդի ոգու կնիքը: Պարզ է, որ նման պարագայում հայ մտավորականությունը չպետք է լռի: Ճիշտ է, ժամանակին հայ պատմաբանները պատասխանել են թուրք զեղծարարներին, սակայն արածը դեռ քիչ է, որովհետեւ թուրքական արշավը Հայոց Արցախի պատմության դեմ նոր

թափով շարունակվում է նաեւ այսօր: Եվ երբ Ադրբեջանը սանձազերծել է պատերազմը արցախցիների դեմ, հայ ազատամարտիկների կողմից զենքի ուժգնությամբ մարտնչում է նաեւ գրականությունը՝ առաջին պլանի վրա մղելով ոչ միայն առօրյայի խիզախությունը, այլեւ անցյալի հերոսական էջերը եւ հայտնի անհատների գործունեությունը: Այդ տեսակետից հատկանշական է Խանյանի «Մաշտոցն Արցախում» բանաստեղծությունը: Բանաստեղծը Մաշտոցի անվան հետ է կապում Արցախի հայահունչ ոգու մեռնովելը, անմար լուսո խորան դառնալը, ինչպես պոետն է ընդգծում.

*Նրա շնչից ծնվեց դպիրն Ամարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը հին, նման մեղվապարսի,
Շուրջպարի մեջ առան բարձունք ու քերծ:
Ու շքերթը ծնվեց մեսրոպանուն մանկանց,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,
Անգամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Հովը պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրհնանքներով նրա
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:³⁹¹*

1991 թ. ԼՂՀ նախարարների խորհուրդը հայտարարեց Արցախի ազգային-ազատագրական շարժումն արտացոլող գործերի մրցանակաբաշխություն: 1992-ին Ս. Խանյանը ներկայացրեց իր «Արցախի արծիվը» պատմական պոեմը, որն արժանացավ 5-րդ դարի պատմիչ Եղիշեի անվան մրցանակին: Պոեմը մինչեւ

ամբողջական տեսքով տպագրվելը, առանձին հատվածներով լույս է տեսել մամուլում: 1995 թ. այն հրատարակվեց առանձին գրքով՝ բանաստեղծ-գրականագետ Վ. Հակոբյանի մուտքի խոսքով: Այն բերում ենք ամբողջությամբ.

«Մեր ամենօրյա խոսք ու գրույցի մեջ մշտապես հոլովվում են վանք, եկեղեցի բառերը: Եվ չենք նկատում, որ դրանք հաճախ մեր հոգու մեջ ու մեր լեզվի վրա փոխարինում են բերդ հասկացությամբ: Դա հատուկ է հայերիս մտածողությանը, որովհետև դարերի ընթացքում մեր ամենաապահով տունը միշտ էլ եղել են վանքերն ու եկեղեցիները՝ աստվածային մեր բերդերը:

Հայոց հիմնավորց բերդերից է Գոշավանքը, որի շուրջն էլ հիմնականում ծավալվում են այն գործողություններն ու իրադարձությունները, որոնք պատկերվում են նշանավոր բանաստեղծ Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմում: Այս գործը մեկ տարի առաջ կարդացել էի ու ողջունել ավագ գրչեղբորս՝ այս համարելով մեր գրական նորոյա ձեռքբերումներից մեկը: Պատկերման առանձնահատկությունները, հոգեբանական բացահայտումները, ժողովրդական մտածողության ընդգծված խորությունն ու հատկությունն առաջին իսկ ընթերցումից գրավեցին իմ ուշադրությունը: Եվ ցանկություն առաջացավ բարի ճանապարհի խոսք ասել դրամատիկ շեշտերով հարուստ մեր պատմությունը գեղարվեստորեն ներկայացնող այս ստեղծագործությանը, որը մեզանում հաջողված առաջին փորձերից մեկն է: Բանաստեղծը դարեր առաջ կատարված փաստերն ու իրադարձությունները մեկնաբանում-ներկայացնում է այնպիսի թարմությամբ ու համոզիչ պատկերներով,

ասես դրանք տեղի են ունենում հենց հիմա, մեր մարտաշունչ օրերում: Եվ դեռ հողի մեջ չներծծված նույն այդ հողի համար կյանք տվող հայ քաջորդիների արյունը, պատմության տողերն արդեն ծաղկվում են բանաստեղծի վրնձով: «Ութը հարյուր հիսուներեքին» ծավալված գործողությունների տակ քիչ է մնում դնել այսօրվա գոյամարտի տարեթիվը՝ 1994 ամի... Խոսքը պոեմում հեռու է ավելորդ պաճուճանքներից ու, ինչպես մեր մեծ մտածողը կասեր, «արվեստի թուլնից»:

*Սար չէր, Եսայու սպիտակ ծին էր ծյունի պես շողուն
Որ խրխնջում էր իր թռիչքի մեջ՝ Քիրսին հավասար:*

Նշենք, որ «Արցախի արծիվը» պոեմի մեջ առկա են էպոսային տարրեր, որոնք եւ գրողի խոսքը դարձնում են ավելի գունեղ ու անմիջական: Հովսեփի, Եսայի Ապու Մուսեի, Շուշանի, Բուղայի եւ մյուս կերպարները բարձրացվել են գեղարվեստական պատշաճ մակարդակի վրա: Եսայու կերպարը ստեղծելիս հեղինակի հայացքն ավելի շատ սնունդ է առել մեր նորօրյա գոյամարտի հերոսներից, նրանց հայրենանվեր սխրագործություններից: Հենց դրանում պետք է փնտրել ինչպես Եսայու, այնպես էլ մյուս հերոսների կերպարների ամբողջական ու համոզիչ լինելը: Արցախյան գոյամարտի նահատակների անուններով հավատալիոր մեր ժողովուրդը դեռ կկառուցի վանքեր ու եկեղեցիներ, մատուռներ, որոնցով էլ ավելի կբարձրանան մեր լեռնագագաթները, էլ ավելի կսրբանան: Հիրավի, մեր մարտիրոսված քաջորդիների անունները մեզ համար նոր բերդեր են դառնում: Ու նրանցով Արցախն անառիկ է մնում:

Պատմահերոսական այս պոեմում բանաստեղծը

Իհարուստ գույներով է ներկայացնում մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի այնպիսի մանրամասներ, որոնք ստեղծագործության ընդհանուր հյուսվածքին տալիս են պարզություն ու անմիջականություն, խոսքի համն ու հոտը տեղը պահում, գործողությունները դարձնում ակնհաճ... Այդպիսիք են, օրինակ, նշանդրեքի, հարսանիքի, զորահանդեսի, Եսայու շրջագայության, ճակատամարտի եւ այլ պատկերներ:

«Արցախի արծիվը» պոեմը ընդհանրության մեջ ընկալվում է որպես հին ու նոր ժամանակների խորքից ելած տաղանդավոր մի գրչի հիշատակարան: Հիշատակարան հայոց հին ու նոր գոյամարտի»: ³⁹²

Պոեմի վերլուծությանն ու զնահատմանն անդրադարձավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Դանիելյանը: Նրա խոսքը տպագրվեց «ԼՂ Հանրապետություն» թերթի 1996 թ. հունվարի համարում՝ «Քնարերգակի էպիկական հունձքը» վերնագրով: Հոդվածից բերում ենք պոեմը բնութագրող հատվածը.

«1995-ին լույս տեսավ Ս.Խանյանի «Արցախի արծիվը» պատմական պոեմը, ուր իններորդ դարի հերոսամարտերի շնորհիվ պատկերվում է հին ու նոր Արցախի ազատաբաղձ ոգին: Պոեմի գործողությունները ծավալվում են հրաշակերտ Դիզակ աշխարհում, Գտչավանքի բարձրաբերձ տեղանքներում: Այդ շրջանում մեր պատմական թշնամիները արաբներն էին, հավանաբար, այստեղից էլ պատումի դյուցազնական շունչը, որը էպիզմի լիցքով գրեթե նորանոր քայլ է Ս.Խանյանի բազմամյա ստեղծագործական փորձառության մեջ. մեր նշած էպիզմը իր վարպետ փոփոխական կշռությով,- սա էլ կառուցողական

նորություններից է,- հաճելիորեն հիշեցնում է Սասնա երգը, նրա անհաշիվ պատումները:

Պատմական նյութը բանաստեղծը քաղել է Թովմա Արծրունու երկասիրությունից՝ այն հարստացնելով ժամանակակից ենթմաստներով, վերհանելով թշնամու դեմ պայքարի մշտահմա բովանդակությունը: Հայրենի բնության խոր ճանաչումն օգնել է Ս.Խանյանին՝ առարկայական դարձնել երկիրը, հողը շնչով ու տրոփով լցնել, մի հանգամանք, որ անուղղակի զորացնում է սերը, ընթերցողին ամրակայում դյուբիչ ծննդավայրում, կյանքի իմաստն այսպես միահյուսում ազատագրության սրբազան հրին:

Շարաքա ցեղից ավազակապետ Բուղան, որ մինչեւ այդ ավերել էր Վասպուրականն ու Սասունը, հրդեհել Սյունաց երկիրն ու Դվինը, հասել մինչեւ Գարդման ու Ուտիք, որ հնազանդեցրել էր Շիրակ աշխարհը՝ իր ծառայամետ Սմբատ ու Մուշեղ Բագրատունիներով, իր մահն է գտնում Տողա անտառներում, այն Դիզակա բարձունքներում, ուր պատսպարել էր իր վախկոտ սիրտը: Հագարացիներն այստեղ հանդիպում են Եսա դյուցազնի ու նրա կամարի զինվորների հուժկու, միասնական բռունցքին, զինվորներ, որոնք, բանաստեղծի գտած արտահայտությամբ՝ պտտահողմ էին ու ցամանա եռք:

Հայ միջնադարյան էպոսին բնորոշ հատկանիշներով հարուստ այս ստեղծագործության մեջ մենք տեսնում ենք նաեւ հավատարմություն թափառիկ ավանդական պատումին, ինչպես, ասենք, երբ երկու կողմի հսկաները ելնում են մենամարտի՝ վճռելու պատերազմի ելքը: Այդպես էլ Եսան եւ Բուղան՝ « մեկը մայր հողից բուսած

մի բարձունք», մյուսը՝ «նենգ վիշապ», «սեւագույն մի արջ»: Մենամարտի եռաշերտ պատկերների մեջ Ս. Խանյանն ուրվագծում է այս երկու հակադիր կերպարները՝ դարձյալ ելնելով ավանդավեպի փորձառությունից՝ իր հողը պաշտպանողը բարի է, արդարամիտ, զորեղ, բայց եւ զիջել գիտի, քանի որ վստահ է իր ուժերի բաշխմանը: Ահա թե ինչու նրա վերջին հարվածն անկասելի է: Եսան սպանում է ոչ այնքան իր թշնամուն, որքան պատժում է չարը: Մինչդեռ Բուղայի կերպարում իշխում են պարծենկոտությունը, տիրակալի կիրքը, վավաշոտ, ավարառու ու լկտի պահվածքը: Եթե Բուղան զոհվում է կռվի մեջ՝ զիջելով ուժեղին, Եսային սպանում են նենգությամբ, թիկունքից, ընդհանուր հաղթանակի, ցնծության պահին...

Ինչ խոսք, «Արցախի արժիվը» պոեմի ծնունդը հենց այս միջոցին խիստ խորհրդանշական է. այն տոգորում է անվեհեր արցախցուն՝ իր այսօրվա պայքարում, իմաստավորում հին ու նոր կռիվները՝ հավերժի տեսանկյունից: Նորագույն ժամանակներում ի հայտ են գալիս նոր հովսեփներ ու եսաներ, թեւս փոփոխական է թշնամին ու նրա պայքարի ձևերի ընտրությունը: Անփոփոխ է միայն պայքարի ոգին, մեկ էլ՝ Եսայի, այսինքն՝ քաջության զարմն է անվախճան.

*Բայց նրա ոգին թեւաբախում է
Արցախի վրա,
Սեզ Տողասարին Գտիչն ու
ոգին փարվում են իրար:
Սարը՝ պատվանդան, վանքը՝
սուրբ գիրը, իսկ ոգին՝ ճրագ,*

Մեկը՝ թանկ օջախ, մեկը՝ մագաղաթ,
իսկ մեկը՝ կրակ:
Սարը կանգուն է, գիրը հոլովվող,
կրակն անմարում,
Եվ այդ կրակով Եսան ապրում է
Հայոց աշխարհում:
Տեսել են նրան՝ դարերի անթեր
ճամփեքը մտած,
Արցախի գրկում իր վրնջացող,
նժույզին նստած
Տեսել են նրան, նրան տեսնում են
ու կտեսնեն դեռ՝
Թուրն ու խաչն առած՝ որպես Արցախի
հավերժական տեր:

Խոսքը կապում է ժամանակները, Եսային դարձնում ազատության խորհրդանիշ: Այն տարողունակ է, հետապնդած իմաստը՝ ավելի քան պարզ. քանի կա Տեսանողը՝ Բանաստեղծի աչքը, անպարտ է Արցախը՝ հայատրոփ ու հայաշունչ»: ³⁹³

Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմի մասին գնահատանքի իր խոսքն է ասել նաեւ բանաստեղծ, Արցախի պետական համալսարանի դոցենտ Ա. Թովմասյանը «Եղիցի լույս» թերթի 1995 թ. դեկտեմբերյան համարում: Նպատակահարմար գտանք բերել Ա. Թովմասյանի այդ գրախոսությունն անբողջությամբ.

«Անվանի բանաստեղծ Ս. Խանյանի ստեղծագործության վերջին տարիների հիմնական թեման արցախյան գոյամարտն է: Հայտնի է նրա «Նահատակ լուսո» պոեմը՝ նվիրված լեգենդար Ավոյին, հերոս տանկիստ,

սուրբ նահատակ Միեր Դանիելյանի քաջագործությունները պատկերող «Միեր» վավերագրական պոեմը, բանաստեղծական շարքերը:

Իսկ նրա «Արցախի արծիվը» պատմական պոեմը գեղարվեստական հետաքրքիր մի ասք է Արցախի հերոսական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմական կարեւոր ժամանակահատվածի հերոսապատումի մասին: Այն հատկապես հնչել է մեր օրերում, երբ դեռ շարունակվում են գրվել մեր մեծ պատմության անթառամ էջերը: Այս ստեղծագործությունը սերունդ դաստիարակող գեղեցիկ գործ է: Հեղինակը, չնայած իր պոեմի թեման ընտրել է 9-րդ դարի դեպքերն ու իրադարձությունները, բայց կարծես նկարագրում է մեր ժողովրդի ազատագրական պայքարի այսօրվա հերոսությունները: Իշխան Եսայու, Հովսեփի եւ մյուս նվիրյալների մասին կարդալիս, մեր հայացքի առջեւ վեր է հառնում հայ ժողովրդի հավաքական կերպարը, աննկուն ու աննահանջ արցախցին՝ միշտ պատրաստ իր արյան գնով պաշտպանելու հայրենի հողը: Ասես տեսնում ենք մեր օրերի հերոսներին...

Բանաստեղծ Ս.Խանյանը հավատարիմ է մնացել այն ժամանակաշրջանի ոգուն եւ միջավայրին, որը դարձրել է ստեղծագործության առանցքը: Նրանում տեսնում ենք Գտիչ վանքն ու Տողասարը, Ամարասն ու Ազոխը, մեր այրուձիերի հերոսական հաղթարշավը, թշնամու պարտված զինվորների հուսահատ փախուստը... Այստեղ ամեն ինչ արցախական է՝ մետաքսակար չուխան հագին քաջ Խաչի պապին, Հովսեփը՝ սուրբ գիրքն առած, ակոսների մեջ՝ եզներ լծած, զորականներ, զորք ու զորագլուխ՝ ինչպես ամուր լեռնապար, Շուշանիկը՝

շուշանահոտ, խնջլոզ, ավելուկ, փիփերթ, չորաթան, ժենգյալով հաց, ջրջըլախտի...

Գրքի բոլոր բաժինները սերտորեն կապված են միմյանց: Նախերգանքում հետաքրքիր գույներով նկարագրվում են Գտիչ վանքը, լեռնապարը՝ ուր աստղացող դարերի շունչն ու շքերթն է, վրնջացող այրուձիերը, այրերը քաջասիրտ, պայազատներն Արցախի:

«Չարկահավաք» բաժինը կարդալիս, թվում է, թե նախկին սովետական կարգերում ենք, երբ աղբբեջանական իշխանություններն ամեն կերպ ձգտում էին Ղարաբաղը պահել այնպիսի ծանր կացության մեջ, որ արցախցիները թողնեն հայրենի հողն ու տունը եւ բռնեն պանդխտության ուղին, այդպիսով՝ լուծելով նաեւ Ղարաբաղի հայաթափման խնդիրը: Ահավասիկ.

*- Յուսուփը կանչեց հարկահավաքին,
Ասաց,- Աղբլլահ, Արցախը քոնն է,
Կհասնես այնտեղ բերքահավաքին,
Իրար կխառնես ծեսեր ու տոներ,*

*Առաջին հերթին կչափես ոսկին
Եվ հետո կառնես, առանց մի խոսքի,
Ամեն երդիկից մի պարան, մի գորգ,
Մի ձիատուպրակ, ձեռնոցներ բրդե,
Մի ջորի, թեկուզ տերը լինի որբ...*

Եվ այս տխուր պատկերներից հետո հաճելի ասարումներով ենք կարդում այն տողերը, ուր նկարագրվում է Եսային՝ ասես մի նոր Սասունցի Դավիթ...

*- Դատ լինի, թե դատաստան,
Վճիռը Եսայինն է,*

Երագը Դիզակա տան
Ամենուր իր ձեռքին է...
Մարտերի ոգին է կուռ,
Սարսափը՝ հազարացոց...

Ոճական հետաքրքիր ձեւեր է օգտագործել բանաստեղծ Ս.Խանյանը, նրա տողերը մերթ կրակված են, այրող, մերթ՝ հանդարտ ու հանդիսավոր... Եւ դրան հասնում է վարպետորեն, հաճախ էլ, դրանք միավորելով, ստեղծում մի հետաքրքիր ու բարդ գամմա...

Պոեմն ունի նաեւ ճանաչողական մեծ արժեք, նրանում բանաստեղծական պատկերավոր լեզվով հարուստ տեղեկություններ են հաղորդվում Արցախի պատմության, մեր դարավոր եկեղեցիների, սուրբ այրերի, զարմանահրաշխաչքարերի եւ մեր հերոսական ժողովրդի մասին, այն ազգագրական գողտրիկ տեղեկատու է, այստեղ մենք տեսնում ենք մակարների խումբ, հարսանիքի թամադա, զուռնաչիների, ընծաներ՝ արծաթե գոտի, մետաքս ու կերպաս եւ այլն:

Բանաստեղծ Ս.Խանյանի «Արցախի արծիվը» պոեմն ունի դաստիարակչական մեծ արժեք, սերունդ կրթող գործ է, երիտասարդների մեջ ձեւավորում է հայրենասիրական սուրբ զգացմունքներ, վրեժի եւ ցասման կողքին՝ մարդասիրություն, հարգանք, սիրո կողքին՝ աստվություն՝ թշնամու ու բարբարոսների նկատմամբ, ծնողասիրություն, ազնվություն, բարոյական այլ վսեմ հատկանիշներ: Պոեմը ժամանակի ծնունդ է եւ կունենա երկար կյանք»: ³⁹⁴

Յ.ԲԵԳԼԱՐՅԱՆԸ պատմությունը դիտում է որպես ժառանգափոխության չընդհատվող ընթացք: Այս առումով նրա պոեզիան ինքնազննման ու ինքնահաստատման յուրովի խոսք է: Մարդ պետք է կարողանա տեսնել ինքն իրեն՝ ավանդականի եւ նորի միասնության մեջ: Այս մոտեցումները հաստատում են, որ նա իր հողի ու ժողովրդի գեղեցկություններով ներշնչված երգիչ է, որի խոսքը օգնում է մարդուն ապրելու, ստեղծագործելու, մաքրվելու, վեհանալու, հառնելու երկրի հետ, հաստատելու արյունակցական իր կապը սերունդներին օջախ ու պատիվ կտակած պապերի հետ: Անցյալը թանգարանային ցուցադրանյութ չէ Բեգլարյանի համար: Այն ապրում է այսօրվա մեջ՝ կենդանի թրթռներով: Հուշ ու հիշատակ դարձած պապերի կտակներում ու պատվիրաններում, դրանք շոշափելիորեն նոր շունչ են առնում.

*Արեւներ են քանդակել
Մեր պապերը քարերին,
Քանդակել են ու թողել
Գալիք բոլոր դարերին:
Ախ, լույս դառնա ձեր հոգին,
Արեւապաշտ մեր պապեր,
Որ հավատով ձեր անգին
Դուք մեզ էլ եք վարակել: ³⁹⁵*

(«Արեւներ են քանդակել»):

Այսպես, հողի եւ մարդու, պատմության եւ ներկայի, պապերի եւ ժառանգների փոխադարձ կապի միջից բանաստեղծը ընտրում է բոլոր այն չխամրող գույները,

որոնք միասնության մեջ որակվում են որպես սեր հայրենիքի հանդեպ:

Դժվար չէ նկատել, որ Հ.Բեգլարյանը պատմությունը գնահատում է որպես դաս եւ ուղենիշ: Նրա ոտանավորներում Հայկյան նետը ներկայացվում է որպես արիության, սերնդափոխության խորհրդանիշ: Այդքանը դեռ բավական չէ, յուրաքանչյուր սերունդ գոյապայքարի մեջ իր խոսքը պիտի ասի.

*Հերթը հիմա մեզ է հասել,
Ոչ մի աստված մեզ չի ների,
Թե որ նետը,
Հայկյան նետը
Չփոխանցենք սերունդներին: 396*

Արցախյան ազատագրական պայքարի արդյունք է նաեւ Հ.Բեգլարյանի «Խաչենաբերդ» հերոսական ասքը:

Ներկայացնելով մեր ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագներից մեկը՝ Չինգիզ խանի զորքերի խայտառակ պարտությունը Արցախում, բանաստեղծը ձգտում է պատասխանել նաեւ այսօրվա այրող պրոբլեմներին: Նա գտնում է Արցախ աշխարհի անպարտելիության գաղտնիքը:

Հ.Բեգլարյանի հերոսական պոեմը հյուսված է քնարական շնչով: Այն բնութագրվում է հայրենիքի հանդեպ ունեցած անմնացորդ սիրո եւ ազգային հպարտության զգացումների շաղախով: Որքան դաժան է թշնամին, այնքան զորեղ է ժողովրդի ըմբոստությունը, պայքարի թափը: Պատմությունը վկայում է, որ Չինգիզ խանը Անդրկովկասում չի եղել: Սակայն Հ.Բեգլարյանը նրան

բերում է Հայաստան: Այստեղ կարելորվում է փաստի ճշմարտանմանությունը: Կարելորն այն է, որ բանաստեղծը պահպանել է ժամանակաշրջանի պատմական ոգին:

Պոեմում Հ.Բեգլարյանը պատմական էքսկուրս է կատարել: 9-րդ դարի պատմիչ Թ.Արծրունին իր «Պատմության» մեջ նկարագրել է Արցախի իշխան Եսայի Ապու Մուսեի հերոսական պայքարը արաբ զորապետ Բուղայի բազմահազար զորքերի դեմ: Բուղան նամակով հոխորտացել է, որ Եսայը ենթարկվի իրեն: Եսայը Գտչավանքից պատասխանել է նամակով, որտեղ արհամարհում է թշնամուն եւ խորհուրդ տալիս հեռանալ: Եսայի Ապու Մուսեի նամակի օրինակով Հ.Բեգլարյանը ստեղծել է Սմբատ իշխանի պատասխանը, որը մեր պատմության ընթացքը եւ հերոսական պայքարը պատկերող հետաքրքիր հյուսվածք է :

Ճակատամարտը տեղի է ունենում արեւածագին: Չինգիզ խանը պարտվում է: Փախուստի մատնվելով, նա գերի է թողնում «Թանգիր աստծո Ոսկե ձուլածոն»:

Բանաստեղծը խաչենում տարած հաղթանակը համարում է մոնղոլ-թաթարական արշավանքների պարտության գլխավոր պատճառը, միաժամանակ ընդգծելով, որ այս ասքը դաս է թե՛ այսօրվա եւ թե՛ գալիք սերունդների համար:

* * *

Պատմության քառուղիներում մեր ժողովուրդը զգալով հաղթանակների հաճույքը եւ կորստյան ցավը՝ եկել հասել է 21-րդ դար: Ու մեր գրողները միշտ էլ փորձել են իմաստավորելու այդ բարդ ընթացքը: Բանաստեղծուհի

Ն.ԱՎԱԳՅԱՆԸ անդրադարձել է դեռևս նոր արժարձուն-
 ներ պահանջող պրոբլեմին՝ գրելով «Կեսարապատուն»
 պոեմը: Ընտրելով երկխոսության ձևը, բանաստեղծու-
 հին դիմում է Յուլիոս Կեսարին, Կալիգուլային, Սուլլա-
 յին, Բրուտոսին եւ ապա՝ Արտաշեսին, Արշակ Բ-ին, Պա-
 պին, խարազանում դավաճանությունը, անմիաբանու-
 թյունը, դաժանությունը, անհեռանկարայնությունը, դր-
 վատում իմաստությունը, գթասրտությունը, ժողովրդա-
 սիրությունը: Այստեղ արժե ընդգծել ժողովրդական
 թելավոր խոսքերի օգտագործումը բանաստեղծուհու
 կողմից: Այսպես՝ «Չափից ավել կերածը մի օր պիտի
 չմարսվի» («Կալիգուլա»), «Դավաճանություն՝ հույսե-
 րի՝ դահիճ» («Եվ դու՛, Բրուտոս»), «Կարոտի ցավը չի
 բուժվում ոսկով», «Չարատելունը տրված է նրան, Իր ի
 վերուստը ով պահել գիտի», «Կորսվելիք շատից պահ-
 վող քիչն է լավ» («Արտաշես»), «Ուժեղին ատում, թույ-
 լերին չեն սիրում», «Եվ դառն է լինում մերժվածի հոգին՝
 Ինչպես կեղեւն է դառն լինում նռան» («Արտավազ»),
 «Գետին մոտեցած՝ նժույգ չեն փոխում», «Նյարդերի՛ց
 կախած... զանգ է հիշեցնում Պետականության կորստի
 տարին», «Նավում ափով չէ՛, որ պիտի փակես գոյա-
 ցած ճեղքը» («Արշակ Բ.»), «Մեր սխալները կոչում ենք
 չար բախտ» («Պապ»), «Կարթն ընկած ձկան թիրտալն
 է զուր...», «Մեծության չափը իշխանությամբ չէ՛ Իմաս-
 տությամբ է որոշվում հաճախ» («Աշոտ Երկաթ»), «Ով
 շատ վերելից նայի ամբոխին, Կդառնա զոհը նրա սուրբ
 ոխի» («Նավը ճանապարհին») եւ այլն եւ այլն:

«Կեսարապատուն» պոեմը Ն.Ավագյանի «Մատյան
 հառներգության» գրքի երրորդ գույնն ու ծփանքն է,

պատմության պոետական վերծանումի հաջող փորձը, հաջողված է նաեւ ժանրային առումով: Գաղափարական տեսանկյունից այն սերունդներին ուղղված իմաստուն խորհուրդ է.

*Որչափ էլ, արքայք, մարմնով անխախտ
Եվ հոգով լինեք ուժեղից ուժեղ,
Եթե ուզում եք, որ մնաք անհաղթ,
Թիկունք ունեցեք Սեսրոպ ու Մուշեղ...
Եվ՝ գործի այրեր կուռ ու համախունք,
Եվ՝ տիրոջ խոսքը լսող ժողովուրդ: ³⁹⁷*

Ն.Ավագյանը կոմպոզիցիոն շրջանակի ձեւով պոեմի առաջնամասում ստեղծած արցախական պատկերը վերջում դարձնում է կոչ.

*... Գալիք դարը գեթ որ լինի բարի,
Եվ ժողովածը էլ չտանք քամուն՝
Դա՛ս քաղենք կյանքից ի շահ մեր շահի՝
Ի՛ր իսկ զենքերով խփենք թշնամուն: ³⁹⁸*

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՀԱՅ ՊՊԵԶԻԱՅՈՒՄ

1915 թվականից հետո հայ գրականության մեջ սկիզբ առավ Հայոց մեծ ցեղասպանությունը դատապարտող պոեզիան: Հայ ժողովրդի անբուժելի ցավի ճիչը, կորուսյալ հայրենիքի կարոտը, Դեր Ջորի անապատում անթաղ մնացած հազարավոր մամիկների ու մանուկների վիշտը, վրեժի կանչը, հույսի ծփանքը պատկերվեցին մեր գրողների երկերում: Այդ պոեզիայում բիբլիական Արարատը խորհրդանշվեց որպես եղեռնական պատանդ: Հայ գրականության կանգուն սյուների՝ Յ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Վ. Թեքեյանի, Ն. Ջառյանի եւ մյուս մեծությունների սրտերում արյուն կաթեց: 19-րդ դարի վերջում Սուլթան Համիդի կազմակերպած կոտորածների առթիվ Սիամանթոն վրդդովված բացականչել էր. «Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քո ճակատիդ», Դ. Վարուժանը ափսոսանքով գրել էր. «Պետք է կերտեմ շիրիմներ, հուշարձանները կանգնեմ: Եվ մարմարին վրա երգերս տապանագիր քանդակեմ»:

Եվ թվացել է, թե դրանք հայոց ցավի վերջին ճիչերն ու մորմոքներն են: Սակայն աշխարհի խոշոր պետությունների խոշոր աչքերի առջեւ եւ նրանց թողտվությամբ Համիդի ժառանգորդ երիտթուրքերը օգտվելով առիթից, հաշվեհարդար տեսան մի ժողովրդի հետ, որ իր արարչական ուժով ու հնօրյա իմաստությամբ քարին թելեր էր տալիս, աստղերին՝ լեզու եւ Քրիստոսի

Ի հանգույն տանում իր խաչը՝ չիմանալով, որ տիգրանված ու մեսրոպացված իր երկիրը պիտի դառնար մի նոր Գողգոթա: Մեծ Լուռեցիին ժամանակից շուտ ճերմակած գլուխը խոնարհեց ավերված երկրի առջև՝ կրակ առավ «հայոց հրդեհի կարմիր բոցերից», կրծքի տակ վառեց «հայոց աշխարհի մեծ կերոնները... Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրուք, Բանդուրեք», հոգու աչքերով նրանց փեշերին տեսավ միլիոնավոր անմեղ զոհերին, որդիաբար ու հայրաբար աղոթեց ու կարդաց իր հոգեհանգիստը.

*Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր եւ անշահ...
Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կմնա:*

Վ. Տերյանը, որ մինչեւ Առաջին համաշխարհայինը սրտի ցավով բացականչել էր՝ «Մի՞թե վերջին պոետն են ես, Վերջին երգիչն իմ երկրի», Մեծ եղեռնից անմիջապես հետո գրեց ավերված ու հրկեզ հոգու երգը.

*Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,
Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր,
Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,
Երկիրն իմ անբախտ ու աղետավոր...*

Տաղանդավոր բանաստեղծի «Երկիր Նաիրի» շարքը ամբողջության մեջ հնչեց որպես տագնապ, որպես այրող կարոտ «արնաներկ» երկրի հանդեպ, անմարում սեր դեպի արքայական մեր լեզուն, լուսե հավատ՝ գալիքի վերաբերյալ:

Հայոց խոր վիշտը խոցեց Ավ. Իսահակյանի զգայուն սիրտը: Նա լացեց «ավեր հայրենիքի», «անհուն, անծիր տառապանքի, զարհուրանքի ու եղեռների» զոհ

Պարձածների վիշտը եւ տեսնելով, որ հայրենիքը չար ուժերի դեմ մնացել է մենակ, ցավով ընդհանրացրեց. «Իմ հայ ժողովուրդ, Քաջ հայրերիդ պես Կռվում ես եւ դու, Սակայն չգիտես՝ Ով է թշնամիդ...»:

Վարպետը խիստ քննադատեց եվրոպական պետությունների ապերախտությունն ու սառնասիրտ վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ:

Ծիշտ է նկատված, որ 20-րդ դարը սկսել է ոչ թե 1900 թ. հունվարի 1-ից, այլ 1914 թ. օգոստոսի 1-ից՝ Սարաեվոյի կրակոցից: Դա առավելագույնս վերաբերում է հայ ժողովրդին:

Հավատալով Ռուսաստանի օգնությամբ անդունդի եզրին գտնվող հայրենիքը փրկելու ակնկալիքներին՝ բազմահազար հայ կամավորականներ մեկնեցին ռազմաճակատ՝ ռուս զինվորների հետ համատեղ մարտնչելու Օսմանյան Թուրքիայի հրոսակների դեմ: Կամավորականների շարքերում էր 18-ամյա Ե. Չարենցը: Երկիր Նաիրիի փոխարեն զինվոր-բանաստեղծի առջև փռվեց արյունոտ Կապուտաչյա հայրենիքը՝ որպես զարհուրելի դժոխք, եւ ծնվեց նրա «Դանթեական առասպել» պոեմը: Չարենցը տեսավ իր մայր ժողովրդի բնաջնջումը, ու հոգու շերտերում կախվեց ինչուների շարքը.

*Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն,
Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր-
Կյանքը դարձնում նզովյալ զեհեն:*

Այս հարցունը հայ ժողովրդին անլուր տառապանքներ բերող պատերազմի դեմ է: «Դանթեական առասպելին» հաջորդում է Չարենցի «Աթիլա» պոեմը: Բանաստեղծի բացատրությամբ՝ «նրանում պատկերված է հոների արքա հզոր Աթիլը՝ որպես պատերազմի ահավոր սպառնալիք, որ կախված կմնա, քանի արդարությունը չի մտել հունի մեջ»: Հայոց մեծ ցեղասպանությունը տարբեր ժամանակներում եւ տարբեր առիթներով խոցել է Չարենցի սիրտը: Այդ են վկայում նրա «Ազգային երազը», «Ողջակիզվող կրակի» առաջին մասը, «Երկիր Նաիրի» վեպը, «Պատմության քառուղիներով», «Մահվան տեսիլ» պոեմները: Չարենցի երկվությունն ապրող սիրտը բզկտվում էր: 1918 թ. «Ողջակիզվող կրակի» մեջ նա դիմում է իր հայրենակիցներին.

*Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն,
Ախ, այս երգերը իմ կարմիր-
Իմ ավերակ, իմ ո՛րբ երկրում...*

Իսկ «Անկումների սարսափից» խորագիրը կրող բանաստեղծության մեջ նա հարցնում է.

*Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի,
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի:
Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բոլոր,
Եվ իմ մորմոքը վառել թախիծներով ահավոր:*

Չարենցը չէր կարող անտարբեր մնալ հայրենիքի կործանման սարսափի եւ անկման մահագույժի հանդեպ: Նրա հայացքի առաջ միշտ արյունաքամ ժողովուրդն ու հայրենիքն է եղել՝ ծվատված, բզկտված թուրքական դաժան արշավանքի հետեւանքով: Հայաս-

տանի ողբերգական կացությունը նրան հուզել է անգամ այն պահերին, երբ իրեն հայտարարել է հեղափոխության երգիչ: Այդ ապրումի բանաստեղծական խտացումը չե՞ն, արդյոք, 1920-21 թթ. ստեղծված «Տաղարանի» հետեւյալ տողերը.

*Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
Էլի ես որք ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում:*

Հայոց մեծ որդերգությունը ցավի ու վշտի տարբեր երանգներով արտացոլվել են Ն. Զարյանի, Գ. Մահարու, Գ. Սարյանի, Թ. Հուրյանի, Հ. Շիրազի, Պ. Սեւակի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի եւ ուրիշ անվանի բանաստեղծների ստեղծագործություններում: Սփյուռքահայ բանաստեղծներն օտար ավերում 1920-ական թթ. սկզբին դեռեւս փայփայուն էին մի օր Արեւմտյան Հայաստան վերադառնալու հույսը: Ռ. Որբերյանը Փարիզում վերադարձի այդ փափագը արտահայտել է այսպես.

*Կարոտակեզ զավակդ քեզ պիտի գա,
Չի մարեցավ դեռ հոգվույն խորն հույսին հուր,
Ու կը հավտա գարուններն ապագա...*

Վերադարձի այդ հույսն աստիճանաբար վերածվում է անհուն կարոտի: Կորուստը շատ մեծ է: Դա հողհայրենիի պապերի աճյունների, անցյալի եւ ապագայի կորուստն է: Լեւոն Ջավեն Սյուրմեյանը Ամերիկայում գրում է երգեր, որոնց քնարական հերոսը տնկում է խնձորի ծառ՝ ուշքն ու միտքը ավերված հայրենիքում:

Նա աղոթում է առ Աստված եւ շշնջում. «Մեռելներու իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի»:

Սփյուռքի հայ բանաստեղծը գիտակցում էր, որ օտարի հողի վրա ոչ անցյալ ունի եւ ոչ էլ ապագա: Նա մի կողմից իր հոգու աշխարհում վերստեղծում է գերված երկրի պատկերը, մյուս կողմից՝ սրտի ափերով շոյում է Արագածի լանջերին փրկված փոքրիկ Հայաստանը: Մուշեղ Իշխանը այդ զգացումն արտահայտել է հետեւյալ տողերում.

*Լիբանանի սա հեռավոր լեռներեն
Ողջույն ձեզի, Հայաստանի բանվորներ,
Դուք դեռ հազիվ անցած արյան ծովերեն,
Նոր ձեւ ու կյանք կուտաք երկրին մեր ավեր:*

Գնալով Մեծ եղեռնի թեման հայ բանաստեղծների երգերում պատկերվում է որպես Հայ Դատի պահանջ, որը խարսխված է հայրենի հողին, ինչպես ներկայացնում է Ջահրատը.

*Այս հողը հողեղեն ամենեն կապույտն է,
Կապույտը երկնքիդ ծովերուդ նման է,
Հերկե հոգիս հերկե- այս հողը կապույտ է,
Հող չէ - քու կյանքդ է...*

Հայ պոետների մեջ Մեծ եղեռնի թեմայի ամբողջական արծարծմամբ առանձնապես աչքի ընկան Զ. Շիրազը եւ Պ. Սեւակը:

Հայ ժողովրդի բախտի ոլորանները, Հայաստանի գերված սարերն ու գետերը, աշխարհով մեկ սփռված հայերի ճակատագիրը, հայ մարդու պահանջատիրությունը նորովի հնչեցին Զ. Շիրազի պոեզիայում:

Ազգային խոր ցավը մինչեւ իր կյանքի վերջը ուղեկցեց մեծ բանաստեղծին: Շիրազը հետեւելով Ե. Չարենցին՝ նրա օրինակով ստեղծեց մի նոր Դանթեական: Պոեմի բնաբան ընտրելով «Հայերի դատը մարդկության դատն է» արտահայտությունը՝ Շիրազը դժոխքի պատկերը ներկայացրեց հանձին եղեռնված հայոց աշխարհի: Դանթեին դիմելով՝ բանաստեղծը սրտածնլիկ էպիզոդների օգնությամբ ցույց տվեց մի կողմից անմեղ հայերի անլուր տառապանքները, մյուս կողմից էլ ցասունով մերկացրեց թուրքերի գազանություններն ու անմարդկային արարքները մեր արդարադատ ժողովրդի հանդեպ, որոնց պատճառով Արեւմտահայաստանը դարձել էր «դժոխքի դժոխքը դժխեմ»:

Անդրադառնալով կորուսյալ հայրենիքի թեմային Շիրազը դատապարտում է ցեղասպանությունը եւ կրծքի տակ օրորում կորուսյալ մեր երկիրը հետ վերադարձնելու հույսը: Բանաստեղծը խենթորեն ձուլվում է Հայաստանին, Հայաստանն էլ՝ իր երգիչ որդուն: Ու թվում է, թե հայոց գերված սարերն ու գետերը ոչ թե Արաքսի այն կողմն են, այլ Շիրազի հոգում, այստեղից էլ՝ մեր ազգային խորհրդանիշ Մասիսի կերպարի բազմակողմանի դրսևորումը նրա ստեղծագործություններում: Արարատի հանդեպ ունեցած սերը Շիրազը ներկայացնում է որպես մոր կաթի հետ իր արյանն անցած ավիշ: Բանաստեղծը նայելով Մասիսին՝ մռնչում է առյուծի պես եւ ծածանում նրա ազատագրման փափագը.

*Նա է կարոտն իմ անսահման՝ քարերն ի վեր, ի վեր Մասիս,
Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան՝ սարերն ի վեր, ի վեր Մասիս...*

Շիրազի պոեզիայում շունչ են առնում Սիսն ու Մասիսը, Անին ու Վանը, Եփրատն ու Տիգրիսը, Աղթամարն ու Նարեկը, մի ամբողջ կորուսյալ հայրենիք: Զգայուն ողբասաց չէ բանաստեղծը, նա հայրենիքը գերությունից փրկելու կոչն է հնչեցնում:

*Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հազարաթեւ,
Ա՛խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,
Անցնեմ դարեր ոտք չդրած հող ու հանդով իմ պապերի,
Հայոց խոփի համբույրի տակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,
Կրծքիս սեղմեմ բերդերս ավեր, բուերի տեղ սոխակ դառնամ,
Որպես երգ ու վարդի քաղաք տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:*

Հայոց Մեծ եղեռնի թեման իր նոր, յուրահատուկ արտացոլումը գտավ Պ. Սեւակի «Եռածայն պատարագ» եւ «Անլռելի զանգակատուն» պոեմներում: Բանաստեղծը «Զանգակատունը» նվիրեց հայ ժողովրդի համար խորհրդանիշ դարձած Կոմիտասի կյանքին ու նրա կատարած գործի պատմական ու արդիական նշանակությունը: Պ. Սեւակն իր անզուգական տաղանդի հզոր ուժով Կոմիտասի ողբերգական ճակատագրի մեջ խտացրեց հայ ժողովրդի ճակատագիրը եւ ցեղասպանությանը հայտարարեց՝ ոչ: Բանաստեղծը բացեց հայկական ոգու առեղծվածը՝ ընդգծելով հայ ժողովրդի անմահության գաղափարը:

*Դարեր ի վեր վառում են մեզ
Այրում են մեզ,
Դարձնում մոխիր
Հնոցի մեջ խուլ չարության,
Խարույկի մեջ քեն ու ոխի,
Ու տաք մոխիրն անգամ թռչո՛ւմ...*

*Սակայն ոգին մեր հայության
Թե այրվեց էլ, ո՛չ, չի՛ կորչում,
Ելք է ճարում նոր հայության:*

Երիցս ճշմարիտ էր Մեծն Սեւակը: Հայ ժողովրդի նոր հարության փառապանծ մի էջ է Ադրբեջանի դեմ մղվող ազատագրական պայքարը՝ Արցախյան շարժումը: Երիտթուրքերի օրինակով բաղիրովները, էլչիբեյները, ալիեւները հայ ժողովրդի հանդեպ կազմակերպեցին Սուլթան Համիդի եւ նրա ժառանգորդների արյան խրախճանք Սումգայիթում, Բաքվում, Գետաշենում, Մարաղայում եւ այլ բնակավայրերում: Գորբաչովի ու նրա արբանյակների թողտվությամբ ձգտեցին Արցախը դարձնել հայկական գերեզմանոց, սակայն պատմական դառն փորձը հուշեց մեր ժողովրդին, որ 1915 թվականը չպետք է կրկնվի: Ուտքի ելավ արցախահայությունը, արթնացավ հայկական ավարայրված ու սարդարապատված ոգին, դողանջեց համայն հայության միասնության հիմնը, թեւաբախեց մարտական երգը: Բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը, Հ. Բեգլարյանը, Ն. Ավագյանը եւ ուրիշներ գրեցին պոեմներ, ասքեր, բալլադներ: Անդրանիկի ու Նժդեհի շառավիղները հանդիսացող հայ զինվորների անունից արցախցի պոետ-ազատամարտիկ Ռ. Եսայանը գրեց.

*Հայոց երկրի շուրթը պրկել որպես աղեղ՝
Ժամանակը խոսքն է նետի պես արձակում,
Որ սուրալով տարածքներում տիեզերքի՝
Չի գտնվում ծով լայնության մեջ խղճի մի կետ,
Որտեղ խրվի ցավամոռաց ու երերա.
«Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»:*

Իսկ բանաստեղծ Կոմիտաս Յակոբյանը Ջրաբերդի բարձունքներում հայրենիքի երգը շուրթերին՝ իր գլուխը դրեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետության լինելության զոհասեղանին, որ աշխարհով մեկ սփռված հայությունը հավերժության մեջ հնչեցնի դեռեւս մեծ ողբերգության օրերին հանճարեղ Թումանյանի ցավի ու արցունքի միջից ծնված լավատեսական այս աղոթքը.

*Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Յազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարարտի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անծօքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Յրգո՛ր հայրենիք...*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՈՉԻՆՉ ՉԻ ՍՈՌԱՑՎԻ, ՈՉ ՈՔ ՉԻ ՍՈՌԱՑՎԻ

Մեծն Պ. ՄԵՎԱԿԸ 1948 թ. հրատարակած առաջին ժողովածուն վերնագրեց «Անմահները հրամայում են»։ Բանաստեղծը անմահներ էր համարում նրանց, ովքեր Յայրենական մեծ պատերազմի տարիներին իրենց կյանքի գնով մարտնչեցին ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ եւ մարդկությունը փրկեցին ստրկացման սարսափելի վտանգից, դառնալով լուսատու աստղեր գալիք սերունդների ճանապարհին։ Խոսքը պատերազմական դաշտից տուն չվերադարձած քաջերի մասին է,

րում արյան գնով «աղետը կանխվեց, ու վտանգը ան-
ցավ», «որոնց շրթից... գալիքն է խոսում»: Եվ ոչ միայն
այդ: Նրանք իրենց մահով ծուլվել են սերունդների հա-
վերժական երթին, որպես ժամանակակից եւ խորհրդա-
տու.

*Զգա շունչը դարի երակներով, արյամբ,
Մեր արյան պես եղիր վառ ու անմեռ,
Հիշիր, որ միասին մենք փրկել ենք համայն
Աշխարհի բախտը եւ կփրկենք դեռ:
(«Անմահները հրամայում են»):*

Իսկ մինչեւ այդ, 1945-ի մայիսի 9-ին անմահ Վարպե-
տը փառաբանելով Մեծ հաղթանակը, չի մոռանում
նրանց, ովքեր նահատակվեցին հեռավոր ափերում հա-
նուն Հայոց արեւի հավերժացման: Այդ ճշմարտության
գիտակցումով բանաստեղծի քնարական հերոսը՝ զոհ-
վածի հայրը, առաջարկում է խմել նաեւ «իր որդու
հանգստյան համար»: Եվ ապրողները արձագանքում
են երախտագիտությամբ.

*Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ,
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում գինին սուրբ հացի վրա:
(«Մեծ հաղթանակի օրը»):*

Այստեղ գինին ու հացը դառնում են սուրբ զգացումի
մետաֆորներ, ասել է թե՛ կյանքի հավերժական ընթաց-
քի առողջ երակներից մեկը՝ անցյալը ապագային

կամրջող հոգու պարտքը: Այդպես էլ տեղի ունեցավ մե-
 րօրյա ընթացքի մեջ: Արցախյան ազգային-ազատագ-
 րական պայքարը փառքով պսակվեց առաջին հերթին
 տասնյակ հազարավոր ազատամարտիկների անձնու-
 րացության շնորհիվ: Արցախից մինչև Ղարաբաղ, Ղարա-
 ձախաստանից մինչև Սփյուռքի տարբեր գաղթօջախ-
 ներ սկիզբ է առել մի սրբազնագույն ավանդույթ՝ հար-
 սանյաց հանդեսներում լինի, թե տխուր ծիսակատա-
 րությունների ժամանակ, բոլորը առաջին հերթին ոտքի
 վրա հիշում են սրբացած զոհյալներին, բաժակներ
 խփում, բյուրեղյա զնգոցների մեջ ասես լսելով նրանց
 անմարում ձայնը՝ ապրելու, արարելու պայքարը շա-
 րունակելու, սերունդների ազատ կյանքը ապահովելու
 խորհրդով: Արցախյան պատերազմի ամենաթեժ օրե-
 րից սկսած հյուսվել է հյուսվում է նահատակների ան-
 մահության երգը: Չկա մի բանաստեղծ, որ արտահայ-
 տած չլինի ժողովրդի անհուն վիշտն ու կարոտը նրա
 բազում նահատակների հանդեպ: Եվ դա բնական է:
 Չայ ժողովրդի դարավոր պատմությունը, հիրավի, մա-
 քառումների եւ ակնկալությունների, կորուստների եւ
 վերածնվելու հոլովում է: Անմահ Եղիշեի «Մահ իմա-
 ցեալ՝ անմահութիւն է» դասը հայ ժողովրդի կողմից ըն-
 դունվել է որպես կենսափիլիսոփայություն: Եվ այն որ-
 պես աշխարհայեցողություն, կրկին ծիածանվեց ար-
 ցախյան ազգային ազատագրական պայքարի տարի-
 ներին: Դա ոչ թե կոչ է, այլ համոզմունք, իսկ համոզ-
 մունքը դառնում է պայքարի սրբազնագույն պատգամ,
 հաղթանակի ավիշ: Բացի այդ «Մահ իմացեալ՝ անմա-
 հութիւն է» համոզմունքը դառնում է նաեւ թեւածող հո-
 գի՝ կապված եւ նահատակված յուրաքանչյուր անհատ

հերոսի անվանը եւ ընդհանրության մեջ՝ դարաշրջանի զոհյալների աստղաբույլի հետ: Հայ ժողովրդի նորօրյա նահատակները երգի փոխվեցին որպես երախտագիտության արտահայտություն, սիրո եւ հավատի տուրք: Ջոհյալ քաջերին նվիրվեցին բանաստեղծություններ, բալլադներ, լեգենդներ, պոեմեր, չափածո ակնարկներ: Այդ ստեղծագործությունների կառուցվածքային առանձնահատկությունները ակունքված են ռեալիստական հենքից եւ բանաստեղծական երեւակայության արտահայտամիջոցներից: Գեղարվեստական այդ հյուսվածքների հերոսներ են դարձել եւ ականավոր զոհված զորապետները, եւ շարքայիները, որոնք միասին հանդիսանում են ժողովրդի խիզախության, խղճի, հայրենասիրության, կենսասիրության խորհրդանիշեր եւ հավերժական ուղեկիցներ ու դրոշակակիրներ:

1992 թ. Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ ստեղծեց իր ռեքվիեմներից մեկը՝ «Գանձասարի վանքի մորմոքը» խորագրով: Ռեալիստական գույներով ներկայացնելով Արցախի «արյունով փակված դաշտերը, ձորերը, լեռները», սրտի մորմոքով դիմում է.

*Որդիք, իմ քաջ որդիք, դուք մինչեւ ե՞րբ մեռնեք,
Մեղք են ձեր մայրերը, ա՛խ, մե՞ղք եք դուք:*

Բանաստեղծուհին պատմական էքսկուրս կատարելով, հիշեցնում է մեր նախահայրերի մասին, որոնք «յոթ հարյուր տարի աղոթեցին լույսին, մինչեւ խավարն էր անվերջ վխտում չորս դին»: Յոթ տարի արցախցիները կանգնել են «չարերի դեմ», «բայց չեն տեսել այսքան սադրանք ու սուտ»: Աշխարհը «առավել մութ է դարձել», ոսոխը «նենգ ու նեռ»: Ս. Կապուտիկյանը

Վարմացած է դարի խառնիշփոթ ընթացքից, նա տեսնում է, «թե ինչպես խաչապաշտն անգամ» պիղծ նշան է բռնել արցախցու «կրծքի խաչին», նա մայրական ցասումով ընդգծում է. «Էլ ո՞ր աստծուն հղեն ճիչը իմ դողանջի»:

Ցավի ճիչը դառնում է ավստսանքի զգացում, բանաստեղծուհին ասես մեղանշում է այն բանի համար, որ չի կարողանում օգնել Արցախս իր հարազատներին, իր զավակներին.

*Մեղա՛, քնած որդիք, մեղա՛, մայրեր անքուն,
Մեղա՛, որբեր, հարսներ իմ բնավեր,
Դուք ամեն ինչ արիք, որ ինձ պահեք կանգուն,
Իսկ ես, չկարողացա՛ ես ձեզ պահել...*

Արցախյան պատերազմը տեղի ունեցավ Արցախ աշխարհում, սակայն դա հայ ժողովրդի միասնական ուժերով մղված ճակատամարտ էր, որը դեռ չի ավարտվել, շարունակվում է աշխարհի չար ուժերի մեղքով: Արցախյան ճակատամարտին իրենց նվիրումը բերեցին բանվորն ու գյուղացին, ուսուցիչն ու ինժեները, բանաստեղծն ու գիտնականը եւ այլոք: 1992 թ. Մարտակերտի ազատագրական մարտերից մեկում զոհվեց բանաստեղծ Սամվել Շահմուրադյանը: Նրա մի ձեռքին ավտոմատն էր, մյուսում՝ գրիչը: Ավստսանքի մի ալիք անցավ նրա ստեղծագործող գրչեղբայրների սրտերով, Ս. Կապուտիկյանը հյուսեց հիշատակի սրտառուչ երգը.

*Լավերն են գնում, լավագույնները,
Իսկ դու լավերից լավագույնն էիր:
Ու քո գնալով պակասեց սերը,*

Պակասեց լավը, պակասեց բարին,
Եվ քո ի՞նչ տեղն էր մահերն ու մարտը,
Քոնը՝ գրիչն էր, լույս ու արարում,

Տեսնես գիտե՞ր քեզ սպանող մարդը,
Որ դու, դու մարդուն շա՛տ էիր սիրում...

(«Սամվել Շահմուրադյան»)

Ճակատագրի դառնության միջով Ռ.ԴԱՎՈՅԱՆԸ իր հոգու մեջ առած նաեւ Արցախի ցավը, ստեղծեց հայտնի «Ռեքվիեմը» եւ տարիներ հետո արցախյան պատերազմի ժամանակ զոհյալ ազատամարտիկների հրամանով նրան գումարեց երկրորդ մասը: Այդ կապակցությամբ Դավոյանը գրել է. «Այս «Ռեքվիեմը» ողջերի համար է: Մարդը որպես խնդություն, որպես ծիծաղ է լույս աշխարհ գալիս, եւ ամենագորավոր ծիծաղն անգամ, ամեն վայրկյան քսվելով կյանքի չիչաքարին, փոքրանում, թուլանում եւ ի վերջո ոչնչանում-վերանում է: Մեր երկրով անցած բոլոր պատերազմների զոհերը, հայոց ցեղասպանության, խորհրդային մեծամոլական քաղաքականության բոլոր ֆիզիկական բնաջնջումները կենդանի մարդու ամենօրյա հոգեւոր եղեռնի շարունակությունն ու նյութական արտահայտությունն են: Այս ձեւակերպումը ես արել եմ սրանից երեսուն տարի առաջ, 1967 թ. օտար կինեմատոգրաֆիստ լրագրողների համար, որոնք հատ ու կենտ թափանցում էին պատերից ներս եւ այլախոհներ էին փնտրում գողունի: Դա արվեց «Ռեքվիեմի» դասական պատկերացումից իմ շեղումն ազատագրելու համար» (Ռ. Դավոյան «Ռեքվիեմ», Երեւանի համալսարանի հրատ), 1997 թ., էջ 3:

Ռ. Դավոյանի նորոյա մոտեցումը փրկության ելքին, փոխված է: Ողբերգությունը արդեն դառնում է ճիչ: «Հայոց հազարամյա վերքից» չխարխափելով, բանաստեղծը կրկին նժարի վրա է դնում հազարամյա մեր վերքի կսկիծը, խոնարհվում մարտիրոսվածների առջեւ, որոնք պատկերվում են որպէս ապրողների հոգու եւ երազանքի շարունակություն.

*Նրանք կենդանի մեր մարմինն էին,
Մեր հասկը եւ կամ` ցողունը շքեղ,
Մեզնից չպոկված` մտան գերեզման,-
Մենք նրանց վրա պատարագ չարինք,
Եվ չերգեցինք կորստյան երգեր,
Եվ ծեսը չարինք
Մեր հոգիների անմահ ներսուզման:*

Ռ. Դավոյանը տառապում է իմաստուն ցավով եւ այդ ցավից էլ ծնվում է նրա պայքարի երգը, որ ներառում է մարդկային կենսափիլիսոփայությունը .

*Մարդկանցով որքան որ հողն է ծածկված,
Այդքան էլ մարդիկ ծածկված են հողով:*

Եվ այդ հողով ծածկված մարդկանց ոգիներն են, որ ոգեկոչում են ապրողներին.

*Առաջին վիշտը աշխարհի վրա,
Չէր կարող մենակ, ուզում էր ընկեր,
Նրա մեջ վշտի տենչանքն էր եռում,-
Վշտերի հոտը քշում ենք հիմի
Դեպի անանուն, անսահման հեռուն:*

(«Աշխարհը լիքն է»)

Մեկ-մեկ թվում է, թե մենք հայերս, սիրում ենք մարդկանց, ազգերին, աշխարհը, իսկ նրանք անտարբեր են մեր ճակատագրի հանդեպ: Մեկ-մեկ խորհում ենք, որ մենք էլ աշխարհի հանդեպ լինենք անտարբեր, չար: Խորհում ենք, բայց չի ստացվում, որովհետեւ մարդկանց հանդեպ անտարբեր մնալը անհարիր է մեր ազգային բնավորությանը, որովհետեւ տառապած ժողովուրդը ուրիշի տառապանքը չի ցանկանա: Հնարավոր է, արդյոք, որ հայը հրաժարվի ավանդական իր բնավորությունից, արարելու եւ գիրը սիրելու իր երազանքից: Ո՛չ: Ահա արարման կարողությամբ ու ստեղծագործելու երազանքով հայը ավելի քան մեկ ու կես դար կառուցեց Բաքուն, այն մղեց քաղաքակրթության մայրուղին եւ վերջում ազերի-թուրքը սուր բարձրացրեց նրա դեմ, ոչ թե մի ուրիշ տեղ՝ մարտադաշտում, այլ հենց իր համար կառուցած մայրաքաղաքում: Բաքուն կառուցողների շարքերում էր նաեւ Արցախի Ղուլյան գերդաստանը, որի ժառանգներից մեկը՝ կապուտաչյա Աշոտը, պետք է համոզվի, որ ազերի-թուրքի հետ կռվի մեջ պետք է խոսել զենքով: Եվ Բաքվից Արցախ բռնագաղթված Ղուլյանների գերդաստանից հառնեց այն կորյունը, որի անունը պետք է մտնի մեր նորոյա հերոսամարտի մատյանը, դառնա դաս, աստղալույս սերունդների ճանապարհին: Հայ բոլոր բանաստեղծները, առանձնապես Արցախում ապրող եւ ստեղծագործող երգիչները ստեղծել են երգերի մի մեծ շարք, որի կենտրոնում ԱշոտՂուլյանն է՝ Բեկորը, որ ոչ միայն խորիրդանշում է արկի բեկորը, այլեւ դեպի հայրենի Արցախ ունեցած իր մեծ սիրտը:

Ընթերցում ես Վ. Հակոբյանի «Բեկոր լույսի», «1992, ինը մայիսի», Գ.Գաբրիելյանի, Հ. Բեգլարյանի, Ս. Խանյանի, Ռ. Եսայանի, Դ. Միքայելյանի եւ ուրիշ այլ բանաստեղծների ստեղծագործությունները՝ ձոնված Բեկորի կյանքին եւ անմահությանը, սիրտդ պարուրվում է ե՛ւ կարոտի, ե՛ւ հպարտության զգացումով: Թշնամու համար սարսափ դարձած Բեկորը զոհվեց 1992-ին: Բայց մի նոր սկիզբ առավ հերոսի կյանքը: Ինչպես Վ. Հակոբյանն է հաստատում՝ Բեկորի հետքից ասես լեռն ի վեր սահում էր նավը, ասես «արեւը հրանոթի փող է», ասես «Լեռը բեկորվում...» էր: Հազար ափսոս, որ էլ «չի քաշվելու մատը ձգանից», բյուր-հազար ափսոս, որ.

*Ծարավ շուրթերը կպել են հողին,-
Եվ պար են բռնել հրեշտակները...*

Սակայն այդ բազմաշուրթ ափսոսանքի հենքի վրա հառնում է բանաստեղծի հավատը՝ ծնված Բեկորի հավիտյան ճառագող սրտից.

*Ջարկս իջնում է Մհերի ժայռին,-
Եվ ելնելու է՝ ով պիտի ելնի,
Եվ հողն Արցախս աղոտվում է լուռ,
Եվ ես թեւեր եմ ձեւում իմ վշտից,
Եվ բերդս տուն է՝ Տաճար Աստծու:
(«Բեկոր լույսի»):*

Վ. Հակոբյանը սրտի ցավով է հիշում եւ Արցախի մի ուրիշ կորյունի՝ Վլադիմիր Բալայանին: Բանաստեղծը ե՛ւ Վլադիմիրին, ե՛ւ մյուս նահատակներին համարում է գալիք ճամփաների փարոսներ, ընդգծում, որ նրանց

Իրոգեշնչումով «Վրնջում են միանգամայն հազար ձիեր...»: Եվ ոչ միայն այդ.

*Առավոտը իր ցողունի վրա դողաց,-
Քար ու կողակ խաչենն ի վեր հուր են տանում,
Վերքից կաթած ցավը վանքի քարին ծլեց,
Ճաքած սիրտը նռան բոց է աշնան կրծքին...
Սուրբ Սոսեի ձեռքը զանգի թելն է քաշում...
(«Ջրաբերդ»)*

Վ.Յակոբյանի «Մենարան» ժողովածուի (Երեւան 1996) առաջաբանում ակադեմիկոս Ս.Սարինյանը ընդգծել է. «Անամպ էր Վարդանի հոգու երկինքը մինչեւ 1988-ի փետրվարը: Վերահաս իրադարձությունները այլ գույներով են ներկում Արցախի բնանկարը: Մնում է սերը, որ նախաստեղծ է, բնության եւ կարոտի արծագանքները ածանցվում են Արցախ-Պատմություն-Ցավ երրորդության հոգեբանական տազնապներին: Բանաստեղծի հոգու վրա ծանրանում է օրերի մղձավանջը, իրերի շարժումը փոխակերպվում է անկերպարան քառսի... Այլ ղողանջներ են հղում Գանձասարի եւ Ամարասի զանգերը, հողի հիշողությունից վերընծյուղվում է Յայկ Նահապետի ձգված աղեղը եւ պատմությունը մեր ազգային օրացույցի վրա դրոշմվում է Ավարայրի եւ Սարդարապատի զինանշանը...»: Անվանի գրականագետը, որի սիրտը Արցախա հողից ու ջրից է հունցված, ուսանելի մատնացույց է անում այն մղձավանջը, տագնապը, որ ապրեց Արցախի բանաստեղծը՝ մասնակիցը եւ ականատեսը հայ ժողովրդի ազգային ազատագրական թեժ պայքարի:

1993-ի սկզբին, չարաբաստիկ մի օր միայն Ստեփանակերտ քաղաքից ժողովուրդը չորս տասնյակ զոհյալների հանձնեց հողին: Իսկ եւ իսկ մղձվանջ էր դա: Սակայն սուրբ նահատակներին հուղարկավորելով, ապրողների վիշտը չէր թաղվում հողում: Ընդհակառակը հարազատի, արյունակցի, հայրենակցի մի չքնաղ ցավ ծուլվում էր նրա արյանը, երբ չորս բոլոր տեսնում էր սեւաշոր երիտասարդ որբեւայրի կանանց, որբ երեխաների, սգացող ծնողների, քրոջ, եղբոր մոլորված քայլերը, արցունքոտ աչքերը, ժպտացող հայացքը... Էլ ի՞նչ բանաստեղծ, եթե նա շրջանցեր համաժողովրդական այս վիշտը, չասեր ցավի եւ սփոփանքի իր խոսքը: Ցավի եւ սփոփանքի մի ինքնատիպ հյուսվածք հանդիսացավ Վ. Հակոբյանի «Գողգոթա» քնարական պոեմը:

Պոեմի կառուցվածքը, կատարումը, խոսքաշարը, հոգեբանական բացահայտումները շաղախված են այրող արցունքով, համեմված ժողովրդական հավերժացած սգի խորքով, ապրելու պահանջով, թռչելու ծարավով: Բանաստեղծի մտահղացումները անմիջականության այնպիսի թրթիռներ են դարձել քնարական հերոսի սրտում եւ շրթին, որ ընթերցողը իրեն զգում է ցավի հորձանուտի մեջ՝ ձեռքը կարկառած դեպի Վերինն ու Արեւը:

Բանաստեղծը հենվելով ժողովրդական սգո երգերի թրթիռներին, ունկնդրելով սգվոր կանանց մղկտոցները, արտահայտում է եւ իր բողոքը աշխարհի չարութան դեմ: Պոեմի հերոսուհին՝ Այրին, «Բոբիկ ոտքերի արյան ցուլքերը թողնելով քարերին, իսկ փեշը լացող տղեկի բռան մեջ, հասնում է թումբը հեռավոր...»: Հենց այս հողաթմբից էլ բանաստեղծը լսելի է դարձնում կյանքի ընկերներին կորցրած այրիների մորմոքը.

Դու ի՞նչ իրավունք ունեիր մեռնելու,
Հողի տակ դու ի՞նչ գործ ունես անելու,
ո՞վ պիտի ինձ համբուրի, սիրի, գուրգուրի,
չապրեցիր էլ - որ երեխադ ծնվի, տեսնես
տղա՞ է, աղջի՞կ է,
Ես նրան հո իմ տնից չե՞մ բերել,
Ի՞նչ էիր խոստացել, մոռացել ես ամեն ինչ,
ուրացել ես ամեն ինչ, դավաճան ես դու...

Բանաստեղծական թարմ հնարանքները շարունակվում են մերթ առասպելական ավանդությունների ծփանքով, մերթ միջնադարյան աղոթքների շշուկներով, մերթ առօրյա վշտի օրագրային կրակներով: Այրու լացը մոլորյալ եւ անօգնական կնոջ բողոք չէ, այլ հավատարիմ Սիրո կորստի ցավ: Սերը ինչքան խորն է, կորուստը անքան մեծ է, լացը՝ մորմոքուն, կարոտը՝ բորբոք: Այրին հողաթմբի մոտ իր վճիռն է հայտնում.

Ես քեզ կհանեն շիրիմից,
Ես չեմ թողնի քեզ այստեղ,
Ես կլիզեմ քո վերքերը,
Ես քո ձեռքը կդնեմ իմ
սրտի վրա
եւ դու կարթնանաս, կելնես, կժպտաս
ինձ համար:

Հեթանոս հայերի հավատալիքների թելադրանքով Այրին պատրաստ է արալեզի հանգույն բուժել սիրեցյալի վերքը: Եվ դա անում է ոչ այնքան իր անձնական երջանկությանը թելեր տալու համար, այլ Սիրո հիշատակի՝ տղայի համար: Պատկերային այս հյուսվածքի

մեջ կինն ու մայրը հառնում են ցավից, եւ հաղթում է մայրը.

Ինձ համար

չեմ ասում, տղայիդ համար եմ ասում:

Ցավի ալեկոծումը շարունակվում է:

Սգացող այրին կնոջ-մոր կերպարից հառնում է, ժողովրդի եւ հայրենիքի դեմ առ դեմ կանգնում աստվածային էությանը, քաղաքացու, զինվորի կերպարով.

Ինձ համար չեմ ասում - մայրիկիդ համար եմ ասում,

Ինձ համար չեմ ասում - սարերիդ համար եմ ասում,

ասում եմ թշնամու համար - թշնամուդ համար եմ ասում:

Վ. Հակոբյանի գրիչը, հիրավի, այստեղ փոխվում է գեղանկարչի վրձինի, որ կտավի վրա ստեղծում է սիրող անուսնու, սրտառուչ հոր, հոգատար զավակի, հայրենասեր դուրսագնի եւ նրա ավանդները ցաված սրտի մեջ առնող այրիացած կնոջ կերպարը: Հակոբյանը հերոսուհու քնարական զեղումների միջոցով մեծարում է եւ Այրուն, եւ Ջոհվածին: Այստեղ է, որ կարելի է ողջունել բանաստեղծին, նման դեպքում է, որ ընդգծվում է ստեղծագործողի վառ երեւակայությունը:

Պոեմում զգացվում է նաեւ բանաստեղծի եւ կենսափորձը, եւ դիտարկումները, եւ ստեղծագործական կուտակումները: Այդ են վկայում հերոսների հոգեբանության արժարժումները եւ բանաստեղծի պատկերավոր արտահայտամիջոցները.

- Աստված իմ...

Մոր ցավից երեխան սկսում է լաց լինել...

Եվ ոչ միայն այդ: Ձոհյալը՝ պոեմի հերոս Վարուժանը, գալիս է ընդառաջ: Նահատակների երազանքների եւ ապրողների պարտականությունների բանաստեղծական մարնավորման հիանալի օրինակ: Տեսիլքային Վարուժի շրթերից արտաբերվող խոսքը բերենք.

*պիտի չմեռնեի,
քանի որ միշտ հիշում եմ, որ սպասում ես,
քանի որ մենք միացած այնքան,
որ մեկն ենք,
եւ ընդամենը իմ մասն էր գնդակված,
քո մասը հեռու էր գնդակվելուց,
եւ
կես մասով ոչ որ չի մեռնում...*

Վեհանձնության ժողովրդածին զարկերակը Վարուժանահատակի գեղեցիկ հոգու մի երանգն է կազմում: Այստեղ եւս Վ. Հակոբյանը շահել է: Շահել է ոչ այնքան իր համար, այլ ընթերցողի, որովհետեւ ընթերցողները վաղուց են հոգնել չափածո ճառերից: Վ. Հակոբյանի այս պոեմը ժխտում է ամեն մի ընդգծված, ոչ ռեալական միտում: Բանաստեղծը վաղուց է հանդգնել, որ արվեստի ուժը ճշմարտացիության մեջ է: Այրին վառված սրտով Վարուժ-նահատակին հաղորդում է իր կսկիծը, «Դավաճան ես դու»: Վարուժի ձայնը Այրու հոգում ելել էջում է.

*Բայց դու ինձ դավաճան մի ասա,
որ սիրտդ չքարանա
ու ամբողջովին հողին գումարվեն,
քարը ուշ է հող դառնում, քարը չի մեռնում:*

Պոենի դեպքերը տեղի են ուենում Ացախում եւ պտտվում արցախցու ճակատագրի շուրջ՝ կոնկրետ Ստեփանակերտում: Իրականի եւ երեւակայականի համաձուլլ ցոցադրումով բանաստեղծը ընթերցողներին է հանձնում մի կտակ, որ ապրեցնելու ուժ ունի: Վարուժի առաջին համբույրը Այրու աչքերին թրթռում է «Ստեփանակերտի մի անշուք փողոցում», եւ ցավից խշշացող ականջներում հնչում է նրա ծայնը. «թող նա, ով կհանդիպի քեզ, ավելի շատ սիրի քո ազատությունը»: Իսկ Այրին ցավաբեր օրերի միջից Վարուժին խոստովանում է.

*Երեկ երագիս մեջ գնում էի մի տեղ
չգիտեմ որտեղ,
մի սիրուն տղա (իմ դասընկերներից).
ինձ ժպտում է, ես էլ իրեն եմ ժպտում՝
երեխայի ձեռքից բռնած,
հետո կարծրում եմ ժպիտներիս համար
(քո մեռնելուց հետո ես չեմ ժպտացել դեռ),
դու գալիս ես, ասում՝ ժպտա, ժպտա, ժպտա,
այդպես, որ ժպտալը չմոռանաս:*

Կոմպոզիցիոն տարբեր միջոցների եւ ձեւերի շղթան շարունակաբար հոգեբանական նոր շերտեր է բացում: Մեջտեղ է բերվում օրագրային հենքը՝ 93-ի մայիսի 8-ից սկսած:

Պոենի հերոսուհին՝ Այրին, ներկայացնում է իր ցավը՝ սիրող կնոջ, զավակի մոր, աշխարհին սիրտը բացող արցախուհու անունից: Բայց նա զրուցում է իր նահատակ դյուցազնի հետ, թող մարդկությունը լսի եւ ուրրի չարի ձեռքերը, արդարությունը դարձնի դրոշ,

խիղճը՝ լույս: Այրու օրագրում կարդում ենք. «Երբ ասացին՝ Վարուժը չկա, չհավատացի»: Դիմում է Վարուժին. «Եթե սիրում ես ինձ, բա ինչո՞ւ սպանվեցիր»: Եվ երբ Այրին դժգոհության իր կծիկն է բացում, Աստված վերելից հուշում է. «Դա էլ շատ սիրելուց ես ասում»: Հետո Այրին իր կարոտի եւ չմոռացվող ցավի խոսող ծաղիկներ է փնջում, «...շիրմիդ դաշտում բուսած ծաղկի հոտից էլ զգում եմ որդուս արյան կարգը», «Ինձ ոչ ոք քեզ պես չի կարող սիրել», «Ես այս աշխարհը եկա միայն քո հասցեով», «Ամեն օր աղոթում եմ, որ քեզ չկորցնեմ: Դու սուրբ ես...», «Համբուրում եմ քո հոգին: Հայացքը: Շունչդ»:

Կարոտածին ցավը այնքան է ուժգնանում, որ Այրին մեկ-մեկ հիասթափվում է կյանքից: Բայց հայոց դարերի կանչով, հայոց հերոսուհիների կամքով բանաստեղծը օգնում է իր հերոսուհուն: Այստեղից էլ հենց ծնվում է հրաշքը, բացվում է այն առեղծվածը, թե ժողովուրդը ինչպես է դիմակայել դարերում եւ ինչպես է այսօր պարզել ազատության իր եռագույնը: Գաղտնիքը մեկն է, ահա թե ինչպես է բանաստեղծը հերոսուհու սրտից հանում այն եւ նրա անունից էլ պարզում սերունդներին.

Խանդոտ է հողը հայոց, մեր սիրածներին իր գիրկն է առնում, որ մեր համբույրները՝ մեր սիրածներին տալիք, ինքն առնի իր վրա, մենք վաղուց դադարել ենք հողը մեր ոտքերի տակ պահելուց: Մեր հողը մենք գլխներիս վրա ենք պահում, որ մեր ոտքերի տակ ավելի ամուր լինի մեր հողը: Հողը չնահատակվող սեր է:

Հողապաշտության, ասել է թե հայրենասիրության այս զգացումը, որ հայոց դարավոր պոեզիայի գլխավոր զարկերակն է եղել, Վ.Հակոբյանի պոետական խոսքում նորից է ընդգծվում, բայց թարմ ու նոր խոսքի հյուսվածքներով, թշնամու մեղքով արցախյան պատերազմից ծնված նորօրյա մեր ցավի ծնունդով, գոյատևելու հրամայականով:

«Գողգոթա» պոեմը եկավ մի նոր ուլունք դառնալու ոչ միայն Վ. Հակոբյանի ստեղծագործության, այլև մեր սուրբ նահատակներին նվիրված հայոց բանաստեղծական տարեգրության մեջ: Այդ երկը ոչ միայն կտրիճամուսիններին կորցրած այրիների սրտի ցավն ու կսկիծը պատկերող հաջող կտավ է, այլև երախտիքի տուրք, սերունդներին ուղղված հավերժաժուփ կտակ:

*Մարդիկ, լսեցեք, մարդիկ դուրս եկեք,
ժողովուրդ, աչքդ լույս,
նահատակները, տեսեք, գալիս են,
ելել՝ գալիս են, հաղթել՝ գալիս են,
մի-մի մոմ վառեք՝ ի սեր Հիսուսի,
հարություն առել՝ վերադառնում են,
սեղաններ գցեք, բացեք շուրջպարը,
չգալուց հոգնել՝ արդեն գալիս են,
վերադառնում են,
վերադառնում են նահատակները:*

Մեր նոր Գողգոթայում ժողովրդի սրտից բխած, հոգեւոր ավետիսների շարքում շարականված խոսք է սա, որ բանաստեղծին է եւ բոլորինս է, ժողովրդի գողգոթածին ցավից ծնված հարության կոչ, հարատևելու աղոթք:

Սուսի ձեռքով դողանջող զանգը հավերժության շրթերին հնչող երգն է, որ փայփայում է ոչ միայն Բեկորի, այլև նահատակված մյուս աստղերի ապրեցնող, ջերմացնող անունները: Այդ սրբացած անունները խոսող արեգակներ են դարձել *Գ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆԻ* երգերում: Նա գրեց, որ «նվիրյալ որդիք Հայոց Արցախի» արժիվներ դարձած «ըմբոստացան անկախ, անվեհեր»: Բանաստեղծը ընդհանրացնում է.

*Հանուն մայր հողի քաջերը ընկան,
Արցունք բերելով մեզ դառն ու աղի...
Բայց արդ կռվում են շիրմից էլ անգամ
Նահատակ որդիք հայոց Արցախի:
(«Որդիք Արցախի»):*

Գիտակցված մահվան գաղափարը բանաստեղծական տարբեր երանգներով, իրական դեպքերի հենքի վրա ծածանվեց Գ. Գաբրիելյանի «Որդեկորույս մայրը», «Որբի երագը», «Այս փոքրիկը մեծ ցավ ունի», «Զրույց նկարի հետ», «Խնդիրք դիմանկարի առաջ» եւ այլ երգերում, ինչպես նաեւ «Անդրանիկ», «Ողջակիզված կյանք», «Մեր Գուգուլյան», «Մուսա լեռան երկու որդին» չափածո ակնարկներում՝ նվիրված Արցախի ֆիդայական շարժման առաջամարտիկներ եւ արցախյան նորաստեղծ բանակի առաջին զինվորներ Անդրանիկ Սողոմոնյանի, Վալերի Բալասանյանի, Գրիգոր Առստամյանի, Վազգեն եւ Վարդան Գրիգորյան եղբայրների սխրանքին, որոնք անձնուրաց պայքարով եւ կյանքի գնով ճանապարհ բացեցին դեպի հայրենի Արցախի ազատ եւ անկախ գալիքը:

Գ. Գաբրիելյանը գեղարվեստական չափածո ակնարկի ընձեռած սահմաններում ցույց է տալիս հերոսների անցած սխրալից ճանապարհը: Անդրանիկը, որ սովորում էր Երեւանի Յ. Բաբաջանյանի անվան Ռազմական ուսումնարանում, ուսումը թողել է կիսատ, վերադարձել՝ պաշտպանելու հարազատ Արցախը: Նա նահատակվել է հայրենի օջախի փրկության ճանապարհին, ինչպես բանաստեղծն է ընդհանրացնում.

*Եվ մեծ զորավար Անդրանիկը քաջ
Ընդունեց թռանն իր անվեհեր,
Որ շարքերի հետ նահատակ քաջաց
Տանի դեպ գալիք, դեպի դարեր:*

Գ. Գաբրիելյանի մյուս չափածո ակնարկը՝ «Ողջակիզված կյանք» խորագրով, ներկայացնում է արցախյան պատերազմի քաջ նահատակ, Ստեփանակերտի տպարանի փորձառու տպագրիչ Վալերի Բալասանյանի կյանքը, աշխատանքային գործունեությունը եւ մարտական խիզախությունները, որ բարձր են գնահատվել ԼՂՀ իշխանությունների կողմից: Նրան հետմահու շնորհվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշան:

Մեր ավանդական Արցախը աշխարհում ճանաչվեց իր արդարացի պայքարի եւ անօրինակ սխրանքի շնորհիվ: Այդ սխրանքը առաջին հերթին պատկանում է նրանց, ովքեր առաջինը իրենց գլուխները դրին հայրենի օջախի ազատության զոհասեղանին: Նման զարմանահրաշ խիզախներից է «Մարտական խաչի» շքանշանակիր, տանկիստ Գրիգոր Առստամյանը, որին իր զինվոր ընկերները քնքշանքով անվանում էին

Գուգուլյա: Մեր լեռնաշխարհի քաջասիրտ զավակի ճանապարհն է ատացուլված Գ. Գաբրիելյանի «Մեր Գուգուլյան» ստեղծագործության մեջ: Բանաստեղծը ուշադրություն է դարձրել առասպելական պատանի, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ Գրիգոր Առստամյանի՝ դեպի հայրենի Արցախն ունեցած անբիծ սիրուն եւ անձնուրացությանը: Հերոսին չեն ընկճել Շուշվա բանտի դաժանությունները: Խորհրդային բանակում դառնալով տանկիստ, նա եկավ Արցախ, հեծավ երկաթե նժույզը, մասնակցեց բոլոր ճակատամարտերին եւ մի օր էլ Չլդրանի մարտերից մեկում զոհվեց քաջաբար:

Սրտառուչ մի պատմություն է Գ.Գաբրիելյանի «Մուսա լեռան... երկու որդին» երկը: Նրանում նկարագրված են Վազգեն եւ Վարդան եղբայրների քաջագործությունները: Նախ երկու եղբայրները ճաշակել են Պոլյանիչկո-Սաֆոնովյան ռեժիմի հալածանքները Նովոչերկասսկի բանտում: Այնուհետեւ մարտական կարեւոր առաջադրանք կատարելիս 1991 թ. հոկտեմբերի 16-ին Վարդանը զոհ է դառնում Սաֆոնովյան հրոսակների դավադրությանը: Հինգ ամիս չանցած 1992 թ. մարտի 4-ին հայրենի Ղազանչի գյուղում տեղի ունեցած ճակատամարտում 20-ից ավելի ասկյարների շարքից հանելով, ծանր վիրավոր վիճակում Վազգենը իր զնդակով վերջ է տալիս կյանքին՝ գազազած թշնամու ձեռքը չընկնելու համար: ԼՂՀ կառավարությունը բարձր է գնահատել Վազգենի եւ Վարդանի սխրագործությունները՝ նրանց ետմահու պարգևելով «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշաններով: Պոեմը կոչվում է «Մուսա լեռան... երկու որդին» նրանց

հոր՝ բազմավաստակ իրավաբան Մուսա Գրիգորյանի անունով:

Ստեղծագործության մեջ քիչ չեն քնարական հատվածները, որտեղ ներկայացվում են երկու եղբայրների քաջագործությունները եւ նրանց ծնողների ծանր ապրումները:

Բացի վերոհիշյալ գործերից, Գ. Գաբրիելյանը հորինել է տասնյակ մարտական բանաստեղծություններ, նահատակ հերոսների հիշատակին ձոնել սրտառուչ երգեր: Հայտնի են նրա «Ավո», «Անդրանիկ», «Բեկոր», «Սամվել» (բանաստեղծ Ս. Շահմուրադյանի հիշատակին), «Որբեւայրու երգը», «Նոր օրորոցայինը» եւ այլ երգեր:

Հայ գրականության ավանդույթների հոլովությունը քիչ չեն ողբերգական էջերից քամվող լույսն արարումի, հույսը՝ հարատեւան: Օրինակը Ս. Խորենացու հայտնի «Ողբը», Դավթակ Քերթողի «Մեծ իշխան Ջիվանշիրի մահվան ողբերգը», Գ. Նարեկացու «Ողբերգության մատյանը», Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», Հ. Թումանյանի «Հոգեհանգիստը», Հ. Շիրազի «Հայոց Դանթեականը», Պ. Սեւակի «Անլռելի զանգակատունը» եւ այլն:

Համարձակորեն կարող ենք ասել, որ *Ն.ԱՎԱԳՅԱՆԻ* «Մատյան հառներգության» ժողովածուում «Տիրոջ հետ» եւ «Ռեքվիեմ» պոեմները մեր հին ու նորօրյա փորձից ու փորձանքից, ցավից ու արցունքից, տվայտանքից ու ակնկալությունից ծնված պատկերներ են՝ հառներգության բռնկումով:

Մի կողմ թողնելով գեղարվեստական պոեմի կառուցվածքային փոփոխությունների առկայությունը, ի

շահ բանաստեղծուհու, ամիրաժեշտ ենք զգում շեշտել իրականի եւ երեւակայականի այն հաճելի զուգորդումը, որ ապացուցում է Ն. Ավագյանի հաջողությունը, որն էլ իրավունք է տվել գրքի խմբագրին՝ տաղանդավոր վիպասան Յ. Խաչատրյանին՝ ընդգծելու. «Նվարդ Ավագյանի «Մատյան հառներգության» ժողովածուն վերջին տարիների հայ քնարերգության բացառիկ նվաճումներից է»:

Պոեմներում փայլատակում է հայ ժողովրդի մերօրյա ճակատագիրը: Հենց ճակատագիր բառն է, որ ընթերցողին տանում է դեպի պատկերների խորքը, բացահայտում բանաստեղծուհու երգարվեստի ճշմարտացիությունը, հուշում մեր ազգային հին ու նոր երթը, որ սովորական ընթացք չէ, այլ ողբերգությունից ծնվող հառնում, բանաստեղծկան ոգեկոչող խորհուրդ.

*Քայլիր, ես քեզ պիտի տանեմ
Լացից դեպի համբերություն,
Ցավից դեպի հանգստություն,
Մահից դեպի հավերժություն:*

Պոեմներում՝ թեմատիկ տարբեր շրջանակներով, բայց պրոբլեմի միեւնույն առանցքով, ժողովրդի կենսափիլիսոփայության բազմազան խտացումներով արտացոլված են արցախյան պատերազմում հայ ժողովրդի կորուստների ցավը եւ հառնելու ուժը:

Քնարական պոեմի ընձեռած միջոցներով բանաստեղծուհին մերթ դիմելով Աստծուն («Տիրոջ հետ»), մերթ զրույցի մեջ բերելով հերոսներին, ձեռքը դնում է ժողովրդի ցաված սրտին, սփոփում նրա առօրյա

վերքը, սրբուն արցունքները, շոյուն զարկերակը՝ հառնելու եւ հավատով քայլելու հրամայականով:

Ն. Ավագյանը չի շրջանցում դառնություն հուշող ճշմարտությունը: Նա Արարչին հայտնում է, որ «Ապականում են եւ խիղճ եւ օրենք...»: Տեսնելով այդ անարդարությունը, քնարական հերոսը ձգտում է, որ տիրոջ աստիճանի մեջ բացվի իր «անկեղծ հոգին», որ վերացական չէ, ունի հասցե.

Գալիս է երկրից ամենաքարոտ,

Ուր կենաց գիրը

Գրվում է արյամբ՝ ոչ թե թանաքով:

Երկու մասից, նախերգից եւ վերջերգից բաղկացած «Տիրոջ հետ» պոեմում Ն. Ավագյանը ներկայացնում է արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարեգրությունը՝ բանաստեղծական նուրբ արտահայտամիջոցներով: Դարաշրջանի խաղի, դավաճանության, դաժանության, փարիսեցիության, տառապանքի եւ այլ մետաֆորների ընդգծումներով բանաստեղծուհին բնութագրում է մեր ժողովրդի վերջին տասնամյակի ընդվզումն ու ոգորումները, կորուստներն ու ձեռքբերումները: Պոեմում քնարական հերոսի ընդհանրացումները ակունքված են հայոց կենսափորձից.

15-ին ով սուրը չհանեց

Սեփական շեմին զարկվեց ու մեռավ...

Այդ փորձի թելադրանքով «հրապարակը դարձել էր մատոյան» եւ ինչպես խոստովանում է քնարական հերոսը. «Ապավինեցի ես իմ ժանիքին»: Սեփական

ուժին ապավինելը դարձավ կամքի այն դրսեւորումը, որ ունեցան ոչ միայն այրերը, այլև մայրերը, որ «որդիներին... դնելով գերեզման... ապրողներին կամքի են կոչում»: Կորուստներից դառնացած մայրը հայցում է, որ Աստված ներող լինի դեռ կիսով չափ հեթանոս լինելու համար, քանզի

*Լեզվիս տերն այսօր սլաքն է սգո՜
Եվ ծավալվում է լացն իմ անսփոփ
Քիրս ու Մռավից մինչեւ Սիս-Մասիս...
Լացիս մեջ պիտի հիշեմ, բոլորին,
Օգնիր, որ հանկարծ ձայնս չխզվի,
Աճյուններ ունեմ ախր շաղ տված
Արցախատնից մինչեւ իսկ Իզմիր:*

«Մատյան հառներգության» գրքի մի հուզական երանգը «Ռեքվիեմ» պոեմն է: Բանաստեղծուհին թեւավոր խոսքի շոյանքով խորհուրդ է տալիս ընդունելին.

*Այսօր լաց եղիր,
Որ կարողանաս վաղը ծիծաղես:*

Չնչեցնելով պատարագի զանգը, բանաստեղծուհին գրույցի է հրավիրում քնարական հեռուներին՝ մերթ այրիացած թխավարս կնոջը, մերթ սիրո համը նոր զգացած, նահատակված երիտասարդին, մերթ զոհյալ ամուսնուն, մերթ որդեկորույս մորը, մերթ հոգին կապույտներում թեւածող զավակին, մերթ քրոջն ու եղբորը: Նրանց հուզական խոսքը փրկելու, կրկնելու, գրկելու, լցվելու, հայտնվելու, պատվելու, ընդունելու կտակներ են, վերջապես երդվելու սուրբ վկայություն, անմահների հրաման՝ ուղղված նրանց, ովքեր պետք է

ասեն համարձակ իրենց խոսքը, ինչպես թե՛ մարտերի մեջ.

*Երդվիր ինձ հիմա,
Որ հերոսության ասողիկ վկան,
Մեր կիսատ թողած սիրո դեսպանը
Ազատագրված մայր հողի վրա՝
Դու պիտի ապրես Քեզ ու մեզ համար,
Մոռացած տաք ու լիքն ախոռներում
Ճարպեր կուտակող զավակի մասին,
Ապրես պիտի դու՝ կարգվես, տեր դառնաս
Արյան սերմ կոչված յոթը զավակի,
Որ շարունակես ծառայել ցեղին՝
Մշակը դարձած Արցախա հողի:*

Արցախյան պատերազմի նահատակ լեգենդար Ավոյի մասին գրվել են բազմաթիվ արձակ եւ չափածո երկեր: Դրանցից ընթերցողների եւ քննադատության դրվատանքի խոսքին են արժանացել Ս. Խանյանի «Նահատակ լուսո», Ն. Մովսիսյանի «Մարտնչող անմահություն» պոեմները:

20-րդ դարի վերջին տասնամյակի պոեզիայում հյուսվել է նահատակաց հիշատակը անմահացնող բանաստեղծական մի յուրովի տարեգրություն, որ արտացոլումն է ժողովրդի երախտագիտական զգացումի, հոգու եւ սրտի այն թրթիռների, որ սկիզբ են առել առասպելական մեր արեւածագից մինչեւ Արցախի պատվաբեր ազատամարտը:

Ա Ս Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայ գրականությունը, որ սկիզբ է առել դարերի խորքից եւ հասել 21-րդ դար, մեր ժողովրդի ազգային ճակատագրի գեղարվեստական վավերագրությունն է: Մեր ժողովրդի բանաստեղծական խառնվածքի աներկբա վկայություններ են հին դիցաբանական գրույցներն ու առասպելները, վիպերգերն ու ավանդությունները, ժողովրդական եւ գուսանական երգերը:

Հայ գրականության մեջ հայրենիքի եւ ժողովրդի ճակատագիրը բացահայտված է միասնաբար, որովհետեւ մեր ժողովուրդը 1915 թ. մեծ եղեռնի պատճառով կորցրեց իր պատմական հայրենիքը եւ նրա բռնապաշարում հոլովվեց «Կորուսյալ հայրենիք» հասկացությունը:

Հայոց միջնադարյան գրականության, 19-րդ դարի, 20-րդի առաջին կեսի չափածո խոսքի հիմնական առանցքը հայրենիքի եւ ժողովրդի ճակատագիրն է: Մեր պոեզիայում արտացոլված են ժողովրդի անցյալի հերոսական դրվագները, ինչպես նաեւ ողբերգական էջերը: Սակայն պետք է նշել, որ այդ պոեզիային հատուկ է նաեւ լավատեսությունը, հավատը ապագայի հանդեպ:

Մեր պոեզիան իր պատմական առաքելությունը պատվով կատարեց նաեւ Հայրենական պատերազմի տարիներին:

Հայրենական պատերազմի տարիներին գրական ասպարեզ իջած բանաստեղծները հայրենապատումի նոր դրսեւորումներով հարստացրին մեր պոեզիան: Հ. Շիրազը, Պ. Սեւակը, Հ. Սահյանը, Գ. Էմինը, Ս.Կապուտիկյանը, Վ.Դավթյանը, Հր.Հովհաննիսյանը,

Մ.Մարգարյանը ընդհանրության մեջ մի աստղաբույլ են կազմում:

Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո աստիճանաբար գրականությունը ազատվեց սխեմատիզմից, ճառայնությունից, ընդհանուր գաղափարների քարոզներից: Այդ բեկումը առանձնապես նկատվեց պոեզիայում, այն ավելի մոտեցվեց կյանքին, իսկական արվեստի ակունքին, որը եւ նպաստեց գեղարվեստական մտածողության վերելքին, հոգեւոր կյանքի աշխուժացմանը: 50-ական թթ. սկսած պոեզիայի կենտրոնում հայրենիքի գեղարվեստական կերպարի վերակերտման պրոբլեմը կարեւորվեց: Չափածոյի ամենատարբեր տեսակներով ստեղծվեց 20-րդ դարի երկրորդ կեսի հայրենապատումը: Ետչարենցյան շրջանում առաջին հերթին հորիզոնի վրա հառնեց Հ. Շիրազը իր հայրենապատումով: Վերածնված փոքրիկ Հայաստանի պատկերը մի կողմից, կորուսյալ Մեծ Հայքի ցավը՝ մյուս, միասնաբար կազմեցին նրա նախասիրած խորհրդանշային արվեստի հիմնական սկզբունքները:

Հ. Շիրազը ազգային վշտի եւ ցավի զգացողությամբ ստեղծագործական բոլոր էտապներում հարստացրեց հայոց նորօրյա հայրենապատումը: Նրա հոգու մեջ միշտ արձագանքեց մեծն Չարենցի ընդհանրացումը. «Քանի կա լյառն Արարատ եւ քանի աշխարհում դու կաս, դժվար թե ցամաքեն երբեք ակունքները քո ջինջ երգերի»: Շիրազի հայրենապատումը մի կողմից փրկված հայրենիքի հուսո ժպիտ է, մյուս կողմից՝ կորուսյալի տազնապած կանչ, որպես որդու երազանք, մոր աղոթք, հոր պատգամ, համազգային ցավ ու հույս:

20-րդ դարի երկրորդ կեսի հայրենապատումի մեջ պոետական իր երանգը ստեղծեց Ս. Կապուտիկյանը:

Նրա հայերգը ունի իր առանձնահատկությունները: Բանաստեղծուհին աշխարհը, երեւոյթները, կյանքը ընկալում եւ գնահատում է մոր սրտով: Մարդկային բոլոր ապրումները, զգացումների գնահատման չափանիշը համարվում է հայրենիքի հանդեպ դրսեւորված սերը: Այդ զգացումը նրան պարգեւում է նաեւ մայրենի լեզուն, որով պայմանավորված է ժողովրդի հարատեւման ավիշը: Ս.Կապուտիկյանի հայրենապատումը աչքի է ընկնում զգացմունքների հարստությամբ եւ ընդգրկումների խորությամբ: Նրա ստեղծագործական հուզաշխարհում ժողովուրդների համերաշխության ֆոնի վրա ընդգծվել է հայ մարդու լայն մտահորիզոնը՝ նկատի ունենալով ժողովուրդ-հայրենիք-ժամանակ փոխհարաբերությունը: Կապուտիկյանի հայրենապատումի պատկերային հյուսվածքին գումարվեց նաեւ սփյուռքահայության ճակատագիրը: Նա մեր ժողովրդի տեսած ողբերգությունը, հեղված արյունը, ավերված երկիրը ներկայացնում է որպէս համազգային անանցանելի ցավի պատկեր՝ փրկված-փոքրիկ Յայաստանի ծաղկումի գուգահեռով:

Յ. Սահյանի հայրենասիրության գույները ծիածանի իրենց սկիզբն առան զանգեզուրյան լեռներից եւ ձորերից: Նրա հայրենասիրական պոեզիայում աստիճանաբար հնչեց պահանջատիրոջ ձայնը: Յ. Սահյանի երգերում ծփացին ոչ միայն Որոտանի եզերքի փեշերը, այլեւ ընդգծվեց եղածի ու կորուսյալի գեղարվեստական կերպարը: Բանաստեղծը ժողովրդի կորցրածը եղածի մեջ տեսնելու, եղածով կորուսյալը գտնելու, ունեցածով թշնամուց վրեժ լուծելու, եղածին հենվելով հարատեւելու կենսափիլիսոփայության բանաստեղծականացման անզուգական օրինակներ է ցույց տվել:

Հայրենապատումի նրա էվոլյուցիան հայ բանաստեղծի հոգեբանության աստիճանական բացահայտման օրինակ է:

Վ. Դավթյանի հայրենապատումի մեջ քնարական հերոսը հեքիաթային զգացողություն ունի: Նրա մարմինն ու հոգին հայրենի երկրի արյունատար երակների եւ կապույտ երազների համաձուլվածք է: Դավթյանի հայրենապատումի մեջ անձնավորված են հայրենի սարն ու ձորը, ծառն ու ծաղիկը, աղբյուրները եւ այլն, սակայն, ավա՛ղ, գերված: Այս մանրուքների մեջ էլ հյուսվում է Դավթյանի հոգու հայրենական քարտեզը՝ ծննդավայրի պատկերով:

Հասու լինելով պոեզիայի ներքին օրենքներին, Գ.Էմինը ստեղծեց իր յուրատիպ հայրենապատումը: Նա ձգտեց նորոգել քաղաքացու դեպի երկիրն ունեցած զգացողությունը, որն էլ նրանց գեղագիտական իդեալի հնչերանգը դարձավ: Նրա համար հայրենիքը ժողովրդի պատմության հին ու նոր դարն է, հայոց հողն ու քարը, ջուրն ու հուրը, գիրն ու երգը: Էմինի բանաստեղծական մտահղացումներում հիշողությունը կարելուր տեղ է գրավում: Այդ հիշողությունը հայ ժողովրդի անցած դարավոր ճանապարհի արձագանքն է, ապրելով հաղթելու պատգամը:

Հայ ժողովրդին վիճակված ծանր ճակատագիրը բերելով բանաստեղծություն, Հր.Հովհաննիսյանը առանձնահատուկ ուշադրությամբ ընդգծեց նրա ապրելու կամքը: Նրա հայրենապատումը հյուսված է հայրենիքի հետ անմիջական, որդիական զրույցի ձեւով: Հայրենիքի հանդեպ ունեցած սերը Հր. Հովհաննիսյանի երգերում մերթ ժփում է մեծ հայրենականի գինվոր դարձած հայ մարդու ազատաբաղձ սրտում եւ

մաքառման ոգու մեջ, մերթ էլ՝ հրաշալի այգեպանի մարմին առած երազներում:

Քնարերգու Մ.Մարգարյանի հայրենապատումը աչքի է ընկնում իմաստային եւ զգացմունքային շաղախով: Մոր քնքշանքներով ու անկեղծությամբ նա դիմում է հայրենի երկրին անպաճույճ խոսքի թրթիռներով, նրան համարելով Որդի: Այստեղից էլ բանաստեղծուհու երգերի ջերմությունը:

Ռ.Դավոյանի հայրենասիրական ստեղծագործություններում միշտ նրան հանդիպում ենք մտահոգ-երազող վիճակում: Հայրենիք-ժողովուրդ-բանաստեղծ եռամիասնության զգացումը Դավոյանի բանաստեղծական կեցվածքն է՝ նվիրումի-ցավի, տառապանքի-հույսի խտացմամբ: Նրա բանաստեղծական մտապատկերներում հայրենիքը տեսիլքային-երազային, երեւակայական-հեքիաթային, տառապած-իմաստնացած է: Նա մի կողմից հավատարիմ է ժողովրդի պատմական ճանապարհի իրական շնչին՝ կրած տառապանքի խոստովանությամբ, մյուս կողմից թեւածում է իր ստեղծած երազային ակնկալությունների ջրապտույտներում: Դավոյանի որդիական խոսքը ուղղված է հայրենիքին, որ կարելի է բնութագրել որպես հեքիաթների մեջ մաքառող բարու հաղթանակ:

1970-ական թթ. հայրենապատումի իրենց նոր գույներով հանդես եկան Դ. Հովհաննեսը, Ար. Հարությունյանը, Հ. Էդոյանը, Հ.Գրիգորյանը, Ա.Մարտիրոսյանը, Է.Միլիտոնյանը, Հ. Թամրազյանը եւ այլոք: Տարիների ընթացքում նրանց հայերզը ընդգծվեց որպես բարի, պատկերի խորքային եւ գունագեղ խտացում, որն իմաստով հայոց դարավոր հայրենասիրության շարունակությունն է՝ խոստովանանքի, հավատար-

նության եւ տագնապի շառավիղներով, սակայն շենքը, խոսքի ճարտարապետական մասունքները, հոգեբանական թրթիռները իրենցն են: Նրանց երգերում քնարական հերոսն ու հայրենիքը միաձուլվ են՝ օրերի բարդույթի եւ հավատի լույսի մեջ:

1915 թ. Մեծ եղեռնից հետո աշխարհում հայկական հին գաղթօջախներին գումարվեցին նորերը եւ ամբողջացած ստացան Սփյուռք անունը: Տարագիր հայությունը օտար ափերում մարդկության դեմ-հանդիման հառնեց իր բազմաբնույթ հոգսերով, հին ու նոր ցավերով: Այդ ցավերի մեջ ամենից ծանրն ու սարսափելին հայրենիքի կորուստն էր: Բանաստեղծ հայ ժողովուրդը, որ դարերի ընթացքում հյուսել էր իր հայրենապատումը՝ առասպելական շրջանից մինչեւ 20-րդ դարը, կանգնեց նոր խնդիրների առջեւ: Սփյուռքի բանաստեղծները, որ իրենց հոգիներում ունեին արեւմտահայ գրականության լավագույն ավանդները, պետք է ստեղծեին նաեւ նորը, իրենցը: Եվ հնչեցրին իրենց քնարը՝ կարոտի բազմաշերտ երանգներով: Հոլովվեց նաեւ հայրենիքի երգը՝ կորստյան ահավոր դողանջներով: Սփյուռքահայ պոետները կորուսյալ հայրենիքի կարոտն առնելու համար առաջին հերթին դիմեցին հայրենի բնությանը, նրան ներդաշնակելով իրենց ցաված հոգիները: Վերհուշը դարձավ հայրենապատումի հիմնական զարկերակը, որի բաբախումների մեջ կարելի է լսել Վ.Թեքեյանի, Ժ.Հակոբյանի, Վ.Վահյանի, Ա.Ծառուկյանի, Բ.Թովալյանի, Կ.Զարյանի, Գ.Աթմաճյանի, Մ.Իշխանի, Մ.Մանուշյանի եւ այլոց սրտերի զարկերը: Եթե սկզբնական շրջանում նրանց երգերում որոշ դեպքերում նկատվում էին հուսահատության նոտաներ, ապա աստիճանաբար հնչեցին ազգային ոգու պահպանման

խորհուրդն ու կոչը: Հատուկ ընդգծվեց նրանց հայրենասիրական մղումների ընթացքը՝ սերտորեն կապված ոչ միայն ժողովրդի եւ երկրի ճակատագրին, այլեւ հայոց գաղափարաբանության հետ: Սփյուռքահայ բանաստեղծները ընդունեցին խորհրդային Հայաստան իրողությունը: Նրանք աստիճանաբար մեր ժողովրդի հավաքական ուժի օրրանը համարեցին վերածնված Հայաստանը: Հայրենի հողը կորցրած, երազային պատրանքներով ապրող սփյուռքահայ բանաստեղծի համար հայրենիքի ամբողջական պատկերը ներկայացվեց նաեւ մայրենի լեզվի պահպանման պահանջով:

Հետպատերազմյան շրջանում գրական ասպարեզ իջավ մի սերունդ, որ անմիջական շարունակողը հանդիսացավ 20-40-ական թթ. իր տեղն ամուր հաստատած պոետների բույլին: Այդ սերնդի մեջ առավել աչքի ընկան Գ.Ադդարյանը, Զ.Մելքոնյանը, Վ.Օշականը, Ս.Տերունյանը, Զահրատը, Զ.Խրախունին, Գ.Խանենցը եւ ուրիշներ: Նրանց պոեզիան աչքի ընկավ թեմատիկ բազմազանությամբ, սակայն դարձյալ նախորդների պես հիմնական հոգսը եղավ Սփյուռք-Հայաստան կապը: Նրանցից շատերը ոգեւորությամբ ողջունեցին հայրենադարձությունը եւ ցավով մերժեցին արտագաղթը: Նրանց հայրենապատումի մեջ հնչեց հայրենի երկրին կառչելու, նրա գրկում ինքնության ակունքը հաստատ գտնելու կոչը, հայրենասիրությունը վերածվեց հայրենաբաղձության: Նրանց հայերգության մեջ պարզորոշ երեւում են ազգային մտածողության պատմական եւ գեղագիտական ակունքները՝ մի կողմից սնվելով մեր տոհմիկ պատմության խորքերից, մյուս կողմից՝ սփյուռքահայության արդի տազնապներից եւ

ակնկալություններից: Նկարագրելով Մեծ եղեռնը, Սփյուռքի պոետները իմացական-հուզական իրենց գեղարվեստական արժարժումներում ձգտում են կենդանի պահել հայոց ազգային երանգներն ու զգացումները: Միաժամանակ ազգային հետ շեշտվում է համաձայնակալի պոետիայում՝ թե՛ բովանդակության եւ թե՛ ձևի տեսակետից: Այն զարգանում է ավանդականի եւ արդիականի համաձուլվածքով: Նրա վրա ակնբախ են տեղային եւ միջազգային ազդեցությունները: Ընդհանրության մեջ սփյուռքահայ արդի հայրենապատումը հայոց հայերգության մի մասն է կազմում:

50-90-ական թթ. հայրենապատումը հոգեւոր բովանդակության խոր արմատներ ունի: Դրանք հասնում են դարերի խորքը: Այդ ժամանակաշրջանում բանաստեղծներից շատերը պեղեցին հայոց անցյալը, մշակեցին պատմական եւ պատմաավանդական ոչ քիչ նյութեր: Անցնելով պատմության բավիղներով, նրանք մետաֆորներ ընտրեցին Արագածը եւ Մասիսը, Վանա ծովը եւ Սեւանը, զրույցի մեջ ներառեցին Հայկի եւ Արայի, Արտաշեսի եւ Տիգրանի, Ս.Սաշտոցի եւ Վարդան Մամիկոնյանի սխրանքները, ձգտեցին գտնել ժամանակի հարցերի պատասխանը: Հ.Շիրազի, Պ.Սեւակի, Վ.Դավթյանի, Վ.Հակոբյանի, Ս. Խանյանի, Ն. Ավագյանի պատմական պոետներում բացահայտվեցին հայոց անցյալի փիլիսոփայությունը՝ հերոսական ժամանակները կապելով ժողովրդի հարատեւման հետ: Անդրադառնալով Մեծ եղեռնին, բանաստեղծները ներկայացրին մեր ազգային կորուստների ցավը՝ միաժամանակ այդ ցավի միջից երեւան հանելով մաքառող Հայաստանի ոգին:

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական եւ բախտորոշ էջերից է: Այն Ավարայրի եւ Սարդարապատի շարունակությունն է, որը մտնում է մեր ժողովրդի հարուստ տարեգրության մեջ: Արցախյան պատերազմին զինվորագրվեց նաեւ մեր նորօրյա գրականությունը, առանձնապես պոեզիան:

Ղարաբաղյան շարժման հենց առաջին օրերից իրենց կրակոտ խոսքն ասացին Վ.Դավթյանը, Ս.Կապուտիկյանը, Գ.Էմինը, Յ.Սահյանը, Բ.Ջանյանը, Մետաքսեն, Ռ.Դավոյանը, Դ.Յովհաննեսը, Յու. Սահակյանը եւ ուրիշներ:

Չնայած պատերազմական դժվարին պայմաններին, Արցախում ապրող եւ ստեղծագործող պոետներից իրենց մարտաշունչ երգերով ու գրքերով հանդես եկան Վ.Յակոբյանը, Գ.Գաբրիելյանը, Յր.Բեգլարյանը, Ն.Ավագյանը, Ա.Յովհաննիսյանը, Ս.Խանյանը, Ա.Քոչարյանը, Ռ.Եսայանը, Ն.Գասպարյանը, Ժ.Բեգլարյանը, Յ.Ալեքսանյանը եւ ուրիշներ: Նրանք ժողովրդին կոչ արեցին համախմբվել՝ մայր Հայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ: Նրանք ժողովրդին կոչ արեցին համախմբվել՝ մայր Հայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ:

Ղարաբաղյան ազգային ազատագրական շարժման առաջին իսկ օրերից որպես ոգեշնչումի կոչ հնչեց Յ.Շիրազի տարիներ առաջ գրած «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը: Հանապազօրյա հոգեւոր հաց էր դարձել այն, շքերթների եւ հանրահավաքների օրհներգ, միաբանվելու եւ ազգային ողբերգությանը վերջ տալու խորհուրդ: Տեսնելով ազերաթուրքական եւ խորհրդային նենգ խաղերը արցախցիների ազատա-

բաղձ ոգու դեմ, բանաստեղծները իրենց մարտաշունչ երգերով, պոեմներով, դրամաներով խարազանեցին թշնամական ուժերի ցինիզմն ու դաժանությունները եւ հնչեցրին պայքարի կոչը:

Ավանդական Արցախի գետերն ու սարերը՝ Թարթառը, Մռավը, Քիրսը, Կարկառը, Խաչենագետը եւ այլ ավանդական տեղանուններ գեղարվեստական մետաֆորներ դարձան բանաստեղծների մարտական ստեղծագործություններում:

Արցախյան շարժումը գնալով ոչ միայն վճռական թափ ստացավ, այլեւ դարձավ աշխարասփյուռ հայ ժողովրդին ի մի բերող սերուցք: Հայությունը զգաց միաբանվելու կարելությունը, բուլոբի շրթերին նորից կամարվեց մեծն Չարենցի մարգարեական կոչը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Ազգային հպարտության եւ արժանապատվության զգացումի շաղախով հյուսվեցին սփյուռքահայ բանաստեղծների ստեղծագործությունները՝ նվիրված արցախյան գոյամարտին: Նրանց տողերում խոսեց աշխարհի չար ուժերին դատապարտող հայ մարդը, ժառանգորդը մի ժողովրդի, որ տեսել է եղեռն, ցրվել աշխարհով մեկ, միաբանվել եւ այսօր սատար կանգնել նորօրյա գոյամարտին:

Հայոց հազարամյակների հայրենապատումը կարելի է որակել որպես ժողովրդի հարատեւման, կորուսյալ երկրի եւ վերածնված փոքրիկ Հայաստանի հանդեպ չմարող կարոտի, Ազատ-Անկախ-Միացյալ Հայաստանի ճանապարհին միաբանվելու եւ նպատակին հասնելու բանաստեղծական խոհ ու խորհուրդ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավ. Իսահակյան, Երկերի ժող., հ. 4, Հայպետհրատ, 1951, էջ 159:
2. «Ազատության գաղափարը հայ հրապարակախոսության մեջ» (1820-1920-22.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 163:
3. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, «Հայաստան», 1951, էջ 214:
4. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, «Հայաստան», 1969, էջ 167:
5. Նույն տեղում, էջ 231:
6. Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1979, էջ 311:
7. Ս. Սարիճյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 514:
8. Դ. Գասպարյան, Ողբերգական Չարենցը, Երևան, «Նաիրի», 1990, էջ 382:
9. Հ.Շիրազ, Քնար Հայաստանի, «Հայաստան», 1977, էջ 146:
10. Նույն տեղում, էջ 148:
11. Հ.Շիրազ, Երկեր 5 հատորով, հ.2, 1982, էջ 336-337:
12. Նույն տեղում, էջ 338:
13. Նույն տեղում, էջ 340:
14. Նույն տեղում, էջ 342:
15. Հ.Շիրազ, Քնար Հայաստանի, «Հայաստան», 1974, էջ 57:
16. Նույն տեղում, էջ 101:
17. Նույն տեղում, էջ 121:
18. Նույն տեղում, էջ 122:
19. Նույն տեղում, էջ 125:
20. Հ.Շիրազ, Քնար Հայաստանի, «Հայաստան», 1974, էջ 169:
21. Հ.Շիրազ, Քնար Հայաստանի, գիրք 3, «Հայաստան», 1974, էջ 166:
22. Ս.Աթաբեկյան, Հովհաննես Շիրազի քնարերգությունը, Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 67:
23. Հ.Շիրազ, Քնար Հայաստանի, գիրք 3, «Հայաստան», 1974, էջ 170:
24. Հր.Թամրազյան, Գրական ուղիներում, Երևան, 1962, էջ 182:
25. Հ.Շիրազ, Երկեր 5 հատորով, «Սովետական գրող», հ.2, 1982, էջ 280:
26. Մ.Շահինյան, Հայ պոեզիան Հայրենական պատերազմում,- «Սովետական Հայաստանի պոեզիան» գրքում, ռուսերեն, Մոսկվա, 1947, էջ 7-8:

27. Ս.Աղաբաբյան, Արդի հայ գրականության պատմություն., հ.2, ՀԳԱ հրատ., 1998, էջ 46:
28. Լ.Սկրտչյան, Զրույցներ բանաստեղծի հետ, 1984, էջ 169:
29. Հ.Սահյան, Նաիրյան դալար բարդի, Հայպետհրատ, 1958, էջ 39:
30. Նույն տեղում, էջ 92:
31. Ս.Աղաբաբյան, Արդի հայ գրականության պատմ., հ.2, ՀԳԱ հրատ., 1998, էջ 338:
32. Հ.Սահյան, Սլացքի մեջ, Բաքու, «Ազերնեչր», 1950, էջ 3:
33. Նույն տեղում, էջ 31:
34. Հ.Սահյան, Ծիածանը տափաստանում, Հայպետհրատ, 1953, էջ 37-38:
35. Հ.Սահյան, Նաիրյան դալար բարդի, Հայպետհրատ, 1958, էջ 282:
36. Հ.Սահյան, Հայաստանը երգերի մեջ, Հայպետհրատ, 1962, էջ 63:
37. Նույն տեղում, էջ 88:
38. Նույն տեղում, էջ 95:
39. Ս. Արզումանյան, Բանաստեղծության ազգային հողը, Վ. Սարոյան համալսարան, 1998, էջ 494:
40. «Գրական թերթ», 1970 թ. թիվ 12:
41. Լ.Օզերով, Հ.Սահյանի «Սեզամ բացվիր» գրքի վերջաբանը, 1972, էջ 268:
42. Հ.Սահյան, Սլացքի մեջ, Բաքու, «Ազերնեչր», 1950, էջ 72-73:
43. Հ.Սահյան, Ծիածանը տափաստանում, Հայպետհրատ, 1953, էջ 49-50:
44. Գ.Հայրիյան, Հ.Սահյանի «Մայրամուտից առաջ» ժողովածուի առաջաբանը, 1964, էջ 6-7:
45. Հ.Սահյան, Մայրամուտից առաջ, Հայպետհրատ, 1964, էջ 23:
46. Նույն տեղում, էջ 79:
47. Նույն տեղում, էջ 48:
48. Նույն տեղում, էջ 93:
49. Հ.Սահյան, Իրիկնահաց, «Սովետական գրող», 1977, էջ 3:
50. Նույն տեղում, էջ 14-15:
51. Հ.Սահյան, Սեզամ բացվիր, «Հայաստան», 1972, էջ 89:
52. Դ. Գասպարյան, Պոեզիան եւ կյանքի ճշմարտությունը, «Լույս», 1990, էջ 377:
53. Հ.Սահյան, Երկեր երկու հատորով, հ.1, «Սովետական գրող», 1984, էջ 22:

54. Նույն տեղում, էջ, 333:
55. Հ.Սահյան, Երկեր երկու հատորով, հ.2, «Սովետական գրող», 1984, էջ 56:
56. Վ.Դավթյան, Երկեր երկու հատորով, հ.1, «Սովետական գրող», 1985, էջ 5:
57. Նույն տեղում, էջ 6:
58. Նույն տեղում, էջ 17:
59. Վ.Դավթյան, Երկեր երկու հատորով, հ.1, «Սովետական գրող», 1985, էջ 31:
60. Պոեզիա, որ մաքրում է արյունը: Վ.Դավթյանի երկերի 1-ին հատորի առաջաբանը, «Սովետական գրող», 1985, էջ 9:
61. Նույն տեղում, էջ 37:
62. Վ.Դավթյան, Երկեր երկու հատորով, «Սովետական գրող», 1985, էջ 40:
63. Նույն տեղում, էջ 42:
64. Նույն տեղում, էջ 62:
65. Դ.Դեմիրճյան, Գ.Էմինի «Նոր ճանապարհ» գիրքը, «Գրակ. թերթ», 1951, թիվ 13:
66. Գ.Էմին, Յոթ երգ Հայաստանի մասին, «Հայաստան», 1974, էջ 4:
67. Նույն տեղում, էջ 6:
68. Գ.Էմին, Նոր ճանապարհ, Հայպետհրատ, 1953, էջ 139:
69. Գ.Էմին, Երկու ճամփա, Հայպետհրատ, 1962, էջ 114-115:
70. Նույն տեղում, էջ 118:
71. Գ.Էմին, Քսաներորդ դար, «Հայաստան», 1970, էջ 8-9:
72. Նույն տեղում, էջ 19:
73. Նույն տեղում, էջ 16-17:
74. Ս.Կապուտիկյան, Երկերի ժողովածու 2 հատ., հ.1, «Հայաստան», 1974, էջ 8:
75. Ս.Աղաբաբյան, Արդի հայ գրականություն, ՀԳԱԱ հրատ., 1993, էջ 396:
76. Ս.Կապուտիկյան, Երկերի ժողովածու 2 հատ., հ.1, «Հայաստան», 1974, էջ 49:
77. Նույն տեղում, էջ 54:
78. Նույն տեղում, էջ 60:
79. Նույն տեղում, էջ 96:
80. Նույն տեղում, էջ 107:
81. Նույն տեղում, էջ 108:
82. Ս.Արզումանյան, Բանաստեղծության ազգային հոլը, Երեւան,

- «Առերեսում» ԱՆԻ հրատ. համալիր, Կ.Սարոյան համալսարան, 1998, էջ 469:
83. «Նովյո միր» ամսագիր, 1952, թիվ 4:
84. Ս.Կապուտիկյան, Երկերի ժողովածու 2 հատ., հ.1, «Հայաստան», 1974, էջ 220:
85. Նույն տեղում, էջ 382:
86. Նույն տեղում, էջ 399:
87. Նույն տեղում, էջ 438:
88. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.6, «Հայաստան», 1976, էջ 398:
89. Նույն տեղում, էջ 374:
90. Էդ.Ջրբաշյան, Կես դար գրականության մեջ, առաջաբան, Ս.Կապուտիկյան, Երկեր 3 հատորով, հ.1, «Հայաստան», 1984, էջ 15:
91. Ս.Կապուտիկյան, Երկերի ժող. 2 հատորով, հ.1, «Հայաստան», 1974, էջ 446:
92. Նույն տեղում, էջ 466:
93. Նույն տեղում, էջ 467:
94. Ս.Կապուտիկյան, Երկերի ժող. 3 հատորով, հ.1, «Հայաստան», 1984, էջ 104:
95. Նույն տեղում, էջ 327:
96. Նույն տեղում, էջ 328:
97. Ե.Չարենց, Երկեր 6 հատորով, հ.2, ԶԳԱ հրատ., 1962, էջ 167:
98. Ս.Կապուտիկյան, Երկխոսություն «Իմ եւ իմ միջեւ», «Խորհրդ.գրող», 1989, էջ19:
99. Նույն տեղում, էջ 21:
100. Նույն տեղում, էջ 28-29:
101. Սովետահայ պոեզիա, Երեւանի համալս. հրատ., 1986, էջ 718:
102. Ս.Աղաբաբյան, Արդի հայ գրակ. պատմություն, հ.2, Երեւան, 1993, էջ 422:
103. Սովետահայ պոեզիա, Երեւանի համալս. հրատ., 1986, էջ 719-720:
104. Նույն տեղում, էջ 721:
105. Մ.Մարգարյան, Հատընտիր, «Սովետական գրող», 1985, էջ 499:
106. Նույն տեղում, էջ 504:
107. «Խորհրդային գրող», 1961, թիվ 2:
108. «Խորհրդային գրականություն», 1963, թիվ 6:

109. «Խորհրդային գրականություն», 1970, թիվ 1:
 110. Նույն տեղում, 1970, թիվ 1:
 111. Ս. Խանյան, Արևսար, Բ., 1968, էջ 22:
 112. Ա. Աթայան, Կարոտի եւ սիրո կրակներ, «Սոնա» հրատ., 2000 թ., էջ 18:
 113. «Գրական թերթ», 1973, 21 օգոստոսի:
 114. Ս. Խանյան, Լեռների երգը, Բ., 1972, էջ 3:
 115. «Խորհրդային գրող», 1973, թիվ 3:
 116. Ս. Խանյան, Լեռների երգը, Բ., 1972, էջ 4:
 117. Նույն տեղում, էջ 5:
 118. «Սովետական Ղարաբաղ», 1981, թիվ 130:
 119. Ս. Խանյան, Սիրո անունից, Բ., 1980, էջ 3:
 120. Նույն տեղում, էջ 15:
 121. Ա. Աթայան, Կարոտի եւ սիրո կրակներ, 2000, «Սոնա», էջ 41:
 122. Ս. Խանյան, Քո անունից, Բ., 1980, էջ 26:
 123. Նույն տեղում, էջ 27:
 124. Նույն տեղում, էջ 56:
 125. Նույն տեղում, էջ 56:
 126. Նույն տեղում, էջ 60:
 127. Նույն տեղում, էջ 75:
 128. Նույն տեղում, էջ 97:
 129. Ս. Խանյան, «Քո անունից», Բ., 1980, էջ 27:
 130. «Սովետական Ղարաբաղ», 1990, 15 հունիսի:
 131. «ԼՂ Հանրապետություն», 1996, 24 հունվարի:
 132. Ս. Խանյան, «Արցախյան դողանջներ», 1991, էջ 9:
 133. Նույն տեղում, էջ 10:
 134. Նույն տեղում, էջ 12:
 135. Ռ. Դավոյան, Ընտիր երկեր, «Սովետական գրող», 1987, էջ 106:
 136. Նույն տեղում, էջ 183:
 137. Նույն տեղում, էջ 184:
 138. Նույն տեղում, էջ 10:
 139. Ս. Աղաբաբյան, Դեպի աղբյուրը լուսի, «Սովետական գրող», 1979, էջ 273-274:
 140. Ռ. Դավոյան, Ընտիր երկեր, «Սովետական գրող», 1987, էջ 7:
 141. Նույն տեղում, էջ 193:
 142. Նույն տեղում, էջ 185:
 143. Նույն տեղում, էջ 211:
 144. Նույն տեղում, էջ 246:

145. Ս.Սարինյան, Սերունդներ եւ ավանդներ, «Սովետական գրող», 1984, էջ 271:
146. Նույն տեղում, էջ 316:
147. Գրիգորյան, Ռանդաղ ժամեր, «Սովետական գրող», 1986, էջ 9:
148. Նույն տեղում, էջ 10:
149. Է.Միլիտոնյան, Հիշատակի զանգեր, «Սովետական գրող», 1979, էջ 5:
150. Նույն տեղում, էջ 8:
151. Նույն տեղում, էջ 10:
152. Նույն տեղում, էջ 18:
153. Ա.Եղիազարյան, Մարդը ներսից, «Սովետական գրող», Երևան, 1985, էջ 83:
154. Համաստեղ, Աղոթարան, Բեյրութ, 1957:
155. Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն, «Ձանգակ 97», 1998, էջ 117-118:
156. Ս.Կապուտիկյան, Երկերի ժող. 2 հատ., հ.1, «Հայաստան», 1974, էջ 403-404:
157. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.4, Հայպետհրատ, 1951, էջ 158-162:
158. Գ.Սեւան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 20-21:
159. «Էջեր գրականության եւ արվեստի», Պարբերագիրք, Բեյրութ, 1968:
160. Է.Ջրբաշյան, Արդի սփյուռքահայ առաջադիմական գրականության զարգացման միտումները, ՀԳՍ 9-րդ համագումարի զեկուցումներից, «Սովետական գրող», 1981, էջ 7:
161. «Էջեր գրականության եւ արվեստի», Պարբերագիրք, Բեյրութ, 1968, մարտ:
162. Վահե Վահյան, Հատընտիր, Բեյրութ, 1986, էջ 225:
163. Նույն տեղում, էջ 204:
164. Նույն տեղում, էջ 210:
165. Նույն տեղում, էջ 213:
166. Նույն տեղում, էջ 214:
167. «Սփյուռքահայ բանաստեղծություն», Երևանի համալսարանի հրատարակչություն., 1981, էջ 126:
168. Նույն տեղում, էջ 215:
169. Նույն տեղում, էջ 150:

170. Ե.Չարենց, Երկերի ժող. 6 հատորով, ՅՍՍՀ ԳԱ հրատ., հ.6, 1967, էջ 385-387:
171. Ա.Թերզյան, Դեպի ավեր հայրենական, Սփյուռքահայ բանաստեղծություն, Երեւան, 1981, էջ 374:
172. Սփյուռքահայ բանաստեղծություն, Երեւանի համալս.հրատ., 1981, էջ 395:
173. Նույն տեղում, էջ 402:
174. Նույն տեղում, էջ 405:
175. Նույն տեղում, էջ 406-407:
176. Նույն տեղում, էջ 408:
177. Նույն տեղում, էջ 416:
178. Նույն տեղում, էջ 420:
179. Նույն տեղում, էջ 422:
180. Սփյուռքահայ արդի գրականություն, հ. Ա, Ռոյլ ՕՔ, Միշիկըն, 1994, էջ 2:
181. Նույն տեղում, էջ 3:
182. Նույն տեղում, էջ 6:
183. Նույն տեղում, էջ 10:
184. Նույն տեղում, էջ 13:
185. Նույն տեղում, էջ 14:
186. Նույն տեղում, էջ 23:
187. Նույն տեղում, էջ 49:
188. Նույն տեղում, էջ 43:
189. Նույն տեղում, էջ 62:
190. Նույն տեղում, էջ 81:
191. Նույն տեղում, էջ 82:
192. Ս. Դանիելյան, Ջ.Խրախունու, «Ազատերգություն» գրքի առաջաբանը, Նաիրի, 1999, էջ 14-15:
193. Ջ.Խրախունի, Ազատերգություն, Երեւան, 1993, էջ 23:
194. Նույն տեղում, էջ 86:
195. Նույն տեղում, էջ 64:
196. Նույն տեղում, էջ 75-76:
197. Նույն տեղում, էջ 53:
198. Սփյուռքահայ բանաստեղծություն, Երեւանի համալսարանի հրատարակչություն., 1981, էջ 431:
199. Սփյուռքահայ գրողներ, հատոր Բ, 1994, էջ 7:
200. Նույն տեղում, էջ 31:
201. Նույն տեղում, էջ 33:
202. Նույն տեղում, էջ 59

203. Սիյունքահայ գրողներ, հատոր Բ, 1994, էջ 61:
 204. Վ.Հակոբյան, Արցախա ծուխ, Երեւան, «Լույս», 1989, էջ 6:
 205. Նույն տեղում, էջ 9:
 206. Նույն տեղում, էջ 10:
 207. Նույն տեղում, էջ 10:
 208. Վ.Հակոբյան, Սոսե, Երեւան, «Նաիրի», 1994, էջ 3:
 209. Նույն տեղում, էջ 31:
 210. Գ.Գաբրիելյան, Քարի փոքրն է, որ չի մեծանում,
 Ստեփանակերտ, «Սոնա», 1997, էջ 14:
 211. «ԼՂ Հանրապետություն», 1996, 24 հունվարի:
 212. Ս. Խանյան, Արցախյան դրոշմներ, Ե., 1994, էջ 7:
 213. Նույն տեղում, էջ 8:
 214. Նույն տեղում, էջ 31:
 215. Նույն տեղում, էջ 34:
 216. Նույն տեղում, էջ 34:
 217. Նույն տեղում, էջ 39:
 218. Նույն տեղում, էջ 43:
 219. Նույն տեղում, էջ 43-44:
 220. Նույն տեղում, էջ 46:
 221. Նույն տեղում, էջ 47:
 222. Ս. Խանյան, Իմ ծիածանը, «Սոնա» հրատ., 2000 թ., էջ 9:
 223. Նույն տեղում, էջ 11:
 224. Նույն տեղում, էջ 22:
 225. Նույն տեղում, էջ 22:
 226. Նույն տեղում, էջ 41:
 227. Նույն տեղում, էջ 42:
 228. Նույն տեղում, էջ 20:
 229. «Արցախ» հանդես, 1989, թիվ 1, էջ 16:
 230. Նույն տեղում, էջ 16:
 231. Նույն տեղում, էջ 17:
 232. Նույն տեղում, էջ 17:
 233. Նույն տեղում, էջ 17:
 234. Ս.Կապուտիկյան, Երկերի ժող. 2 հատ., հ.1, «Հայաստան»,
 1974, էջ 428:
 235. Նույն տեղում, էջ 428:
 236. Նույն տեղում, էջ 427:
 237. Ս.Կապուտիկյան, Տազնապ, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 1994,
 էջ 39:
 238. Նույն տեղում, էջ 41:

239. Նույն տեղում, էջ 43:
 240. «Արցախ» հանդես, 1989, թիվ 2-3, էջ 71:
 241. Նույն տեղում, էջ 72:
 242. Նույն տեղում, էջ 102:
 243. «Արցախ» հանդես, 1990, թիվ 3-4, էջ 31:
 244. Նույն տեղում, էջ 31-32:
 245. Նույն տեղում, էջ 32:
 246. Գ.Գաբրիելյանի արխիվից:
 247. Ն.Ավագյան, Հասուն իմ հասկ, Երեւան, «Նաիրի», 1990, էջ 45:
 248. Նույն տեղում, էջ 51:
 249. Նույն տեղում, էջ 64:
 250. Նույն տեղում, էջ 73:
 251. Նույն տեղում, էջ 33:
 252. Ա.Հովհաննիսյան, Ավանդատուն, Երեւան, «Նաիրի»,
 1991, էջ 3:
 253. Նույն տեղում, էջ 4:
 254. Նույն տեղում, էջ 7:
 255. Բ.Ջանյան, Մի գետ էլ ունենք Տրտու անունով, «Արցախ»,
 1995, էջ 8:
 256. Նույն տեղում, էջ 9:
 257. Նույն տեղում, էջ 10:
 258. Նույն տեղում, էջ 11:
 259. Նույն տեղում, էջ 12:
 260. Ռ.Դավոյան, Ընտիր երկեր, Երեւան, «Սովետական գրող»,
 1987, էջ 10:
 261. Նույն տեղում, էջ 33:
 262. Մետաքսե, Արցունքներից չեն ծերանում, Երեւան, էջ 20:
 263. Ա.Թովմասյան, Արցախցի եմ ես, Երեւան, «Նաիրի»,
 1990, էջ 5:
 264. Նույն տեղում, էջ 17:
 265. «Արցախ» հանդես, 1990. թիվ 3-4, էջ 8-9:
 266. Նույն տեղում էջ 38-39:
 267. Նույն տեղում, էջ 41:
 268. Նույն տեղում, էջ 42:
 269. Նույն տեղում, էջ 42:
 270. Նույն տեղում, էջ 43:
 271. «Արցախ» հանդես, 1994, թիվ 3-4, էջ 2:
 272. Ա.Քոչարյան, Աստվածամոր աչքերը, Երեւան, «Նաիրի»,
 1991, էջ 23:

273. Ա.Քոչարյան, Եթե աստվածուհի լինեի, Ստեփանակերտ, «Արցախ», 1994, էջ 4:
274. Նույն տեղում, էջ 13:
275. Ռ. Եսայան, Յենակետեր, Երեւան, «խորհրդային գրող», 1989, էջ 65:
276. Ռ. Եսայան, Յենակետեր, Երեւան, «խորհրդային գրող», 1989, էջ 66:
277. Նույն տեղում, էջ 9:
278. «Արցախ» հանդես, 1990, թիվ 2, էջ 89:
279. Ռ. Եսայան, Յենակետեր, Երեւան, «խորհրդային գրող», 1989, էջ 20:
280. Նույն տեղում, էջ 8:
281. Ռ. Եսայան, Ծարաված հետքեր, Ստեփանակերտ, «Մաշտոց», 1991, էջ 9:
282. Նույն տեղում, էջ 21:
283. Ռ. Եսայան, Քառս եւ լույս, Երեւան, «Հայաստան», էջ 4:
284. Հ. Ալեքսանյան, Կենսադաշտ, Երեւան, «խորհրդային գրող», 1989, էջ 6:
285. Նույն տեղում, էջ 7:
286. Հ. Ալեքսանյան, Վարդի խռովություն, Ստեփանակերտ, «Արցախ», էջ 8:
287. Ն. Գասպարյան, Հավատ Արցախի, Երեւան, «Նաիրի», 1991, էջ 4:
288. Նույն տեղում, էջ 14:
289. Դ. Միքայելյան, Հավատի ժամ, Երեւան, «խորհրդային գրող», 1989, էջ 6:
290. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ե., «Հայաստան», 1968, էջ 70:
291. Հ. Շիրազ, Երկերի ժող. 5 հատ., հ. 2, «Սովետական գրող», 1982, էջ 163:
292. «Սովետական գրականություն», 1971, թիվ 6, էջ 21:
293. Հ. Շիրազ, Երկեր 5 հատորով, հ. 2, «Սովետական գրող», 1982, էջ 178:
294. Նույն տեղում, էջ 183-184:
295. Նույն տեղում, էջ 200-203:
296. Սովետական գրականություն, 1971, թիվ 6, էջ 22:
297. Հ. Շիրազ, Հայոց դանթեականը, Բեյրութ, «Սեւան» հրատ., 1965, էջ Ա:
298. Նույն տեղում, էջ 326-327:

299. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, «Հայաստան», 1973, էջ 10-11:
300. Նույն տեղում, էջ 13:
301. «Գրական թերթ», 1969, 21 նոյեմբերի:
302. Նույն տեղում, էջ 55:
303. Նույն տեղում, էջ 65:
304. Նույն տեղում, էջ 74:
305. Նույն տեղում, էջ 76:
306. «Սովետական արվեստ», 1961, թիվ 12:
307. Комсомольская правда, 1956, 3 ноября.
308. Ս. Աղաբաբյան. «Արդի հայ գրական. պատմություն», հ. 2, 1993, էջ 315:
309. Պ.Սեւակ, Երկերի ժող. 6 հատ., հ. 4, «Հայաստան», 1973, էջ 79-81:
310. Նույն տեղում, էջ 88:
311. Նույն տեղում, էջ 89:
312. Լ. Արզումանյան, Պարույր Սեւակի պոեմները, «Նաիրի», 2001, էջ 151:
313. Նույն տեղում, էջ 138:
314. Պ. Սեւակ, Երկերի ժող. 6 հատ., հ. 5, «Հայաստան» հրատ., 1974, էջ 132:
315. Նույն տեղում, էջ 135:
316. Նույն տեղում, էջ 137:
317. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, 1973, էջ 169:
318. Նույն տեղում, էջ 177:
319. Նույն տեղում, էջ 202:
320. Նույն տեղում, էջ 210:
321. Նույն տեղում, էջ 211:
322. Գ. Թումանյան, Երկերի ժող. 4 հատ., հ. 2, «Հայաստան», 1969, էջ 273:
323. Պ.Սեւակ, Երկերի ժող. 6 հատ., հ. 5, «Հայաստան» հրատ., 1974, էջ 133-134:
324. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, էջ 242:
325. Նույն տեղում, էջ 248:
326. Նույն տեղում, էջ 250:
327. Ե. Չարենց, Երկերի ժող. 6 հատ., հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 23:
328. Ա. Արիստակեսյան, «Պարույր Սեւակ», «Սովետական գրող», 1984, էջ 233:

329. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.4, 1973, էջ 260:
 330. Մ. Խորենացի, «Ողբ», «Հայաստան» հրատ., Երեւան, 1991, էջ Ա:
 331. Պ. Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4,1973, էջ 260:
 332. Նույն տեղում, էջ 263:
 333. Նույն տեղում, էջ 264:
 334. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, 1974, էջ 299:
 335. Նույն տեղում, էջ 299-230:
 336. Պ.Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, 1974, էջ 268-269:
 337. Նույն տեղում, էջ 272:
 338. Նույն տեղում, էջ 273:
 339. Նույն տեղում, էջ 281:
 340. Նույն տեղում, էջ 282:
 341. Նույն տեղում, էջ 298-299:
 342. Նույն տեղում, էջ 306:
 343. Նույն տեղում, էջ 309:
 344. Նույն տեղում, էջ 310:
 345. Նույն տեղում, էջ 314:
 346. Նույն տեղում, էջ 321:
 347. Ս.Սողոմոնյան, «Ժամանակակից հայ բանաստեղծներ», գիրք 1, «Հայաստան», 1965, էջ 503:
 348. Վ.Դավթյան, «Ասք սիրո», «Սովետական գրող», 1982, էջ 277:
 349. Նույն տեղում, էջ 282:
 350. Վ.Դավթյան, «Ծուխ ծխանի», «Հայաստան» հրատ., 1969, էջ 25:
 351. Դ.Գասպարյան, «Պոեզիան եւ կյանքի ճշմարտությունը», «Լույս»,1990, էջ350:
 352. Վ.Դավթյան, «Ծուխ ծխանի», «Հայաստան», 1969, էջ 56-57:
 353. Նույն տեղում, էջ 77:
 354. Նույն տեղում, էջ 89:
 355. Նույն տեղում, էջ 95:
 356. Վ.Դավթյան, «Կապույտ գիրք», «Սովետական գրող», 1978, էջ 185:
 357. Նույն տեղում, էջ 230:
 358. Նույն տեղում, էջ 317:
 359. Նույն տեղում, էջ 317:
 360. Վ.Հակոբյան, «Արցախա ծուխ», Երեւան, «Լույս», 1989, էջ 40-41:

361. «Խորհրդային արվեստ», 1962, էջ 51:
 362. Վ.Հակոբյան, «Ամարասի զանգեւը», Երեւան, «Արեւիկ», 1989, էջ 38:
 363. Նույն տեղում, էջ 56:
 364. Նույն տեղում, էջ 59-60:
 365. Նույն տեղում, էջ 61:
 366. Նույն տեղում, էջ 65-66:
 367. Նույն տեղում, էջ 68-69:
 368. Նույն տեղում, էջ 77:
 369. Նույն տեղում, էջ 79:
 370. Նույն տեղում, էջ 82:
 371. Նույն տեղում, էջ 87:
 372. Նույն տեղում, էջ 91:
 373. Նույն տեղը, էջ 94:
 374. Նույն տեղում, էջ 105:
 375. Նույն տեղում, էջ 107-108:
 376. Պ.Սեւակ, Երկերի ժող. 6 հատ., հ.5, 1974, էջ 258-259:
 377. Վ.Հակոբյան, «Մենարան», Երեւանի համալս. հրատ., 1996, էջ 321:
 378. Նույն տեղում, էջ 322:
 379. Նույն տեղում, էջ 323:
 380. Նույն տեղում, էջ 326:
 381. Նույն տեղում, էջ 329:
 382. Նույն տեղում, էջ 336-337:
 383. Նույն տեղում, էջ 361-362:
 384. Նույն տեղում, էջ 362:
 385. Նույն տեղում, էջ 364-365:
 386. Ս. Խանյան, Իմ ծիածանը, «Սոնա» հրատ., 2000, էջ 15:
 387. Նույն տեղում, էջ 16:
 388. Նույն տեղում, էջ 12-13:
 389. Նույն տեղում, էջ 11:
 390. Նույն տեղում, էջ 9:
 391. Նույն տեղում, էջ 35-36:
 392. Ս. Խանյան, Արցախի արծիվը, 1995, էջ 3-4:
 393. «ԼՂ Հանրապետություն» թերթ, 1996, 24 հունվարի:
 394. «Եղիցի լույս» թերթ, 1995, դեկտեմբեր:
 395. Հ.Բեգլարյան, «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», Երեւան, «Նաիրի», 1990, էջ 16:
 396. Նույն տեղում, էջ 122:
 397. Ն.Ավագյան, «Մատյան հառներզության», Ե., «Ամարաս», 1997, էջ 98:
 398. Նույն տեղում, էջ 100:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ3
Երկու խոսք.....18

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Մաքառման երգը՝ դարերի պահանջով.....21
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Ազգային ճակատագիրը ազգային-ազատագրական
պայքարի թելերին.....28
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Կոտորածների ցավի եւ փրկության երգը.....39

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Կարոտի եւ հույսի երգը.....52
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Սփյուռքահայ պոեզիայի ցավն ու հույսը..... 181

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Պայքարի երգը.....234
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Պատմության դասը.....308

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Հայոց Մեծ եղեռնը հայ պոեզիայում.....422
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Ոչինչ չի մոռացվի, ոչ ոք չի մոռացվի.....431

ԱՄՓՈՓՈՒՄ455

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Հատոր 7

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ

Խմբագիր՝

Հովիկ Սուսայեյան

Բանասիրական
գիտությունների
թեկնածու, դոցենտ

Սրբագրիչ՝

Ս. Խանունց

Համակարգչային

Բ. Սինասյանի

շարվածքը եւ էջադրումը՝

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16,
ծավալը՝ 30 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:
Գինը՝ պայմանագրային:

Տպագրվել է «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ-2010